

Թ. Խ. ՀԱԿՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



Նվիրում եմ մեր սիրելի
մայրաքաղաք Երևանի հիմնադրման
2750-ամյակին

ՀԵՂԻՆԱԿ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Т. Х. АКОПЯН

ИСТОРИЯ ЕРЕВАНА

с древнейших времен
до 1500 г.

ИЗДАТЕЛЬСТВО УНИВЕРСИТЕТА
ЕРЕВАН - 1969

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

947.928
n 1878

Թ. Խ. ՀԱԿՈՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

հնագույն ժամանակներից
մինչև 1500 թ.

6030



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 1969

Աշխատությունը հեղինակի «Երևանի պոստմոդրյուն»
հաստատար աստմամբարյան առաջին հատուրն է:
Երևանի և շրտող հատուրներ յուր են տեսել 1959 և
1963 թվականներին:

Պատմական և այլ սկզբնաղբյուրների հիման
վրա այստեղ բազմակողմանիորեն յուրաքանված է
Երևանի պոստմոդրյունը՝ հաղախի հիմնաղբյուր, արե-
անական կյանք (անտուր, արեաններ, դյուրա-
անտուրյան կյուղեր) տարբեր ժամանակաշրտանե-
րում, հաղախական պոստմոդրյունը, աղատագրական
չարժումներ, բնակչոթյունն ու նրա կենցաղը, ար-
տախին տեսք և բնական պայմանները: Քենարկում
են Երևանի պոստմոդրյան պարբերագման հարցերը:

Խմբագիր՝ Հ. ժամկոչյան

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պոստմոդրյան առանձնահատկությունները, նրա մշակման
նշանակոթյունը և դժվարոթյունները: Քաղախի պոստմոդրյան պար-
բերագումը (պերիոդիկացիան): Աշխատոթյան ընդգրկած ժամա-
նակաշրտանը, ծավալը և կառուցվածքը

«Քաղցր է ինձ տակ և զեղեցիկ զատակերտին Երուանդակեր-
տի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղեցիկ և շքնաղ յօրինու-
ածովք», — գրում է պատմահայր Մովսես իորենացին¹: Առավել «քաղ-
ցր է ինձ» համար խոսել «յաղագու զեղեցիկ» մայրքաղաքին
«Երևանայ, զոր յօրինեաց նոյն ինքն» Արդիտի «զեղեցիկ և շքնաղ
յօրինուածովք», պատշաճ է տակ մեր սիրելի մայրքաղաքի մա-
սին՝ փոխառնելով մեծագույն պատմիչի խոսքերը:

«Քախոտող մայրքաղաքների երկիր», ալղպես են կրբեմն
ընտքագրել Հայաստանը օտարերկրյա ճանապարհօրդներն ու հե-
տաղոտողները: Եվ իրոք, հին ու նոր ոչ մի երկիր այնքան մեծ թվով
մայրքաղաքներ չի ունեցել, ինչքան Հայաստանը: Արեւելքի ու
արեմուտքի նվաճողների ներխուժման մշտական վտանգի և քաղա-
քական անկայուն դրոթյան պատճառով մեր նախնիները հարկա-
դրված են եղել երկրի մայրքաղաքը հաճախ տեղից-տեղ փոխել:
Զհաշված ժամանակավոր աթոռանիտուրը (Անտիոք, Արշակավան
և այլն), Ֆեոդալական ժամանակաշրտանի առանձին իշխանոթյուն-
ների ու Ֆեոդալական մանր թագավորոթյունների աթոռանիտու-
մայրքաղաքները (Պաղին, Անդղ, Ողական, Ոստան, Աղամակերտ,
Շաղատ, Եղեցիս, Դարոյնք, Ամերկղ, Կայան, Լոռի, Կասյան, Աղ-
թամար և այլն, և այլն), Հայաստանն իր պոստմոթյան բնթացքում
(Ուրարտական ժամանակաշրտանը ներառյալ) ունեցել է 12 մայր-

¹ Մովսիսի իորենացու Պատմոթիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղանն և
Ս. Տարութիւնան, Թփղիս, 1913, էջ 167:

դարձադարձ՝ Տուշպա (Վան), Արմավիր, Երևանգաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բաղրամ, Երազգավորա, Կասր, Անի և Երևան։ Երկար շարք կազմող Հայոց այս մայրաքաղաքներից մի քանիսը՝ Արտաշատը, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Դվինը և Անին հռչակված են եղել այն ժամանակվա Հայտնիք ամրոցը աշխարհում։ Գրանց մի մասը վերացել է պատմական ասպարեղից (Արտաշատ, Դվին, Անի, Երվանդաշատ և այլն) և այն մյուս մասը կորցրել է նախկին նշանակությունը և վերածվել սովորական բնակավայրի կամ գավառական տիպի անշուք քաղաքի։ Գրանց մեջ, եթե կարելի է աշուղես տեսլ՝ ամենաերջանիկ ճակատագիրը Երևանինն է, որ տակավին XV դարից դարձել է Արևելյան Հայաստանի կենտրոնական մասի՝ նախ Երևանի կուսակալության կամ խանության, այնուհետև Երևանի նահանգի կենտրոնը, իսկ 1920 թվականից՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը։ Վերջին մի քանի տասնյակ տարիներ ընթացքում Երևանը վերածվեց մեր մեծ Միության նշանավոր քաղաքներից մեկի, նշանավոր իր ճարտարապետությանը, բարձր մշակույթով, զարգացած տնտեսությամբ և մարզաշատությամբ։

Անցյալի մեր մայրաքաղաքների մեջ համեմատաբար լավ են ուսումնասիրված Անին (Ն. Մառ, Հ. Օրբելի, Թ. Քորամանյան, Լեո, Հ. Մանանդյան և ուրիշներ) և Դվինը (Կ. Ղաֆաջարյան, Ա. Շահնազարյան, Բ. Առաքելյան և ուրիշներ)։ Մյուս մայրաքաղաքները, չընչին բացառությամբ, վատ են ուսումնասիրված։ Մինչդեռ այդ քաղաքների ուսումնասիրությունը կարող էր հսկայական նյութ տալ Հայաստանի պատմությանը, կարող էր հիմք դառնալ շատ ու շատ հարցերի լուսարանման համար։

Այդ տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի Երևանի պատմության ուսումնասիրությունը, մի քաղաք, որը խոր անցյալից մինչև այժմ գոյություն ունի և արտացոլում է մեր ժողովրդի՝ ելևէջներով լեցուն ճակատագիրը։ Երևանը տարբեր ժամանակաշրջաններում տարբեր նշանակություն և դեր է ունեցել մեր ժողովրդի պատմության մեջ։ Հնագույն ժամանակներում այն ճրթրունի կամ Երեթունի անունով հայտնի բերդաքաղաք էր, վարչաքաղաքական կարևոր կենտրոն, հետագայում այն կորցնում է իր նշանակությունը վերածվելով սովորական բերդ-բնակավայրի։ Անիի, Դվինի, Վաղարշապատի և մյուս քաղաքների անշքացումից հետո, Երևանը մոնղոլական, թուրք-թաթարական և պարսկաթուրքական տիրապետության շրջանում ձևեր է բերում մեծ կարևո-

րություն, հատկապես վարչա-քաղաքական առումով, և դառնում նաև տնտեսական կարևոր կենտրոն։ Նրա դերն ու նշանակությունը պայմանավորված էին պատմական հանգամանքներով և սերտորեն անշղթված են մեր ժողովրդի լեցնանուր պատմության հետ, կազմակերպել նրա բաղկացուցիչ մասը։ Զափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Երևանի XV—XIX դդ. պատմությունը լայն առումով Արևելեյան Հայաստանի մեծագույն մասի պատմությունն է ընդհանրապես։ Այդ դարերի Արևելյան Հայաստանի քաղաքական գրեթե բոլոր դեպքերը սերտորեն անշղթվ են Երևանի հետ. դրանց կիզակետը միշտ Երևանն է եղել։ Այս պատճառով էլ Երևանի պատմությունը տրվում է ամբողջ Արևելյան Հայաստանի պատմության ֆոնի վրա՝ վերջինիս հետ միահյուսված։

Քաղաքների, մանավանդ մայրաքաղաքների պատմությունը ուսումնասիրելը կապված է մեծ դժվարությունների հետ։ Իդուր չէ, որ մեզ մոտ՝ Սովետական Միությունում խոշոր քաղաքների պատմությունը սովորաբար ուսումնասիրում են ոչ թե առանձին մասնագետներ, այլ մասնագետների ամբողջական խմբեր։ Ընդ որում այդ ուղղությամբ եռանդուն աշխատանքներ են կատարվում գրեթե բոլոր հանրապետություններում։ Այժմ արգեն Հրապարակի վրա են մայրաքաղաք Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների պատմության ծավալուն բազմահատորյակները, Ուկրաինայում մեծ աշխատանքներ են տարվում այդ քաղաքաշատ հանրապետության քաղաքների ամբողջական պատմությունը ստեղծելու համար, հետազոտվում են Թբիլիսիի, Բաքվի, Ռուստավի, Մինսկի, Սվեդլոցկի, Տաշքենդի և բազմաթիվ այլ քաղաքների պատմությունները։

Պատմական առանձին հարցերի ու ժամանակաշրջանների համեմատությամբ քաղաքը ավելի բարդ առարկա է նախ և առաջ երանով, որ նրա ամբողջական պատմությունը առաջ համար պետք է լուսարանվեն մեծ թվով պրոբլեմներ, որոնք կընդգրկեն ամբողջ ժամանակաշրջաններու Քաղաքի պատմությունն ուսումնասիրողը հարկավորված է երկարատև պրոպոնաներով հայտնաբերել, համադրել և գիտական վերլուծության ենթարկել այն բոլոր մասերն ու իրողությունները, որոնք կապված են քաղաքի և այն վարչատերիտորիալ կամ վարչա-քաղաքական միավորի հետ, որի կենտրոնը կամ մայրաքաղաքն է այն։ Բացի դրանից, պատմական առանձին էֆակտաների և առանձին հարցերի առիթով անհրաժեշտություն է պակցում ավելի քաղաքի պատմությունը կապել երկրի ընդհանուր պատմության հետ, դրանք դիտելով մի ընդհանրության մեջ։

Մեծաթիվ են Երևանի պատմության հետ առնչվող զգվարու-
թյունները: Բավական է միայն սասկ, որ նրա առևելի բան 1000 տար-
վա պատմության մի ժամանակաշրջանի IV դ. (մ. թ. ա.)—V և
նույնիսկ VII դ. (մ. թ.) վերաբերյալ մենք ընդհանրապես չունենք
արժանահավատ տեղեկություններ և զրկված ենք դրա մասին շատ
թե քիչ ընդունելի կարծիք հայտնելու, թեպետ փորձել ենք այդ բա-
ցը վերացնել անուղղակի տվյալների ու վկայությունների օգնու-
թյամբ: Ընդհանրապես հին և միջին դարերի Երևանի պատմության
մասին (բացառյալ հնագույն ուրարտական շրջանը, որը, ինչպիսի
կտեսները, բավական լավ հայտնի է սնպագրի արձանագրությու-
նների և հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ) տեղեկու-
թյունները աղտո են, կցկուտը և համախ հակասական: Այսպես,
օրինակ՝ մենք ուղղակի փաստեր չունենք այդ ժամանակների երե-
վանի կառավարման կարգի, մեծության, բնակչության թվի, կա-
րևոր կառույցների (բացառյալ մի երկու եկեղեցու) և շատ ուրիշ
հարցերի մասին, իսկ հետագայի՝ XVI—XX դդ. սկզբի աղբյուրներն
էլ, որոնք համեմատարար շատ տեղեկություններ են հարցունող
Երևանի մասին, ունեն ուսումնասիրությունը զգվարացնող պակաս-
սավոր կողմեր և երբեմն տալիս են հակասական ու անորոշ հիշա-
տակություններ: Սակայն ամենամեծ զգվարությունը հարուցվում
է հենց նրանով, որ աշխատությունը ընդգրկում է հնագույն բազա-
րի հազարավոր տարիների պատմությունն իր բոլոր կողմերում հան-
դերձ: Այդ հազարամյակների ընթացքում Երևանն անցել է տարբեր
հասարակարգերի բովով, կրել բազաբազան ամենատարբեր արա-
պետությունների կնիքը, ունեցել տնտեսական, մշակութային և հա-
սարակական կյանքի անթիվ ելիչներ, ակառատեսն եղել բնական
աշավոր աղետների և համաճարակների: Իսկ դրանց ուսումնասի-
րությունը պահանջում է երկարատև աշխատանք և մեծ ջանքեր:
Պետք է նաև նկատի ունենալ, որ Երևանը մեր ապրած օրերի ամե-
նաարագ վերափոխվող բաղաբնեյից է և անցյալի հետքերը մեծ
արագությամբ վերանում են, զգվարացնելով հետազոտողի գործը
որոշ հարցերի ուսումնասիրության բնագավառում:

Կարծում ենք առանձին ջանասիրություն չի պահանջում Երևա-
նի անցյալի պատմության ուսումնասիրման արդիականությունն
ընդգծելու համար: Թվում է, թե բավական է բառահատոր այս
աշխատության վաղուց արդեն լույս տեսած մեկ հատորում շոշափ-
ված հարցերի սոսկ թվարկումը¹, որպեսզի գազափար կազմենք

¹ Տե՛ս Ք. Կ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), Երևան,
1959:

և՛ դրա ստեղծման զգվարությունների, և՛ հարցերի կարևորության
մասին: Աշխատության բոլոր հատորներում ըստ ժամանակագրա-
կան կարգի ձգտել ենք առաջ բաշել և հնարավորին շահով լուսա-
բանել բոլոր այն մեծ ու փոքր հարցեր, որոնք բաղաբնու
պատմության բաղկացուցիչ մասերն են կազմում կամ սերտորեն
առնչվում են դրանց հետ և դրանք լրացնում, բոլոր հարցերն ու
երևույթները դիտելով ժամանակի ընթացքում կրած փոփոխու-
թյունների տեսանկյունից:

Աշխատության այս հատորում բազմաթիվ այլ հարցերի հետ
միասին, անուղղակի փաստերի և իրողությունների հիման վրա
ցույց է տրված, որ Երևանն իր հիմնադրման ժամանակներից ի
վեր միշտ գոյություն է ունեցել և տարբեր ժամանակներում ձևաք
է ըրել տարբեր նշանակություն: Գրանում մասնագետն ու ընթեր-
ցողը կարող է տեսնել, որ Երևանի տեղում բնակավայր է եղել
տակավին մեղանից 6000 տարի առաջ, որ այն հիմնադրվելով VIII
դարում (մ. թ. ա.) մինչև VII դարի կեսերը (մ. թ. ա.) բերդաբազար
լինելու հետ միասին կարևոր վարչական կենտրոն էր, VI—IV դդ.
(մ. թ. ա.) շարունակելով իր գոյությունը որպես աշխի բնկնող բնա-
կավայր: Աշխատության մեջ ցույց է տրված, որ IV դ. (մ. թ. ա.)
մինչև VII դարը (մ. թ.) շնայած Երևանը չի հիշատակվում, բայց
իրբե բնակավայր շարունակում էր իր գոյությունը, իսկ հետագա-
յում նախ հիշատակվում է որպես բերդ-բնակավայր, IX—X դա-
րերից՝ գյուղաբաղաք կամ քաղաքագյուղ, իսկ XIII դարից՝ արդեն
սրպես քաղաք, որը XV դարից գառնում է Արևելյան Հայաստա-
նի կենտրոնական մասից կարճավաճ Երևանի կուսակալության (հե-
տագույում խանություն) կենտրոնը: Իսկ 1959 և 1963 թվականնե-
րին հրատարակված հատորներում Երևան քաղաքի օրինակով ցույց
է տրված տնտեսության, վարչական կարգի, հասարակական, մշա-
կութային, քաղաքի կյանքում ու ներքին կյանքի բնագավառներում
սեղի ունեցած այն զգալի առաջադիմությունը, որը կատարվել է
Արևելյան Հայաստանը և Երևանը սյարսկական լծից ապաստարկի-
լուն հաջորդած զրեթն մեկ դարյա ժամանակամիջոցում (1828—
1917 թթ.): Փաստական հարտուս նյութերի հիման վրա ցույց է
տրված, որ Երևանը երկրի հետ միասին անցյալ դարի 70-ական
թվականներից թևակոխելով կապիտալիզմի ժամանակաշրջան՝
ապրել է քաղաքական, տնտեսական, մշակութային և կոմունալ
կյանքի զգալի զարգացում: 80—90-ական թվականներից ստալ-

բում երևան են եկել կապիտալիստական մի շարք ձեռնարկություններ (դիմալորատային գինու-կոնյակի գործարաններ), XX դարի սկզբներից կառուցված ՔիՖիլիս—Երևան երկաթուղին, որը շարունակվեց մինչև Զուլֆա, նպաստել է բազաբի տնտեսական առաջադիմությանը, քաղաքում կառուցվել են երկու փոքրիկ հիբրուլեկտրակայաններ, գցվել է ձիաբարձ տրամվայ, 1912 թվականին կառուցվել է ջրմուղը, լուրջ փորձեր են կատարվել բազաբի պլանավորման համար, բացվել են մի շարք դպրոցներ և այլն, և այնու Առանձնահատուկ տեղ է տրված ազատագրական և սոցիալական ու հեղափոխական շարժումներին:

Ուսումնասիրության մտրոջը ընթացքում, անկախ քննարկվող հարցի մեծությունից ու բնույթից, ձգտել ենք մեր բոլոր ասածները հիմնավորել համապատասխան աղբյուրների հաղորդած տեղեկություններով: Մեծ զգվարություններ են պատճառել մի շարք հարցերի գծով համապատասխան տեղեկությունների բացակայությունը, սկզբնաղբյուրների վկայությունների երբեմն ազդող առարկությունները, նտիառավետական շրջանի վիճակագրական տվյալների հակասական ու պակասավոր լինելը, ինչպես և բուն երևանի պատմության գծով գիտական գրականության անշարժ սակավ լինելը: Սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների այդ թերությունները հարկադրել են շատ հարցեր պարզաբանելիս կատարել համեմատություններ, ընդարձակ ըսկիորաներ և երկարատև բանասիրական պրպատմներ: Այդ նույն պատճառով մի շարք հարցերի գծով մեր եզրակացությունները սահմանափակվում են միայն հավանական ենթադրություններով: Իսկ գիտական գրականության պակասը նթև մի կողմից մեզ ազդեցել է երբեմն անցանկալի ու գործը տեղից շարժող բանավեճից, այսպ մյուս կողմից էլ զգվաբացրել է հարցերի ուսումնասիրումը և ստիպել շատ մանրուշքներ սկսել սկզբից: Այդպիսի պայմանների հետևանքով էլ ավելի զբժվար է եղել մեր մայրաքաղաքի ամբողջական գիտական պատմության մշակման առանց այդ էլ բարդագույն աշխատանքը, նրա հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային, կուլտուրալ և ներքին կյանքի համակողմանի ուսումնասիրությունը:

Հանրահայտ է, որ պատմության ամենակարևորագույն հարցերից մեկը պարբերացումն է: Այս կամ այն ժողովրդի, քաղաքի, ամբողջական ժամանակաշրջանի պատմության ընթացքը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է այն նախ և առաջ ենթարկել պարբերացման՝ բաժանել ըստ ժամանակաշրջանների՝ բնութագրելով դրանք և դրանք իրարից բաժանող պատմական կարևորագույն

պահերը: Պարբերացումը փաստական նյութի հետ միասին հավասար չափով առաջ է ծառայում պատմական ուսումնասիրությունների համար:

Երևանի պատմությունը մեր ժողովրդի պատմության բաղկացուցիչ մասն է և, իբրև ալգոլիսին, դրա պարբերացումն ընդհանուր գծերով պետք է համընկնի հայ ժողովրդի ընդհանուր պատմության պարբերացման հետ: Հայ ժողովրդի պատմության պարբերացման բոլոր հարցերը չեն, որ լուսարանված են բավարար խորությամբ և ընդունված բոլոր հետազոտողների կողմից: Այդ բնագավառում մի շարք հարցեր (օրինակ՝ հին Հայաստանում ստրկատիրական հասարակարգի դրույթան հարցը) մինչև օրս, այնուամենայնիվ, մնում են վիճելի, չնայած դրանց գծով եղել են մի քանի բանավեճեր և հրատարակի վրա կան մեծ ու փոքր ուսումնասիրություններ: Երևանի պատմության ամուշվեցումը մենք ամենակն կարիք չունենք հիմնովին անդադարեանալ այդ ընդհանուր հարցերին և խորամուխ լինել հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը վերաբերող բանավեճերին, բայց անհնար է և զբանջ կողով անարարի անցնել:

Երևանի պատմության պարբերացումը կատարելիս, բացի հայ ժողովրդի պատմության պարբերացումից, մենք նկատի ենք ունեցել՝ հենց բուն քաղաքի պատմության ընթացքը, նրա քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմության առանձնահատկությունները: Երևանն այժմ գոյություն ունեցող աշխարհի այն հնագույն բնակատեղիներից է, որը անցել է հասարակական շուրս տնտեսաձև (նախնադարյան համայնական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական) և 1920 թվականից թեկուխնի սոցիալիստական ժամանակաշրջանը: Հաշվի առնելով քաղաքի և՛ սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու քաղաքական պատմությունը, և՛ հայ ժողովրդի ու ընդհանուր պատմության պարբերացումը, երևանի պատմությունը մասնատել ենք հետևյալ ժամանակաշրջանների՝ հնագույն և հին (վաղագույն ժամանակներից մինչև VII դ. մ. թ.), միջին (VII—XVIII դդ.) և նոր (XIX դար և XX դարի սկզբը):

Քաղաքի պատմության դարձակետերից երկուսը՝ նրա հիմնադրման տարին (782 թ. մ. թ. ա.) և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը (1917 թ.) կարծում ենք չեն կարող վիճարկման ենթարկվել: Այստեղ միայն խոսք կարող է լինել այն մասին, թե ինչու սահմանափոխ է ընդունված ոչ թե 1920 թվականը, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, այլ՝ 1917

թվականը: Բայց թվում է, թե այդ նույնպես լուրջ օտարերկրյան չի կարող հարուցել, եթե ընդունենք, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև 1920 թվականը բնորոշող 3 տարին փաստորեն երկրում սովետական կարգեր հաստատելու համար ծավալված պայքարի տարիներ էին, մի պայքար, որը հաղթանակով պսակվեց 1920 թվականի նոյեմբերի 29-ին Բաղաբի պատմության միջին շրջանի արշալույս ենք համարել VII դարի (մ. թ.) սկիզբը, նկատի ունենալով, որ այդ ժամանակվանից բազմաթիվ արդեն հիշատակվում է մեր մատենագրության մեջ: Աշխարհային առաջին զորում նշվում է այն մասին, որ Երևանը մեր մատենագրությանը հավանաբար հայտնի է եղել ավելի վաղ ժամանակներից: Բայց այդ միայն հավանական ենթադրություն է և չի կարող հիմք դառնալ պատմության պարբերացման այս կամ այն զարձակեղծ որոշելու համար: Այսպիսով, հնագույն ու հին և միջին շրջանի սահմանագիծը VII դ. սկիզբը համարելը նույնպես չի կարող մեծ առարկության տեղիք տալ: Ընդունելի կարող են լինել նաև մյուս ներքին սահմանափակը, բացառությամբ 1500, 1801 և 1879 թվականների, որոնք նույնպես մեղ մտո ընդունված են որպես բաղաբի պատմության զարձակեղծ և որոնց մասին հարկ ենք համարում սակ հետևյալը:

1500 թվականը իբրև Երևանի պատմության միջին շրջանի սահմանափակ ենք ընդունել նկատի ունենալով, որ XVI դարի սկիզբից Երևանը նվաճվում է մերթ Թարսակառանի և մերթ էլ սուլթանական թուրքիայի կողմից, որ նա ավելի քան 200 տարի գտնվում է կռվանիձոր արևելյան այդ երկու պետությունների միջև և այդ ժամանակաշրջանում ավելի քան 10 անգամ անցնում է ձեռքից ձեռք: Գրանից առաջ էլ Երևանը գտնվում էր օտարների տիրապետության տակ: XIII դարի 30-ական թվականներից մինչև XIV դարի վերջերս այն ենթակա էր մոնղոլ նվաճողներին, ապա Անկ Թեմուրին, նրա հաջորդներին և կարա-կոչունյու ու ակ-կոչունյու ցեղերին, որոնք XV դարի սկզբներից Երևանը զարժել էին օտարների բարբառամբ Սահաթոս կամ Չուխուր-սահաթ կոչված կուսակալության (Երևանի կուսակալություն) կենտրոնը: Կարա-կոչունյուները և ակ-կոչունյուները իրենց նախորդներից՝ մոնղոլներից և նրանց հաջորդներից ոչնչով չէին տարբերվում: Նրանց տիրապետության ժամանակ Երևանը իբրև կուսակալության կենտրոն միայն բարձրացավ վարչա-բաղաբական առումով: Տնտեսական և մյուս առումներով XIII-XIV դարերի համեմատությամբ այն զգալի որևէ փոփոխություն չէր կրել, նրա կրած փոփոխությունը անշուշտ

էր նաև բնակչության ազգագրական կազմի տեսակետից: առաջվա նման Երևանի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը: Մինչդեռ Երևանի պատմության XVI—XVIII դարերը բնորոշվում էին բազաբը երկու պետությունների պայքարի առաջկան դառնալով, օտարերկրյա տարբերի մուտք դործումով և բնակչության մեջ զրանց տեսակարար կշռի աճմամբ, շատ թե ինչ հաստատուն վարչակարգի գոյությունը, ազատագրական և մասամբ սոցիալական շարժումներով: Այդ բուրբին պետք է ավելացնել նաև այն, որ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ Երևանի XVI—XVIII դարերի պատմական կյանքի վերաբերյալ կան բազմաթիվ և բազմատեսակ տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս բաղաբի պատմության այդ շրջանը ներկայացնել ավելի համակողմանի և հանգամանորեն:

Այդ բոլորով հանդերձ 1500 թվականը սահմանագիծ ենք ընդունել զգալի շարժի հաշիվ առնելով նաև տեխնիկական հանգամանակները՝ աշխատության զրբերի միջև որոշ համամասնություն պահպանելու համար: Իսկ այդ բոլորից ղեվար չէ երբակացնել, որ 1500 թվականը մեղ մտո սահմանագիծ չի ընդունվել միայն պայմանական կարգով, այն Երևանի (և Հայաստանի) պատմության մեջ շրջագարձային պահ է:

XVI դարի սկզբներից Երևանում հաստատված պարսկա-թուրքական տիրապետությունը տևում է մինչև 1828 թվականը: Թվում է, թե այդ թվականն էլ հենց պետք է հանդիսանար հիմնական սահմանագիծ միջին և նոր ժամանակների միջև: Բայց անմիտելի է, որ 1801 թվականը նշանավոր է ամբողջ Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի համար: Ինչ խոսք, 1828 թվականը Երևանի պատմության ստենահայտնի զարձակեղծներից մեկն է, բայց այդ, մեր կարծիքով, ամենևին չի բացառում 1801 թվականի կարևորությունը, Հայտնի է, որ 1801 թվականին Վրաստանը Թուսաստանի միացնելուց հետո անմիջապես սկսվեց Անդրկովկասի մյուս մասերի ազատագրումը պարսկական լծից: Այդ հավասար շարժվ վերաբերում է նաև Երևան բաղաբին: Ավելին, XIX դ. առաջին երեք տասնամյակներում Անդրկովկասում տեղի ունեցած բաղաբական ղեպերի կիցակիտերից մեկը Երևանն էր: Այդ 27—28 տարին (1801—1828 թթ.) փաստորեն Երևանը պարսկական լծից ազատագրելու ժամանակաշրջանն էր, եթե նկատի ունենանք, որ այդ տարիներին կազմակերպվել են ռազմական երեք արշավանքներ (1804, 1808 և 1827 թթ.) Երևանը պարսկական տիրապետությունից ազատագրելու

լու համար, որոնցից վերջինը պատկնց վերջնական հաղթանակով Տեղին է նշել, որ այդ տասնամյակների երևանի քաղաքական պատմությունը իրականում համընդհանուր էր Արևելյան Հայաստանի մեծագույն մասի պատմության հետ: Հենց այդ է պատճառը, որ աշխատության երրորդ գրքում այնքան մանրամասնությամբ ենք նկարագրել նշված կրթ արշավանքները՝ դրանք էքստրանսերի միջոցով կապելով Արևելյան Հայաստանի տարբեր տեղերում ժամայված ռազմական գործողությունների հետ:

Այնուհետև, 1801 թվականը XIX դարի սկիզբն է և, իբրև այդպիսին, կարող է սահմանափակ լինել ցանկացած մենագրության ընդգրկած ժամանակաշրջանի համար՝ անկախ նրանից, թե մենագրության թեման ընդհանուր պատմությանն է վերաբերում, Անդրկովկասին, Հայաստանին, թե Երևանին:

1801—1828 թթ. Երևանի խանությունն ու իրա կենտրոն Երևանը զգալի առաջադիմություն են կատարել առտորա-տնտեսական առումով: 1801 թվականին Վրաստանի միացմամբ՝ ռուսական պետությունը դառնում է Երևանի խանության անմիջական հարևանը, առևտուրը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև աշխուժանում է (որով դեպքերում այդ երկու երկրների միջև առևտուրը չի ընդհատվում նույնիսկ պատերազմների ժամանակ), Երևանն այդ առևտրի ամենակարևոր կայաններից էր:

Պարսկական տիրապետության վերջին շրջանում, ինչպես ցույց է տրված աշխատության երրորդ գրքում, նախորդ ժամանակների համեմատությամբ, քաղաքի ընդհանուր տնտեսական կյանքում նույնպես տեղի են ունենում որոշ փոփոխություններ: Փոփոխությունները զգալի էին վերջին խանի՝ Հուսեյնի ժամանակներին, երբ ռուսական ցանցի քարկալմամբ են, արտաքին առևտրի կանոնադրման պատճառով բավական առաջադիմում են քաղաքի գյուղատնտեսությունը, առևտուրը, ինչպես նաև արհեստները: Վերջապես, պարսկական լծից ազատագրվելուց հետո, մաշգին 50 տարվա ընթացքում քաղաքի տնտեսական, կրթության, աշխույթային, վարչական կյանքում և այլ բնագավառներում կատարված տեղաշարժերը ակնհայտորեն ցույց տալու համար անհրաժեշտ էր քաղաքի տեղ կենդանույն պատմության ցուցանիշները համակցելով նախորդ 25—28 տարվա համապատասխան ցուցանիշների հետ ընդգծել դրանց տարբերությունները: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ պարսկական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանի համեմատությամբ բազմակողմանի և լրիվ տեղեկություններ ունենք հենց այդ տասնամյակների վերաբերյալ:

Թվում է, թե ավելի շիշտ կլինին Երևանի ֆեոդալական և կապիտալիստական ժամանակաշրջանների սահմանափորը 1870 թվականը համարելը, երբ Հայաստանում կիրառվեց գյուղացիական ունեցողների և երկիրը այդ թվականից պայմանականորեն թևակոխեց կապիտալիզմի դարաշրջանը: Սակայն մենք քաղաքի կյանքում այդպիսի դարձակետ ենք համարել ոչ թե 1870, այլ 1879 թվականը, երբ Երևանում տարեկանից բուրժուական-քաղաքային ռեֆորմը և կիրառվեց քաղաքային կանոնադրությունը (ГОРОДСКОЕ ПОЛОЖЕНИЕ), որի հիման վրա քաղաքում ստեղծվեց ոչ դասային բնույթի կրոն դումա և քաղաքային վարչություն: 1879 թվականը Երևանի պատմության մեջ պայմանական կերպով սահմանադրային տարեթիվ կարելի է համարել նաև տնտեսական առումով: Մինչ այդ Երևանում կապիտալիստական արդյունաբերության ոչ մի ձևնարկություն գոյություն չուներ, իսկ դրանք՝ հետո՝ 50-ական թվականներից քաղաքում արդեն բացվում են այդ տիպի մի քանի ձևափոխություններ՝ նախ դինու-կոնյակի, ապա նաև պահածոների գործարանները:

Մենք երբեք այնքան մեծ նշանակություն չենք տալիս 1879 թ. Երևանում քաղաքային կանոնադրության կիրառման փաստին, մենք այդ թվականը սահմանաչին ենք համարել պայմանական կերպով, որովհետև քաղաքային կանոնադրությամբ ստեղծված քաղաքային դուման և վարչությունը ինչպես կայսրության մյուս քաղաքներում, այնպես էլ Երևանում ամբողջապես ենթակա էին ցարական աստիճանավորներին ու իշխանության տեղական օրգաններին՝ ոստիկանական վարչությանը, նահանգական վարչությանը և այլոց, որ քաղաքային, այսպես կոչված, ինքնավարության օրգանները Վ. Ի. Լենինի բնորոշմամբ սուսկ ռուսական պետական կառավարման կարևոր հիմնարկները անիվն էին՝ և բանմիջականորեն գտնվում էին արվինիստացիայի հակողության տակ³⁾: Բայց և այնպես, դարձրվածական-քաղաքային ռեֆորմը, որով քաղաքի ներքին կյանքը անցավ բուրժուալիզմի տեղական ներկայացուցչական հիմնարկների՝ քաղաքային դումայի և քաղաքային վարչության ձևերը: Քաղաքին պատկանող հողերը, դպրոցական ու կոմունալ գործը, առևտրի ու արհեստագործության վրա անմիջական հակողությունը և տեղական կարգի այլ բնագավառներ քաղաքային կանոնադրության կիրառումից հետո անցան քաղաքային դումայի և վարչության իրավասության ներքո: 1861 թվականի Ռուսաստանի կացու-

³⁾ В. И. Ленин, Соч., т. V, изд. IV, М., 1946, էջ 32:

Բաձևի և այդ թվականի գյուղացիական ռեֆորմից բխող ու դրան հաջորդած այլ ռեֆորմների, որոնց թվում և քաղաքային կանոնադրության կիրառման մասին 4. Բ. Անիկոբ գրում է. «Եթե մի ընդհանուր հայացք ձգենք ռուսաստանյան պետության ամբողջ կացության վրա 1861 թվականին, այսպե՛ս անհրաժեշտ է ընդունել, որ այդ փոփոխությունը եղել է բայ՛ն ֆեոդալական միապետությունը բուրժուական միապետության վերածելու ուղղությամբ: Այդ շնչոտ է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից: Բավական է հիշել դատարանի, վարչության, տեղական ինքնակառավարության քննադավաճում կատարված ռեֆորմի և 1861 թվականի գյուղացիական ռեֆորմին հաջորդած այլ ռեֆորմների բնույթը, — համոզվելու համար այդ գրույթի ճշտության մեջ»¹:

Պետք է նկատի ունենալ, որ ցարական ինքնակառավարյան կողմից, XIX դարի այն ինքնակառավարյան, որը 4. Բ. Անիկոբ արտահայտությանը օտարված էր «վերինից» ազատագրել գյուղացիներին, բայթայելով նրանց, ճանաչված քաղաքացիական կապիտալիզմի համար², բուրժուական-քաղաքային ռեֆորմը կիրառվում էր կայսրության ոչ բոլոր քաղաքներում: Բուրժուական-քաղաքային կանոնադրությունը կիրառվում էր միայն այնպիսի քաղաքներում, որոնցում կապիտալիստական տնտեսությունը և բուրժուազիան հասել էին որոշակի աստիճանի, կամ, համեմատյալ գեպս, արդեն սակայ էին դրանց կազմավորման ու զարգացման որոշ նախադրյալներ: Հետևապես ոչ թե բուրժուական-քաղաքային կանոնադրությունն ինքը, այլ նրա կիրառման փաստը ըստից է տեսիլ, որ նրանում XIX դարի 80-ական թվականների սկզբների սակայ էին կապիտալիստական զարգացման և բուրժուական հարաբերությունների վերջնական ձևավորման նախադրյալները: Այդ տեսակետից էլ 1879 թվականը, մեր կարծիքով, նրանք քաղաքի կյանքում, պայմանականորեն, կարելի է համարել նշանավոր տարեթիվ:

Մեր այս տեսակետը կարելի է հիմնավորել նաև տնտեսական ու քաղաքական փաստարկումներով: Այսպես, 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին քաղաքում հանդես էին եկել արտադրական նոր ձևափոխությունների միաստի մեկ ֆաբրիկա (նախկինում էլ կար ծխախոտի ձևափոխություն, բայց այլիլի փոքր էր ու տևյալազործական տիպի), երեք տպարան,

հանրային շրերի երկու «գործարան»³, 1885 թվականին հիմնվում է Ն. Փալիբովի գինու-կոնյակի գործարանը, որը 1837 թվականից գործում է կանոնավոր կերպով, և այլն:

Նրանի տնտեսական կյանքի վրա քիչ ազդեցություն է թողել 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Ինչպես հայտնի է այդ պատերազմի հետևանքով Ռուսաստանին միացվեց Կարսի մարզը՝ բաղկացած Օլթինի, Կարսի, Սարիղամաշի, Կաղզվանի քաղաքների շրջաններից: Պատերազմից հետո, այդ նոր տերիտորիաների միացման և սովորաթիվ կայսրոսկրների առկայության շնորհիվ օդու և գինու պահանջն այլևիլ է մեծանում: Նրանան այժմ Ալեքսանդրոպոլի, նոր Բալազգետի և նրանի նահանգի բնակիչները կազմակերպել են միասին սկսեց խմբը մատակարարել նաև Կարսի մարզի քաղաքներին և շրջաններին: Գինու և օդու արտադրության ձևափոխություններն աստիճանաբար մեծանում են և որոշ չափով կատարվազործվում: 80-ական թվականների սկզբներից նկատվում է նաև տեղական էթան հումքի վրա հիմնված արտադրության մյուս ձևափոխությունների (կաշմշակման, ծխախոտի, բամբակալուծի և այլն) խոշորացում և կատարելազործում:

80-ական թվականների նրանի արհեստագործությունը որոշակի կերպով տարբերվում էր 70-ական թվականների արհեստագործությունից: Ռուսական զարգացող արդյունաբերության շնորհիվ նրանում բայթայելում են արհեստներից շատերը: 70-ական թվականներին արհեստների բուն զարգացումը 80-ական թվականներին սկզբներից փոխարինվում է դրանց բայթայումը: Հայկական ՍՍՀ ՊԿՊԼ 125-րդ ֆոնդի 7 և 25-րդ գործերից երևում է, որ եթե 1864 թ. նրանում կային 1710 վարպետ, 655 բանվոր և 972 աշակերտ (բոլոր միասին 3337), այսպե՛ս 1886 թ. դրանց համապատասխան թվերն էին՝ 396, 138 և 239 (բոլոր միասին 773): Այսպիսով, եթե մի կողմից բայթայում էր արհեստագործությունը, այսպե՛ս մյուս կողմից արտադրության որոշ ճյուղեր (գերազանցապես տեղական էթան հումքի վրա նշած ճյուղերը) զարգանում էին նոր հումքով և ոչ այդ կերպով: Գաղափարը քաղաքում նկատելի է դառնում 70-ական թվականներին վերջերից և 80-ական թվականների սկզբներից: Հետևապես, տնտեսական առումով ևս 1879 թվականը կարելի է պայմանական

6030

¹ 4. Բ. Անիկոբ, Երկիր, հ. 17, Երևան, 1950, էջ 122:
² ՏՆՄ՝ Նույն տեղը, հ. 15, էջ 416:

Ք. Ե. Հակոբյան, Երևանի պատմությունը (1807—1879 թթ.): Երևան, 1959, էջ 433—434:
³ ՏՆՄ՝ Նույն տեղը, էջ 405:



ըբազարձային պահ համարել Պետր է նկատի ունենալ նաև, որ նշված պատճառների հետևանքով, արհեստներից շատերի քայքայման հետ միասին 80-ական թվականներից համբարտվյալները սկսում են կորցնել իրենց նախկին դիրքերը՝ XX դարի սկզբներին դադարելով գոյություն ունենալուց:

80-ական թվականներին Երևանում նոր երևույթներ են նկատվում նաև հասարակական ու մշակութային կյանքի բնագավառներում: Այդ թվականներին Երևան է մուտք գործում նարոդնիկական դադափարախոսությունը և այնտեղ ունենում իր կողմնակիցները, անում են հակացարական տրամադրություններ: 1880—1883 թթ. Երևանում առաջին անգամ հիմք է դրվում պարբերական մամուլին (1880 թ. հրատարակվում է «Պոսակ» թերթը, 1881 թ. «Առողջապահական թերթ», 1883 թ.՝ «Երևանի հայտարարություններ»-ը), արական պրոգրեսիվական վերածվում է դասական դեմոկրատիայի, Հոփսիսիմյանց ուսումնարանը՝ պրոգրեսիվայի և այլն: Մրանք, անշուշտ, երկրի ընդհանուր պատմության պարբերական համար շնի կարող սրել շափով հիմք ծառայել, բայց մեր կարծիքով մի առանձին քաղաքի կյանքում, ինչպիսին մեր ուսումնասիրության առարկա Երևանն է, նշանակություն ունեն և պետք է պատշաճ կերպով նկատի առնվեն:

Նշված փաստերն ու իրողությունները մեզ համար հիմք են ծառայել ֆեոդալական և կապիտալիստական Երևանի դարձակետը պայմանականորեն համարելու 1879 թվականի՝ բուրժուական-քաղաքային կանոնադրության կիրառման տարին:

«Երևանի պատմությունը» վերնագիրը կրող մեր այս աշխատությունն ունի բավական երկար պատմություն: Դրա վրա սկսել ենք աշխատել 1948 թվականից: Սկզբում կարծում էինք, որ այն բազկացած է լինելու: Երեք զբոսից կամ հատորից, որոնցից առաջինը ընդգրկվելու էր քաղաքի հիմնադրումից (782 թ. մ. թ. ա.) մինչև XIX դարի սկիզբը՝ 1801 թվականը, երկրորդը՝ 1801—1879 թվականները, իսկ երրորդը՝ 1879—1917 թվականները: Այդպիսի պլանով էլ հրատարակվեց աշխատության վերջին երկու դիրքը: Բայց փորձը ջուլջ տվեց, որ 782 թ. մ. թ. ա.—1801 թվականը ընդգրկող հսկայական ժամանակաշրջանը անհնար է մեկ գրքով առլ. նյութի առատությունը, պրոլեմային շատ հարցերի գոյությունը և այլ

հանգամանքներ բացառեցին քաղաքի պատմության մոտ 2600 տարի ընդգրկող այդ ժամանակաշրջանը լուսարանել մեկ հատորով: Ուստի որոշեցինք այն բաժանել երկու հատորի, որոնցից մեկը՝ սույն հատորը ընդգրկում է քաղաքի հիմնադրումից մինչև XV դարի վերջն ընկած ժամանակաշրջանը, իսկ մյուսը՝ XVI—XVIII դարերը՝ այսինքն 300 տարվա մի ժամանակաշրջան: Այսպիսով, աշխատությունը բազկացած է չորս զբոսից, որոնցից երրորդն ու չորրորդը հրատարակվել են 1959 և 1963 թվականներին, առաջինն այս է, որ դնում ենք հրատարակի վրա, իսկ երկրորդը, որը նույնպես պատրաստ է, հրատարակության կհանձնվի առաջիկայում:

Աշխատության մեջ տեղ են գտել վավերագրային փաստաթղթերի (վկայականների, ատեստատների, պայմանագրերի, արձանագրությունների և այլն), առանձին կառույցների (բերդեր, եկեղեցիներ, բնակելի շենքեր, ձևանարկությունների ու ուսումնական հաստատությունների շենքեր), քաղաքի թաղամասերի ու ընդհանուր համայնապատկերի, նշանավոր մարդկանց բազմաթիվ նկարներ, քաղաքի, նրա բերդերի ու գրոսալիների հատակագծեր և սխեմաներ: Աշխատության յուրաքանչյուր հատորի վերջում տրված են անձնանունների ու տեղանունների ցանկեր: Ձեռնդրված են քաղաքի պատմության կարևոր զեպրերի ժամանակագրությունը, իշխանների, խաների, զենեքալ-նահանգապետների ժամանակագրությունը, վկայակոչված դրականության ցանկերը: Յուրաքանչյուր հատորի վերջում տրված են ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներ:

Մեր մալրաբաղաքի՝ հնագույն ժամանակներից մինչև Հոկտեմբերյան օտոյախոսական մեծ հեղափոխությունն ընկած մոտ 2700 տարվա պատմությունն ավելի լրիվապես ներկայացնելու նպատակով, նշված չորս զբոսերից բացի, պատրաստել ենք նաև կարևոր վավերագրական փաստաթղթերի մի ժողովածու՝ առաջարանով, ձանոթագրություններով և քաղաքի պատմության գրականության բանկով հանդիսով:

Երևանի մասին եզած գրականության ընդհանուր բնութագրումը: Սկզբնաղբյուրները և դրանցից կարևորագույնների բնույթը (մաբֆ-սիզմի կրպիկներ, արխիվային և հենցիտակոն նյութեր, արձանագրություններ, հրատարակված սկզբնաղբյուրներ): Պարբերական մամուլ (թերթեր և ամսագրեր): Ուսումնասիրություններ և այլ կարգի գրականություն

Երևանագիտությունը հայոց պատմության համեմատաբար էրիտասարդ նյութերից է, չնայած Երևան քաղաքի պատմական կյանքը մոտ 3000 տարվա է հասնում: Եթե պատմական ուսումնասիրությունները Երևանի մասին զեռու սակավաթիվ են ու որոշ հարցեր թիչ հետազոտված, ապա նույնը չի կարելի ասել աղբյուրների մասին: Այսած ուղարտական ննարչի ժամանակներից Երևանի մասին պահպանվել են հնագիտական և գրավոր շատ հիշատակարաններ, որոնք ննարալրություն են տալիս այժմ նրա պատմությունը լուսարանել թավարա ամբողջությունը: Ուրարտոի կործանումից ու արեմենյան տիրապետության անկումից հետո՝ IV դ. (մ. թ. ա.) մինչև VII դարը (մ. թ.) Երևանի մասին չկան արժանահավատ տեղեկություններ: Բայց դրանցից հետո հիշատակությունները դանում են համախափ ու անընդմեջ: XV դարից, երբ Երևանը դանում է վարչական կենտրոն և Հայաստանի մասշտաբով նշանավոր քաղաք, դրավում է պատմիչների և ճանապարհորդների ուղաղությունը: Այնպես որ, իր ընդհանրություն մեջ վերցրած, Երևանի վերաբերյալ ուղղակի կամ անուղղակի սկզբնաղբյուրներն ու գրականությունն այնքան թուզմաթիվ ու թուզմազան են, որ անհնար է դրանք բոլորը առանձին-առանձին ներկայացնել: Ուստի սահմանափակվելու ենք միայն ընդհանուր դիտություններով և կարևորագույն աղբյուրների ու ուսումնասիրությունների համառոտ բնութագրություններով:

Աշխատության մեջ մի շարք հարցեր՝ Երևանի խննդության վարչա-քաղաքական կարգը, քաղաքային-բուրժուական ռեֆորմի բնույթը, Արևելյան Հայաստանը պարսիկական լծից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու փաստի առաջադիմական նշանակությունը, արհեստագործությունը քաղաքային և կապիտալիստական ձևերնարկություններ սուաշանալու պայմանները, Արևելյան Հայաստա-

նը տնտեսական առումով աուսական կայսրության մեջ ձուլվելու ժամանակը, կապիտալիստական վիճակագրության պակասավոր լինելը և այլն լուսարանելիս ուղեցույց ենք ունեցել Կ. Մարբաբի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի հանրահայտ գրությունները:

Մեր կողմից օգտագործված սկզբնաղբյուրների մյուս շարքը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ արխիվային և հնագիտական նյութեր, վիճակի արձանագրություններ, պատմագիրների ու այլ կարգի հեղինակների հրատարակված երկեր:

Արխիվային նյութերի մեծ բաժինը ընկնում է ՀՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվին: Այստեղ մենք ավելի քան 10 տարվա ընթացքում (1949—1960 թթ.) սրղտումներ ենք կատարել շուրջ 45 ֆոնդերի մեջ (№ 1, 3, 4, 5, 6, 7 և այլն) և ուսումնասիրել ավելի քան 50 հազար թղթապանակներ: Տարիների ընթացքում մեր հանրապետության արխիվից վերցված վավերագրային փաստաթղթերը հնարավորություն են տվել լուսարանելու քաղաքի արհեստագործության, առևտրի, գյուղատնտեսական նյութերի, վարչական վիճակի, մշակույթի, կրճատել պայմանների, քաղաքի ազգաբնակչության հետ կազմված բազմաթիվ հարցեր: Գրանք կարևոր նյութեր են պարունակում նաև աղաատագրական և սոցիալական շարժումների վերաբերյալ, որոնք նույնպես օգտագործված են համարյապատասխան հարցեր լուսարանելիս:

Պատկանելի մաս են կազմում արխիվային և ձևագրային նյութերը, որ վերցրել ենք Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից: Այստեղ համապատասխան նյութեր ենք վերցրել և՛ Երիցյանի արխիվից, կաթողիկոսական դիվանից, կոն Տիգրանյանի հիշատակարանից, Մեսրոպ Մազիսարոսի տասնյակ թղթապանակների կազմող արխիվից (ձևագրաց ցուցակից), տասնյակների հասնող արժեքավոր այլ ձևագրերից ու հիշատակարաններից: Մատենադարանից վերցրած նյութերը հիմնականում վերաբերին մեր քաղաքի ազգաբնակչության հողային ու գույքային հարաբերություններին (մեծամասամբ վանքապատկան և եկեղեցական հողատիրությանը), քաղաքական զեպերերի և մշակույթին: Գրանք իրենց ճնշող մասով պատկանում են XVI—XVIII դարերին և շատ մասերում կցկուտր են ու անորոշ: Այնուամենայնիվ հիշատակարանների համագրումից հնարավոր են եղել պարզարանել մեծ ու փոքր մի շարք հարցեր, առանց որոնց զովմի է շարագրել քաղաքի համակողմանի պատմությունը: Մեր դիտությունն ու մշակույթային կյանքի առանձին գործիչների արխիվներում Երևանի վերաբերյալ նյութեր կան ՀՍՍՀ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում:

Այստեղ ուսումնասիրել ենք Ն. Շահադիզի, Պ. Պոռչյանի, Վ. Փափազյանի, Էմին Տեր-Գրիգորյանի և ուրիշների ֆունդերը, որոնցում նրանց կյանքի ու գործունեության հետ միասին կարևոր տեղեկություններ են պահպանվել բազաբի թատրոնի, դպրոցների, շրմուղի և բազաբային կյանքի վերջերսի և XX դարի առաջին կեսում ներևանում ապրած դպրոցական, լուսավորչական և թատերական մի շարք գործիչների նկարները, որոնք զետեղված են աշխատության շրջաօրգ գրքում: Հեղափոխական շարժումների վերաբերյալ եղած նյութերի մեծադույն մասը վերցրել ենք ՀԿԿ ԿԿ կուսարխիվից:

Արխիվային նյութերի մի որոշ մաս ձևոր է բերված Սովետական Միության այլ արխիվներից՝ Պետական Կենտրոնական ուղղմա-պատմական (ՄԳՎՈԱ), Մոսկվայի Պետական կենտրոնական պատմական (ՄԳՈԱՄ), Լենինգրադի Պետական կենտրոնական պատմական (ՄԳՈԱՂ) և Վրացական Պետական կենտրոնական պատմական (ՄԳՈԱ Գր. ՍՍՐ) արխիվներից: Վերջիններից բաղաձայն նյութերը վերաբերում են նրանցին թաղարական պատմությանը, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուն, քաղաքի արտաքին առևտրին և տնտեսական կյանքին: Պետական կենտրոնական ուղղմա-պատմական (ՄԳՎՈԱ) արխիվից վերցրած նյութերի մեջ կան նաև քաղաքի ու նրա բերդի մի քանի հատակագծերը, որոնք առաջին անգամ նկատել ենք և դրանց լուսանկարչական պատճենները զետեղել աշխատության երրորդ գրքում:

Նրևանի պատմության հնագույն ժամանակաշրջանը հիմնականում վերականգնվում է հնագիտական նյութերի հիման վրա, զրանք հանվում են կազմակերպվող պեղումների և շինարարական աշխատանքների ընթացքում քաղաքի զրեթե բոլոր թաղամասերում և նրա շրջակայքում: Քաղաքի զոլոյթյան տարբեր ժամանակների վերաբերող հնագիտական հսկայական նյութեր՝ գործիքներ, զենքեր, իրեր, զարդեր կուտակվել են պեղումների ընթացքում: Տաճարների, պալատների և այլ շինքերի մնացորդներ բացվել են հնագույն Շենգավիթի բնակավայրի և Էրբուռնի ու Քելչիբախի բերդաքաղաքների տեղում. պեղումներով և դիպլոմատով հայտնաբերվել են մի շարք սեպագիր արձանագրություններ: Հնագիտական պեղումները տվել են ուրարտական ժամանակաշրջանին անմիջապես հաջորդած աքեմենյան տիրապետության շրջանի և հետագա դարերին վերաբերող նյութեր, որոնց մեջ հատուկ արժեք նն ներկայացնում տարբեր ժամանակների և պետությունների դրամները:

Նրևանում հայտնաբերված նյութական կուլուրայի այդպիսի բազմազանությունն ու ծավալը համապատասխան մասնագետների հնարավորություն տվեց լուսարաննու մեր մայրաքաղաքի տարբեր ժամանակների պատմության շատ հարցեր. Շենգավիթի տեղում եղած հնագույն բնակավայր-ամրոցի բնույթը և զոլոյթյան մասավոր ժամանակները, հնագույն նրևանի՝ Էրբուռնիի հիմնադրման ժամանակը և հանգամանքները, նրա բնույթը, խաղաղած զեքը, պատմական ճակատագիրը, Քելչիբախի բերդաքաղաքի պատմության հարցերը և այլն, և այլն: Դրանց հիման վրա հնագիտա-պատմաբանները պարզարանել են ոչ միայն այն, թե ինչ են ներկայացրել Էրբուռնիի—նրևանի ու քաղաքի այլ մասերում եղած հնագույն բնակավայրերը, այլ տվել են դրանց բնակչության հասարակական հարաբերությունները, արտադրության բնույթը, շինարարական ու արտադրական տեխնիկան և շատ հարցեր, կենդիվ Մարտի հայտնի այն մտքից, թե պատմական ժամանակաշրջանները իրարից տարբերվում են ոչ թե այն բանով, թե ինչ են արտադրել, այլ այն բանով, թե ինչպես են արտադրել:

Նրևանի պատմության շատ հարցերը լուսարանելուն օգնում են վիճաբոր արձանագրությունները: Հայաստանը քառի երկիր է և պատահական չէ, որ այստեղ այն փոխարինել է Եղիպտոսում զործածված սեպագրության և Միջագետքում, Ասորեստանում և խեթերի երկրում տարածում գտած աղյուսին: Ըստ զոլոյթյան ձևի և հնության դրանք բաժանվում են երկու խմբի՝ սեպագիր և սովորական հնչյունային տառերով գրված արձանագրություններ: Հայաստանում հայտնաբերված սեպագիր արձանագրությունների թվերը հասնում է ալիևի բան շուր հարյուրի, որոնք հավաքել և վերծանվել են ուրարտագետների կողմից: Ուրարտական արձանագրությունների նորագույն ժողովածուն, որը մեզ մոտ առաջմ համարվում է լավագույնը, կազմել է Գ. Ա. Մելիքիշվիլին: Էրբուռնի—նրևանի վերաբերող ուրարտական սեպագիր արձանագրությունների մեջ կարևոր են հատկապես երեքը, որոնք բոլորն էլ պատկանում են Արգիշտի I թագավորին: Դրանցից մեկը տեղ է գտել վանի մոտ գտնվող Խոսիստյան տաճարում մեջ, իսկ մյուս երկուսը հայտնաբերվել են տեղում՝ նրևանի հարավ-արևելյան մասում՝ Արին-բեղ բլուրի շրջանում, հնագույն Էրբուռնիի տեղադրավայրում: Այդ արձանագրությունների մեջ ուրարտական թագավորը ազգաբարձ է Էրբուռնի քաղաքի հիմնադրման և կառուցման մասին:

Առանձին հարցերի լուսարանման համար ոչ պահա նշանակությամբ ունեն նաև Քելչերախինի (Կարմիր-բլուր) և Հերբոսիի (Արին-բերդ) սննդամթերքի քանակական հայտնաբերած այն սաղարկայինները, վաճառները և այլ իրեր, որոնց վրա սեպագրերով նշված են որանց պատկանելության մասին: Սեպագիր այլ հիշատակությունների վերծանման ու ուսումնասիրության շնորհիվ հայտնի է դարձել դրանց պատրաստման ժամանակը, ախտիկան: Դրանց վրա նշված են այն թագադրողների անունները, որոնց պատկանում էին դրանք և այն քաղաքների (Հերբոսի ու Քելչերախին) անունները, որտեղ դրանք պահվում էին որպես զարգաստրկա:

Անհամեմատ ավելի մեծաթիվ ու բազմաբովանդակ են հնչյունային գրերով վիճագիր արձանագրությունները: Դրանք չնչին բացառությամբ հայերեն արձանագրություններ են, որոնք փորագրված են երկրով մեկ սփռված տաճարների, եկեղեցիների, զավթաների, քարավանատների, մահաբանների, խաչքարերի վրա: Վիճագիր արձանագրությունների համարմամբ, վերծանմամբ և ուսումնասիրությամբ զբաղվել են շատ շատերը՝ Հովհ. Ծառնախոնյանցը, Ղ. Արիշանը, Ն. Մառը, Ը. Օրբելին, Գ. Լուսինիյանը, Կ. Կոստանյանցը, Կ. Ղաֆազարյանը, Ս. Բարխուդարյանը և ուրիշներ: Մինչև XX դարի սկզբները հայտնի հայերեն վիճագիր բոլոր արձանագրությունները հավաքել և մի ժողովածուով հրատարակել է Կ. Կոստանյանցը: Հետագայում հայտնաբերվել են հարյուրավոր նոր արձանագրություններ և ավելի ճշտվել նախկինում հայտնի շատ արձանագրությունների ընթերցումը: Այդ պատճառով այժմ կարելի է զգացվում վիճագիր արձանագրությունների նոր ժողովածուների կազմման, որին ձեռնամուխ է եղել ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողների մի կոլեկտիվ: Արդեն հրատարակի վրա են ապագա համընդհանուր ժողովածուի առաջին և երկրորդ պրակները¹, աշխատանքների և կատարվում մյուս պրակները կազմելու համար:

Վիճագիր արձանագրություններում Երևանի մասին հիշատակվում է IX դարից (Սևանա վանքի արձանագրություն): Երևանի եկեղեցիների պատերին (Կաթողիկե, Պողոս-Պետրոս, սբ. Լուվհանյան և) և այլ վայրերում եղած արձանագրությունները, որոնք այս

կամ այն շափով կազմված են քաղաքի պատմության հետ, հասնում են մի քանի տասնյակի: Առանձնապես մեծ թիվ են կազմում XIII—XIV և XVII—XVIII դարերին վերաբերող արձանագրությունները: Դրանց բովանդակությունը հիմնականում կազմում են՝ եկեղեցիների ու վանքերի սովոր ընդհանուրությունները, սարքերի քննարկ «բարեգործական» աշխատանքները, կալվածքների վաճառքը և այլն: Դրանց հազորյաձև սեղեկությունները՝ հնարավորություն են ընձեռում լուսարանել քաղաքի հողատիրության, հողային հարաբերությունների, պաշտամունքի հետ կազմված կառուցվածքների, հասարակական տարբեր շերտերի իրավունքների ու անտեսական վիճակի, արհեստների, առևտրի, քաղաքի քննարկի և մի շարք այլ հարցեր: Արձանագրություններ իբրև սկզբնաղբյուր պատմադրական երկերի և հիշատակությունների նկատմամբ ունեն այն ստակությունը, որ պահպանվել է մեզ են հասել իրենց նախնական վիճակով՝ չհաշված եղծումները, որոնք երբեմն միայն զմլարայնում են վերծանումները: Մինչդեռ պատմագրական երկերը տարբեր ժամանակներում և տարբեր գրիչների կողմից ընդգրկելով ընթացքում հաճախ ենթարկվել են որոշ փոփոխությունների, որոնք երբեմն պատճառ են դառնում գիտական տարակարծությունների:

Եթե չհաշվենք ուրարտական արձանագրություններում հիշատակված էրեբունի—Երևանը, հնագույն ու հին աղբյուրներում երևանված էրեբունի—Երևանը, հնագույն լի հիշատակված: VII—XII դարի ընդհուպ մինչև VII դարը գրեթե չի հիշատակվում: VII—XII դարի աղբյուրներում այն հիշատակվում է ոչ հաճախ, իսկ հետագայում՝ մասնավոր XV դարից սկսած Երևանի արդեն դառնում է մեր և օտարերկրյա պատմագիրների ուշագրության առարկան: XV—XVII դարերի Երևանի վերաբերյալ վիճակություններն ու հիշատակություններն այնքան շատ են, որ հնարավոր չէ դրանց նույնիսկ մոտադրել թվարկումը:

Լայ մատենագրության մեջ Երևանը առաջին անգամ որոշակիորեն հիշատակվում է «Գիրք թղթոց»-ի մեջ: «Գիրք թղթոց»-ի մասին առաջին անգամ հիշատակվում է Ուխտանես եպիսկոպոս պատմիչը: Դրա երևան դալու ժամանակը վերջնականապես չի նշվում: Սակայն հավանական է համարվում, որ այն սկսել են կազմել «Կանոնագրքի» հետ միասին², որը առաջին անգամ խմբագրել է Լուվհան Օձնեցին VIII դ. սկզբներին: Երևանի այդ հիշատա-

¹ Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիճագիր տարեգիր, քոչակ ժողովածու արձանագրությունների հայտ, Ս. Պետրոպոլ, 1913:

² Գրե՛ն հայ վիճագրության, պրակ I, 1955, պրակ II, Գորիս, Սիսիանի և Կափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1966:

¹ Տե՛ս «Գիրք թղթոց», մատենագրության նախնեց, Քիֆլիս, 1961, նախաբան, էջ 9—9:

կումբ վերաբերում է VII դարի սկզբին, Դվինի եկեղեցական ժողովի անչլովյանը, որին մասնակցած հոգևորականների թվում նըշվում է նաև Երևանից նույն ժողովին մասնակցած Գավիթ անունով մի հոգևորական: Այդ հիշատակությունը սակայն այնքան անորոշ է, որ զրա հիման վրա դժվար է գաղափար կազմել այն ժամանակվա Երևանի մեծության և իրրև բնակավայր նրա բնույթի վերաբերյալ: Հաջորդ հիշատակությունները, ինչպես կտեսնենք, կատարվել են նույն դարի 40-ական և 50-ական թվականներին, կապված արարական արշավանքների հետ: Ինչպես կտեսնենք, որոշ բանասերների ու պատմաբանների այն կարծիքը, թե Սերնոսի այդ հիշատակությունը վերաբերում է ոչ թե Երևանին, այլ Առեստավանին (Վանա լճի հյուսիս-արևելյան ափին) կամ Հեր (այժմ՝ Խոջ) քաղաքին, անհամադրել է ու անբերունելի: Այնպես որ մեր մատենագրության մեջ Երևանի երկրորդ հիշատակության պատիվը պատկանում է VII դարի մասնագիր Սերնոս նպիկոպոսին, որն «Պատմութիւն ի Հերակլոս» երկի մեջ այլ շատ հարկերի հետ միասին նկարագրել է նաև արարական առաջին արշավանքները: Իսկ այդ նկարագրություններից երեսու՛մ է, որ Երևանն այդ ժամանակ ուներ ամուր բերդ: Իրենց բնույթով Սերնոսի վկայությունից ոչնչով չեն տարբերվում Հովհաննես Դրասխանակերտցու, Սամվել Անեցու և այլոց հիշատակությունները, որոնք նույնպես վերաբերում են արարական առաջին արշավանքներին և որոնց մեջ Երևանի հիշատակումը ոմանք համարում են Սերնոսից վերցրած: Միանգամայն այլ բնույթի է Ստեփանոս Օրբելյանի Երևանի մասին կատարած երկու վկայությունները: Դրանցից մեկում նա հաղորդում է Երևանից Սյունյաց աշխարհի Մարմինս վանքին այդինևր տալու վերաբերյալ Իսկ երկրորդ վկայության մեջ նա Երևանի անունը նշում է նույն աղետո՛ր Վայոց ձոր գավառում կառուցված մի վանքի սահմանները թվարկելիս¹: Օրբելյանի մյուս ժամանակակիցները Երևանի վերաբերյալ էական նշանակություն ունեցող վկայություններ չունեն, եթև նկատի չունենանք Վաղանք, որն իր «Աշխարհացոյց»-ի մեջ Երևանը հիշատակել է իրրև Կոտայք գավառի կենտրոնն: Նույն բնույթն ունեն նաև Երևանի մասին Ստ. Օրբելյանի ժամանակակից Մխիթար Այրիվանեցու հիշատակությունները: Վերջինիս պատմագրական երկը՝ մի համառոտ ժամանակագրություն է, որն իր մեջ ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև 1289 թվականը:

¹ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգն Սիսական, Քիփիս, 1910, էջ 174, 179, 361:

² Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցու, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860:

XIV—XV դարերից, ինչպես ասվեց, Երևանի նշանակության և երկրի մաշտաբով նրա դերի բարձրացման հետ միասին ավելանում ու բազմաբովանդակ են դառնում սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները: Երևանի այդ ավելի քան 600 տարվա (XIV—XX դդ. սկիզբ) պատմության վերաբերյալ եղած վկայությունները ցրված են մեծ թիվ կազմող զանազան հիշատակարաններում, ժամանակագրություններում, պատմագրական երկերում, ճանապարհորդական հուշերում, ականատես և ժամանակակից հեղինակների գրքերում, պաշտոնական ժողովածուներում, տարբեր ընկերությունների հրատարակած տեղեկատուներում, օտար աղբյուրներում:

Բովանդակ Հայաստանի հետ միասին Երևանի պատմության վերաբերյալ շատ տեղեկություններ պարունակող հայերեն ձեռագրերի հիշատակարանները դրավել են մի շարք մասնագետների ուշադրությունը: Նրանց մշակման գործում առանձնատես խոշոր աշխատանք են կատարել Հ. Տաշյանը, Գ. Հովսեփյանը, Մեսրոպ Մագիստրոսը, Հ. Աճառյանը և ուրիշներ, որոնք կազմել են հայերեն ձեռագրաց ցուցակներ, դրանցում գիտնդել նաև այն բոլոր հիշատակությունները, որոնք պատկանում են գրիչներին, նախընդներին, ձեռագրերի հեղինակներին և այլն: Հ. Տաշյանից, Գ. Հովսեփյանից և Մեսրոպ Մագիստրոսից հետո (վերջինիս կազմած համընդհանուր ձեռագրաց ցուցակը, որի ծավալը հասնում է մի քանի տասնյակ թղթապանակի, գտնվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, ձեռագիր վիճակում և կարիք ունի որոշ վերամշակման) պատմագրական տեսակետից շնորհակալ աշխատանք է կատարել Լ. Ս. Խալիկյանը, որը հավաքել, մշակել և շորս մեծածավալ գրքերով հրատարակել է հայերեն ձեռագրերի հիշատակարանները¹: Հիշատակարաններում կարևոր տեղեկություններ են պահպանված Երևանի բաղաբաղական անցքերի, հողային հարաբերությունների, մշակութային կյանքի, բնական աղետների, վարչա-բաղաբաղական կարգի և այլ հարցերի մասին: Զտագրանցություններում և շարադրել տաանց այդ հիշատակարաններին դիմելու:

¹ Լ. Ս. Խալիկյան, Փ՛ր գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, մե գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401—1450 թթ.), 1955, մասն երկրորդ (1451—1480 թթ.), 1958, մասն երրորդ (1481—1500 թթ.), 1967:

Նշանակալից են նաև մանր ժամանակագրությունները, որոնց ընդգրկված նյութերն իրենց բովանդակությամբ նման են հիշատակարաններին: Վերջիններս նման դրանց մեջ կարևոր տեղեկություններ կան մեր Երևանի քաղաքական պատմության, տնտեսական և մշակութային կյանքի, վարչական կարգի, ավերչ: երկրաչափների վերաբերյալ: Ժամանակագրությունները հավաքել և երկու դրբով հրատարակել է Վ. Հակոբյանը: Ժամանակագրությունների վկայությունների արժեքը պատմագիտական տեսակետից ավելի մեծ նշանակություն է ստացել դրանց հմուտ կազմողի ծանոթագրությունների և գիտահամեմատական արժեքավոր էքսկուրսիների շնորհիվ: Ժամանակագրությունների վկայություններին դիմող յուրաքանչյուր ուսումնասիրող գրեթե ամենին կարիք չի գզում դրանց տվյալների հակասությունների ու տարբերությունների մասին նոր պրպատմաներ կատարելու: Այդ աշխատանքը Վ. Հակոբյանն արդեն կատարել է մեծ բարեխղճությամբ:

Երևանի պատմության համակողմանի ուսումնասիրության տեսանկյանից ուշագրության արժանի աղբյուրներից են նաև պարսկա-թուրքական ժամանակներին վերաբերող կալվածագրերը, որոնց մեծածառչն մասը առաջմ ձևագիր միմակում գտնվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ու արխիվներում: Մատենադարանի կաթողիկոսական դիմախի ֆոնդում պահպանվող կարևորագույն վավերագրերը տեղ են գտել Հար. Աբրահամյանի կազմած ժողովածուում, որի առաջին պրակը հրատարակվել է 1941 թվականին և կրում է «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր» վերնագրեր: Կազմող ժողովածուի համար գրել է առաջաբան, կատարել համադաստատիան ծանոթագրություններ և կցիլ այդ վավերագրերում գործածված օտար տերմինների ու բառերի համառոտ բնութարան:

Այլեի մեծ նետարբերություն է ներկայացնում Հ. Գ. Փափագյանի կազմած պարսկերեն վավերագրերի ժողովածուն: Գրա առաջին պրակը լույս է տեսել 1956, իսկ երկրորդը՝ 1959 թվականին: «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» վերնագիրը կրող այդ ժողովածուի լույս տեսած պրակներն ընդգրկում են XV դարից մինչև 1650 թվականը և կարևոր տեղեկություններ են պարունակում Երևանի պատմության տարբեր բնագավառների վերաբերյալ:

¹ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հատոր I, Երևան, 1951, հատոր II, 1956, կազմեց Վ. Ա. Հակոբյան:

Հայաստանի և Երևանի մասին տեղեկություններ են հաղորդել նաև վրացական աղբյուրները: Հայաստանի և հայերի վերաբերյալ նրանց աված վկայությունները հավաքել, թարգմանել և երբ հատորով հրատարակել է հայ ժողովրդի պատմության ու բանասիրության նշանավոր երախտավոր պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկել: Նա կազմել է արժեքավոր ծանոթագրություններ, կատարել է էքսկուրսներ և մեզ համար անծանոթ ու անհասկանալի բառերի ու հասկացությունների բացատրություններ: Երևանի մասին դրանց վկայությունները հիմնականում սահմանափակվում են քաղաքական ատանձին ղեպերի հիշատակմամբ ու նկարագրությամբ: Ընդ որում առաջին հատորում Երևանի վերաբերյալ չկա հաղորդված, իսկ երկրորդ հատորում Երևանը տարբեր հեղինակների կողմից հիշատակված է միայն 2—3 անգամ: Հիմնական հիշատակությունները մեր քաղաքի մասին վերաբերում են XVIII—XIX դարերին, որոնք ամփոփված են Գ հատորի մեջ: Բազմաթիվ ղեպերի ու երևույթների առթիվ վրաց աղբյուրները իրենց վկայություններով լրացնում են մեր գիտելիքները Երևանի մասին: Միայն պետք է նշել, որ դրանցում պատմական որոշ ղեպերի վերաբերյալ եղած հաղորդումները երբեմն կողմնակալ են և խեղություն պարունակում համար հարկ է լինում դիմել այլ աղբյուրների օգնության: Այդ բացառապես վերաբերում է 18-րդ դ. երկրորդ կեսի քաղաքական ղեպերին, հատկապես վրաց Հեռակ թագավորի ղեպի Երևան կատարած արշավանքներին և վրաստանի ու Երևանի խանության այդ ժամանակվա հարաբերություններին ընդհանրապես:

Արաբական աղբյուրներում Երևանի մասին հիշատակություններ չկան, իսկ թուրքական աղբյուրները, որ այնքան շատ են հիշատակում Երևանի անունը, գրեթե բացառապես տեղեկություններ են հաղորդում թուրք-պարսկական նվաճումների և քաղաքական այլ ղեպերի մասին: Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին թուրքական աղբյուրների հաղորդած տվյալները հավաքել, թարգմանել, կազմել և երկու դրբով հրատարակել է Ա. Խ. Սաֆրաստյանը: Ընդհանուր առմամբ թուրքական աղբյուրները պատմական շատ ղեպեր և իրադարձություններ՝ հատկապես

² Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Քեկ, վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, Հ. Ա. (Ե—Թ դար), 1934, հ. Բ (69—68 գաթ), 1936, հ. Գ (68—69 գգ.): 1955:

³ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Երևան, հ. Ա, 1961, հ. Բ, 1964:

սուլթանական Քուրբիայի նվաճողական պատերազմները ներկայացնում են խիստ կողմնակալ, փորձելով արդարացնել կամ մեղմացնել թուրքական բանակների կատարած ավերածությունները, գերեվարումները, թալանը, բռնությունները: Նրանք, իբրև կանոն, համակրանքով են ներկայացնում արյունաբորտ սուլթաններին և թուրքական ավարտու զորավարներին, զրանց համարելով հերոսներ: Քուրբական XV—XIX դարերի այդ աղբյուրները սնունդ են ստալիս այժմյան պան-թուրքական պատմագրությանը, որը այնքան կեղծում է իրական-պատմական դեպքերը: Բայց և այնպես նույն թուրքական աղբյուրների հիման վրա իսկական պատմաբանը չի կարող չբացահայտել այդ դարերի քաղաքական պատմությունը և առանձին գրվածները, թուրքական բանակների կողմից Անգրևովկասի, Հայաստանի և Երևանի բարբարոսական ավերումները մի շարք անգամ, քնակչության ոչնչացումը, գերեվարումները, Քուրբիայի ժողովրդասպան թաղանթական քաղաքականությունը, երկրի տնտեսական կյանքի անկումը և այլն: և այլն:

Երևանի մասին եղած օտար աղբյուրները և՛ իրենց ընդգրկած հարցերով, և՛ քանակով չեն կարող համեմատվել մեր մատենագրության հետ, եթե նույնիսկ վերցնենք միայն XV—XVIII դարերը, երբ Երևանը դարձել էր քաղաքական իրադարձությունների կիզակետ և՛ այդ պատճառով գրավում էր օտար հեղինակների ուշադրությունը:

VII—XIV դարերի հայ մատենագիրների մասին արդեն ասվեց վերևում: Այժմ համառոտակի կունջ անենք XV—XIX դարերի այն հայ մատենագիրներին և այլ կարգի աղբյուրների (ժողովածուների, ուղեգրությունների, ակնանտես հեղինակների և այլն) վրա, որոնց իրենց վկայություններով ու հաղորդած տվյալներով հնարավորություն են տվել պարզաբանել մեր մայրաքաղաքի պատմության կարևորագույն հարցերը: Միանշամայն հասկանալի է, որ պետք է կանգ անենք իրանցից միայն մեր նպատակների տեսակետից ամենակարևորների վրա:

Անկի Քեմուրի արշավանքների մասին առաջինը գրել է Քուլմա Մեծոփեցու ավագ ժամանակակից Գրիգոր Խյարքեցի Սերենցը (1350—1425): Նա մի շափածո պատմական ողբի մեջ հիշատակել է Անկի Քեմուրի կողմից Երևանը ավերելու և այնտեղ 500 մարդ սպանելու մասին: Գրել է Վրդանես կրոնավորը «Ճայամատուրք»-ի 1491 թվականի իր հիշատակարանում գրում է, որ Գրիգոր Խյարքեցի Սերենցը եղել է բրտաբան ու մեղվաբան հեղինակ, Աստվածաշնչուհի, Տոնակների, Գավազանագրքի, Հարանց վարաց և այլ գրքերի

մեկնիչ, ինչպես և գրել է ինքնուրույն պատմություն¹, որի մասին նշվեց: Նրա պատմական շափածո երկը «Յիշատակաբան աղէտից» վերնագրով առաջին անգամ տպագրվել է «Աբարատ» ամսագրում (Վաղարշապատ, 1897) Գր. Խալաթյանցի նախաբանով:

Ժամանակագրական առումով Երևանի վերանորոգյալ տեղեկություններ հաղորդող հաջորդ պատմիչը Քավմա Մեծոփեցին է, որն ապրել է XIV դարի վերջերին և XV դ. առաջին կեսին: Նա սկզբնական կրթությունը ստացել է Մեծոփա վանքում, որից հետո ուսանել Սուխարայի վանքում՝ Սարգիս և Վարդան վարդապետների մոտ, ապա աշակերտել Գրիգոր Տաթևացուն և Նրանից էլ ստացել վարդապետի կոչումը: Չնայած բավական երկար ժամանակ Երևանում է ապրել, բայց դրա մասին Ք. Մեծոփեցու միայն հիշատակել է կաթողիկոսական աթոռը Սոցի Վաղարշապատ տեղափոխելու արարողության անունով: Քավմա Ք. Մեծոփեցու «Յիշատակաբան»-ի մեջ:

Հովհաննես Մակվեցի տաղասացը շափածո գրել է Շահ-Աբասի 1604 թվականի արշավանքի պատմությունը: Այդ ողբ-ոտանավորը, որը կրում է «Ողբ ի վերայ գերութեան ի Շահարապս» վերնագիրը, կարևոր տեղեկություններ է պարունակում Շահ-Աբասի արշավանքի և բազմաճակատ հայրի բռնի տեղափոխության մասին: Ողբը ամբողջական կերպով առաջին անգամ հրատարակվել է Դ. Ալիշանի «Ալբարատ» աշխատությունում²:

Բայց Շահ-Աբասի արշավանքի նրա կատարած ավերումներին և մեծ զանգվածներով հայրի տեղահանման ու զեպի Պարսկաստանի խորքերը բռնի զաղթեցման մասին ամենաարժանահավատ և ընդարձակ պատմությունը տվել է Առախի Դավրիժեցի հայտնի պատմագիրը, որը ծնվել է Քավրիդ քաղաքում XVI դարի վերջին (1591—1596 թթ. սահմաններում) և ապրել մինչև 1670 թվականը: Սակայն նա ծննդավայրում բիշ է եղել, ապրել ու սովորել է էջմիածնում, որտեղ և թաղվել է: Առաքել Դավրիժեցու ժալալուն երկը կոչվում է ուղղակի «Պատմություն»: Այն իր մեջ ընդգրկում է ընկալված 60 տարվա (1602—1662 թթ.) պատմություն: Դրանում ակնատես հեղինակը մանրամասն նկարագրում է Շահ-Աբասի և պարսիկ խաների ժամանակ Հայաստանում տեղի ունեցած արեւմուտի անցքերը, բռնի տեղահանված և զեպի Պարսկաստան տար-

¹ Տե՛ս Լ. Խաչիկյան, Ժճ գրքի հայերեն Առաջին հիշատակարաններ, մասն կերպը (1481—1500 թթ.), Երևան, 1967, էջ 169:

² Տե՛ս Գ. Հովսեփյան, Ք. Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ 6—7:

³ Տե՛ս Ա. Ալիշան, Ալբարատ, էջ 301:

ված հայերի առաքյալներն ու աված մեծ զոհերը, էջմիածնի վիճակը և այլն նա կատարել է երկարատև ճանապարհորդություններ, որոնց ընթացքում ակնատես է եղել իր եկարպատ ղեպարհից շատերին: Առաքել Գալթիժեցին առաջին անգամ հայ պատմագիրն է, որի երկը տպագրվել է իր կենդանության օրոք: Նրա «Պատմութիւն»-ը առաջին անգամ հրատարակվել է Ամստերդամում 1669 թ. հունվարին՝ Ոսկան Երևանցու ջանքերով և անմիջական մասնակցությամբ: Բայց լավագույնը համարվում է 1896 թվականի Վաղարշապատի հրատարակությունը «Պատմութիւն Առաքել վարդապետի Գալթիժեցույ»:

Երևանի XVII դարի առևտրի, ճանապարհների, բազաբի ֆինանսական գործերի (գլխավորապես դրամահատություն), վաճառականների գործունեության, բնակիչների կենցաղային-երևանական որոշ սովորությունների, խանների գործարած բռնությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդել Առաքել Գալթիժեցու ժամանակակից Զաքարիա Ագուլեցին, որի հիշատակարանը տպագրվել է մեր օրերում (Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938): Ծիշտ է Զաքարիան ո՛չ երևանում էր ծնվել և ո՛չ էլ այնտեղի մշտական բնակիչ էր, բայց տարվա մի զգալի մասը լինում էր Երևանում: Նրա օրագրությունից պարզ երևում է, որ նա 1647—1667 թթ. գրեթե ամեն տարի մեկ և ավելի անգամ լինում էր Երևանում¹: Այնպես որ նա մոտիկից գիտեր Երևանը և դրա մասին կատարած հաղորդումները արժանազան և ճշմարիտ են, եթե նկատի չուենենաք իր անձնական և եղբոր գործերին վերաբերող որոշ ղեպերի խտացումները:

Հայաստանի և Երևանի մասին կարևոր հիշատակություններ է կատարել նաև Առաքել Գալթիժեցու և Զաքարիա Ագուլեցու ավագ ժամանակակից Գրիգոր վարդապետ Գառանաղցին (կամ Վամախեցի), որը ծնվել է Կամախում 1576 թվականին: Նա կատարել է շատ ճանապարհորդություններ և կապով մասնակցություն ցուցաբերել հայոց կրոնական-եկեղեցական գործերին: Գրիգոր Կամախեցու դրչին նա պատկանում մի բանի՝ երկեր, որոնց մեջ ամենից

ընդարձակը և արժեքավորը նրա ժամանակագրությունն է: Իր ժամանակագրության առաջին մասում նա համառոտակի կերպով տալի է 1018—1592 թթ. թուրք-թաթարական արշավանքների ղեկավարը, իսկ երկրորդ մասում համեմատաբար ավելի մանրամասն խոսում է հետագա տասնամյակներում (մինչև 1640 թվականը ներառյալ) տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնցից մեկը հետաքրքրել են Հայաստանի ու Երևանի հետ ստեղծվող ղեկավարը՝ օսմանական Մահմեդ III (1595—1603), Ահմեդ I (1603—1617), Մուստաֆա I (1617), Օսման II (1618—1622), Մուրադ IV (1622—1640) սուլթանների ու չալպիների ասպատակությունները և Շահ-Աբասի արշավանքը:

Սակայն XVII դարի պատմիչների մեջ Երևանի վերաբերյալ ամենաընդարձակ տեղեկությունները հաղորդում է Զաքարիա Առաքել Գառանաղցին: Նա ծնվել է 1627 թ. Քանթրեում և 50 տարեկանում Բաղնիքում էլ էր: Հովհաննիսյանի միաբաններին: Հենց այստեղ էլ նա ստացել էր իր կրթությունը: Զաքարիա Քանթրեցին ճանապարհորդել է Պոլիս, Զմյուռնիա, Կարսի, եղել է Արևելյան Հայաստանի բազմաթիվ վայրերում: Նա համար էր լինում Երևանում:

Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի նրա երեք հատորից բաղկացած պատմագրական երկը, որը մեկ գրքով «Զաքարիա Մարկանագի Պատմագրութիւն» վերնագրով հրատարակվել է Վաղարշապատում 1870 թվականին: Նա այդ աշխատության մեջ տվել է Հայաստանի XVII դարի պատմությունը՝ առաջին հատորը շարադրելով գլխավորապես Առաքել Գալթիժեցու պատմության հիման վրա, իսկ մյուս մասերը շարադրել է իբրև պահանատես հեղինակ: Իր պատմագրության երկրորդ հատորի առաջարկում նա ուղղակի գրում է.

«Զոր մինչև աստ գրեցաք զպատմութիւնս թագաւորաց պարսից՝ որք կուին շխ-օղի, Առաւ սկիզբն շհան-շահ՝ թագաւորն ի թուին Ռէլ մինչ ի թագաւորն շահ-Սաֆի և ի թին Ռ և ձգ բեղ ժանուցի թէ՛ ստտ թէ՛ իրաւ՝ զոր լուեալ էի ՚ի համբաւոյ Այուսեանս գրեցից զայն՝ զոր տեսի աշօք և լուայ ունկամք ՚ի ներկայումս ժամանակի ՚ի կատարեալ արանց՝ Բազ բանի լուշ արարից պապալիքոյ ՚ի գալն մուրաթ թագաւորին օսմանցոց ի լարարատ և առնուցն Երևան քաղաք. Ապա զայն Սաֆի թագաւորին պայսից և առ-

¹ Առաքել Գալթիժեցու և նրա «Պատմութիւն» մասին տե՛ս՝

ա) «Պատմութիւն Առաքել վարդապետի Գալթիժեցույ», Վաղարշապատի 1896 թվականի առաջաբանը, որը գրել է Դ. Սարգսյանը:

բ) Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 11, Երևան, 1946, էջ 441—454:

Վ Տե՛ս Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 29, 33, 37—38, 40—41, 43, 49—50, 56, 58 և այլուր:

¹ Ժամանակագրարին Գրիգոր վարդապետի կամախեցու կամ Գառանաղցու, հրատարակից Մաքրոզ վարդապետ Նյանեան, Երևանում, 1915:

«Պատմական երեք բնագրի ուղագրությունը»:

նույն շեստ զնոյն Երևան: Յիշեցոցից նաև դատապանս մեր՝ զոր կոնցար, զի դուք ՚ի միտ առնել զգուշանայր, և գձերն տեսանելով՝ մեզ ողորմիր, և լինիր ողջ յամենայնի՝¹

Ոչուչես տեսնում ենք, Զարարիս Սարկավազը իր պատմագրութան առաջին հատորում շարադրած նյութի հավաստիության համար հրաշխիք չի տալիս, որովհետև այն շարադրել է իրեն նախորդած աղբյուրների հիման վրա, որոնց ինքը անվերապահորեն չի վստահում, իսկ մյուս երկու հատորները շարադրել է իրրի զեպեղերին ահանատես հեղինակ և հավաստում է դրանց ճշտությունը:

Զարարիս Սարկավազի աշխատությունը առատ և արժանահավատ նյութներ է տալիս Երևանի վարչական վիճակի, Տարկերի նշանակման ու հավաքման, Երևանը XVII դարի թուրք և պարսիկ բռնակալների կողմից գրավման ու ավերման, Երևանի խաների բռնակալական իրավունքների, Երևանի խանությունում և Երևան քաղաքում տեղի ունեցած զանազան զեպեղերի մասին: Զավազանցություն չի լինի եթե ասենք, որ Երևանի XVII դարի պատմությունը առանց նրա հաղորդած նյութերի կլինի շատ թերի ու պակասավոր: Զարարիս Սարկավազի մոտ տեղ էին գտել պարսիկական խաների կողմից հարկեր նշանակելու և դրանց հավաքման ժամանակ գործադրած բնությունների մասին անպիսի ստույգ մանրամասնություններ, որ չի կարելի գտնել այլ պատմիչների երկերում և որիչների մեծ ու փոքր հիշատակարաններում: Պատմական տեսակետից պակաս արժեքավոր չեն նաև պարսից խաներին տված նրա դիպուկ բնութագրումները: Պատմիչը խաներին իրար հետ համեմատելով նրանցից ոմանց որակել է որպես «բարի», «շինարար» և «առաքինի», իսկ մյուսներին՝ «չար», «պորտաբույժ» և «մուլ», ինչպես նկատում է Երվանդ Շահազիսը՝ Սիպիան խաների անհատական ունակությունները և դրանց բնավորության գծերի տարբերությունները ամենեին չեն կարող հիմք հանդիսանալ նրանցից ոմանց «բարի», «շինարար» կամ «առաքինի» կոչելու, դրանք բոլորն էլ արևելյան տիպի բռնակալներ են իրենց իրավունքներով ու դիրքով, և վարած քաղաքականությունը:

Երևանի պատմության համար անուղղակի նյութեր է հաղորդում նաև Աղավ Օլեարին, որը տեսնական, զիվանագիտական

¹ Զավարիս Սարկավազի Պատմագրութիւն, հատոր II, էջ 11:

² Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, 1931, էջ 97:

նպատակներով էրեր անգամ Մոսկվայով ճանապարհորդել է Պարսկաստանի:

Ժամանակագրական առումով հաջորդ հեղինակը, որ Երևանի մասին հաղորդում է կարևոր տեղեկություններ, ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Փան Շարդենե է (1643—1713): Նա երկու ճանապարհորդություն է կատարել զեպի Արևելք, որոնցից առաջինը 1665—1670 թթ., իսկ երկրորդը՝ 1671—1677 թթ.: Առաջին ճանապարհորդությունը կատարել է իր հայտնի ակնագործ և հարուստ գրառալավաձառ հոր հանձնարարությամբ: Նրան այդ ճանապարհորդության ընթացքում ուղեկցել է կրոնի վաճառական Ռեզկեր: Նրանք 1665 թվականին սկսելով իրենց ճանապարհորդությունը նախ լինում են Հնդկաստանում, այսպ Պարսկաստանում, որտեղ Շարդենե մնացել է վեց տարի և այդ ժամանակահատվածացում այսուհետ օտարացել է արքունի ակնագործի կոչում, ծանոթացել պարսկական շատ մեծամեծերի հետ և մտափիլից տեղեկություններ քաղել երկրի քաղաքական կառուցվածքի, կառավարման ձևի և բնակչության սովորությունների մասին: Առաջին ճանապարհորդությունից Շարդենե հայրենիք է վերադառնում 1670 թվականին և հաջորդ տարում հրատարակել «Պատմվածք Պարսից Սուլեյման III-ի թագադրության մասին» վերնագիրը կրող իր աշխատանքը: Նրա առաջին ճանապարհորդությունն ու աշխատությունը թեև անմիջականորեն չեն առնչվում Արևելյան Հայաստանի և Երևանի այն ժամանակվա պատմության հետ, բայց և այնպես պարսից պետության վերաբերյալ հաղորդվող որոշ տեղեկություններ կարող են անուղղակիորեն գաղափար տալ այդ պետության իշխանության օսկ գտնվող Արևելյան Հայաստանի վարչա-քաղաքական վիճակի մասին:

Երևանի և Արևելյան Հայաստանի հետ անմիջապես կապվողը նրա երկրորդ ճանապարհորդությունն է, որի նկարագրությունը այնքան հայտնի է Եվրոպայում և այնքան աչքի է ընկնում հաղորդած տեղեկությունների համեմատական ճշգրտությամբ ու ինքնատիպությամբ: Նա իր երկրորդ ճանապարհորդությունը սկսել է 1671 թ. օգոստոսի 17-ին, դարձյալ սինեզենի մեծ պաշարներից, որ նրան ապավիրել էր պարսից Շահ-Աբաս II-ը Շարդենե Պարսկաստան է հասել Կոստանդնուպոլսով, Սև ծովով և Անդրկովկասի վրայով: Բացի վաճառական Ռեզկեից նրան ուղեկցում էր նաև նկարիչ Գրե-

¹ Адам Олеари, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, Москва, 1870.

յոն: Այս անգամ նա շորս տարի մնում է Սպահանում, ապա այս-տեղից անցնում Հնդկաստան, որտեղից էլ՝ Բարեհուսո հրվանդա-նով 1677 թ. վերադառնում է եվրոպա:

Իր երկրորդ ճանապարհորդության ընթացքում, Սև ծովից Պարսկաստան դալու ժամանակ Եարզնի անցել է Արևելյան Հա-լաստանի շրջաններով¹: նա այստեղ 1673 թվականին մի քանի օր մնացել է Երևանում և նույնիսկ մասնակցել Սեֆի-Կուլի խանի եղ-րոր հարսանիքին: Այդ միջոցին նա ծանոթացել է քաղաքի տեսար-ժան վայրերին, ոռոգման առուներին, շուկաներին, և հետո նկարա-դրել քաղաքի արտաքին տեսքը, բերեն-բերան պատմվող առա-պելխառն ավանդությունները, Սեֆի-Կուլի խանի եղբոր հարսա-նիքի արարողությունները, պարերը, նվագը և այլն, և այլն: Նրա նկարագրությունից կարևոր նշանակություն ունեն մեզ համար քա-ղաքի եկեղեցիների, մզկիթների, հին ժամանակներից գոյություն ունեցող աշտարակի, բերդի, կամուրջների, առանձին շենքերի ու կատարների մասին տեղեկությունները, քանի որ 1679 թվա-կանի երկրաշարժի հետևանքով դրանց մեծ մասը հիմնահատակ ավերվել է: Սակայն, ճշմարտության առաջ լնդեղանչելու համար ա-սկեր, որ Եարզնի հաղորդած մի շարք տեղեկություններ (բնակչու-թյան պատմական անցյալին, երևանի անվան ու պատմությանը վե-րաբերող որոշ թվեր և այլն) արժանահավատ չեն: Բայց, այնուա-մենայնիվ, դրանք չեն նսեմացնում Փան Եարզնի նկարագրություն-ների և վկայությունների արժեքը: Նրա աշխատությունների հրա-տարակվել են մի քանի անգամ բազմաթիվ հատրենրով: Իրանց մեջ լիակատարն ու լավագույնը 1811 թ. Փարիզի հրատարակությունն է, բազմազան 10 հատորից: Այդ հրատարակությունից բաղել ու ա-ռանձին քրքով ուսեսերեն են հարգմանել նշանավոր ճանապարհոր-դի՝ Անդրեովկասի մասին հաղորդած բոլոր տեղեկությունները²:

Երկար ժամանակ վենետիկի Միխիթրյանների մատենադա-րանում պահպանվող մի ձեռագիր, որ առանձնակի նշանակություն ունի Երևանի 1724 թ. ազատագրական պատերազմի պատմությու-

նը վերականգնելու համար, մնում էր անհայտ: Այդ ձեռագրից անցյալ դարի վերջին հատվել է Ղ. Ալիշանը իր «Այբարատ» աշխա-տությունը գրելու: 1908 թ. այս ձեռագրին ժանոթացել է նաև պատ-մաբան Լեոն և օգտագործել իր մի քանի աշխատություններում: Պարզվում է, որ այդ ձեռագրի պատճենը Լեոն զեռն 1928 թվակա-նին նվիրել է Ազգագրական ընկերության մատենադարանին՝ հե-տևելով մակագրությամբ. «Նվիրում եմ Ազգագրական ընկերության մատենադարանին առանց սակայն սպագրության իրավունքի», որ պատկանում է վենետիկի Միխիթրյաններին: 1928 թ. հունվարի 13, կես»¹:

Այդ ձեռագիրը ուշագրության առարկա է դարձել 1935 թվա-կանին: Պարզվել է, որ դրա հեղինակը Աբրահամ Երևանցին է (Լիոնյի նվիրած պատճենում հեղինակի անունը բաց է թողնված): Իրևն XVIII դ. մեր պատմագրության ուշագրության արժանի երկ էրև ՉԼՄ Գև Հալիպանի ֆիլիալի պատմա-հնագիտական սեկտորը այն հրատարակում է 1938 թվականին, «Պատմութիւն պատերազ-մացն 1721—1736 թթ.» վերնագրով:

Աբրահամ Երևանցու այդ պատմությունը, բնագրվում է 1721—1736 թվականների Հալաստանի պատմությունը, այսինքն՝ աֆղանների զեպի Պարսկաստան կատարած արշավանքից մինչև նագիր-շահի թագադրությունը: Պատմական տեսակետից ավելի կարևոր են աշխատության երկրորդ և յոթերորդ գլուխները, որտեղ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդվում հայ-թուրքական, վիրա-թուրքական, աֆղանա-պարսկական, թուրք-պարսկական հարաբերությունների և տեղի ունեցած պատերազմների վերաբեր-յալ: Աբրահամ Երևանցու աշխատությունը պատմական արժեքա-վոր տեղեկություններ է պարունակում մեր մայրաքաղաքի XVIII դ. առաջին քառորդի պատմության մասին: Այնտեղ ամենայն մանրամասնությամբ և ճշգրտությամբ նկարագրված է Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը թուրքական զավթիչնե-րից, արված են քաղաքի տեղագրությանը, թաղերին, բնակչությանը, բերդին, նրա կաշազորին, պարսից խաներին վերաբերող ման-րամասնությունները: Նույնպիսի ճշտությամբ և մանրամասնությամբ են նկարագրված նաև Երևանի զեպերին նախորդած Կարբիի անց-րուքը: Երևանին և Կարբիին վերաբերող այդ բոլոր մանրամասնու-թյունները հաղորդված են նրա պատմության երկրորդ գլխում²:

¹ Գ. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան, 1935:

² Տ. Ա. Առ. Պատմութիւն Երևանի թեմական հոգևոր գրքոցի, էջ 71—73:

¹ Այս ձեռագրորդության ժամանակ Փան Եարզնի Քիֆիսից Երևան է եկել Գիրջանի վրայով:

² «Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг.», Тифлис, 1902 շնորհ այս քրքից էլ մեր քաղել ենք Եարզնի մասին մեր հաղորդած տեղեկու-թյունները (տոմս էջ 3—4, 254—255, 256—263): Հմտա, երվակը Կոնստանդ, Հին Երևանը, էջ 117—118: Փան Եարզնից մոտ 20 տարի առաջ (1654 թ.) Այբարատ-յան աշխարհում եկել է Տավեռնին՝ նույնպես ֆրանսիացի ճանապարհորդ, որը սակայն Երևանի մասին ուշագրության արժանի որևէ հիշատակություն չի թողել:

Արքահամ Երևանցու՝ ժամանակակիցներին մեկը զրել է Սյու-նիքում Գալիթ-Քեկի զիաւորած ազատագրական պատերազմներին պատմութունը, որը հրատարակվել է Վաղարշապատում 1871 թվա-կանին «Ընտրի պատմութիւն Գալիթ Քեզին, և պատերազմաց Հա-յոցն իսթանու, որը եղևն ընդդէմ Քուրբաց ի մերում ժամանակի, այն էլ յամի տեսն 1722, եւ Հայոց 1171» անունով և որը վերա-գրվել է Ստեփաննոս Վրդանեայա-Շահումյանին: Գրա հեղինակը՝ ականատես և մասնակից է եղել դեպքերին: Երևանի 1724 թվա-կանի հերոսամարտը կազմում է այդ ժամանակներում Սյունիքում և Հայաստանի այլ մասերում ծավալված ազատագրական պատե-րազմների օղակներից մեկը և, իրրև այդպիսին, անհնար է այն ներ-կայացնել առանց վերջինների պատմութիւնը Այդ տեսակետից էլ «Ընտրի պատմութիւն Գալիթ Քեզին» պատմագրական երկը կարևոր է նաև Երևանի պատմութիւնը համար, թերևս այն պատճառով, որ ուղղակի հիշատակութիւններ կան Երևանի պաշտպանութիւնը մասին:

Երևանի մասին նույնպէս կարևոր վկայութիւններ հաղորդող Պետրոս դի-Սարգիս Գիլանեցը ապրել է XVII դարի երկրորդ կի-սեկնի և XVIII դ. առաջին քառորդում: Նա չուղայցիի հայ շուքա-սական էր, որը թողել էր առևտրի ասպարեզը, իրեն նվիրել քա-ղաքականութիւնը: 100 հայ հեծելներից մի շուքա ս կազմելով, միանում է Կասպից ծովի ափերին ռազմական գործողութիւններ ծավալած ռուսաց զորքին, որի առաջնադասման հետ էլ նա կա-պում էր Հայաստանի ազատագրումը: Պետրոս դի-Սարգիս Գիլա-նեցը զրել է Պարսկաստանի ժամանակակից զեպրերի և ռուսաց զորքերի պատերազմական գործողութիւնների մասին մի հիշա-տակարան (1723 թ.), որի մեջ վկայութիւններ է տալիս նաև Երևա-նի պատմութիւնը հետ անընդմիջ մի շարք դեպքերի մասին: Այդ հի-շատակարանը լույս է տեսել «Պոստիկ» ամսագրում 1863 թվական-ին: Պատմագիտական տեսակետից նշելի է նրան նվիրված Արտո Հովհաննիսյանի՝ «Պետրոս դի-Սարգիս Գիլանեցի (պատմական-կենսագրական ակնարկ)» վերնագիրը կողմ հողվածը, որը ապվել է «Արարատ» ամսագրի 1916 թ. հունվար-փետրվար ամիսների հա-մարում (էջ 105—128), և այդտեղից էլ հետագայում արտատպվել առանձին գրքուկով:

¹ Տ՛՛՛ Արքահամ երևանցի, Պատմութիւն պատերազմաց 1721—1736 թթ. Հրատարակութիւն ամիթի (Նախարար), էջ V—VIII, Հմմտ. երկուց Ծանոթագ-չին երեսը, էջ 246—247, 2. Ս. Անայան, Հայկական մատենագիտութիւն, Ե—ԺԸ գգ., Կ. Ա., էջ 106—107:

Արքահամ Կեւտացի կաթողիկոսը (1734—1737) XVIII դ. ա-ռաջին կեսի պատմագիր է: Նա ականատես է եղել Նազիր-շահի նվաճումներին և մասնակցել Սուլթանի դաշնում մեծ շուքով կա-տարված նրա թագադրութիւնը արաբողութիւններին, որին ներկա էին պետութիւնը ամբողջը: Արքահամ Կեւտացին կրթված ու դարգա-ցած անձնավորութիւն էր նա կատարել էր ճանապարհորդութիւն-ներ Հայաստանում և այլ երկրներին և ձգտում էր նազիր-շահի միջոցով բարձրացնել էջմիածնի հեղինակութիւնը ու Արևելյան Հայաստանում ստեղծել առևտրի վիճակ: Նրա զրչին պատկանող «Պատմութիւն անցիցն իրոց և Նաար-շահին Պարսից» պատմա-գրական Երկը (Վաղարշապատ, 1870) բովանդակ Հայաստանի պատմութիւնը համար կարևոր նշանակութիւն ունի: Հեղինակը բազմաթիվ անգամ եղել է Երևանում, որի մասին հիշատակում ու տվյալներ է հաղորդում ասորեր առիթներով:

Մեր մատենագրութիւնը մեջ իր ուրույն տեղն ունի Քուրբիա-յում, Պարսկաստանում, Հեղկաստանում ճանապարհորդութիւններ կատարած, ժամանակի բարձր կրթութիւնը ստացած, եկեղեցական ու լուսավորչական եռանդուն գործիչ, երկրի քաղաքական վիճակով մտահոգված, մի շարք աշխատութիւններ հեղինակ, կաթողիկոս (1763—1780) Սիմեոն երևանցի, որի մասին հարկ կլինի ավելի մանրամասն խոսել նրա ապրած դարի Երևանի մշակութիւնը ներկա-յացնելիս: Հայաստանի և Երևանի տնտեսական ու քաղաքական կյանքի պատմութիւնը համար հույժ կարևոր է նրա «Ջամբա» կոչ-ված աշխատութիւնը¹, որը հրատարակվել է հեղինակի մասնակց զրեկի 100 տարի անց, նվիրատիւնների միջոցով: «Ջամբա»-ը Տնտեսագիտ կարևոր աղբյուր է հողային հարաբերութիւնների և եկեղեցական հողատիրութիւնը պատմութիւնը համար: Գրանում ա-մենայն մանրամասնութիւնը տրված են էջմիածնի և Երևանի բնմի մշուս կյանքերի կազմաքանրերի ամփոփագրերը՝ նվիրատիւնութիւն-ները, ջրերի, քրաղայցների, զինգերի, տների, բանդարանոցների, տյգիների, մշակելի հողերի առ ու վաճառքը, մուլքազանները, հարկահանութիւնը և այլն, և այլն: «Ջամբա»-ում տեղ գտած վա-կերագրերը սովորաբար հաստատված են թուրքական սուլթանների, պարսկական շահերի և Երևանի խաների ու փաշաների հրովար-

¹ Տ՛՛՛ Սիմեոն կաթողիկոս երևանցի, Ջամբա, Վաղարշապատ, 1873:

² Տ՛՛՛՛ նույն տեղում, էջ 304:

տակներով և շարիաթի վճռով: «Ջամբա»-ից կարելի է լրիվ դադարաբար կազմել Երևանում էջմիածնի և այլ վանքերի ունեցած ամենատարբեր կալվածքների և ունեցվածքների, ինչպես նաև վաշխատական գործարքների վերաբերյալ: Սիմեոն Երևանցին վաղից հարյան ընտլթի տեղեկություններ է հաղորդում նաև Վրաստանի Հերակլ Թագավորի դեպի Երևան հատարած արշավանքների, Երևանի խաների քաղաքականության և Երևանի խանության հարկատվության մասին:

Ելվածներից բացի, Երևանի մասին կարևոր հաղորդումներ է արել նաև Հարություն Արաբաշյանը: Վաղարշապատեցի Հարություն Արաբաշյանը ապրել է XVIII դարի երկրորդ կեսին և ականատես է եղել Աղա-Մամեդ խանի արշավանքներին ու կատարած ավերածություններին նրա հաղորդումները, իբրև ականատես Հեղինակի վկայություններ, հավաստի են և լրացնում են այդ ժամանակվա Երևանի քաղաքական պատմությունը¹:

XVIII դարի վերջերից և XIX դ. սկզբներից էլ վեր հանդես եկած այն հեղինակները, որոնք զրել են իրենց ապրած ժամանակների մասին կարելի է համարել և՛ սկզբնաղբյուրներ, և՛ ուսումնասիրողներ: Այդ կարգի հեղինակներ են, օրինակ՝ Հով. Շանխարունյանցը, Ի. Ծոպենը, Կ. Սուլվախին, Ստ. Չլիխնիկին, Ալեխանդր Երցյանցը, Գ. Ալիշանը, Լիճը, Անն, նույնիսկ Երվանդ Շահազրը և ուրիշներ: Այդ կարգի հեղինակների գործերին կանդաքառանքներ է հետ, Երևանի վերաբերյալ եղած գիտական զրականություն մասին խոսելիս: Իսկ որս ու օտարները մի շարք ճանապարհորդների և այլ գործերով Երևանում ժամանակավորպես՝ եղած հեղինակների նոթերն ու նկարագրությունները իբրև ականատես մարդկանց հաղորդումներ կարելի է ամբողջապես դասել աղբյուրների շարքում:

Հայաստանի և Անդրկովկասի մասին օտարերկրյա ճանապարհորդների հաղորդած տեղեկությունները հավաքել, հայերեն թարգմանել և հատուկ ժողովածու է կազմել Հովհ. Հակոբյանը: Նրա՝ «Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության: Ուղեգրություններ» վերնագիրը կրող այդ ժողովածուն բաղկացած է 6 հատորից, բայց հրատարակվել է միայն 2-ը՝ I (Երևան, 1932) և VI (Երևան, 1934) հատորները, որոնցում ամբողջված են մեր երկրի մասին օտարերկրյա մի շարք ճանապարհորդների արժեքավոր դի-

¹ Տե՛ս «Վաղարշապատեցի Խարտիկն Արաբաշյանի կեանքը», Թարգմ. օտարերկրից—Պ. Պ., Քիճիկ, 1892:

տողություններն ու նոթերը, որոնք, սակայն, զերծ չեն Բերություններից: Օտարերկրյա ճանապարհորդներից շատերը քիչ ծանոթ լինելով իրենց այցելած երկրին և նրա բնակիչներին, կարճատև ժամանակամիջոցում հնարավորություն չեն ունեցել ավելի ճանաչման որևէ իմանալ դրանց որպիսությունը, թույլ են տվել սխալներ ու փերություններ, որոնք պատմության ուսումնասիրության ընթացքում պետք է նկատի ունենալ:

Երևանի պատմության համար XIX դարի օտարերկրյա ճանապարհորդներից առանձնապես ուշադրության արժանի են Հախախաղզներ և Մոսկի Վագները, որոնց գիտություններն ու նկարագրությունները շատ նյութ են տալիս Երևանի XIX դ. առաջին կեսի պատմության համար: Հաքստհաուզները Երևանում եղել 1843 թվականի ամռանը և հիմնովին ծանոթացել է բազաթի ներքին կյանքին: Նրան ուղեկցել է մեծ օժանդակություն է ցույց տվել Խաշատուր Աբովյանը: Հայաստանի և Անդրկովկասի մասին Հաքստհաուզների նոթերը, նկարագրություններն ու գիտությունները ուսուսերն հրատարակվել է ա. Պետերբուրգում 1857 թվականին՝ «За-кавказский край» վերնագրով: Հետագայում դրանք մեկ զբոլ հրատարակվել են նաև հայերեն՝ «Ճանապարհորդություն յայտկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս» (Վաղարշապատ, 1872):

Հաքստհաուզների վկայություններն ու նկարագրությունները արևմտանվորպական շատ ճանապարհորդների նոթերի համեմատությամբ ավելի հավաստի են այն պատճառով, որ դրանք հեղինակը անկողմնակալ է եղել տեղացիների նկատմամբ, հշիշ է դնահառնից դրանց պատմական անցյալն ու ժամանակակից վիճակը, տեղեկություններ է բաղել ավելի գիտակ մարդկանցից: Օրինակ Երևանի այդ ժամանակվա Հայտնի միլիթերեցի մեկի՝ Սահակ Աղամալյանի դիրքի, իրավունքների, խաղաղած դերի մասին իր գրքում հաղորդում է ամբողջովին օգտվելով Խաշատուր Աբովյանի Գորպատում (Տարուս) կազմած հուշերից: Նա գրում է. «Աբովյանը Գորպատում կազմել է հուշեր իր պատանեկան տարիների հիշողություններից, որոնք իրենց մեջ հայ ժողովրդի մասին պարունակում են հետաքրքիր շատ բաներ: Նա դրանք նվիրել է ինձ այն հաշվով, որ դրանցից օգտվեմ իմ ուղած ձևով»: Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը Հաքստհաուզին ուղղած իր հատուկ նամակով նրան շնորհակալություն է հայտնում Կովկասի և նրա բնակիչների, որոնց

¹ Барон Август фон Гакстгаузен, Закавказский край, ч. I. - С. Петербург, 1857, էջ 182:

թվում և հայ ժողովրդի մասին ճիշտ տեղեկություններ հաղորդելու համար, Այդ նամակը քարգմանիչը տեղադրել է Հաբատհուտզենի առաջաբանում: Ավրոպական շատ ճանապարհորդների հաղորդած ավյալների զգալի մասի կհասկածիլը լինելու և բնօճհատակը, Հարատհուտզենի վկայությունների հավաստիությունը երևում է Աշտարակեցու նամակի հետևյալ հատվածից. «... ժես պետք է նախ բնջ ցանկանամ խաղաղություն և բարյացակամություն, ապա հայտնել իմ խորին շնորհակալությունը այն հիանալի և ճիշտ տեղեկությունների համար, որոնք զու հաղորդել են Կովկասի պրովինցիաների և գրանց բնակիչների, ինչպես նաև հայ ժողովրդի մասին»: Փիտակ կաթողիկոսն իր նամակում այնուհետև նշում է, որ Հաբատհուտզենը խորամուխ է եղել իրեն հետաքրքրած բոլոր հարցերի մեջ, հիմնովին ծանոթացել գրանց և մեծ սիրով ներկայացրել իր այցելած երկրի բնակիչներին, հակառակ եվրոպական մի բանի այլ ճանապարհորդների, որոնք իրենց հաղորդած սխալ տեղեկություններով միայն տարակուսանք ու պարմանք են պատճառում»:

Մտից Վագենը նույնպես Հայաստանում ճանապարհորդել է 1843 թվականին: Նա երևանում մնացել է մի քանի շաբաթ և հետադարձ Արդվյանի ուղեկցությամբ մանրամասր ծանոթացել քաղաքին: Մ. Վագենըրը կատարել է դարմանք պատճառով մանրամասն նկարագրություններ, որոնք վստահելի նյութ են ծառայում երևանի ու նրա բնակիչների ներքին կյանքի շատ կողմեր լուսարանելու համար: Նրա կատարած ճանապարհորդության նկարագրությունները բաղեկով 1851 թ. հայերեն է քարգմանել Վիեննայի Մխիթարյան միաբան Փիլիպոս ճամբյալը:

Նույն այդ թվականին երևանում, եղել է նաև ճանապարհորդ Դյուրուա-ղե-Մոնպեռն, որն իր «Voyage autour de Caucase» վերնագրեր կրող նոթերի մեջ մանրամասր նկարագրել է նաև երևանի բերքը:

Արևմտակրոպական մյուս ճանապարհորդը, որը նույնպես մանրամասն ու ճիշտ տեղեկություններ է հաղորդել Հայաստանի և հայերի մասին՝ անդիլացի Լինչն է: Նա իր ճանապարհորդական նկարագրությունները «Հայաստան» վերնագրով հրատարակել է երկու հատորով, մեկը նվիրված՝ Արևելյան Հայաստանին, իսկ մյուսը՝ Արևմտյան Հայաստանին: Նա ամենայն մանրամասնու-

թյամբ նկարագրել է Հայաստանի բնությունը, բնակիչներին, տնտեսական վայրերը, հայ ժողովրդի բնական անցյալը և այլն, և այլն: Ընը իր ուղեկից երկրաբան Օսպոլդի հետ միասին կազմել ու այդ աշխատությունն է կցել Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզը, որն իր ճշգրտությամբ, արտահայտական ձևերով ու հարանկներով, դուրրենեանելիությամբ և մանրամասնությամբ մինչև օրս էլ պահպանում է իր թարմությունը: Աշխատության Արեւիկյան Հայաստանին նվիրված I հատորում (Քիֆիս, 1910) մեծ տեղ է հատկացված նաև երևանին՝ նրա բնության, ջրանցքների, արձանահիշատակ կոթողների նկարագրությանը, պատմությանը և ժամանակակից կյանքին:

Անճմեծաա ավելի մեծ թիվ են կազմում երևանի մասին տեղեկություններ հաղորդող ուսու ճանապարհորդները, զիտնակիչներն ու պաշտանական անձիք, որոնք այս կամ այն առիթով եղել են այստեղ: Դրանց թվում են՝ Ա. Ս. Գրիբոլեդովը, ղեկարրիտտ Ե. Լաչինովը, ծագումով ղերմանացի Հեւման Արիլը, Մուրադյանը, կոմունիստ Ուվառովան, Դ. Լ. Մարտովյուր և ուրիշներ:

Ա. Ս. Գրիբոլեդովը երևանում եղել է նախքան Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը՝ 1819 թ. փետրվարին, երբ նա որպես ուսուական ղեկավարության քարտուղար գնում էր Քավրիկ: Սուր դիտողականությամբ օժտված առաջնեցավոր դրողին րեղաբ մի քանի օրն էլ բավականացնում է, որպեսզի կարողանա մանրամասն, ճշտությամբ և զեարգիտական ճաշակով նկարագրի երևան քաղաքը, նրա բերդը և պարսկական վերջին խանին՝ Հուսեյնին, որին իրավացիորեն ներկայացրել է իրեն կատարյալ արևելյան բռնակալ: Նա իր առաջին այցելության այդ տպավորությունները շարադրել է 1819 թ. փետրվարի 4-ին և 5-ին գրած երկու նամակում, որոնք ղետեղված են նրա աշխատությունների մեջ: Հետագայում ևս Գրիբոլեդովը լինում է երևանում: Քաղաքի ինքնագրծ թատերական կյանքն սկսվում է նրա «եղբրից պատուհաս» հայտնի պիեսի բեմադրմամբ (1827 թ.):

1826—1828 թթ. ուսու-պարսկական պատերազմին մասնակցած ղեկարրիտաներից մեկը՝ Ե. Լաչինովը երևանում եղել է հենց այդ տարիներին: Նա իր տպավորությունները գրել է առև հատուկ տետրում, որը պահվում է Վրացական ՍՍՀ պետական թանգարանում (ձեռագրերի ֆոնդ, գործ № 372): Մ. Գ. ներխույանը՝ այդ գործը մի փոքր ճամառոտագրելով, ղետեղել է «Из истории русско-армянских отношений» (книга первая, Ереван, 1956) աշխատության «Документы» կոչված բաժնում՝ «Записки декабриста

¹ Барон Август фон Гакстгаузен, Закавказский край, т. 1.-Предисловие от переводчика.
² Տե՛ս նույն տեղում:

Е. Лачинова об Армении» վերնագրի տակ, որը գրավում է աշխատության 312—396 էջերը: Իբրև ականատես հեղինակ Ն. Լաչինովի իր «Записки»-ում պարզ ու պատկերավոր ոճով պատմում է Հայկական մարզի և նրա բնակավայրերի՝ այդ թվում և Երևանի բազարի բնութիան, բնակչության, պատմության, հուշարձանների, բնակչության սովորությունների մասին: Իբրև անկողմնակալ և հայ բնակիչների նկատմամբ մեծ համակարանք ունեցող հեղինակի՝ Ն. Լաչինովի վկայությունները պատմագրության տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք օգտագործվել են մեր կողմից որպես ստույգ վկայություններ XIX դ. առաջին բառարգի Երևանի ու նրա բերդի արտաբերն տեսքը նկարագրելիս, 1827 թ. Երևանը պարսկական լծից ազատագրելու համար ծավալված ռազմական գործողությունների շարագրելիս և բազարի պատմության այլ հարցերի լուսարանման առիթներով:

Երևանի մասին կարևոր հիշատակություններ ունեցող մյուս հեղինակը ռուս հնագետ կոմս Ա. Ս. Ուվարովի կինն է՝ կոմսուհի Ուվարովան: Նա Երևանում եղել է 1880 թվականին, Ալեքսանդր Երեցյանի հետ միասին, վազելի Արմավիր մայրաքաղաքի սեղուց պեղումներ կատարելու համար: Հնագետ տիկնոջ կատարած նկարագրությունները մասամբ արդյունք են իր սեփական գիտումների, իսկ մասամբ էլ բաղված են Գյուլբուայի վկայություններից, որոնք վերաբերում են նույն դարի 40-ական թվականներին: Ուվարովայի հանապարհօրդական բուրք գիտումներն ու նկարագրությունները ամփոփված են «Кавказ. Путевые заметки» ակնարկային աշխատության մեջ, որը հրատարակվել է Մոսկվայում 1887 թվականին:

Սակայն հանապարհօրդների, պաշտոնական անձանց և օւսումնասիրողների վկայությունները մեր մայրաքաղաքի պատմության արդյունքների միայն մի փոքր մասն են կազմում: XIX դարում և XX դ. սկզբներին հրատարակվել են տասնյակների հասնող վավերագրերի ժողովածուներ, վիճակագրական տեղեկատուներ, գործող օրենքների ժողովածուներ, գիտական ընկերությունների տեղեկագրեր և այլ կարգի գրականություն, որ այնքան առատ նյութ են պարունակում նաև Երևանի պատմության համար:

Աղբյուրից սակնք, որ ինչպես այդ բոլոր կարգի ժողովածուները, տեղեկագրերն ու տեղեկատուները, այնպես էլ առանձին հեղինակների աշխատություններ պարունակում են միտումնավոր կամ հեղինակների ցանկությունից անկախ առաջացած սխալներ և անճշտու-

թյուններ: Միշտ պետք է հիշել, որ բուրժուական բաղաբանմանությունն ու վիճակագրությունը առաջադրում են աններքին սխալներով, որոնց մասին զգուշացնում է Գ. Մարքսը¹, և որ դրանցից օգտվելու համար անհրաժեշտ է խիստ բնագատական, համեմատական մոտեցում, որպիսին մեր աշխատությունը գրելիս մշտապես փորձել ենք կիրառել նաև մենք:

Նշված կարգի աղբյուրներից կարելի է հիշատակել «Акты, собранные Кавказкою Археологическою Комиссиею», «2-ое полное собрание законов», «Городовое положение, высочайше утвержденное 16 июня 1870 года», «Городовое положение 1892 года», «Договоры России с Востоком, политические и торговые», «Закавказье», статистико-экономический сборник, «Кавказский календарь», «Материалы для статистики Эриванской губернии», «Памятная книжка Эриванской губернии», «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года», «Полное собрание законов 1828 года», «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», «Сборник сведений о Кавказе», «Сборник статистических сведений о Кавказе», «Свод законов Российской империи», «Экономический вестник Армении», «Эриванский сборник» և այլն: Վիճակագրական, պատմա-տնտեսական և տարրեր բնագավառներում գործող օրենքների նշված ժողովածուները հսկայական նյութեր են պարունակում: Տասնյակ հատորների հասնող այդ ժողովածուներից մենք նյութեր ենք բաղել բազարի պատմության բազմաթիվ բնագավառների վերաբերյալ՝ սկսած բաղաբանական պատմությունից ու բնական պայմաններից և վերջացրած մշակութային կյանքով: Մեծ մասամբ պարբերաբար հրատարակվող նշված ժողովածուներն այնքան հալածի են, որ հազիվ թե հարկ լինի դրանց մասին ծանոթագրություններ անել:

Երևանի պատմությանը վերաբերող շատ հարցեր շոշափվել են մեր և ռուսական մամուլում: Մենք օգտագործել ենք մոտ 100 անուն թերթեր, ամսագրեր, հանդեսներ և գիտական տեղեկատուներ Դրանց թվում են՝ «Առողջապահական թերթ» (Երևան), «Արարատ» (Էջմիածին), «Արժույթ վասպուրական» (Վարդգ), «Մուրմ» (Քիֆլիս), «Սովետական արվեստ» (Երևան), «Սովետական զրահայնություն» (Երևան), «Փորձ» (Քիֆլիս), «Вестник Европы», «Большевик» ամսագրերը, շՍՄՀ ԳԽ հասարակական գիտություն-

¹ Տճ՝ Կ. Մարкс, Капитал, т. 1, 1928, էջ XXXIV:

ների բաժանումների «Տեղեկագիր»-ը, «Պատմա-բանասիրական հանդես»-ը, Երևանի պետական համալսարանի «Գիտաշխատություններ»-ը, «Գրական քննիք» (Երևան), «Երևան» (Երևան), «Մշակ» (Քիֆիս), «Նոր դար» (Քիֆիս), «Պատկ» (Երևան), «Սովետական Հայաստան» (Երևան), «Искра», «Кавказ» (Тифлис), «Коммунист» (Երևան) քննիքներ, «Эриванские губернские ведомости» և «Эриванские объявления» քննիքները՝ Գրանց էջերում տեղ են գտել Երևանին վերաբերող ամբողջական աշխատություններ, հուշեր ու պապիկություններ, առանձին հարցերին վերաբերող հոդվածներ, փիճակագրական տեղեկություններ, վավերագրային նյութեր: Կարելի է ասել, որ առանց մեր պարբերական մամուլի էջերում եղած նյութերի և գիտական տեղեկատուների հաջորդած տեղեկությունների անհնար կլինեն Երևանի պատմության շատ հարցեր լուսարանել:

Աղբյուրների համեմատությամբ ուղղակիորեն Երևանի պատմության վերաբերող ուսումնասիրություններ սակավաթիվ են: Ընդ որում Երևանի պատմության տարբեր ժամանակաշրջաններն ուսումնասիրված են տարբեր շափով ու խորությամբ: Համեմատաբար լավ են ուսումնասիրված նրա հնագույն՝ ուրարտական ժամանակները և XIX դ. պատմությունը: Որքան էլ պարադոքսալին թվա, այնուամենայնիվ, չի կարելի չընչել, որ մեր մայրաքաղաքի նորագույն՝ սովետական ժամանակաշրջանի պատմությունը գեոսո վատ է ուսումնասիրված, չնայած այդ շրջանի աղբյուրները անսպառ են:

Սովետական Հայաստանում մեծ նվաճումների հասած ուրարտագիտության հետազոտության ամենակարևոր առարկան Երևանում գտնվող ուրարտական էրեքուսի և Քելչերախի բերդաբաշտերի ավերակներն են, որոնք պարբերաբար ու հիմնովին ենթարկվում են հնագիտական ուսումնասիրության: Հնագիտական պեղումներից ստացված նյութերը և դրանց հիման վրա գրված մենագրություններն ու գիտական հոդվածները արդեն ընդհանուր գծերով լուսարանել են մեր մայրաքաղաքի հնագույն ժամանակաշրջանի պատմության հիմնական հարցերից շատերը, չնայած շատ հարցեր դեռ մնում են փնտելի, իսկ շատ հարցեր էլ՝ չուսումնասիրված: Այսպես ճշտվել է ուրարտական ժամանակաշրջանի Երևանի էրեքուսի և Քելչերախի գիբեր, մոտավոր դրաված առարածությունը, պարզարանվել է դրանց բնույթը, պեղվել ու նկարագրվել են առանձին կառույցների մնացորդներ, բաց են արվել ամբողջական փողոցներ ու ֆաղանգատներ, լուսարանվել են դրանց ընդարձակ պատմության հիմնական առանձնահատկությունները, բնադրու-

թյանը վերաբերող մի քանի հարցեր, անտեսական կյանքի կարվոր կողմերը, քաղաքական պատմության որոշ հարցեր, հիմնավորված է Երևանի անկան ծագման հարցը և այլն, և այլն: Մի խորքով արդեն բավական հարուստ գրականություն է ստեղծվել մեր մայրաքաղաքի ուրարտական ժամանակաշրջանի և դրան հաջորդած դարերի պատմության գծով: Չնայած դրան, Երևանի պատմության հնագույն ժամանակաշրջանի հիմնական բոլոր հարցերն ընդգրկող ամբողջական մենագրություններ գեոսո չկան: Նշված աշխատություններն ու գիտական հոդվածները վերաբերում են նրա պատմության միայն առանձին կողմերին:

Երևանի միջին և նոր շրջանի պատմության հարցերը շոշափվել են տարբեր բնույթի աշխատություններում՝ հատուկ այդ հարցերին նվիրված մենագրություններում, հայ ժողովրդի ընդհանուր պատմությանը վերաբերող գրքերում, գիտական ու քննիքային հոդվածներում, գրական-աներկային և գիտա-հանրամատչելի աշխատություններում: Ըստ այդ խմբերի էլ փորձենք մասնագետի ուշադրությանն արժանացնել երևանագիտության նշման արժանի գործերը:

Երևանի՝ մեղ հետաքրքրող քաղաքային պատմության վերաբերյալ փաստորեն մեծ ժառանգություն ենք ստացել միայն մի մենագրություն՝ զա բանասեր և պատմության հետազոտ հանազիզ «Հին Երևան» վերնադիրը կրող աշխատությունն է (Երևան, 1931), որից և սկսում ենք մեր համառոտ տեսությունը:

¹ М. В. Никольский, Клинообразная надпись из Гандя-тапа около Эривани, Москва, 1894, Гр. Капанянц, Историко-лингвистическое значение топонимии древней Армении (Երևանի պետամաթարանի Երևանի աշխատություններ, 1940, հատ. 14), Ուրարտի պատմությունը, Երևան, 1940, Б. Б. Пиотровский, Кармир-блур I, Ереван, 1950, II, 1952, III, 1955, Ванское царство (Урарту), М., 1959, А. А. Мартиросян, Город Теппе-бани по раскопкам 1947—1959 гг., Ереван, 1961, К. Л. Оганесян, Архитектура Теппебани, Ереван, 1955, его же, Архитектура Эребуни по материалам раскопок 1950—1959 гг., Ереван, 1961, В. Բարսիլյան, Ուրարտական երկր. նոր արձանագրություն (Տեղեկագիրը ՀՍՄՀ ԳԱ հաս. գիտութ., 1951, № 8, II, Միրզոյան, Երևանի անյան ծագման շուրջը (Տեղեկագիրը) ՀՍՄՀ ԳԱ հաս. գիտութ., 1951, № 11), F. W. König, Die Gründung der Stadt Erivan (ca. 785 v. Chr.) (տե՛ս շնորհիվ ամսօրնայ, 1954, № 7—8), Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը (Գիտա-բանասիրական հանդես), Երևան, 1959, № 2—3), Խոյկի, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966, և այլն:

Հայ մշակույթի հայտնի երախտավորն Ակինյանը երվանդ Շահազիզի այդ մենագրության առթիվ գրում է. «Ուրախ սրտով կ'ողջունենք և Շահազիզի երկասիրութիւնը իրեն մենագրութիւն, որ առաջին ամփոփ գրութիւնն է նուիրուած այժմյան եօրհրդային Հայաստանի մայրաքաղաքին անցեալ պատմութեանն¹։ Եվ դա միանգամայն ճիշտ է։ Երվանդ Շահազիզի «Շին երևանք» մեր մայրաքաղաքի առաջին ամփոփ պատմութիւնն է։ Ժամանակադրական առումով նա ընդգրկում է հնագույն ժամանակներից մինչև Հայկական մարզի գոյութեան վերջին տարիները (XIX դ. 30-ական թվականները) ընկած ամբողջ ժամանակաշրջանը։ Դրանում տրբված են՝ բաղաբի բաղաբական պատմութիւնն հիմնական անցքերը, վարչական վիճակը տարբեր ժամանակներում, տնտեսական ու մշակութային կյանքը, բնակչութիւնն ու բաղաբի ներքին կյանքը, բաղաբի արտաքին տեսքի նկարագիրը, հնութիւնները և այլն։ Իր-րին առաջին փորձ, անշուշտ, մայր աշխատութիւնն ունի շատ քերութիւններ։ Նրա գրելու ժամանակ հրատարակի գրու շին-նկու պատճառով չեն օգտագործվել հայերեն ձևագրերի հիշատակարանների մի զգալի մասը, ժամանակագրութիւններից շատերը, հայերեն և պարսկերեն կարվածագրերը, ամենեին չեն օգտագործված արխիվային վաղապատմութեան մեջ ուրբարտական ժամանակաշրջանը գրեթէ իսպառ բացակայում է, չես լուսարանված նաև երևանի բաղաբական պատմութեան, սոցիալ-տնտեսական հարաբերութիւններին, կամուսն ու վարչական բնագավառներին վերաբերող մի շարք անպիսի հարցեր առանց որոնց զովար է պատկերացնել բաղաբի համակողման, պատմութեանը։ Կա փաստերն բաղաբի պատմութեան սիտեմատիկ շարադրանքը չէ և շատ տեղերում անմշակ է, չունի գիտական աղարատ, սկզբնաղբերակների հաղորդած տեղեկութիւնների նկատմամբ հեղինակը բնագատական մոտեցում բիլ ունի, տարբեր կարգի նյութներն ու հարցերը համախի խտնված են իրար հետ, մշակույթին նախընտրած բաժինը (ընդամենը 10 էջ) շատ աղքատ է, սոցիալ-տնտեսական հարաբերութիւններին ու արտադրական պայքարին պատշաճ տեղ չի հատկացված և այլն, և այլն, և այլն։ Այդ գիտեր և ինքզ հեղինակը նա այդ առթիվ գրում է. «Մենք հովակնութիւն չունենք և չենք ունենել մեր այն աշխատանքը Հին երևանի լիակատար, պատմագրական գիտութեան վերջին խոսքին համապատասխան մի գործ

համարել, այլ մի փորձ, որ պարունակում է յուր մեջ սպագայում գրվելիք մի այդպիսի պատմութեան բոլոր տարբերքն²։

Բայց և այնպես, ո՛չ նշված քերութիւնները և ո՛չ էլ հեղինակի այդ համեստ հայտարարութեանը չեն կարող պատճառ լինել «Շին երևանք» համարելու «սոսկ բավական հարուստ և բազմակողմանի հավաքած փաստերի շարադրութիւն», որը իր շունի հետազոտական աշխատանքի բնույթ, ինչպես այն բնութագրում է գրախոսող-ներհից մեկը³։

Անշուշտ, ընդամենը 256 էջից բաղկացած այդ փորբաքող գիրքը երևանի բազմադարյան պատմութեան համակողմանի շարադրանքը չէ, բայց այն երևանի պատմութեան առաջնեկն է, փաստական հարուստ նյութեր պարունակող և ընդարձակ մատենագրութեան ունեցող մի աշխատութիւն, որը մշտապես իր տեղը կունենա զարգացող երևանագիտութեան մեջ։ Ավելին, մի շարք հարցերում «Շին երևանք» ունի սկզբնաղբերակի նշանակութիւնը նրա գիտակ հեղինակը, որ տասնյակ տարիներ ապրել է երևանում, շատ տեղեկութիւններ հաղորդում է որպես ականատես։

Սակայն երվանդ Շահազիզի այս կրկ երևանին նախընտրած առաջին աշխատութիւնը չէ ընդհանրապես երևանի մասին փորբութեամբ կրկու աշխատութիւններ են գրվել զեռես XIX դարում։ Դրանցից մեկը Կ. Օրլովսկու «Эривань» փոքրիկ աշխատութիւնն է, որը տեղադրված է «Кавказский календарь»-ի 1852 թվականի համարում (Քիֆլիս, 1851), իսկ մյուսը՝ «Город Эривань» վերնագրով Ստ. Ձելինսկու դարձյալ փորբութեամբ աշխատութիւնը (տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, Тифлис, 1881)։ Դրանք իրենց բովանդակութեամբ իրար նման են։ Դրանցում հիմնականում տեղ են դրել բաղաբի տնտեսութեան ու ներքին կյանքին վերաբերող վեճակագրական տեղեկութիւններ, ինչպես և նկարագրութիւններ, որոնք կարևոր աղբյուր են ծառայում XIX դ. երևանի պատմութեան համար։ Դրանցից առանձնապես արժեքավոր է երևանի արական գիմնագիտութեան մեծ գիտակ, հայազգի Ստեփան Զելինսկու «Город Эривань»-ը, որտեղ՝ բաղաբի պատմութեան մյուս բնագավառներից

¹ Երվանդ Շահազիզ, Հին երևանք, էջ 5։

² Տե՛ս «Նոր ուղի» (հանդես), գիրք չորրորդ, երևան, 1931, էջ 145—146։

³ «Շահազիզ ամսօրնայ», 1934, № 5—7, էջ 326։

բացի, հուշ կարևոր վիճակագրական ավյալներ են հաղորդված նաև դպրոցների մասին¹։

Նրվանց Եահազիբի զիրքը հրապարակ գալուց 10 տարի անց՝ 1941 թվականին պատմարան Է. Ժամկոչյանը թեկնածուական դիտարկում է գրում Երևանի մասին։ Այդ դիտարկումն աշխատանքի, որը կրում է «Երևանը XIII—XIV դարերում» վերնագիրը, մինչ այժմ ձեռագիր վիճակում է և գտնվում է Երևանի պետական համալսարանի գրադարանում։ Իր դիտարկումն աշխատության մեջ Է. Ժամկոչյանը նախ մի համաձայտ ակնարկ է ձգում Երևանի պատմության նախորդ ժամանակների վրա, ապա սկզբնաղբյուրների ու գիտական գրականության մանրագրերն ուսումնասիրության հիման վրա լուսարանում քաղաքի բնակչության այդ դարերի սոցիալ-տնտեսական հարաբերություններ, քաղաքացիների տնտեսա-իրավական վիճակը, քաղաքական պատմության առանձին զրվագներ, բայց հասկապես մեծ տեղ տալով հարկային սխեման վերլուծմանը։ Իրանում քաղաքի պատմության հարցերը բննարկվում են ամբողջ երկրի պատմության ֆոնի վրա, որտեղ սերտորեն առնչված։ Սակայն քաղաքի պատմության մի շարք հարցեր (մշակույթային կյանքը, քաղաքական պատմության որոշ հարցեր, քաղաքի ներքին կյանքն ու արտաքին տեսքը, հնություններն ու կոթողները և այլն) դուրս են մնացել դիտարկումից աշխատության շրջանակներից։

Երևանի պատմության առանձին հարցերին ու ժամանակաշրջաններին վերաբերող մի քանի աշխատություններ և հոդվածներ է գրել Ա. Միրզոյանը²։

Պատմությունից բացի, հատուկ աշխատություններ են գրվել նաև Երևանի բնական պայմանների վերաբերյալ։ Այդ բովանդակությամբ առաջին աշխատությունը Աղաճ Աղայանցի զիրքն է, որը կրում է «Տեղագրություն (հայրենագիտություն) Երևանում» վերնագիրը (Երևան, 1889)։ Աշակերտների համար գրված այդ հայրենագիտական աշխատությունը իր ժամանակին համեստ նպատակների ծառայելուց բացի, այժմ դարձել է մեզ համար աղբյուր անցյալ դարի վերջերի Երևանի պատմության ու հայրենագիտության։ Դրա բովանդակության և նպատակի մասին համեստ ուսուցիչ—հե-

ղինակը առաջարկում գրում է. «Մեր այս աշխատությունը, պարունակելով իր մեջ աշխարհագրական բազմակողմանի նյութեր, սպասարկում ոչ սակավ կարող է նպաստել աշակերտին՝ ընդհանուր աշխարհագրությունը ուսումնասիրելու ժամանակ» (առաջարկ, էջ աշխարհագրությունը ուսումնասիրելու ժամանակ» (առաջարկ, էջ I—II)։ Բայց հասկապես ուշագրության արժանի են Ա. Գ. Ներսիսյանի թեկնածուական դիտարկումներն և Ս. Արզախյանի ժաղկան աշխատությունը³։ Իրանցից առաջինում բավական մանրամասնությամբ խոսվում է Երևանի կլիմայական պայմանների վերաբերյալ, ինչպես և փոքրիկ ակնարկ կա քաղաքի ու նրա շրջակայքի բնական պայմանների մասին ընդհանրապես, իսկ Ս. Արզախյանի գրքում մասեր են Երևան քաղաքի ու դրան հարող Արարատյան դաշտի որոշ մասերի երկրաբանությունը, բնական պայմանները, հնությունները և հայրենագիտական այլ հարցեր, որոնք երկրաբանից ու աշխարհագրագետից բացի կարող են պիտանի լինել նաև պատմաբանի համար։

Երևանի պատմության և աշխարհագրության շատ հարցեր շոշափված են ամբողջ Հայաստանին կամ նրա առանձին մասերին վերաբերող մի շարք աշխատություններում։ Սկսած XIX դ. սկզբներից այդ կարգի աշխատությունների թվին են պատկանում՝ Պ. Խնդիրից այդ կարգի աշխատություններին լսրից մասանց աշխարհի» (հատ. 1, վեճակի, 1802), Հովհ. Ծանկարունյանցի «Ստորագրություն կաթոլիկ էջմիածին և հիւզ դաւառացի Արարատյան» (հատ. Ա, Բ և Գ, էջմիածին, 1842), Ի. Կոպլենի «Исторический памятник соотояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи» (С. Петербург, 1852), Պ. Ալիշանի «Ալարատ» (վեճակի, 1890), Է. Մ. Էփրիկյանի «Պատկերաբանագր բնաշխարհի բնութագր» (հ. 1, վեճակի, 1903—1905), Է. Հյուրբըմանի «Հին հայոց տեղոյ անունները» (վեճակ, 1907), տողերիս հեղինակի «Հայաստանի պատմական աշխարհագրություն» (պրակ III, Երևան, 1953) և ուրիշ հեղինակների այլ աշխատություններ։ Իրանց մեջ Երևանը նկարագրված է առանձին զիւրի կամ ենթազիւրի տակ՝ զխախտրապես պատմական և աշխարհագրական առումներով։ Նշված աշխատությունների հեղինակների ուշադրությունն առանձնապես գրավել են քաղաքի անվան ծագման, նրա քաղաքական պատմության, տնտեսական ու մշակութային կյանքի-

¹ Առանձին կրոջ Ա. Երզնկազեան Ստ. Զեյնիկուն համարում է «իր Ժամանակի հայրենագիտության» և «գրքի առարկաների համարից» մի մարդ (Երզնկազեան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 1951, էջ 124, տղազատի ծանկարկություն)։

² «Հին Երևանի պատմությունից», Հայկական պետական հեռակա մանկեհատուան, գիտ. աշխ. ժողովածու, 1957, № 4։

³ А. Г. Нерсисян, Климатическое описание города Еревана и его окрестностей (диссергационная работа), рукопись (հրատարակված է սուհհամանափակ տերաժով). Ереванский госунт, 1946.

⁴ Պրոֆ. զիւտ. Ս. Արզախյան, Երևան, Քեհեր, 1947։

քաղաքի արտաքին տեսքի, բնական պայմանների, քաղաքում տեղի ունեցած բնական աղետների (երկրաշարժեր և հեղեղներ) հետ կապված հարցերը, որոնք առանձնապես հանգամանորեն են ներկայացրված Ղ. Ընճիճյանի, Բ. Շոպլենի, Ղ. Ալիշանի և Ն. Ա. Էփրեկյանի նշված աշխատություններում: Գրանցում փաստորեն շոշափված են քաղաքի պատմության գրեթե բոլոր հարցերը: Այդ աշխատություններն իրենց զգալի մասով սկզբնաբարձրորեն բնույթ ունեն: Իսկ ինչ վերաբերում է Բ. Շոպլենի աշխատությանը, ապա այն առաջին հերթին հենց սկզբնաբարձր է, Երևանի (և ամբողջ Հայկական մարզի) XVIII դ. վերջի և XIX դ. առաջին տասնամյակների պատմության և տնտեսական կյանքի վերաբերյալ:

Բ. Շոպլենը ցարական աստիճանավոր էր, Հայկական մարզի եկամտատերի և պետական գույքերի վարչության նախագահը: Քննելով Պատկերչի հրամանով նա 1829—1832 թթ. անց է կացրել Հայկական մարզի այսպես կոչված «կամերալ ցուցակագրումը», որի արդյունքները պահվում են ՀՍՍՀ ՊԿՊԱ 90-րդ ֆոնդում: «Կամերալ ցուցակագրման» հարուստ նյութերի հիման վրա նա շարադրել է վերը նշված աշխատությունը, որը տպագրվել է դրանից մոտ 20 տարի անց՝ 1852 թվականին: Գրքի «Исторический памятник Армянской области...» վերնագիրը լրիվ չի արտահայտում նրա բովանդակությունը: Նա փաստորեն Հայկական մարզի (և շատ դեպքերում ամբողջ Արևելյան Հայաստանի) և՛ աշխարհագրությունն է, և՛ վիճակագրությունը, և՛ պատմությունն ու ազգագրությունը: Գրանում ամենայն մանրամասնությամբ նկարագրված է երկրի պատմական անցյալն ու ժամանակակից դրությունը: Իրենց պատկառվոր կողմնորվ ու թեւորվումներով հանդերձ առանձնապես մեծ արժեք են ներկայացնում վիճակագրական այն տվյալները, առանց որոնց հնարավոր չէ գաղափար կազմել այդ ժամանակվա Հայկական մարզի և նրա կենտրոնի՝ Երևանի մասին: Այդ տեսակետից միակզմայն ընդունելի է Կովկասն այնքան լավ իմացող Գ. Պապրկի «Шопен и камеральное описание Армянской области в 1829—30 годах» ծավալուն հոդվածում արտահայտված այն կարծիքը, թե Շոպլենի հարրդրած տվյալները առաջին լուրջ, պաշտոնական վիճակագրական տվյալներ են Հայաստանի այդ շրջանների մասին:

Քաղաքի XIX դարի բնակչության թվի, հատկապես 1828 և 1829 թվականներին Պարսկաստանի հայաբնակ շրջաններից և Արև-

մրջան Հայաստանից Արևելյան Հայաստան ու Երևան գաղթած հայերի վերաբերյալ վիճակագրական մշակված կարևոր տեղեկություններ կան Ալ. Երիցյանցի «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում» (մասն Ա և Բ, Քիֆլիս, 1894) աշխատության մեջ: Այդ նույն դարի քաղաքական պատմության հիմնական հարցերը լուսարանված են Ն. Կուրբովիի («История войны и владычества русских на Кавказе», тт. III, IV и V, СПб, 1885—1887) և Վ. Պոստոլի («Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях», тт. I, II, III, С.-Петербург, 1888) աշխատություններում, իսկ Ս. Ա. Եղիազարովի արժեքավոր մենագրություններում («Исследование по истории учреждений в Закавказье», ч. II, Казань, 1891, «О водовладении в Закавказском крае», Киев, 1896 և այլն) շոշափած թեմաները նպաստել են Երևանի XIX դարի վարչակարգի և տնտեսական կյանքի վերաբերող մի ամբողջ շարք կազմող հարցերի լուսարանմանը:

Երևանի XIX դարի և XX դ. սկզբի բնակչության վերաբերյալ հետաքրքրական տեղեկություններ է պարունակում Զ. Կոռկոսյանցի «Երևան քաղաքի ժողովրդագրությունը» (Երևան, 1931) վիճակագրական բովանդակություն ունեցող գիրքը, որի համար աղբյուրներ են ծառայել 1829—32 թվականների կամերալ ցուցակագրումը և 1897 ու 1924 թվականների մարդահամարները:

Երևանի խանությունում XVIII դարի վերջերին տեղի ունեցած քաղաքական դեպքերը և ներքին կռիվները բավական մանրամասնությամբ տրված են Վ. Գրիգորյանի «Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780—1800)» (Երևան, 1958), իսկ ողողման հին դարի վերջում՝ Հովհ. Շահաբունյանցի, Բ. Շոպլենի և Հարստ-Տառլեղի աշխատություններից հետո՝ Գր. Երիմազյանի «Երվանդյաների ուղողման պատմությունից» (Երևան, 1962) գրքում:

Մեր օրերում բուն զարգացող հայագիտությունը չէր կարող չնպաստել նաև Երևանի պատմության առանձին կողմերի լուսարանմանը: Հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններին և ամենատարբեր պոբլեմներին վերաբերող տասնյակների հասնող արժեքավոր մենագրություններում ուղղակի կամ անուղղակի կերպով շոշափվել են մեր մարտաբարձր պատմության ուղղակի կերպով շոշափվել են մեր մարտաբարձր պատմության շատ հարցեր: Առանձնապես հիշատակության արժանի են Լեոյի, Հ. Մանանդյանի, Մ. Արեղյանի, Հ. Անադյանի, Գ. Լևոնյանի, Ք. Փարսմանյանի, Ն. Տոկարսկու, Կ. Գափաղարյանի, Ա. Հովհաննիս-

¹ Տճ՝ «Кавказ» (газета), Тифлис, 1892, №№ 166, 167 և 168:

Կիբր, սահմանները, գրաված տարածությունը: Քաղաքի և նրա շրջակայքի ռելիեֆը, կլիմայական պայմանները, ջրերը, հողերը, բույսերն ու կենդանիները: Բնական հուսվեք: Բնական աղետները

Երևանը գտնվում է մոտավորապես 40°08' Հյուսիսային լայնությունյան և 44°10' արևելյան երկայնության տակ: Փաղաքի մեծածառուց մասը ծովի մակարդակից ունի 900—1000 մ բարձրություն: Նա գրավում է Արարատյան դաշտի Հյուսիս-արևելյան մի հատվածը և դրան հարակցող բարձրությունների մեղմափեք լեռնայանջրբեր:

Բնականից աշխարհագրական հարմար դիրք ունի Երևանը: Այստեղ էին հատվում Արաքսի և Հրազդանի ափերով ձգվող ճանապարհները, որոնք բանուկ են եղել հնագույն ժամանակներից ի վեր: Նա իշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ և իր հիմնադրման օրից միշտ գտնվել է բաղադրարկված երկրի կենտրոնական մասում: Քաղաքն օղակող բլուրներն ու լեռնաճյուղերը բնական մեկ-մեկ ամրոց են եղել նրա համար, իսկ Հրազդանն ու նրա ձախակողմյան վտակ Դեատար¹ ոռոգման և խմելու ջրի անսպաս աղբյուրները:

Սակայն այս կամ այն քաղաքի, երկրի դիրքի նպաստավոր կամ աննպաստ լինելը բացարձակ իմաստ չունի: Աշխարհագրական դիրքի նպաստավոր կամ աննպաստ լինելը բնականից բացի մեծապես կախված է պատմական հանգամանքներից:

Կյո հավասար չափով վերաբերում է նաև Երևանին: Մենք հետաքրքում կատենենք, որ իրերի բերումով պատմական տարբեր ժամանակներում Երևանի զարգացման պայմանները և, դրանցից կախված, դիրքի նպաստավոր կամ աննպաստ լինելը տարբեր են եղել:

Երևանի և նրա շրջակայքի համայնապատկերի գեղեցկությունն ու աշխարհագրական դիրքի նպաստավորությունը նշել են շատ հեղինակներ ու ճանապարհորդներ¹: Սակայն դրանց մեջ Երևանի դիրքն ու համայնապատկերը ամենից դիտյուկ ու պատկերավոր բնութագրել է կիևը իրեն հատուկ բանաստեղծական ոգևորությամբ: Նա գրում է, որ Երևանը սառչի է բնկնում ինչպես իր աշ-

յանի, Մ. Ներսիսյանի, Վ. Պարամյանի, Արզ. Հովհաննիսյանի, Վ. Ռշտունու, Բ. Առաքելյանի, Ս. Երեմյանի, Մ. Պողոսյանի, Ս. Հակոբյանի, Մ. Ազյանի, Պ. Հարությունյանի, Ա. Կարինյանի, Ի. Ենիկոյունյանի, Զ. Կրիզորյանի, Հով. Քուստանյանի, Մ. Աղաջի, Խ. Գուսանյանի, Ի. Պետրոսյանի և այլք աշխատությունները, որոնցում լուսարանված բազմաթեմակ հարցերը՝ սկսած քաղաքական պատմությունից ու սոցիալ-տնտեսական հարաբերություններից և վերջացրած մշակույթով, իրենց որոշ մասով վերաբերում են նաև Երևանին: Հարկ չհամարելով աշխատության օգտագործված գրականության ցանկում ցույց տրված այդ հեղինակների աշխատությունների անուններն այստեղ նորից նշելու, նկատենք, սակայն, որ դրանք միայն մի շնչին մասն են կազմում այն բազմաթիվ հեղինակների, որոնց ուսումնասիրություններն այս կամ այն կերպ վկայակոչվել են մեր կողմից:

Պակաս թիվ չեն կազմում նաև մեր օրերում գրված՝ Երևանի պատմության տարբեր ժամանակներին ու հարցերին վերաբերող դիտական հոդվածները: Այդ կարգի հոդվածներով հանդես են եկել Կ. Առնյանը, ինժ. Կիստյանը, Բ. Հարությունյանը, Ն. Ալիկյանը, Կ. Ղաֆաջարյանը, Ս. Բարխուդարյանը, Հ. Քյուրդյանը, Հ. Ժամկոչյանը, Մ. Իսրայելյանը, Ն. Հարությունյանը, Ա. Միրզոյանը, Հ. Փափազյանը և շատ ուրիշներ, որոնց հոդվածները վկայակոչված են աշխատության տարբեր հատորներում: Երևանի պատմության ազնվածող բազմաթիվ հոդվածներ ու հարցումներ կան նաև թերթերում ու ընթերցվող լայն խավերի համար հրատարակվող ամսագրերում: Կան նաև առանձին գրքերով հրատարակված գեղարվեստական-ակնարկային գրքեր, վիճակագրական տեղեկատուներ, պարբերական մամուլում լույս տեսած օտարերկրացի այցելուների տպավորություններ և այլն, և այլն:

Այդպիսին է մեր օգտագործած աղբյուրների և գրականության բնույթն ու ծավալը: Կրանց մեծ մասի վերաբերյալ մենք հնարավորություն չունենք մանրամասն խոսելու: Բավարարվում ենք միայն վերոգրյալով, համոզված լինելով, որ օգտագործված աղբյուրների ու գրականության նկատմամբ բուն տեսքում մեր արած դիտողություններն ու գատողությունները, աշխատության շարադրանքի բնթացքում խիստ կերպով պահպանած գիտական ապարատը և I, II ու IV հատորների վերջում զետեղված գրականության ցանկերը լրացնում են այդ բացը:

¹ Այսպես Ազատանց, Տեղագրություն (Հայրենագիտություն) Երևանի, Երևան, 1889, էջ 9—10, Աղբյուր, ամսագիր, Քիջիտ, 1902 թ., № 2, էջ 82, Երվանդ Եսնաղիկ, Հին Երևանը, Երևան, 1937, էջ 14—15 և այլն:

խարհագրական դիրքով ու բնական ճարտարապետական հսկա կառույցներով... նույնպես և այն պատվալոր տեղով, որ նա գրավում է հրաշապատումների ու պատմության մեջ¹: նա նշում է, որ երևանը գտնվում է կասպից ծովի ափերից զգույի Փոքր Ասիայի սիրտը՝ տանող բնական ճանապարհի վրա, որ հենց այդ ճանապարհով են պատմության ընթացքում «Մերձկասպյան և Անդերկասպյան երկրների ժողովուրդները» գնացել դեպի «Աև և Միջերկրական ծովերի, առափնյա շրջանները²: Բիրիխական զորախոտի երկրի» բանուկ ճանապարհների վրա լինելու հետևանքով, երկրի հետ միասին երևանն էլ բազմաթիվ անգամ ենթարկվել է նվաճման ու ավերման: նա ականատես է եղել արյունահեղ շատ պատերազմների³:

Պակաս ոգևորությանը չի նկարագրել երևանի զեզազիբ լինելը նաև է. Գ. Սրվանձույանը. «Կեղծելի է ստրա (երևանի) սիրը. — դրում է նա, — որքան զարի վերա շինուած՝ երեսը զեպի հարավու ինկան Ալբարաա գաշտը զոր բաւամթիւով ու ծառագար գեղեկով տարածված է բաղաբն հանդիման, մեկ աշտով Մասիսը, մեկալով՝ Արագած Հայրենի հին հսկայարներ լեռները կ'դիտէ և իմիւր վազարշապատու արքայական ավերակներն ու էջմիածնա սրբազան կաթողիկեները⁴:

Երևանը տարրեր ժամանակներում ունեցել է տարբեր սահմաններ ու մեծություն: Հին երևանը փոխված քաղաք էր: նա իր բնակիչի թաղերով և քաղաքապատական հողերով XIX դարի 60-ական թվականներին գրավում էր մոտ 45 կմ արտաքին շրջադիմ ունեցող մի տարածություն (նույն դարի 30-ական թվականների սկզբին քաղաքի արտաքին շրջափերը ընդամենը 28—30 վերստ էր, այսինքն՝ 30—32 կմ), որը հյուսիսում սահմանակցում էր Քանաքոսի, արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Նորազգվիթ, Վերին Ենեպովիթ, Ներքին Ենեպովիթ, Սարվանյար, Զաֆարաթ, Փարաբար (Շիրաբար), Եղվարդ գյուղերի, արևելքում և հյուսիս-արևելքում՝

¹ X. Փ. Բ. Липч, Армения, Путевые очерки и этюды, т. I, Тифлис, 1910, էջ 191:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս նույն տեղը Հիմն. Буце, Transcaucasia and Ararat, 4-րդ հրատ., Լոնդոն, 1899, էջ 312:

⁴ Տ. Գ. Արամանյանց, Տեղանունային հետազոտություններ, երևան քաղաք («Արժույթի Վասպուրական», Վարազ, 1861, № 1, էջ 17)։

Ալվան ու Զրվեթ, իսկ հարավում՝ Աղբաշ գյուղերի հանդամասերին⁵: Այդպիսի սահմաններով 1863 թվականի հաշիվներով երևանն իր բնակիչի թաղամասերով, գյուղատնտեսական տարածություններով, ճանապարհներով, գետերով, կամուրջներով, անպտուղ մասերով, ճանապարհներով և բաժանված էր յոթ թաղի՝ Երկաթաղ-բյուր (Գամիրբուլաղ), Ենեքաղ, Խանլարաղ (կամ Նոր-բաղ), Ենար, Զուգալու, Կոնդ և Նոր⁶, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր բնական պայմանների առանձնահատկությունները:

Բուն հին երևանի տեղը երկրաբանական նոր ժամանակներում ծածկված է եղել ջրով, կաղնիով Արարատյան դաշտում այդ նույն ժամանակներում գոյություն ունեցող ընդարձակ լճի մի մասը: Հետագայում այն աստիճանաբար ցամաքել է թողնելով կավի, զիպսի և նստվածքային այլ նյութերի հզոր շերտեր: Ժամանակի ընթացքում քաղաքի զբաղեցրած շրջանից Գետաղը բշիլ-տարել է հին նստվածքների ու հողմնահարված ապարների զգալի մասը: Բայց մյուս կողմից նույն Գետաղը սելավների ժամանակ հսկայական քանակությամբ նյութ է բերել և նստեցրել քաղաքում և նրա մերձակայքի հարթություններում: Հին երևանի բնակեցված և ոչ բնակեցված ցածրադիր տարածությունները ծածկված են գետային այդ նստվածքներով՝ լիժերով: Բայց երևանի բուն շրջանի լանդշաֆտը փոփոխության է ենթարկվել ոչ միայն բնական եղանակով, բնական ուժերի ազդեցության տակ, այլ նաև մարդու գործունեության շնորհիվ: Եթե մարդը հազարամյակների ընթացքում շինարարական երևանի բնական պայմանների փոփոխմանը, ապա նրա գրաված տեղանքը պարզապես կիսանապատ կլիներ՝ զբոսայգային, շոր ու անպտուղ մի շրջան, որպիսին ներկայացնում են նրա շրբ-

⁵ Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху её присоединения к Российской империи, С.—Петербург, 1852, 464 և 955. С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, Тифлис, 1881, отдал I, էջ 9), Ալվան Աղապիթ, Տեղագրություն (հայրենագիտություն) երևանի, էջ 10, Ալվան Զուգալու, Հին երևանը, էջ 13: Հիմն. Ք. Խ. Լակոյան, երևանի պատմությունը (1801—1879 թթ.), երևան, 1959, էջ 219 և 553:

⁶ Տե՛ս Ք. Խ. Լակոյան, երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 553—554:

⁷ Տե՛ս Ալվան Աղապիթ, Տեղագրություն (հայրենագիտություն) երևանի, էջ 10:

⁸ Երևանի դրաված շրջանի նկարագրության մասին մանրամասն տե՛ս արք. Գոպ. Ա. Աղապյան, երևան, Քեհրան, 1947, էջ 1—174:

չակայել շոտզվող և անմշակ տարածությունները: Հազարամյակ-ներին պատմություն ունեցող Երևանում մտքոր հսկայական փոփո-խություններ է մտցրել նրա բնական պայմանների մեջ: Արհեստա-կան ոտզման առուների խիտ ցանցի շնորհիվ ժամանակի բնթաց-րում կիսանապասք վերածելով ալգիների ու բանջարանոցների, դրանով իսկ, փոխել է նրա լանդշաֆտն ընդհանրապես:

Հին Երևանը ուներ իր բնական որոշակի սահմանները: Բուն քաղաքը ամֆիթատրոնի ձևով երեք կողմերից պատած էր Նորբի, Քանաքեռի և Կոնգի բարձրություններով, կազմելով Արարատյան դաշտի մեկ լեզվակը, յուրաքանչեղ մի «Քերակզղի», որի հյուսիսա-յին կենթ փոված էր նշված բարձրությունների լեռնալանջերին, իսկ հարավային կեսը՝ դրանց ոտքերին բնկած հարթավայրում: Այլ կերպ ասած, հյուսիսից ինչպի հարավ քաղաքի բուն ամ տարածու-թյունը, աստիճանաբար իջնելով, ձգվում էր Արարատյան դաշտին: Մեր ժամանակներին աշխարհագրագետները Երևանի ու նրա շրջա-կայքի հարթությունը, որը կազմում է Արարատյան դաշտի մի մա-սք, կոչում են Երևանյան գոգավորություն:

Հյուսիսից հարավ թևերովյուն ունենալու պատճառով Երևանի հարավահայաց բոլոր անկյուններից Մեծ և Փոքր Մասիսները երե-վում են ամբողջությամբ՝ «հիմքից մինչև կատարները», որոնք հաճախ ծածկված են լինում ամպերով:

Երևանի շրջակայքում, ինչպես առաջինք, ձգվում են Կոնգի, Քանաքեռի և Նորբի ոչ բարձր ու մեղմաթև բլուրներ ունեցող բարձ-րությունները: Գրանց համակարգին պատկանող մի քանի բլուրներ հայտնի են մեր մայրաքաղաքի պատմության մեջ: Այսպես, քաղա-քի հյուսիսային ու հյուսիս-արևմտյան կողմում գտնվում են Քյո-շերի, Աղշկարերգի (Կրղկարայքի) և Կարափի (կամ Կարապետնոզ) բլուրները: Աղշկարերգի մոտ, այն ժամանակներում Երևանից—Քիֆլիս տանող արտոնական ճանապարհ՝ ձախ կողմում գտնվում էր Կոզոնե կոչված բլուրը, որի վրա տեղադրված էր քաղաքի հին գե-րեզմանոցը: Արևմտյան կողմի բլուրներից կին՝ Դալմայի (կամ Նորադյուրի), Չորադյուրի և Հերակի (Բարլի-Յափա) բլուրները, հարավային կողմում՝ Խորովապատ (Մուխանաթ-Յափա, այժմյան նրկաթուղային կայարանից ոչ հեռու) բլուրն ու Ահմանկան լեռնա-ձյուղը¹: Երևանի հնագույն պատմության մեջ առանձնապես կարն-վոր դեր են խաղացել երկու ոչ բարձր բլուրներ՝ Կարմիր-բլուրը,

որը գտնվում է քաղաքի արևմտյան մասում, նախկին Չարբախ գյուղի մոտ (այժմ Երևանի թաղամասը), Հրազդան գետի ձախ ափին, և Արին-բեք բլուրը, որը գտնվում է քաղաքի հարավ-արև-վելյան կողմում, Աղշարերգի լեռնային համակարգի վրա: Գրանցից առաջինի լանջերին ու շրջակայքում ուրարտական ժամանակաշրջ-անում փռված էր Քելշերափնի բերդաքաղաքը, իսկ Արին-բեքի շրջակայքում հնագույն Երևանն էր՝ Էրբունի հայտնի բերդաքա-ղաքը:

Հայրենագիտական տեսակետից ուշադրության կարող են ար-ժանանալ նաև Հրազդանի հովտում հիշատակվող ձորերը՝ Հաշի-Պետրոսի (Գարախանայի), Հաշի-Մելիթոնց, Խորում աղբյուրի, Դալլաք-գյուղի, Մելիթոնց և Ռաշարի ձորերը, որոնց միջով սրբնթաց հոսում է Հրազդանը: Իսկ Նորում եղած ձորերից համեմատաբար հայտնի են Բերդաձորը², Ազվեսաձորը և Ավանի ձորը: Վերջինիս աջ լանջին (որը Նորբեքիները մինչև օրս էլ կոչում են «էրի գոշ», այսինքն՝ «այրի», «բարայրի լանջ») կա մի մեծ բարայր, որն քա-ն երևոյթին նախամարդու կայան է եղել բարեգարյան ժամանակա-շրջանում³:

Երևանը գտնվում է չոր-մերձարևադարձային կլիմայական գո-տում: Չնայած ծովի մակարդակից ունեցած բավական մեծ բարձ-րությանը, այնուամենայնիվ, այստեղ լինում են անտանելի շոգե-ր: Երևանի կլիման բնորոշվում է նախ և առաջ իր ցամաքայնու-թյամբ, որին հատուկ է օրական և տարեկան ջերմաստիճանների կտրուկ ու մեծ տատանումները, ամառն կեսին ուժեղ շոգեբլ է պարզված ու շոր եղանակները, իսկ ձմռան կեսին՝ ջուրա եղանակ-ներն ու մառախլապատմությունը: Մարտ և մասամբ ապրիլ ամիս-ներին եղանակները փոփոխական են, բայց տեղումներն առավելա-ցույցի են հասնում մայիսին: Տեղումներով ամենաաղքատ ամիս-ները հուլիսն ու օգոստոսն են: Աշնան առաջին ամիսները՝ սեպ-տեմբերն ու հոկտեմբերը սովորաբար տաք են լինում, մեղմ ու հա-ձնելի եղանակներով, իսկ նոյեմբերը բավական ջուրա է լինում և միջուրտային տեղումները՝ բավական առատ: Չմեռք սովորաբար վրա է հասնում զեկտեմբերի կեսերից և տևում է մինչև փետրվարի

¹ Տե՛ս Ազամ Ազամանց, Տեղագրություն (հայրենագիտություն) Երևանի (չ 11—12, 25 մաս. Խզանց Խաճազի, Հին Երևան, էջ 15—16):

² Գրանցանոս-բանասեր և Սամվելյանի վկայությամբ այդ «այրի» մասն մինչև օրս Նորբեքիների մոտ պահպանվել են ավանդություններ և զրույցներ:

³ Տե՛ս Ա. Գ. Երեսյան, Климатическое описание города Еревана и его окрестностей, канд. диссерт., Ереван, 1946, էջ 7—8:

¹ X. Փ. Բ. Լյուչ, Армения, т. 1, էջ 271:

² Տե՛ս Ազամ Ազամանց, Տեղագրություն (հայրենագիտություն) Երևանի, էջ 11:

վերջերի՝ Տարվա եղանակներից ամենատեկականը այստեղ աշունն է, իսկ ամենակարճատևը՝ գարունը։ Ամառային շոգեքը վրս են հասնում հանկարծակի, ոչ երկար գարնանային եղանակներից հետո։

Չմասնը Երևանում որոշակի կերպով նկատվում է ինվերսիոն երևույթը՝ բուն բաղաբուն երկար ժամանակ ավելի ցուրտ է լինում, քան շրջակայքի լեռնալանջերին և ավելի բարձրագույն վայրերում։ Այդպիսի եղանակներին սովորաբար ուղեկցում է օդի կատարյալ հանդարտությունը։ Քամու արագությունը մեծանում է ամռանը, երբ Արարատյան դաշտի օդը ավելի է տաքանում, քան մոտիկ լեռնային շրջանների օդը։ Այդ պատճառով էլ ամառվա ամիսներին Գեղամա լեռներից և մասամբ Արագածից ու Արյաի սարերի՝ կեսօրից հետո, փչում է լեռնահովտային քամին, հազեցած այգյան ծաղիկների անուշաբույր հոտով։ Այս լեռնահովտային քամին երևանցիները սովորաբար կոչել են «Լուսավորիչի» քամի, որ անտանելի տոբը մեղմացնելու հետ միասին փոշով է ծածկել կավակերտ քաղաքի թաղամասերը։

Մի փոքր զույները խտացնելով, բայց զեղարվեստական մեծ շնչով հալատուր Արովյանը հետևյալ կերպ է նկարագրում ամռանը բաղաբուն փոշու ամպեր առաջացնող այդ լեռնահովտային քամին.

«Որ քամին մեկ կողմից, բուքն ու բորյալը մյուս զեհից ինչպես կատաղած դահիճ՝ սրարձակ դամշով, մաքրախով, թոփով, մզրախով սարերի գլխերներիցը, ձորերի միջիցն՝ թո՛ղ, ա՛վազ, հո՛ղ, ազը, զիբիլ առաջն առած՝ փոսերիցը հանում, պատեպատ տալիս... ու մեկ կիտուկ հող, ավազ, շունչը բաշելիս, կամ աչքը բանալիս՝ երկու ձեռքով բերանը ու բաց բիթը չի խցկում, լցնում, շունչը կտրում, բիթը կլանում, փակում, աչքերը խավարացնում ու ականջիդ տակին թոփի գլուխը պես կամ սուր նեոխ նման՝ մզվազլով, զզզազլով՝ եղ զանում շուտով երեսիդ էնպես խիում, որ աչքերդ միևնա՞ կեծակին են տալիս»։

Բացառված չեն նաև այնպիսի դեպքերը, երբ ամռանը բաղաբուն օդը կատարյալ անդրու է լինում և երկինքը պատած չոր ամպերով։ Այդպիսի եղանակներին Երևանում սոթն այնքան է անսովորական, որ բաղաբուն անձնար է լինում բնելը։

1885—1946 թվականների ընթացքում Երևանում օդի առավելագույն ջերմությունը հասել է 40,3°-ի (1935 թ. օգոստոսի 2—

3-ին), իսկ 1965 թ. այն հասել է 41,3°-ի։ Վերջին ավելի քան 70 տարվա ընթացքում օդի նվազագույն ջերմությունը իջել է —27,8°-ի (1933 թ. դեկտեմբերի 31-ին)։ Օդի ջերմության այդպիսի կտրուկ փոփոխությունները տեղի են ունենում արևադարձային և արևոտ-կապան օդային զանգվածների ներխուժման հետևանքով, քնդ որում ստաշիոնը ներխուժում է ամռանը և պատճառ դառնում օդի ջերմության կտրուկ բարձրացմանը, իսկ երկրորդը՝ ձմռանը, պատճառ դառնալով օդի սառնեցմանը¹։

Չին ժամանակների համար մենք չունենք Երևանի օդի բարեխառնության տատանումների վերաբերյալ գիտականորեն ընդունելի տվյալներ։ Այդպիսիները չկին էլ կարող լինել, որովհետև օդելուսիքարանական կանոնավոր դիտումները հին պատմությունը չունեն։ Բայց և այնպես Երևան այցելած XVII—XVIII դարերի մասնագետհորների մեծ մասը նշել է նրա կլիմայի խստությունը, օդի բարեխառնության կտրուկ տատանումները, ձմռան երկարատև լինելը²։ Իսկ Ղ. Ալիշանն արգեն օդավիճով Երևանի բերրի սպաների հաջորդած ավյալներից և հետագայում արական գիմնադիպյի օգերևութարանական կայանի դիտումներից՝ տալիս է Երևանում օդի բարեխառնության և կլիմայական մյուս պայմանների փոփոխության ընդհանուր պատկերը³։

Օդի տարվա միջին ջերմաստիճանը Երևանում հետևյալ պատկերն է ներկայացնում⁴.

Ա մ թ ս ն ե ք												Օդի տարվա միջին ջերմաստիճանը
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-5,8	-3,5	3,8	11,5	17,1	21,6	25,4	25,5	20,5	14,1	6,4	-0,6	11,3

Պարզվա օրերի միջին թիվը Երևանում տարվա ընթացքում հասնում է 104,3-ի, մասախլապատ օրերին՝ 86,5-ի, ամպամած օրերի միջին թիվը՝ 79 օրվա, միջին տարեկան արևափայլը՝ 2602 ժամի, տարեկան տեղումների միջին քանակությունը՝ 317 մմ-ի⁵։

¹ Տե՛ս Ա. Գ. Ներսիսյան, Климатическое описание города Еревана, էջ 18—20։

² Տե՛ս «Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг.», Тифлис, 1902, էջ 243։

³ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, Վեներիկ, 1590, էջ 319։

⁴ Ա. Գ. Ներսիսյան, Климатическое описание города Еревана, էջ 57։

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 107—109, 112, 120—121։

¹ Ա. Գ. Ներսիսյան, Климатическое описание города Еревана, էջ 8։
² Խ. Արվիյան, Երկրի լիակատար ծնողմանու ութ հատորով հատոր III, Երևան, 1943, Վերը Հայաստանի, Հավելված, Ձևեր, էջ 192։

Երևանի համար օտար շին կարկուտը, ամպրոպը, գարնանային ու աշնանային ցրտահարությունները, Երևանում ձյունածածկը ստորաբար կայուն չէ, բոք հազվագեղև է լինում¹։

Ամռանը, շոգերի պատճառով բուն բաղաբիջ շատերը փոխադրվել են համեմատաբար հով աղբյուրներ, իսկ մեծամեծ բաղաբայիններն ու կալվածատերերը մի բանի ամին ամառանոց են գնացել մտասկա բարձրադիր գյուղերը և հատկապես Մաղիաձորը։

Այգիլիսի շոգերին շին կարողացել գիմանալ մանավանդ եվրոպացիները, որոնք ստանց բացառության ամռանը բարձրանում էին լեռնային հովասուն վայրերը²։ Անտանելի շոգ ու տոթի պատճառով հին Երևանում տարածված էին տեղի ու այլ հիվանդություններ, հին երևանցիները դառել էր և հյուժված, այտուղ սեղնողանին չէր տարբերվում «մեռածներինց», ինչպես ասում է ժողովրդական ասածը³։

Շին երևանը համարվել է շատ չրտառտ բաղաբ։ Քաղաքի արևմրոշյան կողմով շատը Հրազդանը և նրա ձախակողմյան վտակ Գետաբ իրենց ջրերով հացեցրել են կանաչ տարածությունների ծարավը։ Քաղաքն ուներ նաև ջրի այլ աղբյուրներ։ Բայց այդ բարի մեջ ամենից կարևորը Հրազդանն է (Չանգու)⁴, որը սկիզբ է առնում Անանա լճից և ձախ կողմից թափվում Արաքս։ Հրազդանը, Երևանի բնակչության ջրի կարիքները և բաղաբի հողերը ոտողելուց բացի, ջուր է աղել նաև իր ստորին հոսանքի վրա ընկած պատվակ գաղտերին։ Նա տեղական նշանակությամբ մի յուրահատուկ մայր ցկա է, որը նույնպես դարձել է մեր բանաստեղծների ու գրողների գովիքի արարիկան։ Հրազդան-Չանգուն ստանձնապես մեծ շնչով ու կրակված սիրով է գրվապաված Խ. Արտվյանի «Չանգու»-ի մեջ։

«Չանգի՜, Չանգի՜. գեղեցիկ կց իմ Չանգի։ Քո երկնանման երեստ տանելիս, թո տխուր ձեռք լսելիս, թո սուր ջուրը բերան առնելիս, թո ծողկազարդ ձորերի միջումն, թո զովաբար արեղիս նրադին, թո սպիտակ, լուսաթաթախ փրփրի տակին, թո պարկեշտ Մամ-

¹ Երևանի կլիմայական պայմանների մասին տե՛ս նաև՝ Եղվակ Շահագր. Շին երևանը, էջ 16—18, 55, Արամ Ազամյանց, Տեղագրութիւն (Շարիենագրութիւն) Երևանի, էջ 22—25։

² Տե՛ս Առ. Լալայց պատմություն, հատոր 1, Թիֆլիս, 1917, էջ 151։

³ Տե՛ս էյիթե Թեկլյու, Թուտակոն Լալայանան կամ Աղբյուրի ավազանը, Վաղարշապատ, 1890, էջ 33։

⁴ Շոգերը եմֆատում է, որ Հրազդանը Չանգու է կրելի բնի-գեղեցի անունով, որը իրը այս մասում պաշտպանում էր Գլինի արարական էմբրիոնյան սահմանը (տե՛ս Կ. Ո. Շոբեն, Исторический памятник Армянской области, էջ 260)։

բընու ափին, թո խնկահոտ ձաների տակին ... թո սիրուն աչքերի արդի արցուրը տեանելիս—բաս ինչ կըլըր, որ թո բախտավոր, վաղուց հեռացած, մեր գլխիցը պակասած—մեծագին, բաղազր, ... անհազթելի, անպարտելի իշխանաց, աշխարհակառույց թագավորաց մեծագլուր ..., տարաբախա ..., աղթատ, չբավոր՝ որդիքը ու թառուները՝ մեկ միտք ունեին, գլխերներին վայ 1 տային, իրանց սե որը լայց ըլեին՝ թե ո՛վ թեղ առաջ ուրախ ձայնիվ ... ողջուցն աղեց, թո համն առավ ..., աղբու բառարտով, երկնային բերանով, բերովբեական լեզվով գույաց. «Հրազդան դու ես իմ այտուհետև նազելի բնակարան»¹։

Նույն բանաստեղծության մի այլ հատվածում Հրազդանը համահավասար է համարում Արաբսին, այդ երկուսի ջրերը համեմատելով մոր կաթի հետ. «Չանգի՜, Երա՛սիս, Հրազդա՛ն, Արա՛զ. կաթնահամ ստիկք մօր իմոյ սիրելույ և զորովազութ ծնողի՝ մեծինն Լալայատանի Մ՛ր ձեք տիեղեբատան անտե՛ն, ո՛ր այն ոսկեղէն դարթ»²։

Երևանի մայր գետին նվիրված բանաստեղծությունը հետևյալ խոսքերով է սկսում Լալայատանի տեղագրության մեծագույն գիտակ Ղևոնդ Ալիշանը.

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ.
Ահա թողել զհողը օտարի
Թարկէ՛նս հասել եմ պանդխտիկ.
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրը հայրենիք
Ա՛յ ափունք, լի՞ր լայք լուխի՞ք³։

Լեռագայում նույնպես Հրազդան-Չանգուն մնացել է իրեն մեր բանաստեղծների ու գրողների ներշնչանքի առարկա։

Հրազդանն սկիզբ առնելով Անանա լճից՝ աչից ու ձախից բնզունում է մի շարք վտակներ ու աղբյուրներ և դառնում բավական հորդառատ մի գետ։ Գարնանը, ձնհալքի և անձրևների ժամանակ Հրազդանը հորդանում է, բայց սեղմված լինելով բազալալա խոր մորտո, բաղաբին առանձին վիսա չի տալիս։ Ամառվա ամրանելին նրա ջրի մեծագույն մասն օգտագործվել է ոռոգման համար և իդուր չէ՛, որ ժողովուրդը ստեղծել է հետևյալ ասածը. «Արազը (Արաքս)

¹ Խ. Արտվյան, Երկերի լրակատար ժողովածու, հ. 111, Երևան, 1948, էջ 190—197։

² Նույն տեղում, էջ 198։

³ Տե՛ս «Աղբյուր», ամսագիր, Թիֆլիս, 1902 թ., X 2, էջ 125։

օրական մի գոգ սովի է բերում, իսկ Զանգին նույնչափ արծաթ¹։
Հրազդանի ջրերով են գործի դրվել նրա փեթիկն զանվող տանակաչ
զբաղանիները։ Հրազդանի ջուրը օգտագործվել է նաև խմելու հա-
մար։ Եսթիկնում Հրազդանում զբաղվել են ձկնորսությամբ։ Նրա
ջրերում հաղողի վայր բազմացել են սևա, մուգնա (բիթավոր),
կապույտ և կարմրախառն ձկնատեսակներ², որոնցից իր համեղ
մտով առանձնապես զովված է կարմրախառնը։

Երևանի ջրի մյուս կարևոր աղբյուրը, ինչպես ասացինք, Գե-
տանն է, որն սկիզբ է առնում Հաղխ լեռան ստորտափ Քառասուն
աղբյուրներից (այդ պատճառով էլ զեռն աղբբեջաններն կոչվել է
կրիթ-բուլաղ) և զեպի հարավ-արևմուտք հոսելով՝ անցնում է Ավա-
նի ձորով ու Երևանի միջով և թափվում Հրազդանի մեջ։ Ավելի
ձիշու, Գետաղ միանում է նորագավթի առվին, որը հանված է
Հրազդանից։ Գետաղը փորքիլի դեպակ է, մանավանդ այժմ, երբ
նրա ակունքի հորգալուսի աղբյուրների ջուրն ջրմուղով ավերջու-
թյամբ բերված է Երևան։ Սակայն նա անշուստ ու կատաղի է դառ-
նում տեղատարափ անձրևների ժամանակ։ Այդ ժամանակ Գետաղը
հակառակն վնասներ է հասցնում բազարեն Երևանի դրաված շրբ-
չանում ամենուրեք հանգիստում են Գետաղի բերած լիցքերը։ Ինչ-
պես հազորդում են աղբյուրները, Երևանի վերջին խաներից մեկը
պարզապես միայն Գետաղի կատարած ավերածությունները նկատի
ունենալով փոխոսացել է, որ Երևանը նրա վրա է գտնվում։ Գետա-
ռի սելավների սուսը աննելու համար որոշ աշխատանքներ են կա-
տարվել զեռն մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստա-
տումը³, բայց զրանք ոչնչով չէին փոխել դրությունը։ Գետաղը ճրբ-
վանը համար անվտանգ են գալուսիլ միայն մեր օրերում, նրա հու-
նը բազալտապատելու և ակունքի շրջանում համապատասխան ար-
զեղականիչ կառույցներ կատարելու շնորհիվ։ Գետաղի ջուրն ամ-
բողջապես պատվում էր բաղաբում։ Նրանից անց էին կացված
ոտոգիբ բազմաթիվ առուներ, որոնք բաղաբի արեկայան կեսում կաղ-
մում էին բավական խիտ ցանց։

¹ «Աղբյուր ամսագիր, 1902, № 2, էջ 127։ Այդ նույն ամսից մի փոքր այլ տար-
բերակով է հիշում Մ. Մեքալանցը։ Նա գրում է. «...ստան առում է. «Երևանայ
Զանգուն բերում էր տարեկան մի փութ սովի, կմիաքմայ զեռը (Քարաղը)
բերում էր մի փութ արծաթի. որ է տարեկան արտուկի հարյուր (Մեքալանցը արքայա-
կազմա Մեքալանցը Կաթիլեանցի, Տեղագիր Գեղարքունի ձովագար զատուկ որ
այժմ նոր-Բալախան, Կողարքազատ, 1895, էջ 18)։

² Տե՛ս «Աղբյուր, ամսագիր, 1902 թ., № 2, էջ 126։

³ Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊՍ, ք. 117, գ. 657։

Քաղաքի ջրի մյուս աղբյուրները կաղմում էին ջրհորները¹ և
ընկան աղբյուրները, որոնք գտնվում էին տարբեր տեղերում։ Ա-
ռանձնապես հայտնի էին այսպես կոչված «Երկաթաղբյուր»-ները
(այժմյան 26 կոմիսարների անվան զբոսայգու մոտակայքում) և
Նուրում կոչված (խորամուկաղ) աղբյուրը Հրազդանի ձորում, Քա-
նաբևեռի ուղղությամբ։ Սակայն թե՛ առաջինների և թե՛ երկրորդի
ջրեր խմելու համար պիտանի չէին. զրանք իրենց մեջ պարունա-
կում են օրգանական մնացորդներ և կրաքար, որոնք խիստ վնա-
սակար են առողջության համար։ Երևանի հարավային կողմում
գտնվում է Քոխմախ կոչված արհեստական լիճը (Քոխմախ-գյուղը,
այժմ՝ Կոմսոմոլի լիճ), որի կառուցումը ավանդաբար կապել են
Երևանի խաներից մեկի՝ Քոխմախ-խանի անվան հետ։ Սակայն ա-
մենայն հավանականությամբ այս լիճը կառուցել են ուրարտացիները՝
զեռն VIII դարում (մ. թ. ա.), իսկ հետագայում մի քանի անգամ
ենթարկվել է վերակառուցման։ Հավանական կարելի է համարել,
որ այն վերակառուցվել է նաև նշված Քոխմախ-խանի օրոք։ Այս
լճի ջրերը բացառապես օգտագործվում էին շրջակայքի ցանքանն
ու այգիները ոտոգելու համար։ Լիճը հարաբար լցվում էր զրանա-
նը՝ Մամոնի առվի ջրերով, իսկ ամռան ընթացքում աստիճանաբար
գատարկվում էր, համախ փերածվելով սովորական ձաճիճի։

Քաղաքի բնակեցված մասի հարավային կողմում, Գամբրու-
լաղ թաղամասի և բերդի միջև նույն թաղամասի աղբյուրների ա-
վելցույճ ջրերի ու բաղնիքների կեղտոտ ջրերի կուտակումից առա-
ջացել էր մի ընդարձակ ձահիճ, որն ապականություն էր տարա-
ծում բաղաբում։ Այդ ձահիճը շրջապցվեց միայն XIX դարի վերջերին²
և XX դարի սկզբներին։ Երևանը հարաբար լցվում էր ջրերով։
Քաղաքի մի քանի կետերում տարվա որոշ ամիսների զրանք նույ-
նիսկ դուրս են գալիս զեռնի նրբու։ Այժմ՝ հողատման անցքերով
ընդհանրապես ջրերի մի շարք էլիքեր են բացված բաղաբի ցածրադիր
մասերում և այդ ջրերը օգտագործվում են տեխնիկական ու կոմու-
նալ նպատակներով։

Հին Երևանը բաղաբային զբաղմունքների զուգընթաց ունե-
րան զարգացած դյուղատնտեսություն։ Նա այնպիսի արտադրան-
քարտուսական խոշոր բնակավայր էր և նրա համար կարևոր նշա-
նակություն ունեն հողա-բուսական պայմանները։

¹ Տե՛ս Ազատ Ազամանց, Տեղագրություն (հայրենագիտություն) Երևանի,
էջ 17—18։

² Տե՛ս նույն տեղը, էջ 18—20։

Քաղաքի գրաված տարածություն բնական հողերը հիմնականում ոչ արգավանդ կամահողեր և ավազահողեր են¹։ Զգալի տարածություններ են զրավում դրոներն ու այգառածները։ Դրոներում հողի շերտը բարակ է, բարբարոտ և կրով հարուստ։ Սակայն հնադարյան ժամանակներից մշտական բնակավայր դարձած Երևանի հողը, անընդմեջ մշակման ենթարկվելով, փոխել է իր կառուցվածքը, հարբստացել հումուսով և դարձել բերրի։ Երևանում մշակովի հողը կազմում է հող ու համատարած շերտ։ Արճեստական ոռոգման դեպքում այն բազմաթիվ մշակույթների գծով տալիս է մեծ բերք, իսկ որոշ մշակույթների գծով տարվա ընթացքում կարելի է ստանալ 2—3 բերք, շնորհիվ տաք ու արևոտ օրերի առատության։

Երևանի ու նրա շրջակայքի հողերի արգավանդության մասին խոսել են և՛ եվրոպական ճանապարհորդները, և՛ մեր ազգային հեղինակները։ Այդ մասին, օրինակ՝ Ժան Շարդենը գրում է. «Ենթը երկիրը ընդհանուր առմամբ լավ է և շատ արգավանդ։ Հողը տալիս է գերազանց բերք»², իսկ բազմաթիվ աղբյուրների կատարած հեշտատվությունների հիման վրա Ղ. Ալիշանը հետևյալն է ասում. «Որպես անհրկբայ զուշանի յասացելույս՝ ամենայն այցելուք յիշատակագիրքը գովեն զպտղաբերութիւն Երևանայ, հիքք և նորք»³։

Քաղաքի շրջագծի մեջ մտնող այն տարածությունները, որոնք չեն մշակվել, ունեն աղքատ բուսականություն, իսկ որոշ բարբարոտ ու այգառածոտ հատվածներ գրեթե խոպտա զուրկ են եղել բուսականությունից։ Իր գտնված բուսական գոտուն համապատասխան երևան քաղաքի շրջակայք տարածությունների հիմնական բուսատեսակները կիսաանապատային բույսերն են, հատկապես օշինգրբն ու գանազան փշաբույսերը, որոնք բավական լավ հարմարված են շոր կլիմայական ու աղքատ հողային պայմաններին՝ ունենալով մյուս ու փոքր տերևներ, պարզացած ու գծանի խորքը միախառնող արժատաստիստեմ և կարճատե վեգետացիոն շրջան, որը լինում է գարնանը, միջնոգրտային տեղումների համեմատաբար առատ ամիսներին։ Տեղ-տեղ կղզի են ճահճային բուսականություն, որն այժմը մահճենների վերաբնման շնորհիվ նույնպես վերացված է։

Սակայն Երևանի գրաված շրջանի համար բնորոշը ոչ թե անմշակ փոքր տարածությունների կիսաանապատային բույսերն էին, այլ մշակույթները և դրանց ուղեկցող գանազան բուսատեսակները։

Հին Երևանի մասին այս կամ այն առիթով խոսող հեղինակները սովորաբար նշել են, որ նրա ամբողջ տարածությունը 99 տոկոսը գրավում են այգիները, բանջարանոցները և ցանքատարածությունները։ Նրա այգիներում ու պարտեզներում հաջողությամբ աճում են տասնյակների հասնող մրգատու ծառեր ու թփեր՝ ծիրանի, դեղձենի, տանձենի, խնձորենի, բնկուղենի, թթենի, սալորենի, բալնենի, կեռասենի, նռենի, թզենի, հաղարճի և այլն։ Ավելի բան 1200 մի, կեռասենի, նռենի, թզենի, հաղարճի և այլնի տասնյակ տեսակներ⁴։ Այդ խաղողատեսակները նուրբ են և ցուրի նկատմամբ դաշտում։ Ուտի Երևանում խաղողի այգիներն ամենուրեք ձմռանը ծածկել են հողի ու ձմի բարակ շերտով։ Խաղողի մշակման այս եղանակը զույլն էր շատ հինից։ Ծարգենը, նշելով Երևանի կլիմայական պայմաններին խիստ առանձնաձևերը, գրում է, որ այդ պատճառով կրկնվող խիստ առանձնաձևերները, գրում է, որ այդ պատճառով դուրացիները ձմեռը վրա հասնելուն պես խաղողի վաղերը ծածկում են հողով և գրանք բաց են անում միայն գարնանը»⁵։

Քաղաքում լայն տարածում ունեն նաև ոչ պտղատու դեկորատիվ ծառեր՝ բարդի, ուռենի, լինարի, սկալցի, հացենի և այլն⁶։ Ուռենիները սնկված էին մի քանի այնպիսի փոռոցների երկայնքով, որոնցով ձգվում էին ոռոգման փոքրիկ առուները։ Այդ դեկորատիվ ծառերի մեջ հին Երևանում առանձնապես նշելի է նախրյան սլացիկ բարգին, որն այնքան բնորոշ է Արարատյան դաշտի համար նաև մեր օրերում։ Այստեղ բարգիները սովորաբար խիտ շարքերով տնկել են շրանցքների ուղղությամբ՝ ջրի գոլորշիացումը թուլացնելու համար։ Այժմ ամառվա անտանելի շոգը մեղմելու համար նույն բարգիներից շերտեր են ստեղծվում (հատկապես Հոկտեմբերյանի շրջանում)՝ նաև ճանապարհների երկայնքով։

Այգիների աղատ տարածություններում ու բանջարանոցներում մշակում էին բանջարեղեն, բանջարա-բուստանային կուլտուրաներ, գանազան կանաչիներ, որոնցով այնքան հայտնի է հին ու նոր Երևանը։ Նրա բանջարանոցներում և բուստաններում մշակում էին վանը, սխտոր, գազար, բողկ, պղպեղ, բարգիջան, բակլա, վարունգ, սոխ, սխտոր, գազար, բողկ, պղպեղ, բարգիջան, բակլա, վարունգ, սոխ, ձմերուկ, դդում, ուհնան, թարխուն, մաղադանուս և այլն։ Ա-

¹ Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», Тифлис, 1866, стр. III, էջ 60. Այստեղ Ազամանց, Տեղագրութիւն (հայրենագրութիւն) Երևանի, էջ 29.

² «Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг.», էջ 243.

³ Ղ. Ալիշան, Այբարատ, էջ 318.

⁴ Ք. Ն. Շախբաև, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 172—173.

⁵ «Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг.», էջ 243.

⁶ Ազամ Ազամանց, Տեղագրութիւն (հայրենագրութիւն) Երևանի, էջ 26.

նում էին վայրի և մշակովի անուշաբույր զանազան ծաղիկներ՝ մասուշակ, շուշան, նարգիզ, վարդ, սուսամբար, Կոնուֆար:

Հին Երևանում այգիների և բանջարանոցների համեմատաբար ցանքերը քիչ տարածություն են զբաղել: Դրանց զբաղված տարածությունը, եթե հնաշվեթ XIX դարի 30-ական թվականներին Երևանի միացրած նորը դուրսի հանդամասերը, չէին հասնում նույնիսկ 400 հեկտարի: Յանում էին՝ ցորեն, գարի, առվույտ և մասամբ բամբակ ու բրինձ: Այնպես որ Երևանը այդեզործական քաղաք էր, թաղված մրգատու և ոչ մրգատու ծառերի կանաչ ծովի մեջ:

Փորրիկ կղզիներ կազմող բնակիչի թաղամասերի շրջակայքում փոքրած այգիներում, բանջարանոցներում և անպտուղ տարածություններում բնակվում էին զանազան վայրի կենդանիներ՝ սողուններ (օձ, լորտու, սողես, կարիճ, մորմ), երկկենցաղներ (գորտ, կրիա), ողնի, կրծողներ (մկներ, նայառասակ), սաղո, թլուզներ (աղավնի, մեճողու, կաշաղակ, ագռավ, չլոթ թլուռներինց՝ սոխակ, ծիծեռնակ, արագիլ, դեղձանիկ), իսկ Հրազդանում, ինչպես ասվեց, աճում ու բազմանում էին մի քանի տեսակ ձկներ:

Վայրի կենդանիներով չէր սահմանափակվում Երևանի միկրոկենդանական աշխարհը: Այստեղ պահում էին շերամի որդ, զբաղվում մեղվաբուծությամբ: Բայց տնտեսության այդ ճյուղերը երկրորդական-երրորդական նշանակություն ունեին: Դրանց համեմատությամբ ավելի կարևոր էր իոջող ու մանր եղջերավոր անասնապահությունը. պահում էին կովեր ու եղջեր, գոմեշներ, ուլխարներ ու այծեր, էշ, ձի, ջրբի, ուղտ, անային կենդանիներ՝, թլուռներ (հավ, հեղիահավ, բադ, սագ, բետալացրած աղավնի, կաթավ, դեղձանիկ): Անասնապահության այդ ճյուղերը իրենց նախկին նշանակությունը կորցրեցին մեր գարի սկզբներին, բայց հետագա տասնամյակների ընթացքում Երևանում անասնապահության որոշ ճյուղեր՝ հատկապես կովաբուծությունը շարունակում էր գոյություն ունենալ և որոշ դեր խաղալ քաղաքի տնտեսական կյանքում:

Երևանում և նրա շրջակայքում եղած բնական հումքերի մեջ առաջին տեղը զբաղում են շինարարական քարերը՝ հատկապես տուֆը և բազալտը: Ճարրեր վիճակում մեղ հասած հին ճարտարապետական հուշարձանները կամ ամբողջությամբ և կամ իրենց զգալի մասով շինված են տեղական տուֆերով ու բազալտներով:

Դրանցով են շարված ուրարտական ժամանակաշրջանի էրբրունի և Քեյշեբախի բերդաքաղաքների կառույցների որոշ մասերը, քաղաքի միջին դարերի եկեղեցիները, կամուրջները, նոր ժամանակների շենքերի մեծ մասը: Տուֆը, որը հարիխածին ապար է, որպես շինանյութ օժտված է մի շարք լավագույն հատկություններով: Թեթև է, փափուկ և հեշտ մշակվող, համեմատաբար վատ հաղորդիչ է և այդ պատճառով ձմանը տուֆակերտ շենքերում սովորաբար տար է լինում, իսկ ամռանը՝ հով: Տուֆը, բացի բազմազան լինելուց, հանդես է գալիս միևնույն գույնի տարբեր երանգներով և հաշվուց, հանդես է գալիս գեղեցիկ նախշեր: Նա քիչ է ենթակա հողմահարման, նախ ունի գեղեցիկ նախշեր: Նա քիչ է ենթակա հողմահարման, չոր կլիմայական պայմաններում ունի բազմադարյան կյանք, հրաշալի կապակցվում է կրի շաղախով: Այս բոլոր տուֆը գարձնում են առաջնակարգ այնպիսի շինանյութ, որը շինարար մարդու ուշադրությունը գրավել է տակավին նրա պատմության վաղագույն շրջանում:

Ինձեներ կիսոյանը Երևանի շրջակայքում ուսումնասիրել է տուֆի հինգ հիմնական վայրեր: Դրանք են՝ Կեղաբար, Ավանը, Դալման և Ջրվեժի հին ու նոր բարձաները: Այդ բոլոր բարձաներում տարածված են կարմիր և սև տուֆերը: Տեղ-տեղ հանդիպում է նաև գորշ գույնի տուֆը, որը ավելի դիմացկուն և ամուր է: Համեմատաբար հոծ զանգվածային բնույթ ունեն Ավանի և Ջրվեժի տուֆի քարահանքերը: Բայց դրանցով չեն սահմանափակվում Երևանի շրջակայքում տուֆի տարածման վայրերը: Տուֆ կա նաև բուն քաղաքի զանազան մասերում: Հաճախ տուֆի քարեր երկրի մակերեսին շատ մոտ են՝ ծածկված այլ ապարների ու հողմահարված նյութերի բարակ շերտով, իսկ որոշ դեպքերում ուղղակի դուրս են գալիս դեմերի կրես: Բուն քաղաքի տուֆը հիմնականում կղզիների կարմիր գույն ունի՝ սև կամ գորշ գույնի երանգով:

Հին և միջին դարերի Երևանում պակաս կիրառություն չի ունեցել նաև բազալտը: Բերդերի պարիսպների ու նշանավոր շենքերի հիմքերը բոլոր դեպքերում շարում էին բազալտով: Բազալտն այստեղ իբրև շինանյութ օգտագործել են քարե-պղնձի դարի ժամանակաշրջանից սկսած: Ծնողավիթի հնագույն կառույցների մնացորդներում մշակված բազալտ շատ է հայտնաբերվել: Որպես շինանյութ

1 Ինձ. կիսայան, Երևանի շրջակայքի տուֆերը և բազալտները որպես շինանյութ (սեյսմիկական մասսաներին, երկուշարամբներ, Երևան, 1932 թ., № 5-6 (11-12), էջ 15-16):
2 Տե՛ս «Տեյսմիկական մասսաներին» (լրագիր), 1932, № 5-6, էջ 15-16:
3 Նույն տեղում:

1 Ք. Ե. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), էջ 179-183, 512-514, նույնը, Երևանի պատմությունը (1879-1917 թթ.), էջ 179-180:

ու հեղեղները պարբերաբար կրկնվել են և՛ դրանց ատառ, և՛ հետո Բաղասիին առանձնապես մեծ վնաս հասցրեց մեր օրերում (1946 թ. հունիսին) եղած աճավոր սելավը Այդ ժամանակ կատարած Գե-տառը զուրա զավով իր հունից հակաժամանակ ավերածություններ կատարեց նախանշյան, Արտվյան փողոցներում և բազարի հարա-վային կետում, խլելով նաև մարդկային զոհեր:

Երևանը գտնվում է երկրաշարժային գոտում, որտեղ երկրի ներքին ուժերը զենու ընդ գաղարկի գործելուց: Հայտնի է, որ Աբա-բատյան գաշտում և նրան հարող շրջաններում պատմության ըն-թացքում պարբերաբար կրկնվել են տարբեր ուժի բազմաթիվ երկ-րաշարժեր, որոնց հետևանքով կործանվել կամ վնասվել են բա-զարներ, գյուղեր, առանձին ճարտարապետական կառույցներ, կա-մուրջներ և այլն: IV դարում Մասիսի շրջանում տեղի ունեցած երկ-րաշարժը, IX դ. Գվինի երկու աղետաբեր երկրաշարժերը, 1319 թ. Ա-նիի երկրաշարժը, և յուս համեմատաբար ուժեղ երկրաշար-ժերն արտահայտվել են նաև նրևանում: Երևանում ուժեղ ջրնե-ցումներ են զգացվել նաև 1840 թ. հունիսի 20-ին Մասիսների շեր-ջանում տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժի ժամանակ, որի հետևանքով ամբողջապես ցեխի հակալակաց գանգվածի տակ թաղ-վեց պատմական Ակոռի գյուղն իր 1000 բնակիչներով: Այդ երկ-րաշարժը զգալի վնասներ է հասցրել նաև Երևանի տներին ու այլ կառույցներին: Մեր օրերում նույնպես Երևանում պարբերաբար տեղի են ունենում երկրաշարժեր: 1937 թ. հունվարի 6-ին Երևանում տեղի ունեցավ բավականին ուժեղ երկրաշարժ, որը, սակայն, վնաս չպատճառեց: Քաղաքում մի քանի անգամ ցնցումներ եղան 1965—66 թթ.: Ավելին, զբնթն ամեն տարի արձանագրվում են մի քանի զգալի և բազմաթիվ թույլ երկրաշարժեր, որոնք կարող են հետաբորբել երկրաբանին կամ աշխարհագրագետին, բայց հատ-կապես՝ երկրաշարժերի ժամանակագրությամբ զբաղվողներին: Միայն պետք է նշել, որ հավանական վնասներից ու ավերումներից խուսափելու համար մեր ժամանակներում ձեռնարկում են համա-պատասխան միջոցառումներ՝ կառուցվածքները հակասեյսմիկ դարձնելու համար:

Սակայն առանձին ուշագրություն պետք է արժանանա ՄXII գ. տեղի ունեցած Երևանի երկրաշարժը, որը փաստորեն հողին է հա-վասարեցրել ամբողջ բաղաբը: 1679 թ. հունիսի 4-ին (ցերեկը) տե-ղի ունեցած այդ երկրաշարժն ու նրա հետևանքները հիշատակված ու բավական մանրամասնությամբ նկարագրված են սկանստոսե

գրիչների ու պատմագիրների կողմից: Դրանց հաղորդած տեղեկու-թյունների հիման վրա Երևանի երկրաշարժը պատմական հարցերի հետ միասին ուշագրության առարկա է դարձել մի շարք սկանստոսե շայագեանների համար (Մ. Մամչյան, Հ. Շահխաթունյան, Ը. Տաշ-յան, Մ. Սմբատյանց, Լեո, Ե. Շահազիզ, Ն. Ակինյան), որոնք հրա-պարակել են սկզբնաղբյուրների տեքստերը և դրանք ծանոթագրել կամ վկայակոչել զանազան աուիթներով:

Արդ տեսնենք ինչ քնույթ ու ուժ ունի այդ երկրաշարժը և ինչ-պիսի վնասներ է պատճառել մեր քաղաքին:

Երկրաշարժի մասին նշված արդյունքներում հաղորդված տեղե-կությունները համապատասխանում են իրար, դրանցում իրարա-մեք ժ մտքեր ու տվյալներ զրեթե չկան, բայց որոշ զեպերում մե-կը լրացնում է մյուսին: Իմի բերելով դրանց բոլոր հիշատակու-թյունները կարելի է հանգել հետևյալին. երկրաշարժը տեղի է ունե-ցել 1679 թվականի հունիսի 4-ին: Տատանումները փոքր եղզ-միջուկներով շարունակվել են 9 օր, այս պետինը հանդարտ-վել է. բայց կարճ ժամանակով: Քույլ տատանումները նորից են սկսվել և ընթիվումներով տևել մինչև հոկտեմբեր և նույ-նիսկ մինչև տարեվերջ: Վերջին ուժեղ ցնցումը տեղի է ունեցել սեպ-տեմբերի 8-ին: Ընդ որում սկզբնաղբյուրների մեծ մասը երեք ուժեղ տատանումներ են նշում, որոնցից առաջինը տեղի է ունեցել հունի-սի 4-ին, չորեքշաբթի օրը, երկրորդը՝ դրանից 8 օր անց, հինգշաբ-թի, իսկ վերջինը, ինչպես ասվեց, տեղի է ունեցել սեպտեմբերի 8-ին: Նկարագրություններից դժվար է կռահել, որ երկաշարժի ուժը հասել է 8—9 բալի և նրա վիզիկետառնը գտնվում էր կամ Երե-վանում և նրա մերձակալքում, կամ Գանդիի կողմերում: Այդ հե-

¹ Տե՛ս Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մասնեկագրաս, Առաջին Ձ 34, էջ 354ա—355բ (հմտ. Բանասեր, ամսաթիթթ, Պարիս, 1902, հատ. Գ, Ձ 5, էջ 131—132), Մեսրոպ Մաղիարոսի օրիթի, Ձեռագրաց ցուցակ հիշատակու-թյուններով հանգերի, Ժամգիր, Թղթագանակ Ձ 213, էջ 236, Հակավր Տղևան, Ձեռագր. հայերի ձեռագրաց մատենադարանի Մխիթարանց ի վինեոս, Ձեռագր. հայերի ձեռագրաց, 1888, սեպտեմբեր, էջ 1895, էջ 363, Արարատ, ամսագիր, Վաղարշապատ, 1888, սեպտեմբեր, էջ 528—529, ԵՂեղեղս ամսօրնայ, ամսագիր, Վինեոս, 1934, Ձ 5—7, էջ 336—337, Զախրեայ Մարկոսայի Փատմագրիկներ, հատ. II, Վաղարշապատ, 1870, էջ 104—105, Զախրեայ Ազուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, էջ 143—144, և այլն: Վ. Ա. Նալբանդյան, Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., Երևան, հ. I, 1951, էջ 395 և 401, հ. II, 1956, էջ 272 և 279—280:

² Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մասնեկագրաս, Առաջին Ձ 34, էջ 354ա—355բ, Բանասեր, 1902, հատ. Գ, Ձ 5, էջ 129—130, Արարատ ամսագիր, 1888, սեպտեմբեր, էջ 528—529, Զախրեայ Մարկոսայի Փատմագրիկներ, հ. II, էջ 104—105, Զախրեայ Ազուլեցու Օրագրությունը, էջ 143—144:

տնօրէցներ կարելի է անել կենեով հիշատակագիրներն ու պատմիչներն պարզ նկարագրութիւններին, ըստ որոնց ամենամեծ ավելորդութիւնները կատարվել են Գառնիի ձորում և Երևանում ու նրա շրջակայքում¹:

Երկաշարժը ընդգրկել է ընդարձակ տերիտորիա՝ սկսած Գեղարդից մինչև Աշտարակի շրջանը ներառելով և Մասիսից մինչև մաղկաձորի մտերբը: Ակնհատու պատմագիր Ջաքարիա Մարկավազը ողորակով նշում է, որ քանզվեցին ու ավերվեցին Աղջոց-վանքը, Այրիվանքը, Հափուց-Յաթի վանքը, Տրդատակերտը (Գառնիի հեթանոսական տաճարը), Խորվիրայի վանքը, Զրվեթի եկեղեցին, Ջազավանքը, Երևանի երեք եկեղեցիները, նորազավթի, նորագեղի, Ջորագեղի, Նորթի, Գամրեղի եկեղեցիները, Երևանի բերդը, մզկիթներն ու մինարեները, հիմնահասակ ամրացվեց հայրենի Քանաքեռ գյուղը, փլվածքներ եղան Կարբի գյուղաքաղաքում, Հովհաննասարներում² և այլուր: Ըսկ Գրիգոր Երևանցի զորիչը 1689 թ. նորագավթում և Վաղարշապատում ընդօրինակած Հայամալուրքի հիշատակարանում գրում է, որ «ի յաւազ զլեռնոս Մասիսէ մինչև ի բլուրն Եամիրամայ իսպառ քակեաց և մեծ աւերումն եղև, բայց ի դուրս նամթողիկեաց հանուրց եկեղեցեաց յուսուրջաշէն բարձրաբերէթն էջմիածին միայն մնաց՝ հանդերձ Գայանաւ և Հոփսուսէլէն ի պարծանս ազդիս մերոյս»³: Նույն ականատես գրիչն այնուհետև իր հիշատակարանում գրում է, որ երկաշարժը ահալոր ավերածութիւններ է կատարել հատկապես Այրիվանքի (Գեղարդի) ձորում, որի երկու գետովիչ շնչերից, ըստ նրա, հակայական բանակութեամբ բարեր զլորվելով կուտակվել են մեծ տարածութիւնների վրա, կտրել ճանապարհները և ամեն ինչ քարատածկ արել: Եժակ զձորակն Այրէ վանեից առակն եղև արևումն և քակտումն, վասն զի է ամենայն շինուածք ի մէջ խոր ձորի և շուրջ բուրբուսն վէճք ահագին, և յորժամ շարժեաց շուրջանակի թաւալեցան ամենայն դիմաց՝ և լցան վանքն ամենայն, մինչ զի ոչ երկիւր նշարարներ շինութեան, բայց միայն կուտոցս բարի երեւի, որք տեսողացն զարհուրեալ զոգային, ըսա՛հ և ճանապարհք ամենայն խափանեցան...»⁴—գրում է նա⁵:

Մեղ հասած հիշատակարաններում ու պատմագրական երկերում այնուամենայնիվ երկաշարժի պատճառած զոհերի թիւը հա-

¹ Տե՛ս Ջաքարիայ Մարկավազի Պատմագրութիւն, հ. II, էջ 104—105:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 104:

³ «Արարատ» ամսագիր, 1888, սեպտեմբեր, էջ 529:

⁴ Նույն տեղում:

զորդում է միայն Ջաքարիա Ազուլեցիի՝ և XVIII դարի մի անանուն ժամանակագիր: Բայց դրանք բոլորը վիճարմ են, որ զոհերը հսկայական թիւ են կազմել: Զոհերի ստույգ թիւն իմանալու համար դրանց մէջ առանձնապես անհանգստացել է Ջաքարիա Մարկավազ Քանաքեղցին: Բայց նրան հաջողվել է միայն իմանալ հարյուրի Քանաքեռ գյուղի ավայններն «Հր թէպէտ յամենայն տեղիս ոչ կարացի իմանալ զմեռեալսն,—գրում է նա,—այլ ի հայրենի գիւղն իմ Քանաքեռ թուեցին զմեռեղեան ՌՄԻԸ (1228), ոչ մնաց շուն, ոչ կատու և ոչ հաւ»⁶: Այնուհետև նա ավելացնում է, որ յնայած երկրաշարժը շարունակվեց մինչև հոկտեմբեր, բայց զոհեր եղան միայն առաջին շարժի ժամանակ և կենդանի մնացածները բնակվում էին վրանի տակ՝ այգիներում, բանջարանոցներում և անմշակ մնացած տեղերում⁷:

Մեղ հայտնի բոլոր հեղինակներն մեջ միայն Մերայել Չամչյանն է, որ հավանաբար վերը նշված XVIII դ. անանուն ժամանակագրի հիշատակութեան հիման վրա նշում է, թե այդ երկրաշարժից իբր Երևանում մահացել են 8000 մարդ. «եղև ի սահմանս Երևանայ շարժ ի թուին ոճիր. և մեռան ի քղբի անդ ութն հազար մարդիկ. և կործանեցան եկեղեցեաց ամենացն Հաւուց թառայ և Գեղարդայ և Գեուսարգայի. և ի Գառնի փլաւ ամրակառոյց հովանոցն շինեալ Տրդատայ արքայի, և խախտեցան բոլմ ասպարանք և տաճարք՝ որք շինել էին ի վաղ ժմէցը: Չայստիկ հարեանցի լիշատակեալ զարձցուր ի կարգ պատմութեանս»⁸—գրում է նա:

Իսկ Ազուլեցու հիշատակութեան համաձայն ամբողջ երկրում (այսինքն՝ Երևանի խառնութիւնում) 1679 թվականի երկրաշարժից զոհվել է 7600 մարդ: Ազուլեցին իր օրագրութեան մեջ գրում է, «Այս երկրումս էՌՁԾ (7600) ցան մեռաւ»⁹: Պետք է ենթադրել, որ դրա մի մասը բաժին էր ընկնում Երևանից դուրս գտնվող ավերված գյուղերին և վանքերին:

Կարծում ենք, որ Ազուլեցու աված տեղեկութիւնները ավելի արժանահավատ են, քան անանուն ժամանակագրի վկայութիւնը, մանավանդ, եթե նկատել օրագրութեանը նուս այն, որ վերջինս սխալ է

¹ Ջաքարիա Ազուլեցու Օրագրութիւնը, էջ 143, Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հ. I, էջ 327:

² Ջաքարիայ Մարկավազի Պատմագրութիւն, հ. II, էջ 105:

³ Նույն տեղում:

⁴ Միխայել Չամչյան, Պատմութիւն Հայք, հ. 9, Վենետիկ, 1786, էջ 627—628, Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հ. I, էջ 227:

⁵ Ջաքարիա Ազուլեցու Օրագրութեանը, էջ 143:

հաղորդում և երկրաշարժի տարևթիվը¹։ Պետք է նկատի ունենալ և այն, որ երկրաշարժը տեղի էր ունեցել հունիսին—դաշտային աշխատանքների ետև պահին, ցերեկը, երբ բնակչության մեծագույն մասը տներին գոյք էր գտնվում։ Աղբյուրի պայմաններում հազիվ թե երևանի զոհերի թիվը հասներ 8000-ի, այսինքն՝ բնակչության մոտավորապես 40—50 %-ին։

Մեր վկայակոչած բոլոր հիշատակությունների և պատմագրական երկերի մեջ բավական մանրամասնությամբ, խորին կտիծով և զույնների որոշակի խտացմամբ է նկարագրված 1679 թվականին երևանում ու նրա շրջակայքում տեղի ունեցած այդ աղետալի երկրաշարժը։ Նրանք պատմում են, որ Արարատյան աշխարհը նույնպես էր որպես նախը ալեկոծության ժամանակ ծոլում, որ բազմաթիվ աղբյուրներ ցամաքեցին և բացվեցին նոր աղբյուրներ, որ կտրվեցին ճանապարհները և խախտվեցին առուները, տները, բերրը, շրջազանի կամուրջները, եկեղեցիներն ու մզկիթները ավերեցին, շահերին առ զոչ է թիւս, օրեր շարունակ պղծում էին զոչամեծերի դիակները հանելու համար և այլն, և այլն։ «Իսկ ի թուականի մերում Ռե՛ՔԸ յամենանն յունիսի ... յանկարծակի զղրղեալ շարժեցաւ յերկիրս Արարատեան,—գրում է հիշատակագիրը,— և այնքան սաստկագոյն, մինչ զի թուր օրպէս թէ նա ի վրայ ծոլու, ի սաստիկ հողմոյ ալեկոծելոյ։ Եւ ի սաստկութենէ շարժին... բուլա քաղաքն երեան, հանդերձ բերդով և պարսպաւ։ Կործանեցան տունք և սպարաքսք փեղեցկաշէնք։ Քակեցան եկեղեցիք և վանորայք։ Ճամբեցան աղբւրք։ Բակեցան եկիս ելին շուր սակաւ։ Պատեցան վէճք և լերինք, և ի պատումանէ վիմացն՝ բոց ծիրանացեալ էլանէր ... և Քարծրացաւ մատախուղն և ծածկեաց զերկիր, ի գաւառէն Գանատոյ մինչև ցլեառն Արագած, հանդերձ լերամբք և դաշտօք։ մինչ զի արգել ճառագայթս արեգական, և թուր, օրպէս թէ կատարածն լինել աշխարհի, իսկ մեռելոցն ոչ գոյր թիւ։ Անդ էր տեսանել զտապ մեծի տագնապին, և զանբաւ աղետս տարակուսանաց մնացելոցն։ Անդ էր տեսանել զիտն և զկոկիծ ծնողաց և դաւակաց։ Անդ էր տեսանել զվայ և զեղով սիրելեաց և բարեկամաց։ Գոչէին և հառաչէին և ոչ որ էր օգնել նոցա։ Միանային և ձեռամբ պեղէին այսր ու անոր ... Հանէին զմարսն ... ի գործու ունելով զորդիս իրենանց... Հաննին զհարսն ի ձեռն ունելով զօրդիս իրենանց, զեղբայր պատուան զեղբարք, և բոյր զբերք ... Եւ հասանւ ձի գերեզման՝ շորրի և հինգ ի միասին թաղէին, հանդերձիւր իրենանց, առանց օրինաց և բաճանայի։ Գային յայտոց դաւառաց յօգնութիւն նոցա ... Եւ

յինն երբորդումն աւուր ... բոտ նմանութեան առաջին շարժին՝ և դարձեալ շարժեցաւ, և զոր ինչ խախտեալ մնացեալ էր յառաջին շարժէն, և սա իսպառ կորոյս և տապալեաց։ Եւ դարձեալ շարժէր շարժն ի սուղ և ի գիշերն Եւ յաւուրս ութերորդի յամտոյն սեպտեմբերի պատահեցար ի դամբարանի սրբոյ վարդապետին Յովհաննիսի, մականուամբ Կորեկ կոչեցելոյ, ի դիտին ի վրայ Հրատան գետոյ, որ է հանգստարան ննջեցելոցն Երևանոյ քաղաքին ... յանկարծակի զղրղեալ շարժեցաւ երկիր. և ի սաստկութեան շարժին զվիմատաշ քար զերեզմանացն հարեալ յիրեարս ճնշւային։ Եւ հընեցեալ ասեմք փառք թեզ աստուած... Եհաս ժամ, զի հարցիցն մեռեալք ի գերեզմանաց իրենանց։ Եւ լերկարեալ շարժն մինչի ի գլուխ ամին և այլ և աւելին²։

Երկրաշարժը աշուղական ողբի ձևով է նկարագրել հայագիր ոմն Սահար-օղլին, որը նույնպես հակամարտ ակնհասեւ է եղել բնական այդ մեծագույն աղետին։ Քվումսն ենք նրա ողբից (կամ «աշըղլամա» ինչպես այն կոչված է) մի բանի քառյակի.

«Երկինքըն թունա առաւ գետինըն դոռաց,
Անդունդբէն վեր կկաւ չուրն երեանայ։
Երկինքըն շարժ ելաւ մեղաց պատուհաս ելաւ,
Փառն ու գոշումն դոռն երևանայ։
Քակաւ պաղազ, տուրք փրաւ շուկանին,
Պատարազ կանգնեցան դանկայձաշին,
Խոտլանքք հատուց այն տէր կենդանին.
Աստուածուցը եկաւ սուրն երևանայ։
Հայրը կորուցիւր է, շքտաւ մայրն.
Երկուցըր դէմ առաւ իրա՛նու դարը,
Մանուկներուն վրան դրին սալ բարը,
Յևտեանցը կու լայ շուրն Երեանայ։...
Շարժ ելաւ ու թուա սուր ու գերանը,
Զարդեցաւ մէջք ու պէջքը, աչքն ու բերանը,
Շրջեցաւ պարիսպը, փլաւ խորանը,
Չարութիւնը բերեց սուրն Երեանայ։...»²

Սակայն 1679 թվականի երկրաշարժի ամենավաղ ու ամբողջական նկարագիրը տվել են Զաքարիա Քանաբեղյի և Զաքարիա

¹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Հնուգիրք № 34, էջ 354ա—355ա։
Հժժժ, «Քանաբեղ» ամսաթիւթ, 1902, հատ. 9, № 5, էջ 130—132, Հ. Տաշեան,
Շուրջակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Միխայիլեանցի Վիկեան, էջ 182։
² Հ. Ն. Ալիեման, Հին Երեանը (Եր. Շահադդի Է՛ժին Երեանքը գրքի մասին) (Է՛ժնդէլ ամսագրեայ, Վիկեան, 1934, № 5—7, էջ 336—337)։

¹ Տճ՝ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Կ, 1, էջ 327։

Ազգուցեցի ականատես պատմագիրները, որոնցից առաջինի վկայության առանձին հատվածները մեջբերեցինք վերևում: Զարբրիս Ազգուցեցիի հետևյալ կերպ է նկարագրում այդ ազնուարքը երկրաշարժը:

«1128 յունիսի Ռումն Երևան, որն Պ շարաթ, ու սճաթումն յանկարծակի քամի վեր կացաւ, զըրթումն, որստումն, այնպէս շարժ եղև, որ ական թօթափելու ամէն փաւ. որ նորայգալթիայ մինչև Փօզըէն, Անարէն մինչի էքմիածին ամէն վեր եկաւ Երևանայ Ք Եկեղեցին, Երևանայ անապատն, Չորայգեղու Եկեղեցին, Քեղարթվանքն, Ամէնայփրկին ամէն վեր եկաւ Քեղարթու Ըստեփաննոս վարդապետն Երևանայ անապատումն մնաց հողի տակի: Երևանայ բերթն, խանի տներն, թէ համամ, թէ մաջիթ, թէ մինարէ, ամէն վեր եկաւ»²:

Թվում է, թէ ծանոթագրութիւնները ոչինչ չեն ավելացնի մեզ բերված վկայութիւններում հաջորդված տեղեկութիւնների վրա: 1679 թվականի երկրաշարժը մեծ ավերածութիւն էր կատարել Երևանում և նրա շրջակայքում: Կործանվել կամ խարխլվել էին բազարի նշանավոր բոլոր կառույցներն ու բնակելի տները, խախտվել էր տնտեսական կյանքը, իսկ կենդանի մնացած քնակիչները անօթեան էին մնացել և, քանի ղեկ ցրտերը վրա չէին հասել, բնակվում էին վրաններում:

Քաղաքի կանոնավոր կյանքը վերականգնելու համար հարկ է լինում զինել արտակարգ միջոցներով: Ժամանակի Չալ-խանը ազնու մասին շտապ տեղեկ է դարձնում շահին, որը հրամայում է առանց ժամանակ կորցնելու վերաշինել բերդը (այդիկ հիշա՝ նորից կառուցել, որովհետեւ այն հիմնահաստակ կործանվել էր), ինչպես նաև քաղաքի տները և Եկեղեցիները: Բերդը կառուցելու համար շահի հրամանով և Ատրպատականի վեղիք Միրզա-Իբրահիմ ան-ժիբազանի ղեկավարությամբ, որն ուղարկված էր Երևան այդ աշխատանքները կազմակերպելու համար, օգնութիւն են հասնում նախիջանի, Պարտավի, Ջեղումի, Լոռու խաները և Մակիլի, Ակոբիի, Ուտարակի ու Մարի սուլթանների իրենց մարզկանցով: «Ճե կեն սորա», — հաղորդում է Զարբրիս Մարկավազը, — «և շինեցին դերդը երբորմնայ ամրագոյն քան դստացինն: Եւ զկամուրճն՝ որ ի ներքոյ բերդին էր ի վերայ Լուրստանս պետոյ՝ որ տաթ Զանկի, դնա և

չինեցին ամրագոյն. և զստուրճ՝ որք խափանեալ էին, նորոգեցին, և բերին զշուրն ի քաղաքն Երևան: Եւ այպա հաստատեցաւ կարգն Երևանայ ամենայն պիտոյիչք մարմնաւորք՝ որքան և իշխել սա (Չալ-խանը — թ. 2.) Երևանայ»³:

Սակայն, ամենայն հավանականությամբ քաղաքի փլված տները և Եկեղեցիները վերաշինվել են բավական երկար ժամանակամիջոցում: Քաղաքացիները շունեին այնքան միջոց ու ուժ, որպեսզի կորոզանային արագությամբ վերացնել ազնուի հետևանքները: Մենք կտեսնենք, որ Եկեղեցիները վերաշինվել են նույն զարի միայն 90-ական թվականներին, իսկ ոճանք՝ նույնիսկ դրանից ուշ: Ըստ երևույթին սուղաման առունները համեմատաբար քիչ էին տուժել, դրանք, ինչպես Զարբրիս Մարկավազն է հաղորդում, շատ կարճ ժամանակում սնորոգեցին, և բերին զշուրն ի քաղաքն Երևան»⁴: Ըստ երևույթին այդ երկրաշարժից դեռ դարեր առաջ Դալ-ժալի առուն արդեն խափանված էր և այն վերականգնվել է միայն Երևանի վերջին խանի՝ Լուսինի ժամանակ 1815 թվականին⁵:

Երկրաշարժից, սեկվաներից, մահահայելու հիվանդութուններից բացի Երևանի տնտեսական կյանքը մեծապես տուժել է նաև մտերիցից, որը Պարսկաստանի կողմից պարբերաբար երևացել է մեր աշխարհում և իր ավերիչ արշավանքներով ամառացրել ցանրեքը, այդիները, բանջարանոցները և նույնիսկ խոտհարքներն ու արոտավայրերը: Մենք քաղաքի տնտեսական կյանքի մասին համապատասխան տեղում այդ հարցին կանգնադասանք ավելի բնագործակ կերպով: Այստեղ միայն նշենք, որ դեպի մեր քաղաքը կատարված մտերիային արշավանքներից մեկ հայտնի են երկուսը, որոնցից մեկը 1692 թվականին, իսկ մյուսը՝ 1713: Դրանցից առաջինի ժամանակ քաղաքը ամենեկին չի տուժել: Հիշատակադիր-դրիչի ժամ է. սեկե մտերիսն Երևանայ երկինքն. փա՛ռք Աստուծոյ, չի որում է. սեկե մտերիսն Երևանայ երկինքն. փա՛ռք Աստուծոյ, զինա ոչ եղև»⁶: Բայց ստակալի է եղել 1713 թվականի արշավը: Տասնամյակ Մարզիս Գեղամեցին իր տաղերից մեկում ողբում է մտերիի հասցրած հսկայական վնասների և դրա հետևանքով բռնկված սովի համար նա դրում է.

¹ Չալխանայ Մարկավազի Պատմագրութիւն, հ. II, էջ 105:

² Նույն տեքստ:

³ Տե՛ս Լուվե. Եանիսարեանց, Ստարադրոբին կաթուղիկ էքմիածնի և հինգ գուտտոցն Արարատոյ, հ. 3, էջմիածին, 1842, էջ 154—155. «Записки Капелаского отделения Русского технического общества», т. IV, 1871—1872, էջ 308.

⁴ Տե՛ս Լուվալը Տաշնե, Յուլյակ հայերեն Անազապ մատենագրական միտիթրեանց ի վիճեաւ, էջ 554:

¹ Պահպանված է բնագրի ուղղագրութիւնը:
² Զաւարիա Ազգուցեու Օրագրութիւնը, էջ 143:
³ Զաւարիայ Մարկավազի Պատմագրութիւն, հ. II, էջ 105, Զաւարիա Ազգուցեու Օրագրութիւնը, էջ 143—144:
78

« Եի թիվ հազար հարյուր վաթսուհմ երկույ. անելի հետ ի նոյն.
 Եկաւ մարտիս բազում անհուն ի քաղաքն էրիվանոյն:
 Մածկեալ եղև երեսս ազոյն. էհնղ լերկրից իրրև զծինս:
 Քոա իջեալ մէջ յարտերոյն. բոկսան ուտել իրրև զշունս...
 Ինչ պատոյհաս է մեր զլիտոյն. շէինք տեսած բնախ նոյն:
 Մահն եկաւ ի նոյն տարոյն. հակասարեց ամէն տեղուոյն... »¹

Մորիսին հաշորդում են սովն ու մահտարածամբ:

Այսպիսով, շնայած Երևանի բնական պայմանները նպաստա-
 վոր էին Ա՝ գյուղատնտեսական, Ա՝ քաղաքային զրադմունքների հա-
 մար, սակայն պարբերաբար կրկնվող բնական աղետները՝ սելավ-
 ները, երկրաշարժերը, մորեխը և համաճարակ հիվանդությունները
 մեծ վնասներ էին հասցնում քաղաքի տնտեսական կյանքին, պատ-
 ճառելով նաև մարդկային զոհեր: Սակայն դրանք աննշան էին այն
 երկարատև ու համապարած ավերումների և տնտեսական կյանքի
 անկման համեմատովյամբ, որ մեր քաղաքին հասցնում էին թշնա-
 մական արշավանքներն ու արյունահեղ պատերազմները:

¹ «Հանդես ամսորեայ», 1934, N 5—7, էջ 338.

ԵՐԵՎԱՆԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (ինագույն ժամանակներից մինչև VII դ. մ. ք.)

I. ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ԵՎԱՆ ԱՆՆԱՌԻՐԱՐՏԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Երևանի տերիտորիայում հայտնաբերված նախաուարտական հնա-
 գույն բնակավայրերը և նյութական կուլտուրայի մնացորդները:
 Շենգավիք բնակավայր-ամրոցը: Երա գոյություն ժամանակը,
 բնույթը և պատմա-հնագիտական բնութագիրը: Միծեռնակաբե-
 ռում երբեմնի եզած հնագույն բնակավայր-ամրոցը: Հին հայկա-
 կան ավանդությունը Միծեռնակաբեդի մասին: Միծեռնակաբեդի
 ստեղծությունը Երևանի հետագայի բերդի հետ: Կարմիր-բլուրի նա-
 խաուարտական բնակատեղին: Մյուս հնագույն բնակավայրերը

Հայկական լեռնաշխարհը կազմում է Ասիայի, Եվրոպայի ու
 Աֆրիկայի մերձարևադարձային ու տաք բարեխառն գոտիներից
 բաղկացած այն հսկայական մարդի բաղկացուցիչ մասը, որտեղ,
 րատ գիտության նորագույն տվյալների, ձևավորվել է այսպես կոչ-
 ված մտածող մարդը (homo sapiens-ը): Հայկական լեռնաշխարհը
 հին բարեդարյան ժամանակներից դարձել է մարդու օրրաններից
 մեկը և այստեղ մարդկային կյանքը անընդմեջ շարունակվել է հե-
 տացա բոլոր ժամանակներում:

Հայկական լեռնաշխարհի մյուս մասերի նման վաղագույն
 ժամանակներից բնակեցված է եղել նաև Արարատյան դաշտն ու
 նրա մեջ մտնող Երևանի շրջակայքը: Վերջինս իր արդավանդ հո-
 դերով, առատ ջրերով և կլիմայական բարենպաստ պայմաններով
 ամենահին ժամանակներից դարձել է տարբեր բնակավայրերի տե-
 դադրավայր: Եթե նույնիսկ նկատի չունենանք այստեղ հայտնաբե-
 րված հնուվրանները, միայն կուլտուրական հողի հզոր շերտի առ-

Հայտնությունը բավական է, որպեսզի գաղափար կազմենք նրանք գրաված շրջանի հազարամյակներ բնակեցված լինելու մասին:

Լինելով ուժեղ երկրաշարժերի գոտում, ենթակա լինելով Գեոտափ սելավներին և բազմաթիվ անգամ ենթարկվելով Քշմանական հարձակումների ու ավերումների, նրանք հնուքյունների զգալի մասը վերացել է երկրի երեսից: Անուսամենայնիվ մեզ հասած հնությունները բավական շատ են: Քաղաքում և նրա շրջակայքում ամենալավագույն ժամանակներից եղել են մի շարք բնակավայրեր: նրանցից «ժողովրդ» կառուցելիս Հրազդանի ափին հայտնաբերվեցին հին քարեդարյան ժամանակաշրջանի քարայր-կացարաններ: Հնաբնակչության գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը, վերջերս ուսումնասիրել է Շենգավիթի մոտ գտնվող քարայրները, որտեղ բավական երկար ժամանակ բնակվել է նեանդերթալյան մարդը¹, նրանք զննարկել են հնուքյունների մի թանգարան է, որտեղ կարելի է տեսնել քարի, քարե-պղնձի (էնեոլիթ), ուրարտական-հայկական, անտիկ ժամանակաշրջանների և հետագայի բրոնզի, բնակավայրերի, առանձին կառույցների, ուղղման ստունների ավերակներ ու հեռքեր, գանձազան իրեր ու զործիքներ: 1885—1925 թթ. ընթացքում Արարատյան գառափ տարբեր վայրերում՝ Արմալիքում, Իզդիրում, Երեզանի շրջակայքում, Արաղածի հարավային ստորոտներին և այլ տեղերում պատահաբար առիթներով, կամ գլուխաձուլման արշավախումբների ժամանակ, հայտնաբերվել են բրոնզի դարին և երկաթի դարի վաղագույն շրջանին վերաբերող զանազան իրեր ու զործիքներ²: XX դարի 30-ական թվականներին Արարատյան գառափ մի քանի տեղերում կատարվում են հնագիտական պեղումներ, որոնց շնորհիվ գաղթյալ հայտնաբերվում են բրոնզեդարյան նյութական կուլտուրայի մնացորդներ: Ավելի մեծ արդյունքներ են տվել մասնավորապես 1935—1936 թվականներին նրանք երկաթուղային կայարանի մոտ գտնվող Մուխանյան-Քափա կողմից բլրի շրջանում կատարված պեղումները, իսկ 1936—1938 թվականներին հնագիտական բավական ուսումնասիրություններ են կատարել Շենգավիթի հնագույն բնակավայրի տեղում³:

Երևարարական աշխատանքների ընթացքում բաղաբի գանգան մասերում նույնպես հայտնաբերվել են հնագույն և հին հայ-

կական նյութական կուլտուրայի մնացորդներ: 30-ական թվականներին այժմյան Քումանյան փողոցում շենքի հիմք փորելիս, ինչպես վկայում է նրանից Շահազիզը, նշմարվել են նախնական թաղման մնացորդներ, իսկ կաշեդորձարանի մոտ հայտնաբերվել են ավելի ուշ շրջանին վերաբերող շինությունների մնացորդներ և հայկական զարդարանդակների առանձին բեկորներ են հայտնաբերվել նաև նրանք սարգարանի բերդի տեղում՝ այժմյան Արարատ գործարանի տերիտորիայում⁴: Հայկական հին ժամանակներին վերաբերող նյութական կուլտուրայի մնացորդներ են հայտնաբերվել նաև երրորդ մասում՝ Կալինինի փողոցում, Օպերայի և բալետի թատրոնի շենքի հիմք փորելիս և ուրիշ տեղերում: Երևարարական աշխատանքների ժամանակ այդ վայրերում հայտնաբերված հնությունները վերաբերում են մեր թվագրությունից առաջ վերջին և մեր թվագրության առաջին դարերին⁵:

Նախաուրարտական ժամանակների գերեզմաններ են հայտնաբերված Քաղազուղի (Քաղաքեղի) տերիտորիայում, որն այժմ ամբողջությամբ մտնում է նրան քաղաքի մեջ⁶: Հնագույն այդ գերեզմաններում պահպանվել են մշակույթի բազմաթիվ մնացորդներ: Նույն ժամանակներին վերաբերող մեծ թվով ու բազմատեսակ նյութական կուլտուրայի մնացորդներ են հայտնաբերված նաև Կարմիր-բուրի շրջանում, որտեղ մինչև ուրարտական Քեյշերախի բաղաբը հիմնադրվելը ղեկ վաղ ժամանակներից գոյություն է ունեցել մի մեծ բնակավայր⁷: Նախաուրարտական շրջանում հավանաբար բնակավայրեր են եղել ոչ միայն Մուխանյան-Քափայի, Շենգավիթի, Կարմիր-բուրի ու Կարմիր բերդի շրջաններում, այլ նաև Բերդաձորում, Միծենականբերդում, Քաղաղաղում և նույնիսկ, բուն քաղաքի որոշ տեղերում: Անշուշ գյուղը բոլոր գոյություն են ունեցել ոչ միայն ժամանակների, այլ տարբեր ժամանակներում: Բացառված չէ նաև, որ Ավանի ձորի լանջերին և Հրազդանի հսվում եղած բարայրները մարդու համար ապաստարան-բնակարան են եղել տակավին նրա պատմության արշալույսին, երբ նա նոր էր հուսալին կյանքից անցնում նախնադարյան համայնքին: Մի խոսքով,

¹ Երվանդ Շամոզիզ, Հին երևան, էջ 250—251:

² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1959, № 2—3, էջ 93:

³ Վ. Ավրանը («Արարատ», էջ 319) Քաղաղաղը ենթադրաբար նույնաբանում է Մարվախյար—խարաբա այլնապես դիտարկել հետ:

⁴ А. А. Мартirosyan, Город Тейшебани по раскопкам 1947—1958 гг., Ереван, 1961, էջ 37:

¹ «Ներկայան նրանա» (լրագիր), Երևան, 1968, № 154, 19 սպտեմբեր:

² Քրթ. և. Մամուլյան, Հին Հայաստանի կուլտուրան, երկրորդ հատոր, Երևան, 1941, էջ 24—25:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 25:

«Երևանն ինքը մի ամբողջ հնություն է և ամբողջությամբ նստած է հին կուլտուրաների վրա»¹։— Ինչպես իրավացիորեն դրում է Երվանդ Շահազիզը։

Պեղումների, շինարարական ու գյուղատնտեսական աշխատանքների և պատմահայկան կերպով Երևանում ու նրա շրջակայքում հայտնաբերված հին քնակավայրերում, գերեզմանոցներում և այլ կարգի հնությունների ավերակներում հայտնաբերված են կալվե դանազան ամաններ, մշակութային (հատկապես հացահատիկների) մնացորդներ, բրոնզե կացնի բարե կաղապարներ, գյուղատնտեսական գործիքներ, սոնային գործածության իրեր, պաշտամունքային պարագաներ, զենքերի մնացորդներ և այլն, և այլն²։ Երանց մասին դեռ կիսոսենք Երևանի տեղում նախատարատական հնագույն ժամանակների քնակավայրերը բնութագրելիս, որին և անցնում ենք։

Երևանի հարավ-արևմտյան մասում, Հրազդան գետի բարձրագիր ձախ ափին գտնվում էին երկու հին գյուղեր՝ Վերին Ենեզավիթեր և Ներքին կամ Ստորին Ենեզավիթը, իրարից գտնվելով ընդամենը մոտ մեկ կմ հեռավորության վրա։ Սրանք մեր արդյունքներում առաջին անգամ հիշատակված են վիմական արձանագրության 13-րդ դարում³, 19-րդ դարի վերջին բառորդում Վերին Ենեզավիթն ուներ ավելի քան 100 տուն բնակիչ, իսկ Ներքին Ենեզավիթը, որը կրել է նաև Պայազ մականունը, ունեցել է ընդամենը 40—50 տուն⁴։ Այժմ այդ երկու գյուղը մի շարք այլ գյուղերի հետ միասին միացած են Երևանին և կազմում են նրա թաղամասերը։

Գրանցից Վերին Ենեզավիթը որպես հնագույն քնակավայր արժանի է հատուկ ուշադրության։ Միջին դարի վերջին հարյուրամյակներում և հետագա ժամանակներում նրա տեղիտարածումը գտնվող պղնձ-բարեզարյան շեն-ամրոցի (կամ գյուղ-ամրոցի) ավերակները օտարների կողմից կոչվել է «Գյուլտը-կալախի» (=անհավատի բերդ), որի մոտակայքում գտնվող հին հայկական զերեզմանոցը կոչվել է «Մլերք»⁵։

¹ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 250։

² Երևանի շրջակայքում հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդների մասին մանրամասն տե՛ս Երվանդ Քարաբաղյան, Աշխատանքի գործիքները հին Հայաստանում, «Պատմության և զրահանության ինստիտուտի Տեղեկագիրք», 1-ին գիրք, Երևան, 1938, էջ 192—231։

³ Տճ՝ Ն. Ա. Ավիսյան, Այբրաթա, 1890, էջ 319։

⁴ Տճ՝ Ն. Ա. Ավիսյան, տե՛ս նույնը։

⁵ Երվանդ Շահազիզը գտնում է, որ «Մլերք»-ի զերեզմանոցը կարող է կապ ունենալ Ենեզավիթի հնագույն ամրոցի հետ («Հին Երևանը», էջ 223)։

Ենեզավիթի բարե-պղնձի դարի (կամ էնեոլիթյան) շեն-ամրոցը մարդու շինարարական գործունեության ամենահին նմուշներից է։ Այն էշմածնի շրջանի Քյուլ-թափալի (Մոխրաբլուր) ու Երեշ-բլուրի, Կիրովականի Թագավորանիստ կոչված վայրի և ուրիշ տեղերի նմանօրինակ քնակավայրերի և այլ միասին հնագիտության ու ճարտարապետական հնագիտության հնարավորություն է տալիս գաղափար կազմելու մարդկային պատմության այդ վաղ շրջանի շինարարական արվեստի, քնակավայրի բնութի, քնակարանների կառուցվածքի, քնակույնան գրադմունքների և այլ հարցերի վերաբերյալ ընդհանրապես։ Ենեզավիթի ամրոցը տեղական շինարարական արվեստի արդյունք էր։ Նրա պարիսպի շարվածքը ցիկլոպիկ ամրոցները հատուկ էին տոհմատիրական ժամանակներին⁶։

Ենեզավիթի պարբերական պեղումները սկսվել են մեր դարի 50-ական թվականների վերջերից։ Բայց ցավով պետք է սասել, որ, ինչպես այստեղի, այնպես էլ հանրագիտության այլ վայրերում կատարվող պեղումների արդյունքները հրապարակում են մեծ ուշադրությունով, որպիսի հանգամանքը բացառաբար է աղղում գիտությանը, որպիսի հանգամանքը բացառաբար է հնագիտության վերաբերյալ աշխատողների մեջ պատենհ առիթներով կատարված ակնարկներից, Ենեզավիթի պեղումների մասին հրապարակի վրա Վիա որե՛է լուրջ ու համակողմանի աղբյուր։ Ուստի հարկադրված ենք բավարարվել միայն այն նյութերով, որոնք հրապարակված են մասնույում և հիշյալ հնագիտական աշխատություններում։

Ենեզավիթի պեղումների քննարկումը բացվել է կուլտուրայի շուրջ շատ, որոնք ընդհանուր հաստատությունը հասնում է շուրջ մետր հզորության։ Ենթետից առաջին հերթը, ըստ ընդունված կարծիքի, վերաբերում են մեր երկրի պատմության վաղագույն շրջանին՝ նախնադարյան համայնական և սոցիալին հասարակություններին⁷։ Նախկինում միայն շատ ընդհանուր գծերով հայտնի այս շեն-ամրոցում այժմ հայտնաբերված են քնակարանների մի շարք կոմպլեքսներ, պաշտպանական պարիսպի մի զգալի հատ-

⁶ Ակնարկներ հայ արվեստի պատմության, 2, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 23։

⁷ Պրոֆ. Խ. Մամուկյան, Հին Հայաստանի կուլտուրան, հրորդ հատոր, էջ 36։

⁸ Տճ՝ Ն. Ա. Այբաբաբյան, Երևանը 6000 տարեկան է... (Երևան) թերթ, 1966, ապրիլի 2, № 79)։ Ա. Ա. Мартыросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 26։

վածը, բնակատեղիից դուրս գտնվող սոսճական գերեզմանոցը, շրի համար կառուցված դազանի ճանապարհը: Հետո չէ այն օրը, որ մեր մայրաքաղաքի «նախահայր» Շենգավիթի հողածածկ բոլոր հաղորիթները հայտնի կդառնան դիտությունը:

Բնակարանների յուրաքանչյուր կոմպլեքս բաղկացած է կենտրոնում գտնվող մոտ յոթ մետր տրամագիծ ունեցող շրջանաձև շինությունից և դրա շուրջը դասավորված տարբեր մեծությունների փոփոխությունից: Բնակարանային բոլոր կառույցավածքների հիմքերը շարված են անմշակ բազալտով, իսկ պատերը՝ լիթոված աղյուսով: Յուրաքանչյուր կոմպլեքս ունի իր օջախը, թունիքը և այլ հարմարանքներ: Պատերը խնամքով ձեվված են, ներսի կողմից ներկված կապույտ գույնով: Գա հավանաբար մի քանի սենյակից բնակարան ստեղծելու առաջին քայլերն էին²:

Շենգավիթում հայտնաբերված իրերի մեծագույն մասը պատասխանում է բարից, ոսկրից, իսկ վերին շերտերի իրերի մի մասը՝ պղնձից: Հայտնաբերված են բարե կացին, նետերի ծայրերը՝ Հարուստ է խեցեղենը: Բնակավայրի վերին շերտում հայտնաբերված կավե ամանների ունեն և, փայլուն գույն և պատրաստված են բավական վարպետորեն³:

Այստեղ հայտնաբերված աղորիթները, բարև մանգաղները, գարու և ցորենի հորած պաշարները ցույց են տալիս, որ Շենգավիթի բնակավայրը մշակական էր, նրա բնակչությունը նստակյաց էր, երկրագործ է: Հնագույն Շենգավիթի բնակչության երկրագործական դրազմունքը պատահական չէ: Յորենի հայտնի մասնագետ Մ. Թուսմանյանի ուսումնասիրություններով պարզվել է, որ ցորենի հայտնիքը Հայաստանում ցորեններ ցանվել են ուրարտացիներից տակավին 2000 տարի առաջ և մեզ են հասել նույնիսկ սրանից 6500 տարի առաջ մշակված ցորենների մնացորդ-նմուշները⁴:

Հայաստանում և նրա շրջակայքում հայտնաբերված են բարեպղնձի դարի (կենդիվիթի) մետաղյա իրերի առանձին նմուշներ: Շեն-

գավիթի վերին շերտում 1936 թվականի պեղումների ընթացքում, օջախի մոտ հայտնաբերվել է կացին ձուլելու կաղապար⁵:

Երկրագործության և մետաղամշակման անկախությունը ցույց է տալիս, որ հնագույն Շենգավիթի բնակիչները գտնվում էին գարգացման բարձր աստիճանի վրա: Նրանց զրազմունքներից, կարևոր տեղ էր զբաղվում նաև անասնապահությամբ: Այստեղ հայտնաբերված են եղան, ոչխարի, այծի, խոզի, ձիու ոսկորներ և կավից ձեփած արձանիկներ⁶:

Երևանը բազմադարյան պատմության տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է ջրամատակարարման տարբեր համակարգեր: Այստեղ մեզ հայտնի ամենահին ջրամատակարարման համակարգը հայտնաբերվել է Շենգավիթում: Պեղումների ընթացքում հայտնաբերվել է ստորերկրյա մի անցք, որը սկսվում է բնակավայրի կենտրոնական մասից, անցնում պարսպի՝ հայտնաբերված հատվածի տակով և բառ երևույթին հասնում մինչև Հրազդան գետը: Հրազդանը բնակավայրից ցածր է, ինքնահոսով այդտեղից ջուրը չի կարող գալ: Պետք է ենթադրել, որ բնակիչները սովորական խաղաղ պայմաններում ջուր բերելու համար չէին օգտվում այդ անցքից: Այդտեղով Հրազդանից հավանաբար ջուր էին բերում միայն պաշարված ժամանակ, կամ երբ ընդհանրապես արտաքին ջուրը վտանգ կար: Այդ գեոտեղին այնքան լայն ու բարձր է, որ նրանով մարդը կարող է ազատ երթևեկել: Նրա կողքերն ու վերևի մասը սալապատ են:

Շենգավիթի պեղումները ղեկավարող՝ Ս. Սարգսյանի կարծիքով այստեղի բնակավայրը անընդմեջ գոյություն է ունեցել շուրջ 2000 տարի՝ 4-րդ հազարամյակի երկրորդ կեսից (մ. թ. ա.) մինչև 2-րդ հազարամյակի առաջին կեսը (մ. թ. ա.): Նրա վերջին, 4-րդ հուլյանյանի շերտը վերաբերում է վաղ բրոնզի դարին, իսկ վերջին կեսը շերտերն ընդհանրապես կրկնված են նաև Հայաստանի այլ կետերում՝ Կիրովականում, էջմիածնում, Բզղիքում և ուրիշ տեղերում⁷: Հայտնաբերված նյութերը միանգամայն հուսալի հիմք են

¹ Տե՛ս նվճենի Բայբուրդյան, Աշխատանքի գործիչները հին Հայաստանում (ԵՊատմության և արվեստի մասին) Տեղեկագիրք, դիրք առաջին, էջ 195—197): Հմմտ. Ա. Ա. Մարտիրոսյան, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 25:

² Տե՛ս «Երևան» թերթ, 1960, № 79 (2 ապրիլի):

³ Նույն տեղում:

¹ Ս. Սարգսյան, Երևանը 6000 տարեկան է... («Երևան», 1960, № 79):

² Նույն տեղում: Տե՛ս նաև «Արվեստից» հայ արվեստի պատմություն, 2, էջ 23—24:

³ «Երևան», 1960, № 79:

⁴ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 23—24:

⁵ Տե՛ս Պ. Գանդիլյան, Յորենի աշխարհում և Հայաստանում («Հանրիկներ» լայն թերթ, Երևան, 1967, № 3, 15 հունվարի):

տալիս նրան ենթադրելու, որ Երևանի գրաված շրջանում ընդհանրապես անընդմեջ գոյություն են ունեցել քնակավայրեր և այստեղ հասարակական կյանքը միշտ առաջ է ընթացել առանց ընդհատվելու։ Ենեզավիթին հաջորդել են բրոնզե դարի բնակավայրերը (Միծեռնակաբերդում, Քերգածորում և Կարմիր-բլուրի տեղում՝ մինչև ուրարտական Քելշերախի բերդաքաղաքի հիմնադրումը)՝ երկրորդ հազարամյակի կեսերից մինչև նույն հազարամյակի վերջերը, այսպե՛ս ուրարտական էրբեունի և Քելշերախի բերդաքաղաքները (VIII—VI դդ. մ. թ. ա.), Վերին Ենեզավիթի մոտ եղած հայկական ամրոց-քաղաքատեղիին (մտատվորապես V—I դդ. մ. թ. ա.), Կարմիր բերդի վերին շերտի միջնադարյան ամրոցը (I—X դդ. մ. թ.), Երևանի հայկական հին բերդը և այլն¹։ Այլ կերպ ասած, Երևանի մեկը հայտնի առաջին բնակավայրի՝ Ենեզավիթի հիմնադրումով նրանի գրաված տարածությունը մեկընդմիջա գտնուում է բնակեցված շրջան, իսկ Ենեզավիթը գոյություն է ունեցել մեզինք շուրջ 6000 տարի առաջ, հետևապես Երևանն էլ (իբրև բնակավայր) այդքան տարեկան է, ինչպես իրավաբաններն եզրակացրել է Ս. Սարգսյանը²։ Նա ժամանակակիցն է աշխարհի ամենահնագույն քաղաքների՝ Նինվեի, Սուլի, Տրոյայի, Կրետի և այլն։ Պատմության տրամաբանությունը գալիս է ասելու, որ ինչպես Ենեզավիթի այնպես էլ թուն Երևանի տեղում հետագայում եղած բնակիչները, որոնք եղել են նստակյաց՝ երկրագործ ժողովուրդ, պատկանում են մեր հեռավոր նախնիների շարքին։ Նրանք բոլորական հորդաներ չէին, որ առանց զովարություն չլինի մի տեղից մյուսը և ոչ էլ ենթակիցել են կործանել լվթարի նրանք այստեղի մշտական և կուլտուրապես զարգացած բնակիչներն էին, որ կարող էին միայն իրենց բնակավայրը քաղաքի գրաված շրջանի մի տեղից տեղափոխել և հաստատել մի այլ տեղում, ինչպես ուրարտական էրբեունի բերդաքաղաքի բնակիչներն էին մասը իր ժամանակին հավանաբար տեղափոխվել է Քելշերախի։

Ենեզավիթի քարե-պղնձի դարի բնակավայրի գոյության վերջին շրջանում և հետագայում Երևանի գրաված տերիտորիայում եղած բնակավայրերից մեկը հայտնի են Միծեռնակաբերդի, Քերգածորի, Կարմիր-բերդի, Սուխանյանթ-Քալախի և Կարմիր-բլուրի նախաուրարտական բրոնզեդարյան բնակավայրերը։

Հետագայում կրկնությունից խուսափելու համար, հարկ ենք համարում մի փոքր էրևուրս կատարել Միծեռնակաբերդում եր-

կար ժամանակ գոյություն ունեցած բնակավայրի և միջնադարյան բերդի մասին։

Մեր օրերում այստեղ կատարված անտառանկման ժամանակ հայտնի դարձավ, որ Միծեռնակաբերդի շերտերում հսկայական տարածություն է գրավում հին կուլտուրական հողը, որը տեղ-տեղ հասնում է բավական հաստ շերտի, հակառակ քաղաքի շրջակայքի տեղիք ու քարքարոտ դրոճերի, որտեղ երբեք բնակավայր չի եղել։ Կուլտուրական հողի անկայությունը նույնպես գալիս է ասելու, որ Միծեռնակաբերդի վրա զարեք շարունակ գոյություն է ունեցել ինչ-որ բնակավայր։

Միծեռնակաբերդում հասուկ պեղումներ չեն կատարված, բայց այստեղ պատահական այցելությունների ժամանակ նկատվել է կիկլոպյան պաշտպանական պարիսպով ամրացված բնակավայր՝ բերդայնույթ։ Հայտնաբերված են նաև նյութական կուլտուրայի մնացորդներ՝ հատկապես խեցեղենի նմուշներ։ Նորիցս այստեղ, 1915 թվականի եղեռնի նվիրված հուշարձանի հիմքերը փորելիս նույնպես նշմարվեցին հնագույն շրջանի նյութական կուլտուրայի և կառուցվածքների հետքեր։

Միծեռնակաբերդը բլուրը, որը գտնվում է Կոնդ և Չորագույղ թաղամասերի զիմեց, Հրազդան գետի աջ ափին, պաշտպանական տեսակետից ունի ամուր դիրք։ Նրա արևելյան մասում ընկած է Հրազդանի խոր ու ժայռոտ ձորը, իսկ մյուս կողմերում (մասնակցորդ հարավային կողմում) բլուրը ունի դարձյալ բավական զարդվելու լանջեր, որոնք զովարամասուրց են դարձնում նրա դադաթային մասը՝ հին բնակատեղին։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Միծեռնակաբերդում երբեմնի եղած բնակավայրը ամրոց էր կամ բերդ և գոյություն է ունեցել շատ երկար ժամանակ։

Բյուզանդական պատմագիր Կեդրենոսը XI դարի քաղաքական ղեկավարի մասին խոսելիս՝ պատմում է սելջուկյան զորավար Արուստավարի կողմից Հայաստանում գանվող բյուզանդական բանակի կրած մի խայտառակ պարտություն մասին և ապա նշում, որ կայսերն կողմից նոր նշանակված Կեկավմենոս ու Կոստանդին զորավարները՝ հավաքելով իրենց զորքերը, նոր արշավանք սկսեցին Արուստավարի դեմ³։ Համառոտագրելով մեջբերենք պատմիչի խոսքերը բյուզանդական զորքերի այս արշավանքի մասին.

¹ Տե՛ս «Երևան» լրագիր, 1980, № 79.

² Նույն տեղում։

³ Տե՛ս Georgio Cedrenus, Ioannis Scylitzae ope ab Immanuele Bekker, t. II, Bonnae, 1839, էջ 559—560.

«Նրանք չուզեցին հարձակվել համազգային մայրաքաղաք Դվինի վրա և փորձեցին (զրավել) Անիի մոտակայքում գտնվող մնացած բերդերը... Նրանք զրավեցին սուրբ Մարիամ, Ամպիր կույտը և սուրբ Գրիգոր շատ ամուր ու անառիկ (բերդեր), թեև Աբուլուսյալար բազմից փորձեց օգնել պաշարվածներին, բայց ա- մեն անգամ պարտության մատնվեց: Նրանք գալիս են և խլիղո- նիոն կոչված բերդի վրա, որը կառուցված է զստիթակ լեռան վրա և գտնվում է Դվինից ոչ հեռու... Այն փորձեցին զրավել պաշար- մամբ: Փաշարվածները զգում էին պարենի պակաս, որովհետև հար- ձակումը հանկարծակի լինելով նրանք չէին կարողացել մթերել ան- հրաժեշտ պարենը: Կզրավեին այս բերդը ևս, եթե Արևմուտքում անապասելիորեն չտնեկվեր Անո Քոստիկի ազստամբուլթյունը... Կիչերը նամակն ստանալով... կաստանդղիբ հակառակ նրան, որ բնայբը շատով պետք է ընկնի, (պաշարումը վերացնում է և դաշինք կնքում Աբուլուսյալարի հետ: [Փաշինքը] ամբողջովում է Աբուլուս- յալարի՝ բարյացակամ լինելու և հակահռոմեական որևէ բայելի չդի- մելու մտախն աված հավատարմության երդումներով: Այդ կաստ- րելուց հետո, [Կաստանդղիբը] վերջրեց զորքերը և շտապ կարգով շարժվեց զեպի թագավորանիստ քաղաքը և ահա խլիղոնիոնք այլ- ձևով փրկվում է նվաճվելուց»¹:

Կեղբենոսի հիշատակած շուրս բերդերից սուրբ Մարիամն ու Ամպիրը համապատասխանում են ժամանակակից Սուրմաուրիև և միջնադարյան Ամբերդ բերդի ավերակներին²: Այդ հայտնի է, և ոչ որքի կողմից չի կարող առարկություն ենթարկվել: Այլ է մյուս երկու բերդերի՝ սուրբ Գրիգորի և խլիղոնիոնի հարցը: Այնպես և նրան հետևելով Նրվանդ Շահազիզն ու արևմտահայկազիական մի բանի- հեղինակները սուրբ Գրիգորը նույնացնում են Խորվիրապի հետ (այժմյան Սովետական Հայաստանի Արտաշատի շրջանում), իսկ խլիղոնիոնը (որը բառացի նշանակում է Միծենակ, իսկ իմաս- տանով Միծենակի բերդ կամ Միծենակաբերդ) նույնացնում են Երե- վանի Միծենակաբերդի հետ և համարում միջնադարյան Երևանի միջնաբերդը³: Թվում է, թե սուրբ Գրիգորը Խորվիրապի հետ նույ-

նացնելը շուրս բավական հիմքեր: Պատմիչի հիշատակած մյուս երեք բերդերը՝ սուրբ Մարիամը, Ամպիրը և Միծենակաբերդը (որը Երևանի այդ ժամանակվա միջնաբերդի հետ նույնացնելու հետ մենք միանգամայն համաձայն ենք) գտնվում են Դվինից արե- մուտք, իսկ սուրբ Գրիգորը, եթե ընդունելու լինենք նրանց կարծի- քը, ապա լինելով Դվինից հարավ, գտնվում էր Աբուլուսյալարի տե- ռությունյան խորքում, մայրաքաղաք Դվինի թիկունքում: Դվինը, ինչ- պես կարելի է տեսնել Կեղբենոսի վեբը մեքերած վկայության մեջ, բյուզանդացիների կողմից ոչ միայն չի զրավվել, այլ նույնիսկ դեմ է մնացել պաշարումից: Այդպիսի պայմաններում հաղվի թե բյուզանդացիներին հաջողվե՞ր զրավել նրա թիկունքում գտնվող Խորվիրապը: Կարծում ենք այլևի հավանական է, որ Կեղբենոսի հիշատակած սուրբ Գրիգորը ոչ թե Խորվիրապն է, այլ Վաղարշա- պատ-Էջմիածինը: Այդ զեպում միայն հասկանալի կլինի, որ բյուզանդացիները սուրբ Գրիգոր-Վաղարշապատը զրավելուց հետո բարաբեկ են խլիղոնիոն-Միծենակաբերդը, որը անվան է մնացել բյուզանդական զորքերի հարկադիր նահանջի հետևանքով, ինչպես վկայում է պատմիչը: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ դարերում Խորվիրապի տեղում բերդ չի հիշատակվում, իսկ նրա շրջակայքում կրեմենի եղած Արտաշատ քաղաքն իր բոլոր կա- ուսյուններով դարեր առաջ իսպառ ցնչվել էր երկրի երեսից, Միծեղնո Վաղարշապատ քաղաքը, ինչպես հայտնի է, կանգուն էր և սպրում էր զարգացման նոր շրջան:

Մենք ասացինք, որ ընդունելի է Կեղբենոսի հիշատակած Խե- լիղոնիոնը Երևանի Միծենակաբերդի հետ նույնացնելը և վերջինս միջնադարյան Երևանի միջնաբերդը համարելը: Այդ բավական որոշակի երևում է նրանից, որ, ինչպես պատմիչն է նշում, «զամբ- վում» էր «Դվինից ոչ հեռու», իսկ մի քաղաք, մանավանդ XI դա- րի երևանի պես համեմատաբար փոքր գյուղաքաղաքը չէր կարող մեկից ավելի բերդ կամ ամրոց ունենալ: Այնուհետև, ինչպես կուս- նենք, Շարդենի վկայությամբ, XVII դարում, մինչև 1679 թվականի աղետալի երկրաշարժը, Միծենակաբերդ բյուրի շրջանում գոյու- թյուն է ունեցել հակական ճարտարապետության կառուցված մի հին բարձր աշտարակ, որի պատերին, եղել է վիմազիբ արձանա- գրություն, իսկ շրջակայքում՝ մեծ ու շքեղ բնակավայրի ավերակ- ներ: Դրանց առկայությունը նույնպես անուղակի կերպով ցույց

¹ Տե՛ս նույն աղբը, էջ 560—562: Առիթից սզավելով մեր խորին շնորհակա- յությունն ենք հայտնում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրադարանապետ Հ. Բարթիկյանին՝ Կեղբենոսի այդ հիշատակությունը մեզ հայտնի դարձնելու և քար- գանելու համար:

² Տե՛ս P. Peters, Byzantion, t. VI, Bruxelles, 1931, էջ 437—440:

³ Տե՛ս Ալիշան, Այբուրա, էջ 311, Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 177,

P. Peters, Byzantion, t. VI, էջ 437—440, Ernst Monigmann, Die Ostgren-

ce der Bysantinische Kaiserreich, Bruxelles, 1935, էջ 176—177 և Rene Grousset, Histoire de l'Arménie, Paris, 1947, էջ 584:

¹ «Путешествие Шапарца по Закавказью в 1672—1673 гг.», էջ 242—243:

է տալիս, որ Միծեռնակաբերդում միջին դարերում պետք է գոյութեան ունեցած լինել բերդ կամ ամրոց, իսկ հետագայում՝ թուրք-իրանական տիրապետության շրջանում նոր պայմաններին համապատասխան XVI դարի վերջերին կառուցվել է նոր բերդը Հրազդանի ձախ ափին, որը 1679 թվականի երկրաշարժից հետո հիմնովին վերակառուցվելուց ու մի շարք վերանորոգումներից հետո՝ իր գոյությունը պահպանել է մինչև նորագույն ժամանակները: Հասկանալի է, որ ըստ ժողովրդական ավանդության Հրազդանի այ կողմում գտնվող այդ լեռնազագաթի վրա հնում կար մի բերդ, որը սիրո աստվածուհի Աստղիկի անունով կոչվել է Աստղիկաբերդ: Ավանդությունն ասում է, որ բերդում գտնվում էր Աստղիկի դիցալվայել սպարանքը: Բերդն ուներ մի տարածարերձ աշտարակագրում է և Տիգրանյանցը, — որի ամենավերին հարկում քնակվում էին ժիժեռնակներն, այն է՝ Աստղիկի դիցուհու սուրճանդանները, որոնք տանում էին քնտրյալներին դիցուհու բորբոքը, որպես հրավերք: Այդ է պատճառը, որ այդ լեռնազագաթը մինչև այժմ էլ հայտնի է որպես Միծեռնակաբերդը²:

Այսպիսով, Միծեռնակաբերդը հնագույն ժամանակներից մինչև ուշ միջնադարը բնակեցված է եղել: Այստեղ գտնվող բնակավայրը և բերդը հավանաբար գոյություն են ունեցել մինչև XVI դարի վերջերս, երբ քաղաքի համար նոր տեղում կառուցվեց բերդ, իսկ Միծեռնակաբերդի նախկին բնակավայրի ու բերդի ավերակները աստիճանաբար վերացան:

Երևանի գրաված շրջանում նախաուրարտական ժամանակներում գոյություն ունեցած հաջորդ բնակավայրը գտնվում էր Կարմիր-բլուրում և նախորդել է այստեղի ուրարտական Թեյշեբանի բերդաքաղաքին: Նախաուրարտական այդ բնակավայրը ժամանակագրական տեսակետից ընդհանուր ամսամբ հաջորդել է Շենգավիթին և պատկանում է ուշ բրոնզեդարին ու վաղ երկաթի դարին, երբ սկսում է նախնադարյան-համայնական հասարակարգը քայքայվել³: Իր բնույթով այս բնակավայրը տոհմական էր, որը մա-

սամբ ընկած էր ուրարտական Թեյշեբանի բերդաքաղաքի տեղում, իսկ մասամբ էլ՝ նրանից դուրս:

Կարմիր-բլուրի նախաուրարտական բնակավայրն առաջին անգամ հայտնի է դառնում 1936 թվականին և այդ նույն թվականին էլ նախնադարյան ուսումնասիրության է ենթարկվում Կ. Ղաֆաղարյանի կողմից: Նրա առանձին հատվածները 1939—1940, 1947—1948 և 1954 թթ. հետագա ուսումնասիրության են ենթարկում Ա. Ա. Վալանյանը և Վ. Ս. Մարտիրոսյանը, ապա այստեղ երկարատև ու բեղմնավոր հետազոտություններ է կատարում 2. Մարտիրոսյանը, որը և իր գրքում իմի է բերել նաև նրանց բլուրի կատարած ուսումնասիրությունների արդյունքները⁴: Պեղումների շնորհիվ ձեռք բերված նյութական կուլտուրայի մնացորդների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Կարմիր-բլուրում նախաուրարտական ժամանակներում եղած այդ բնակավայրը իր բնույթով հիմնականում երկրագործական-անասնապահական էր: Այստեղ հայտնաբերվել են գալուստ մետաղաբյուրեղներ (ինչ խոսքը, տարեկան, բանջարեղեն, որ մինչև այժմ գոյեց ավելի շատ՝ ջրերն, տարեկան, բանջարեղեն, որ մինչև այժմ ղեռ ընկ հայտնաբերված), կուլի, ալժի, խոզի, ձիու, ավանակի ոսկորների մնացորդներ, խնոցու չարգված մասեր, կաթնամթերքների ամանների բեկորներ⁵: Երկրագործությունն ու անասնապահությունը Արարատյան դաշտում նորություն չէին: Այդ զբաղմունքներն այստեղի բնիկների համար սովորական էին դեռևս էնեոլիթի ժամանակներից և հետագայում միայն ապրել են նաև զարգացման նոր շրջան: Գյուղատնտեսական այդ զբաղմունքների բնութագրման հետ միասին բնակատեղի և նրա տոհմական գերեզմանոցի պեղումները որոշ քանակությամբ նյութեր են տվել նաև արհեստների զարգացման մասին: Այստեղ հայտնաբերվել են մետաղյա սղոցի ու կացնի օգտագործման հետքեր, սեիկակի ու դաշույնի ծայրեր, ապարանջաններ⁶ և այլ զարդատարակներ, որոնց մի մասը տեղական ծագումն է: Բավական հարուստ է նաև կերամիկան, որը հիմնականում արտադրվել է տեղում: Տարբեր տեսակի այդ կավե ամանները ունեն սև ու փայլուն գույն: Դրանք օրգանապես կապված են Հայաստանի այդ ժամանակվա մյուս վայրերում (Շենգավիթ, Կիրովա-

¹ Տե՛ս «Վոսա ամսագիր», Թիֆլիս, 1906, № 3, էջ 6—7, Առն Տիգրանյանց, Եվանակաբերդ, «Նախաուրարտական պատկերներ» անտիկ շարագրությունը:

² «Վոսա ամսագիր», 1906, № 3, էջ 6—7:

³ Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебани по раскопкам 1947—1958 гг., Ереван, 1961, էջ 7—9:

⁴ Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебани по раскопкам 1947—1958 гг., Ереван, 1961, էջ 7—9:

⁵ Նույն տեղում, էջ 8—37:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 67—69:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 67:

կան, լճաշեն, Մուխաննաթ-Քափա) արտադրվող համանման իրերի հետ և նման են դրանց¹։ Մարտիրոսյան ամենայն մանրամասնությամբ նկարագրել է Կարմիր-բլուրի հնագույն բնակավայրում ու դրա գերեզմանոցում հայտնաբերված գործիքները, կենցաղային իրերը, դարդառարկաները և դենքի մասերը՝ տալով դրանց հնագիտական-պատմագիտական ճիշտ պնդատականը և դրանց օգնությամբ պարզաբանելով բրոնզեդարյան ու վաղ երկաթեդարյան այդ բնակավայրի բնույթը²։

Երևանի և նրա շրջակայքի մյուս հնագույն բնակատեղիներ գտնվում էր այժմյան երկաթուղային կայարանի մոտ, Մուխաննաթ-Քափա կոչված բլրի վրա³։ Այս բնակատեղին հայանի է դարձել անցյալ դարի վերջերից, սակայն հնագետների ուշագրությունը գրավել է միայն մեր դարի 30-ական թվականներին, Հնագույն բնակատեղի բնույթը, գոյության ժամանակը և զբաղված շրջանը պարզաբանելու համար Մուխաննաթ-Քափա բլրի վրա 1935—1936 թթ. կատարվել են հնագիտական պեղումներ, որոնց ընթացքում հայտնաբերվել են կավե ամանների բեկորներ, հասարակ ձուլարան-օջախ, որի մոտ կար հին խարամ (շլաք), կացին ձուլելու բարև կաղապար, մեղալիտներ, դարդարանքներ ձուլելու կաղապար և այլն⁴։ Այդ կարճատև պեղումների ընթացքում ուղիղազվեց նաև հնագույն բնակատեղի մոտավոր դիրքը։ Հետագայում սակայն պեղումներն ընդհատվել են և դրա հնագիտական ուսումնասիրությունը մնացել է թերի Սահայն անտարակուելի է, որ Մուխաննաթ-Քափայի բնակատեղում հայտնաբերված կուլտուրան վերաբերում է միջին ու ուշ բրոնզի և ուրարտական ժամանակներին⁵։ Թե

երբ է այն լքվել մարդկանց կողմից կամ գրավվել ու ավերվել արտաքին նվաճողներից մնում է անորոշ։ Միայն տրամաբանությունը հետևելով կարելի է ասել, որ Մուխաննաթ-Քափայի բնակավայրը ըստ երևույթին անմարդաբնակ է դարձել ուրարտական ժամանակաշրջանին հաջորդած դարերում, երբ էրբունի—Երևանի նախկին բնակելի թաղերի փոխարեն նոր թաղեր առաջացան նրանից հյուսիս-արևմուտք փոխված հարթավայրում, այժմյան բուն Երևանի տեղում, և դեպի այդ մասերը ձգվեցին էրբունիի բնակիչները։

Նշվածներով չեն սահմանափակվում Երևանի նախաուրարտական հույժյունները, դրանց մի զգալի մասը երկրի երեսից ջնջվել է 1679 թվականի երկրաշարժի հետևանքով։ Հնագույն բնակատեղերի հեռքեր կան Փանաքոնի ուղղությամբ՝ Հրազդան գետի ափին։ Նախկինում այդ հնագույն բնակատեղին հին երևանցիները կոչել են Կարմիր-բերդ, և կազմել է Երևանի արվարձաններից մեկը։ Նույնպիսի հնագույն բնակատեղիք են նշմարվում նորի հանդամասում գտնվող Քերգաձորում, Հրազդանի ձորում գտնվող Խորում-բուլղղ վայրում՝ Միծեռնակաբերդի դիմաց⁶ և այլն։ Գրանք, սակայն, ամենևին չեն ուսումնասիրվել։ Այդ պատճառով նույնիսկ զբոսավար է վերջնականապես ասել, թե դրանք որ ժամանակաշրջանի բնակատեղիք են և ինչպիսի բնույթ են ունեցել։ Այնուամենայնիվ հիմք չկա զժողովելու մեր մայրաքաղաքի նախաուրարտական ժամանակաշրջանը թերի ուսումնասիրելու համար։ Ինչպես տեսանք, ժամանակակից հնագիտությունը, պատմությունը և դրանց օժանդակ մյուս գիտությունները բեզհամուր զծեղով պարզաբանել են նրա նախաուրարտական-հնագույն շրջանի պատմությունը, ուսումնասիրելով նրա սերիտորիայում երբեմնի եղած թաքն-պղնձի, բրոնզի և վաղ երկաթի գաբերի մի ամբողջ շարք կազմող շեն-ամբոցները և գրանելով խոլ պարզելով, որ Երևանը որպես բնակատեղի ամենահամեստ հաշիվներով 5—6 հազար տարվա պատմություն ունի։

¹ Տե՛ս Իրվանցի Շահադիլ, Հին Երևանը, էջ 11 և 187։

¹ Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебянин по раскопкам 1947—1958 гг., Ереван, 1961, էջ 37—39 և 74։

² Տե՛ս նույն տեղը, էջ 37—67։

³ Այդ բլրից շատ հարձուր է եղել ոճրակոծիկ Երևանի բերդը, որի պատճառով էլ Երևանի աշխարհի բնակիչներն այն կոչել են Մուխաննաթ-Քափա (—դավաճախ գոգաթ)։

⁴ Պրոֆ. Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատոր 11, էջ 24—25։

⁵ Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебянин по раскопкам 1947—1958 гг., էջ 69 և 74։

1. ԷՐԵՎՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆ

Երևանի անվան տարբերակները և այլ լեզուներով ունեցած տառադարձությունները: Երևան անվան ծագումը բառ հին առասպելի և պարսկական միջնադարյան կիսա-առասպելական ավանդույթյան: Երևան քաղաքի և երկամեջ քաղաքի անունների կապի հարցը: Առաջին գիտական փորձը Երևանի անվան ծագման մասին: Երևանի անունը ուրարտական երկայնիկ երկրագնաց հետ կապելու սխալական լինելը: Երևանի անվան ծագումը ուրարտական էրերունի ամրոց-քաղաքի անունից: Երերունի—Երևան քաղաքի հիմնադրումը: Նրա նշանակությունը որդես բերդ և վարչա-տնտեսական կենտրոն: Քաղաքի դիրքն ու մեծությունը: Երերունիի պեղումները: Ուրարտական ժամանակաշրջանի նրա պատմության բնորոշ կողմերը: Քաղաքի կառուցվածքն ու նախապատկերությունը: Բնակչությունը: Նրա էրեքիական ու սոցիալական կազմը և վիճակը: Բնակչության զբաղվածներ. երկրագործություն, այգեգործություն, անասնապահություն, սրահղություն: Քաղաքի առևտուսներն ու մշակույթը բառ պեղված նյութական կուլտուրայի մեջնադրոհներ

Երևան անունը մեր և օտար աղբյուրներում հիշատակված է բազմաթիվ տարբերակներով ու տառադարձություններով, որոնք, սակայն, իրարից արմատապես չեն զանազանվում: Հայ մատենագրության մեջ և հիշատակարաններում Երևանը հիշատակված է *Երևան, Երևան, Էրևան, Էրևան, Էրևան, Էրևան, Երևան, Երևան, Արևան, Իրևան, Իրևան, Այրևան* (նույնիսկ Այրիան) և այլ ձևերով: Արդ լեզուներով նա հայտնի է Զրևան, Երևան, Զրևան, Զրևան, Զրևան, Զրևան, Erwan, Erivan, Irwan, Revant և մի քանի այլ ձևերով, որոնք փաստորեն սոսկ հայկական տարբերակների օտար տառադարձական հետևանք են:

¹ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 299, «Հանգես անսորեայ», 1924, № 5—7, էջ 327—328 և այլուր:

² Տե՛ս Վեյդարյանցույ Վարդանյայ վարդապետի, Բարեց, 1960, էջ 24 և 35, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 299, С. Зелинский, Город Эривань, («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, Тифлис, 1881-отдел I, էջ 1), Տ. Ս. Եփրեմյան, Պատկերազարդ բնագիտարանի քառադրան, 5, I, Վենետիկ, 1903, էջ 694 և այլուր:

Երևանի անվան ծագման և ստուգաբանության հարցը մեր պատմագրության ու լեզվաբանության մեջ առաջ է բաշխել զեռուս XVIII դարում, չհաշված դրա մասին եղած առասպելներն ու ավանդույթները, որոնք անշուշտ սովելի հին ծագում ունեն:

Մեկը մյուսին հետևելով մի քանի հեղինակներ կրկնել և ընդունել են այն տեսակետը, ըստ որի Երևանի անվան ծագումը կապ ունի Նոյի մասին եղած աստվածաշնչի առասպելի հետ: Առասպելն ասում է, որ տեղի է ունեցել համաշխարհային ջրհեղեղ և Նոյի տապանը կանգ է առել Արարատ (Մասիս) լեռան վրա: Ամենից առաջ պետք է նշել, որ այդ առասպելում ոչինչ չի սոված Երևանի, Նախ-ձավախի, Ակոտի գյուղի, Առնոյում զավաթի, Մարանդ քաղաքի և մյուս տարբեր կարգի տեղանունների մասին, որոնց ծագումը XIX դարի սրուշ հեղինակներ կապում են դրա հետ: Ըստ երևույթին Երևանի անունը Նոյի առասպելի հետ կապելու այդ ավանդույթյունը զրպես է հնից³, բայց այն առաջին անգամ մեր նշած ձևով ձևակերպել և ժառանգություն է թողել Ղուկաս Ինձեխյանը: Մի շարք հեղինակներից մեծերումների կատարելուց ու զրանց մասին որոշ մեկնություններ տալուց հետո՝ նա ուղղակի գրում է, «...ընց այսչափ մատենագիրս բերտուն էից և հեթանոսաց յաւել և զժամանայնութիւն պատմութեան և ասանդութեան և յիշատակարանաց ազգանոց անգանօր քնակելոց ՚ի սկզբանէ հետէ, որ առ ողջամիտս բնաբանս է ազգացոց զօրատոր: Զի մինչև ցայժմ ցուցանեն զլեւազն Երևան՝ որ նստառ տապանն Նոյի, ցուցանեն զտեղին և զկողմն Երևանոյ զիսոց լիբանց Երևան կոչեցիւ...»⁴:

Այստեղից էլ հայագիտության մեջ տարածվել է այն կարծիքը, թե «Երևան» անունը ուղղակի առաջացել է հայերեն «Երևալ» բառից և որ իբր Նոյը Արարատի (Մասիսի) կողմից առաջին ցամաքը

³ Տե՛ս «Գրքը աստուածաշուշուր հին և նոր կապարանաց», Վենետիկ, 1660, էջ 9—10:

⁴ Տե՛ս «Երևան» Միլայել Խոսրովյան, Հայոց լեզվի ուսումնասիրությունը եվրոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը («Առաջի կրկնոր», Խմբագրություն և կոմեմտարներ Արտ Զովանդիսյանի, Երևան—Մոսկվա, 1935, էջ 41—42):

⁵ Այդ երևում է նրանից, որ զեռուս XVII դարում Երևանի հարկերից մեկը Ֆրանսիայի ճանապարհորդ Եսթրեկին հաղթել է եղած ավանդույթյունը (տե՛ս «Историческое Шардена по Закавказью в 1672—1673 гг.», էջ 244, X. Ф. Б. Липин, Армения, т. I, էջ 273):

⁶ Ղուկա Ռեկեան, Նախադասություն աշխարհագրական Հայաստանաց աշխարհի, 5, առաջին, Վենետիկ, 1735, էջ 273—274, Ստորագրություն հին Հայաստանաց, Վենետիկ, 1822, էջ 453:

նկատել է մեր այսօրվա մայրաքաղաքի կողմերում և բացականչել՝ «երկաց», որ իր գրանից էլ առաջացել է նրա անունը: Ղ. Բեհնյանից հետո Երևանի անվան ծագման մասին այդ ավանդությունները բնագունելու իրենց աշխատություններում որոշ տարբերակներով հետազոտողներն են հաղորդել Հարսուհատուզներ, Մեսրոպ Ամրատյանցը, Լիկը և ուրիշներ¹:

Սակայն հեղինակների մեծ մասը Երևանի անվան ծագման ազդրիսի բացատրությունը համարել է կասկածելի, անհավանական, կամ միանգամից ժխտել և որոշ դեպքերում առաջ քաշել այնպիսի հավանական նոր ստեղծված Այս հեղինակների թվին են պատկանում Նովճանեն Շահաթունյանցը, Խաչատուր Արտվյանը, Էփրիկյանը, Հ. Հյուրշմանը, Համբարձում Առաքելյանը, Երվանդ Շահադիզը² և այժմյան հեղինակները բոլորը, առանց բացատրության ինչ խոսք, նշված ավանդությանը չի կարելի բացատրել Երևանի անվան ծագումը, թեև որը հենց այն պատճառով, որ մեր գրավոր և այլ կարգի սկզբնաղբյուրներում այդ մասին ոչինչ չի ասվում: Ավանդության արժեքը սակայն կայանում է նրանում, որ այն Երևանի անվան (հետևապես և այդ անունով բնակավայրի) առաջացումը կապում է հնագույն ժամանակների հետ, որը, ինչպես կանանկը, հաստատվել է մեր օրերում՝ վերջին տասնամյակների ընթացքում³:

Նախկինում Երևանի անվան ծագման մասին գոյություն է ունեցել նաև օտարաժմի մի ուրիշ ավանդություն, որը բոլորովին անընդունելի է: Ըստ այդ ավանդության, իրր այս քաղաքը Երևան է կոչվել Շահ-Իսմայիլի ժամանակների (1502—1524) խաներից մեկի՝ Ռեան-գուլի-խանի անունով: Պարսկա-թուրքական այդ ավանդության համաձայն իրր Ռեան-խանն է առաջին անգամ այս քաղաքում կառուցել բերդ, ամրացրել այն և իր անունով էլ ամրոց

քաղաքը կոչել: Սու. Զեյնալին վկայում է թաթարական (ազրեր-չանական) մի այլ ավանդության մասին, որը դարձավ կապված է Երևանի անվան ծագման և իմաստի հետև նա գրում է, որ «թաթարներն այդ քաղաքը կոչում են Բրավան ... և նրա անունը բխեցնում այա-ռեվան բառերից, որ նշանակում է «հասում էն»⁴: Թև առաջինը և թև այս վերջին ավանդությունը չունեն պատմական ու լեզվաբանական որևէ հիմք: Երևանն ու նրա բերդը գոյություն են ունեցել վաղ ժամանակներից, Ռեան-գուլի-խանից բազմաթիվ դարեր առաջ: Հետևապես այդ քաղաքի ու բերդի անունը չեն կարող ծագել Ռեան-խանի անունից: Հավանաբար ճիշտ հակառակ է տեղի ունեցել՝ խանն է իր անունը կոչել քաղաքի անունով: Պարզապես անտիպուն է նաև քաղաքի անունը «այա-ռեան» բառերով բացատրել⁵:

Սկսած Հակոբ Նալբանդի ու Միքայել Չամչյանից և վերջացած XX դարի սկզբների մի շարք հեղինակներով, Երևան անվան ծագումը կապել են Երվանդի անվան հետ: Սկիզբյանների զերիշխանության ժամանակ Այրարատյան աշխարհում թագավորող Երվանդյան հարստության այն վերջին թագավորի անվան հետ, որին պարտության մատնեց ու այդ հարստությունը վերացրեց Արտաշեսը՝ Արտաշեսյան հարստության հիմնադիրը: Գրանցից ոմանք ուղղակի ենթադրել են, որ Երևանը նշված Երվանդի կառուցած Երվանդաշատ մայրաքաղաքն է (Հակոբ Նալբան), ոմանք նույնացրել են

ուղալու լինելու հետևանքով) Նույնպես հասուի կարծիք չկա: Նա մի անգ վերադասում է Նոյ Նահապետի հետ կապված ավանդությունը և այն թերևս իրավապես համարում անհավանական: Սակայն, իրր իր այդ կարծիքի հաստատում վերջնական է ոչ թե որևէ փաստ կամ իրողություն, այլ հայաբարբառ է, թև երեզվաբանները չը կարող առաջանալ հայերեն «երևան» բառից, որովհետև իրր «հայեր լեզուն նորագույն (լեզու) է և սրանից 700 տարի առաջ հայերն չկրն նշում և իրավաբաններն անհավանական է համարում նաև Երևանը Պարզեթոսի հիմնադրած Տերվա քաղաքի, ինչպես և Արտաշատի կամ Կաղարաջապոտի հետ նույնացնելը, որ ենթադրել են որոշ հեղինակներ: Բայց անհերքելի է և իր ենթադրությունը, ըստ որի, իրր Երևանը չը կարող հիմնադրված լինել արաբական նվաճումներից առաջ (անհ. Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., էջ 243—245):

¹ Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 309, Խ. Փ. Բ. Լյուչ, Արմենյա, տ. 1, էջ 274, Համբարձում Առաքելյան, Հանրագիտական բառարան, տ. 1, էջ 602, և այլն:

² Շ. Շելինский, Город Эривань („Сборник мат. дая опис. мест. II из. Кавказа“, вып. 1, отд. 1, էջ 2):

³ Պատմ. պարզունակ ու անընդունելի չէ նաև Գ. Ա. Մարտիչյանի ենթադրական ստուգաբանությունը, ըստ որի «Երևան բառն ավելի դեռ է նշանակի (Այրվան), գծերը կամ գծերաբաղաբառ: Նա նշում է նաև պարսկական մի առած-գրոյնը:

¹ Барон Август фон Гакстгаузен, Закавказский край, ч. 1, С. Петербург, 1857, էջ 163. Եսուրդը աղխարեզույն Արբասանը. Տեղեկությունը Գեղարքունիքի ժողովարար գաւառի, էջ 5, Խ. Փ. Բ. Լյուչ, Արմենյա, տ. 1, էջ 273, և այլն:

² Նովն. Նանիարունյանց, Ասորագրություն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, տ. 11, էջմիածնի, 1842, էջ 136, և, Արտվյան, Համաստա պատմական ակնարկ Երևան քաղաքի (Երեզիլ իրախատար ժողովածու ուր հասարակ, տ. VIII, Երևան, 1958, էջ 287), Հ. Ս. Եփրիկյան, Քաշխարհիկ բարբառներ, էջ 694, Հ. Հյուրշման, Հին հայոց տեղւոյ անունները, Կիևենա, 1907, էջ 341, Համբարձում Առաքելյան, Հանրագիտական բառարան, տ. 1, Քիթիլու, 1915, էջ 602, Եզվանդ Շահադիզ, Հին Երևանը, էջ 7 և այլն:

³ Երևանի հետխան ու նրա անվան ծագման մասին Եսուրդի մաս (Հավանաբար աղբյուրների հավաստյան հաղորդումների և հայոց պատմությանը թիշ

արտեղ Հաներբարը այցելել է Տրզոսին¹։ Ինչպես տեսնում ենք, Հարատասուզներ պարզապես շփոթել է միանգամայն տարբեր բաղաձայնի իրար հետ։ Բայց մենք այդ ուշադրության առանք միայն այն նկատառումով, որ Հարատասուզներ հաղորդած տեղեկություններն արժանաչան հեղինակների համար հաճախ մտառայել են ստույգ հաղորդումներ հայագիտական զանազան հարցերի մասին դատողություններ անելիս։

Երևանի անվան ծագումը լուսարաննչու իսկական գիտական փորձերը սկսվեցին միայն XIX դարի վերջերից, երբ Հասիատանի տերիտորիայում հարտեարեղոված էին ուրարտական սեպագիր բաղմաթիվ արձանագրություններ, ամրոցների ու այլ կարգի բնակավայրերի ավերակներ, և երբ ուրարտագիտությունն արդեն ձևավորվում էր որպես պատմա-հնագիտական մի առանձին գիտություն՝ առաջ բաշխելով ու մասամբ լուծելով սուղուղիմեջնական, պատմական և հնարանական բազմաթիվ հարցեր։ Կես այդ ժամանակներից արդեն հայտնի դարձավ, որ Հայաստանի աշխարհագրական տեղագրական բազմաթիվ անուններ (Տայր, Հանձիթ, Արանանի, Ծոփք, Գան, Ապանանիք և այլն, և այլն) մի փոքր այլ տառադարձություններով գոյություն են ունեցել ուրարտական և զրան նախորդած ինքնա-խորհրդական ժամանակներից, երբ հայկական ցեղերի զբաղված տերիտորիաները միավորված էին ցեղակից խորհրդների և զրան հաղորդած ուրարտացիների-բիանիացիների պատությունների կողմից։

Ուստի միանգամայն տրամաբանական է հայկական աշխարհագրական հին անունների մի մասը ուրարտական ժամանակների հետ կապելը։ Այդ կարգի անունների թվում է նաև մեր մայրաքաղաք Երևանը։ Ընդ որում սկզբնական շրջանում Երևան անունը սերած էին համարում ուրարտական էրիաինի երկրանունից, իսկ վերջին ժամանակներս արդեն հիմնավոր փաստերով Երևանի անունը կապում են էրբումի ամրոց-քաղաքի անվան հետ։

Արդ զրանք քննարկենք առանձին-առանձին։

Երևանի անվան ծագումը ուրարտական էրիաինի (կամ Երիաինի) երկրանվան հետ առաջին անգամ կապել է ռուս հայտնի հնագետ Մ. Վ. Նիկոլսկին²։ Ուրարտական էրիաինի (Eriaini) անունը

հիշատակված է Սեանա լճի հարավային ափին գտնվող Սոլիխար գյուղում (Մարտունու շրջան) Ռուսա I թագավորի թողած սեպագիր արձանագրության մեջ, ուրարտական 22 այլ երկրանունների հետ միասին³։ Մ. Նիկոլսկին այդ երկիրը տեղագրում է այժմյան Երևանի շրջակայքում, վերջինս նույնացնում էրիաինի երկրանվան հետ՝ համարելով նրա համանուն կենտրոնը։ Նա էրիաինի ամրոց-քաղաքը տեղագրում է այժմյան Երևանի հարավ-արևելյան կողմում գտնվող Արին-բեդք բլրի վրա, որտեղ Ա. Բովանովսկին առաջին անգամ հետազոտել ու նկարագրել է ուրարտական հնագույն ամրոցի ավերակները⁴։ Որ Արին-բեդքի տեղում ուրարտացիների օրոք գոյություն է ունեցել հայտնի ամրոց-քաղաք և զրանից է սերել այժմյան Երևանը, մենք մանրամասը կտեսնենք հետո, բայց անընդունելի է Նիկոլսկու տեսակետի այն մասը, թե Երևանի անունը ծագել է էրիաինից և որ վերջինս իր գտնվում էր այժմյան Երևանի շրջակայքում⁵։ Ի. Ի. Մեշչանինովը և Գ. Մ. Մելիքիշվիլին էրիաինի երկիրը և համանուն ամրոց-քաղաքը տեղագրում են Սեանա լճից հյուսիս-արևելք ընկած լեռնային շրջանում։ Էրիաինի ամրոցն ու երկիրը այդ նույն տեղում է տեղագրում նաև Գր. Ղափանցյանը, այն համարելով էրիա (eria, aria) ցեղի երկիրը, միաժամանակ նշելով, որ որոշ ռուսումասիրողներ մերձերևանյան էրիաինի քաղաքը համարում են էրիախի (Eriaxi) տարբերակը և զորանով իսկ էրիաինին հնչյունականությամբ նույնացրել ուրարտականց երևանի հետ⁶։ Այնուհետև, ակնհայտոր ուրարտագետը նշում է, որ հնարավոր է Երևանի անունն առաջացած լինի егг(а)+аван օայտնչի՝ «егг—երկիր»-ից, որը հայերենում հետագայում կարող էր դառնալ Երևան (Erewan)⁷։ Բայց պրոֆ. Գր. Ղափանցյանը ստանց վերապահություն չի բերում այդ տեսակետը՝ նա էրիաինի երկիրը, որը ոմանք համարել են էրիաինի տարբերակը, փաստերի հիման վրա տեղագրում է այժմյան Լենինականի շրջակայքում, իսկ Երևանի անունը այդ ցեղի ու երկրի անվան հետ կապելը համարում չափազանց վիճելի։ Նա գրում է, որ «Երևանի անունը էրիա

¹ Մովսեսի սեպագիր արձանագրության տեքստը տես՝ Բ. Բ. Пютровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 81։

² Տե՛ս՝ «Материалы археологии Кавказа», вып. V, էջ 97—98։

³ Гр. Капанян, Историко-лингвистическое значение топонимии древней Армении (Երևանի պետամալարտանի «Գիտաշխատություններ», 1940, հ. 14, էջ 321—322)։

⁴ Տե՛ս՝ Երևանի պետամալարտանի «Գիտաշխատություններ», 1940, հ. 14, էջ 322։

¹ Բ. А. фон Гакстаузен, Закавказский край, ч. 1, էջ 164։

² Տե՛ս՝ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья, «Материалы археологии Кавказа», вып. V, Москва, 1896, էջ 97։ Հմտ. Առս. Հայոց պատմություն, 1. Թիֆլիս, 1917, էջ 236։

(eria) ցեղի անվան հետ կապելու գնացումը պետք է ընդունել eria ցեղի մի մասի գոյությունը ժամանակակից Երևանի շրջակայքում, որը, անշուշտ, շատ առեղծվածային է¹։

Մ. Նիկոլսկու տեսակետը ավելի փոքր վերապահություններ էն ընդունել Հ. Սանդաղյանը, Ե. Շահադիզը² և ուրիշ հեղինակներ, իսկ խաչիկ Սամվելյանը³ և մի քանի այլ հետազոտողներ, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են այդ հարցին՝ նրա ենթադրությունն ընդունել են առանց վերապահությունների։

Այժմ արդեն Մ. Նիկոլսկու տեսակետը համարվում է հնացած։ Ուրարտագիտությունը մյուս բնագավառների հետ միասին հսկայական նյութեր է կուտակել նաև Երևան քաղաքի հիմնադրման, անվան, տեղադրության և հնագույն շրջանի պատմության վերաբերյալ։ Այնուամենայնիվ շատ զեկրերում Մ. Նիկոլսկու նկարագրությունները, հավաքած նյութերը և կուսումները հիմքեր են ծառայում նույնիսկ այժմյան զարգացած ուրարտագիտության համար։ Ինչ վերաբերում է Երևանի մասին արտահայտած նրա կարծիքին, ապա այդ հարցում միանգամայն համամիտ ենք ուրարտագետ Ն. Հարությունյանի հետ, որը գրում է, թե Մ. Նիկոլսկին «դեռևս անցյալ դարի վերջերին րավական սրամիտ ձևով կուսակ է, թե նախ՝ Երևանը նույնքան հին է, որքան պատմական Ուրարտուն և ապա՝ հնագույն Երևանը պետք է որոնել ուրարտական երբմանի քաղաք-ամրոց Արին-բերդի տեղում»⁴։ Այլ կերպ ասած, Մ. Նիկոլսկին արդեն հշտորեն կուսակ է հնագույն Երևանի աշխարհագրական նշարիտ դիրքը և նրա առաջնայու մտավոր ժամանակը։

Էրիսիի ուրարտական պալատավոր երկրանունը Երևանի անվան հետ նույնացնելու տեսակետի զեմ առարկել է Բ. Բ. Պիտրովսկին։ Նա ընդունելով, որ ուրարտական րավաթիվ անուններ որոշ ձևափոխություններով պահպանվել են նաև հետագայում, գրա հետ միաժամանակ վճարաբ ժխտում է Գ. Ա. Խալաթյանի կողմից հայկական աշխարհագրական մի քանի անունների նույնացումը ուրարտական մեղ հայտնի հնչյունական տեսակետից գրանց նման անունների հետ։ Նա առանձնապես նշում է, որ րացարձակ անընդ-

տություն է «Երևանի անունը Մովսեսի արձանագրության (մեշ) հիշատակված էրիա...իի երկրի պալատավոր անվան հետ նույնացնելը»⁵։

Բ. Բ. Պիտրովսկու այդ կոսումը եղում է իրական դրություններից և փաստերի արամարանական ըմբռնությունից։ Միայն հնչյունական նմանությունները իրոք որ բոլոր զեպերում չեն կարող կուսված ծառայել ուրարտական ու հայկական անունները նույնացնելու համար։ Մենք տեսանք, որ էրիսիի երկիրը (եթե այն համարենք նույն էրիսիին) գտնվում էր այժմյան լենինականի շրջակայքում կամ Սևանա լճի հյուսիս-արևելյան կողմում։ Հետևապես ոչ մի հիմք ու փաստ չկա այդ երկրանունը նույնացնելու Երևանի հետ, որի գրաված շրջանը, ինչպես կուսենք հետո, միանգամայն այլ երկրի մեջ էր մանում։ Այսուհանդերձ, մեր կարծիքով, պետք է նկատի առնվի նաև այն, որ Ռուսա I-ի (730—714 թթ. մ. թ. ա.) ծովախորյան արձանագրության մեջ հիշատակված նրա կողմից նոր գրավված 23 երկրների թվին պատկանող էրիսիին չէր կարող Երևանի շրջակայքում լինել, որն ուրարտացիների կողմից գրավված էր գրանից տասնյակ տարիներ առաջ՝ Արգիշտի I-ի ժամանակներից։

Արագիսով, կարծես մի կարճատև ու յուրահատուկ փակուղու առաջ կանգնեց այս հարցը։ Երևանի անունը էրիսիիիի հետ կապելու նախկին տեսակետը ժխտված էր, իսկ նորը և ավելի ընդունելին զեռես գոյություն չունեի։

Ճարտարապետ-պատմաբան Կ. Լ. Հովհաննիսյանը 1950 թ. սեպտեմբերի 25-ին, Երևանի հարավ-արևելյան կողմում՝ նոր Արեշ ավանի մոտ, Արին-բերդ բլրի վրա հայտնաբերում է երկու արձանագրություն⁶, որոնք փորագրված են րավաթի վրա և այժմ գտնվում են Երևանի պետական պատմական թանգարանում։ Այդ արձանագրությունների մասին կուսելու զեմ նշենք, որ գրանցից մեկում ուրարտական Արգիշտի I թագավորը գրում է, որ ինքն այդ հույակապ բերդը կուսուցեց և այն կուցել էրբունի (ընթերցվում է նաև Իրունի, էրունի, Իրյունի, Երբունի և այլն)։ Այդ երկու րավաթ նագրությունների վերձանմանը և ուսումնասիրությանը նվիրված մի հոդվածով 1951 թվականին հանդես է գալիս ուրարտագետ

¹ Երևանի պետամալարանի «հիտաշխատություններ», 1940, հ. 14, էջ 322։

² ՏՊ՝ Յ. Տանդաղյան, Les Inscriptions cuneiformes urartuques, Venise, 1900, էջ 336, նովանց նաչադից, հին Երևանը, էջ 7։

³ ՏՊ՝ խաչիկ Սամվելյան, Հին Հայաստանի կուսություն, հ. 1, էջ 52։

⁴ Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շարքը, «Պատմա-րանաիրական հանգես», Երևան, 1958, № 2—3, էջ 79։

⁵ ՏՊ՝ «Древний Восток», II, 2, էջ 121։

⁶ Բ. Բ. Пётровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 27։

⁷ ՏՊ՝ «Սովետական Հայաստան» (րագիթ), 1950, № 234, «Коммунист» (газета), Ереван, 1950, № 235։

մարդարիտա Բարայելյանը¹։ Նա նշված երկու արձանագրությունների նախնական ուսումնասիրությունից զալիս է կարևոր մտահանգումների, որոնցից մեկը ամենիշատիս անշուշտ է՝ Երևանի հետ։ «Արին-բերդի այս երկու արձանագրությունները,—գրում է նա,— թե՛ իրենց հայանարեթման փաստով և թե՛ իրենց բովանդակությամբ պատմական գիտական խոշոր արժեք ունեն։ Պարզվում է, որ Արզիշտի I-ի կառուցած Իրրունիի կղզի է բերդ-Բաղը և գտնվել է Երևանի մերձակայքում։ Իրրունիում (այսօրայս Արին-բերդում) ոչ միայն Արզիշտին, այլև Սարգուր II կառուցել են [▲] Ե՛րև, կատարվել են այլ հզոր ձևափոխություններ²։ Այդ, ինչպես և լեզվարանական-հնչյունաբանական խրոդոլոգիաները նկատի ունենալով՝ Մ. Բարայելյանը, ճիշտ է տողատակ և բավական զգուշավորությամբ, առաջ է քաշում նոր կարծիք այժմյան Երևանը ուրարտական Էրբունի կամ Էրբունի ամրոց-քաղաքի հետ նույնացնելու մասին։ Նա այդ հայանի ժանտիպագրության մեջ գրում է. «Արջոյր հնարավոր չէ երևան անունը սերել ուրարտական Իրբունի (Erbuni)³-ից, հայտնի է, որ ուրարտական **h** հայերենում ստորաբար տալիս է **W** (վ), ինչպես **Biaina** > **վան**, **ebani** > **ավան**, **abili** > **ավիլ** և այլն. Իրբուն(i) (Erbuni) > Իրվունի > Էրվունի, որ հեշտությամբ կարող է գտնուել Երևան, անմալանդ, որ ուրարտական Իրրունի քաղաքը հենց կպած է Երևանին, իսկ հանրահայտ է, որ ստորաբար տեղանունները պահպանողական են»⁴։

Այդ դիտական ճիշտ ենթադրության օգտին՝ նույն թվականին, Մ. Բարայելյանից մի քանի ամիս առաջ հանդես է գալիս պատմաբան Արմենակ Միրզախան, որը խոսելով այդ հարցի առթիվ եղած բոլոր տեսակետների մասին՝ սկսած նույն հետ կապված ավանդությունից մինչև Մ. Բարայելյանի արտահայտած նորագույն ու ճիշտ կարծիքը՝ ընդունում է վերջինի և այն ավելի հավանական դարձնում մի քանի կողմնակի փաստերով ու գիտություններով։ Նա գրում է, որ «պետք է հավանական համարել այն ենթադրությունը, որ Երևան անունը սերել է Իրբունի անունից և Իրբունի քաղաքը

հնագույն Երևանն է... Սակայն այդ հավանական ենթադրությունը... անհրաժեշտ է հնագիտական և լեզվաբանական նոր փաստերով հանդամանորեն հիմնավորել»⁵։

Մ. Բարայելյանի և Ա. Միրզախանի ենթադրությունները հավանական է համարել Բ. Բ. Պետրոսյանին դեռևս 1955 թվականին, Կարմիր-բլուրի պեղումների արդյունքների հերթական (երրորդ) պահում⁶։ Հենվելով հնագիտական ու լեզվա-հնչյունաբանական տվյալների վրա՝ ակնույթոր ուրարտագետը գրում է, որ Երևան բառի անունը ուրարտական Իրրունի (այժմյան ճշգրիտ ընթերցմամբ՝ Երբունի) անունից ծագելու մասին Մ. Ա. Բարայելյանի և Ա. Բ. Միրզախանի ենթադրությունը միանգամայն հավանական է։ Նա նույն այդ կարծիքն է արտահայտում (բայց մի փոքր ավելի զգուշավոր) նաև իր «Ուրարտուի պատմությունը և կուլտուրան» աշխատության վերահրատարակության մեջ⁷։

Այդ տեսակետը Վանի, Արին-բերդի արձանագրությունների և այլ բազմաթիվ փաստերի վրա խարսխված ավելի հիմնավոր է դարձրել Ն. Հարությունյանը⁸, Երևան քաղաքի հիմնադրմանը նվիրված ընդարձակ ու մանրակրիտ հոդվածի մեջ։ Նրանից դեռ առաջ (1954 թ.) Երևանի հիմնադրման նույն հարցի վերաբերյալ հոդված է գրել նաև Քյունիզը⁹, որը նույնպես ընդունում է Երևանը Էրբունիի հետ նույնացնելը։

Այժմ, գրեթե առանց բացառության, բոլոր մասնագետները ընդունում են Երևանը ուրարտական Էրբունի (Երբունի) ամրոց-քաղաքից սերած լինելը, դրանք իրար հետ նույնացնելը։ Ընդ որում, դրանցից շատերը այն ընդունում են առանց որևէ վերադասության Օրինակ՝ Բ. Ասարելյանը ուղղակի գրում է. «Երևան անունը» ինչպես պարզված է, ծագում է ուրարտական Էրբունի բերդի անունից, որի մնացորդները գտնվում են քաղաքի հարավ-արևելյան ծայրին (Արին-բերդ)»¹⁰։ Իսկ Կ. Լ. Հովհաննիսյանը, որ այնքան

¹ 2000 ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ), 1951, № 11, էջ 99.

² ՏՆ՝ Կարմիր-ճար, III, Բ. Բ. Пётровский, Результаты работ... 1951—1953 гг., Ереван, 1955.

³ ՏՆ՝ նույն տեղում, էջ 27.

⁴ ՏՆ՝ Բ. Բ. Пётровский, Ванское царство (Урарту), Москва, 1959, էջ 31.

⁵ Կ. Վ. Зюнглер, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1959, № 2—3.

⁶ Die Gründung der Stadt Erevan (ca 785 v. c.), von F. W. König.

«Հանդես ամսագրայ», 1934, № 7—8, էջ 285—294.

⁷ Քարկեն Ասուխյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, Հ. Մ., Երևան, 1964, էջ 86.

¹ Մ. Բարայելյան, Ուրարտական երկու նոր արձանագրություններ, «Տեղեկագիր» 2000 ԳԱ (հաս. գիտություններ), 1951, № 8, էջ 89—97.

² Նույն տեղում, էջ 97.

³ Հնագույնում դրած իր հոդվածներից մեկում Մ. Բարայելյանը ենթադրել է, որ Էրբունի (erbuni) ուրարտերեն պետք է կապելի «Հալիանակի» (տե՛ս Հայրենիքի ժամյա լրագիր, Երևան, 1966, № 5, 30 հունվարի)։

⁴ 2000 ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ), 1951, № 8, էջ 97.

մանրամասնությամբ ուսումնասիրել է էրեբունիի ու Քելշեբախի ճարտարապետությունը, հնագույն Երևանը ուրարտական էրեբունիի հետ նույնացնելու հարցը համարում է միանգամայն լուծված և նշում, որ էրեբունիի հետագայում էլ դարձրե շարունակ գոյություն է ունեցել և նրա գրաված տարածությունն էլ ամփոփվել է ժամանակակից Երևանի գրաված շրջանի մեջ։ Նա գրում է, որ «էրեբունիի կառուցման ժամանակը կարելի է համարել Երևանի հիմնադրման ժամանակը, որը, մեզ թվում է, տեղափոխվել է դեպի հյուսիսարևմուտք, և այդպե, ընդարձակումից հետո, նորից իր մեջ ընդգրկել սկզբնական կորիզը»¹։

Նմ ախպես, էրեբունիի հնագույն Երևանն է։

Այժմ տեսնենք երբ է հիմնադրվել մեր մայրաքաղաք էրեբունի-Երևանը և այն ինչ էր իրենից ներկայացնում VIII—VI դարերում (ժ. թ. ա.)։

էրեբունի—Երևան քաղաքի հիմնադրման ժամանակն ու նպատակը և աշխարհագրական ճշգրիտ դիրքը բալլ առ բալլ սկսեցին պարզաբանել դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից, երբ այժմյան Երևանի հարավ-արևելյան մասում, Արին-բերդ բլրի վրա հայտնաբերվեց այդ քաղաքին վերաբերող ուրարտական առաջին արձանագրությունը։

1894 թվականի ամռանը Մոսկվայի հնագիտական արքայական կոլեկտիվյան իսկական անդամ Ա. Ա. Իվանովսկին Անդրկովկասում կատարած գիտարշավի ընթացքում ձեռք է բերում ուրարտական սեպագիր մի արձանագրություն, որը հայտնաբերել էր նորբերդի Տեր-Ավետիսյանը զրանից 15 տարի առաջ։ Վերջինս տեղեկացնում է Ա. Ա. Իվանովսկուն, որ ինքն այդ արձանագրությունը գտել է Արին-բերդ (Վանիլ-Քափա) բլրի մոտ վար անելիս²։ Ա. Իվանովսկին ասանց ժամանակ կորցնելու հետազոտում է Արին-բերդ բլուրը ու նրա շրջակայքը, նկարագրելով ուրարտական վաղնիք բերդի ավերակները՝ զրանց գրոված տարածությունը, դիրքը, վիճակը և այլն։ Արձանագրությունը փորագրված է մի ոչ մեծ բազալտյա բարի վրա և բաղկացած է չորս ստորից։ Այն ուղարկվում է Մոսկվա,

որտեղ Մ. Վ. Նիկոլսկին, օգտվելով պրոֆ. Գ. Մյունլերի և պրոֆ. Ա. Ն. Սեչյուի կողմից համանման արձանագրությունների վերծանման փորձից՝ վերականգնում է բավական եղծված այդ արձանագրությունը և նրա տեքստը ընթերցում հետևյալ կերպ.

«Արգիշտին, Մենուայի որդին, կառուցեց այս բերդը այս 10 100 քարից»³։

Հետագայում այդ արձանագրության վերծանումն ավելի մշտելից, ուրարտական մի շարք բառերի իմաստը այլ արձանագրությունների միջոցով հայտնի գտնալու շնորհիվ։ Ուրարտագիտնների հայտնի դարձավ, որ «ATI»-ին ոչ թե բերդ կամ քաղաք իմաստ ունի, այլ պահեստի լատ այգմ էլ, Արգիշտիի այդ արձանագրությունը ազդարարում էր ոչ թե քաղաքի, այլ լող զորևի մի պահեստի կառուցման մասին, որը կարող էր տեղադրվել 10100 «կապի» քանի։ Մ. Նիկոլսկին ևս բաշ զիտեր, որ իր կատարած վերծանումն ունի թերություններ, բայց այդ նրան ամենին չի խանգարել Մոսկվայի ու Արին-բերդի նշված արձանագրությունների հիման վրա բնորոշելու այժմյան Երևանի հարավ-արևելյան ծայրաշրջանում ուրարտական բերդի գոյությունը, որի մասին ավելց վերև Արին-բերդի արձանագրության ընթերցումը նրան հնարավորություն տվեց իմանալ, որ այդ բերդը (որի անունը արձանագրության մեջ չի նշված) կառուցել է Արգիշտին, Մենուայի որդին, ինչպես հետագայում ճշտվեց մի շարք նյութերով ու ուսումնասիրություններով։

էրեբունի—Երևանի հիմնադրման հետ կապված հարցերի պարզաբանման համար հույժ կարևոր նշանակություն ունի նաև վանի ստորը Մահակ էկեղեցում հայտնաբերված ուրարտական մի արձանագրություն, որը երկու անգամ (1898/1899 և 1900 թթ.) հրատարակվել է հայտնի ուրարտագետ Լեման-Հաուպտի կողմից⁴։ Այս արձանագրությունը, որը Արգիշտի I-ի հռոսթոսյան տարեգրության կրկնօրինակներից մեկն է, հնարավորություն է տվել որոշելու էրեբունի բերդ-քաղաքի հիմնադրման ժամանակը և կառուցման հանգամանքները։

Ինչպես ասվեց, 1950 թվականի սեպտեմբերի 25-ին ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը և Ա. Պողոսյանը Արին-բերդ բլուրի վրա

¹ Арин-берд I, К. П. Отанесян, Архитектура Эребуни по материалам раскопок 1950—1959 гг., Ереван, 1961, էջ 13։

² Տե՛ս Մ. Վ. Никольский, Клинообразная надпись из Гавли-тапа около Эривани, Москва, 1894, էջ 1։ Միտրոպոլ արքեպիսկոպոս Մկրտչյանը և նրան հետևելով նաև Լեման, այդ արձանագրության գտնելու պատվի վերաբերում են նույն ստորեջի նազար Մաթևոսյանին (Միտրոպ Մկրտչյանց, Գեղարքունիք..., էջ 177, Լեմ. Հայոց պատմություն, 5. 1, Թիֆլիս, 1917, էջ 16)։

³ М. В. Никольский, Клинообразная надпись из Гавли-тапа около Эривани, էջ 1—2; Տե՛ս նաև «Արագած» լրագիր, Արևածաղկաբերդ, 1912, № 8, 29-ին հունվարի։

⁴ Տե՛ս Ն. Վ. Հաուսպտյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցը լուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 81։

(նոր Արեւ զտղի մտ) հայտնաբերել են ուրարտական երկու արձանագրութիւն, երկուսն էլ բազալտ բարի վրա¹: Գրանցից տաշինք լավ է պահպանվել և բաղկացած է 13 սողից, իսկ երկրորդը՝ եղծված է, ենթադրվում է, որ այն բաղկացած է եղել 11 սողից²:

Սոսոսույան տարեգրութեան նշված արձանագրութիւնը և 1950 թվականին հայտնաբերված արձանագրութիւններից առաջինը օժանդակ մի շարք նյութերի հետ միասին կոպան են ժառանգել ուրարտականը Քյոնիգի և Ն. Հարութիւնյանի համար էրեբունի³—Երեւանի բաղաբի հիմնադրման ժամանակը որոշելու: Ուստի մեր աշխատութեան համար շահավետ են համարում զետեղել այդ արձանագրութիւնների թարգմանութիւնները՝ ժամանակակից վերծանութիւնների հիման վրա:

ա) ԽԱՌԽՈՒՅԱՆ ԱՐՃԱՆԱԳՐՈՒՅԻՆՈՒՆ.

«Սաղ աստուծու հրամանով Արգիշտին, Մենուայի որդին, ասում է. Իրպունի (Իրբունի, էրեբունի—Ք. Հ.) բազալտ կառուցեցի Բիաինիյի երկրի հզորութեան համար (և) թշնամական երկրի խաղաղանքան (?) համար: Հորը ամայի էր (?) (և) այնտեղ (սաղա) ոչինչ չկար կառուցված: Հորը դործեր են այնտեղ կատարեցի: Խասն (և) Սոպանի երկրներից են այնտեղ 6 (?) հարար 600 զինվորներ բնակեցրի»⁴:

բ) ԱՐԻՆ-ՔԵՐԴԻ 1950 թվականին հայտնաբերված I-ին արձանագրութիւն.

«Սաղ աստուծու մեծութեամբ Արգիշտին, Մենուայի որդին, այս հոյակապ (?) բերքը կառուցեցի. (նրա համար) սահմանեցի Իրպունի⁵. (այն կառուցեցի) Բիաինիյի երկրի հզորութեան համար (և) թշնամական երկրների խաղաղանքան (?) համար: Արգիշտին ասում է. երկիրը ամայի էր, հորը դործեր են այնտեղ կատարեցի:

Սաղ աստուծու մեծութեամբ Արգիշտի, Մենուայի որդի, թագավոր հորը, թագավոր Բիաինիյի երկրի, իշխող Տուշպա բազալտի»⁶:

¹ SKA «Սովետական Հայաստան (ըստի), 1950, № 234, «Коммунист» (газета), Ереван, 1950, № 235:

² Մ. Բուսիյան, Ուրարտական երկու նոր արձանագրութիւններ, «Տեղեկագիր» ՀՍՍՔ ԳԱ (Հաս. գիտ.), 1951, № 8, էջ 89—95:

³ Տե՛ս Գ. Ա. Меликшияни, Урартские глинообразные надписи, Москва, 1960, էջ 237:

⁴ Մ. Բուսիյանը ընթերցում է «Երբունի» (ընթերցում է նաև էրեբունի, Երեբունի, Իրբունի), որը ավելի ճիշտ է և բնագրում է գրեթե բոլոր ուրարտագիտների կողմից:

⁵ Գ. Ա. Меликшияни, Урартские глинообразные надписи, էջ 264:

Ինչպես տեսնում ենք, Սոսոսույան արձանագրութեան մեջ էրեբունի—Երեւանի հիմնադիրը հիշատակում է, որ ինքը կառուցել է էրեբունի բաղաբը և այնտեղ բնակեցրել է Խասն (ենթերի երկրից), որը տարածվում էր Հայկու կամ Ալիսու (այժմ Կզըլ-բարմաբ) գետի ավազանում) և Սոպանի (հին Հայկական Սոփեր՝ պատմական հայտնաբերված արձանագրութիւնները, եղել են ստրկացված սաղմազերիներ: Այնուհետև, նորբեցիների և 1950 թվականին հայտնաբերված արձանագրութիւնները մեկերգմիշտ ցույց տվեցին էրեբունի—Երեւանի ճշգրիտ տեղը, նրա աշխարհագրական դիրքը, որի մասին արգեն նշվել է:

Մի փոքր ավելի բարձր է այդ հնագույն բաղաբի հիմնադրման ժամանակն հետ կապված հարցը, որը և դարձնում է ուրարտագիտների ուսումնասիրութեան առարկաներից մեկը:

Առաջին այդ հարցի առթիվ հանդես է կելլ գերմանացի Ֆ. Վ. Քյոնիգը: Նա համարելով գյուլթիւն ունեցող ուրարտացիները պագրի արձանագրութիւններն ու այլ կարգի սկզբնադրութիւնները գալիս է այն կարգակարգութեան, որ Երեւան—էրեբունի բաղաբը հիմնադրվել է 785 թվականին (մ. թ. ա.) Արգիշտի I-ի կողմից¹:

Նույն հարցի մասին, դրանից մի քանի տարի անց հատուկ հոդված է գրում ուրարտագետ Ն. Վ. Հարութիւնյանը: Նա բարեխիղճ բանասերի համբերությամբ քննարկման է ենթարկել բոլոր այն աղբյուրներն ու հիշատակութիւնները, որոնք այս կամ այն շափով կապված են էրեբունի—Երեւան բաղաբի հիմնադրման հետ: Առանձնապես ուշադրութիւն դարձնելով Արգիշտի I-ի Սոսոսույան տարեգրութեան վրա, Ն. Հարութիւնյանը գայիս է այն կարգապետութեան, որ էրեբունի բաղաբի հիմնադրման (կառուցման) մասին թյան, որ էրեբունի բաղաբի հիմնադրմանը, որով ազդարարվում է Խասն ու նրա թողած արձանագրութիւնը, որով ազդարարվեցին 6600 սաղմիկներ Սոպանի երկրներից վերցված սաղմազերիներից 6600 սաղմիկներ էրեբունիի կառուցման համար ուղարկելու մասին, վերաբերում է նրա թագավորութեան 5-րդ տարեան: այսինքն՝ 782 թվականին²:

Քայլ երբունի—էրբունի—ից Մ. Բուսիյանի ընթերցման մեջ (տե՛ս «Տեղեկագիր» ՀՍՍՔ ԳԱ, 1951, № 8, էջ 94), Գ. Մելիքե՛ղիւյանը թագավորաբերված տեքստի նկատմամբ կան որոշ սուղբերութիւններ, որոնք սակայն, էական չեն և չեն փոխում նյութի իմաստը:

¹ F. W. König, Die Gründung der Stadt Erevan (ca 785 v. c.). «Հանդես անսորայի», 1934, № 7—8, էջ 293—294:

² Վերապետութեամբ այդ թվականին է վերագրում Իրբունի բաղաբի հիմնադրումը նաև Գ. Ա. Մելիքե՛ղիւյան, թեպետ ու՛շ մի տեղ այն մի նույնացնում էրեբունի:

Այլ կերպ ասած, Երևանի հիմնադրման 2756-ամյակը լրացավ 1968 թվականին, ամենայն հավանականությամբ, աշևանք, որովհետև Արզիշտի I-ը էրբերունի հիմնադրել է դարևանն ու ամուսնը Սևանա լճի ավազանում կատարած արշավանքից հետո:

Ն. Հարությունյանի կողմից ենթադրված Երևանի հիմնադրման թվականը (782 թ. մ. թ. ա.)¹ ավելի է ընդունելի, քան Փյունիզի աված թվականը (785 թ. մ. թ. ա.), որովհետև Արզիշտի I-ը, ինչպես ընդունում են մեր ժամանակների ականավոր ուրարտագետները, սկսել է թագավորել 786 թվականից, իսկ Տայունի է, որ նա էրբերունի—Երևան քաղաքը հիմնադրել է իր թագավորության 5-րդ տարում, այսինքն՝ 782 թվականին (մ. թ. ա.): Այդ նշանակում է, որ Երևանը 29 տարով ավելի վաղ է հիմնադրված, քան «Տավերժական քաղաք» Հոռուի ավանդական հիմնադրումը: Աշխարհի հնագույն քաղաքների մեջ ոչ մեկի հիմնադրումն այնքան որոշակի ու արժանահավատ սկզբնաղբյուրներով չի հաստատված, որքան Երևանի հիմնադրումը. այդ մասին, ինչպես տեսանք, պահպանված են սեպագիր արձանագրություններ, որոնք պատկանում են անմիջապես դրա հիմնադրին՝ Արզիշտի I-ին: Էրբերունի—Երևանը ավելի վաղ է հիմնադրվել, քան Արզիշտիի ինչին (հետագայի Արամավիրը): Վերջինս նույնպես հիմնադրվել է Արզիշտի I-ի կողմից նրա թագավորության 10-րդ տարում, իսկ էրբերունիի անմիջական հարևանը՝ Քելշերախինին, որը նույնպես գտնվում էր այժմյան Երևանի զբաղված շրջանում, հիմնադրվել է էրբերունիից մոտ 100 տարի հետո, Ռուսա II-ի օրոք (VII դ. մ. թ. ա.)²:

Երևան քաղաքի անվան ծագման մասին խոսելիս մենք տեսնումք, որ մեր ժողովրդի պատմությանը քիչ ժանոթ որոշ օտար ուսումնասիրողներ՝ հետևելով պարսկա-թուրքական ու իրենցարի ավանդությանը, Երևան քաղաքի անունը կապել են Ռևան-Ղուպիխանի անվան հետ: Ցավով պետք է նշել, որ նույն կարգի կապիտ սխալ է արել նաև հայտնի գիտնական-արևելագետ Վ. Բարսուղը: Նա առանց ժանոթ լինելու հայ պատմիչների հաղորդած տեղեկություններին, ժողովրդական ավանդություններին և Ա. Ա. Իվանովսկու ու Բ. Վ. Նիկոլսկու գնուկ անցյալ դարի 90-ական թվականներին

րին կատարած ուրարտական-հնագիտական աշխատանքներին, ամենայն վստահությամբ գրում է, որ՝ «Երևանը իբրև գյուղ ծագել է Թեմուրի ժամանակ, իսկ քաղաք է դարձել միայն XVI դ.»՝ Շահ-Իսմաիլի ժամանակ և այդ ժամանակ էլ ստացել է իր այժմյան անունը»³: Մեկնություն կարելի էր ցույց տալ, մեծ գիտնականը կրկին էլ պարսկա-թուրքական առասպելախառն ավանդությունը՝ առանց հարցի մեջ խորամուխ լինելու:

Հնագիտական նյութերի և լեզվաբանական տվյալների հիման վրա կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ուրարտացիները VIII դ. (մ. թ. ա.) սկսած մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Արարատյան հարթության, նրա շրջակայքի և Սևանա լճի ավազանի նկատմամբ. Արարատյան դաշտի արդավանդ հողերը, նրա շրջակայքի նախալեռնային տափաստանները, որոնք երկրագործության շրջաններ էին դարձել հնագույն ժամանակներից և լեռնային շրջաններում ու Սևանա լճի շուրջ կոմսում բնակած արտավայրերը, խոտհարքերը ուրարտացիների համար կարող էին դառնալ այնպիսի գործուժեք, խաղողագործության, երկրագործության և անասնապահության հուսալի բազաներ, որոնք առայժմ հետո էին բնակված և ապահով էին նրանց հիմնական ախրահանքի՝ Ասորեստանի հարձակումներին: Այդ և ուրիշ նանգամանքներ շահվի տանելով ուրարտական թագավորները՝ սկսած Մենուայից բայլ առ բայլ նվաճում են նշված երկրները: Դրանք իրենց իշխանության տակ մշտապես պահպանելու և դրանց գյուղատնտեսական հնարավորությունները պետության ռազմա-քաղաքական շահերին ծառայեցնելու համար՝ ուրարտացիները իրենց նոր զբաղված երկրներում հիմնադրում են մի քանի խոշոր բերդաքաղաքներ և բազմաթիվ ամրոց-բնակավայրեր, որոնք ունեին տեղական նշանակություն:

Արարտի միջին հոսանքի շրջանում առաջին վարչա-տնտեսական և ստրատեգիական կենտրոնը կառուցել է Մենուան և իր անունով կոչել Մենուախինիլի: Այն գտնվում էր Իզգիրի շրջանում (Դաշրուրուն) և ուրարտացիների առաջին հենակետն էր դեպի ավելի հյուսիս շարժվելու համար: Եռուով Մենուախինիլիին փոխարինում է էրբերունի⁴:

1 Երևանի հետ: Տե՛ս Գ. Ա. Մեդիկովսկու, Древневосточные материалы по истории Закавказья, I, Наирн—Урарту, Тбилиси, 1964, էջ 217, 228, 259.

2 Տե՛ս ն. Վ. Հաղարյանյան, Երևանի հիմնադրման հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3.

3 Տե՛ս Գ. Ա. Մեդիկովսկու, Наирн—Урарту, էջ 67.

4 Բ. Բարտոլդ, Историко-географический обзор Ирана, С. Петербург, 1903, էջ 150:

5 Մինչև էրբերունի հիմնադրման ժամանակի հարցի պարզաբանումը՝ ուրարտացիների առաջնապետության Արարտի ձևի կողմից ուրարտական առաջին վարչա-տնտեսական կենտրոնը համարում էին Արզիշտիի ինչինին (Արամավիր) (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 85):

Հենց միայն այն փաստը, որ էրեբունիի հիմնադրման մասին նրա հեղինակ Արգիշտի I-ը թողել է հատուկ արձանագրություն, ցույց է տալիս նրա խոշոր նշանակությունը ուրարտացիների համար, ինչպես նկատում է Գ. Ա. Մելիքիշվիլին¹: էրեբունիի զբոսը սարատեգիական և տնտեսական առումով հարմար էր նա գտնվում էր անմատչելի բլրի վրա, շրջապատված ավելի բան 15 մ բարձրությամբ ունեցող պարսպով: Արարքի և Հրազդանի հովիտներով անցնող ճանապարհների խաչմերուկի շրջանում գտնվելը էրեբունիի դարձնում էր վարչա-տնտեսական հույժ կարևոր կենտրոն, որն էր նշանակությունը էպիս չիորցրեց նույնիսկ Արգիշտիի ինիցիատիվ հիմնադրումից հետո: էրեբունիի ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակությունը բնոգծելու համար ուրարտագետները մասնացույց են անում այն հանգամանքը, որ Արգիշտի I-ի 782 թ. (մ. թ. ա.) արձանագրության մեջ այն համարված է սարսափ թշնամի եղբորների համար, որ բուն ուրարտացիներից բազկացած ջոկատներից բացի՝ էրեբունիի կառուցման ժամանակ նրա կաշաղորի մեջ էին մտնում նեթվերի կրքերը ու Մուսյանիից բերված 6600 ռազմագերիներ, որոնց մասին նշվում է Արգիշտիի նոտիստյան տարեգրության մեջ, պաշտպանական հզոր կառույցները (մանավանդ միջնաբերդի հաստահեղույս և բարձր պարիսպը), պատերազմի աստժողատմանը և այլն²:

Մեծ էր նաև էրեբունիի վարչա-տնտեսական նշանակությունը: Այդ «Նոյակապ բազարի» կառուցումը (ինչպես այն կոչված է Արգիշտի I-ի արձանագրության մեջ) չէր կարող կարճ ժամանակամիջոցում և փոքր ուժերով կառավարվել: Մելիքիսի հակայական կառուցվածք, ինչպիսին էր Իրբունին, անկասկած, չի կարող կառարվել միանգամից—նրա կառուցումը եղել է խիստ աշխատատար խնդիր և պահանջել է հակայական գանդվածներով մարդկանց բավական տեղական աշխատանք—եղբայացնում է Գ. Ա. Մելիքիշվիլին³: էրեբունիի բազարի կառուցման մասին Արգիշտի I-ի երկու արձանագրությունները պետք է համարել միայն նրա հիմնադրման և աշխտեղ մեծ կաշաղոր գեներելու մասին ասալին հաղոր-

զումը: Հնագալում բավական երկար ժամանակ շարունակվել է այդ նշանավոր բերդաբազարի շինարարությունը նույն թագավորի և նրա հաջորդների ժամանակ: Վարչական առումով էրեբունին և նրանից մոտ մեկ դար հետո հիմնադրված Քելշերախին նախկինում ենթադրություն մտցնում էին ուրարտական կուարիների (կամ կուրիների) երկրի մեջ: Այժմ այդ տեսակետը ժխտվում է: Ներկայումս քնդուանելի է այն տեսակետը, բայտ որի Քելշերախին, էրեբունին և Արգիշտիխինիլին գտնվում էին Ազա երկրում:

էրեբունի—Երևանի զբաղված շրջանը այժմ ամբողջովին մրտնում է Երևան բազարի շրջանի մեջ: Այն համապատասխանում է մեր օրերի Երևանի նոր Արեշ և Վարդաշեն թաղամասերին: Վերջիններս գտնվում են քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում և դարձել են հնագիտական պեղումների շրջան: Հնագույն Երևանի դառված տարածության սահմանները դեռևս որոշված են միայն մոտավոր ճշտությամբ: Պեղումների և շափարումների քննիցքում հնագույն ամենազանազան կառույցների հետքերի հիման վրա Արինբերդի բլրի վրա և նրա շրջակայքում երբեմն տարածված էրեբունիի հնագիտական շրջանը սահմանվել է 50 հեկտար տարածություն, որից Արին-բերդ բլրի զագաթին եղած բուն միջնաբերդը զբաղել է 3 հեկտար մի եռանկյունի տարածություն³: Բուն քաղաքը տարածվում էր բլրի ստորոտներին ու շրջակայքում: Այստեղ, այդ ամբողջ տարածության վրա նկատվում են զանազան կառույցների հետքեր, կառուցման համար օգտագործված զարմանախառն շագախի մնացորդներ, շիրժած աղյուսի բեկորներ, երկանք և այլն⁴:

Շինարարական աշխատանքների հետքեր են հայտնաբերվել Արինբերդ բլրից հյուսիս-արևելք, 200 մետր հեռավորության վրա, որ նույնպես մտել է քաղաքային զմի մեջ: Բայց դա եզակի դեպք չէ: Հնագույն կառույցների առանձին հետքեր են նկատվում նաև այլ տարածություններով, իսկ 1957 թվականին Արին-բերդից 1 կմ հարավ-արևմուտք 2, Մարտիրոսյանն ու 2, Մուսաբանյանը հայտնաբերեցին ուրարտական գերեզման: Այնպես որ նոր աշխատանքների

¹ Գ. Ա. Մելիքիշվիլ, Ուրարտ, էջ 67:
² Տե՛ս Գ. Ա. Մելիքիշվիլ, Ուրարտ, էջ 218, 246, 258, 259—260, 262, 348, Ի. Մ. Դյակոնով, К вопросу о судьбе племных в Ассирии и Урарту, «Вестник древней истории», 1952, № 1, էջ 100—101, Ե. Վ. Զորաբյանյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը (ԵՊատմա-բանասիրական հանգես, 1959, № 2—3, էջ 87—89) և այլն:
³ Գ. Ա. Մելիքիշվիլ, Ուրարտ, էջ 259:

¹ Գ. Ա. Մելիքիշվիլ, Ուրարտ, էջ 259—260:
² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանգես», 1959, № 2—3, էջ 89:
³ Արև-բերդ I, Կ. Լ. Օգանյան, Архитектура Эребуни по материалам раскопок 1956—1959 гг., Ереван, 1961, էջ 15—16:
⁴ Նույն տեղը:
⁵ Կ. Լ. Օգանյան, Архитектура Эребуни..., էջ 16, 2. Մարտիրոսյան, 2. Մուսաբանյան, Եր-Արեշի ուրարտական գույտարների (ԵՄայնական ՍՍՍՊ-ԳԱ Տեղեկագիրք) (Նուս. դեպ.), 1958, № 16, էջ 63—84):

շնորհիվ քայլ առ քայլ ընդարձակվում են էրեբունիի հնագիտական շրջանի սահմանները: Անկասկած է, որ հնագույն բազաբը փոխված է եղել ընդարձակ տարածության վրա: Նրա բնակչության զգալի մասի դուրդառնտեսութիամբ՝ հասկապես դաշտավարութիամբ ու այլեզրոծութիամբ դրազվելը, բազաբը մեծ տարածության վրա փոխված լինելու անառարկելի ապացույցներն են: Բացառված չէ այն հանգամանքը, որ այժմայն Երևանի կենտրոնական թաղամասերի տեղում այն ժամանակներում տարածված էին էրեբունի—Երևանի արվարձանները, այգիներն ու բանջարանոցները և հացահատիկների ցանքերը: Թվում է, թե այդ ամբողջ տարածությունը էրեբունիի տարածարության տակ պետք է մնացած լինեիր նաև Քնչշերտիների կառուցիւոց հետո, որի մշակովի տարածությունները հավանաբար բնկած էին Հրազդանի աջ կողմերը և դեպից մշակովի էին գարնավելի Հրազդանից (Իլդարանի) հանած մեծ առվի (հավանաբար այժմայն Դամայի) շնորհիվ: Բայց ակամայից հարց է առաջանում, թե արդյո՞ք հենց այդ չէ այն պատճառներից մեկը, որոնց շնորհիվ մեր ս մայրաքաղաքը իր անունը ժառանգեց էրեբունիից, ավելի միշտ՝ կոչվեց նրա անունով, միայն հայավարի:

Հնագիտական առումով Հայաստանը ուշագրութիան առարկա է դառնում անցյալ դարի երկրորդ կեսից: Մի բանի տանամայնիս-րի ընթացքում Հայաստան են այցելում ու այնտեղ շրջադասում Հիվերնան, Մյուլլերը, Մ. Նիկոլսկին, Ա. Իվանովսկին, Վ. Քելլը, Լեման-Հաուպերը, Ալեքսանդր Երիցյանցը և ուրիշներ: Նրանք, ինչպես և տեղացիները, Հայաստանում հայտնաբերում են ուրարտական սեպագիր արձանագրություններ, բերդերի ու քաղաքների ակերակներ: Հետագայում ուրարտագիտական ուսումնասիրություններն որոշ ընդհատումներով շարունակվում են թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում: Բայց Հայաստանը ուրարտագիտության համաշխարհային կենտրոն է դառնում միայն մեր ժամանակներում՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո: Այժմ Սովետական Հայաստանը ոչ միայն այդպիսի կենտրոն է, այլև նյութական հիմք է տալիս մյուս բոլոր տեղերում կատարվող ուրարտագիտական ուսումնասիրություններին, որովհետև ուրարտական նյութական կուլտուրայի մնացորդները գրեթե բացառապես սիրված են միայն Հայաստանում:

Ուրարտական, հնագույն հայկական կուլտուրայի մեծագույն կենտրոններից մեկը Երևանի հանգույցն է, որտեղ ուրարտական շրջանում գոյություն են ունեցել երկու բերդաքաղաքներ (էրեբունի—Երևան և Քնչշերտիների), ժայռագոր շրանքներն ու ոռոգչական ալլ կառույցներ, առանձին մանր բնակավայրեր:

էրեբունի—Երևանը հնագիտական ուսումնասիրության առարկա է դարձել 1894 թվականից, երբ հատուկ հանձնարարությամբ այստեղ է գալիս Մոսկվայի արքայական հնագիտական ընկերության անդամ Ա. Իվանովսկին և նախնական ուսումնասիրության կենթարկում այն: Հետագայում, սակայն, ուսումնասիրություններն ընդհատվեցին, եթե նկատի չունենալ պատահական շրջադասություններն ու շինարարական աշխատանքները, որոնց ժամանակ նյութես նշմարվում էին որոշ հույություններ:

էրեբունի—Երևանի տեղագրավայր Արին-բերդում պարբերական պեղումները սկսվել են 1950 թվականից: 1950—1951 թթ. այստեղ պեղումներ էր կատարում ՀՍՍՀ ԳԱ Կարմիր-բլուրի արշավախմբի (ղեկավար Ք. Բ. Փորտովսկի) ջոկատը, իսկ դրանից հետո արին-բերդյան առանձին արշավախումբը, որին իբրև առանձին շտկատ միացել է Մոսկվայի Պուշկինի անվան կիրպարվեստի թանգարանի և ՀՍՍՀ պեղողների հուշարձանների պահպանության բաժնի շտկառը¹: Այդ նոր արշավախումբը, որը պարբերաբար գործում է և այժմ, զլխավորում է ճարտարապետ Կ. Լ. Հովհաննիսյանը:

Հնագիտական պարբերական պեղումները կատարվել են միայն հնագույն բազաբի բուն միջնաբերդում՝ Արին-բերդ բլրի գագաթին, միջնաբերդի ամենակարևոր հատվածում: 1950—1959 թվականներին բնթացքում պեղման հնտանքով մտատվորապես ճշտված է միջնաբերդի արտաքին ստվերադիքը, պաշտպանական պարսպի ուղղությունը ու զրա առանձին հատվածների դիրքը, պայտաի, զխավոր տաճարի, ընդարձակ բակի և մյուս օբյեկտների բնութի ու մեծությունը, հայտնաբերված են սեպագիր արձանագրություններ, նյութական կուլտուրայի բազմաթիվ ու բազմապիսի մնացորդներ, ուրարտական արվեստի հազվագյուտ նմուշներ և այլն: Ցավով պիտի ասել, որ Արին-բերդի 1960—1966 թվականների պեղումներին մասին հրատարակի վրա որևէ աշխատություն կամ նյութերի ժողովածու չկա, դրանք մեղ ազոտ կիրպով հայտնի են միայն թերթային

¹ Տե՛ս Է՛անդէս ամսօրեայւ, 1899, էջ 281. «Материалы по археологии Кавказа», вып. V, Цо, Հայց պատմութիւն, 1, Թիֆլիս, 1917, էջ 16, Բ. Բ. Пиготровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 76—77 և ուրիշ տեղերում:

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни... էջ 14:
= նույն տեղը, էջ 9—11, 16—17, 59—74 և այլն:

Տաղարդումներից, որոնք շին կարող առաջվ ծառայել այս կամ այն հետևության համար: Այնուամենայնիվ հայտնի է, որ պեղումների շարունակվում են և բայց առ բայց պարզվում են մեր մայրաքաղաքի հնագույն շրջանի պատմության հարցերը:

Մինչև էրեբունիի տեղում կատարված պեղումները և դրա մասին եղած արձանագրությունների ուսումնասիրությունները սովորաբար ենթադրվում էր, որ ուրարտական պետության հյուսիսային մասում՝ Արարատյան դաշտում և նրան հարակցող շրջաններում վարչական միակ ու հիմնական կենտրոնը (հատկապես VIII դարում, մ. թ. ա.) եղել է Արդշախիսիսիկին¹: Գ. Ա. Մելիքիշվիլիի այդ ածականաբար համարում է հնագած և գտնում, որ եթե ուրարտական պետության այդ մասում VIII դ. (մ. թ. ա.) գոյություն ունեցած մեկ հիմնական վարչական կենտրոն, ապա այդ ոչ թե Արդշախիսիսիկին էր, այլ՝ էրեբունին (նրա մտաւանութեբը՝ Իրպունի), որովհետև վերջինս իբրև բերդ ավելի հզոր էր և նշանավոր, քան առաջինը, որը գտնվում էր Ազա ներկում: Կա ենթադրում է, որ VIII դ. (մ. թ. ա.) Արարատյան հարթությունում ամենահզոր բերդը էրեբունին էր և հենց այն էլ պետության այս մասի գլխավոր կառավարելի աֆոունտն էր, վարչական գլխավոր կենտրոնը²:

Էրեբունին ուրարտական պետության ամենահզոր բերդն ու նշանավոր վարչա-տնտեսական կենտրոնն էր ոչ միայն նրա հիմնադիր Արդշախի I-ի, այլ նաև Սարգուր II-ի (750—730 թթ. մ. թ. ա.), Թուաա I-ի (735—714 թթ. մ. թ. ա.) ժամանակներում: Այդ երեւում է թեկուզ հենց նրանից, որ էրեբունիում և նրա շրջակայքում շինարարական մեծ աշխատանքներ են կատարվում Արդշախից բացի նաև Սարգուրի ու Թուաաի ժամանակներում: Դրանց ժամանակ ուրարտացիները մի շարք շրջաններ են գրավում Սևանա լճի ափերում և այդտեղ կառուցում նոր բերդ-քնակավայրեր՝ «եռալղ-աւստոն քաղաքը» (այժմյան Կամո քաղաքի մոտ), «Թելշերա աստմոն-քաղաքը» (այժմյան Մարտունու շրջանի Մովսիսար գյուղի մոտ), որոնք բավական մեծ բերդաքաղաքներ էին, բայց դրանք իրենց կ'մեծութայար, կ' խաղաղած զերով շատ էին պիջում Արարատյան:

դաշտի հռչակված բերդաքաղաքներին, հատկապես էրեբունիին, Արդշախիսիսիկին, Թելշերաիսիկին³:

Պեղումներ հայտնաբերված նյութական կուլտուրայի հիման վրա հետզհետեւներ եկել են այն ճիշտ եզրակացություն, որ էրեբունին VIII դարում (մ. թ. ա.) կորցնում է իր նախկին արտակարգ նշանակությունը: Դրանից մի փոքր արևմուտք, բայց դարձյալ այժմյան Երևանի գրաված շրջանում, շրագանի ձախ ափին, հավանաբար առաջնա-սարատեղեական նոր պահանջներից հարկազրկված, ուրարտացիները կառուցում են նոր հզոր բերդ՝ Թելշերաիսին (Կարմիրջուր), որը փաստորեն փոխարինում է էրեբունիին: Ժամանակի ընթացքում էրեբունին իբրև վարչական կենտրոն և բերդ լքում են, և նրա թանկարժեք իրերը տեղափոխում Թելշերաիսիս: Այս պատճառով էլ VI դ. (մ. թ. ա.) սկսվողական արշավների ժամանակ էր հիմնահատակ ավերվեց Թելշերաիսին, էրեբունիի առանձին հարավամասն չի ենթարկվում, նա շարունակում է իր գոյությունը իբրև խոշոր բնակավայր նաև հետագա դարերում⁴:

Ուրարտական առավանակա պետության մեջ բազմաթիվ էին բերդերը, որոնց շուրջը սովորաբար ընկած էին լինում մեծ կամ փոքր քաղաքներ: Իբրև բնդանուր կանոն, ուրարտական բերդերը տեղադրվում էին հարթավայրերում բարձրացող բլուրների և սարերի զաղաթներին: Նրանց այդպիսի դիրքն ու գոտավորությունը հնարավորություն էր ընձեռնում հարևան և նույնիսկ իրարից բավական հեռու գոտեվող բերդերի միջև տեսողական կապ պահպանել միացյալ ուժերով թշնամուս դիմադրելու համար⁵:

Ուրարտական ժամանակաշրջանի բերդեր իրենց ամրությամբ, կառուցվածքով ու նշանակությամբ կարելի է բաժանել երկու մասի՝ տեղական նշանակությամբ մանր ամրոց-բերդերի, որոնք, ինչպես նշում է Գ. Մելիքիշվիլին, բազմաթիվ էին ու հեշտությամբ կարող էին գրավվել թշնամու կողմից⁶, և խոշոր ու նշանավոր բերդերի, որոնք համեմատաբար փոքրաթիվ էին, բայց ամրակուտ Դրանից

¹ Տճ՝ Կ. Ա. Օգանեսյան, *Архитектура Эребуни...*, էջ 5—6:

² Ե. Բ. Пиотровский, *Кармир-блур*, III, էջ 27—28:

³ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 91—92, Կ. Ա. Օգանեսյան, *Архитектура Эребуни...*, էջ 7—8, 13—14:

⁴ Գ. Ա. Մելիքիշվիլի, *Найри—Урарту*, էջ 337, «Արդշախի հայ նորարարականության պատմությունը», էջ 30:

⁵ *Նույն տեղը*, էջ 336:

¹ Տճ՝ Ե. Բ. Пиотровский, *Кармир-блур* I, էջ 8—10; *Ճմտ.* Գ. Ա. Меликишвили, *Найри—Урарту*, էջ 260:

² Գ. Ա. Меликишвили, *Найри—Урарту*, էջ 260—261:

³ *Նույն տեղը*, էջ 155—159 և 358:

⁴ Տճ՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 90—91, * Կ. Ա. Օգանեսյան, *Архитектура Эребуни...*, էջ 6:

շուրբը սովորաբար գտնվում էր քաղաք կամ մեծ բնակավայր, իսկ բուն բերդը փաստորեն ներկայացնում էր «միջնաբերդ»¹:

Էրեբունի—Երևանը նույնպես ուրարտական ժամանակաշրջանի ամենախոշոր բերդաքաղաքներից էր, նա քաղկացած էր երկու մասից՝ միջնաբերդից և նրա շուրբը տարածվող, բավական փոված բուն քաղաքից: Միջնաբերդը տեղադրված էր այժմյան Արին-բերդ բլրի գագաթին, շրջակայքից մոտ 65 մետր բարձրության վրա: Այլ կերպ ասած, Էրեբունին ուներ տիպիկ ուրարտական բերդաքաղաքների կառուցվածքը, որի մասին իր ժամանակին նշել են Ի. Մեշյան-Ինժուր, Խ. Սամվելյանը և երկուսն էլ վարչական խոշոր կենտրոնների նման Էրեբունի—Երևանը ևս եղել է վարչական խոշոր կենտրոն, տնտեսական կարևոր նշանակություն ունեցող քաղաք, որտեղ կենտրոնացնում էին երկրի բնակիչներից վերջրած բնահարկերը, ռազմական ավարը և որոշ վերահսկողական հետո դրանց մի ղզպի մասը առարում էին պետության կենտրոնական շրջանները: Էրեբունին բազմամարդ կապաղոթի տեղադրավայր էր, ուրարտական կառավարիչի աթոռանիստ, երկրային վարչական ապարատի մըշտական կենտրոն:

Ռազմական, վարչական և տնտեսական առումով հիմնական հանգույցը նրա միջնաբերդն էր, որը իշխող զիբր ուներ շրջակայքի նկատմամբ: Միջնաբերդը ճարտարապետական ինքնուրույն կոմպլեքս էր՝ իր իշխանական պայտույթով, տաճարով, պահեստներով, ընդարձակ բակով, զորանոցներով, հասարակատ պաշտպանական պարսպով, որի զխավոր դարպասը բացվում էր զեպի հարավ-արևմելք, զեպի այն կողմը, որտեղից համեմատաբար դյուրին էր բարձրանալ միջնաբերդ: Հենց դարպասի մոտ էլ, պարսպի արտաքին պատի վրա փորագրված է Արգիշտի I-ի մեր կողմից արգեն նշված սեպագիր արձանագրությունը Էրեբունի քաղաքի հիմնադրման մասին:²

Միջնաբերդը շրջապատող հզոր պարսպի հիմքը և ցուխային մասը (մինչև 2—3 մետր բարձրությամբ) շարված է քաղաքից, իսկ բուն պատը՝ չբրժած աղյուսից: Միջնաբերդի արտաքին սովից-բազին համապատասխան՝ նրա պարսպն էլ ուներ կոանկլետու ձև, որը զխավոր դարպասի մոտ ուներ կողաննարաններ (կոնտր-փորս): Հենվից Էրեբունիի միջնաբերդի պարսպը մեծ սպավա-

րություն է թողել դիտողի վրա, որովհետև շրջակայքի նկատմամբ ուներ բարձր ու վեճ դիրք: Պարսպի պատի մեջ հասած մնացորդների անկա բարձրությունը հասնում է 2,5 մետրի: Ըստ երևույթին պարսպի պատի բարձրությունը հասնել է 15—20 մետրի: Շինարարները ձգվել են ինչքան հնարավոր է անառիկ դարձնել նշանավոր քաղաքի միջնաբերդը՝ «ի սարսափ թշնամական երկրներին»—ինչպես ասված է դրա հիմնադրման մասին Արգիշտի I-ի թողած նշանավոր արձանագրության մեջ:

Էրեբունիի միջնաբերդի հիմնական մասը կազմում էր պալատի կոմպլեքսը, որի կառուցվածքները դասավորված են ընդարձակ հրապարակի շուրջը: Ինչպես Ասորեստանի և Ուրարտուի մյուս աթոռանիստ քաղաքների, այնպես էլ Էրեբունիի միջնաբերդի պալատի կոմպլեքսը, որի հետ կապված են նաև պաշտամունքային կառույցները, սեպագիր արձանագրություններում նշանակվել է

«E—GAL» (E—GAL) զաղափարագրով: Քաղաքի զխավոր դարպասի մոտ թողած արձանագրության մեջ Արգիշտի I-ը դրա կառուցման մասին հաղորդում է հետևյալը. «Եսալլան մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին, այս վեճ E—GAL-ը կառուցեց»³: Գրանով միանգամայն պարզվեց և ընդունելի դարձավ այն ենթադրությունը, որ E—GAL են կոչվել թագավորական կամ փոխարքայական պալատ ունեցող բերդերը: Էրեբունիի մի մեծ երկրամասի կառավարիչի աթոռանիստ կենտրոն էր: Ենթադրում է, որ նրա բերդը բնթոռանիստ է եղել նաև Արգիշտի I-ի համար, երբ նա արշավանքներ էր կատարում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմերում:⁴

Էրեբունիի միջնաբերդը իր հարմարություններով ու ձևաթվային որշելով չէր սիջում այն ժամանակվա Առաջավոր Ասիայի մեծ քաղաքների միջնաբերդերին: Նրա միջնաբերդում կարևոր տեղը դրավում էր պալատի կոմպլեքսը, որը բավական լավ է պահպանվել: Այդ կոմպլեքսի մեջ մտնում էին 17×19 մ մեծությամբ այտունաղարթ՝ այսպես կոչված պերիստիլ պալատն իր շրջակայքի ընդարձակ դահլիճներով ու սենյակներով, և Susi (Սուսի) կոչված տաճարը: Պատերը պահպանվել են մինչև 3—4 մետր բարձրությամբ, հնազավոր է վերականգնել նրա հանդիսարանների, բակերի,

¹ Г. А. Мелникшвили, Наирн—Урарту, т. 337:

² Տե՛ս Խ. Սամվելյանի, Հին Հայաստանի կառույցներ, 4, 11, էջ 287:

³ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 16—17:

⁴ Սույն տեղը, էջ 17:

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 17:

² Սույն տեղը:

³ Սույն տեղը, էջ 27:

⁴ Սույն տեղը:

պաշտամունքային ու տնտեսական նպատակով կառուցված շինությունների և բնակելի տների հասակագործը բավական շշտոթյամբ¹ է էրբրունիի պալատը ճարտարապետական առումով համարում են ինքնուրույն մի կոմպլեքս, որը զբաղեցնում էր միջնաբերդի մի մասը:

Պեղումների շնորհիվ պարզվել է, որ միջնաբերդի տարբեր մասերը հատկացված են եղել տարբեր նպատակների համար: Նրա՝ դեպի Մասիս ուղղված կողմը ամենաշքեղ մասն է եղել, որտեղ տեղադրված էին աշխարհիկ և պաշտամունքային ամենամեծ կառույցները: Հենց այդ մասում են հայտնաբերվել Արին-բերդի մեջ հայտնի 8 արձանագրություններից 6-ը²: Միջնաբերդի հյուսիս-արևելյան կողմը հավանաբար տրամադրված էր տնտեսական նպատակների համար: Այստեղ կան մի մեծ կառույցի մնացորդներ: Ենթադրվում է, որ այդ մեծ կառույցը եղել է հացահատիկի պահեստ³, որը նույնացնում են ուրարտական սեկագիր արձանագրություններում հիշատակվող «arū» կողմած կառույցների հետ⁴: Տնտեսական նպատակների համար է ծառայել նաև միջնաբերդի հարավային մասը, որտեղ 1959 թվականին հայտնաբերվել է մի սենյակ վեց մեծ կարաններով: Իսկ միջնաբերդի հորրդո՝ հյուսիս-արևմտյան մասը հավանաբար բնակելի թաղն էր⁵: էրբրունիում հայտնաբերված բոլոր շենքերը միահարկանի են և քառ նշանակության կառույց են առանձին կոմպլեքսներ: Միջնաբերդի ամբողջ կառուցվածքը հարմարեցված է պաշտպանական նպատակներին և մեծ վարպետությունով հաշվի է առնված տեղանքի ռելիեֆի բնույթը⁶: Այստեղ վարպետորեն սզուզակցվում են պալատի ճյուղը և զանգվածային կողմահնարանները (КОНТРОФОРМЫ) զիստովոր տաճարի պորտիկի փայտյա թեթև և շքեղ սյունաշարքի հետ⁷: Պորտիկի պատերը ներկված են եղել մուգ կապույտ գույնի, նա ունեցել է 12 թեթև (փայտյա) սյուներ, որոնք զասավորված են եղել երկու շարքով: Վաղ հնչակական շրջանում (Արևմենյանների տիրապետության օրոք) էրբրունիի պալատական հրապարակը ամբողջովին ծածկվում է նոր կառուցված շենքերով: Ծարտարապետ-պատմաբանները նշում են, որ էրբրու-

նիում բազաբացիական-պալատական կառույցները միահյուսված են պաշտամունքային շինությունների հետ: Միջնաբերդում, նրա ճակատային մասում ճարտարապետական բարդ ու գեղեցիկ կոմպլեքս էր ներկայացնում եռյգ աստծուն նվիրված տաճարը, որի նախնական վիճակը արժենյան ժամանակաշրջանի կառուցումների ու վերակառուցումների պատճառով բավական ղզվարթությամբ է վերականգնվել⁸: Պարզվել է, որ տաճարական այս կոմպլեքսը ուրարտական ժամանակաշրջանում բաղկացած էր մի մեծ հանդիսարանից (զահլիճից), դրան հարակից օժանդակ շինությունից և մի այլ շինությունից, որի միջոցով կապ էին պահպանում կոմպլեքսը պշտարակի կամ կտուրի հետ: Կառույցի պատերը տեղ-տեղ պահպանվել են ավելի քան երեք մետր բարձրությամբ: Ծարտարապետ և ի. Հովհաննիսյանին հաջողվել է վերականգնել այդ հուշակալ տաճարի նախնական արտաքին և ներքին տեսքը⁹: Նրա քառանկյունի մեծ զահլիճը ունեցել է 8×37 մ չափեր, պատերը շարված չէին և ամրացված էին ճառակի տակ հայտնաբերվել են չրի խողովակներ: Դահլիճն ունեցել է ձոխ կահավորում, պատերը զարդարված են եղել բազմազուն որմնանկարներով, որոնք մեջ ամենուրեք հանդիպում են աստվածների պատկերներին¹⁰:

Ք. Ք. Պորտուսիկին Կարմիր-բլուրից հայտնաբերած նյութական կուլտուրայի մնացորդների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ VIII դարում (մ. թ. ա.) էրբրունին իր առաջնությունը պիշում է թեյլեբանիին և նրա թանկարժեք իրերի զգալի մասը տեղափոխվում է նոր կառուցված այդ բերդը: Այդ իրերի մեջ են նաև իրենց վրա սեպագիր ունեցող այն վահանները, որոնք մի ժամանակ պատկանում էին էրբրունի բազաբին և նվիրված էին եռյգ աստծուն¹¹:

Ուրարտական ճարտարապետությունը, նկարագրված տիպի տաճարներից բացի, օտեղծել էր նաև այլ կառուցվածքի տաճարներ ու տարբեր կարգի պաշտամունքային շինվածքներ¹²:

▲ Sini — աստված — տաճար, ▲ Bar — տաճար, iarani — մատուռ, ▲ sistilu — աստվածների զարդաքաղ և Susi, որը ճարտարապետական առումով այժմ հայտնի է¹³:

¹ К. П. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 18:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

⁴ Sina «Вестник древней истории», 1951, № 4, էջ 25:

⁵ К. П. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 18:

⁶ Նույն տեղը, էջ 15—22:

⁷ Նույն տեղը, էջ 22:

⁸ Նույն տեղը, էջ 23:

¹ К. П. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 51—52:

² Նույն տեղը, էջ 52:

³ Նույն տեղը, էջ 53:

⁴ Sina Նույն տեղը, էջ 54:

⁵ Նույն տեղը, էջ 54—55, Ավետիսյանի հայ ճարտարապետության պատմության, էջ 39:

Էրերունիի մյուս հայտնի տաճարը Susi-ն էր, որն այդ տեղի տաճարների ձևին համապատասխան ուներ բառակցույթի հատակագիծ՝ ներսում ունենալով 5,05×8,08 մ և արտաքին կողմում՝ 10×13,45 մ մեծությունը: Զարկերով փորք այս տաճարը հավանաբար սպասարկում էր միայն պալատում ապրողներին: Ըստ մտաբերի մոտ եղած սիմետրիկ դասավորությամբ արձանագրություններով Susi-ն կառուցել է Արզիշտի I-ը և նվիրել Բուրշա աստծուն (որն ուներ խեթական ծագում): Տաճարի պատերի արտաքին կողմի մի մասը և ներքի կողմնամասերը սահմանված էին ու ծածկված որմնակարերով:

Տաճարի պատերը շատ են ավերված, բայց տեղ-տեղ դրանք պահպանված են մինչև 2,6 մ բարձրությամբ, իսկ հիմքի մնացորդների շերտերով ընդհանրապես հնարավոր է դարձել վերականգնել նրա հատակագիծը: Տաճարը հիմնականում կառուցված է կուպոս մշակված սուճով, պատերը ներսից և դրսից ծեփված կավով, բացառությամբ դրսի կողմից հիմքի վրա բնական երկու շարքերի, անկյունների և սեպագիր արձանագրությունների տեղերի, որոնք շարված են սրբատաշ ու կիսաօրբատաշ քարերով՝ դարձյալ զլխավորապես սուճով: Պատերը ներսից ներկված են մուգ-կապույտ գույնով, որոնց վրա եղել են հրաշալի որմնանկարներ:

Միջնաբերդի մյուս կառույցների հետքերն ավելի վատ են պահպանվել և առայժմ թիչ են ուսումնասիրված: Սակայն հայտնի է, որ միջնաբերդը կառուցվել է ոչ մեկնգամից: Այստեղ կառուցողական հնչապական աշխատանքներ են կատարել ուղի մասն քաղաքի հիմնադիր Արզիշտի I-ի ժամանակ, այլ նաև հետագայում՝ հասկապես Սարգուրի II-ի օրոք, չհաշված վաղ հայկական ժամանակաշրջանի կառուցումները:

Ինչ վերաբերում է միջնաբերդի շուրջը փոխված բուն քաղաքին, որտեղ ապրում էր բնակչության և զորքի մեծագույն մասը, այսպե՛ս առայժմ այն չի պահպնել և ճարտարապետական առումով շատ աղետ է հայտնի:

Ուրարտական ճարտարապետությունը շփման շատ կետեր ուներ Մերձավոր Արևելքի հնագույն ժողովուրդների ճարտարապետության հետ, բայց նա ինքնատիպ էր և իր բարեբար զոդեցությունն է թողել հայկական ճարտարապետության վրա: Էրերունիի և ընդհանրապես ուրարտական ժամանակաշրջանի և հետագա

քաղաքների, բերդերի ու այլ կարգի բնակավայրերի համար որպես շինանյութ օգտագործվում էին՝ քարը (սուճի և քաղալտ), կավը, տարբեր տրամաչափի ու մեծությունից փայտանյութեր, եղևնի, դարձանը և այլն: Էրերունիում այդ բոլոր շինանյութերը տեղում առկա էին, բացի փայտից, որը բերվում էր այլ շրջաններից: Փարք սովորաբար օգտագործվել է շենքերի հիմքերի և ցոխոլային մասերի, իսկ երբեմն մշակված վիճակում նաև քիվերի, պատերի անկյունային մասերի համար: Կավը դարձանի հետ միասին օգտագործվում էր իրրև շաղախ, ինչպես նաև պատրաստում էին աղյուս, որից շարված էին միջնաբերդի կառույցների մեծ մասի պատերը: Մեծ կիրառություն ուներ նաև փայտը՝ ծածկի, զոտիների, ստորհաններին, միջնորումների, սյունների, հատակի, դռների և այլ նպատակների համար: Էրերունիում հայտնաբերված են իրենց վրա 1,7 մ հաստությամբ և մոտ 2,5 մ բարձրությամբ պատը օյահող 8 զբաններ, որոնք մինչև այժմ պահպանել են և կ'ընեն նախկին արտաքին տեսքը, և ամբողջությամբ՝ Դրանք մոտ 2800 տարեկան են և այժմ էլ պիտանի կարող են լինել որպես շինանյութ: Շենքերի կառույցները հարկն են եղել, հողածածկ, լույսի համար դրանք առատադի վրա ունեին երթիկներ: Տեղի և մյուս շինությունների պատերի ներսի կողմը ծեփել են կավով և ներկել զլխավորապես կապույտ գույնի:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Էրերունի-Երևանի ջրմուղը, որն բոտ երևույթին հիմնականում սակեղմվել է քաղաքի հիմնադրման ժամանակ՝ VIII դարի (մ. թ. ա.) առաջին քառորդում և ունի մոտ 2750 տարվա պատմություն: Քեպետև առայժմ հնարավոր չէ եղած նյութերի հիման վրա վերականգնել կառուցության հանգել այդ ջրմուղի ցանցի, ուղղության և քնդորված տարածության մասին, բայց ենթադրվում է, որ դրա միջոցով միջնաբերդը (զուցև և ամբողջ քաղաքը) խմելու ջուր է ստացել Գեղամա լեռների համակարգին պատկանող՝ վաղեմի քաղաքի հյուսիսային կողմի սարերից: Ջրմուղի հնաքերը հայտնաբերվել են միջնաբերդի հարավ-արևմտյան կողմում, իսկը աստծուն նվիրված տաճարի կոմպլեքսի շրջանում: Այստեղ հայտնաբերված են միջին հաշվով մեկ մետր երկարության և 11 սմ տրամաչափի անցք ունեցող սուճի խողովակներ, որոնք միացած են եղել իրար հետ և վերևի կողմում մարբելու ու վերանորոգելու համար ունեն անցքեր: 1936

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 34:

² Նույն տեղը, էջ 12, 39—36:

¹ Սանրանում տե՛ս К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 103—110, Նվմ. Ավետարի հայ ճարտարապետության պատմության, էջ 43—46:

² К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 18—19:

Յվականին նույն տեսակի խողովակներ են հայտնաբերված նաև այժմյան Երևանի կենտրոնական մասում՝ Լեհինի հրապարակում, որտեղ պահպանված են Երևանի բաղադրաչափի պատմական թանգարանում¹: 1964 թ. գարնանը նույնպիսի խողովակներ հայտնաբերվեցին Շահումյան փողոցի վրա, Շահումյան և Արովյան փողոցների հատման շրջանում: Այստեղ եղած հանգույցից շատ խողովակներ միջոցով չուրբ ուղղվել է դեպի բաղադրաչափի գրտաչափ կողմը: Հնագույն ջրմուղի առանձին մնացորդներ են հայտնաբերված նաև այժմյան Արարատ դիմու կամրիխայի և տրամվայի պարկի շքրջանում, Ավերդուլի փողոցի ժայռամասում՝ Կոնդի տակ² և այլ տեղերում: Մրանք բոլոր տեղեղծվել են հավանաբար դեռևս ուրարտական և դրան անմիջապես հաջորդած հայկական վաղագույն ժամանակներում: Հնարավոր է, որ այժմյան բաղադրի կենտրոնական թաղամասերում հայտնաբերված ջրմուղի ցանցը (կամ ցանկերը) կապ չի ունեցել Էրեբունիի ջրմուղի հետ: Բայց դրա գոյությունը մեր կարծիքով ենթադրել է տալիս, որ Էրեբունիի անշքացույցի հետո նրա բնակչության մի մասը տեղափոխվել է Քելշեբային և նրան արևելքից կցված այժմյան Երևանի կենտրոնական մասը: Հենց այս վերջինն էլ աստիճանաբար դառնում է շեն ու ստաղաչատ մի բնակավայր: Հավանաբար հենց այդ շրջանին են վերաբերում նշված ջրմուղի առանձին հատվածները: Այլ կերպ ասած, Էրեբունիին անմիջապես հաջորդել է նրանից սկսած Երևանը, որը ժառանգել է նրա և՛ անունը, և՛ դրաված տերիտորիան:

Ենթադրվում է, որ Էրեբունին ունեցել է իր խորհրդանիշը և այն տեղեղծվել է բաղադր հիմնադրելու ժամանակ՝ 782 թվականին (մ. թ. ա.): Հնագետներն այդ եզրակացության են հանգել Արգիշտի ասադինի մի հիշատակության և հայտնաբերված նյութական կուտուրայի որոշ մնացորդների հիման վրա՝ Այսպես, Կարմիրբուրդի պեղումների ժամանակ արշավախմբի ղեկավար Բ. Բ. Պետրովսկին հայտնաբերել է մի սկավառակ, որի վրա Էրեբունիի հիմնադիր Արգիշտի I-ը սկսվազրով հիշատակել է, որ բաղադր կառուցելու ժամանակ պատրաստվել է և փայտյա ինչ-որ առարկա: Հետագայում նույն տեղում հնագույն կառույցի փլատակների միջից հայտնաբերվեցին վնասված փայտյա արձանիկներ, որոնց արտաքին նշանների հիման վրա հնագետները պատկերացրել են դիմվորի ձևով

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни... էջ 18—19: Տե՛ս նաև Երեկոյան Երևան» (լրագիր), 1964, № 109 (Ա. Բարսյան, հին Երևանի ջրամատակարարման մասին):

² Տե՛ս «Երեկոյան Երևան», 1964, № 109:

և ենթադրել, որ հնագույն բաղադրի խորհրդանիշը եղել է բրոնզե պատվանդանի վրա կանդեկցված այդ արձանիկներից մեկը: Հաշվի առնելով նաև այն, որ Էրեբունի—Երևանը եղել է ամբողջ մեծ կապուրի տեղադրվալայր, մասնագետները շատ հավանական են համարել, որ նրա խորհրդանիշն էլ պետք է լիներ զինվորի արձան: Այդ հիման վրա պարտադրվել է 1966 թվականից Հայաստանի պետական պատմական թանգարանում ցուցադրվում է փայտյա մի արձանիկ, որը պատկերում է նիզակով, նետ ու աղեղով և սրով զինված ուրարտական մարտիկ, հնագույն բերդաբաղադրի խորհրդանիշը³:

Այժմ հարց է առաջանում, թե ովքե՞ր էին բնակվում Էրեբունիում, ինչքա՞ն էր նրա բնակիչների թիվը և ինչո՞վ էին զբաղվում նրանք: Ըստ Էրեբունիի բուն բաղադրի բնակչության հիմնական գանգովածները կազմում էին բնիկները՝ Ագա Երկրի բնակիչները:

Սակայն Էրեբունիի բնակչության էթնիկական կազմը պարզաբանելու համար մեր ձեռքի տակ նյութեր շատ քիչ կան: Այդ հարցի հետ անմիջապես անմիջող արձանագրությունը հոտոտոյան տարրերովյան ան սողերին, որի մեջ Արգիշտի I-ը հաղորդում է, թե ինքը 6600 ռազմիկներ է ուղարկել Էրեբունի⁴: Այդ ռազմիկները պատկանում էին այն 8698 տղամարդ զորիների թվին, որ նա նստիտըջ տարում (783 թ. մ. թ. ա.) վերջինից էր «Սատի և Մուպանի» երկրներից: Գ. Ա. Մելիքիշվիլի կարծիքով, դրանք Էրեբունի էին ուղարկված առանց բնտանիքների և այստեղ դրանց միջոցով կառուցել էին տալիս նոր բաղադր⁵, Կասկածից վեր է, որ Սատի երկրից վերցված զորիները խեթեր էին: Այնին պետք է Մուպանից վերցված զորիների էթնիկական պատկանելությունը: Հայտնի է, որ այդ ստեղծը կապված է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում ուրարտացիներից առաջ իրենց բաղադրական իշխանությունը հաստատած սուրբաբների (խորիներ, խուրի-միտանիներ) անվան հետ և հետագայում՝ անտիկ հեղինակների մոտ կոչ-

¹ Տե՛ս «Երեկոյան Երևան» (լրագիր), 1966, № 12 (15-ր համարի): Ուրարտական Մ. Բարսյանը միտակով էրեբունի խորհրդանիշը դրոշմանը, ենթադրում է սակայն, որ նա դիտել է լինել ոչ թե գեղերի ձևով, այլ ժամանակի մասնակիցային համապատասխան՝ պետք է ունենար զիջարանական բովանդակություն: Նա ուղղակի գրում է. «Սրիկ խորհրդանիշ էին Արևելքում չէր կարող զիջարանական իմաստ արտահայտել» («Հայրենիքի Ժայռ», 1966, № 5, 30 համար):

² Արձանագրության ուղեգրի տեքստը տե՛ս Գ. Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, էջ 237, 230:

³ Նույն տեղը, էջ 246, 259:

վեց Սոֆենա, իսկ հայկական աղբյուրներում՝ Սոփք, որը հին Հարատայի վարչա-տեղեկագրի միավորներից մեկն էր՝ Սոփաց բրեժխուժյունը: Նույն այդ երկրի հետ է նույնացվում Արմենիա-Շուպրիա երկիրը, հայ էֆնոսի օրբաններից մեկը: Արեմն բացառված չէ, որ խեթների հետ միասին էրեբունի ուղարկված «ծուպահանգները» մեր անմիջական նախնիներից էին՝ նախահայկական ժամանակաշրջանի հայկական ցեղերին պատկանողներ, որոնց էֆնիսկական պատկանելիությունը երկրի անունով ուղղակի կոչում է «ծուպահանգներ»¹, առանց ասելու նրանց ով լինելը: Խեթերից է «ծուպահանգներ»-ից բացի, Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան կողմում եղած Ադա երկրում ու նրա բերդաբազմաբնույթում՝ այդ թվում է էրեբունիում ընկնողում էին նաև ուրարտացիներ (բիսինացիներ), ինչպես և փոքր թվով բարեկացիներ: Արարատական պետության անկումից հետո Արարատյան դաշտում է հարակից շրջաններում դեռ մտա երկու զար շարունակում են գոյություն ունենալ ուրարտացիների մնացորդները՝ ալարոզները: Վ. Գ. (մ. թ. ա.) առաջին կեսին վերաբերող մի վկայության մեջ Հեթոտոր հաղորդում է, որ արևմտյան Պարսկաստանի 18-րդ աստ-րագրությունը բաղկացած է մատինների, ալարոզների և սասպեյնների երկրներից: Դրանցից ալարոզները, ինչպես պարզված է, ապրում էին Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում՝ այդ թվում և Արարատյան դաշտում: Նույն դարի վերջին Քանոն-Ֆոնն ալարոզների անունը չի տպւթ, նրանք այդ ժամանակ արդեն ձուլված էին վաղուց կազմավորված հայ ժողովրդի մեջ:

Այսպիսով, հնագույն էրեբունիի եկվոր բնակիչները բաղկացած էին խեթերից, «ծուպահանգիներից», ուրարտացիներից (որոնք հետագայում կառվեցին ալարոզներ), բարեկացիներից:

Արարատական պետության անկման շրջանում Արևելա-եվրոպական հարթավայրի հարավային շրջաններից Կուրի և Արաքսի ավազաններն են մտա գործում սկյութները, որոնք ավերիչ արշավանքներ կատարելուց հետո ընկնում են տարբեր շրջաններում,

հատկապես այժմյան Կիրովաբադի շրջանում, որը հնում նրանց անունով հայ մատենագրության մեջ կոչվել է Սահաշեն կամ Շահաշեն գավառ: Ամենայն հավանականությամբ նրանցից որոշ թվով մարդիկ հաստատվեցին նաև էրեբունի—Սրևանում: Սկյութներից հետո, արևմտյան տիրապետության շրջանում հավանաբար էրեբունի—Սրևանում հաստատվել են բավական թվով պարսիկներ:

Մոտավորապես դրանք էին տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով էրեբունիում հաստատված եկվոր բնակիչները, որոնք, մեր կարծիքով, կազմում էին նրա բնակչության միայն մի մասը: Նրա բնակչության մյուս մասը հավանաբար կազմում էին բնիկները, որոնք բազաբի անտեսական կյանքում խաղում էին արտակարգ զեռ: Նրանք այժմյան Երևանի գրաված տեղում հաստատվել էին հնարյան ժամանակներում: էրեբունիի հիմնադրելուց հավանաբար դրանց մի մասը բնակչություն հաստատեց նրա միջնաբերդի շուրջը: էրեբունիի գրավիչ շատ կողմեր ունեւ: Նա ունեւ ամուր ու հուսալի բերդ և ոռոգման ջանք: Տեղացիներն այստեղ պահում կարող էին լինել արտաքին հարձակումներից և օգտվում էին ուրարտացիների կատուցած ոռոգման ցանցից:

էրեբունի բազաբի բնակչության թվով վերաբերյալ մեզ չեն հասել ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի վկայություններ: Բնակչության թվի մասին մեզ մոտավոր գաղափար կարող էր տալ բազաբի գրաված տարածությունը, որը, սակայն, առայժմ ճշտված չէ: Այնուամենայնիվ, 6600 ցեղերների բնակեցումը էրեբունիում որոշ հիմք կարող է տալ նրա բնակչության թվի մասին: Կարելի է առանց սխալվելու պնդել, որ էրեբունիում ուրարտացիների թվը, չհաշված նրանց ընտանիքի անդամներին, պակաս չպետք է լինել գերված ու ստրկացված 6600 խեթերից ու «ծուպահանգներից»: Պետության հյուսիսային սահմանադիմին գտնվող և թշնամական երկրներին ստատիկ ազդող էրեբունիի կայազորը, վարչական ապարատը և մյուս կարևոր բնագավառների ղեկավարակառույցներն ու ծառայողները պետք է համարված լինեն հիմնականում ուրարտացիներից: Այնուհետև, մենք հավանական համարեցինք, որ բազաբում մեծ թվով էին կազմում տեղացիները, ինչպես նաև կային բարեկացիներ և այլք: Այդ բոլորը հաշվի առնելով կարելի է ենթադրել, որ էրեբունիի իր ծաղկման շրջանում (VIII դ. մ. թ. ա.) ունեցել է մի քանի տասնյակ հազար բնակիչ, լինելով այն ժամանակվա Մերձավոր Արևելքի հայտնի մարզաշատ բազաբներից մեկը:

Սոցիալական անակեղծից Մերձավոր Արևելքի հնագույն բազաբների բնակչության նման բազմատարր է եղել և էրեբունիի

¹ Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блуря, Ереван, 1966, էջ 95:

² Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 281, Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блуря, էջ 95—96:

³ ՏՃՎ Հակոբ Մանանդյան, Քննական տնտեսական հայ մոզովրդի պատմության, Հ. Ա, Երևան, 1945, էջ 56—60:

րնակչությունը՝ Տեղացիների հիմնական մասը, որը բնակվում էր բազաբի շրջակայքում, կազմում էր հողագործների գյուղական աղատ համայնք¹, որի իրավասության տակ գտնվող հնից մշակույթի հողային տարածությունները էրեբունիի հիմնադրման ժամանակ մնացին անձեռնմխելի, որովհետև վերջինս, ինչպես ասված է արձանագրությունների մեջ, կառուցվել է աղատ ու միանգամայն ամալի հողում²։ Բնակչության մյուս խոշոր խումբը կազմում էին ուղղամտերի սարուկները, որոնց մեծ մասը հեթեթերի երկրից և Մուարանից բերված 6600 զերիններն էին։ Սարուկների աշխատանքը օգտագործվում էր բազաբը կառուցելու, ոռոգման ցանց ստեղծելու և այլ նպատակներով։ Հավանական է համարվում, որ դրանցից շատերը զինվորական ծառայություն էին կատարում բազաբի ուրարտական կայազորում և ընտանիքները շունեին³։ Բազաբի բնակչության ամենաարտոնյալ խումբը կազմում էին բազաբական իշխանությունն ունեցող ուրարտացիները, որոնց ձեռքին էր գտնվում ուղղամական ու վարչական զորքը՝ Փաղաբի և նրա շուրջն ընկած երկրի գյուխ կանգնած էր ուրարտական կառավարչը, նստավայր ունենալով էրեբունիին։ Կառավարին իր ձեռքում կենտրոնացնում էր երկրի (մարզի) ռազմական և վարչա-բազաբական իշխանությունը։

Արգավանդ Արարատյան դաշտը չէր կարող չզբաղվել ուրարտացիների ուղադրությունը։ Նրանք այդ լավ էին դիտակցում և ուսը զննելով Արարատյան դաշտ սկեսցին այստեղ ստեղծել արհեստական ոռոգման ցանց՝ նրա գյուղատնտեսական հնարավորությունները օգտագործելու համար։ Նրանք իրենց զարգացման մակարդակին համապատասխան և միջոցներից խնելով անտեսապես յուրացնում էին իրենց նվաճած երկրները, որոնց թվում և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասերը՝ Արարատյան դաշտն իր շրջակայքի սարահարթերով ու լեռնային շրջաններով հանդերձ։ Ուրարտացիների պետության վերացումից հետո էլ Արարատյան դաշտը մնաց իբրև լավ մշակված, արգավանդ ու ամենարույն մարզերից մեկը։ Նրա մասին մեծ հիացմունքով է խոսում Ստրաբոնը (I դ. մ. թ. ա.—I դ. մ. թ.), Ղաղար Փարպեցին և որիչ հեղինակները։

¹ Գ. Ա. Меликшвили, Наиря—Урарту, էջ 350։

² Նույն տեղը։

³ Նույն տեղը, էջ 359։

⁴ Տրաբոն, География в семнадцати книгах, Москва, 1897, էջ 518, Ղաղար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և Թուրքի տա Վասն Մամուկեանն, էջ 9—10, Հճճճ. Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 118։

Կիսանապատային բնակիչապական պայմաններ ունեցող Արարատյան դաշտում, որտեղ հիմնադրվել էին ուրարտական Մենուախինիլի, էրեբունի, Արգիշտիխինիլի և Քնչքերախինի բերդաքաղաքները, առանց արհեստական ոռոգման առուների ու ամբարանակների միանգամայն անհնար է երկրագործությանը, այլեգործությանը ու բանջարածությունը պրազվելը, մասնավորապես, որ ուրարտացիները տեղացիների հետ անախորժ քնդհարումներից խուսափելու համար իրենց բազաբները հիմնում էին ոչ թե մշակված ու արդեն ոռոգվող հողերում, այլ «աղատ», «ամալի» և «գատարի», տարածություններում¹։ Այդպիսի տեղում էր հիմնադրված նաև էրեբունի—Նրևանք, Արգիշտի I-ը էրեբունիի հիմնադրման մասին թողած իր արձանագրության մեջ նշում է, որ իբ հիմնադրած բազաբի տեղը ստաց «ամալի ու գատարի էր», որ ինքն այնտեղ մեծ զորքեր է կատարել։ Նա այդ նույն է հաղորդում նաև Խոխոտյան տարեգրության մեջ²։ Հայաստանի ոռոգման պատմության մասնագետներից մեկը՝ Գր. Շիրմազյանը հենվելով 1920—1930-ական թվականների իր կատարած ուսումնասիրությունների վրա՝ ենթադրում է, որ Սրևանքի հին առուները՝ Մամուկ և Գաման գոյություն են ունեցել տակավին ուրարտական ժամանակներից³։ Այդ, անշուշտ, շատ հավանական է։ Ընդ որում, դրանցից էրեբունիի համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ հատկապես Մամուկի առու, որը սկզբնով Հրազդանի ձախ փոխի ձգվում է զեպի ալեկեր։ Դալման գետն է զեպի էջմիածին, իսկ Արուհայաթը հիմնականում սպառվում էր այժմյան Սրևանքի հյուսիս-արևմտյան կողմերում։ Կարեի է ենթադրել, որ այժմյան Կոմսոմոլի այդու լիճը (նախկին Քոստիմա-գյուղ) նույնպես գոյություն է ունեցել ուրարտական ժամանակներից։ Այդպիսի լիճեր ուրարտացիների ժամանակ գոյություն ունեին Վանա և լիճ շրջակայքում, Գրեղանա լեռների հարավային հատվածում և այլ տեղերում։ Տրամաբանական հիմքեր կան պնդելու, որ Կոմսոմոլի այդու լիճը ևս կառուցվել է ուրարտացիների ժամանակ և Քոստիմա-խանի օրոք միայն վերականգնվել է և կոշիկ նրա անունով։ Գրանցից բացի, էրեբունիի շրջակայքի հողերի մի մասը հավանաբար ոռոգվում էր մեծ նշած այն ջրմուղի ավելցուցիկ ջրերով, որը խմելու ջուր էր տալիս բերդաքաղաքին։ Ոռոգման

¹ Տե՛ս Գ. Ա. Меликшвили, Урартские клинообразные надписи, էջ 263—264, Նույնի, Наиря—Урарту..., էջ 218, 262, 350 և այլուր։

² Տե՛ս Նույն տեղերում, ինչպես նաև՝ 200թ՝ ԳԱ «Տեղեկագիր» (Տառ. գր.), 1951, № 8, էջ 75—88 և 88—98։

³ Գր. Շիրմազյան, Գրգաբների Հայաստանի ոռոգման պատմություններից, Պրևան, 1962, էջ 30—31։

այդ կատուցները առաջին հերթին սպասարկում էին ուրարտական պետական տնտեսություններին, ապա նաև այն բնակիչներին, որոնք ապրում էին ոռոգման ցանցի շրջանակների մեջ գտնվող տնտեսություններում¹։

Քննչերախնդիր հետ համեմատած էրեբունի—Նրեանում պեղումները ժամանակ հնությունները քիչ են հայտնաբերված։ Բնակիչները աստիճանաբար տեղափոխվելով դեպի հյուսիս-արևմուտք ու արևմուտք՝ այժմյան Նրեանի կենտրոնական թաղերի տեղը, իրենց հետ տարել են նաև ամբողջ օձնեղջիածոք՝ այդ թվում էլ գյուղատնտեսական գործիքներն ու ուտիլիթի պաշարները։ Գատարկվել են նաև պետական պահեստները։ Քննչերախնդիր կառուցվելուց հետո էրեբունիի դադարում է նշանավոր բերդ լինելուց, նրա հաջահատիկի և սննդամթերքի մյուս պաշարների պահեստներն էլ աստիճանաբար դատարկվում են։ Այնուամենայնիվ, ուրարտական արձանագրություններն ու վաղմի թաղաքի տեղում հայտնաբերված պահեստ-շինությունների առկայությունը հնարավորություն են տալիս էրեբունիի նրկադրոծության մասին ընդհանուր գաղափար կազմելու համար։

Էրեբունիում ցորենի երկու խոշոր պահեստների կառուցման մասին պահպանվել են երկու արձանագրություններ, որոնցից մեկը թողել է թաղաքի հիմնադիր Արզիշտի I-ը, իսկ մյուսը՝ նրա որդի Սարգուրի II-ը։

Առաջին արձանագրության մեջ ասվում է, որ Մենուայի որդի Արզիշտին կառուցել է այդ հացահատիկի պահեստը (ՅՄ) և ունի 10100 կապի տարողություն²։ Արձանագրության տեքստը այժմ վերծանված է հետևյալ կերպ. «Արզիշտին, Մենուայի որդին, կառուցեց հացահատիկի այս պահեստը, նրանում (կա) 10100 կապի»³։

Իսկ Սարգուրի II-ին պատկանող արձանագրությունը հայտնաբերվել է 1950 թվականին Կ. Լ. Լուվանիտյանի և Ա. Ա. Պոզդոյանի կողմից։ Այն վերծանվել և ընթերցվել է մի փոքր տարբերություններով, բայց հիմնականում ընդունելի է հետևյալ տեքստը.

«Սարգուրին, Արզիշտիի որդին, այս հացահատիկի պահեստը կառուցեց, նրանում (կա) 5100 կապի»։

Սարգուրի, Արզիշտիի որդի, թագավոր հզոր, թագավոր մեծ,

¹ Գ. Ա. Меликишвили, Наирн—Урарту..., էջ 262։

² Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 264։

³ Նույն տեղը։

թագավոր Բիախնիլի երկրի, թագավոր երկրների, տեր Տուշպա քահաբի»⁴։

«Կապի»-ն ուրարտական միավոր էր, որով արտահայտում էին հացահատիկները։ Նրա շափը մեղ համար առայժմ մնում է անհայտ։ Սակայն համեմատություններ կատարելով ուրարտական պետության մյուս մասերում կառուցված նույնանման պահեստներին հետ տեսնում ենք, որ էրեբունիի նշված պահեստները թեպետև ամենահստըրներից չէին, բայց նույնպես հայտնի էին։ Այդ երևում է հենց նրանից, որ ուրարտական թագավորները հատուկ արձանագրություններ են փորագրել ավելի դրանց կառուցման ու տարողության մասին։

Էրեբունիի նշված երկու պահեստները միասին տեղավորել են 15200 «կապի» հացահատիկ։ Հնագիտական պեղումների շնորհիվ Արին-շեբրում, նրա հյուսիս-արևելյան մասում բաց է արված մի քաղաքային մեծ սենյակ, որը Բ. Բ. Պիոտրովիկու կարծիքով հավանաբար եղել է հացահատիկի պահեստ։ Նա այդ եզրակացությանը հանգել սենյակի կառուցվածքից նկատելով⁵։ Բացի դրանից, մի այլ մեծ սենյակում հայտնաբերված են կորեկի մնացորդներ⁶։ Բարձր բերքատու և հողի ու կլիմայական պայմանների նկատմամբ քիչ պահանջուտ այս մշակույթը, ինչպես ենթադրվում է, Ուրարտում մեծ տարածում է ունեցել։ Նրանից պատրաստել են և՛ հաց, և՛ գարեջրին նմանվող խմիչք⁷, իսկ ցողունը օգտագործվել է իբրև սնունդի կրակի։ Մասնագետները Քննչերախնդիր հայտնաբերված կորեկի մնացորդների հիման վրա ենթադրել են, որ Արարտյան դաշտում մշակվել է դրանից առնվազը երկու տեսակ⁸։ Սակայն կորեկն այստեղ մշակվող հացահատիկներից միայն մեկն էր, այն էլ իր ցանքատեղաբաժնով միայն որ առաջինը։ Հացահատիկներից ավելի կարևոր տեղ էին զբաղվում ցորենն ու գարին, իսկ յուղատու մշակույթներից՝ ընդամենը⁹։

¹ Տե՛ս Գ. Ա. Меликишвили, Урартские клинообразные надписи, էջ 371, Կ. Կոպչիյան, Ուրարտական երկու նոր արձանագրություններ (2000 թվ «Տնտեսագրի» (հաս. գիտ.), 1951, № 8, էջ 95—98)։

² Ն. Վ. Լաբարյանյան, Նրեանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը («Պատմա-քառասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 90)։

³ Կ. Ա. Оганесян, Архитектура Эрбунин..., էջ 6։

⁴ Կ. Բ. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 93։

⁵ Տե՛ս Մ. Գ. Туманян, Избранные труды, Ереван, 1957, էջ 165։

⁶ Կ. Բ. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 93։

Ուրարտական բերդաքաղաքների խոշոր պահեստներում ամբարվում էին ոչ միայն տվյալ քաղաքի պետական տնտեսություններից ստացվող հացահատիկները, այլև տվյալ վարչատերերտրիայ միավորի բնակչությունից բնահարկով վերցվող հացահատիկը: Հավաքված հացահատիկի և երկրագործական մյուս մթերքների մի մասը մնում էր տեղում՝ կայացորի, վարչական ապարատի և այլոց կարիքների համար, իսկ մյուս՝ հավանաբար մեծ մասը ուղարկվում էր պետության մայրաքաղաք Տուշպա և այլ քաղաքներ: Այնպես որ Էրեբունին, Արգիշտիիինին և Քելշերաինին վարչական կենտրոն լինելու հետ միասին նաև հարկերի հավաքման ու առաքման մեծ կայաններ էին:

Էրեբունիում և Արարատյան դաշտի ուրարտական մյուս բերդաքաղաքներում երկրագործությունից հետո կարևոր դեր էր խաղում աղեկգործությունը: Էրեբունիումում այգեկործության լինակի մասին հնագիտական նյութեր բըչ են հայտնաբերվել: Այնուամենայնիվ, առանց սխալվելու կարելի է ենթադրել, որ Էրեբունին ուներ իր մրգատու և խաղողի քնդարձակ այգիները, զինու պահեստները, թեպետև այստեղ հայտնաբերված կարասները խոշոր տեղադրում են Հրազդանից արևելուտք, իսկ ումանք էլ՝ համապատասխան համարում ամբողջ Արարատյան դաշտին, խաղողագործությունը զարգացման էր հասել նույնիսկ նախուրարտական ժամանակներում: Ուրարտացիները մուտք գործելով Արարատյան դաշտ, այստեղ նրանք զուտ գարգացած խաղողագործություն ու այգեկործություն: Ն. Վ. Հարությունյանը նույնիսկ ենթադրում է, որ «ԱՀ» երկրատունն ու հայրենն «Վազ» տերմինը համապատասխանում են իրար, որ վերջինս ծագել է առաջինից, որը հավանաբար ունեցել է «Վազի երկիր», «Սաղողագործության երկիր» իմաստը, իսկ «ԱՀ»-ն ամենայն հավանականությամբ տեղական հնագույն անուն էր և գործածության մեջ մնաց ուրարտացիների ժամանակ: Որքան էլ դրանք անհավանական լինեն, այնուամենայնիվ, հնագիտական նյութերով ապացուցված է, որ Քելշերաինիում, Էրեբունիում և այլ տեղերում՝ ուրարտական ժամանակներում եղել են զինու հակառակական պահեստներ՝ Գինու և մյուս հեղուկների համար միա-

վոր էր ծառայում «ակարկի»-ն (agargi): Մեկ «ակարկի»-ն հասարակ էր 240—250 լիտրի¹:

Արարատյան դաշտում և նրա քաղաքներում, որոնց թվում էրեբունիումը, զբաղվել են մանր ու խոշոր եղջերավոր անասնապահությամբ: Պեղումների ևնթացում էրեբունիում հայտնաբերված են ոչխարի, աչծի, խոզի, խոշոր եղջերավոր անասունների, օզտի, շան սակորների մնացորդներ²: Ընտանի կենդանիների սակորների մնացորդներից բացի, հայտնաբերված են նաև վայրի կենդանիների՝ վայրի աչծի և նապաստակի սակորների մնացորդներ³: Գրանք, ինչպես նաև բրոնզե դոսիների վրա որսորդական տեսարանների պատկերումը նկատի ունենալով, Ն. Վ. Հարությունյանը ենթադրում է, որ էրեբունիում տարածված զբաղմունք է եղել նաև որսորդությունը⁴:

Էրեբունիի արհեստագործության մասին քնդհանրապես բիշ փաստեր են հայտնի:

Այնուամենայնիվ չի կարելի շնչել, որ էրեբունին էլ ուներ իր մի շարք արհեստները: Փաղաքի հատույցներում օգտագործված աղյուտը, լավ մշակված տուֆն ու բազալտը, ջրմուղի տուֆն խողովակները, կարասների քեկորներն ու կավե զանազան ամանները, անյակների ներսի վարպետորեն կատարված ձեփին ու նորոգումը, սաճանների ու պլաստի պատերի վրա երկրաչափական ձևերի պատկերները, բրոնզե իրերն ու նեաների ծայրերը, ապարանջաններ, կնիքները և այլ առարկաների գոյությունը⁵ լրված քաղաքատեղում ցույց են տալիս, որ այնտեղ բավական զարգացման էին հասել կալագործական, շինարարական, մետաղամշակման և այլ արհեստներ: Պետք է նկատի ունենալ, որ հայտնաբերված իրերի միայն մի մասն է բերվել ուրիշ տեղերից, դրանց ձեռք մասը պատրաստվել է տեղում:

Էրեբունիում հայտնաբերված իրերն ու առարկաները սահմանափակ բանակություն են կազմում: Հնագիտական նյութերն այստեղ հայտնաբերվել են պատահականորեն, այս կամ այն ճարտա-

¹ Г. А. Меликишвили, Наирн—Урарту, էջ 344:

² И. М. Лосева, Раскопки цитадели урартского города Ирвунн «Краткие сообщения института истории материальной культуры», АН СССР, 1955, вып. 58, էջ 51—52:

³ Նույն տեղը:

⁴ Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 83:

⁵ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 8:

¹ ՏՊ՝ Н. В. Арутюнян, Новые урартские надписи, Кармир-Блур, Ереван, 1966, էջ 91:

² ՏՊ՝ Նույն տեղը, էջ 90—91:

բայտեական կառույցը պեղելու և մաքրելու ժամանակ¹։ Համեմատարար ավելի մեծ քանակությամբ հայտնաբերված են կավե մասնիկների բեկորները²։ Հայտնաբերված են կավե թասեր, սափորներ, գինու խոշոր կարասների բեկորներ, կրեթ կնիք, որոնցից առաջինի վրա, որը գլանաձև է, պատկերված է որսի տեսարան, երկփորոցի վրա՝ առյուծ, իսկ երրորդի վրա՝ պատկած գառանաչգ (ГРМ-ФОН)³։ Քրոնոլոգիայի հայտնաբերված են հաստ կանթերով շարժանգներ, վահանիկներ, ապարանջաններ, տարբեր ձևի ու մեծության ազատե, ապակյա և սարգիտնի ուլունքներ։ Հայտնաբերված են մեծ քանակությամբ նետի բրոնզյա ծայրեր։ Դրանք սկյութական տիպի են և որոշակի կերպով տարբերվում են Կարմիր-բլուրում հայտնաբերված սկյութական նետերի ծայրերից։ Այդ տարբերությունները նկատի ունենալով, մասնագետները ենթադրում են, որ սկյութների էրերունիի վրա կատարած հարձակումը չի համընկնում Քեյշերախիի կործանման ժամանակի հետ⁴։

Էրերունիի, ուրարտական մյուս բերդաքաղաքների և մերօրոջ ուրարտական պետության ու մասամբ նրա հարևանների պատմության համար կարևոր աղբյուրներից են ուրարտական սեպագիր արձանագրությունները, որոնք ցրված են Հայաստանով (Հայկական լեռնաշխարհ) մեկ։ Այժմ միայն էրերունիում հայտնաբերված և էրերունիին պատկանող, բայց այլ տեղերում հայտնաբերված իրերի վրայի արձանագրությունների թիվը հասնում է մտավորապես քսանի։ Այդ արձանագրությունների մեջ հիմնականում տեղեկություններ են հաղորդված քաղաքական անցքերի, շինարարական աշխատանքների, առուների անցկացման և այլնի վերաբերյալ։

Արին-բերդի և Կարմիր-բլուրի հնագիտական պեղումների շնորհիվ հայտնի դարձավ, որ էրերունի—Երևանը ուներ ուրարտական արվեստի հայտնի շնչախի նմուշներ, որոնք ընդ կարող ուշադրության շարժանանալ։ Վերջ թվարկված ճարտանկները, ուլունքները, վահանիկները, ապարանջանները և շքեղության մյուս առարկաներն ու կերպերը, արհեստավորական արտադրանքներ լինելու հետ միասին իրենց վրայի պատկերներով ու փորագրու-

թյուններով, արվեստի գործեր են, այն էլ ժամանակի առումով բարձր արվեստի առարկաներ։ Սակայն էրերունիի արվեստի մասին պոզիտիվ կարելի է կազմել միզ հաստ վահանիկի և հատկապես, որմանկարների վերջոցով։ Ուրարտական վահանները յուրահատուկ գեղարվեստական իրեր էին, որոնք թագավորների մակապրոթամբ նվիրվում էին աստվածներին ու թագաբաններին։ Էրերունիի վահանները, իբրև թանկարժեք աստղանկեր, արվեստի այլ իրերի հետ միասին (սաղավարտներ, կապարճներ, ուրարտական թագավորների անուններով թասեր, ձիասարքի մասեր) VII դ. (մ. թ. ա.) անգլափոխվել և պահվում էին Քեյշերախում⁵։ Քեյշերախում հայտնաբերված վահաններից շուրջ պատրաստված էին էրերունիի թագաբի համար և նրանց վրա կան Արգիշտի թագավորի սեպագիր մակապրոթամներ⁶։ Դրանցից մեկի վրա, օրինակ՝ սեպագրերով գրված է.

«Նաչը աստուծն, տիրոջը, Մենուայի որդի Արգիշտին այս վահանը նվիրեց՝ Երրունի (տարբ. Երբունի կամ էրբունի) թագաբի համար։ Արգիշտի, Մենուայի որդի, թագավոր հողը, թագավոր մեծ, թագավոր Բիայնի երկրի, տեղ Տուչաթ թագաբի»⁷։

Արվեստի տեսակետից ավելի մեծ արժեք ունի դարձյալ Արգիշտիի մակապրոթամն իր վրա կրող այն վահանը, որը հայտնաբերվել է 1951 թվականի պեղումների ժամանակ Բ. Քիտորովի և արձանագրության տեքստի հիման վրա գտնում է, որ Արգիշտիի այդ սքանչելի վահանը նույնպես պատրաստված էր էրբունիի թագաբի համար⁸։ Այդ վահանը պարզաբան է առյուծի ու ցուլի պատկերներով, որոնք կազմում են երեք գոտիներ և իրարից բաժանված են զարդազիջաներով։ Նրա վրա կան ընդամենը առյուծի 36 և ցուլի 20 պատկերներ։ Վահանի մեծ շքեղությունն են առաջին կենտրոնական մասում պատկերված 38 վարդազարդերը, որոնք նման են Բրիտանական թանգարան տարված մի այլ վահանի նախշերին⁹։ Գ. Ա. Մեկիշվիլին այս վահանը համարում է սուրարտական արվեստի աչքի ընկնող հուշարձան¹⁰։

Սակայն էրբունի—Երևանի ուրարտական ժամանակաշրջանի արվեստի մասին չի կարելի գաղափար կազմել անանց որմնա-

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., т. 8:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը։ Մինչև Կարմիր-բլուրի պեղումները բնօրինակ էին ուրարտական 8 կնիքներ, որոնցից մեկը հայտնաբերված էր Արին-բերդում (Б. В. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 108):

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 8—9.

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., т. 8:

² Б. В. Пиотровский, Көрмөр. 6-бур., III, էջ 27:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը, էջ 28:

⁶ Г. А. Мелкишвили, Наирн—Урарту, էջ 259:

նկարների, որ այնքան մեծ տեղ են զբաղում նրա պաշտոնի ու տաճարների պատերի վրա: Դրանց հետ միասին ուրարտական մոնումենտալ կառուցվածքներում զգալի տեղ է տրված նաև քանդակին, բայց առաջինների համեմատությամբ քանդակներն ավելի քիչ են հանդիպում:

Պեղումները ցույց են տվել, որ որմնակարները կազմում են էրբուռնի ճարտարապետական մոնումենտալ կառույցների բազկացուցիչ մասը: Որմնակարների հիմնական թվաքանակը կազմում էին պաշտամունքի հետ կապված կոմպոզիցիոն պատկերները, որոնք լրացվում են դարձերգով ու նախշերով: Հայտնաբերված որմնակարների առանձին պատարիկները, որոնք հանդիպում են տապաված պատերի մնացորդների վրա, առանձին սենյակների ավերակներում և պալատական սենյակների պատերի վրա, ցույց են տալիս, որ ուրարտական որմնակարներում լայնորեն օգտագործվում էին երկրաշափական ձևերը, բուսատեսակների, մարդկանց և կենդանիների պատկերները: Բոլոր դեպքերում որմնակարները կապված են պաշտամունքի հետ¹:

էրբուռնի որմնակարները կոմպոզիցիոն տեսակետից հասարակ են, հարմոնիկ և վառ գույնի: Դրանք ունեն տեխնիկական բարձր կատարում: Ամենաառաջ որմնակարները նկատված են նալդ աստծո տաճարի ավերակներում, որ թաղված են հողի հասաշերտի տակ: Նույնիսկ կարողացել են զբաղվել մի քանիսը վերականգնել իրենց նախնական ձևերով: Որմնակարները բոլորը գտնվում են կավի ծեփի տակ, որ կատարել են հետազայում՝ սենյակները վերանորոգելու ընթացքում²: Որմնակարներում հանդիպում են վարդազարդեր, կենաց և սրբազան ծառեր, մարզու կենդանիներով աստվածներ, զարդադոտիներ, կենդանիներ և այլն: Որմնակարները բազմազույն են: Դրանցում օգտագործված են դեղին, բաց-կապույտ, կարմիր, կապույտ, երկնազույն և կարմիր (օխրայի) գույները³: Դրանք ուրարտական որմնակարային բարձր արվեստի նմուշներ են, որոնք իրենց կատարելությամբ չեն դիչում այն ժամանակվա Մերձավոր Արևելքի մյուս զարգացած երկրների որմնակարչությանը:

¹ К. Л. Оганесян, Архитектура Эрбунд..., էջ 58:

² Նույն տեղը, էջ 59:

³ Նույն տեղը, էջ 59—60:

⁴ Նույն տեղը, էջ 59—74:

⁵ Նույն տեղը: Տե՛ս նաև Էվինսի հայ ճարտարագիտության պատմությունը, էջ 42—43:

Իչ, վերաբերում է արձանագործությանը, ապա պետք է տակ, որ բայց վերը հիշված փայտի արձանիկների մնացորդներից, այլ կարգի նյութեր չեն պահպանվել և հնարավոր չէ այդ մասին շատ թե քիչ լրիվ գաղափար կազմել:

Ինչպես տեսնում ենք, էրբուռնի—երևանի արվեստը հնագույն ժամանակներում բավական զարգացած է եղել: Զարգերի, վաճանների ու թանկարժեք այլ իրերի վրա արված նախշերը, նկարները, գծազարդեր, կենդանիների ու բույսերի պատկերները, վարդազարդերը, նախշադոտիները և բարձրարվեստ ու վառ գույնի որմնակարները ցույց են տալիս, որ արվեստի առումով մեր մայրաքաղաքը ուրարտական ժամանակաշրջանում կանգնած էր այն ժամանակվա ամենահայտնի քաղաքների շարքում:

2. Ք Ե Ց Շ Ե Ք Ա Ի Ն Ի

Թելչերախնի բերդապալի աեզն ու դիրքը, կառուցվածքն ու զբաղված տարածությունը: Անունը: Քաղաքի հիմնադրումը, վարչական վիճակն ու խաղաղացած դերը, տեսական կապերը: Քաղաքի ավերումը սկյութների կողմից ըստ պեղված հնագիտական նյութերի: Ընակչությունը, նրա էրնիկական կազմը, սոցիալական խմբերն ու դրանց իրավական վիճակը: Թելչերախնի տեսական կյանքը, առհեստական ռոզգման գանցը, երկազորությունը, այգեգործագործությունը և բանջարաբուծությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, առևտուրը: Պեղումներ և դրանց շնորհիվ նախնաբերված հնագիտական նյութերը՝ արձանագործություններ, զենքեր ու ռազմական հանդերձանք, կենիներ, մանր զարդեր, ամանեղեն, արվեստի առարկաներ: Քաղաքի կառուցվածքը, պաշտպանական պարիսպներ, հատակաքիթը, միջնաբերդի ու բուն քաղաքի նկարագիրը, ճարտարապետության առանձնահատկությունները:

էրբուռնի—երևանի և ուրարտական բազմաթիվ այլ բերդաքաղաքների համեմատությամբ հնագիտական, պատմական և ճարտարապետական առումներով Թելչերախնին ավելի լավ է ուսումնասիրված: Եթե էրբուռնին գտնվում էր այժմյան Երևանի հարավ-արևելյան կողմում, ապա այս քաղաքը հիշա հակառակ կողմում էր: Այն գտնվում էր Երևանի հարավ-արևմտյան ծայրամասում, Չարբախ գյուղի (այժմ քաղաքի թաղամասը) մոտ, Հրազդանի բարձրադիր ձախ ափին, Կարմիր-բլուրի լանջերին և հարակից տարածու-

Յլան վրա Քեյշերախին—Կարմիր-բլուրի դիրքը ստրատեգիական առումով շատ նպաստավոր է եղել: Կարմիր-բլուրը, որի վրա գտնվում էր այդ քաղաքը, արևելյան, հյուսիսային և արևմտյան կողմերից պատած է Հրազդանի ձորով: Հսկայական ու ժայռային կղևաված կազմող Կարմիր-բլուրի լանջերը համեմատաբար մեղմաձեք են արևելյան և հյուսիսային կողմերում, իսկ արևմտյան կողմում գրանք զտիթաի են և ուղիղ իջնում են դեպի Հրազդանի հունը: Այլ կերպ ասած, բնականին Քեյշերախի դիրքն ամուր էր, Յլնաձորի համար բիշ մատչելի: Նրա կառուցողները բերգաբազաի տեղն ընտրելիս առաջին հերթին նկատի են ունեցել պաշտպանական նպատակները¹: Բլլի դիմաց, նրանից արևմուտք, Հրազդանի աջ ափին տարածվում են միանգամայն ջրազուրկ դռեր, մինչդեռ հարավային կողմում ընկած շրջանը ոռոգվում է Հրազդանով և հայտնի է իր այգիներով, բանջարանոցներով ու դաշտերով: Հենց այդ մասում էլ փոխված էր բուն քաղաքը: Բլլի դադաթին ու լանջերին հոյր շերտ է կազմում կարմիր գույնի հողը, որը առաջացել է շփոթած աղյուսից շարված հնագույն շենքերի ավերակից: Ամենուրեք կան աղյուսի բեկորների և շինարարության համար օգտագործված բարերի թափվածքներ: Այդ պատճառով էլ «բլուրն ստացել է իր այժմյան «Կարմիր-բլուր» անունը»²:

Ուրարտական բերդաքաղաքի ավերակից շատ դարեր հետո, XI—XII դարերում, Կարմիր-բլուրի վրա տեղադրված է եղել հայկական ամրացված դաստակերտ, իսկ նրա ավերակների մոտ գտնվող ժամատունը կանգուն էր մինչև մեր դարի 30-ական թվականները³: Գարերի ընթացքում բլրալանջերը ուժեղ լվացվել են և շատ տեղերում մինչև հնագիտական պեղումներն արդեն նկատելի էին հնագույն շենքերի հետքերն ու հիմքերը⁴:

Քեյշերախին—Կարմիր-բլուրի դիրքը հարմար է եղել նաև քաղաքական ու տեսնական առումով: Նա գտնվում էր ուրարտական պետության հյուսիսային երկրամասերի կենտրոնական շրջանում և հավասար շափով կարող էր կապ պահպանել դրանց հետ: Արարատյան արգավանդ գաշտում գտնվելը Քեյշերախին դարձնում էր

տեսնական տեսակետից կարևոր կենտրոն, թեպետև նա ավելի հայտնի էր որպես բերդաքաղաք:

Դեռևս չի պարզաբանված Քեյշերախինից դուրս եկող կամ աջանեղ տանող ճանապարհներն ու դրանց ուղղութունները: Բայց կասկածից վեր է, որ նա Հրազդանի հովտով կապված էր Աևանայի ափերին գտնվող ուրարտական բերդաքաղաքների և Արգիշտի-խինիլիի հետ, իսկ էրերունին իր արվարձանների միջոցով ընդհուպ կապված էր նրան: Մասնագետները գտնում են, որ Քեյշերախինի Հրազդանի աջ ափի հետ կապված է եղել հարավ-արևմտյան կողմով, որտեղ կա համեմատաբար հարմար անցք: Ըստ երևույթին հենց այստեղ էլ, բերդի պլանավոր մուտքի դիմաց գտնվել է այն կամուրջը, որով կապ են պահպանել գետի աջ կողմում ընկած շրջանների հետ⁵: Քերևս այդ կամուրջի վրայով էր անցնում նաև դեպի Արգիշտիխինիլի (Արմավիր) տանող հնագույն ճանապարհը:

Քեյշերախին իր դիրքով բացառությամբ չէր կազմում ուրարտական և հնագույն հայկական քաղաքների մեջ: Բլուրների վրա և դրանց լանջերին էին տեղադրված նաև ուրարտական պետության մայրաքաղաք Տուշպան (Վան), Արգիշտիխինիլին, Գարանին, էրերունին, նալդ աստծո քաղաքը և այլն⁶: Նույնպես դիրք ունեին նաև հին և միջնադարյան հայկական մի շարք քաղաքներ⁷: Արտաշատ, Գլին, Կարին, Ոստան և այլն: Իրար մտտիկ գտնվող ուրարտական այդ բլուր-քաղաքների միջև խարույկի միջոցով պահպանվում էր տեսողական կապ⁸:

Քեյշերախինի գրաված տարածությունը լավ հայտնի է: Ինքնաթիռից արված նկարներում նույնիսկ պարզ կերպով երևում են նրա արևելքից արևմուտք ձգվող զուգահեռ փողոցները, որոնց երկու կողմերում շարված էին բնակելի շենքերն ու թաղերը: Նրա միջնաբերդը տեղադրված էր բլրի վրա և գրավում էր 4 հեկտար տարածություն, իսկ բուն քաղաքը փակված էր բլրին արևմտյան կողմից կցված սարահարթի վրա, միջնաբերդի հետ միասին գրավելով մոտ 40 հեկտար տարածություն⁹:

Ուրարտական այս քաղաքի անունը նախքան պեղումները գիտության համար մնում էր անհայտ: Բայց շուտով քայքայում է

¹ К. Л. Оганесян, Кармир-блур, IV, Архитектура Тейшебаини, Ереван, 1955, էջ 10:

² Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, Результаты раскопок 1939—1949 гг., Ереван, 1950, էջ 13:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը:

¹ К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, էջ 10:

² Նույն տեղը:

³ Տե՛ս «Անկարի հայ նարարապետության պատմության», էջ 27:

⁴ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 13: Նման, К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, էջ 11, Г. А. Меликишвили, Напри—Урарту, էջ 309, «Անկարի հայ նարարապետության պատմության», էջ 35 և այլն:

գաղափերը Պաշտօնի շրջանում հայտնաբերվում է բրոնզի փականի (հեղ) մաս, որի վրա սեպագրով գրված էր՝ «Ռուսայի, Արզիշտի որդու, Քեչեչեբախի բերդ (տառայք՝ «զեկքի տուն»)»¹։ Դրանով հայտնի է դառնում, որ բերդաբազարը կոչվել է ուրարտական պատերազմի ու մրրիկի աստծո՝ Քեչեչեբի անունով («Քեչեչեբախի» նշանակում է «Քեչեչեբ աստծո բազար»), որի բրոնզե անգրիկի հայտնաբերվել է Կարմիր-բլուրում 1941 թ.:

Այդ արձանագրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Քեչեչեբախիի հիմնադիրը Արզիշտի II-ի որդի Ռուսան էր, որը թագավորել է VII դարում (մ. թ. ա.): Այդ նույն թագավորի անունը հիշատակված է նաև բերդի VII դարին վերաբերող մեծ շինություն պատի քարերից մեկի վրա²։ Կարմիր-բլուրում հայտնաբերված բրոնզե այն բազմաթիվ իրերը, որոնք վերաբերում են II դարին (մ. թ. ա.), ըստ դրանք վրա եղած սեպագրերի պատկանում էին Արզիշտիիիլի, Էրեբունի և ուրարտական այլ բազմաբնիկ Գրանց վրա Քեչեչեբախիի անունը չի հիշատակված։ Այդ իրերն իրենց վրա կրում են VIII դ. (մ. թ. ա.) ուրարտական հայտնի թագավորների՝ Մենուայի, Արզիշտի I-ի, Սարգուր II-ի և Ռուսա I-ի անունները։ Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով այդ իրերը Քեչեչեբախի էին փոխադրվել ուրարտական պետության մեջ կատարված վարչական վերափոխությունից հետո, VII դ. (մ. թ. ա.), կը նրա հյուսիսային երկրամասում հիմնադրվեց ու վարչական մեծ կենտրոնի նշանակություն ստացավ Քեչեչեբախիին՝ Նկատի ունենալով այդ բոլոր, ինչպես և 1962 թ. հայտնաբերված նոր արձանագրությունը, ուրարտագետները Քեչեչեբախիի բերդաբազարի հիմնադիրը համարում են Արշիդատի II-ի որդի Ռուսա II-ին (685—645 թթ. մ. թ. ա.): Այլ կերպ ասած, Քեչեչեբախիի Էրեբունիից (782 թ. մ. թ. ա.) և Արզիշտիիիլիից (776 թ. մ. թ. ա.) ավելի քան 100 տարի ուշ էր հիմնադրված, եթև նույնիսկ ընդունելու լինենք ն. Հարությունյանի այն ենթադրությունը, որ Ռուսա II-ը Քեչեչեբախիի հիմքը դրել է իր թագավորության առաջին տարիներին³:

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, т. 20: *Հժժ*, Գ. Ա. Меликшвили, Наир—Урарту, էջ 309:
² Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 21:
³ *Նույն*, Кармир-блур, II, էջ 9:
⁴ *Նույն տեղը*, էջ 9—10:
⁵ *Նույնը*, Кармир-блур, I, էջ 20—21, Գ. Ա. Меликшвили, Наир—Урарту, էջ 309, 311—312, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 80, *Նույնը*՝ Новые урартские надписи Кармир-блур, էջ 6—7 և այլու:
⁶ Н. В. Арутюнян, Новые урартские надписи, էջ 7:

Նշված փականի դոտու վրայի արձանագրությունը (որում, ինչպես տեսանք, Քեչեչեբախինի կոչված է «Չեկքի տուն»), բերդի դիրքն ու պաշտպանական կառուցվածքների հնարները և պեղած մեծաթիվ շենքերը Բ. Բ. Պիոտրովսկուն թույլ են տվել Քեչեչեբախին համարելու ուրարտական ամենահայտնի բերդերից մեկը⁴։ Նա նշում է, որ այսպեղ հայտնաբերված բրոնզե ու երկաթե մեծաթիվ ու բազմազան զենքերը ոչ միայն զարգայար են տալիս ուրարտական սպառազինության մասին, այլև փաստական նյութ են հին Արևելքի բազմաթվատի պատմության համար ընդհանրապես, որովհետև դրանք ունեն ինչպես տեղական-ուրարտական, այնպես էլ ասորական և սելյուսական մագուլ⁵:

Այժմ ոչ ոք չի ասարկուսում, որ Քեչեչեբախին եղել է ամուր և հայտնի բերդ:

Սակայն Քեչեչեբախիի խաղաղած վարչական դերի մասին զենկա բուրդի կողմից բնորոշելու ու հիմնավորված տեսակետ չկա։ Ուրարտական աղբյուրների համաձայն Քեչեչեբախին գտնվում էր Ազգ կոչված երկրում⁶, որտեղ բնակվում էր համանուն ցեղը։ Այս երկրում են տեղադրում նաև Էրեբունին ու Արզիշտիիիլիին⁷։ Ն. Հարությունյանը վերանայելով ուրարտական արձանագրություններում հիշատակված «Կուարլինի երկրի Տոլխա»-ի մասին 1959 թ. արտահայտած իր կարծիքը⁸, այն ենթադրաբար համարում է Ազգ երկրի բաղկացուցիչ մասը⁹։ Հավանաբար Ազգ երկիրը հենց իր մեջ ընդգրկում էր Արարատյան դաշտի Արաքսի ձախ կողմում բնկած հատվածի մեծ մասը։ Իսկ «Կուարլինի երկրի Տոլխա»-ը, ինչպես կարճապահում են Ռուսայի կողմից Հրազդանից (Նյգարանի) հանված մեծ ջրանցքի մասին թողած արձանագրությունից⁷, ընկած էր այժմյան Էջմիածնի և Կարմիր-բլուրի միջև¹⁰։ Ըստ երևույթին սա Ազգ երկրի այն փոքրիկ հատվածն էր, որ ռոտզվելու էր նշված առավի ջրերով՝ Այսպիսով, վարչական առումով «Կուարլինի Տոլխան»

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, т. 5:
² *Նույն տեղը*:
³ *ՏՃ՝ Н. В. Арутюнян, Новые урартские надписи*, էջ 6—7 և 81:
⁴ *Նույն տեղը*, էջ 82—84:
⁵ *ՏՃ՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 90*:
⁶ *ՏՃ՝ Н. В. Арутюнян, Новые урартские надписи*, էջ 82—83:
⁷ Գ. Ա. Меликшвили, Наир—Урарту, էջ 66:
⁸ *Նույն տեղը*, էջ 308:

ու Ազա երկիրը ոչ թե առանձին-առանձին միավորներ էին, այլ կազմում էին մեկ միավոր, որը հայանի էր Ազա անունով¹։

Ք. Ք. Պիտրովսկին իր աշխատություններում, ընկնելով ուրարտական պետության մեջ կատարված վարչական վերափոխություններից և նրա հյուսիսային երկրամասերում այդ ժամանակներում տիրող գրություններից, ենթադրել է, որ Քելջերախին VII դարում և VI դ. սկզբում (մ. թ. ա.) նշել է վարչական խոշոր կենտրոն, ուրարտական գլխավոր կառավարիչի նստավայրը և, իբրև այդպիսին փոխարինել է այդ նույն երկրների նախկին վարչական գլխավոր կենտրոն Արգիշտիխինին²։ Սակայն ըստ երևույթին Քելջերախինի դերն ավելի համեստ է նշել։ Գ. Ա. Մելիքիշվիլին ենթադրում է, որ այն ոչ թե ուրարտական ամենահայտնի բերդերից էր, այլ այնպես կոչված «շարքային» բերդ է նշել և վարչական առումով չի հանդիսացել կենտրոն։ Նրա կարծիքով վարչական կենտրոնը այդ ժամանակ ևս մնում էր դեռևս գոյություն ունեցող Էրեբունին, որի բերդը Քելջերախինի նկատմամբ ավելի հայտնի էր³։ Այնուհետև, հետևելով իրերի արձամարտությանը, Գ. Մելիքիշվիլին նշում է, որ իրար կողք-կողքի գտնվող բերդերը, որպես էր Էրեբունին ու Քելջերախին էին (որոնք միևնույն փոքրիկ շրջանի երկու ժայռերում էին գտնվում), չէին կարող երկու տարբեր վարչա-տերիտորիալ միավորների (կամ երկրների, ինչպես ուրարտացիներն էին ասում) կենտրոն լինել։ Այս հարցում մենք Գ. Մելիքիշվիլու կարծիքն ավելի

լի հավանական ենք համարում։ Քելջերախինի կառուցումը և նրանից արևմուտք գտնվող հողերի յուրացումը, ինչպես և նրա միջևն արձրի վարչական ու ռազմական կառուցվածքները, դրանց ավերակներում պեղված հնությունները և մեղ հայտնի արձանաբարությունները բավարար հիմք չեն տալիս Քելջերախինի վարչական կենտրոն (այն էլ կարևոր կենտրոն) համարել, մասնավորապես, երբ Արի-բերդի հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ բավական բանակությունը կուտակված նյութերը հնարավորություն են տալիս այդ հարցին նոր լուսաբանություն տալու։

Արդյո՞ք Քելջերախին միայն օժանդակ ամրոց չէր Էրեբունին համար, որտեղ պահվում էին մեծ քանակությամբ զենքեր, սննդամթերքի հսկայական պաշարներ և Էրեբունիից, Արգիշտիխինից ու այլ բազմաբերդից քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով այստեղ բերված քանակորձեր իրերը, Այլապես ինչպես կարելի է բացատրել «Ձենքի տուն» կոչվելը և սննդամթերքի այն հրապակական պահեստների ու մեծածիվ զենքերի ու զինամթերքի գոյությունը, որը հայտնի է դարձել պեղման միջոցով։ Արդյո՞ք այդ չէր պատճառը, որ սկյութներն իրենց գլխավոր հարվածն ուղղեցին հատկապես Քելջերախինի դեմ և այն գրավեցին գրոհով ու հիմնահատակ ավերեցին։ Մենք այդ առաջ ենք բաշում իբրև սուկ հարցադրում։ Անկասկած է, սակայն, որ մոտ ապագայում Արի-բերդի և Կարմիր-բլուրի պեղումները ու անցած ավելի քան մեկ և կես տասնամյակի աշխատանքների արդյունքները (որոնք ցավոք սրտի չեն հրապարակվել, բացի թեթևալիս հաղորդումներից) այլ շատ հարցերի հետ միասին որոշ պարզություն կմտցնեն նաև Էրեբունին ու Քելջերախինի VII դ. և VI դ. սկզբում (մ. թ. ա.) խաղացած զերի զնահատման հարցում։

Քելջերախինի կյանքը համեմատաբար կարճատև է եղել։ Այն զյուրություն է ունեցել 100 տարուց մի փոքր ավելի։

VII դարի վերջերին (մ. թ. ա.) կործանվում է Ուրարտուի երբեմնի հզոր հարևանը՝ Ասորիստանը՝ Առաջավոր Ասիայի պատմական կյանքում սկսում են խոշոր դեր խաղալ նոր ժողովուրդներ՝ հատկապես մարերը։ Ուրարտական պետությունը կանգնում է կործանման եզրին՝ Գրավվում են նրա կենտրոնական շրջանները։ VI դ. (մ. թ. ա.) սկզբներին սկյութների կողմից գրավվում է նրա վերջին հանգրվանը՝ Քելջերախին։ Ուրարտացիները Քելջերախինի գրավման ու ավերման ժամանակը համարում են VI դարի (մ. թ. ա.) սկզբները⁴։ Այդ ժամանակներում Ուրարտուի վերջին

¹ Ժամանակակից ուրարտագետները, առանց բացառության ամենուրեք թույլ են տալիս պատմա-աշխարհագրական մի անձնություն։ Նրանք Ուրարտուի հյուսիսային երկրների փոխարեն ամենուրեք գործածում են «Շարքային Անդրիզդաս», երբեմն «Անդրիզդաս», իսկ երբեմն էլ՝ Նույնիսկ «Կոլդաս» հասկացությունները։ Վերջին երկուսի գործածումն այդ իմաստով անշուշտ ակնհայտ սխալ է։ Բայց ճիշտ չէ նաև ուրարտական պետության հյուսիսային երկրների փոխարեն «Շարքային Անդրիզդաս» հասկանալը, որովհետև իրականում գրանք հարավային Անդրիզդասի միջան մի մասն էին կազմում և, ամենից կարևորը՝ ոչ վարչական և ոչ էլ ֆեոդալ-աշխարհագրական առումներով «Շարքային Անդրիզդաս» հասկացությունը երբեք գոյություն չի ունեցել, էլ չենք խոսում այն մասին, որ Անդրիզդաս հասկացությունը ընդհանրապես նոր ծագում ունի։ Իրականում ուրարտական պետության «հյուսիսային երկրներ» համապատասխանում են այժմյան Մոլդավական Հայաստանին ու զրա հարակից մի քանի շրջաններին, այլ կերպ ասած՝ պատմական Հայաստանի կամ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասին։ Անհրճաճել է հաշիլ տանել պատմա-աշխարհագրական այդ իրականությունը։

² Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 11—12, II, էջ 8—10.

³ Г. А. Меликшвили, Наини—Урарту, էջ 312.

⁴ Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 305:

Պազավորը՝ Ռուս IV-ը (610—585 թթ. մ. թ. ա.), ըստ ն. վ. Հարությունյանի ենթադրության իր աթոռախիստն էր դարձրել Քելչերախինին¹: Հավանական է համարվում, որ Քելչերախինին զբաղվել ու պահպանվել է 585 թ. (մ. թ. ա.) մեղացիների կողմից 590 թ. (մ. թ. ա.) Տուշպան ավերվելուց հետո:

Այլույթները մինչև ուրարտական պետության հյուսիսային երկրամասերի զբաղումը անտեսական-մշակութային սերտ կապեր ունեին ուրարտացիների հետ²: Վերջիններին արտադրած իրենց ու գործիքները կարելի էր տեսնել Կովկասում, Մերձսևծովյան շերտաններում, Արևելա-եվրոպական հարթավայրի հարավային ստափաստաններում³: Դրա հետ միասին, Կարմիր-ջուրի պեղումների ժամանակ հայտնաբերված են մեծ քանակությամբ սկյութական ձագումի զենքեր ու զանազան իրեր⁴:

Ուրարտական պետության անկման ու վերացման ժամանակները, ինչպես նշում է Բ. Բ. Պիոտրովսկին, կարևոր նշանակություն ունի հասկանալու մեզ հայերիս համար⁵: Այդ ժամանակներում արևել հիմնականում կազմավորված հայ փողովուրդը ստեղծում է իր պետականությունը, որը շատ շուտով բավական երկար ժամանակով ընկնում է Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ: Քելչերախինի ավերմամբ հնազույն երևանի կյանքը չի ընդհատվում: Չնայած հարձակման էր ենթարկվել նաև Էրեբունի—Երեվանը, բայց այն մնաց կանգուն, մարդաբնակ և շարունակեց իր պատմական կյանքը:

Քելչերախինի կործանման պայմանները դեռևս վերջնականապես է համակողմանիորեն չի պարզարանված: Դեռևս մեզ համար անհայտ է մնում, թե ինչպիսի մասնակցություն են ունեցել քաղաքի բնակչության հիմնական զանգվածները կազմող արևելաստափորություն ու հողագործները նրա պաշտպանության գործին⁶, որ թվականին է ինչպիսի պայմաններում են զբաղվել բուն քաղաքն ու նրա միջնաբերդը, ինչպես է դիմադրել կայաքուրը, քաղաքի պաշտպաններն ինչ օգնություն են ստացել զրուից, քաղաքը զբաղողների շարքում սկյութներից բացի արդյոք այլ զորքեր չկային և այլն: Ասակյան խնամքով կատարված պեղումների արդյունքների հիման

վրա՝ Բ. Բ. Պիոտրովսկին և Վ. Ս. Սորոկինը համոզել կերպով վերականգնել են Քելչերախինի միջնաբերդի զբաղման որոշ մանրամասնություններ՝ քննական լույս տակ համարելով պեղած նյութերի կազմը, բնույթը և զրանց հայտնաբերման վայրերը: Այդ եզրակացվել նրանք պարզել են, որ քաղաքի զբաղմանը մասնակցել են սկյութները⁷, որ բուն քաղաքը զբաղվուց հետո նրա բնակչության մի մասը ապաստանել է միջնաբերդում, այստեղ իր համար հաղաչապ կառուցել է ժամանակավոր բնակարաններ, կամ ուղղակի անդամավորվել տանիքներում ու բակերում⁸: Իսկ բնակչության մյուս մասը հավանաբար ապահովություն է գտել մտապահ լեռները միանշնելով, ենթադրում է Վ. Ս. Սորոկինը⁹: Քաղաքը զբաղվուց հետո պաշարված միջնաբերդ փոխադրված բնակիչները հացահատիկի պաշարները, մանր իրերը նույնպես տարել են իրենց հետ¹⁰: Այնուամենայնիվ, միջնաբերդը զբաղվել է ոչ թե երկարատև պաշարմամբ, այլ գրեթե՛ Պարզվել է, որ միջնաբերդը զբաղվել է ամռանը, զվեղելով պահին, որ գրեթե ժամանակ առաջացել է մեծ հրդեհ և այստեղ ապաստանած բնակիչները տաղանապահար թողել են իրենց ժամանակավոր տները, որոնցում հայտնաբերված են այնքան մեծ քանակությամբ հացահատիկի պաշարներ և զանազան իրեր¹¹: 1949 և 1950 թթ. կատարված պեղումների ընթացքում երկու գինու պահեստում հայտնաբերվել են գինու 152 խոշոր կարասների՝ ընդամենը 150 հազար լիտր տարողությամբ (ուրարտական չափով՝ 600 ակարկի): Դրանք բոլորը, ըստ Բ. Բ. Պիոտրովսկու, բերդի զբաղման ժամանակ դատարի են եղել, որովհետև, ինչպես նաև ենթադրում, այդ ժամանակ սճավանաբար, ուրարտական կենտրոնն արդեն անկման մեջ էր և տուրքը կանոնավոր կերպով մտադրելը գործում այնտեղ¹²: Այնուհետև նա նշում է, որ քաղաքը զբաղվուց հետո պաշարված միջնաբերդում՝ օգտվելով կարգ ու կանոնի բացակայությունից, սառնարական պահեստից զրոացել և անտեսական զանազան պահեստից թափաքել են ուրարտական արվեստի բրոնզի արժեքավոր շատ առարկաներ, որոնք ուրարտական թագավորները նվիրել էին Խալդ սասանու¹³:

¹ Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, էջ 21:

² В. С. Сорокин, Раскопки древнего поселения Кармир-блур, II, էջ 84—85:

³ Նույն տեղը, էջ 85:

⁴ Նույնը, Кармир-блур, II, էջ 85:

⁵ Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, էջ 22:

⁶ Նույնը, Кармир-блур, II, էջ 7:

⁷ Նույն տեղը, էջ 8:

¹ Տե՛ս ԵՊատմա-բանասիրական հանգես, 1960, № 1, էջ 65:

² Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, էջ 87:

³ А. А. Мартиросян, Город Тейшебани по раскопкам 1947—1958 гг., էջ 94:

⁴ Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, I, էջ 86—86:

⁵ Նույնը, Кармир-блур, II, էջ 14:

⁶ Նույնը, Кармир-блур, I, էջ 21:

Քեյշերախների բնակչության թվի մասին առայժմ որևէ ննթադրություն անել անհնար է։ Պեղումների արդյունքները, սեպագիր արձանագրություններն ու այլ կարգի արդյունքները հիմնավոր ենթադրության համար հիմքեր չեն տալիս։ Սակայն բազաբի դրաված բավական մեծ տարածությունը, նրա շենքերի բազաբասիայ լինելը, բազամամարդ կայադորի առկայությունը, որն անվիճելի կարևոր է համարել, մեծ թվով պահեստների գոյությունը և այլ հանգամանքներ համեմատյալ գեղա ննթաբով են տալիս, որ Քեյշերախների բնակչության թիվը բավական մեծ է եղել և որ նա, ինչպես մասնագետներ են ենթադրում, եղել է իր ժամանակի խոշոր բազաբներից մեկը¹։

Քեյշերախների բնակչությունը էթնիկական տեսակետից միատարր չի եղել։ Այնտեղ ապրել են և՛ տեղացիներ, և՛ արարտացիներ։ Ինչպես հին Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Ուրարտում սովորաբար դրաված և իրենց իշխանությունը ենթարկած երկրամասերի բերդերում ու բերդաբազաբներում ուրարտացիների վերաբնակեցնում էին պետության կենտրոնական շրջանների բնակիչներ և ռազմական արշավանքների ընթացքում վերցված գերիներ։ Այդ կարգի բնակչություն կար նաև Քեյշերախիում։ Ք. Բ. Պիտրովսկին ելնելով այն փաստից, որ Քեյշերախների բնակչության մեծագույն մասը չուներ իր սեփական տնտեսությունը և ռազմապես ենթակա էր պետության տնօրինությանը, գտնում է, որ դրանք այստեղ են բերվել այլ տեղիներից²։ Ուրեմն Քեյշերախների բնակչության զգալի զանգվածները՝ զինվորներ, արհեստավորներ, հողագործներ, վարչական ծառայողներ և այլք եկվոր էին՝ ուրարտացիներ և այլ տեղերից բերվածներ։ Բնակչության մյուս մասը բազաբացած էր տեղացիներից։ Բացառված չէ նաև, որ Քեյշերախների անվան ժամանակներում այստեղ բնակություն լինեն հաստատած որոշ թվով սելուլներ, որոնք դրանից առաջ տնտեսական սերտ կապեր ունեին ուրարտական պետության հյուսիսային շրջանների հետ։ Տեղացի բնակչության առկայությունը ապացուցվում է նյութական կուլուրայի և շինարարական արվեստի այն մեացորդներով, որոնք հայտնաբերվել ու ուսումնասիրվել են հնագիտների կողմից։ Ընդ որում, ինչպես տեսանք, Քեյշերախիի առկում տեղացիների բնակավայր է եղել ուրարտական ժամանակաշրջանից շատ առաջ։ Հայտնաբերված են նաև սելուլական ծագումի շատ

իրեր, որոնց մի մասը վերաբերում է բազաբի գրավմանը նախորդած ժամանակին։ Տարբեր էթնիկական և սոցիալական կազմ ունեցող բնակչությանն իր ազդեցությունն է թողել Քեյշերախիի արտաքին տեսքի՝, շինությունների և բազաբի կառուցվածքի վրա ընդհանրապես։

Ըստ զբաղմունքի և սոցիալական վիճակի Քեյշերախիի բնակչությունը բաղկացած էր մեծ ու փոքր մի քանի խմբերից՝ զինվորականությունից, վարչական պաշտոնյաներից, հողերակահուսթյունից, արհեստավորներից, երկրագործներից³, սպասարկող անենակազմից և այլն։ Դրանց մեջ ամենաբազմամարդը՝ զինվորականները, արհեստավորներն և երկրագործներն էին։ Քեյշերախիի բնակչության հիմնական զանգվածները պարենավորվում էին պետության կողմից⁴։ Նրանք չունեին իրենց սեփական տնտեսությունը։ Պեղումների ընթացքում չեն հայտնաբերված սեփական տնտեսություն ունենալու շատ թե քիչ շոշափիկ հետքեր, նրանց տների կոմպլեքսում չեն հայտնաբերված գոմեր, սննդամթերքների սենյակներ⁵, իսկ կենդանիների հայտնաբերված ոսկորները ենթադրվում է, որ լույ անդի մնացորդներ են⁶։

Քերդաբազաբի ամբողջ բնակչությունը ենթակա էր ուրարտական կառավարչի կամ փոխաբաբի գեներալյն իշխանությանը։ Նրան էին ենթարկված նաև վարչական ապարան ու բազմամարդ կայադորը, որոնք բոլոր համարվում էին բացառապես ուրարտացիներով (բիսյանցիներով)։ Քերդապաշտպան զինվորականության միջոցով ուրարտական պետությունը իրագործում էր իր տիրակալական իրավունքները ենթակա ենթակա սպասարկում։ Ուրարտացիները տեղացիներից վերցնում էին հսկայական տուրքեր, կողոպտիչ արշավանքներ էին կազմակերպում գետնս իրենց տիրապետության տակ շտամիզ ցեղերի դեմ, քալլ առ քալլ ավելացնում էին իրենց տիրապետության շրջանակները, օգտագործում էին բոլոր միջոցները ենթակա ցեղերին հլու-հնազանդ պահելու համար⁷։ Տուրքի և ռազմական ավարի ձեռով Քեյշերախի հավաքված հսկայական պաշարների մի մասը պահվում էր տեղում, իսկ մյուսը՝ արհեստավորների միջոցով վերամշակելուց հետո, ուղարկվում էր պետության մայրաքաղաք Տուշպա։ Քեյշերախիին ուներ նաև իր

¹ A. A. Мартirosյան, Город Тейшебанин..., էջ 112։

² Б. Б. Пиотровский, Кармир-Блур, II, էջ 86։

³ Նույնը, Кармир-Блур, I, էջ 15։

⁴ Նույնը տեղը։

⁵ Նույնը տեղը։

⁶ Б. Б. Пиотровский, Кармир-Блур, II, էջ 86։

¹ A. A. Мартirosյան, Город Тейшебанин по раскопкам 1947—1956 гг., էջ 93։

² Б. Б. Пиотровский, Кармир-Блур, I, էջ 18, II, էջ 10։

պետական երկրագործությունը, այդեղործությունը, բանջարատն-
 օժությունն ու նույնիսկ անասնապահությունը: Քե՛ս արհեստավորները
 և թե՛ երկրագործները նույնպես սեփական տնտեսությունից զուրկ
 և մաստակարարվում էին պետության կազմից՝: Հավանական է
 նաև, որ Քեյլեբրահինիում գործադրվում էր ստրկական աշխատանքը՝
 հատկապես շինարարության և երկրագործության մեջ: Դեռևս չի
 պարզաբանված թե ովքեր էին արհեստավորները, նրանք բազիլա-
 ցած էին միայն ուրարտացիներից, թե՛ նաև տեղացիներից, հնչ
 կազմ ունեին երկրագործները, ստրկական աշխատանքի ընդլսն
 ծավալը և այլն, բայց այնուամենայնիվ պարզ է, որ Քեյլեբրահինի իր-
 րնույթով հին Արևելքի ամպրկ ստրկատիրական թաղաքներից մե-
 կեր էր՝:

Անպազիր արձանագրությունների վերձանումից և Քեյլեբրա-
 նիի պեղումներից հայտնի է դարձել, որ այստեղ պետական, հա-
 մայնական և այլ կարգի տնտեսությունների հետ միասին զոյու-
 թյուն է ունեցել նաև տաճարական բավական ուժեղ տնտեսությունը:
 Այդ տնտեսության հիմքը, ինչպես ենթադրում են, կազմել են երկ-
 րագործությունը, այդեղործությունը, խաղողագործությունը և ա-
 նասնապահությունը՝: նույն ճյուղերը հիմնական էին նաև պետա-
 կան ու մյուս տնտեսությունների համար: Բայց այստեղ, բացի
 դրանցից, պայլի զեբ էր խաղում նաև արհեստագործությունը:

Քեյլեբրահինում և նրա շրջակայքում երկրագործությունն ու
 այդեղործությունն առանց արհեստական ոռոգման չէր կարող զո-
 ւթյություն ունենալ: Ուրարտացիները, դրավելով բարեբեր Աբրարա-
 յան դաշտը, առաջին հերթին պետ է ուշադրություն դարձնեին այդ
 հանգամանքի վրա: Աբարապան դաշտի զոյուղատնտեսական հնա-
 բավորություններն օգտագործելու համար VIII—VII դդ. (մ. թ. ա.)
 իրք որ նրանք այստեղ ստեղծում են մեծ ու փոքր առուների մի-
 ստրոգըական ցանցը՝ Ն. Վ. Հարությունյանը միանգամայն իրավա-
 ցիորեն կհասում է, որ Ազա երկրում արհեստական ոռոգման ցան-
 ցի երկու հանգույց կար. դրանցից մեկը Արդիշախիխինիին էր (հե-
 տագայի Արմավիրը), իսկ մյուսը՝ Քեյլեբրահինի (Կարմիր-բլուրը):
 Առաջին հանգույցը սնվում էր Աբարաբից ու Սև չրից (հնում Մեծա-
 մոր), իսկ երկրորդը՝ Հրազդանից՝: Քեյլեբրահինի մոտակայքում,

Հրազդանից հանված էին մի շարք առուներ, որոնց թվում էր և այ-
 րմյան էշմիածնի առու: Մեք դարի բոլոր ուսումնասիրողները
 առանց տարակարծիքության ենթադրում կամ հաստատական գոտ-
 նում են, որ Քեյլեբրահինի շրջանի առուները՝ հատկապես էշմիածնի
 կայսի առուն, կառուցել են ուրարտացիները՝: Այդ միասնական
 կարծիքը մշակվեց այն բանից հետո, երբ Չվարթնոց տաճարի ա-
 վերակներում հայտնաբերվեց իլդարունի զեփեց ևուսա II-ի անց-
 կացրած մեծ ջրանցքի մասին բնդարձակ արձանագրությունը: Ա-
 վելի վաղ շրջանի հեղինակները՝ Սիմեոն Երևանցիի (XVIII դար),
 Հովհաննես Շահխաթունյանցը (XIX դարի առաջին կես) անտեղյակ
 լինելով այդ արձանագրության մասին, բնականաբար, շինել կարող
 նաև ճիշտ ենթադրել Կարմիր-բլուրի տակից զեփի էշմիածնի գնա-
 ցող ջրանցքի կառուցման ժամանակը և կառուցողներին: Հ. Շահ-
 խաթունյանցը, որ այնքան մանրամասն նկարագրում է Դաւմյան
 ջրանցքի բնթացքը՝ նրա պոկներից մինչև էշմիածնի մոտերը,
 դրում է, թե Կավակերտ զոյուղի մերձակայքի իր հողերը ոռոգելու
 համար այդ առվի կառուցումը սկսել է երևանցի ոմն Բուրջախիհ-
 կը, որը սակայն կեսատ է թողել: Հետագայում (1698 թ.) Նահա-
 պետ կաթողիկոսը նրա որդիներից գնելով այդ կիսատ առուն, մեծ
 ջախտերով ավարտում է դրա կառուցումը և հասցնում մինչև Վա-
 ժարչապան՝: Նա վկայում է, որ իր այրած ժամանակներում առուն
 խափանված էր, բայց դրա ուղղությունը լավ նշմարվում էր: Նա-
 հայտն կաթողիկոսի օրով կառուցված այդ առվի մասին հաղորդում
 է նաև XVIII դ. երկրորդ կեսի հեղինակ Սիմեոն Երևանցի կաթն-

¹ Տե՛ս Մեսրոպ Եպիսկոպոս, էշմիածնի զաշի ոռոգումը, «Աբարապան օգտա-
 գիր, էշմիածնի, 1912, № 3, էջ 233—240, Առ, Հայոց պատմություն, 5, 1, Քեյլե-
 յան, 1917, էջ 302, Երվանդ Տակագիր, 266 Երևանը, էջ 11—12, Գր. Կավակեյան,
 Աբարապանի պատմությունը, Երևան, 1940, էջ 56—57, 66 և 231, Կ. Մամիսյան,
 Աբարապանի կուլտուրան, 5, 11, Երևան, 1941, էջ 261, Բ. Բ. Ուրարտ-
 սկայ, История и археология Урарту, էջ 132—133, «Ազիտրիկ հայ Հարարապանի-
 սկային պատմությունը», էջ 43—45, Մ. Վ. Արությունյան, Земледелие и ско-
 товодство Урарту, էջ 46—48 և այլն:

² Հովհաննես Տանխաթունյանց, Սարարդուրիան կաթողիկէ էշմիածնի և հինը
 դասապան Աբարապան, 5, 1, էշմիածնի, 1842, էջ 137—138: Այնուհետև Հովհ.
 Շահխաթունյանցը հաղորդում է, որ Բուրջախիհիկ ազգականները կցում են իրենց
 համարի այդ առվի ժառանգական տեղը և անօրինական կերպով օգտվում են դրա
 ջրերից: Բայց Աստվածատուր կաթողիկոսին հաղորդում է 1716 թ. Երևանի խանի
 միջոցով դատարանից ստանալ վկայագիր առանձին ամրոն սկիսականություն լինելու
 մասին:

¹ Բ. Բ. Пиотровский, Кармир-блур, II, էջ 86:
² Նույնը, Кармир-блур, I, էջ 20, II, էջ 30 և 86:

³ Մ. Վ. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блуря, էջ 93:

⁴ Մ. Վ. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 46:

դիվարը. «Ջուր Գալմա սասցեալ՝ զոր ի Հրազդան գետոյ Հանեալ բերեն ի սահմանս Աթոռոյս»:

Այժմյան Երևանի սահմաններում ուրարտացիները Հանել են երկու խոշոր առուներ, որոնք երկուսն էլ մեզ հայտնի են «Գալմա» անունով (բառացի «պեղած», «սածկած»): Դրանցից մեկը, որի մասին Ռուսա II-ը թողել է նշված արձանագրությունը, զեկի էջ-միածնի կողմը գնացողն էր, իսկ մյուսը, որ սեղվում էր ավելի վե-րևից՝ այժմյան Երևանի Գալման է, որը ուղղում է նրա նույնա-նուն լայրիները, Երևանի Գալմայի կառուցման մասին զեռնս որևէ աղբյուր չի հայտնաբերված: Բայց իր բնույթով ու կառուցվածքով այն կազմում է ներքևի Գալմայի երկորակը և անկասկած կառուց-վել է ուրարտացիների կողմից:

Բայց հեղինակներն այդ ընդունում են, բայց որոշակի կեր-պով տարբերություն են զեռն երկու դավանների միջև: Միայն Եր-վանդ Շահազիզն է, որ չնայած այնքան լավատեղյակ է հին երե-վանի տեղագրությանը, բայց էջիմաննի ու Երևանի Գալմաները շփոթել է իրար հետ և Ռուսա II-ի կառուցած ջրանցքը համարել այն առան, որը Երևանի վերջին սարգար Հուսեյն-խանի օրոք վերա-կանգնվել է ու սկսել գործել: Անկասածնի է, որ Երևանի Գալման էլ կառուցել են ուրարտացիները, բայց այն պետք է տարբերել Ռուսա II-ի կառուցած ջրանցքից, որը համապատասխանում է էջ-միածնի Գալմային: Հենց այս վերջինս էր, որ Քելշերախիի հա-մար ունեյր արտակարգ նշանակություն: Դրա ջրերով էր ուղղվում Քելշերախիին ենթակա հողային տարածությունների մեծ մասը:

Ուստի հարկ ենք համարում թարգմանաբար մեջբերել Չվարթ-նցում հայտնաբերված Ռուսա II-ի արձանագրությունն ամբողջու-թյամբ.

«Խալդի աստծուն, իր տիրոջը, Ռուսան, Արգիշտի որդին, այս արձանագրությունը կանգնեցրեց (?): Խալդի աստծո հզորությամբ, Արգիշտի որդին, ասում է՝ Կուարլինի հովտի (?) հողը անմշակ էր, այնտեղ ոչինչ չկար: Ինչպես (?) (ինձ) Խալդի աստվածը հրամա-նեց, (այնպես) ես այս խալդի աղտին տնկեցի, ես հրամայեցի այնտեղ սարբել (?) ցանքերով ու մրդատու ալգիներով դաշտեր, ինձ վրա վերցրեցի բաղաբի կառուցումը (?): Իլգարունիա գետից ես անցկացրի ջրանցք՝ (նրա) անունն է—Սումելշիխի: Ռուսա (թագա-

լորի) այս հովտում երբ (որևէ մեկը) հարկազրի ջրանցքը ոտոզել որևէ բան, թող ուլ մորթվի (?) Խալդի աստծուն, ոչխար թող զոհա-բերվի Խալդի աստծուն, ոչխար՝ Քելշերա աստծուն, ոչխար՝ Շիվի-նի աստծուն. չեփած աստված անի՞, Որևէ բան երբ ջուրը օժն սնուլ, ուլ թող մորթվի (?) Խալդի աստծուն, ոչխար թող զոհաբերվի Խալդի աստծուն, ոչխար՝ Քելշերա աստծուն, ոչխար՝ Շիվիների աստ-ծուն. schadi աստված անի՞»:

Ռուսան, Արգիշտի որդի, թագավոր հողի, թագավոր մեծ, արքա սինգերբի, արքա Բիսինիլի երկրի, արքայից արքա, տեք Տուշպա քաղաքի:

Ռուսան, Արգիշտի որդին, ասում է. ուլ այս արձանագրությու-նը փշացնի, ուլ (այն) ջարդի, ուլ (այն) (իր) տեղից դուրս բջի, ուլ հողում թողի, ուլ ջուրը բջի, ուրիշ ուլ ասի՞ սես եմ (այդ բոլորը) կատարել, ուլ (ինձ) անունը (նրա վրայից) ոչնչացնի (և) իր անունը զեռի, լինի նա Բիսինիլի երկրի բնակիչ կամ թշնամական երկրի բնակիչ, թող Խալդի, Քելշերա, Շիվիների աստվածները, (բոլոր) աստվածները երկրի վրա չթողնեն (նրա) ոչ անունը, ոչ (նրա) ըն-տանիքը, ոչ (նրա) սերունդը»:

Նախքան արձանագրության բուն բովանդակության մասին ասելը անհրաժեշտ է նկատել, որ դրա մեջ նշված աշխարհագրա-կան անունների վերաբերյալ մասնագետները մի ընդհանուր կար-ծիք չունեն: Ընդ որում, ինչպես տեսնում ենք, նրանում հիշատակ-ված են աշխարհագրական միայն երկու անուն՝ Իլգարունի(ա) գետը և Կուարլինի հովիտը: Այսպես, օրինակ՝ Զվարթնոցի այդ արձա-նագրության առաջին ընթերցողներից Կ. Զ. Բասմաշյանը Կուարլի-նի հովիտը (նրա մոտ՝ երկիր) տեղադրում է Մասիսի հյուսիսային ստորտանների և այդ անունը նույնացնում «Նուստուրուս կոչված գյուղանվան հետ, իսկ Իլգարունին՝ նույնացնում Սև ջրի (Մեծա-մոր) հետ»: Սակայն Կ. Բասմաշյանի այդ կարծիքը ընդունվել է շատ բնորոշ կողմից: Ռուսանսինգերբի մեծագույն մասը ընդունում և կողմնակի նյութերով հաստատում է, որ արձանագրության Իլգա-րունին այժմյան Հրազդանն է³, իսկ Կուարլինի հովիտը, ինչպես արդեն ասվել է, կազմում էր Աղա երկրի մի մասը, որն ընկած էր

¹ Տե՛ս Գ. Ա. Мельнишвилл, Урартские клинообразные надписи, էջ 345, № 281:

² Տե՛ս երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 11—12:

³ Մեծոֆ Եսիսեղոսյան, էջմածնի դաշտի օռոգումը («Արարատ ամսագիր», 1912, № 3, էջ 233—240), և Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Հ. 11, էջ 261 և այլու:

¹ Միսոն կարողիս Երևանի. Ջամբո, Ղաղարշոթյան, 1873, էջ 200:

² Տե՛ս «Արարատ ամսագիր», 1912, № 3, էջ 233—240, ևս, Հայրեն. պատմա-բյուզ. Հ. 1, էջ 302, Գր. Ղախանջյան, Արարատի պատմությունը, էջ 231 և այլու:

³ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 11—12:

այժմյան Երևանի ու Էջմիածնի միջև և որի ստորման համար էլ կատարվել էր այդ ջրանցքը: Ռուսայի կառուցած այդ ջրանցքը համարար ձգվել է ավելի քան 20 կմ երկարությամբ: Դրա մի հատվածը անցել է ժայռափոր թունելով: Միանգամայն հասկանալի է, որ մայր ջրանցքը հյուղավորվել է մի շարք մեծ ու փոքր առուների, որոնք բավական խիտ ցանց են կազմել Կուարխեիի հովտում (Էջմիածնի դաշտ): Ինչպես ուրարտական մյուս ջրանցքների, այնպես էլ Ռուսայի կառուցած «Ումեշիեի» ջրանցքն էլ ունեցել է մի քանի սարվեղուկներ, որովհետև նա ձգվել է ալիքավորված և ձորակներով կտրուկած տեղանքով:

Պատմական տեսակետից հսկայական նյութ է տալիս Ռուսա II-ի վերը մեջբերված արձանագրությունը: Դրանից մենք իմանում ենք, որ նախ և առաջ ջրանցքը պետք է ոռոգեր մի ամբողջ դաշտ (հովիտ), որտեղ զգվել են մրգատու այգիներ, սեղեղվել են ցանքեր, որ ջրանցքի հետ միաժամանակ Ռուսան հիմնադրել է մի բազար՝ ամենայն հավանականությամբ հենց Քեչիշերախին: Այնուհետև, հայտնի է դառնում, որ ջրանցքը կոչվել է «Ումեշիեի» և երանից օգտվելու համար անհրաժեշտ էր զոհողություններ կատարել ուրարտական իսպրի, Քեչիշերա և Շիրիխի աստվածներին: Ապա գալիս է ջրանցքը փշաջնոզների կամ արձանագրությունը կեղծողները հասցնին ուղղված անձեռներն ու Ռուսայի փոխդատաշարը, որոնք ևս կարող են դառնալ կարևոր գատողությունների աղբյուր: Դրանից, օրինակ, կարելի է ենթադրել, որ ուրարտացիները բացի Քիախիլի բերրից, ուրարտական փիրադիտության տակ գտնվող մյուս երկրները համարել են թշնամական երկրներ, որ ուրարտացիներն իրենց իշխանությունը օտար ցեղերի վրա տարածել ու պահպանել են աղավաղված ճանապարհով, որ Ռուսա II-ի կառուցած բաղարը (Քեչիշերախին) պետության հյուսիսային երկրամասերի կարևոր բերդաբաղաբաններից մեկը լինելով՝ առաջին հերթին հենակետ է եղել Կուարխեիի հովիտը անտեսպահ չլուրացնելու և նրա հնարավորությունները ուրարտական պետությունը ի սպաս դնելու համար: Արձանագրությունը թույլ է տալիս ենթադրել, որ ուրարտացիները հատուկ հսկողություն էին սահմանում մեծ ջրանցքները սարքին վիճակում պահելու համար:

Հիմնականում Ռուսա II-ի կառուցած այդ ջրանցքն էր, որ իր ենթաշուկերով ապահովում էր Քեչիշերախիի դարգացած երկրագործությունը, այգեգործությունն ու մասամբ բանջարաբուծությունը, նկատի լուսնենալով ավելի փոքր առուները, որոնք ունեին երկ-

րորդական նշանակություն և բառ երևույթին ուսուցում էին բաղարին կողմ փոքր բանջարանոցներն ու բուստանները:

Քեչիշերախիի շրջակայքի և նրան ենթակա շրջանների երկրագործության զարգացած վիճակի մասին նախ և առաջ զաղափար կարող են տալ հացահատիկի այն հսկայական պահեստները, որոնք պեղված են հնագիտական արշավախմբերի ժամանակ: 1951—1953 թթ. պեղումների քննարկում բաց է արվել հացահատիկների հսկայական պահեստ՝ իսկ դրանից ղևս առաջ, 1949—50 թթ. հայտնաբերված էր հացահատիկի մի մեծ ամբար: 1947—1958 թթ. պեղումների ժամանակ հայտնաբերվեցին 4×4 մ շափերի մի շարք խուլ (առանց դռան և լուսամուտների) սենյակ-ամբարներ, որոնք դասավորված են միջնաբերդի արևմտյան ճակատի առանցքի ուղղությամբ՝ երկար միջանցքի երկու կողմերում: Այս ամբարներում ինչպես և հացահատիկի մյուս պահեստներում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորեն, գարի, տարեկան, կորեկ, սոս, ինչպես նաև քեչուրի ու այլ հատիկներ, որոնք մասնաճանաչված Ռուսանախիվել են Մ. Գ. Քոմանյանի և Վ. Ա. Պետրովի կողմից: Հայտնաբերված են կորեկի հացի, ձավարով ձաշի մնացորդներ: 1957 թ. միջնաբերդի սենյակներից մեկում հայտնաբերվել է ցորենի ալյուրի մնացորդներ: Ի տարբերություն միջնաբերդի հացահատիկներով լիքը պահեստների, բաղարի տներում, բացի կորեկի մնացորդներից, հացահատիկի պաշարներ չեն հայտնաբերվել: Այդ բացատրվում է նրանով, որ, հավանաբար, թշնամու հարձակվելու լուրն ստանալով, բաղարի բնակիչները իրենց պաշարները շտապ տեղափոխել են միջնաբերդ, որտեղ նրանք ապաստանել էին բաղարի գրավման և բեղիկ պաշարման ժամանակ:

Միջնաբերդում պահպանված հացահատիկային այդ բարիքների հետ միասին ուշադրության արժանի են նաև երեք սենյակից բաղկացած ձիթանոցը, որտեղ ձեթ են ստացել քեչուրից:

էլ ավելի հետաքրքիր են գտնվող արտագրության հետ կապված հնագիտական նյութերը: Դեռևս 1940 թվականին Քեչիշերա-

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 7:

² Նույնը, Кармир-блур, II, էջ 11:

³ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 24—30, А. А. Мартиросян, Город Тейшебаши... էջ 96:

⁴ Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 84:

⁵ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 29, А. А. Мартиросян, Город Тейшебаши... էջ 129:

⁶ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 7:

կի միջնաբերդի բակի անբրից մեկում հայտնաբերվում է կորեկով լիբը մի կազի աման, 1948 թ. նույն կարգի մի աման է հայտնաբերվում, որի հատակային մասում գրգռվ էին ծառի ճյուղեր ու ծղուտ, իսկ վերերը՝ լցված գարու հատիկներով: Դրանց հիման վրա Բ. Բ. Պիրատովսկին գուլիս է այն ճիշտ եղբակացության, որ Քեյլենբախների բնակիչները իրենց կարիքների համար կորեկից և գարուց արտադրել են գարեջուր: Քեյլենբախներում գարեջուր արտադրելու պրոբլեմը վերջնականապես և անստահելիորեն լուծվեց 1958 թվականի պեղումների ժամանակ: Այդ թվականին միջնաբերդում պեղվել է գարեջրի արտադրության մի հատուկ արհեստանոց—սզործարան¹, որի մեջ հայտնաբերվել են տուֆից պատրաստած վանճակ գարու հատիկով, գարեջուր պահելու համար տասնյակների հասնող կավե մեծ ամաններ և գարեջրի արտադրության հետ կապված իրերի այլ մնացորդներ²:

Երկրագործության զոյություն ու զարգացման մասին կարող են զարգափար տալ նաև երկրագործական և, քնդհանրապես, զուգատեսետական այն գործիքների ու իրերը, որոնք հայտնաբերվել են հնեարտական պեղումների ժամանակ: Տարբեր ժամանակներում Քեյլենբախների պեղումներից հայտնաբերվել են՝ երկաթե եղանակներ, բահեր, մուրճեր, մարիակներ, երկաթե մանզաղներ, երկանքներ, սրոց քար, ուրագներ և այլն³: Այդ գործիքները, ինչպես կուհուսում են, պատկանել են քաղաքի բնակիչներին, որոնք զբաղման ժամանակ իրենց ուտելիքի պաշարների հետ միասին տարել են նաև երկրագործական գործիքները և այլ իրեր⁴:

Անասրակելի է, որ Արարատյան դաշտի տեղաբնիկ ցեղերը շատ վաղ ժամանակներից զբաղվում էին երկրագործությամբ: Ուրարտացիները, զալով Արարատի ավազանը, երկրագործական կուլտուրան ավելի զարգացրում և հասցնում են մի նոր աստիճանի: Քայց ամենայն հավանականությամբ, երկրագործ բնակչության հիմնական զանգվածները ուրարտական տիրապետության շրջա-

նում զարգացել են տեղաբնիկ ցեղերը: Հայտնի է, որ Քեյլենբախներում կուտակվող զոյուղատեսետական բարիքների մեծագույն մասը սերվում էր շրջակայքից՝ ինչպես ուրարտական պետական խոշոր տնտեսություններից, այնպես էլ տեղացիներով բնակեցված շրջաններից՝ իրեն հարկ կամ ուղղմական ավար:

Այգեգործությունը Արարատի ավազանում հնագույն պատմություն ունի: Այստեղ ամենայն հավանականությամբ խաղողագործությամբ զբաղվում էին տակավին ուրարտացիներից առաջ: Իսկ ուրարտական ժամանակաշրջանի զարգացած խաղողագործության մասին արգեն վկայում են վերը մեջբերված Ռուսո II-ի արձանագրությունը, զինու հսկայական պահեստների զոյությունը Քեյլենբախների միջնաբերդում, կոռնական ծխակատարությունների մեջ զինու սզտագործումը և այլն: Որոշ ուսումնասիրողներ խաղողի հայրենիքը համարում են Հայկական լեռնաշխարհը և նրա շրջակա երկրները⁵:

Խաղողագործության և այգեգործության մեջ տնտեսության հիմնական ձևը պետական, թագավորական և տաճարական էր, տնտեսություններ, որոնք ունեին մեծ միջոցներ ու հնարավորություններ, կառուցելու արհեստական ոռոգման առուներ, լճակներ, ամբարտակներ, որովհետև առանց արհեստական ոռոգման խաղողագործությունն ու այգեգործությունը չէին կարող զոյություն ունենալ⁶:

Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են զինու մեծ պահեստներ: Մինչև 1957 թվականը Կարմիր-բլուրում պեղված էր զինու 8 թորքավա պահեստներ, որոնցում պահվում էր մոտավորապես 400 հազար լիտր զինի՝ Այստեղ պահվում էր ոչ միայն բուն Քեյլենբախի, այլև շրջակայքի այգիների խաղողից ստացված զինի, որի մի մասը ուղարկվում էր պետության մայրաքաղաք: Հայտնաբերված են այժմյան «Երեւանի» «Ուկեհատ», «Գաան-գձակ» խաղողատեսակների կորիզներ⁷:

Խաղողագործության հետ միասին զարգացած էր նաև այգեգործությունը: Պեղումների բնիացում հայտնաբերված են խրե-

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, 1, էջ 54:

² Չ. Գաարյան, Քեյլենբախի (Կարմիր-բլուրի) երկրագործական մթերքների վերաշխարհի հարցի շուրջը («2000 ԳԱ Տեղեկագիր», հաս. զեռ., 1959, № 9, էջ 80—85), Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 91—92:

³ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 30, 40, 50, III, էջ 9, 54, 57, А. А. Мартиросян, Город Тейшебаши..., էջ 97, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 98:

⁴ А. А. Мартиросян, Город Тейшебаши..., էջ 97:

⁵ Գ. Կափոնցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 59:

⁶ Նույն տեղը:

⁷ Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, էջ 40, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 132 և 134:

⁸ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 15—16, А. А. Мартиросян, Город Тейшебаши..., էջ 96, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 136:

ձորի մնացորդներ, ևս սալորի, նոսան և զեղծի շրջացած կորիզներ¹։ 1958 թվականին Հայտնաբերվեց նոսան շրջացած, բայց իր բաղադրությունը բազմաթիվ դարերի ընթացքում պահպանած² ծաղիկ³։ Բանջարա-բուստանային բույսերից պեղումների ընթացքում Հայտնաբերվել է ձմերուկի մնացորդներ⁴։

Տնտեսության մեջ երկրագործությունից ու այգեգործությունից հետո իր նշանակությամբ երկրորդ տեղը զբաղեցնում էր անասնապահությունը, որի մասին մենք բացատրապես գաղափար ենք կազմում պեղումների ընթացքում հայտնաբերված ոսկորների միջոցով։ Ուկրաինական հսկայական այդ նյութը բաժանում են երեք խմբի⁵։ 1) միջնաբերդի հրեհի ժամանակ ոչնչացած անասունների ոսկորներ, որոնք ամբողջական կմախքներ են կազմում, 2) սնկի մնացորդ ոսկորների և 3) զոհարերության մնացորդ ոսկորների, որոնք հայտնաբերված են կուլտուրայի վաղձանրային հայտնաբերված են խոշոր եղջերավոր անասունների (կով, եղ), մանր եղջերավորների (այծ, խոզի, էջի, ձիան ոսկորներ, որոնք ուսումնասիրվել են Ս. Կ. Գալի, ինչպես և Ն. Օ. Բուրչակ-Աբրամովիչի ու Ս. Մեծլովայանի կողմից։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ անասունները իրենց մեծությամբ, արտաքին տեսքով և հատկություններով նման էին այժմյան Հայաստանում և հարևան երկրներում ապրածված անասուններին⁶։ Պեղումների ընթացքում պարզվել է, որ միջնաբերդը ամուսնը զրավելու պատճառով մանր եղջերավոր անասունները գտնվելիս են եղել լեռնային արոտավայրերում։ Պրա հետևանքով մանր եղջերավոր անասունների ոսկորներ համեմատաբար բիշ են հայտնաբերվել⁷։

Մյուս ընտանի կենդանիներից հայտնաբերված են շան ու կապիի, իսկ վայրի կենդանիներից⁸ ջեյրանի ոսկորներ⁹։

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 12, 15—16, А. А. Мартиросян, Город Тейшебанин..., էջ 96, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 136։

² Новые археологические находки (газета «Коммунист», Ереван, 1958, № 179)։

³ А. А. Мартиросян, Город Тейшебанин..., էջ 96։

⁴ Մանրամարդ տես շՊՊԹ ԳՍ Տեղեկագիրք (սնական գրու.), 1947, № 10, «Природа», 1948, № 2, Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 18 և 31—32, А. А. Мартиросян, Город Тейшебанин..., էջ 17—18, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 184։

⁵ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 33։

⁶ А. А. Мартиросян, Город Тейшебанин..., էջ 129, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 184։

Հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ վաղեմի Քելչեբախիում, բացի գյուղատնտեսական որոշ մթերքների վերամշակումից, կային նաև շինարարական, կավագործական, մետաղագործական և այլ արհեստներ։ Շինարարական արհեստների վրան հենց ինքը ավերված բաղարն է իր պաշտպանական պարիսպներով, փոխարքայի տաշտով, տաճարներով, պահեստներով, բնակելի թաղամասերով անհեղձ։ Քաղաքի արհեստների մեջ կարևոր դեր էին խաղում¹⁰ մետաղագործությունը, ջուլհակությունը, կավագործությունը, կաշեգործությունը, փայտամշակությունը և այլն։

Բրուտագործության զարգացմանը մեծապես նպաստում էր դինեզորությունը, որին անհրաժեշտ էր մեծ ու փոքր կարասներ, ամաններ ու անոթներ։ Բացի դրանից, բնակչության առօրյա կենցաղում լայն շահով օգտագործվում էին կովի ամանները։ Հնավոր տարածությունների վրա կավի իրերի հետափոխումը միանգամայն անհնար էր. դրանք ճանապարհին կորչել էին ջարդվել, իսկ մեծ կարասներն ընդհանրապես շատ դժվար էր տեղափոխել։ Այդ բոլորի հետ միասին, Քելչեբախիին ուներ տեղական հումք՝ կավի նվաճառ այդ ազգակները բարենպաստ պայմաններ էին ստեղծում բրուտագործության զարգացման համար։ Պեղումների ընթացքում հայտնաբերված են հարյուրավոր խոշոր կարասներ՝ 250—1250 լիտր տարողությամբ, ճազարից ավելի կծեր, տարբեր տեսակի ու չափի բազմաթիվ ամաններ, գավաթներ, անոթներ, գանձան ամանների մեծ քանակությամբ բեկորներ և այլն¹¹։ Միջնաբերդի սենյակներից մեկում հայտնաբերված են բրուտի զուրգ, երկաթե գործիք կավի հանույթի համար, իսկ հարևան սենյակում՝ կավի կույտ։ Ենթադրվում էր, որ այդ ունը եղել է բրուտի տուն-արհեստանոց¹²։ Ք. Պիոտրովիչին Կարմիր-բլուրի կերամիկան բաժանում է երեք մեծ խմբի՝ ուրարտական, տեղական և հնագույն անդրկովկասյան տիպերի։ Ուրարտական կերամիկայի իրերը ունեն կարմիր գույն, փայլուն են և ունեն լավ մշակված ձևեր։ Տեղական ծագումի կերամիկայի իրերն ունեն սև գույն և համեմատաբար կոպիտ ձևեր¹³։ Իսկ երրորդ խմբին պատկանող կավե ամաններն ու իրերը, որոնք նման են Անդրկովկասի տարբեր տեղերի՝ VII—VI դդ. վերաբերող դե-

¹⁰ Տե՛ս Բ. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 35—37, II, էջ 7—8, III, էջ 23, В. С. Сорокин, Раскопки древнего поселения («Кармир-блур», II, էջ 86), А. А. Мартиросян, Город Тейшебанин..., էջ 18 և 100։

¹¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 35, III, էջ 12։

¹² Նույն տեղը։

րկզմաններում հայտնաբերված նույնանման իրերին, ունեն մուգ-գորշ կամ կարմիր գույն, նախշեր և փայլեցողված են: Մի ատաներն իրումը են համարում նաև մեծ կարասները, որոնք ունեն ատարեր ձև, ատարողություն և որակի հայտնաբերված են կալից պատրաստած ձիու և ցուլի կուպիտ արձանիկներ, ինչպես նաև միբրուզավոր տղամարդու պատկերով ասավածների հինգ արձանիկների մասերը:

Քաղաքի տնտեսական կյանքում պահեստ դեր չէր խաղում նաև մետաղամշակությունը: Կարմիր-բուրում հայտնաբերված գործիքները, իրերը, զենքերը, ձիասարքերը, զարդերը և այլն պատրաստված են երկաթից կամ պղնձից: Մետաղամշակման արհեստանոցի գոտես չի հայտնաբերված ոչ միջնաբերդում և ոչ էլ բուն քաղաքում, որը գոտես հիմնովին չի պեղված: Բայց այդպիսի արհեստանոցների, հատկապես դարբնոցների գոյությունը անառարկելի կարելի է համարել Հայտնաբերված են կուպիտ կացնի ձուլման (կաղապարման) քարե կաղապար, դարդ ձուլելու քարե կաղապար, ձևավոր ձուլածո պղինձ և այլն¹, որոնք կասկած չեն թողնում մետաղամշակման արհեստանոցների գոյության մասին: Արհեստանոցները հավանաբար գտնվում էին ոչ թե միջնաբերդում, այլ բուն քաղաքում, ինչպես ենթադրում է Բ. Մարտիրոսյանը:

Քիչընթախինի մետաղայ իրերի մեծագույն մասը երկաթից է: Այստեղ հայտնաբերված երկաթյա իրերը, ինչպես պնդում են մասնագետները, լիովին նման են Ուրարտուի կենտրոնական մասի նույնատիպ իրերին, մինչդեռ բրոնզե իրերը նման են տեղականներին: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են մուրճեր, կնո գանակներ, դաշույններ, երկու տիպի թրեր (լայն ու կարճ բերանով և երկար), եռաժանիք եղաններ, որոնք օգտագործվել են կամ գյուղատնտեսական աշխատանքների մեջ, կամ որպես զենք, ուրազներ (ավելի ճիշտ՝ ուրագանման գործիքներ), փականի մասեր, բանձեր, երկաթե սղոց, նիզակի մի քանի ծայրեր, մեծ քանակությամբ նետի ծայրեր և այլն²:

Քիչընթախին, Արզիտիխինին, Էրբունին այն հիմնական կենտրոններն էին, որոնք մեծ դեր են խաղացել երկաթի կուլտուրան

հյուսիսային ժողովուրդների մոտ տարածելու գործում: Բ. Բ. Պրոտրովսկին ուղղակի նշում է, որ Քիչընթախին այդ բնագավառում մեծ ազդեցություն է թողել սկյութական ցեղերի վրա³:

Երկաթյա իրերի համեմատությամբ Կարմիր-բուրում հայտնաբերված բրոնզե ատարկաներն ավելի սահմանափակ են: Ամենից ատառ պնեթ է, սանել, որ այստեղ պեղված են միաձև, բայց տարբեր մեծություն ու քաշի բրոնզե ձուլածոներ: Ընթացողում է, որ Քիչընթախինի շրջակայքում ապրող բնակիչներից իրեր ատառ վերցրվում էր նաև բրոնզ, որը վերածուլվելով հատուկ ձևավոր ու միատիպ ձևերով ուղարկվում էր պետության կենտրոնական շրջանները⁴: Հայտնաբերված բրոնզե իրերից կարելի է նշել դարգանախոջ ապարանջանները, մեծ քանակությամբ ճարմանդները, գոտիները, որոնցից մի քանիսը զարդարված են զեզզեցի նախշերով, գոտիների բեկորները, ձիասարքի մասերը, որոնցից մի քանիսի վրա սեպագրով հիշատակված են Արզիտի I-ի և Սարգուր II-ի անունները, բրոնզե մի քանի ամաններ, բարձր արվեստով պատրաստված զեզզավորների անուններով բարձրակետ վաճաններ և այլն⁵), բազմապես ուղունքները, զենքերի մասերը, տնային գործածության դանադան իրերը, զանազան ատարկաների մնացորդները, և այլն⁶: Միանման այն հատկանշալի է, որ բրոնզե իրերն իրենց ձևով ու ոճով մեծ մասամբ տեղական ծագումի պնեթ է լինելին, որովհետև պղնձի հայթաթումն ու մշակումը պղնձաշատ այս երկրում ունեւ հնագույն պատմություն: Մինչև ուրարտացիների հանգես գալը զարբ ատառ Հայկական լեռնաշխարհի այս մասում արդեն գոյություն ունեւ պղնձի-բրոնզի զարգացած կուլտուրա:

Պեղումների ընթացքում միջնաբերդում հայտնաբերված են փայտե լավ պահպանված ատարկաներ՝ փայտե զգալ, զեզեցի կուճակներ, կողովներ, խոշոր շերտիներ թեկոյններ: Փայտից էին պատրաստված շենքերի ծածկերը, զաները, որոշ սենյակների հատակներ և այլն: Գտնված են նաև ոսկրե որոշ իրեր ու ատարկաներ⁷:

Քիչընթախիում զարգացած է եղել նաև մանածագործությունն ու թուղակությունը: Հնագիտական պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերված են բրդյա մանվածք, գործվածքներ, բուսական թե-

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 36—37:

² Նույն տեղը, էջ 37:

³ Նույն տեղը, էջ 18:

⁴ Նույն տեղը, II, էջ 11:

⁵ А. А. Мартиросян, Город Тейшебаши..., էջ 97:

⁶ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 37—40, III, էջ 15:

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 40:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, I, էջ 40—42, II, էջ 7—8, III, էջ 23 և այլն:

⁴ Նույն տեղը, I, էջ 24, II, էջ 8:

⁵ Նույն տեղը, II, էջ 8:

լից՝ պարաստոված ուղեգրոց, ցանց, փայտյա թելի, կանեփից պատրաստած թելի մաշցորդներ՝ որոնք առաջին անգամ ուսումնասիրվել են Վ. Ն. Կոնտովի, իսկ հետո՝ Ա. Ս. Վերտովի և Մալախովի կողմից: Հայտնաբերված բոլոր կարգի գործվածքներն ու թելերը դարերի ընթացքում ենթարկվել են ամփոփման և ձևեր տալիս անմիջապես փշրվում են, բայց պահպանել են իրենց կառուցվածքը և հնարավոր է համապատասխան վերլուծությունների միջոցով միշտ զգալիոր կազմել դրանց նախնական վիճակի մասին: Դրանք իրենց կառուցվածքով, որակով և նյութի մշակման ձևերով բազմազան են: Մեղ հասած բոլոր կարգի գործվածքներն ու թելերը բացառապես բրդյա են: Ըստ նրբություն աստիճանի, մասնագետները պեղված գործվածքների մեջ տարբերում են երեք տեսակ՝ կոպրտ, միջին նրբության և նուրբ: Վերլուծության միջոցով պարզել են, որ հասակպես նախշեր ունեցող բրդյա գործվածքները ներկվել են կապույտ, կարմիր և դեղին գույների տարբեր երանգներով:

Կարմիր-բլուրում հայտնաբերված հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Քելշերախինի տնտեսական լայն կապեր է ունեցել հարևան և հեռավոր երկրների հետ: Այստեղ հայտնաբերված են Եգիպտոսից բերված առարկաներ, ասորեստանյան ուլունքներ, կնիքներ, ոսկյա իրեր, փոքրասիական, միջերկրածովյան և այլ տիպի զանազան առարկաներ: Քելշերախինի առևտրա-տնտեսական սերտ կապեր է ունեցել նաև սելուփական աշխարհի, Փյունիիայի, հեթերի երկրի և Իրանական սարահարթում սպորո ժողովուրդների հետ: Տնտեսական այդ կապերը կրողգործվել են փոխանակալին առևտրի միջոցով:

Դրանք էին Քելշերախինի տնտեսության կարևոր նշույթը:

Այժմ տեսնենք ինչպես են սկսել Քելշերախին—Կարմիր-բլուրի պեղումները, ինչ ընթացք են ունեցել դրանք և հնագիտական ինչպիսի նյութեր են հայտնաբերված:

1936 թվականին, Չարբախ գյուղի դպրոցի աշակերտների պատմության ուսուցչի ղեկավարությամբ հայրենագիտական էքսկուրսիայի ընթացքում, Կարմիր-բլուրի ստորոտում հայտնաբերվում են վեց տող սեպագիր արձանագրություն ունեցող բազալտի մի մեծ բեկոր, որը հաջորդ օրը Երևանի պետական պատմական

թանգարանին է հանձնում Հայաստանի հնությունների հավաքման գործում այնքան երախտավոր, մասնագիտությամբ երկրաբան Ա. Պ. Գեմլյոխինը: Արձանագրության վերծանումից պարզվում է, որ նա կազմում է ամբողջական ուրարտական Արդշաի թագավորի որդի Թուսա II-ի անունը, իսկ կերբի վերջին երկու տողերը սովորական անեծի ֆորմուլի մի մասն են կազմում, անեծք, որն ուղղված էր նրանց զմե, ովքեր կփչացնեն սովյալ արձանագրությունը:

Կարմիր-բլուրի նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջանում: 1936 թ. աշնանը այնտեղ նախնական ուսումնասիրություններ կատարելու համար ՀեՍՀ պատմության և գրականության ինստիտուտի կողմից, Կ. Գ. Ղաֆաղյանի ղեկավարությամբ, ուղարկվում է հատուկ արշավախումբ¹: Կարճ ժամանակամիջոցում արշավախումբը մեծ աշխատանք է կատարում: Նա զննում և չափազանց է Կարմիր-բլուրը, գլուղացիների տներին և թանգարանին է հանձնում հնագիտական բազմազան նյութեր, որոնց թվում էր արձանագրություններ, որը նույնպես մտնում էր արշավախմբի տառադրարանների մեջ, ապարդյուն են անցնում: Պարզվում է, որ Կարմիր-բլուրում բնակավայր է եղել նաև միջին դարերում:

Մի քանի տարի անց, 1939 թ. սկսում են Կարմիր-բլուրի պարբերական պեղումները, որ տարբեր ժամանակներում կատարվել են տարբեր արշավախմբերի կողմից: 1939—1941 թթ. պեղումները կատարվել են միաժամանակ երեք արշավախմբերի կողմից, բայց միասնական մի պլանով:

Հայրենական պատերազմի տարիներին Կարմիր-բլուրում պեղումները ընդհատվում են: Դրանք նորից են վերսկսվում 1945 թվականից՝ Բ. Բ. Պետրովսկու ղեկավարությամբ: 1945 թ. սկսած պեղումները կատարվում են ՄՍՄ ԳԱ և Էրմիտաժի կողմից: Բ. Բ. Պետրովսկու հեղինակությամբ հրատարակված են 1939—1953 թթ. պեղումների արդյունքները երեք գրքով («Կարմիր-Ելուր», ԽՍ. ԿՍ. I, 1950, II, 1952, III, 1955), որոնցում առաջինում ամփոփված են

¹ Կ. Ղաֆաղյան, Կարմիր-բլուրի նորայտ սեպագիր արձանագրությունը.

«Տեղեկագիր» ՀեՍՀ պատմության և գրականության ինստիտուտի, գիրք II, երկրորդ, 1937, էջ 222—223, Բ. Բ. Պետրովսկի, Կարմիր-Ելուր, I, էջ 5 և 14—15, 2

3 Բ. Բ. Պետրովսկի, Կարմիր-Ելուր, I, էջ 15—16:

4 «Տեղեկագիր» ՀեՍՀ պատմ. և գրական. ինստ. գիրք II, էջ 222—223,

Բ. Բ. Պետրովսկի, Կարմիր-Ելուր, I, էջ 16:

5 Բ. Բ. Պետրովսկի, Կարմիր-Ելուր, I, էջ 16:

¹ Բ. Բ. Пётровский, Кармир-Блур, I, էջ 34:

² Նույն տեղը, I, էջ 34, III, էջ 68:

³ А. С. Верховская, Текстильные изделия из раскопок Кармир-Блура, Кармир-Блур, III, էջ 67—68:

⁴ Բ. Բ. Пётровский, Кармир-Блур, II, էջ 11, А. А. Мартиросян, Город Тейшебаши..., էջ 103:

1939—1949 թթ. հնագիտական աշխատանքները, երկրորդում՝ 1949—50 թթ., իսկ երրորդում՝ 1951—1953 թթ. աշխատանքները Ընդ որում, զրանք սուսկ նյութերի ժողովածուներ չեն, այլ միասնամանակ հնագիտական լուրջ ուսումնասիրություններ, որոնց մեջ իրենց բաժիններն ունեն նաև կենսաբանները, սոսկրագիտները, քիմիկոսները և այլն: Դրանից հետո այլևս հնագիտական նյութերի այդպիսի ամփոփիչ աշխատություններ չեն հրատարակվել, ոչ Կարմիր-բլուրի և ոչ էլ Արին-բերդի վերաբերյալ (իսկ Ենեզգյալի մասը հայտնաբերված հնագիտական նյութերի ընդհանրադաս մասում են շարադարակված վիճակում), չհաշված առանձին ուսումնասիրությունների (Ռ. Ս. Оганесян, Архитектура Эребуни..., Архитектура Тейшебани..., А. А. Мартиросян, Город Тейшебани..., Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967 և այլն): գիտական ու թվերթային հոդվածների մեջ վիճակալից մեջ նյութերի, որոնք չեն կարող ամբողջական լինելու հավանություն ունենալ:

1939—1949 թթ. պեղումները հիմնականում կատարվել են բուն Կարմիր-բլուրի վրա և նպատակ են ունեցել պարզել այստեղ եղածը՝ հնչյունական շենքի հատակագիծը և ուսումնասիրել զրանցից հյուսիս-արևմուտք գտնվող պահեստներն ու տնտեսական այլ սենյակները: 1948—1949 թթ. որոշ պեղումներ են կատարվել նաև բլուրից արևմուտք, բուն քաղաքի տերիտորիայում: 1949 թ. պեղումները ընդհուպ հասել էին պլատի կենտրոնական մասը¹, որը հետագա մանրամասն ուսումնասիրության ենթարկվելից 1951—1953 թթ. պեղումների ընթացքում²:

Հսկայական են ու բազմազան Քենչերախի—Կարմիր-բլուրի պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը: Դրանց մեջ կարելի է տեսնել տասնյակների հասնող սեպտաղիտ արձանագրություններից մինչև արվեստի նորահնչյակ առարկաները ներառյալ:

1959 թվականի զրոյվյաք Կարմիր-բլուրում հայտնաբերված են եղել տարբեր մեծություն և բովանդակության 46 արձանագրություններ և առանձին արտահայտություններ, անուններ ու բառեր: Դրանցից 16-ը վերաբերում են Արզիշտի առաջինի ժամանակին-

րին՝ 16-ը՝ Սարգսյանի II-ի ժամանակներին³, 5-ը՝ Սարգսյանի II-ի որդի Ռուսա I-ին⁴, 1-ը՝ Ռուսա I-ի որդի Արզիշտի II-ին⁵, 3-ը՝ Արզիշտի II-ի որդի Ռուսա II-ին⁶, իսկ տարբեր ժամանակներում գիշեր II-ի որդի Ռուսա II-ին⁷, իսկ տարբեր ժամանակներում հայտնաբերված մյուս հինգ արձանագրությունների հեղինակներն ու ժամանակները մեզ համար մնում են անհայտ⁸: Դրանք զրված են տարբեր նյութերի ու առարկաների վրա՝ բարձր, բարձր տախտակակների, բրոնզյա վահանների, սղաղվարտների, նիզակների, կնիքների և այլնի վրա: Դրանց մեծագույն մասը բաղկացած է առանձին արտահայտություններից կամ բառերից ու անուններից (այն բովանդակության արձանագրությունները, որոնցից մի բանիսի մասին հարկ եղավ խոսել տարբեր առիթներով, սահմանափակ թիվ են կազմում):

Մի բանի արձանագրություններ են հայտնաբերվել նաև հետագայում, 60-ական թվականներին: Դրանցից մեկը, որ հայտնաբերված է Քենչերախի «Susi» կողմում տաճարում, ուրարտական մեծարձեք արձանագրություններից մեկն է: Այն բաղկացած է 22 սոսմարձեք արձանագրություններից և նաև 12 ուսումնասիրելի զինք, որի պահպանված մասը մանրամասնությամբ ուսումնասիրել է Ն. Հարությունյանը⁹: Պակաս նշանակություն չունի նաև 1936 թվականին հայտնաբերված արձանագրության բեկորի տեղում 1961 թ. նշմարված 11 առանոց՝ լավ պահպանված արձանագրությունը՝ զրված բաղադրյալ պատի վրա (73,5 × 43,5 սմ չափի)¹⁰: Այս արձանագրությունը ևս ունի ուրարտագիտական կարևոր նշանակություն:

Սեպտաղիտ արձանագրություններից, առանձին արտահայտություններից ու բառերից բացի, ինչպես երբայցնում են ուրարտագիտները, ասորեստանյան քաղաքների նման Քենչերախիում ևս գտնվում, ասորեստանյան քաղաքների կյանքն արտահայտող ամբողջություն է ունեցել բերդաքաղաքի կյանքն արտահայտող ամբողջություն արիթի: 1946 թվականին այստեղ հայտնաբերվել են սեպտաղիտ արձանագրություններ, իսկ 1949 թ. գիր ունեցող կավի երեք տախտակիկների բեկորներ¹¹, իսկ 1949 թ.

1 Գ. Ա. Меликшвили, Урартские клинописные надписи, №№ 144—152, էջ 267—272:

2 Նույն տեղը, №№ 173—183, էջ 319—322:

3 Նույն տեղը, №№ 269—274, էջ 333—334:

4 Նույն տեղը, № 277, էջ 340:

5 Նույն տեղը, №№ 283—285, էջ 346—347:

6 Նույն տեղը, №№ 318, 333, 345—364, 368, 370 (էջ 361, 364, 367 և 368):

7 Տե՛ս Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блура, էջ 37—41, ինչպես նաև նույն գրքի Բ. Բ. Պետրոսյանի զրոյված առաջաձեռն (էջ 8):

8 Նույն տեղը, էջ 5:

9 Н. М. Дьяконов, Фрагменты клинописных таблесток из раскопок 1946 г. на Кармир-Блуре. «Эпиграфика Востока», II, 1948, էջ 86, Б. Б. Петровский, Кармир-Блур, I, էջ 75—76: 165

¹ Б. Б. Пиотровский, Кармир-Блур, I, էջ 17:

² Նույն տեղը, էջ 59:

³ Նույնը, Кармир-Блур, III, էջ 7:

⁴ Գ. Ա. Меликшвили, Урартские клинописные надписи, №№ 144—152, էջ 267—272, №№ 173—183, էջ 319—322, №№ 269—274, էջ 333—334, № 277, էջ 340, №№ 283—285, էջ 346—347, № 318, էջ 361, № 333, էջ 364, №№ 345—364, էջ 367, № 368, էջ 368, և № 370, էջ 368:

մի այլ ավելի շատ վնասված տախտակիկ՝ 12 տողանոց արձանագրությունք, որն ունի տնտեսական բովանդակություն: Դրանք իրենց տիպի մեջ եզրակի նորություն են ամբողջ Միութչան տեխնոստիկայում հայտնաբերված հնությունների մեջ: Այդ կարգի հնություններից մինչև 1946 թվականը ուրարտական ժամանակաշրջանից հայտնի էին անվնաս մնացած միայն 2 տախտակիկ և 4 բեկորներ, որոնք բոլոր հայտնաբերվել էին պետության մայրաքաղաքի մոտ՝ Քափախ-կայսրում¹:

Հայտնաբերվել են ուրարտական սպասազինության բովանդակ հարուստ և բազմազան նյութեր: Դրանցից շատերն իրենց վրա սեպագրով կրում են ուրարտական թագավորների անուններ, որոնց շնորհիվ մշտությամբ որոշվում է ժամանակը: Բ. Բ. Պիտրովսկու գլխավորած արշավախումբը 12 տարվա ընթացքում (1939—1941 և 1945—1953 թթ.) հայտնաբերել է 6 սաղավարտ, 11 վահան, 6 զրահ, 12 կապարձ, բրոնզե կոթով 2 երկաթե սուր, մեծ թվով երկաթե թերթ, նիզակի ծայրեր, նետեր²: Բրոնզե շատ պահանջներ, սաղավարտներ, կապարձներ, զրահներ, նետի ծայրեր ուրարտական թագավորների անուններով նվիրված էին Խալզ սատանու: Դրանց զարգարում էին միջնաբերդի պատերի պատերը³: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուրարտական սպասազինությունը գտնվում էր իր ժամանակվա տեխնիկական բարձր մակարդակի վրա: VIII—VII դդ. (մ. թ. ա.) նրա սպասազինությունը նման էր ասորեստանյան սպասազինությանը, մինչդեռ զրանից մի զար ատյա (IX դ. մ. թ. ա.) այն նույնության շատ զգե՞ր ուներ խեթական սպասազինության հետ⁴:

Մենք տեսնում, որ ասորա-տնտեսական կապերի և ռազմական շփումների հետևանքով VII դ. (մ. թ. ա.) ուրարտական կենտրոնի հետ միասին Քելչերայինիում առկա էին սկյութական և նուրյսիակ կիմերական որոշ զենքեր: Այդ բնագավառում Ուրարտուն ազգել է

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 76:

² Նույնը, Кармир-блур, III, էջ 24:

³ Կարմիր-բլուրում հայտնաբերված զենքերի և սպասազինության մասին տեսե՛ք և Յամոնյան, Հին Հայաստանի կոլտուրան, 2, 1, էջ 74, Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 9—20, Н. В. Арутюнян, Новые Урартские надписи Кармир-блур, Предисловие Б. Б. Пиотровского, էջ 5, В. А. Паладжян, Урартские древки стрел. (5. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 65—66) և այլ տեղերում:

⁴ С. М. Бацнева, Борьба между Ассирией и Урарту за Сирию, «Вестник древней истории», 1953, № 2, էջ 27:

նաև այլ երկրների սպասազինությունների վրա, ինչպես և վերջերի է գրանցից զենքի որոշ տեսակներ:

Հայտնաբերված հնությունների հաջորդ մեծ խումբը կարելի է համարել զանազան գործիքները, կենցաղային իրերը, մետաղյա ամանեղենը և բրոտագործական առարկաները, որոնք բավական մանրամասնությամբ ներկայացվեցին երկրագործության, խաղողագործության և արհեստագործության վերաբերյալ խոսելիս: Սակայն անհամեմատ է նշել, որ դրանց մեջ ամենամեծ քանակությամբ հայտնաբերված են կերամիկայի իրեր՝ կարաններ, զանազան անոթներ, ամաններ, կճեր, զավթ, տախտակիկներ, ճրագներ: Միայն 1951—1952 թթ. ընթացքում գտնվել են հազար երկու հարյուրից ավելի սափորներ (0,45—7 լիտրանոց), ինչպես նաև ցորեն պահելու համար մեծ թվով անոթներ, 55 տափակ ամաններ, 40 ճրագներ և այլն⁵: Հայտնաբերված են կարասների, խոշոր անոթների և սափորների ինչպես տասնմին, այնպես էլ գինու ու ցորենի պահպանման հեկտայական պահեստներ:

Հնությունների մյուս խումբը կազմում են կնիքները: Մինչև 1957 թ. Կարմիր-բլուրում հայտնաբերված էր 50 կնիք: 2. Մարտիրոսյանը ենթադրում է, որ Քելչերայինի միջնաբերդում կային 120—150 պահեստանակներ և այդպես բանակությունը էլ՝ կնիքներ⁶: Կնիքները պատրաստված են տալիկոց ու այլ բարերից, կավից, հախճապակուց (фаянсовый), հազվադեպ՝ բրոնզից: Հայտնաբերված են մի քանի տիպի կնիքներ՝ ուրարտական, ասորական, եգիպտական և այլն: 1939—1949 թթ. քնդամենը գտնվել է ուրարտական 18 կնիք, որոնցից 14-ը պատրաստված է տալիկոց, 3-ը՝ կավից, իսկ մեկը՝ բրոնզից: Կախելու համար դրանք բոլոր իրենց վերին մասում ունեն կանտիկ: Տալիկ կնիքների վրա են պահպանվել Բայր և այնպես որոշակի երևում է, որ ուրարտական կնիքների մեծ մասը զլանձե և կամ ունի հատած կոնի տեսը: Դրանք բոլորը մանրամասնությամբ նկարագրված են Բ. Բ. Պիտրովսկու կողմից⁷: 1952 թվականի պեղումների ընթացքում ևս հայտնաբերվել են ուրարտական մի շարք կնիքներ, իսկ 1951—1953 թթ. քնդահերապես հայտնաբերվել է ուրարտական 12 կնիք, որոնց մեծագույն մասը պատրաստված է քարից (տալիկոց)⁸:

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 11—22:

² А. А. Маргусян, Город Тейшебани..., էջ 93:

³ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 72—75, II, էջ 45—48:

⁴ Նույնը, Кармир-блур, III, էջ 54—55:

Տնտեսական կապերի տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Կարմիր-բլուրում հայտնաբերված ասուրական, եգիպտական, փոքրասիական և այլ ծագումի իրերն ու ասորականները, որոնց մեջ կարևոր տեղ են զբաղում նաև կնիքները: Ասուրական ծագումի կնիքները պատրաստված են «հախճանպակուց» կամ քարից և իրենց վրա ունեն զանազան պատկերներ (ոտեր, դիցարանական բովանդակությամբ տեսարաններ, աստվածները, մարդկանց, կենդանիների, բույսերի պատկերներ և այլն): Կարմիր-բլուրի հնադրամական աշխարհը պակաս հարուստ չէ նաև փորարտական և միջերկրածովյան երկրներից բերված իրերով:

Մյուս առարկաներից Կարմիր-բլուրում հայտնաբերված են «Հախճանպակուց», սպակուց, քարից ու այլ նյութերից պատրաստված հսկայական քանակությամբ տարբեր մեծություն ու ձև ունեցողներն, որ երբեմն հանդիպում են ուղղակի կույտերով, ձուլածո զանգակներ, ապարանջաններ, ականջօղիք, բորոցներ և այլ ասուրական, ինչպես ուրարտական ծագումի, այնպես էլ ուրբէ երկրներից բերվածները:

Ուրարտական սպառազինության մասին խոսելիս նշեցինք նաև ուրարտական թագավորների անունները սեպագրերով իրենց վրա կրող վահանների ու սաղավարտների մասին: Սակայն դրանք ավելի շուտ արվեստի առարկաներ են, քան սպառազինության: Բ. Բ. Պրատորովսկին զրանք ուղղակի համարում է ուրարտական արվեստի լավագույն նմուշներ: Պեղումների սկզբից մինչև 1953 թվականը ներառյալ Կարմիր-բլուրում հայտնաբերվել են այդպիսի 11 վահաններ՝ VIII դ. (մ. թ. ա.) ուրարտական թագավորները՝ հալը աստծուն նվիրաբերելու սեպագիր մակագրություններով: Դրանցից 7-ը նվիրաբերել է Արգիշտի I-ը, 3-ը՝ Սարգուր II-ը, իսկ 1-ը՝ Ռուսա առաջինը: Դրանք այնպեղ էին բերված էրեբունիից և ունեն 70 սմ մինչև մեկ մետր տրամագիծ: Արգիշտիի կողմից հալդին նվիրված բրոնզե վահաններից երկուսը հայտնաբերվել է 1940 թ. պեղումների ընթացքում, որոնցից մեկի վրա կա երկու տողից բաղկացած նրա մակագրությունը, որը վերծանում են հետևյալ կերպ. «Մենուայի որդի Արգիշտիի բերդից, այս վահանը, Արգիշտին, Մենուայի որդին, թագավոր հզոր, թագավոր մեծ, Բիայնա երկրի թագավոր, Տուշպայի տեր, (իր) տիրոջը, հալը աստծուն այս վահանը... նվիրեց, հալդյան մեծությամբ Արգիշտի, Մենուայի որդի թագավոր հզոր, թագավոր մեծ, թագավոր Բիայնա երկրի, տեղ Տուշպա քաղաքի»: Նույն ձևի ու բովանդակությամբ նվիրաբերական մակագրություններ կան նաև մյուս վահանները վրա, իսկ հալը ախյի վահանները հայտնի էին Քոփրախ-կալայից գեոևս 1880-ական թվականներին¹:

Արվեստի տեսակետից պակաս կատարյալ չեն նաև սաղավարտները, որոնցից Կարմիր-բլուրում մինչև 1954 թվականը հայտնաբերվել է 3 հատ: Դրանցից մեկը հայտնաբերվել է 1940 թվականին և պատկանել է Արգիշտի I-ին, երկրորդը՝ 1947 թ. և պատկանել է Սարգուրին, իսկ երրորդը, որը հայտնաբերվել է 1952 թ., միանգամայն բարդված է² և հնարավոր չէ վերականգնել նախկին մոտավոր վիճակը: Ուրարտական մարտական սաղավարտները նման էին ասուրականներին, նրանք երբեմն իրենց վրա ունեին զարդեր: Կարմիր-բլուրում հայտնաբերված ուրարտական նշված երեք սաղավարտները շքեղ են և զարդարված են ուրարտական աստվածներով, մարտական կառքերի ու հեծյալների պատկերներով: Այսպես, օրինակ՝ 1947 թ. գտնված սաղավարտը զարդարված է երկու շարք կազմող 11 սրբազան ծառերի և դրանց երկու կողմերում կանգնած աստվածների պատկերներով, ինչպես նաև առյուծի գլխով օձերի, մարտական կառքերի և ձիավորների նկարներով: Սաղավարտի վրա ընդամենը պատկերված են 10 հեծյալ և 8 մարտականք: Սարգուրի կողմից հալը աստծուն նվիրված այդ սաղավարտի վրա կարգացվում է հետևյալ սեպագիր մակագրությունը. «Տալդի աստծուն, տիրոջը, (այս սաղավարտը) Սարգուրը, Արգիշտիի որդին, նվիրեց բարեհաջողության համար»³:

Կարմիր-բլուրում գտնված են նաև նախազարդ կապարճներ, որոնք նույնպես իրենց վրա կրում են ուրարտական թագավորներին նվիրաբերական մակագրությունները և այլ առարկաներ: 1941 թ.

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 77—79:

² SK u նույն տեղը, էջ 83—85:

³ նույն տեղը, էջ 77—83, Кармир-блур, II, էջ 11, III, էջ 2—22, 46—48 և այլն:

⁴ նույնը, Кармир-блур, I, էջ 62:

⁵ Б. Б. Пиотровский, Кармир-блур, III, էջ 24:

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 62:

² նույն տեղը, էջ 63:

³ նույնը, Кармир-блур, III, էջ 26:

⁴ նույն տեղը, էջ 24—26:

⁵ նույնը, Кармир-блур, I, էջ 63 և 66:

⁶ նույն տեղը, էջ 67:

պեղումների ընթացքում հայտնաբերվել է 24 սմ բարձրություն ունեցող բրոնզե արձանիկ, որը պատկերում է ուրարտական պատե-րազմի ու մորիկի աստծուն՝ Քեչչեբին: Վերջինս անունով էլ հենց կոչվում էր բերդաբազուքը: Արվեստի պահպան լավագույն նմուշ չեն նաև 1948 թ. հայտնաբերված երկաթե նախշապարզ ճրագը և պատկերազարդ մի կավի աման, որն ունի 50 սմ բարձրություն և նույն-բան է տրամագիծ: Հայտնաբերված են նաև մի քանի այլ արձանիկներ:

Ուրարտուի և ընդհանրապես Հին Արևելքի օտարաօտարական մյուս բազմաթիվ քաղաքների նման՝ Քեչչեբաինին ևս բազկացած է կղզի երկու մասից՝ միջնաբերդից ու բուն քաղաքից: Քաղաքը փոխված էր այժմյան Կարմիր-բլուրի հարավային և արևմտյան կողմերում՝ զբաղեցնելով մոտ 40 հեկտար տարածություն: Միջնաբերդը զբաղում էր մոտ 4 հեկտար տարածություն և, տեղանքի պայմաններից ելնելով, տեղադրված էր քաղաքի արևելյան մասում, Կարմիր-բլուրի վրա: Առաջմ պեղված է և հայտնի է պաշտպանական պարսպի միայն մոտ 500 մետր տարածությունը: Պարսպի մեղ հայտնի այս հատվածը մտնելու է միջնաբերդի հարավ-արևելյան անկյունին, որից հետո բլրի լանջով իջնում է զեպի վար, այսպես՝ 90°-ի տակ շրջվում է զեպի հարավ-արևելք, իսկ հետո՝ արևմուտք: Պարսպի այս հատվածն ունի աշտարակներ և կողահենարաններ: Պեղումներով ի հայտ է բերված բերդի պարսպի մի հատվածը ևս, որն ունի մոտ 200 մետր երկարություն և սկսվում է միջնաբերդի հյուսիս-արևմտյան դարպասից ու ձգվում զեպի հարավ-արևմուտք՝ կազմելով քաղաքի հյուսիսային սահմանը, ենթադրվում է, որ քաղաքի գոյության համեմատաբար կարճատևության շնորհիվ ուրարտացիները չեն հասցրել այն բոլոր կողմերից պարսպապատելու: Բացի արտաքին պարիսպներից, հայտնաբերված են նաև զբանց լայնակի ուղղությամբ հասող ուրիշ պարսպի մնացորդներ: Հավանական է համարվում, որ այս վերջինս արտոնյալ խավին պատկանողների բնակիչ թաղամասերը բաժանել է մյուս, ոչ արտոնյալ զանգվածների բնակեցրած մասերի: Պաշտպանական պարիսպները ունեցել են 3 մ հաստություն, Պահպանված են պարիսպների ցուլույսին մասերը՝ 1—2 մ բարձրությամբ, որոնք շարված են բազալտե բարերով: Պարիսպների վերին մասերը շարված են եղել աղյուսից, զրանք չեն պահպանվել: Հավանական են համարում, որ բլրի արևելյան կողմում և քաղաքի հյուսիս-արևելյան սահմանա-

դիլին ընդհանրապես արհեստական պաշտպանական կառուցվածքներ չեն կատարել: Քաղաքի այդ հատվածներից ամենաուշին է կղզի խոր ձորերի և զեպի Հրազդան գաղիվեր իջնող լեռնալանջերի շնորհիվ: Քաղաքն ունեցել է ճրագարակներ և ենթադրվում է, որ նրա գլխավոր ճրագարակը գտնվում էր հարավային մասում:

Քաղաքի ամենաբարձր մասում, Կարմիր-բլուրի վրա գտնվում էր նրա միջնաբերդը, որն իշխող զիբը է ունեցել քաղաքի և շրջակայքի նկատմամբ: Միջնաբերդը քաղաքից բաժանված է ճգոր պարսպով, որն ունի զեպի քաղաք բացվող երկու մեծ ու ամրակուռ դարպասներ: Միջնաբերդի մոտումենտալ շենքը իր եկելու թևերով ուղղված է զեպի բուն քաղաք: Այդ հսկայական շենքը իր բազմաթիվ ենթաբարձրներով հրաշայի կերպով համարեցված է կղզի տեղանքին կապվելով՝ զարավանդակ և Հարտարտպետական բարդ կոմպլեքս: Ենթադրվում է, որ Քեչչեբաինի կառուցվածքները չեն ենթարկված միասնական մի ընդհանուր պլանավորման: Նախնական կառուցվածքներին այստեղ համակցել են նոր կառույցներ, բայց առանց կտրուկ խախտելու նրա հարտարտպետական միասնությունը, Բ. Բ. Պետրովսկիին, ելնելով պեղումների շնորհիվ բացված շենքերի մնացորդներից, ենթադրում է, որ միջնաբերդի կառույցները կատարվել են տարբեր ժամանակներում մի քանի նվազում: Միջնաբերդի սենյակները թիվը 120, 140 կամ 150 էր, որոնցից 1955 թվականի դրությամբ բաց էին արվել հիմնականում նրա հյուսիսային մասում գտնվող 65 սենյակները: Սրանք զբեթե բույրը մտնաներ, շտամարաններ, պահեստներ և արտաքրական նպատակների ծառայող սենյակներ էին, որոնք զասավորված էին միջնաբերդի գլխավոր ձախտի ուղղությամբ: Այս առակներից, ինչպես նշում է Կ. Լ. Հովհաննիսյանը, Քեչչեբաինի միջնաբերդը տարբերվում էր էրբերունիի (և ընդհանրապես Արևելքի մեծ պայտաններ ունեցող քաղաքների) միջնաբերդից, որի կարևորագույն մասը զբաղեցնում էր պալատն իր շքեղ կառույցներով՝ հանդերձ: Միջնաբերդի կառույցները կրկնական էին: Դրանց առաջին հարկում տեղավորված էին մասանները, պահեստները և շտամարանները, իսկ երկրորդ հարկում՝ բնակելի սենյակներն ու պաշտոնական դահլիճները, որոնք բավական ընդարձակ էին: Քեչչեբաինիում պեղված այդ քաղաքատիպ շենքերն իրենց հնությունը Սովետական

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 17, В. С. Сорокин, Раскопки древнего поселения, Кармир-блур, II, էջ 79, К. Я. Оганесян, Архитектура Тейшебаини, էջ 11:

² Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 45:

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 67—70:

Միութեան տերիտորիայում հայտնի այդ տիպի ամենահին կառույցներն են համարվում: Դրանց ներկորդ հարկի սենյակները լուսավորվում էին ասաստաղբի բացված կրթիկներով, իսկ ասաջին հարկի սենյակները բնական լուսավորութուն չունեին և զրա կարիքը չէին զգում, որովհետև, ինչպես ասվեց, զրանք հիմնականում պահեստներ ու մառաններ էին: Մառաններից յուրաքանչյուրում սովորաբար տեղավորված էին 70—80 կարասներ՝ ամեն մեկը 700—900 կրեմեն նաև 1200 լիար տարողությամբ: Պահեստների ու մառանների նույն շարքում էր գտնվում նաև կրեք սենյակներից բաղկացած սրբատեղին:

Արվեստի տեսակետից կարևոր նշանակություն ունեն Քնչեբախիում հայտնաբերված որմնակարների պատասխիկները, որոնք էրեբունիի շքեղ գույճիկների ու տաճարների ճոխ և բարձրարվեստ որմնակարների հետ միասին մեծապես լրացնում են մեր դիտելիքների ուրարտական արվեստի այդ շյուղի մասին, որը այնքան ընդհանրություններ ունի ասորեստանյան որմնակարության հետ¹: Որմնակարներից բացի, Քնչեբախիի պալատի սենյակների ներսի կահավորման մեջ օգտագործվել են նաև զարդաքանդակված բրոնզե թիթեղներ, որոնք հավանաբար կոչքրել են զաների վրա՝ սենյակի ներսի կողմից: Հայտնաբերված է բրոնզե այգայիս մի տախտակի բեկոր²:

Քաղաքը կառուցվել է նախօրոք կազմված հատակագծի հիման վրա: Այդ հատկապես վերաբերում է կենտրոնական մասին, որտեղ արևելքից արևմուտք իրար զուգահեռ ձգվել են մոտ 6 մետր լայնությամբ ունեցող փողոցների: Փողոցների երկու կողմերում շարքերով դասավորված էին բնակելի տները³: Դրանք, այսպես կոչված, գլխավոր փողոցներն էին, որոնք պիտանի էին սալլային տրանսպորտի երկկողմանի կրթիկներից: Համար: Այդ փողոցներից մեկը սկսվել է միջնաբերդի գլխավոր դարպասի մոտից և ձգվել մինչև քաղաքի ծայրը, որտեղից արդեն սկսվում էր բլրային տեղանքը: Դա համարում են Քնչեբախիի ամենագլխավոր փողոցներից մեկը: Նրան զուգահեռ, հյուսիսով անցել է մի այլ փողոց: Դրանք եր-

կուսը հաաված են եղել հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող մի ավելի լայն (մոտ 9,5 մ) փողոցով: Քնչեբախիի այդ փողոցները ձգվում էին քաղաքի կենտրոնական մասում, զրանք հաստված էին ավելի երկրորդական փողոցներով, որոնք զովար են վերականգնել: Քաղաքն ունեցել է հրապարակներ⁴:

Քաղաքում ջրմուղի հետքեր չեն նշմարվել: Այստեղ սակայն հայտնաբերվել են 6 օանտիմետր արամագիծ ունեցող կավի խողովակների (աղուգանների) քիկորներ: Այդ, ինչպես և էրեբունիի միջնաբերդում գոյություն ունեցած ջրմուղը հիմք են ավել նկատվելու, որ Քնչեբախիում նույնպես, հավանաբար, ջրմուղ է եղել: Կոյուղու հետքեր ամենևին չեն նկատվում: Ընդհանուր առմամբ, Քնչեբախիին ըստ երևույթին էրեբունիի համեմատությամբ քիչ բարեկարգ է եղել: Քաղաքը կառուցվել է կարճ ժամանակամիջոցում, կարճատև է եղել և նրա պատմական կայսրը: Ուստի չեն հասցրել այստեղ բարեկարգման և կոմունալ մեծ աշխատանքների կատարելու:

Քաղաքի բնակելի տների յուրաքանչյուր կոմպլեքս սովորաբար բաղկացած է եղել իրոր հևա կապված երեք սենյակից և բակից: Պատերը շարված էին անմշակ քարերով, հաճախ ատանց շաղախի: Տանիքները, ատանց բացառությամբ, հողե տափակ կտորներ էին, իսկ հատակը՝ կավից, կամ աղյուսից և կավից: Իսկ միջնաբերդի կառույցների պատերը շարված էին շքրծած աղյուսից: Տարբերություններ կային նաև զրանց ասաստաղբի բարձրության և պատի հատուկության միջև: Միջնաբերդի կառուցվածքների տանիքների ավելի բարձր էին և պատերը ավելի հաստ, քան քաղաքի տներից: Իրեն շինանյութ Քնչեբախիի կառուցման համար օգտագործվել են՝ բազալտը, տուֆը, կավը, փայլամյութը և այլն⁵:

Այսպիսով, Քնչեբախիին շնչած շատ կարճատև, 100 տարուց էլ պակաս կյանք է ունեցել, բայց զգալի հետք է թողել մեր մայրաքաղաքի երկրաբանից պատմության մեջ: Նրա հողածածկ ավերակներում հայտնաբերված հնագիտական նյութերը, մինչև օրս

¹ К. Л. Оганесян, Архитектура Тейшебани, էջ 36—73, «Ակադրիկ հայ հարաբերությունների պատմության», էջ 33, «Երևանի Երևան» (լրագիր), 1965, № 52, 4-րդ մարտի:

² К. Л. Оганесян, Архитектура Тейшебани, էջ 75:

³ Նույն տեղը, էջ 76:

⁴ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, էջ 17, В. С. Сорокин, Раскопки древнего поселения, Նույն տեղը, II, էջ 79:

¹ К. Л. Оганесян, Архитектура Тейшебани, էջ 14—15:

² Նույն տեղը, էջ 16:

³ Նույն տեղը, էջ 16—17:

⁴ Քնչեբախիի բնակելի տների և մյուս կառուցվածքների հարաբերությունների մասին համեմատող տե՛ս В. С. Сорокин, Раскопки древнего поселения, Кармир-блур, II, էջ 79—81, К. Л. Оганесян, Архитектура Тейшебани, էջ 18, 19—23, 27—33, 61—62, 79—81, 86—93, А. А. Мартиросян, Город Тейшебани..., էջ 80—92 և այլն:

գրքո՞ղ առունքը (որոնք անշուշտ մի քանի անգամ ենթարկվել են վերակառուցման ու վերականգնման) լրացնում են Երևանի պատմության հնագույն շրջանի շատ կողմերը Ավելին, Քեյշերախի—Կարմիր-բուլը մի հողածակ հնագիտական հրադարանն է, որի նյութերը լույս են սփռում մեր Հայրենիքի հնագույն պետության՝ Ուրարտուի պատմության շատ հարցերի վրա:

Էրեբունիքի և Քեյշերախիից հայտնաբերված հնությունները հիմնականում պահպանվում են Երևանի պետական պատմական և Երևան քաղաքի պատմության թանգարաններում:

III. ԵՐԵՎԱՆԸ VI Գ. (Մ. Ք. Ա.)—VII Գ. (Մ. Ք.)

Էրեբունի—Երևանը VI (մ. թ. ա.)—V դ. (մ. թ. բ.) քառ կնգիտական նյութեր, աճեցնելու շրջանի հատարապետական հուշարձանները, Ակհաճուր Մակիդոնացու ժամանակաշրջանին և հետագա դարերին վերաբերող դրամների հայտնաբերումները Երևանի տարբեր մասերում: Էրեբունին Երևան կոչվելու մոտավոր ժամանակը: Էրեբունիի և Քեյշերախիի բնակիչների վերաբնակումը այժմյան Գետտի մերձակայքում: Աճեցնելու տիրապետության շրջանում և հետագա դարերում Երևանը վարչա-տնտեսական միավորի կենտրոն լինելու հարցը: Երևանի հիշատակումը Մովսես Խորենացուն և նրա դարերկերներին վերաբերող ավանդությունները—հիշատակարանի մեջ:

Հնագիտական նյութերի մանրազնիքն ուսումնասիրությանը ուրարտագիտները եկել են ան կարակացության, որ Քեյշերախիի միջնաբերդի դրավմամբ (VI դ. սկիզբ, մ. թ. ա.) այստեղ վերացել է նաև ամբողջ բնակավայրը, որը զույգվում ունիր սակավին մինչև ուրարտական իշխանության հաստատումը և քաղաքի կառուցումը: Այդուհանդերձ Քեյշերախին ավերելուց հետո խափանվել են նրա ոռոգման առունները և անմարդարեն կաղաքը իր շրջակայքով վեր է ածվել կիսանապատի, ինչպիսին նա կար մինչև դրանց կառուցումը¹, նախկին Քեյշերախիի մոտ առաջացած հայկական բնակավայրի մասնաջողներին սկսում են թաղել ավերված քաղաքի տնրիտորիայում և, նույնիսկ, միջնաբերդի շրջանում²:

Մինչդեռ Էրեբունիին չի ավերվել: Նա նույնպես ենթարկվել է սկզբների հարձակմանը, բայց իբրև արդեն լրված բերդ, որի թանկագին իրերն ու հարստությունները (հավանաբար միայն ապահովության համար) նախօրոք տեղափոխել էին Քեյշերախի, մտնել է կանգուն, իսկ նրա շուրջը տարածվող քաղաքը առանց ընդհատման շարունակում է իր պատմական կյանքը արեմենյանների տիրապետության շրջանում (VI—IV դդ. մ. թ. ա.) և հետագա դարերում: Էրեբունի—Արին-բերդում պեղված շինությունները շին կրում հըրդհի ու ավերման հետքեր: Դրանք, ինչպես ցույց են տալիս հնագիտական ուսումնասիրությունները, ուղղակի լրվել են, իսկ քաղաքի կյանքը շարունակվել է³:

Ուրարտուն կործանելուց հետո մեղացիները մի կարճատև ժամանակաշրջանում ստեղծում են լայնածավալ ու հզոր պետություն: Բայց նրանք շուտով առաջնությունը զիջում են Աքեմենյան Պարսկաստանին, որը Կյուրուսի և Դարեհի առաջինի ժամանակներում գտնում է աշխարհակալ մեծ պետություն, իր մեջ ընդգրկելով նաև նախկին Ուրարտուն ամբողջությամբ, որի մի զգալի մասն արդեն հայտնի էր Արմենիա (Հայաստան) անունով: Արմենիա—Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությանն էր ենթարկվել զեռև Կյուրուսի ժամանակ (550—529 թթ. մ. թ. ա.)⁴, բայց հետագայում արեմենյաններին ենթարկված շատ երկրների հետ միասին Արմենիան էլ ապստամբում է՝ օրավելով Դարեհ I-ի թագավորության առաջին տարիների խռովահույզ անցքերից: Դարեհի առաջինի (522—486 թթ. մ. թ. ա.) հաղթում է դրանք նորից իր պետությանը ենթարկել զեռև այդպեղ կատարած մի քանի արշավանքներից և համառ մարտերից հետո միայն⁵: Աքեմենյան գերիշխանությունը Հայաստանում շարունակվում է մինչև IV դարի (մ. թ. ա.) վերջին տասնակակները՝ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները, այսինքն՝ մոտ 200 տարի: Հայաստանի այդ երկդարյան պատմական ժամանակաշրջանի մասին հիմնական աղբյուրները (չհաված Դարեհի Քեյշերախի վիճակը արձանագրությունը) Հեկադոտոս ու Քսենոֆոնի պատմագրական երկերն են, որոնք, սակայն, մեր մայրաքաղաքի և, ընդհանրապես, այդ ժամանակաշրջանի Հայաստանի մյուս քաղաքների վերաբերյալ ոչինչ չեն հաղորդում: Այսպիսով մեր մայրաքաղաքի այդ և հետագա շրջանի ավելի քան

¹ Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Кирмир-булур, I, էջ 18—19, К. Լ. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 13—14:

² А. А. Мартиросян, Город Тейшебани..., էջ 137:

¹ К. Լ. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 9:

² Հակոբ Մանանդյան, Քենական տնտեսության հայ ժողովրդի պատմություն, Հ. Ա, Երևան, 1945, էջ 53:

³ Նույն տեղը, էջ 47—53:

1300 տարվա (VI դ. մ. թ. ա.—VII դ. մ. թ.) պատմության ամենահուսալի ազդրուրը մնում են հնագիտական և դրամատիկական այն նյութերը, որոնք տարբեր ժամանակներում ու տարբեր առիթներով հայտնաբերվել են էրեբունի—Երևանում ու նրա շրջակայքում, որը նույնպես հետագայում մտավ քաղաքի շրջագծի մեջ:

Առաջին հերթին ուշադրության արժանի են արևմենյան ժամանակաշրջանի ճարտարապետական այն հուշարձանները, որոնք կառուցվել են էրեբունի—Երևանում:

Էրեբունի—Երևանը շարունակում էր գոյություն ունենալ որպես ստրատեգիական, տնտեսական ու վարչական կարևոր նշանակություն ունեցող քաղաք: Նոր պայմաններին համապատասխան արևմենյանների օրոք այստեղ կատարվում են կառուցումներ և ուրարտական շրջանի կոթողների արժատական վերակառուցումներ, դրանք հարմարեցնելով ժամանակի պահանջներին՝ Միջնաբերդի վերակառուցման հետևանքով լիովին վերափոխվում է նրա հատակադիրքը, միջնաբերդի կենտրոնը հանդիսացող հրապարակն ամբողջապես ծածկվում է շինություններով, իսկ Խաչ գետից աստուծոն նվիրված տաճարը վերափոխվելով դառնում է ճարտարապետական նոր կոմպլեքսի բաղկացուցիչ մասը, փաստորեն զազարիցով իրեն տանար գոյություն ունենալուց՝ Այդ նոր վերակառուցման հետևանքով ուրարտական Susi կոչված տաճարը առանց էական փոփոխության մտնում է Ահրումազդային նվիրված տաճարի կոմպլեքսի մեջ¹:

Մասնագետները որոշակի կերպով իրարից տարբերում են ուրարտական և արևմենյան կառուցվածքները: Գրանք տարբերվում են ձևով, բացարձակ մեծություններով, արտաքին տեսքով և, բայց հատկանիշներով: Արևմենյան ժամանակաշրջանի ամենակարևոր նորություններից մեկը այստեղ համարվում է աղյուսե կամարը, որը մինչև այժմ հայտնի այդ տիպի ամենահին կամարն է բովանդակ Հալաստանում²: Հնագույն այդ ժամանակներում պարսիկները դեռևս չունեին ճարտարապետական մեծ պլանդություններ և լավ վարպետներ: Ուստի հավանական է համարվում, որ էրեբունի—Երևանի արևմենյան շրջանի ճարտարապետական կոթողները կառուցվել են տեղացի վարպետների կողմից, որոնք իսկական ժառանգորդն էին ուրարտական բարձրավելիտա ճարտարապետության³:

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 76—77.

² Նույն տեղը, էջ 77:

³ Նույն տեղը, էջ 76—77.

⁴ Նույն տեղը, էջ 78:

⁵ Նույն տեղը:

Էրեբունի—Երևանի միջնաբերդում արևմենյանների ժամանակաշրջանում կառուցված շինությունների մեջ ուշադրության արժանի են հատկապես երեքը՝ ապագանա կոչված սյունաղաղ դահլիճը (կամ հանդիսարահլիճ), որը նման էր աշխարհակալ պետության մյուս մեծ քաղաքներում կառուցված նույնատիպ դահլիճներին, կրակի մեծ տաճարը և կրակի փոքր տաճարը:

Էրեբունի—Երևանի աղաղանքը, ինչպես պարզվել է պեղումներից, ունեցել է 30 փայտե սյուներ, որոնցից 12-ը նախկին ուրարտական տաճարի պորտիկի սյուներն էին, իսկ 18-ը ավելացված էին արևմենյան ժամանակաշրջանում, ուրարտական տաճարը վերակառուցելու և սյունաղաղ դահլիճ դարձնելու ժամանակ: Ապագան ունի 29 մ լայնություն և 33 մ երկարություն: Այսպես, նաև կառուցված միջնաբերդի կենտրոնական տեղը, ճարտարապետական կոմպլեքսի հիմնական հանգույցը պարամոնոսային կառույցն էր՝ տաճարը, ապա արևմենյանների ժամանակ դրան փոխարինում է քաղաքացիական շինությունը՝ աղաղանքը, որը փաստորեն պալատական դահլիճ էր և ծառայում էր հանդիսավոր արարությունների ու ընդունելությունների համար: Աղաղանքին հարում էին այլ շինություններ ու սենյակներ, որոնց մի մասը նոր էր կառուցված, իսկ մյուսը՝ արդյունք էր նախկին ուրարտական դանդան շինությունների (մտաններ, պահեստներ և այլն) վերակառուցման: Հնագիտական պեղումների, լափաղանների և մասնաուսուցման, Հնագիտական պեղումների, լափաղանների և մասնաուսուցման, Հնագիտական պեղումների հիման վրա ճարտարապետ Կ. Լ. Հովհաննիսյանին հաջողվել է ընդհանուր դժերով վերականգնել աղաղանի հատակադիրքն ու արտաքին տեսքը, նրա պատերի բարձրությունը ևս ապավոր մտաավոր կերպով (6,5—7 մ). դրանց պահպանված հատվածներին ենթադրվում է, որ միջնաբերդի կենտրոնական մասը գրավող այդ աշխարհիկ կառույցն ունեցել է ներքին ճոխ ձևավորում և ժամանակին համապատասխան հարմարություններ, բայց հավանաբար առանց որմնակարների, որոնք այնքան բնորոշ էին ուրարտական նշանավոր կառուցվածքներին: Աղաղանում չեն հայտնաբերված նաև շրջիկ կահույքի հետքեր: Պատերը շարված էին հում աղյուսից, բաղալայա ցուլուի վրա, իսկ ներքի կողմը՝ իր մեջ

¹ К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 78—79:

² Նույն տեղը, էջ 79:

ընդգրկված ուրարտական տաճարի պատերի նման ներկված էր միապաղաղ կապույտ գույնով¹։

Կրակի մեծ տաճարը, որն ուներ 17×19 մ չափերը, ստեղծվել էր ուրարտական Susi տաճարի պեղածիլի պատերի վերակառուցման շնորհիվ։ Այն պահվում էր բազալի միջնաբերդի կենտրոնական մասում և իր գոյությունը հիմնովին վերափոխել էր ուրարտական միջնաբերդի այդ մասի արտաքին ճարտարապետական տեսքը²։ Կրակապաշտական այդպիսի տաճարները կրեան են ներև Պարեհ I-ի և նրա որդի Քսերքեսի որոշ ժամկետով կրոնական պայքարի ժամանակաշրջանում, երբ երկրում նախկին ցեղերի աստվածների փոխարեն բնորոշվեց միաստվածյան (Ահրամազդայի) միասնական կրոն, կապված միասնական պետության առկայության հետ։ Այդ նույն ժամանակներում է նաև ուրարտական Susi տաճարի վերափոխվել կրակի տաճարի³։ Այդ կարգի երևույթ, ինչպես Տրչա կերպով նկատում է Կ. Լ. Հովհաննիսյանը, տեղի է ունեցել նաև հին Հայաստանում՝ բրիտանոնեոֆունդը պաշտոնական կրոն դարձնելու ժամանակ, երբ հեթանոսական շատ տաճարներ վերածվեցին բրիտանոնեական եկեղեցիների⁴։

Էրեբունի—Երևանի կրակի փոքր տաճարի ավերակները բաց են արվել 1957—1958 թթ. պեղումների ընթացքում, [▲]É-GAL պալատի զլխավոր մուտքից 20 մ հեռավորության վրա։ Հետազոտում պարզվել է, որ այդ իր չափերով փոքր (12×8 մ), բայց գեղեցիկ տաճարը կառուցվել է ուրարտական ինչ-որ շենքի տեղում և բաղկացած է երեք սենյակից, որոնցում պահպանված է զոհաբերությունից մնացած 15 սմ շերտ կապժող մոխիրը։ Այստեղ պահպանում էին հավերժական կրակը, հին պարսիկների պաշտամունքի առարկան։ Տաճարի պատերը պահպանվել են մինչև 2 մ բարձրությամբ, որը թույլ է տալիս վերականգնել նրա տարածական ձևն ու չափերը։ Նրա պատերը ևս շարված էին հում աղյուսից՝ իջնաներում նշմարվում են նրա երբեմնի կամարների ստվերագծերը, որոնցից 5-ը՝ խնամքով կառարված պեղումների շնորհիվ հաջողվել է պահպանել փուղումից⁵։

Էրեբունի—Երևանի արքանիջյան ժամանակաշրջանի ճարտարապետությունը, ինչպես ենթադրում են, ամբողջապես կապված էր

¹ К. Л. Оганесян, Архитектура Эрбунна... էջ 80—90;

² Նույն տեղը, էջ 88, 90—91, 93;

³ Նույն տեղը, էջ 95—96;

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 96;

⁵ Նույն տեղը, էջ 97—89 և 101;

ուրարտական ճարտարապետության հետ, նրա ավանդույթների օգտագործման հետ¹։

Արքանիջյան ժամանակաշրջանի էրեբունի—Երևանի ճարտարապետության մասին խոսելիս մասնագետները սահմանափակվում են միայն նրա միջնաբերդի կառուցվածքով։ Այլ կերպ էլ լինել էր կարող։ Բուն բազալի այդ շրջանի կառույցները ոչնչով չէին տարբերվում ուրարտական ժամանակների տներից, որոնք ժառանգված էին տեղացիներից և դրանից հետո էլ դարեր շարունակ պահպանեցին իրենց ճարտարապետական ձևի առանձնահատկությունները։ Պահք հավանաբար նմանության ցծեր ունեին Քսենոֆոնի սենարազես աշխատության մեջ նկարագրված գյուղական խրճիթների հետ², բայց իրրև բաղաբային աներ անշուշտ ավելի գեղեցիկ էին ու քնակրության համար ավելի հարմարավետ։

Ճարտարապետական հուշարձաններից բացի, ետուրարտական դարերի էրեբունի—Երևանի պատմության ճամբար կարևոր նշանակություն ունեն նաև պեղումների և շինարարական աշխատանքների ընթացքում ու դեպիվածով հայտնաբերված դրամները և նյութական կուլտուրայի այլ մնացորդներ։ Հայտնաբերված են VI—IV դդ. (մ. թ. ա.) վերաբերող սկյութական նետասլաքներ, ձիու իրանական երկաթե սանձ, միլեթյան երկու արծաթե դրամ, կավե զավթի մի բեկոր³։ Իսկ դրանք ցույց են տալիս, որ էրեբունի—Երևանը արքանիջյան շրջանում ոչ միայն կանգնել էր, այլև երկրի կարևոր կենտրոններից էր։ Դրանից հետո նույնպես կյանքը չի զաղարկել էրեբունի—Երևանում։ 1940 թ. Կոնդի գերեզմանոցից գտնվել է Ակեքանդր Ա կեղեցունացու արծաթյա դրամներից մեկը, այսու տարբեր տեղերում գտնված են սելևկյան ժամանակաշրջանի վերաբերող արծաթյա երեք դրամներ, որոնցից առաջինը պատկանում է Անտիոք V-ին (II դ. առաջին կես մ. թ. ա.), երկրորդը՝ Անտիոք VII-ին (II դ. երկրորդ կես մ. թ. ա.), իսկ երրորդը, որը հայտնաբերվել է այժմյան Թումանյան փողոցից 1940 թվականին, գեղես-

¹ К. Л. Оганесян, Архитектура... էջ 101;

² Քսենոֆոն, Անարգես (2. Մանեղյան, Փնակալ սետոբյան հայ մտղվորդի պատմության, 5. Ա. Հավիված, էջ 390)։

³ И. М. Лосева, Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина (гос. музея изобраз. искусств. на холме Арин-берд. Советская археология, 1958, № 2, էջ 184, 186, 194, В. Իսրայելյան, Արևմտյան Susi տաճարը և նրա արձանագրությունները, ՀՍՍՐ ԳԱ ՀՆԵՂԵԿԱԳՐԵՆ (Տառ. դրամ.), 1957, Ծ, էջ 44, Նույնի՝ Արծաթե երկու դրամ Արևմտեղեցաթոփական Հայաստան, ամսագիր, 1957, № Ծ, էջ 16։

չի պարզված թե սեւեկյան որ թագավորին էր պատկանում: 1939 թ. Ա. Մ. Կիրովի անվան կառուցիկ կոմբինատի բակում հայտնաբերվել է 1 դարին (մ. թ. ա.) վերաբերող պարթևական մի արձանախումբ, իսկ 1930 թ. Երևանի շրջակայքից գտնվել է Օգոստոս կայսեր (27 թ. մ. թ. ա.—14 թ. մ. թ.) արձանախումբ: Երևանաբերական շախատանքների ժամանակ հայտնաբերվել են մ. թ. ա. վերջին և մ. թ. առաջին դարերի վերաբերող հնագիտական պահպան նյութեր՝ կարասային թաղանթներ, սրվակներ, խեցեղեն, փորք շափի կարաս: Իսկ քաղաքի տարրեր մասերում հռոմեական ուչ և սասանյան շրջանին (IV—V դդ. մ. թ.) վերաբերող դրամները հասուն են տասնյակների (50 հատ), որոնք թվում են Քենոզորու I-ին (379—395 թթ.), Վալենտիանոս III-ին (425—455 թթ.) և այլոց պատկանող արձանախումբը¹:

Ինչպես տեսնում ենք, կիև VIII դ. (մ. թ. ա.) հետո գրավոր աղբյուրները լռում են Երևանի—Երևանի մասին որևէ հիշատակություն անել, ապա հայտնաբերված հնագիտական նյութերն ու զենուկ վառ ուսումնասիրված դրամները լրացնում են այդ բացը: Գրանք ցույց են տալիս, որ էրբունի—Երևանը ուրարտական պետության անկումից հետո շարունակել է գոյություն ունենալ և աչքի բնկնող դեր խաղել երկն ոչ համահայաստանյան, ապա զոնն տեղական մասշտաբով Ուրարտուի անկումից հետո էրբունիին կանգուն մնալու հնագիտական նյութերի վրա հենված այդ տեսակետը, որ առաջին անգամ առաջ է բաշխել Բ. Բ. Պիրոտովսկին, պաշտպանվել և նորանոր նյութերով ու պարզարձանումներով լրացվել: Գրեթե անառարկելի է դարձել մի շարք մասնագետների կողմից²: Նույն կարգի, բայց հետագա դարերին վերաբերող նյութերը թույլ տվեցին մի քանի ուսումնասիրողների միանգամայն ճիշտ կերպով կոահե-

լու, որ քաղաքի կյանքը չի ընդհատվել նաև հայ ժողովրդի պատմության անտիկ շրջանում և հետագա դարերում:

Մենք տեսնք, որ ժամանակակից Երևանի իր անունը ստացել է էրբունիից: Սակայն, նույնիսկ ենթադրության կարգով հայաստանից զենուկ չի պատասխանել այն հարցին, թե՞ հատկապես պիտոբյունը զենուկ չի պատասխանել այն հարցին, ե՞րբ է նրա բնակեցումը պահպանվել հայացել, և ե՞րբ է նրա բնակեցումը պահպանվել հայացել, և ե՞րբ է նրա բնակեցումը պահպանվել հայացել: Այս հարցի հետ անմիջապես անընթաց իր հողվածում, Ն. Վ. Հարությունյանը գրում է. «Կայանք էրբունի—Երևանյան անտիկ ժամանակաշրջանում և այդ՝ այդ քաղաքը արդեն հիշյալ ժամանակաշրջանում, դուրս նրանից էլ շատ ավելի վաղ, սկսած է կղել իր տարածման պրոցեսը ուրարտական էրբունիից՝ Երևանի հարավ-արևելյան ծայրամասից դեպի վերջինիս կենտրոնական տեղիտորրիան»: Իր հայտնաբերած հնագիտական նյութերի և մասնագիտական անուղղակի հիշատակությունների ուսումնասիրության հիման վրա զենուկ գրանից առաջ Մ. Իսրայելյանը հանգել է այն եզրակացության, որ Երևանը էրբունիից ժառանգել էր «ոչ միայն» անունը, այլև բնակիչներն ու մշակույթը³:

Ամենայն հավանականությամբ էրբունիին սկսել են Երևան կոչել V—IV (մ. թ. ա.), երբ հայկական ցեղերի հիման վրա արդեն վաղուց կազմավորված էր հայ ժողովուրդը և երբ նա ստեղծել էր պարսկական պետության իր պետականությունը: Կարծում ենք, որ ուրարտական պետության անկման շրջանում արդեն էրբունիի բնակիչները զանգվածորեն կազմում էին հայերը և հայացող ուրարտացի ալարդները, որոնց մեծ մասը ըստ երևույթին, Քիչքերիների էր տեղափոխվել նրա կործանումից առաջ: Չպետք է կարծել, թե Քիչքերիների բնակչությունը նրա գրավման ժամանակ իսպառ ոչնչացավ: Հավանաբար դրանք նրա գրավման ժամանակ իսպառ ոչնչացվել են ուրարտական ոտոզման առումի զգալի մասը: Բերդը ավերակույց և ուրարտական ոտոզման Երևանի ներք խափանելուց հետո, տեղափոխվեց դեպի այժմյան Երևանի կենտրոնական մասերը, որոնք ոտոզվում են Գետալի ջրերով: Կալիբրի է ենթադրել նաև, որ էրբունիի բնակիչները «զաղթը» դեպի նույն տեղիտորրիան նույնպես կատարվել է մասամբ նշված պատմաբանության ընդամենը առումները ինչպես հայտնի է կառուցում էր պետ-

¹ Տե՛ս Երևանի պետական պատմական թանգարան, Հին դրամների պուլստատայան, գրքեր Մ Ֆ 1937, 7290, 7575, 7683, Հմմտ. 2. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր միանկում, Երևանի պետականալարանի գրադարան, 1941, էջ 12—13:

² Տե՛ս Ն. Վ. Հարությունյան, Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանգես», 1959, Մ 2—3, էջ 93:

³ Ե. Ա. Пахомов, Монетные клады Азербайджана, «Труды общества обследованиа и изучения Азербайджана», вып. 3, Баку, 1926, էջ 42:

⁴ Տե՛ս ՀԱՍԹ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1957, Մ 9, էջ 44, 1955, Մ 5, էջ 53—71, «Պատմա-բանասիրական հանգես», 1959, Մ 2—3, էջ 91—92, Կ. Ա. Օգանյան, Архитектура Эрбуну ..., էջ 12—13, «Աշխիհների ձայն» (լրագիր), Երևան, 1966, Մ 5, 30-ր հունվարի և այլն:

¹ ՀԱՍԹ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1959, Մ 2—3, էջ 93:
² ՀԱՍԹ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1957, Մ 9, էջ 94, «Աշխիհների ձայն» (լրագիր), 1966, Մ 5, 30 հունվարի:

տությունը (մեծ մասամբ ստրկական աշխատանքով) և ինքն էլ հրեական դրանց սարքին վիճակում պահպանելու վրա: Ուստի ուրարտական պետության վերացումից հետո էրեբունիի շրամատակարարման սխեմերը ևս ժամանակի բնթացքում պետք է շուրջ զարշաքից կամ, համեմատյալ զեղս, զգալի մասով խափանվեր: Հազարների հասնող նրա երկրագործ ու այգեգործ բնակչությունը բնականայաբար պետք է իր համար տարրուստի միջոցներ հայթայթեր հարեական տարածություններում՝ Գեատրի շրջրով սնվող ճողամասերում, որտեղ և վերջնականապես նրանք վերաբնակվեցին: Այսպիսով պետք է ենթադրել, որ ժամանակակից Երևանի տեղը բնակեցվեց ու միայն էրեբունիի բնակիչների (որոնք անշուշտ շատ ավելի բազմամարդ էին), այլ նաև Քեյշերաբնիի բնակիչների կողմից: Համեմատյալ է, որ մինչ այդ Գեատրի մերձակայքը պատկանում էր պետությանը, այստեղ տարածվում էին պետական այգիներն ու բանջարատնոցները և կարող էին անհասանելի կողմից բնակեցվել միայն այդ պետության վերացումից հետո:

Ուրարտական պետության անկումից հետո, բացի էրեբունի—Երևանի սուկ դոլությունից, ուրարտագետներին ու հայագետներին որոշ շահով հետաքրքրել է նաև այն հարցը, թե ինչպիսի վարչական վիճակ ուներ Երևանը ուրարտական պետության անկումից հետո Ուրարտու—Արմենիայում իրենց տիրապետությունը հաստատած արմենյանների շրջանում, ինչ կարգի բազաբ էր նա հնագույն այդ ժամանակներում: Պատմությունից հայտնի է, որ զրևթեբուր ժամանակներում կարևոր նշանակություն են ունեցել զեբազեբապետն այն քաղաքներ, որոնք եղել են պետությունների մայրաքաղաքներ, իշխաններուստեր կամ վարչա-տերիտորիալ մեծ միավորների կենտրոններ: Քաղաքների նշանակության համար գոյություն ունեն նաև ուրիշ՝ տնտեսական, ազգական և այլ կարգի ազդակներ, բայց վարչական մասում է որպես առաջնակարգ ու մըշտական գործող ազդակներից մեկը: Այդ տեսակետից էլ հույժ կարևոր է իմանալ, թե էրեբունիի միջնաբերդը լքվելուց հետո էրեբունի—Երևանը կամ Երևանը հետագայում, արմենյան շրջանում վարչական ինչպիսի նշանակություն ուներ:

Ն. Հարությունյանը հակված է կարծելու, որ ուրարտական պետության անկումից հետո իր գոյությունը պահպանած էրեբունի—Երևանը զարբեր շարունակ օժի կարգանում ուշքի գալ և շարունակում է մնալ նույն աննշան բնակատեղիներից ու ավաններից մեկը՝ ընդհուպ մինչև մեր թվականության VII դարի սկիզբը, երբ արդեն հայ մասնագետության մեջ անուղղակի ձեռով, այս անգամ էրե-

բունի—Երևանից ոչ հեռու ժամանակակից «Երևան» հորերը մամբ, հիշատակվում է Արրահամ կաթողիկոսի գումարած եկեղեցական ծագովի վերաբերող փաստաթղթում¹: Կ. Է. Հովհաննիսյանը նույնպես, նախած իր ձեռքի սակ եղած հուշող նյութերի, փաստում է Երևանի, նախած իր ձեռքի սակ եղած հուշող նյութերի, փաստում է Երևանի կենտրոն լինելու մասին Գ. Տիրացյանի արտահայտած հավանական կարծիքը: Սակայն վերջինս արժանի է ուշադրության թելելու հենց այն պատճառով, որ երևում է պատմության արամաբանությունից և իր հիմքում ունի այն նույն նյութերը, որոնք օգտագործված են նաև Կ. Հովհաննիսյանի կողմից²: Նրա այդ ենթադրությունը պաշտպանություն է գտել ուրարտագետ Մ. Իսրայելյանի կողմից, որը գրում է. «Քերես ճիշտ է այն ենթադրությունը, որ էրեբունիի կարևոր կենտրոն է եղել նաև Արմենյան Հայաստանի ժամանակ՝ հայկական երկու սատրապություններից մեկի համար»³:

Գարեհի I-ի ժամանակներում Արմենյան Պարսկաստանը բաժանված էր 20 խոշոր վարչա-տերիտորիալ միավորների՝ սատրապությունների: Հերոդոտի հիշատակած այդ սատրապություններից 13 և 18-րդ կազմված էին Հայկական լեռնաշխարհի տերիտորիաներից: Գրանցից առաջինը իր մեջ ընդգրկում էր արմենների երկիրն ու նրա Սուսիսային հարևանների երկրները մինչև Աև ծով, իսկ երկրորդը՝ 18-րդ տարածվում էր երկրի արևելյան մասում՝ իր մեջ ներառելով մատինների (Վանա և Ուրմիա լճերի միջև), սյարդո-ուրարտացիների (Վանա լճի ավազանում և Արարսի միջև) հասանելի շրջանում և սասպլյանների (Ճորոխ գետի վերին հոսանքում) երկրները, որոնց բնակչությունը Մ Գ. (մ. թ. ա.) վերջերին աղցին 13-րդ սատրապության բնակչության հետ միասին հիշատակվում է արմենների-հայեր անունով, իսկ նրանց երկիրն էլ, որն ընդգրկում էր նախկին 13 և 18-րդ սատրապությունները մի մասնական անունով կոչվեց Արմենիա-Հայաստան:

Գ. Տիրացյանը ենկելով այն բանից, որ Արմենյան շրջանում էրեբունի—Երևանում կառուցվել էր Սուզայի և Պերսպոլիսի արքայական սյունազարդ դահլիճների նման հանդիսասրահ, ենթադրում է, որ նա իր ժամանակին եղել է արմենյան 18-րդ սատրա-

¹ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 82:

² Տե՛ս Գ. Տիրացյան, Երվանուրիները Հայաստանում, ՀՊՊՊ ԳՊ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 6, էջ 62—63:

³ «Հայրենիքի ձայն» (լրագիր), 1966, № 5, 30 հունվարի:

⁴ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 340, 343:

պոլիթան կենտրոնի՝ Առանց նրա առաջընթաց փաստերը ժխտելու և, ավելին, ամենայն մանրամասնութեամբ արձանկան շրջանի էրիտանի—երևանի նարտարապետական հուշարձանները (այդ թվում և սյունազարդ հանդիսարարճը) նկարագրելով և դրանց ու Սուզանի և Պերտպոլիսի վարչական կառույցները իրար նմանեցնելով հանդերձ¹, Կ. Լ. Հովհաննիսյանը վճռական կերպով ժխտում է Գ. Տիրացյանի այդ ենթադրությունը²։

Թվում է, թե Գ. Տիրացյանի ենթադրությունը հավանական է և հետագայում ավելի կհիմնավորվի նոր փաստերի հայտնաբերումով։ Առայժմ կարելի է տեսլ, որ պարսկական սատրապություններից յուրաքանչյուր մի ընդարձակ երկիր էր որոշ ներքին ինքնավարությամբ։ Դրանց կենտրոնները առանց բացառության, քաղաքներ էին, այն էլ ոչ աննշան քաղաքներ։ Արձանկանները Հայաստանի այն մասում, որտեղ տարածվում էր 18-րդ սատրապությունը, առայժմ մեզ ինչքանով հայտնի է, որևէ այլ քաղաքում չեն կառուցել մայնիսի հանդիսարարճ, ինչպիսին էրերունի—երևանի սյունազարդ դահլիճն էր։ Նրանք 18-րդ սատրապության համար իբրև վարչական կենտրոն պետք է օգտագործեին երկու կանգուն մնացած քաղաքներից որևէ մեկը՝ կամ Արդիշտիխիլի—Արմավիրը և կամ էրերունի—երևանը։ Պատմության տրամաբանությունը և հնագիտական նյութերն ու անուղղակի ավյալները կարծում ենք ստայժմ հօդուտ էրերունի—երևանի են խոսում։

Բայց որ այն հայացքները, որոնք այս կամ այն առիթով անդրադարձել են երևանի մասին առաջին գրավոր հիշատակությանը, դասում են, որ VII դ. (մ. թ.) առաջ երևանը չի հիշատակված որևէ գրավոր աղբյուրի մեջ։ Նրանք Դավիթի, Մովսես Խորենացու և նրանց մյուս դասկերներին (V դ.) հետ կապված մի հին հիշատակարան-ավանդությունում ասված «Իսկ Դավիթ և Մամբրե, և Պօղոս և Աբրահամ, ընկերք Մովսեսին կացցին յերևանի»³ արտահայտության մեջ վերջին բառի վրա կամ ամենևին ուշադրություն չեն դարձրել, կամ էլ ընդունել են «հայտնի մնալ», «անձածուկ մնալ» իմաստով։ Սակայն ամբողջ հիշատակարան-ավանդության տեքստի մանրազ-

¹ Տե՛ս 200թ 94 «Տեղեկագիր» (հաս. դիմ.), 1955, № 6, էջ 62—63.
² К. Л. Оганесян, Архитектура Эребуни..., էջ 9, 12—13, 70—77.
³ Նույն տեղը, էջ 75.
⁴ Տե՛ս «Նեոց պատմություն վան Դավիթի և Մովսեսի նորենացյալ թույթ Գրեճեոսի օրինակ ինչստակարանաց դամբարան Ս. Սուրբասանց ձևագիր մատենոց Քիչէ Պօլէ», հրատարակեաց Գարեգին վարդ. Արուսեմեանց, 4, Պոլիս, 1874, էջ 80—81.

նիս վերլուծումը՝ անուղղակի փաստերի համադրության հետ միասին մեզ բերում է այն համոզման, որ խոսքը վերաբերում է երևանին, որ հիշատակարանի մեջ պարզապես ասված է, թե Մովսեսի (Խորենացու) ընկերները մնացել են երևանում։

Հիշատակարանում խոսվում է այն մասին, որ Սահակի և Մեսրոպի աշակերտներ Մովսես Խորենացին և Դավիթը (Անշաղթ) տեսնելով Հաղիբյոսի կողմից Հայոց աշխարհի ավերումը և իրենց ուսուցիչներին մահը մեծ սուղ են անում, փորձելով իրենց միոթարությունը գտնել մեկուսացման մեջ¹։ «Երբեք զայս ամենաչ կատարած տեսեալ Մովսէս և Դավիթ,—այնուհետև ասված է հիշատակարանում,— ոչ կամեալով յայտնի դիմբեանս աշխարհին Հայոց, այլ զաղտ 'ի ծածուկ կամելով կենսու Ձի էին ավենականքն ծեղացեալ և էր աշխարհն Հայոց տանբաւ։ Իսկ Դավիթ յայտնի կացեալ յաշխարհին Հայոց, և Մովսէս ծածկէր զինքն կարկատուն զգնատով և դժուժ կերպարանօք զնացեալ 'ի զեղ մի 'ի Քաղաքադաշտին և կացցեալ անդ որպէս մուրացիկ և ոչ որ էր որ ճանաչէր զնա. իսկ Դավիթ և Մամբրե, և Պօղոս և Աբրահամ, ընկերք Մովսէսին կացցին յերևանի։ Եւ էր 'ի ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տ. Գիստ աշակերտակից Մովսէսի»²։ Ապա ասվում է այն մասին, որ Գլուստ կաթողիկոսն իր ավտոր Գլխնուհ Նաստատորոց հետ, կատարած շրջադարձությունների ընթացքում հանդիպում է ծայտյալ Մովսեսին և նրան իր հետ բերում է Գլխն ու ձեռնադրում արքեպիսկոպոս։ Հիշատակարանի համաձայն այդտեղ են գալիս նաև Դավիթն ու իր ընկերները³։ Սակայն մեզ հետաքրքրում է միայն հիշատակարանի բնագիտական հատվածը հատկապես Այստեղ մտքի ընթացքին հետևելով դժվար չէ ներկայացնել, որ «կացցին յերևանի» արտահայտությունը մեր կարծիքով նշանակում է ոչ թե «մնացին հայտնի», «մնացին առանց ծածկվելու», ինչպես որոշ վստահորոց կարելի է ասել ուրիշ դեպքերում, այլ՝ «մնացին երևանում» իմաստով։ Այդ նախ և առաջ երևում է նրանից, որ հիշատակարանի մեջ մինչ այդ արդեն ասված է «Իսկ Դավիթ յայտնի կացեալ յաշխարհին Հայոց» էլ հարկ չունին նորից այլ ձևով («կացցին յերևանի») կրկնելու նույն միտքը, երկրորդ՝ Մովսես Խորենացուն վերաբերող տվյալ հատվածում նրա ծպտված լինելը նշելու հետ միասին ասվում է, որ նա մնում էր Քաղաքադաշտի (Վաղարշապատի) մոտ մի գյուղում՝ «Գնացեալ 'ի

¹ «Նեոց և նորոց պատմութիւն վան Դավիթի և Մովսէսի նորենացյալ», էջ 79—80.
² Նույն տեղը, էջ 80—81.
³ Նույն տեղը, էջ 81—85.

զնդ մի Քաղաքադաշտին և կացեալ անդ ...»: Իսկ ինչու շարժու է հարցոյ հաստատում ապիր նաև Գալթի ու նրա մյուս բնիկներին ապրելու տեղը, մասնավանդ, որ նրանք, ինչպես երևում է նույն հիշատակարանի մի այլ հաստատոյց (սեկն (Գլխի եկան—Ք. 2.) և Գալթի և բնիկեր իր, և ուրտի լինէին առաւել քան դատուել. և խնդրէին ՚ի Մովսիսէ գրով առ նոցա պատմութիւն Հայոց»¹), նույնպես կաթողիկոսանիստ Գլխիում չէին գտնուում և, ըստ հիշատակարանի, այստեղ եկան Գլուտ կաթողիկոսի կողմից Մովսես Խորենացու Գլխի բերելուց հետո²: Այսպիսով, երևիով զեպրեբի նկարագրման ընթացքից և հիշատակարանի բեզհետուր բովանդակութունից կարծում ենք, որ նրանում նշված «կացին յերևանի» արտահայտութիւնը պետք է հասկանալ ոչ թէ «մնացին հայտնի», այլ «մնացին Նրևանում» իմաստով: Հետևապես Երևանը առաջին անգամ միայն VII դ. հիշատակվելու մասին մինչև այժմ եղած տեսակետը վերջնական համարելը տարակուսելի է: Այն դրանից հավանաբար ավելի վաղ է հիշատակվել: Մենք որևէ հիմք չունենք կասկածի տակ ասնելու այդ հիշատակարանի արժանահատութեան հարցը: Հիշատակարանի լեզվից երևում է, որ այն հին ծագում ունի: Քացի դրանից, հիշատակարանն իր բովանդակութեամբ ունի պատմական ամուր հիմք՝ դրանում հիշատակված անձնավորութիւնները իրական են և դրանց կյանքի հետ կապված այդ վկայութիւններ, մեր կարծիքով, միանգամայն արժանահատու է:

Վերջ նշված հոտմեական ուշ շրջանի և ստանյանների տիրապետութեան ժամանակների մեծամիջ գրամների հայտնաբերումը Երևանի շրջակայքում և պատմահոր կյանքի հետ կապված հիշատակարանում նրա հիշատակումը (անկախ հիշատակարանի երևան դալու ժամանակից) ցույց են տալիս, որ Երևանը V—VI դդ. հայտնի բնակավայր էր, թերևս ունենալով նաև իր բերդը՝ միջնադարյան քաղաքների զոյութեան զրկման պարտադիր պայմանը: Եթէ Աթենքում կրթված Գալթի Անհաղթն ու նրա մյուս բնիկները իրենց բնակութեան վայր են ընտրել Երևանը, ինչպես ենթադրեցինք, ապա նա, իրօք որ, պետք է հայտնի բնակավայր եղած լինէր, ի հակադրութեան ժպտված ու աննկատ մնալու համար Մովսես Խորենացու ընտրած գյուղի:

Այնուհետև, այս գլխի շարադրանքից զժվար չէ եզրակացնել, որ հնացած ու անբնդունելի է այն տեսակետը, թէ Երևանի պատմութեան ավելի քան 1300 տարին (VI դ. մ. թ. ա.—VII դ. մ. թ.)

¹ «Հեռց և Նորոց պատմութիւն վասն Գաթի և Մովսիսի Խորենացոյ», էջ 84—85.

² Նույն տեղը, էջ 81—85.

մեկ համար մնում է միանգամայն անձանթ: Հայտնաբերված հնագիտական նյութերը, դրամները, ինչպես և անուղղակի փաստերը զալիս են ասելու, որ Երևանը այդ հաղաբաժնիկում ևս կանգուն էր և նշանավոր բնակավայր էր, թերևս՝ գյուղաքաղաք, որը արաբական տիրապետութեան շրջանում Հայաստանի մյուս շատ քաղաքների նման բավական հետադիմում է, բայց IX—X դարերից նորից լինում է իր զարգացման ուղին:

ԵՐԵՎԱՆԸ VII — XV ԳԱՐԵՐՈՒՄ

I. ԵՐԵՎԱՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՊՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (VII—IX ԳԻ.)

Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը: Երևանի հիշատակումը VII դ. սկզբին գումարված Գլխինի եկեղեցական ժողովի աղբյուրայմը: Երևանի հիշատակումը կազմված VII դ. 40—50-ական րվակներէի առարական աշակերտներէի հետ: Երևանը որպէս բնոց: Երևանի հիշատակումը Ասանի Ասախեղց եկեղեցու (874 ր.) և Մախնեիսի վանքի (901 ր.) արձանագրութուններում: Երևանը որպէս գյաւախաղախ (կամ «խաղախաղա»): Երա բնակչոյրան գրադումներէր: Երևանը որպէս նանապարհային կայան Գլխին—Պարաավ ուղու վրա: Պաղտս—Պետրոս տանարը և երա հին արմնակարները

VII դարի առաջին քառորդում պատմական ասպարեղ իշած արարական խալիֆայութիւնը շուտով դառնում է աշխարհի խոշորագույն պետութիւններէր մեկը: Երկու դարի 40-ական թվականներէր սկսած նա դեպի Հայաստան կատարած մի շարք ավարատական արշավանքներէր հետո դարավերջին իր ծանր տիրապետութիւնն է հաստատում մեր երկրում: Մտա երկուհարյուրամյակ տեւած արարական տիրապետութիւնն շրջանում Հայաստանը տրուտեսպիս բավականին հետադիմում է, չնչին բացառութեամբ անկում են ապրում երա քաղաքները, մշակութային կյանքը, երկրում ավելի է խորանում բնատնտեսութիւնը: Խալիֆայութիւնն անմիջական նախածնութեամբ և հովանավորութեամբ VIII դ. կեսերէր Հայաստանի դաշտային որոշ գաղառներում (հատկապէս Վանա լճի շրջակայքում) հաստատում են քրոջորական ու կիսաքրոջորական ցեղեր (կայսիկներ, ումիանիկներ և այլք), որոնք իրենց քրոջորական անանապատութեամբ մեծ հարված էին հասցնում երկրապործութիւնն ու մյուս նստակայաց դրադմուներէրին: Խալիֆայութիւնն

կողմուտիչ հարկային քաղաքականութիւնը և պարբերարար կրկընվող սաղմական արշավանքները տեղիք էին տալիս ժողովրդական սպատագրական հուժկու պատերազմների, որոնք արարական աշխարհակալութիւնն քնդհանուր թուլացման և մասնատման շուրհիվ IX դ. երկրորդ կեսում պտակվեցին հաղթանակով: Հայաստանը կրկին նվանց վաղուց կորցրած իր քաղաքական անկախութիւնը: VIII—IX դարերը մեր մայրաքաղաքի պատմութիւնն մեք առաջին հերթին հայտնի է նրանով, որ այդ ժամանակվանից սկսած նրա մասին գրավոր տեղեկութիւններն ու հիշատակութիւնները արդեն դառնում են անընդհատ, հնարավորութիւնն տալով այս կամ այն լատիվ ամբողջական ձեով ներկայացնելու նրա պատմութիւնը:

Հայագիտութիւնը վաղուց արդեն նկատել է, որ Երևանի առաջին ստույգ հիշատակութիւնը մեր մատենագրութիւնն մեք կուտարվել է VII դ. սկզբին՝ Աբրահամ կաթողիկոսի դուժարած եկեղեցական ժողովի անշխարհամբ, որի մասին «Երբ թղթոց»-ում հատուկ կենդանոր տակ ապված է. «Եւթն ու տասներորդ ամի Աղիկուլ կուտարվու արքայից արքայի, իմ Աբրահամու Հայոց կաթողիկոսի և արխակաց իմոց, Մանասի Բասենի Ալիսկուպոսի, Քրիստոսափորի Սինեայ կախկուպոսի, Յովանիս Այստունեաց կախկուպոսի, Ահաբոնի Անճեացեաց կախկուպոսի, Սիվանի Գողթան կախկուպոսի, Ահարոնի Մեհունեաց կախկուպոսի, Ներսէսի Բոճուկուպոսի, Ահարոնի Մեհունեաց կախկուպոսի, Քաղառի Բոճուկուպոսի, Յոհանայ՝ էղոյ կախկուպոսի, Քաղառի Բոճուկուպոսի, Ահարոնի Անճեացեաց կախկուպոսի, Սիվանի Գողթան կախկուպոսի, Մանասի Բասենի Ալիսկուպոսի, Քրիստոսափոր Ապահունեաց կախկուպոսի, Ներսէս Վանանդայ կախկուպոսի, հանդերձ վանից երէցամբրոյ սորոքի, Աբրահամ սորոյ կաթողիկէի վանից երէց, Մամուկէ սորոյ Աշխիսմեի, Բարիլուս սորոյ Յովհաննու վանաց երէց, Խոսրով Աշխկանու, Յախտեան Աղիվարայ, Դուլիք Երևանայ, Իսմայլ Գառուչ, Յունանէս Աւանի, Իարայլ Պողալիցից, Զոչիկ Երևանից,

1 Ք. Ե. Հակոբյան, Որվարձեր Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, Երևան, 1960, էջ 258—267:
2 Վ. Աղիլան, Այտրատ, էջ 299, Մետսլը արկախկուպոս Սմբատեանց, Տեղագրի Գեղարքոնի ժողագրոց դատար, էջ 5, Կիլիկիան, Պատկերապոց բնույթարիկ բարտար, Տ. I, էջ 658, Երվանց Տանապի. Էն Երևանը, էջ 68—69 և այլք:

Յոճանիկ Արտաւազդայ Ապարանից, Աբաս և Որդեակ և Աբրահամ Փարպիս, Միքայէ Աղջից, Գրիգորիս Արսոյ, Կողմաս Ուրզայ, Մալէն միւս Արճոյ, Յոճանիկ Աբրահամայ, Միմոն Գաս աւանից, Սամուր Բագարանի, և այլ վանից երիցամբ հանդերձ: Եկեալ յանդիման մեր զբարեպաշտութիւն խոստովանեցին, նդովելով նոյնաձև ըստ երանկի հացն մերոց դամենայն հերձուածողս, և զԱրիոս, և զՄակեդոն, և զԳնեստոր, և զԵստիքոս, և զԷր ժողովին Քաղկեդոնի, և զպիղծ տումարն Ատնի, և ազալանս մատուցանելով առացի մեր, խառնել զինքեանս ի միարանութիւն եկեղեցոյ ճշմարտ հաւատին Քրիստոսի¹:

Ինչպես տեսնում ենք, Աբրահամ կաթողիկոսն այդ ժողովը հրավիրել էր ազանգներին, առաջին հերթին բաղկեցրածականութեան զեմ պայքարելու նպատակով: Դրան մասնակցում էին եպիսկոպոսներ, տարբեր աստիճանի իշխանավորներ, երեցներ և այլ կարգի մարդիկ: Ժողովը գումարով է պարսից խորով II-ի (Պերկով, 590—628 թթ.) թագավորի 17-րդ տարում, այսինքն՝ 606 կամ 607 թվականին²: Այդ ընդարձակ հիշատակութեանը կարևոր տղբուր է նաև Հայաստանի VII դարի վարչա-տնօրինող բաժանման, վանքերի ու եկեղեցիների և այլին համար, որոնք ավելա զեպրում մնալին հետաքրքրում: Մեզ համար ամենից կարևորը Երևանի հիշատակման փաստն է ու նրա որպիսութեանը անուղղակիորեն բնորոշող կողմնակի ակնարկները: Գրանում ճիշտ է Երևանի (ինչպես և հիշատակվում մյուս շատ վայրերի) բնութիւնը, մեծութեան մասին ուլինչ չի ասված, բայց անտարակուսելի է, որ նրա հողորակման ներկայացուցչի ներկայութեանը ժողովին արդեն բնորոշում է նրա կարևոր և մեծ քնակավայր լինելը: Հենց միայն սույն հիշատակութեանից կենելով Ղ. Ալիշանը VII դ. սկզբի Երևանը համարում է սիրբու երևելի աւան մի, զի ընդ պատուաբոր վաներիցուան կարգի և սորայա Դալիք անունն³: Հեռակելով Ղ. Ալիշանին, էփրիկյանը, Եր.

Շահազիզը և մի շարք այլ հայազեաններ նույնպես այդ ժամանակվա Երևանը համարել են մի «երևելի աւան»⁴: Ղ. Ալիշանի և նրա հետևորդների այդ տեսակետի հետ կարելի է միանալ առանց տարակուսանքի: Այդ տեսակետի արժանահավատութեանը մեր կարծիքով երևում է նաև նրանից, որ բացի վանքերից, գումրոներից ու վարչա-տնօրինողայ այլ միավորներից, նշված եկեղեցական ժողովին ներկայացուցիչներ էին ուղարկված բացառապես միայն այս կամ այն շաքով նշանավոր քնակավայրերից՝ ավաններից, զրուղաբաղաբներից և բաղաբներից (Յոչական, Եղվարդ, Գառնի, Ավան, Արտավազի ապարանք, Փարպի, Աղջը, Արճած, Գաս ավան, Բագարան և այլն):

Ինչ վերաբերում է նույն «Գիրք Քղթոց»-ի մեջ հիշատակված «Ջոջիկ Երևանից» արտահայտութեանը, այսու Ուխտանես կաթողիկոսի հիշատակութեան համաձայն՝ պետք է հասկանալ «Ջոջիկ Աբամունից» (այժմ՝ Աբամուս գյուղ ՀՍՍՀ Արտվյանի շրջանում) ձևով, և Երևանին չի վերաբերում, ինչպես ժամանակին նկատել է քանասեր Ստեփան Կանայանցը⁵: Այնպես որ, ժողովին Երևանից մասնակցում էր միայն մի վանքից՝ Գալիթից:

Հաջորդ հիշատակութեանը, որը քանասերների ու պատմաբանների մոտ՝ սկսած Հովհ. Շահխաթունյանից և վերջացած մեր դարի որոշ հեղինակներով, առաջացրել է տարակարծիքութեան, դա Սերետի հաղորդումն է արարական արշավանքների և այդ արշավանքների ընթացքում Երևանի մոտ տեղի ունեցած կովի մասին: Մինչև այս հարցի քննարկումը վկայագրչներ Սերետի համապատասխան հիշատակութեանը:

«Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զարն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս Առաջ մի յԱրարատ, և առաջ մի ի Սեպհական զեղին կողմանս, և առաջ մի յԱղուանիս: Արք՝ որր ի կողմանս Սեպհական գնդին՝ արշտեալ սիտեցան և հարկալ զամենազն կողմանս զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յԵրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յԱրպայու, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անդի և քանակեցան յԱրճածիս, հանգեալ բերդին առ չրովն:

¹ «Գիրք Քղթոց» մասնագրութիւն ետիմաց, Թիֆլիս, 1901, էջ 150—151, Հմմտ. Ուխտանես կաթողիկոս, Հատուած երկրորդ, Պատմութեան բաժանման Արքայ ի Հայոց, էջ 63—64:

² Հ. Աճառյանը հիմք բերուելով Ուխտանես կաթողիկոսի հիշատակութեանը ժողովի գումարան տարին համարում է 607 թվականը (տե՛ս «Հայոց անձանունների բառարան», Տ. Բ. Երևան, 1944, էջ 26), իսկ Մեսրոպ Մարտայանցը այն զեմ է 596 թվականի տակ (Տիգրանի Գնարարունի ծովագացր զաստի... էջ 5), որը հերչւ լն է Մելիքսեթ-Քեղի գրում է, որ այդ ժողովը տեղի է ունեցել մինչև 602 թվականը, առանց ճիշտ թվականը նշելու (տե՛ս ՍՍՄՄ ԳԱ Հայկական Ֆիզիայի-Տեղեկագրք, Երևան, 1940, № 4—5, էջ 118):

³ Ղ. Ալիշան, Արարատ, էջ 299:

⁴ Էփրիկեան, Քաջաբարձիկ... բառարան, Տ. Ի, էջ 655, երկանց Եմակով-Էիկ երեսեր, էջ 65—69:

⁵ Ուխտանես կաթողիկոս, Հատուած երկրորդ, Պատմութեան բաժանման Արքայ ի Հայոց, Վարչապատ, 1873, էջ 64:

⁶ Ստեփան Սունյանց, Անճայտ գաւառներ հին Հայաստանի, Վագորբաղատ, 1914, էջ 86, ժամեթ. 4:

քի ուղղութիւնը՝ մերժում է Ք. Ավգարիկիյանի՝ Սերետի հիշատակած «չլերեան»-ը «Անեստաւան»-ը համարելու կարծիքը¹, բայց ինքն էլ այն ընդունում է ոչ թէ իր ուղիղ ձևով, այլ համարում է «Հեր»-ի (երա մոտ՝ «Հերաւան») աղճատումը. «Նրեանք» պարզ մի աղճատումն է, անշուշտ, վերահիշյալ հատմանում (Սերետի պատմութեան), սակայն ոչ թէ «Անեստաւան» կամ «Նրաստաւան», այլ «Հերաւան» տեղանվանն²,— եղբակցացնում է նա:

Մեր կարծիքով անընդունելի է նաև Հ. Մանանդյանի տեսակետը, որը նույնպես շուրի պատմական ամուր հիմքեր: Նախ մեր մատենագրութեան մեջ «Հեր»-ը (Խոյ) երբեք «Հերաւան» ձևով չի հիշատակվում, հետևապես այն ամենևին չի կարող շփոթվել «չլերեան»-ի հետ, կամ «աղճատվելով» (որն ավելի անհավանական է) դառնալ «չլերեան»: Մեր V գլ. պատմիչների մոտ «Հեր»-ը Զարեանի հետ միասին հիշատակվում է որպես դավառ. «...չորհրտասանել որոյ իշխանն Նահապետ Զարեանդ և Հեր գաւառի» (Ազոթանդհոս)³, «յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով 'ի Հէր և 'ի Զարեանդ գաւառ», (Փայտոս Բուզանդացի)⁴, «սխալաւ 'ի կողմանս Հերայ»⁵ (Մ. Խորենացի)⁶, «Չգունդի առաջին հեռացուցի ի կողմանս Հերայ և Զարեանդայ», «և եկեալ հասանէր յաշխարհն Հայոց 'ի Հեր և 'ի Զարեանդ գաւառ» (Նդիշե)⁷, «եւ յետ սակաւ ինչ աւուրց անցելոց լուան, եթէ զոր եհաս բազում 'ի Հեր և 'ի Զարեանդ գաւառ», «և երկորդ՝ առէին, թերև անդէն ի տեղուցն 'ի Հեր և 'ի Զարեանդ գաւառն մնարին եր գործոյն պատկերազմին», «եկեալ հասան են ի սահմանս Հերայ և Զարեանդ գաւառի բազում գորազուրբ», «և գայրոճին Հեր և Զարեանդ գաւառի», «եւ եկեալ Նիխոր յաշխարհն Հայոց՝ ոչ իշխեսց միջամխել 'ի Հայոց տեղիս, այլ դազարեալ ի գաւառն որ կոչէր Հեր», «եւ երթեալ նոցա առ Նիխոր 'ի գաւառն 'ի Հեր» (Ազար Գարպեցի)⁸:

Արարական շրջանի պատմիչները նույնպես որևէ հիմք չեն տա-

լիս «Հեր»-ը «Հերաւան» կոչելու կամ զավանի փոխարեն ավան համարելու: Սերետը Հերն ամենևին չի հիշատակում, Ղևոնդ Նրեցը հիշատակում է միայն մի տեղ, այն էլ որպես դավառ («և գայր հասուներ ի գաւառն Հեր»)⁹, իսկ Շապուհ Բագրատունուն վերագրված պատմութեան մեջ և Հովհաննես Դրասխանապետնցու մոտ հիշատակվում է որպես բաղար. «... այժմ ունիք գտերութիւնք Զարեանդ գաւառի և զաւանդ բաղարն Հերայ», «... և էթէ կամիմ՝ այս ար բաւկն՝ պարսիպ Հերա և զերկիրն աւար հարկաննմ», «աշոխեցա զնան ի բաղարն 'ի Հեր», «... դիմաք չէ աւար բեղ երթեալ 'ի բոյն իժից, 'ի բաղարն Հերայ», «... և տարան սպանել ի քաղաքն Հերայ» (Շապուհ Բագրատունի)¹⁰, «Ապա յաւուրս աշնայնոյն Տեճ իշխանն լուր զնաջր զկողմամբ Հերայ 'ի հանդիպումն գլխաւորի բաղարին» (Դրասխանապետնցի)¹¹:

Այսպիսով, V և հետագա դարերի պատմագիրների մոտ «Հեր»-ը «Հերաւան» ձևով երբեք չի հիշատակված, «Հեր»-ը նրանք երբեք ավան չեն կոչել, այլ գործածել են «գավառ» և «քաղաք» իմաստներով: Նույն այլ հիշատակություններից նաև պարզ երևում է, որ Ասորպատականից Վասպուրական տանդ առևտուր-տնտեսական ու ռազմական ամենակարևոր ճանապարհի առաջին կայանը Հայաստանի սահմանազխիսն Հերն էր: Սասանյաններն իրենց արշավանքները այս կողմերով կատարելիս Հայաստան էին մտաք զործում Հեր և Զարեանդ գավառներով իսկ այդ գալիս է միտեղու Է՝ Ք. Ավգարիկիյանի այն ենթադրութիւնը, թէ Վասպուրականում Սերետի հիշատակած արարական զորազորի կման կետը Անեստավանն էր, եւ Հ. Մանանդյանի այն կարծիքը, թէ նույն գորախումբը Վասպուրականում ավարտական արշավանքների կատարելուց հետո էլ միայն եկել «Հեր» (երա մոտ՝ «Հերաւան»)՝¹²:

Եվ վերջապես, ինչու Սերետին չհամարանալ ու շինդունել այնպես, ինչպես ինքն է հաղորդում: Սերետի պատմութեան բոլոր մեծագրերում, բացառութեամբ մեկի, որտեղ գրիչը սխալմամբ արտասանել է «Հերեան» ձևով, արարական նշված զորախմբի մարտերից մեկի վայրը համարված է «չլերեան»-ը, ինչպես միանգամայն հիշա-

¹ Շաղբ Մանանդյան, Հայաստանի գլխավոր Հանապարհները բառ Պետրիկոսի բարեկերի, էջ 144—147:
² Նույն տեղը, էջ 146:
³ Ազարպղեղայ Գատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 482:
⁴ Փատմութի Բուզանդացու պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1822, էջ 18:
⁵ Մովսէս Խորենացու հիշատակած-որ կողմանս Հերայ-և հովանարար պետք է հասկանալ ոչ թէ «Հեր», այլ Հարք գավառը՝ Արամեայի արևելքին:
⁶ Մովսէս Խորենացու պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 158:
⁷ Նդիշեի վասն վազանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1927, էջ 75 և 162:
⁸ Ազարպղեղայ Փառեցու պատմութիւն Հայոց եւ բաւր ևս վաճառ Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 144—145, 147, 282, 351, 352, 357:
⁹ Պատմութիւն Ղևոնդեայ մեծ վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 134:
¹⁰ Պատմութիւն Շապուհ Բագրատունու, էջ 67, 68, 69, 71:
¹¹ Հովհաննէս կարապիսու Դրասխանապետնցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 141:
¹² Տես «Հանդես ամսորայ», 1926, № 9—10, էջ 588—589, Հ Մանանդյան, Հայաստանի գլխավոր Հանապարհները բառ Պետրիկոսի բարեկերի, էջ 145—146:

կերպով նշում է նաև Չ. Ժամկույանը¹։ Եթե այդ այդպես է, ապա VII դարի առաջին կեսին Երևանը հնագույն ժամանակների նման ունեյր իր բերքը և էական զեբ էր խթաղում ուղղա-սարառանգիական առումով։

Պատմական աղբյուրների մանրագնիկն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սեբեոսի հաջորդումը VIII դ. Երևանի մասին միակ հիշատակությունը չէ Այս կամ այն առիթով այդ հարցի անզրադարձան հեղինակների մեծագույն մասը այն կարծիքին է, որ Սեբեոսի հիշատակությունն այդ դարի Երևանի մասին միակն է, և որ հետագայի մյուս հեղինակները՝ Հովհաննես Գրասխանահերտցին, Սամվել Անեցի և Կրանցից առաջ ապրած Ղևոնդ Երեցի համառոտ կրկնել են Սեբեոսի այդ հիշատակությունը²։ Իրոք որ Ղևոնդ Երեցը նկարագրելով արարական արշավանքները՝ որոշ տեղերում օգտվել է Սեբեոսից, բայց առանց նրան մեխանիկորեն կրկնելու Այսպես, կրկ վերանայու լինելը ժամանակագրական կարգի որոշ խախտումներից, զեպրեթի հաջորդականության և աշխարհագրական անունների որոշ տարբերություններից, այսպ լիովին նմանություն կարելի է տեսնել Սեբեոսից մեջբերված հատվածի և Ղևոնդ Երեցի հետևյալ հիշատակության միջև. «Այս յետ այնորիկ յերևսուն և վնցերորդ ամի իշխանութեանն նոցա (արարիւրի—Ք. Շ.) որ ժողովեալ զարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհն շայց, որոց էին զխաւորք Օթման և Օղբայ։ Եւ իբրև հասին ի սահմանն շայց՝ յերկր բաժանեալ առաջս՝ սփռեցան յաստիտիկ իբրեանց։ Առաջ մի հատեալ ընդ կողմն վաստորական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի նախըւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ։ Եւ միս առանց հասեալ ի Կողովիտ պաշարելն զամրոցն Արձափայ...»³։

Սակայն նույնը չի կարելի սանել Հովհաննես Գրասխանահերտցու և Սամվել Անեցու մասին։ Ահա թե ինչ են հաղորդում նրանք. Հովհաննես կաթողիկոս՝

«Յայնմ ժամանակի (Անաստաս կաթողիկոսի օրոք—Ք. Շ.)

¹ Չ. Ժամկույան, Երևանը XIII—XIV դարերում, Բեկնածուական գիտաբանական հասարակ. Երևանի պետական տարան, 1941, էջ 15—16։
² Տե՛ս Հովհաննես Խնկարյանից, Ստորագրութիւն կաթողիկոսի էջմիածնի և հին դաւաւացի Արարատայ, է. 11, էջ 134—135, Մետրք Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ժողովարք գաստի..., էջ 5, Խովանդ Կանափոզ, Հին Երևանը, էջ 65—70, Չ. Ժամկույան, Երևանը XIII—XIV դարերում, Բեկնածուական գիտաբանական հասարակ. էջ 15—16 և այլն։
³ Պատմութիւն Ղևոնդիայ մեծի վարդապետի շայց, էջ 11։

սանն լինել զկոհն, որ ՚ի քաղաքագիրն Երևանի, զոր և բաւական ընդ ուսուցանեն զայնք պատերազմի գնանգամանս որ զնայն բան զմեզ զնա պատմագրեցին»¹։

Սամվել Անեցի՝

«Ով (660), Երևանու կոհն, յորում զհարգն գոցեն՝ առ պատմագրութիւնս առաջնոցն. Շապուհ և Ասողիկ լինին»²։

Նրանց այդ համառոտակի, բայց միանգամայն հասկանալի հիշատակություններից երևում է, որ արաբական արշավանքների շրջանում Երևանում բացի Սեբեոսի հիշատակածից մեծ կոտի է եղել նաև զրանից մի բանի տարի անց՝ բոս Սամվել Անեցու 660 թվականին։ Նույն հիշատակություններից զովայր չէ կուսնել, որ արաբական այդ արշավների հիմնական նպատակներից մեկը, թերևս ամենահիմնականը Երևանի գրավումն էր Այլապես մեր պատմիչները այն չէին կոչի «Երևանու կոհն»։ Այնուհետև, Սամվել Անեցին նշում է, որ այդ կոտի մասին կարեն Շապուհի (Քաղաքառուսու) և Ասողիկի մոտ, իսկ Գրասխանահերտցին առանց իր աղբյուրների անունները սալու նշում է, որ Երևան «քաղաքագիրն»-ում եղած կոտի մասին «բաւական» մանրամասնությունը հաղորդել են իրենից առաջ ապրած պատմագիրները Այդ բոլոր մեջ բերում են այն համոզման, որ Սեբեոսի նկարագրած արշավանքը, որտեղ Երևանի մասին նշվում է միայն կողմնակի կերպով, բավարարվում՝ «ես եկին ժողովեցան ի յերևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին անույն» արտահայտությամբ, նույնը չէ Հովհաննես կաթողիկոսի և Սամվել Անեցու «Երևանու կոհն»-ի հետ։ Նա նույն ձևով, թերևս ավելի մանրամասը հաղորդում է նաև Որդուսպուտում, նախնականում և այլ տեղերում արաբական արշավանքների ժամանակ մղված պատերազմների վերաբերյալ, բայց ցրանցից ոչ մեկը հիմք չի զարձել հետագա պատմիչների համար հատուկ նշելու «Որդուսպուտ» կամ «Նախնականայն կոհն»։

Սեբեոսի և Գրասխանահերտցու ու Սամվել Անեցու հիշատակած այդ «չերևանտ»-«Երևանտ»՝ «կոհն»-ներն իր ժամանակին իրարից տարբերել է նաև Ղ. Ալիշանը։ Նա այդ մասին գրում է. «Եւ ետ ոչ բազմաց՝ յամի 642—3, ՚ի սկիզբն արշաւանաց Արարացոց՝ յայտնի և ամրութիւն տեղույն. զի սեկին ժողովեցան ՚ի յերևան

¹ Հովհաննես կաթողիկոս Գրասխանահերտցի, Պատմութիւն շայց, էջ 92։
² Սամուկի (տանախ) Անեցու) Հաւատարմ. ի գրոց պատմագրաց յարգութ զհատ ժամանակաց անցուցու մինչև ի ներկայս ժաշարաղ արարեալ, Վարդաբաղատ, 1593, էջ 83։ Տե՛ս նաև Հակոբ Տաշեան, Տուրակ հայերև Բնագրաց մտնեալարանին Միլիթրեանց ի վրենեա, Վրենա, 1895, էջ 292։

ի տակ Սեբիոս), և մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ: Յևս սակաւ եւս ամաց (658) միւս և նշանաւոր եւս կրիւ լեալ է նոցա յերևան Գաղափաղդըն, մինչև 'ի յիշատակ տարեգրութեանց անջանել դիպացն¹:

Տարբերելով արարական արշավանքների շրջանում երևանի բերդի գրավման համար մղված այդ երկու կողմերն իրարից (սուրոցից մեկը տեղի է ունեցել 643, իսկ մյուսը՝ 660 կամ 658 թվականին)՝ միաժամանակ պետք է նշել, որ զրանցից ոչ մեկի մասին մենք առայժմ չունենք մանրամասն ու համակողմանի տեղեկություններ: Առաջին կողմ վերաբերյալ Սեբեոսը բավարարվել է միայն մի արտահայտությամբ, որը, ինչպես տեսանք, նույնիսկ սեղիք է տվել այդ հիշատակությունը վերագրելու Առեստավանին կամ Հերին: Այնույն ժամանակ մենք ստացած տեղեկությունները նաև երկրորդ կողմ վերաբերյալ: Հովհաննես Գրասխանակերտցին և Մամվել Անեցին նույնպես բավարարվում են այդ կողմի մասին մեկական արտահայտությամբ, ավելի մանրամասն իմանալու համար հղելով գեպի իրենց նախորդները: Մամվել Անեցին այդ կողմ պատմադրության համար նշում է երկու հեղինակ՝ Շապուհ Բագրատունուն և Ասողիկին (Ստեփանոս Տարոնացի)՝ Քայց զրանցից վերջինի աշխատության մեջ մեզ հասած վիճակով երևանի կողմի մասին ոչ մի հիշատակություն չկա, իսկ Շապուհի պատմագրական երկը մեզ չի հասել: Հավանաբար նա բավական մանրամասնությամբ էր նկարագրել «Երևանու կոթին» ու զրա հետ կապված իրադարձությունները:

Անկախ այդ բոլորից, հենց միայն այն փաստը, որ արարներն իրենց առաջին արշավանքների ժամանակ ընդամենը մի քանի տարվա ընթացքում երկու ճակատամարտ են մղել երևանը գրավելու համար և այդ ճակատամարտերից մեկը գտնվել է ուղղակի «Երևանու կոթին», ցույց է տալիս երևանը VII դարում ամուր բերդ, ռազմատարածքական կարևոր կետ և մեծ բնակավայր (ավանի կամ՝ Հովհաննես կաթողիկոսի արտահայտությամբ՝ «քաղաքապոլս») լինելու Արարների հավանաբար երևանը (որը Հայաստանի 591 թվականի բաժանմամբ գտնվում էր բյուզանդական մասում, պարսկա-բյուզանդական սահմանից ոչ հեռու) գրավել են հենց զրա վրա կատարած իրենց երկրորդ հարձակման ժամանակ՝ կամ 660 թվականին (բայ Մամվել Անեցու) կամ 658 թվականին (բայ

Ղ. Ալիշանի, Այրարատ, էջ 299)՝ «Երևանու կոթի» ժամանակ: Ենթադրվում է, որ Երևանը գրավելուց հետո արարներն այն ամրացրեցին և զարձեցրին իրենց նստավայրերից մեկը², որը գտնվում էր նրանց փոխարքայական աթոռանիստ Գլվինի դիմաց: Ժ. ժամկոչապետը ենթադրում է, որ երևանի արարական շրջանի բերդը, որտեղ Հայաստանի մյուս բերդաքաղաքների նման, զետեղված էր բավական քաղաքամարդ կայազոր, գտնվել է հետագայի՝ XVI—XVIII դդ. բերդի տեղում³:

Հարանալի շպտը է թվա, որ VII դ. հայկական սելջուկապետությունում շեն հիշատակված ո՛չ Երևանը և ո՛չ էլ նրա շուրջ ընկած կոտայք գավառը: Հավանաբար այդ ժամանակներում երևանն էլ վաղաքաշատի, Արմավիրի և արցնի իր նշանակությունը կորցրած վերադարձանքների նման վարչականորեն զեռուս հանվվում էր Այրարատյան աշխարհի նույնանուն գավառի բնակավայրերից մեկը, որը VI—VII դարերում մասնատված էր մի քանի գավառների, բայց ավանդույթի ուժով զեռուս հիշատակվում էր որպես Այրարատյան աշխարհի գլխավոր գավառ: Երևանի անվան բացակայությունն այդ երկրադրական բնույթի երկում առավել ևս շպտը է տարօրինակ թվա նաև այն պատճառով, որ զրանուն շեն հիշատակված Այրարատյան աշխարհի ուրիշ ոչ պակաս մեծ նշանակություն ունեցող քաղաքներն ու պատմական այլ վայրեր⁴: Այնտեղ Այրարատյան աշխարհից հիշատակվում է փաստորեն միայն սյարբանյիստ վաղաքաշատ⁵ քաղաքը⁶: Երևանը չի հիշատակվում նաև IX դարի պարսկական հայտնի հեղինակ Բալաձորի մոտ, սրն իր աշխատության մեջ թվարկել է Հայաստանի բազմաթիվ քաղաքներն ու զրուցաքաղաքները⁷: Այն չի հիշատակվում նաև Հայաստանի քաղաքների մասին կարևոր տեղեկություններ տվող Արիստակես կատիվկերտցու մոտ⁸: Քայց զրանք ևս չեն կարող էին մեծ տարակուսանքի տեղիք տալ: Բալաձորին օտար հեղինակ է և կարող էր երևանի մասին նույնիսկ ոչինչ չիմանալ, իսկ Արիստակես կատիվկերտցին, ինչպես հայտնի

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300:

² Ժ. ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, Անտաղի, էջ 17:

³ Ալիաբեգյանց է զարու (համառոտ խմբագրություն), էջ 20, Ալիաբեգյանց Մովսեսի հաճեացոյ յայնչառածոք նախնեաց (բնագրակ խմբագրություն), Վեֆուսի, 1851, էջ 32—44: Տե՛ս նաև Ա. Արամբյան, Անտիա Երբակազու մասնագրությունը, Երևան, 1944, էջ 248—351:

⁴ Ալիաբեգյանց է զարու, էջ 20:

⁵ Տե՛ս Из сочинений Баладзори, «Книга завоевания стран», Баку, 1927:

⁶ Պատմություն Արիստակեսի կատիվկերտցու, Երևան, 1963:

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 299—300: Հե՛տ. Ելիելիան, Պատմաբանագրական քաղաքների քառարան, Ե. 1, էջ 694:

է, դիտարկուող Կիւրացի հիշատակութիւններ ունի Անիի, Գլինի, Կարսի, Կարինի, Արծնի, Ալաքի և Երևրի մեծածախկ մտա քաղաքները վերաբերյալ: Բացի Երևանից, նրա մոտ չին հիշատակված նաև բազմաթիվ այլ գյուղաքաղաքներ ու փոքր քաղաքներ:

Վիմական արձանագրութիւններում Երևանն առաջին անգամ հիշատակվում է 874 թվականին Սևանի Առաքելոց եկեղեցու (կղզու) այժմ թերակղզի—փոքր եկեղեցու) պատի վրա: Այս արձանագրութիւնը հայտնաբերվել է Լ. Մելիքսեթ-Քեկի կողմից տակավին 1924 թվականին և նրա կողմից հրատարակվել է 1938 թվականին¹:

Այլ 5 առջանոց արձանագրութիւնը Լ. Մելիքսեթ-Քեկը բնթերցել է հետևյալ կերպ.

«Կամաւ աչ Սիւնեաց տիկին (քնազրում՝ տըն) Մարիամ շինեցի զեկեղեցիս յանուն սր առաքելոյն՝ միաբանութեամբ (քնազրում՝ միայրանութիւն) || (Աշտ[ոյ] (քնազրում՝ Ոշտ) և տվեր վախմ սր առաքելոցն, զՎարսենն, զԳոմաձոր, զՅամաքաբերդ, Բերք, Ուռն ||—ացտափ, որսն զկողակնկին, ազի ի Գաւնի և Երևան. և թանկագին նշան || ածընկալ սր նշանաց տամ ի ժառանգութիւն զկոտակելոյ (sic) զկորստեղ, ով խափանէ՛ 3ժԼ[ից] նզովեալ եղիցի. թվ. 3ԻԳ-92:

Նույն բովանդակությամբ հիշատակութիւն ունի և Ստեփանոս Օրբելյանը նա գրում է. «Ահա սոյն երևմամբ վերին ազգեցու թեմեր շարժեալ մեծ թաղարհիս Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնու, զայ առ սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք ի հասնածեալ զնա ձեռն ի դործ արկեալ շինեն զընդապանոյն եկեղեցիս յանուն սուրբ առաքելոց, և զմեռն, յանուն տիրուհոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զիս տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յ323 թուականին Հայոց, Բայց Մաշտոց երիբ սահման վանիցն, և պաճառացոյց երկրնբառակ կարգօք. յորմէ՛ հարմարեալ միաբանեալ Աշտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտի՛ն զայ ի տեսութիւն սուրբ հօրն. և ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին. և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցոյն զեօղս՝ զՎարսենն, զՅամաքաբերդ, զԳոմաձորն,

¹ Л. Мелнксет-Бекон, Новоткрытая надпись на Севале от 874 г., «Памяти академика Н. Я. Марра (1864—1934)», М.-Л., 1938. էջ 409—415, արձ.:

² Լ. Մելիքսեթ-Քեկ, Երևանի հիշատակութիւնը Սևանի 874 թ. արձանագրության մեջ, ՍՍՍՐ ԳՊ, Հայկական ֆիլիալ, «Տեղեկագիր», № 4—5, Երևան, 1940, էջ 117—118.

զՔերդքն, զՍուեաց տափ և զորսն կողակնի, և այդիս ի Գաւնի և յԵրևան և յալլ տեղիս. և բազում եղովիւք հաստատեցին»²:

Օրբելյանն ունի նույն կարգի մի այլ հիշատակութիւն ևս, որում նա պատմում է Մարենի վանքի կառուցման և նրան տրված կալվածքները ու նվիրատվութիւնների մասին: Օրբելյանի այդ հիշատակութիւնը այն արձանագրության կրկնօրինակն է, որ վանքը կառուցողները փորագրել են նրա պատի վրա: Այնտեղ ասված է (թերում ենք համառոտագրելով).

«Կաման Աստուծոյ Նս Սուփան Սիւնեաց իշխան, շինեցի զՄարենոցայ եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի զպատուական սպասարք և աստուածային կտակարանօք. և ետու զեփական տեղը մեր ի սա որ ըստ անուան եկեղեցոյս Աստուածաման ասի, իր ամենայն սահմանօք, յերամբ և դաշտի, և ետու որս փկանց զՈղան շին սեղանոյն, և 700 դրամ ի Գեղձանազնոց զսպալնն, 200 դրամ ի կթիկն, 350 յԱնմեռն, որ լինի 1250 դրամ. ետու և 5 կուզպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գաւնի, և 2 այգի յԵղեգիս, և դամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լիցի առասպալէս և փարթնամացուցի ներքոյ և արտաքոյ. ետու և ջուրնս եղանց և շոկս դուրաբակաց և անդեայս և հօտս ոչխարաց: ... Ահա այս իսկ էր արձան Մարենոցաց, բայց վասն հնութեանս և խախտելոյ քարանցն ոչ կարացաք զբովանդակն իմանալ. այլ բազում քանք և տուրք իշխանացն պակասին. զայս փոքր ի շատէ հարց զի մի՛ բնամին քնեալ կորիցէ յիշտաակ նոցա. և այս ամենայն գործեալ եղև յ800 թուականն (851) մինչև յ350 (901)»³:

Բերված վկայութիւնները մեզ համար նախ և առաջ ուշադրով են նրանով, որ դրանցում Երևանը հիշատակվում է ոչ թե գյուղերի հետ (Վարսեն, Յամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուռաց տափ, Թուզան, Գեղձանագետ, Կեթիկ, Անմեռ), այլ Անի քաղաքի և Գաւնի ու Եղեգիս գյուղաքաղաքների շարքում՝ ևս այգիս ի Գաւնի և յԵրևան և 500 առու վան՝, «ետու և 5 կուզպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գաւնի, և 2 այգի յԵղեգիս»: Իսկ այդ ցույց այգի և տալիս, որ Երևանը IX դարում գյուղաքաղաք էր համարվում: Ըստ էրեւոյթի, նա գյուղաքաղաք է կուլիւն դեռ VII դարում: 21⁶ որ Նովերսոյթի, նա գյուղաքաղաք է կուլիւն դեռ VIII դարում: 21⁶ որ Նովերսոյթի, նա գյուղաքաղաք էր խոսելով այդ դարի երկրորդ կեսի սկզբների հաննեա կաթողիկոսը խոսելով այդ դարի մասին ուղղակի գրում է, որ դրանք Երևանում տեղի ունեցած կուլի մասին ուղղակի գրում է, որ դրանք

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Կապանի Սիւսական, Քիֆիի, 1910, էջ 173—174:

² Նույն տեղը, էջ 179—181:

տեղի են ունեցել շի քաղաքագիրն (կամ գյուղաքաղաք—Ք. 2.) Երևանի¹։ Իդուր են փորձում պատմագիր կաթողիկոսի՝ Երևանի որդիտուխյան մասին այդ վկայությունը վերագրել նրա ազգած շրջանին՝ IX դ. վերջերին և X դարի առաջին քառորդին։ Կասկածանք վեր է, որ նա արաբական արշավանքները նկարագրել է ճիշտ այնպես, ինչպես իր օգտագործած աղբյուրներն են հաղորդել։ Բայց միայն դրանք համառոտագրելով։ Այլ կերպ սասած, VII դարում ամուր բերդ ունեցող Երևանը միաժամանակ գյուղաքաղաք էր։ Սովորական գյուղերը բերդեր չունեին։ Հատկանշական է նաև այն, որ Նրասխանակերտցի խոսելով VII դ. կեսերի դեպքերի մասին՝ Կոտայքը համարում է նահանգ. «և տայ քնակովին նմա զգրեզն Ձաղ՝ ի նահանգին Կոտայքի, որ զկնի ամաց իսկ ՚ի Գլին քաղաքի բնկալաւ զմարտիրոսական պսակն»²։ Փաստորեն Նրասխանակերտքում այս վկայությունը արդեն անաւարակի էլ զարձնում Երևանը VII դարում բերդ է նշանակում քնակավայր՝ գյուղաքաղաք լինելը, երկ նույնիսկ Կոտայքը նահանգի փոխարեն համարենք զգվառ, ավելի արժանահավատ համարելով Ստեփանոս Սրբեչյանի՝ Բուշաբի արշավանքների առիթով (853 թ.) կատարած հիշատակությունը, որի մեջ նա Կոտայքը իրոր որ համարել է գավառ. «... և Վասակ ոչ հաստացեալ յամրոփին բերդիցն (Սյունիքի)։ այլ խոյն տուեալ անց զնաց զկողմամբ Կոտայք գաւառի»։ Իսկ միջնադարյան Հայաստանի բուրբ գավառների կենտրոնները դրեթե առանց բացառությունն ունենի բերդեր կամ ամրոցներ, որոնց շուրջը տարածված քնակավայրերը ճնշող մեծամասնությամբ ոչ թե հասարակ բնակավայրեր էին, այլ բաղաճներ կամ գյուղաքաղաքներ։ Այսպիսով, շատ հավանական է, որ Կոտայք «նահանգի»—գավառի կենտրոն Երևանն էլ ուներ բերդ և գյուղաքաղաք դեռևս VII դարում։ Հետևապես անընդունելի է որոշ հեղինակների այն տեսակետը, որ իբր մինչև X և նույնիսկ XII—XIV դարերը Երևանը հասարակ բնակավայր էր։

Նախորդ դարերի նման Երևանի բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, թերևս ամենահիմնականն, այգեգործությունն էր։ Վկայակոչված փաստներից պարզ երևում է, որ Երևանը Գառնիի նման հայտնի էր իր այգիներով և որ մի քանի վանքեր այնտեղ ունեին այգիներ։ Անշուտ այգեգործության հետ միասին Երևանում զբաղվում էին զյուզլառանտության և այլ ճյուղերով՝

բանջարաբուծությամբ, երկրագործությամբ, անասնապահությամբ, բայց մեր պատմագիրները դրանց մասին առիթ չունենալով ոչինչ չեն հաղորդել։ Իբրև գյուղաքաղաք Երևանում կախն նաև արհեստագործեր, որոնք մեծ մասը արհեստի հետ միասին զբաղվում էր նաև զյուզլառանտությամբ։ Հավանաբար բավական կարևոր տեղ էր զբաղվում առևտուրը։ Մենք տեսանք, որ Երևանը առևտրա-տնտեսական առումով հարմար դիրք ուներ հնադույն ժամանակներից ի վեր։ Այդ տեսակետից նրա դիրքն ավելի նպաստավոր էր զանում արաբական տիրապետության սկզբնական շրջանում, երբ նրա վրայով Հայաստանի մաշրաքաղաք Գլինը կապվում է Աղվանքի մաշրաքաղաք Պարտավի հետ։ 2. Մանանգյանը՝ Հովհաննես Նրասխանակերտցու, Ստեփանոս Սրբեչյանի և ուրիշ պատմագիրների վկայությունների ու այլ կարգի աղբյուրների հիման վրա համոզելի կերպով պարզաբանել է այդ երկու քաղաքների իրար հետ միացնող կարևոր ճանապարհի հին ուղղությունը։ Գլին—Պարտավ—Բերդկունց (Ախալա լճի հարավային ափին)—Կոթ ավան (այժմ՝ Ներքին Գեոպանեն գյուղ Մարտունու շրջանում)—Ջողի լեռանցք—Կաղանկասու ավան (Տրսու՝ Թարթառ գետի ափին)—Պարտավ (Թարթառ գետի ստորին հոսանքի ափին, ներկայումս Աղբյ. ՍՍՀ Քարդա շրջանակներին մոտ)։ Այդ ճանապարհը հիմնականում համընկնում էր այժմյան Երևան—Սևան—Կամո—Մարտունի—Ջողի լեռանցք—Թարգա ճանապարհի հետ։ Նրա վրա դոնվող դրեթե բոլոր կայանները՝ Բերդկունքը, Կոթը և մյուսները ոչ միայն տարանցիկ առևտրի կետեր էին, այլև իրենց սեփական ապրանքներով որոշ մասնակցություն ունեին այդ առևտրին։ Այդ հավասար չափով կարող է վերաբերվել նաև Երևանին, շնայած որևէ փաստ չկա այդ առևտրի ծավալի, բնույթի և ապրանքների կազմի մասին։

Հնադույն և ուրարտական ու քրեմենյան ժամանակաշրջաններին վերաբերող՝ Ջողի տակ ծածկված հուշարձանները չնայած՝ Երևանի մեզ հայտնի նշանավոր ամենահին կոթող Պողոս-Պետրոս եկեղեցին էր, որը զանվում էր այժմյան «Սուսկվա» կիտոստորների տեղում և քաղաքի վերակառուցման պատճառով քանդվել է 1931 թվականին։ Մինչ այդ Պողոս-Պետրոսը սովորաբար համարում էին XVII դարի (1690 թ.) կառուցվածը։ Բայց քանդվում հետ

1 Հովհաննես կարթղկու Նրասխանակերտցի, Փաստիկն Հայոց, էջ 92։
2 Նույն տեղը։

2 Լակիր Մանանգյան, Հայաստանի զյուզլառ անտարանները ըստ Պետրոս-Պարտավի, էջ 181—182, նույնը, Օ տորգաև և городах Армениа в связи с мировой торговлей древних времен (V век до н. э.—XV век н. эր), Իձ, второе, Ереван, 1954, էջ 197 և 255, նմա. Minorsky, Transcaucasia, Journal Asiatique, juillet, 1930, էջ 73—80։

միաժամանակ կատարված հնագիտական ուսումնասիրությունները Ալշարհրճի քաղաքի բերքին այն ճիշտ հասցումն է, որ այդ եկեղեցին նախապես իրենից ներկայացրել է V—VI դարերին հատուկ բաղիլիկա և շնչած հետազայում մի շարք անդամ եկեղեցիներին, իսկ «1679 թուի երկրաշարժից չետոյ կիսով շափ» վերակառուցվել է, «բայց նա իր ներքին մասում զեռ եւս պահել է հարազատորեն 5-րդ դարու բաղիլիկայի ստանձնահատկությունները»¹։ Ճիշտ է նշում հեղինակը, Պողոս-Պետրոսի ճարտարագետական ոճի ու կառուցման ժամանակի հարցի լուծումը միանգամից հնարավորություն տվեց հեղինակի արտահայտությունը օժիր աշրի ստաշ սեպլ» պատկերացնել «Երևան քաղաքի հետավոր կուլտուրական անցյալը»²։

Քանզման ժամանակ հնությունների պահպանության կոմիտեի հանձնարարությունը բավական մանրամասնությամբ նկարագրել, շափարել և ուսումնասիրել են այդ ստանձարը։ Նրա պատերի վրա կաշին մի շարք արձանագրություններ, որոնք վերաբերում էին XVII, XVIII և XIX դարերին։ Հնագիտական և պատմա-մշակութային տեսակետից առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացրել իրար վրա վեց շերտ կազմող որմնակարները, չհաշված ամենավերին շերտի կտավի վրա արած նկարը։ Ներքևից հաշված 5-րդ շերտի վրա թվագրված էր ճաշոց 580 թվականը (1131 թ.)։ Նկարները եղել են ֆիգուրային ու ծաղկանկարներ, զմայած յուզաներկով և էմալպիրն-լազով, բազմաթիվ են։ Ներտերն իրարից բաժանելու և դրանք նկարչական տեսակետից պատշաճ ուսումնասիրության ենթարկելու համար, բացի տեղական ունեթից, Մոսկվայից հրավիրվում է նաև տականավոր նկարիչ-վերականգնող Չիրիկովը։ Տեղական աշխատանքը տալիս է ցանկալի արդյունքներ։ Պարզվում է, որ ներքևից հաշված այդ որմնակարների առաջին և երկրորդ շերտերը շատ հին ծագում ունեն՝ վերաբերում են V—VII դարերին և, իբրև ալազիսին, մշակութային առումով առանձնահատուկ արժեք են ներկայացնում։ Գրանք բացատրել են ինչպես մշակույթի պատմության, այնպես էլ կատարման տեխնիկայի տեսակետից։ Այդ որմնակարների ուսումնասիրությամբ Չիրիկովից բացի զբաղվել են նաև Աշխարհբեկ քաղաքի, զերմանացի Շուլցը, պրոֆ. Ն. Մառ, Հ. Քյուրյանը, Տարաբրուսը։ Որմնակարների առաջին կամ հնա-

գույն խավը ծաղկանկար է, իսկ մյուս խավերը՝ մարզանկարներ։ Առաջին խավը ժամանակագրական տեսակետից վերադրել են V—VI, իսկ երկրորդը՝ VI—VII դարերին³։

VI—VII դարերում Երևանում որմնակարության գոյությունը թույլ է տալիս Ա. Հովհաննիսյանին ենթադրելու, որ այդ ժամանակներում Ավանի և Զվարթնոցի նման Երևանը եւս, որը գտնվում էր դրանց արանքում, կարող էր դարձած լինել հայ բաղիկորեսականների հանգրվաններից մեկը, որովհետև, ինչպես նա եկաւում է, VII դարում հայկական լուսավորչական եկեղեցականների առմայր որմնակարչությունը հատկանշական չէր⁴։ Սակայն պետք է ենթադրել, որ Երևանում այդ շրջանում բաղիկորեսականների ալազիցությունը եթե գոյություն ունեցած էլ լիներ, սպա մեր կարծիքով սակայն իր եղև, որովհետև, ինչպես տեսանք նրա հոգևոր ներկայացուցիչ Գավիթը եւ մասնակցում էր VII դարի սկզբներին Աբրահամ կաթողիկոսի հրավիրած Գվինի հակաբաղիկորեսական ժողովին։

Որմնակարներից, և ներքևից հաշված դրանց 5-րդ շերտի վրա եղած հայոց 62 թվականը (580 + 551 = 1131 թ.) ազդարարող գրվածքից բացի, Երևանի հայկական այդ հնագույն կարևոր կոթողի որպիսությունն իմանալու համար կարևոր նյութ են ծառայել նաև այն քանդակազարդ և հետազայում սվաղով ծածկված քարերը, որոնք հայտնաբերվեցին տաճարի քանդման ժամանակ։ Մասնագետները գտնում են, որ դրանք V—VII դդ. Պողոս-Պետրոս բաղիլի տաճարի թափված քարերից են, որոնք հետագայում օչտազործվել են նույն եկեղեցու վերանորոգումների ու վերակառուցումների ժամանակ⁵։

Միանգամայն ընդունելի է Հ. Քյուրյանի այն հետևությունը, թե՛ սպասում-դեզարտեստական տեսակետով այս նյութը կարելի էր (Ալան գատ, կարելի էր և պատմապիսն տեսակետով, Երևան կը հայտնվե՞ր իբր հին եւ մշակույթ ունեցող հայրաքաղաք մը, քաղաքին մոլթ անցյալը իր մէկ տարրեր փուլին մէջ կը լուսավորվի, եւ այս-

¹ Հայաստանի Հնութիւնների Պահպանութեան Կոմիտէ, Ալշարհրէղ Քալանբուք, Երևան, 1931, էջ 11։

² Նույն տեղը։

¹ Մանրամասը տե՛ս Հայաստանի Հնութիւնների Պահպանութեան Կոմիտէ, Երևան, 1931, Ց. Քյուրան, Նորագիտ հին որմնակարներ Երևանի Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցույն, «Անահիտ» Հանգու, Փարիզ, 1932 թ. նոյեմբեր—1933 թ. ապրիլ, № 3—6, էջ 56—63։

² Առաւ Հովհաննիսյան, Գրվածքներ հայ ազգապատրական պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 484։

³ Տե՛ս «Անահիտ» Հանգու, 1932 թ. նոյեմբեր—1933 թ. ապրիլ, № 3—6, էջ 57—59։

պես քանդվող Պողոս-Պետրոս եկեղեցին ցույց կուտայ, որ Երեւանի մեջ 5—6-րդ դարերուն կար ճարտարապետական նկատելի կերտումաք, քանդակագործութեան նմուշներ, ու կը հաստատուի նաև որիչ տեղերն միայն ավանդութեամբ ծանոթ նկարչութեան անժողոպետի զոյնութեամբ հոն»¹։

Հետագայում Գառնիի, Արին-բերդի, Կարմիր-բլուրի և այլ վայրերի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին տակավին պարտական ու ևստերարտական հնագույն ժամանակների փոքրիկ խճանկարչութեան և որմնակարչութեան անզուգական նմուշներ, բայց դրանք ամենևին չեն արժեզրկում Երևանի Պողոս-Պետրոս տաճարի որմնակարները։ Ընդհակառակը դրանք միայն հաստատում են, որ արվեստի այդ հյուրը հայաստանում զարգացման է հասնլ հնագույն ժամանակներից։ Նվ ձեք մաշտաբաղար Երեւանն էլ իր բաժինը ունի այդ արվեստի զարգացման մեջ։

II. ԵՐԵՎԱՆԻ X—XIII ԳԱՐԵՐՈՒՄ

1. ՎԱՐՉԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը։ Երևանը գյուղագրագրաբանական Բաղաբի վեճածվելու ժամանակը և նախապայմանները։ Երևանը որպես զավառի կենտրոն, նրա վարչական վիճակը

Սկսած IX դ. երկրորդ կեսից մինչև մոնղոլական ավերիչ արշավանքներն ու ծանր լծի հաստատումը (XIII դ.) Հայաստանն աղուում էր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան։ Այդ ժամանակաշրջանում երկրում ֆեոդալիզմը գնալով ավելի խորանում է, գյուղացիության մեծագույն մասը ենթարկվում է ճորտական կախման, զարգանում են երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, տասնչակների հասնող արհեստները, ներքին, արտաքին և տարանցիկ առևտուրը, քաղաքային կյանքը, ճարտարապետությունը, մշակույթը։ Երկրի անտեսական կյանքի առաջադիմությունը վրա բարերար ազդեցություն է թողնում X դարի առաջին քառորդի վերջերից հաստատված երկրապետ խաղաղությունը և Արևելքի ու Արևմուտքի միջև կատարվող տարանցիկ առևտուրը։ IX դարի երկրորդ կեսից նվաճված քաղաքական անկախության շնորհիվ երկրի անտեսական հնարավորությունները մնում են ներսում

և հիմք դառնում նրա հետագա զարգացման համար։ Սակայն քաղաքական առումով այնուամենայնիվ հնարավոր չի լինում միաժողովրդի Հայաստանը մի միասնական պետության մեջ։ Ավելին, այդ բնագավառում Բագրատունի առաջին ֆեոդալորների նվաճումները կ'դրև են լինում ֆեոդալիզմի հետագա խորացման պատճառով, երկիրը մասնատվում է մի շարք ֆեոդալական թագավորությունների ու իշխանությունների, որոնք շատ ղեկավարում քիչ էին հաշվի նստում Անի-Երիզանի կենտրոնական իշխանության հետ։

Հայաստանի տնտեսական բարգավաճ վիճակն ու անզորությունը խախտվում է բյուզանդական և սելջուկական կարճատև տիրապետության հետևանքով։ Բայց երկրի մեծ մասը XII դ. երկրորդ կեսից ազատագրվում է սելջուկյան տիրապետությունից և բանում իր հետագա զարգացման ուղին²։

Սակայն մեր երկրին բախտ չէր վիճակված բնական բնթացքով զարգանալու XIII դ. առաջին կեսից մոնղոլ-թաթարները մի քանի ավերիչ արշավանքներից հետո հարևան երկրների հետ միասին իրենց ծանր, ժողովրդի ոգին լափող³ լուծ են հաստատում այնտեղ, որը հետագայում պարբերաբար փոխարինվում է օտարերկրյա այլ, նույնչափ ծանր տիրապետություններով։

Երևանի պատմության տեսակետից X—XIII դարերը ամենաուշագրավ ժամանակաշրջաններից մեկն է։ Այդ դարերում նա գյուղադարաքաղից վերածվեց իսկական ֆեոդալական քաղաքի, շարքային բնակավայրից⁴ վարչա-առերկտորիալ միավորի կենտրոնի։

Այժմ ավելի մոտիկից ծանոթանանք Երևանի պատմության ընթացքին։

Մենք տեսանք, որ Երևանն այս դարերն է թեև ինչխի որպես ամուր բերդ ունեցող գյուղաքաղաք (կամ «քաղաքագիր»)։ XI—XIII դարերում Երևանը հիշատակվում է շատ հաճախ։ Տարբեր առիթներով այն հիշատակված է վիճազոր մի շարք արձանագրություններում և պատմագրական երկերում։ Իսկ դա ցույց է տալիս, որ նա ձեռք էր բերել կարևոր նշանակություն։ Գյուղաքաղաքից քաղաքի վերածվելու համար այդ շրջանում Երևանն ուներ բոլոր նպաստավոր պայմանները։ Նա դանվում էր տարանցիկ հասնապարհի վրա, դարձել էր մի ընդարձակ զավառի կենտրոն։ X—XIII դարե-

¹ 2. Մանանդյան, Հայաստանի քաղաքները X—XI դդ., Երևան, 1940, 104-105, Օ торговле и городах Армении..., Լեռ, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1947, 8, 9. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1965 և այլն։

¹ Սևահյուս հանդես, 1932 թ. նոյեմբեր—1933 թ. ապրիլ, № 3—6, էջ 62։

րում Հայաստանում առկա էին բազալթային կյանքը զարգանալու համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմանները՝ հասարակական աշխատանքի բաժանման խորացումը: Բ. Գ. Գրեկովը խոսելով ֆեոդալիզմի ժամանակաշրջանի բազալթային կյանքի մասին գրում է. «...բազալթային բնակավայրը ինչպիսի ծագում էլ ունենա, այն առաջացած էին բուրգից (ամբացված կետից), հայրենիքից կամ համայնիքից, քաղաքը միշտ արդյունք է հասարակական աշխատանքի բաժանման և հանդիսանում է արհեստավորական ու առևտրական բնույթի բնակչության գերակշռություն ունեցող բնակավայր: Քաղաքների աճը, ինչպես արհեստագործության, այնպես էլ առևտրի կենտրոններ, միշտ ցուցանիչ է ներքին շուկայի աճի»:

Սակայն քաղաքի տնտեսական աճը չի սահմանափակվում միայն արհեստավորական ու առևտրական բնակչության աճմամբ: Քաղաքի աճմանն ու զարգացմանը մեծապես նպաստում էին նրա տնտեսության այդ ճյուղերի և բնակչության սպասարկման հետ կապված զանազան հաստատությունների՝ քարավանատները, հյուրանոցները, շրաղջանները, ձիթհանները և այլն: Քաղաքն այդ եղանակով զնայի իրեն է ձգում ազնվականներին, բարձրաստիճան հոգևորականներին, մեծատուններին: Այլ կերպ ասած, բացի արհեստավորներից, առևտրականներից և գյուղացիներից, ֆեոդալական քաղաքներում աստիճանաբար բավական սովոր թիվ են կազմում նաև իշխող դասի ներկայացուցիչները¹:

Երևանը, ինչպես տեսանք, հնագույն քաղաք էր և միշտ ունեցել է ամուր բերդ: Բայց հետագայում Արտաշատի, Վաղարշապատի բարձրացմամբ նա մղվում է երկրորդական-երրորդական տեղ և նորից է իր զարգացման ուղին բռնում IX դարի վերջերից, երկրի քաղաքական անկախության վերականգնումով, որից առաջ նա արդեն գյուղաքաղաք էր: Այսպիսով, այժմ խոսք կարող է լինել ոչ թե Երևան քաղաքի ծագման մասին ընդհանրապես, որովհետև նա որպես քաղաք առաջացել էր տակավին VIII դ. (մ. թ. ա.), այլ հարյուրամյակներ շարունակ իր նախկին փառքը կորցրած հնագույն քաղաքի զարգացման նոր շրջանի, գյուղաքաղաքից իսկական քաղաքի վերածվելու մասին:

Քաղաքների աճի ու զարգացման համար կարևոր պայման էր

¹ Բ. Դ. Греков, Крестьяне на Руси, Москва, 1946, էջ 565—566:

² Բ. Ն. Ասոխյան, Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիալական կազմը, «Փամաք-բանասիրական հանդես», Երևան, 1958, № 2, էջ 39:

³ Նույն տեղը:

նաև դրանց քաղաքական կամ վարչական կենտրոն լինելը: Միջնադարյան Հայաստանի քաղաքների զգալի մասը (Գլին, Անի, Կարս, Խլաթ, Լոռի, Կապան, Մուշ, Աղթամար, Կարին-Քեոզոսուպոլիս և այլն) վարչական կամ քաղաքական կենտրոններ էին՝ վարչատերիտորիալ միավորների (գավառների, աշխարհների, թեմների, իշխանությունների) կենտրոններ էին, կամ պետությունների մայրաքաղաքներ: Վարչա-քաղաքական առումով Կարին-Քեոզոսուպոլիսը կենտրոններ էին (Արծն կամ Արզն, Բիրդկունք և այլն) անհամեմատ փոքր թիվ էին կազմում:

X—XIII դարերում Երևանը պատկանում էր գավառական կենտրոնների թվին: Նա Կոտայք գավառի կենտրոնն էր: XIII դ. վերաբերող Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեքստում ասված է. «Կոտայք Երևան քաղաքն է իւր վիճակովն, և Ջաղթվանքն առ ի, որ կայ Գեատարի սուրբ նշանն...»¹: Գրեկն նույնն է ասված և դրա համառոտ խմբագրության տեքստում. «Կոտայք Երևան է իւր վիճակովն»²,—կարգում ենք այնտեղ: Աշխարհադրական շատ համառոտ, բայց որոշակի վկայության մեջ պարզ ասված է, որ Երևանը քաղաք էր և իր շուրջը փռված Կոտայք գավառի կենտրոնն էր: Հեղինակը փաստորեն Կոտայք է կոչում նրա կենտրոն Երևանն իր վիճակի (չբնակալայի) հետ միասին:

Հաշվի առնելով վիճակային արձանագրությունների մեջ Երևանում հիշատակվող խանութների գոյությունը, մեծատունների ու այլ կարգի հարուստների գործարքները Երևանում, քաղաքում և նրա շրջակայքում հայտնաբերված մոնղոլական շրջանի տարրեր երկրների մեծ թվով գրամներ և այլ քրոնոշիկ փաստեր՝ հայտնույններից շատերը ենթադրել են, որ Երևանը գյուղաքաղաքից նորից իսկական քաղաքի է վերածվել: XIII—XIV դարերում³:

Սակայն այդ նույն փաստերի նոր լուսարարության և մի բանի այլ փաստերի վկայակոչման հիման վրա՝ Բ. Առաքելյանը կկն է

¹ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակություն Հայկ Պէրսերևանի, Բաքու, 1960, էջ 31:

² Նույն տեղը, էջ 14: Տե՛ս նաև Գ. Եճեֆեևան, Ստորագրություն Հին Հայաստանաց, Վենետիկ, 1822, էջ 454—455:

³ Տե՛ս 2. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, Թեկն. գիտ. (Անտոյր), էջ 35, 37—38, 39—40, Ս. Բախրադյան, Մի բանի գիտություններ Երևանի կամուրջի կենտրոն արձանագրությունների վերաբերյալ, «Տեղեկագիրք» 2000 ԳՅ, հաս. գիտ., 1947, № 5, էջ 69—72 և այլուր:

դարից բաղաբի է վերածվել) է դարձել ոչ թե XIII—XIV դարերում, այլ դրանից մոտ մեկ դար առաջ՝ XII—XIII դարերում¹։ Ավերորո համարելով այս առթիվ նորից քննարկման նյութ դարձնելու թև առաջին տեսակետի կողմնակիցների և թե՛ Ք. Առաքելյանի վկայակոչած փաստերը, որոնք ուշաբրյուկյան կաթոճանանան քաղաքի այդ դարերի վարչական ու տնտեսական կյանքը ներկայացնելիս, նշենք, որ մեր կարծիքով ընդունելի է ու հավանական վերջին տեսակետը։ Ք. Առաքելյանի հաշիվներով XII—XIII դարերում առաջացել են «Տիխայն չորս նոր քաղաք, իսկ դրանց թվում առավել աչքի ընկնողը Երևանն էր»²։ Կա միջնադարյան Հայաստանի քաղաքների ու գյուղաքաղաքների առաջացման ժամանակի ատուժով կազմել է մի աղյուսակ, ըստ որի Հայաստանում X—XI դարերում եղել են 40-ից ավելի քաղաքներ, ավելի քան 20 գյուղաքաղաք և մոտ 30 խոշոր ավաններ, որոնք չեն մտել նրա աղյուսակի մեջ³։ Ընդհանուր առմամբ, այդ ցանկը ճիշտ զգափար է տալիս IX—XIII դարերի Հայաստանի քաղաքների ու գյուղաքաղաքների վերաբերյալ։ Ընթերցողն ու մասնագետն այնտեղ կարող է գտնել մեր երկրի այդ դարերի քաղաքների ու գյուղաքաղաքների անուններն իրենց առաջացման ժամանակով հանգերձ, Բայջ մեր կարծիքով աղյուսակն ունի և թերություններ, որոնց մի մասը տեղ է գտել անկախ հեղինակի ցանկությունից։ Այսպես, նրանում տվյալ քաղաքի կամ գյուղաքաղաքի առաջացման ժամանակի հաշվված է ըստ առաջին հիշատակության։ Մինչդեռ կային շատ քաղաքներ և հատկապես գյուղաքաղաքներ, որոնք հիշատակվել են իրենց հիմնադրումից բավական ուշ, միայն հարմար առիթով։ Սակայն մեզ հետաքրքրում է միայն աղյուսակի Երևանին վերաբերող մասը։ Երևանը նրանում դասված է այն քաղաքների շարքը (Կելշոր, Խիզան, Աղեղո), որոնք առաջացել են XII—XIII դարերում։ Սակայն մեզ համար անբացատրելի է մնում այն, թե ինչու՞ IX, X և XI դարերի տակ մյուս գյուղաքաղաքների շարքում չի հիշատակված Երևան գյուղաքաղաքը, մի՞թե հեղինակն այն կարծիքին է, որ այդ դարերում Երևանը գյուղաքաղաք չի եղել։ Չէ՞ որ Երևանը իրեն գյուղաքաղաք գոյություն ունեցող դրանից շատ առաջ և միջնադարյան Հայաստանի շատ բերդերի ու

¹ Բարկեն Առախլյան, Քաղաքներ և արձաններ Հայաստանում IX—XIII օր. հ. II, Երևան, 1964, էջ 87։

² Նույն տեղը, էջ 86։

³ Նույն տեղը, էջ 123—124։

գյուղաքաղաքների նման նա էլ քաղաքի վերածվեց ֆեոդալիզմի պարզացմամբ ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ։

Գեղարդի ժամատան հյուսիս-արևելյան կրկնաճարկ խորանները կառուցվել են 1225 թ. Ճարի որդու (որի անունը արձանագրության մեջ եղված է) միջոցներով։ Այդ մասին թողած իր արձանագրության մեջ նա իրեն համարում է «ի գեղեջն Երևանայ» և վանորդի մեջ նա իրեն համարում է «ի գեղեջն Երևանայ»։ Մեր կարծիքով XIII դ. եղել է նվիրում Երևանում գտնվող իր այգին¹։ Մեր կարծիքով XIII դ. առաջին քառորդի վերջին երեսը գյուղ կոչվել, որ ասված է այդ առաջին քառորդի վերջին երեսը ևս առիթունից է։ Մենք կտեսնենք, որ նույն կարգի սխալ է թույլ տրված նաև XIV դ. վերջին քառորդի երեսների վերաբերյալ։ Լենկ թեմուրի արշավանքների մասին արած հիշատակության մեջ թույլ մաս Մեծուհեու ժամանակակից Սերևնցը այն կոչել է «մեծ աան», որը նույնպես կամայական հորջործում է և չի կարող ընդունելի լինել։

Ձարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի Հայաստանի զրեթե բոլոր քաղաքները ֆեոդալական տիպի քաղաքներ էին։ Գրանք գտնվում էին ֆեոդալական կամ արքունական հողի վրա և ենթարկվում էին ֆեոդալին կամ հայոց թագավորին, որը ևս ըստ էության ֆեոդալ էր, այն էլ երկրի ամենախոշոր ֆեոդալը։ Երկրում չնչին բացառություն էին կազմում այն սաղառս քաղաքներն ու առևտրի կենտրոնները (Արձն, Բերդկունք և այլն), որոնք չէին պատկանում այս կամ այն ֆեոդալին և ամբողջովին ենթակա էին քաղաքի ավագանու իրավասությանը։ X—XI դարերում Երևանը դեռևս գյուղաքաղաք էր, կազմելով այս կամ այն ֆեոդալի տիրույթը։ Նրա այս ժամանակաշրջանի վարչական միջոցի և ներքին կյանքի մասին մենք տեղեկություններ չունենք։ Երվանդ Շահադղբը միանգամայն ճիշտ է արտելում, որ «Հայոց իշխանության ժամանակներից Երևանի կառավարիչների մասին տեղեկություններ չեն պահպանվել»², բայց կառավարիչների մասին տեղեկություններ չեն պահպանվել նաև հիմք չունի նույնն ասելու։ XII և մասնավոր XIII դարի վերանա հիմք չունի նույնն այդ ժամանակներից պահպանվել են քաղաքի վերջին, որովհետև այդ ժամանակներից պահպանվել են քաղաքի վարչական ու ներքին կյանքին վերաբերող մի շարք ուղղակի և անուղղակի տեղեկություններ, որոնք որոշ լույս են սփռում նրա պատմության մի շարք կնճառ հարցերի վրա։

¹ Մոսկովենոս վարդապետ Մխիթարեան, Ստորագրություն հաշվագրք մեծի տիրան Արի Ժամոց սրբու Գեղարդու, վարդապետ, 1873, էջ 28—29, Գաեհեթե Մախիթարեան Մոսկովենո, հարգական կամ Գառեհեթ հայոց պատմության մեջ, մաս II, Երևան, 1942, էջ 79 և հավելված II, 105։

² Երվանդ Շահադղբ, Հին Երևանը, էջ 82։

³ Նույն տեղը։

Երևանի X դ. վարչական վիճակի մասին տեղեկություններ չկան: Հավանաբար այդ ժամանակ այն պատկանել է Ապիրատ իշխանի նախորդներին կամ իշխանական որևէ այլ տան ձեռքին: Իսկ XI դարի առաջին կեսին Երևանն արդեն հավանաբար պատկանում էր Ապիրատ իշխանին և ենթարկվում էր նրան: Ըստ հիշատակության, Ապիրատը Հասանի որդին էր և կոչվում էր «մեծ իշխան Հայոց»: Նա 12000 հեծյալի տեր էր և իր այդ զորքով այտուտներ էր բազրատում Լուսիննիս Ամրատի (1020—1041) դեմ՝ անցնելով Աշոտ Գ-ի կողմը: Հետագայում նա նենդարար սպանվել է Գլխիի արքա կառավարել Արտավազի կողմից: Մխիթար Այրիվանեցու վկայության համաձայն, Ապիրատը 1031 (կամ 1036) թվականին հանել է տալիս Երևանի առում. «Ապիրատ իշխան երկոտասան հազար հեծելի... Սա շինեաց զԿեչառուս և Եհան զառուն Երևանայո՞ւ, Ապիրատի հանած «զառուն Երևանայ» նույնացնում են Մամուկի ասվի հետ», չնայած դրա օգուտն իստող որևէ մաստ չեն կարողանում վկայակոչել: Ինչ էլ ուզում է լինել, այդ ասվի կառուցումը բավական մեծ միջոցների հետ էր կապված: Իսկ այդ իր հերթին ենթադրել է տալիս, որ Երևանը պատկանում էր Ապիրատ իշխանին, այնպես եւ այդպիսի մեծ «զոհողության» չէր զնա: Հավանական է նաև, որ քաղաքի բնակչությունը այդ ասվի համար Հատուկ հարկ էր վճարում Ապիրատին:

Ապիրատից հետո նրա զորավար Սարի կոչված ոմն իշխանը վերցնելով նրա կնոջը, որդիներին և զորքը զնում է Անի՝ Լուսիննիս Ամրատի մոտ: Իսկ վերջինս շողոթնաց նորի (Ապիրատի) Ապրըրահայոյ և Վասակայ և Սարէ և ամենայն զօրացն տար թագաորն Հայոց զաւառս երկուս և զիշխանութիւնս»: Ամենայն հավանականությամբ Հայոց թագավորի կողմից Ապիրատի որդիներին տրված այդ երկու զավառները գտնվում էին ոչ թե Երևանի մոտակայքում, այլ պետության արևմտյան կողմում՝ Եիրակում և նրա շրջակայքում: Համենայն դեպս, նրա թոռներից մեկին՝ Գրիգոր Ապիրատյանին մենք տեսնում ենք իբրև Եիրակի ու Անիի իշխան, իսկ մյուսին՝ Բարսեղ Ապիրատյան Անեցուն՝ կաթողիկոս պաշտո-

նում: Եթե անհավանական է թվում, որ Ապիրատի որդիներն ու թոռները երբևէ իշխել են Երևանում և Կոտայք զավառում, ապա նրա հայրը՝ Հասանը, որը կոչված է մազհատրոս, ամենայն հավանականությամբ իր իշխանության տակ ուներ նաև Երևանն ու նրա շուրջն ընկած Կոտայք զավառը:

Հայ ժողովրդի պատմությունից հայտնի է, որ 1045 թվականին Բյուզանդիան նենդարար զորավում է Անի-Եիրակի թագավորությունը և վերացնում մեր երկրի քաղաքական անկախությունը: Դրանից ընդամենը մի քանի տարի անց մեր երկրի վրա մեկը մյուսի հետևից ավարատական արշավանքներ են կատարում սելջուկ-թուրքերը, որոնք Վասպուրականի կողմերում երեսցել էին զեռես նույն զարի երկրորդ տասնամյակի վերջերին: Հայտնի է նաև այն, որ Բյուզանդիան ոչ ինքը կարողացավ սելջուկների դեմն անել և ոչ էլ անհետատես քաղաքականությամբ թույլ տվեց երկրի տեր հայերին անելույան ըզվտրական հորդաններից պաշտպանելու իրենց որևէ սելջուկյան ըզվտրական հորդաններից զանազան պատրվակներով հայ հայրենիքը: Բյուզանդիայի կողմից զանազան պատրվակներով երկրից դիմվորականությունն ու բնակչության զգալի զանգվածները երկրից հանելը, ձուլողական քաղաքականությունը, կրոնական-զավանաբանական պայքարն ու հայածանրներն իստ րացասաբար ազդեցին երկրի պաշտպանունակության վրա: Սելջուկները ավերելով մեր երկրի պաշտպանունակության վրա: Սելջուկները ավերելով մեր երկիրը իրենց տիրապետությունը հաստատեցին այնտեղ: Սակայն նրանց տիրապետությունը երկարատև եղավ: Հայ վրացական միացյալ զորքերը Զաքարյան հայ իշխանների շախմատությամբ շուտով Հայաստանի հյուսիս-արևելյան մասն ազատագրում են սելջուկյան լծից: Հայաստանի այս մասում շարունակվում է տնտեսական այն զարգացումը, որը սկսվել էր IX դ. երկրորդ կեսից՝ երկրի քաղաքական անկախության նվաճումով:

Սելջուկյան լծից ազատագրված Հյուսիս-Արևելյան Հայաստանի կամում էր նաև Կոտայք զավառն իր Երևան կենտրոնով: Ինչպես մյուս զավառներում, այնպես էլ հավանաբար այստեղ՝ Կոտայքում այդ շրջանում իշխում էին կամ անմիջականորեն Զաքարյան իշխանները. կամ նրանց կողմից նշանակված վասալները: Համենայն դեպս վիտազիր արձանագրություններից երևում է, որ XIII դ. սկզբներին Զաքարիա իշխանը Երևանում ուներ սեփական այդպիսի, որոնցից երկուսը նվիրել է Հատիհի և Հաղաթնի վանքերին²:

¹ Մատթևու Ռամայեցի, ժամանակագրություն, Վարդաշապատ, 1895, էջ 10:

² Մխիթարյ Այրիվանեցու Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 53:

³ Մեսրոպ Մարտանեցի, Տեղագրի Կնդարքունի ժովագարը զուտարի, էջ 18, Ազամ Ազամյան, Տեղագրություն Երևանի, էջ 12, «Ազգերաբանագիր», Թիֆլիս, 1902, № 2, էջ 79, Արվանդ Կանազոր, 2-ին Երևան, էջ 20:

⁴ Մատթևու Ռամայեցի, ժամանակագրություն, էջ 11:

⁵ Նույն տեղը:

¹ Մատթևու Ռամայեցի, ժամանակագրություն, էջ 211:

² Ն. Կոտանյանց, Վիճական տարեգրի, ցուցակ ժողովածոյ արձանագրությանց Հայոց, Ս. Փետրբուրգ, 1913, էջ 43 և 141:

Իսկ Ալիշանն ուղղակի գտնում է, որ Արագածոտնի պես Կոտայքում
ևս իշխում էին կամ Զարարյան իշխաններից կամ նրանց կողմից
հովանավորվածները. «Զարմ Զարարեանց և պաշտպաննոցն ՚ի
նոցանէ իշխանազանց Զայոց՝ պայազասեցին, որդէս յԱրագածոտն
և աստ ՚ի Կոտայս», — գրում է նա¹:

Մտեփանոս Օրբելյանի վկայութեան համաձայն, մոռցողական
արշավանքներից առաջ, աթարեկ Իվանէ Զարարյանի կողմից Օր-
բելյաններին տրված կալվածքների թվում կային նաև գյուղեր Կո-
տայք գավառում: Նա գրում է, որ իր հորը՝ կիպարիտին աթարեկ
Նրկուղը նենգարար սպանելուց հետո ինքը վերադարձել է իր հա-
րազատ երկիրը և իր հայրենիքի փոխարեն աթարեկ Իվանից ստա-
ցել Լրաշվարերդն ու բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Գեղաբու-
նիքում (Գեղարբունիք) և Կոտայքում: «Եւ մենք անգիտութեամբ
խարնայք ի նոցանէ՝ ծանկնտ ապա դժափատն իմ հայրենի. և ի
մանկական հասակիս դարձայ վերստի ի լուստոր հաւատ սրբոյն
Գրիգորի. և եկի առ մեծ Աթարէկն Իվանէ. և նորա բազում սիրով
րնկալեալ գմեղ՝ ևս փոխան հայրենեաց իմոյ զԼրաշվարերդ իւր
կերտիս (եկամտիւր). և այլ բազում գրեզս ի Վայոց Ձոր, ի Գեղաբու-
նի, ի Կոտայսն և ի Կայնն: Եւ ևս մեծ յուտով շինեցի զվանքս որ
կոչի նորավանս»²:

Մեջբերված վկայությունից պարզ կրնում է, որ Երևանը որևէ
առնչություն չուներ Զարարյանների կողմից Կոտայք գավառում Օր-
բելյաններին տրված բնակավայրերի հետ: Այստեղ Օրբելյաններին
տրված էին միայն գյուղեր: Այս գավառում նրանք նույն կարգի տի-
րույթներ են ստանում և հետագայում: Մտեփանոս Օրբելյանն այդ
մասին հազորդում է. «ՅՅԻտ որոյ հրամանաւ թաղատրին տայ փո-
խան հայրենեացն կիպարիտ անանյական գրով զԼրաշվարերդ իւր
զուտովն և այլ բազում գեղորէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն զկյանն
և այլ գիւղս յուտիս. ի Գեղաբունի դժամասրի և այլ գեղորէս բա-
զում. ի Կայնն դԱղստն իւր կերտիս»³:

Այս նույն ժամանակներում իբրև Երևանի ֆեոդալներ, տերեր
կամ պատրոններ հիշատակվում են Վարդ Եմբեր, Ասրղիսը և Դուլը:
Վարդ Եմբերի անվանը մենք առաջին անգամ հանդիպում ենք
Գեղառուրի սուրբ Գրիգոր եկեղեցու 1204 թ. մի արձանագրության

մեջ, որտեղ ասված է. «Ես Վարդ Եմբեր, որ նորոգեցի ի յՆրեան
վիկղիտոնոյ էզոյն շարերն ևսու ի սուրբ Գրիգորս»⁴:

Նույն Վարդը «Վարդ Երևանայ» ձևով հիշատակված է վանքի

մի այլ արձանագրության մեջ ևս: Նրանում ասված է. «Կաման ալ
ես պատրոն Վարդ Երևանայ ևսու գիւմ հայրենի այգին, որ Զմշկա
կոչի, ի հայր Պետրոս. և արարի ինձ որդի. և ևս հայր Պետրոս ևսու
ի սուրբ Լուստուրչիս, որ առնեն ի տարին Ը. ժամ, Գ. Վարդին, Գ.
Անիարին, որ հակառակ կա կամ այգոյն կամ ժամին յԾԸ իցն և
յուս սրբոց նզովեալ եղիցես»⁵:

Առաջին արձանագրության մեջ հիշատակված «Եմբեր»-ը ունի
սուրբորեն նշանակությունը և այդ արձանագրության «Վարդ Եմ-
բերն» ու Եմբերոյ արձանագրության սպատրոն Վարդ Երևանայ»-ը
միևնույն անձնավորությունն է: Արձանագրությունները թույլ են
տալիս ենթադրելու, որ Երևանի տերը կամ պատրոնը XIII դ. վեր-
ջերին և XIII դ. սկզբներին եղել է «Եմբեր» կամ սպատրոնն կոչված
Վարդը, որի տոհմական ժազման մասին առայժմ չունենք որևէ տե-
ղեկություն:

Վարդի ժամանակակիցն էր նաև պատրոն Սարգիսը, որը նույն-
պես երևանցի էր նրա դուստր Գուհարը բառ հիշատակության Գե-
ղարդի վանքին նվիրել էր 60 դահեկան⁶:

Գրեթե դրանց հետ միասին վիմազիր արձանագրություններում
հիշատակվում է նաև Երևանի պատրոն Դուլը, նրա մասին Գեղար-
դի ս. Աստվածածին վիմաբոր եկեղեցու վրայի արձանագրության
մեջ ասված է.

«Ես Դուլս և Երևանոս տանուտեարքս և պարոնայքս ի ժամ մա-
հուան Դուլիս գիր յդարեկեցար և զհայրն կուշեցար և նա իւր քահա-
նայիւր և եպիսկոպոսովքն հաղորչեցոյց և ի գերեզմանահանդոյց
ստաբր զսնկեկայքն իւր ընծայիւրն ի Ալրի վանս. Ասար ժամ Դուլի
և Վարդիեա Պատրիկե»⁷:

Դուլի անունով կան և այլ արձանագրություններ: Նա Երևանի
իշխանական տոհմի էր, «Վարդ Երևանոս»-ի տոհմակիցը⁸:

Նույն այդ ժամանակներում հիշատակվում է պատրոն Վաչեն,

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 262:

² Կ. Կոտայանց, Վիմակոն սուրբոր, էջ 231:

³ Մտեփանոս Օրբելյանից, Ստորագրութիւն հայատար մեծի ուխտն Այրի
զանց սրբոյն Գեղարդայ, էջ 8:

⁴ Նույն աեղը, էջ 50:

⁵ Գաւեզին աւելնախոյոսոս Յովսէփան, Խաղարակներ կամ Պոռնանք հայոց
պատմութեան մէջ, մասն 11, էջ 53—54:

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 264:

² Մտեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիրոսիան, էջ 360:

³ Նույն աեղը, էջ 397:

որը 1222 թվականին նորոգել է ավել Կեչառիսի վանքի ս. Նշան մատուռը: Գարեգին Հովանիսիանի կարծիքով այս վաշեն Երևանում բնակվող եպարհոս վարդ Երևանո, «Մխիթարի: որդի Գրիգորի: տոհմի ներկայացուցիչներից է և ոչ մի կապ չունի վաշուսյանների հետ»:

Երևանի վարչա-քաղաքական վիճակի մասին որոշ տեղեկություններ ունենք մոնղոլական տիրապետության շրջանի վերաբերյալ:

Մոնղոլներն առաջին անգամ Հայաստանում երևան են դալիս XIII դարի 20-ական թվականներին: Բայց դրանց այդ արշավանքը զինված հետախուզության քնուկ չէր կրում: 1236 թվականին նրանք կատարեցին իրենց առաջին արշավանքը, որի ընթացքում ավերակներ ու տիրապետեցին Հայաստանի հյուսիսային մասը: Անի մայրաքաղաքի հետ միասին՝ Մի քանի տարի դրանից անց, մոնղոլներն իրենց տիրապետությունն են հաստատում նաև Հայաստանի մյուս մասերում: Մոնղոլական արշավանքների ընթացքում ավերվում է անպտուղ տարածությունների կն վերածվում ամբողջական շրջաններ ու գավառներ, նրանք ստեղծում են մշտական տեղուրի, ավարատության, կողոպուտի և թալանիչ հարկային քաղաքականության ծանր ուժով, որի հետևանքով մեր երկիրը անտեսապես հետադիմում է կամ պարուն կանգառման շրջան: Այս տեսակետի մի որոշ բացառություն էր կազմում, նրանց Սյունիքը և տարածքից առևտրի ճանապարհների վրա դեմովող առանձին քաղաքներ, որոնք մասամբ արտաքին առևտրի և մասամբ էլ վարչական կարևոր նշանակություն ունենալու շնորհիվ որոշ ժամանակ պահպանում են իրենց նախկին նշանակությունը: Այդ քաղաքներից ոմանք ավերվել արշավանքներից հետո հաստատված համեմատաբար խաղաղ պայմանների ու լայնածավալ պետության առկայության շնորհիվ որոշ չափով առաջադիմում են:

Վարչակարգի մեջ սակայն մոնղոլներն իրենց զրաված երկրներում (չհաշված այն, որ երկրի վարչա-տերիտորիալ բաժանումը կատարում էին ուղղմական նպատակներից ելնելով) էական փոփոխություններ չմտցրեցին: Նրանք իրենց զրաված երկրներում ունեին տեղական ֆեոդալ-վասալները, որոնց միջոցով և կառավարում էին վարչա-տերիտորիալ փոքր միավորները: Մոնղոլական շրջանում գրեթե անփոփոխ մնաց նաև քաղաքների վարչական կառավարման սխեմները:

¹ Գաբելին արեպիսկոպոս Յովակիմով, *Քաղաքանք կամ Պոռնանք Հայոց պատմության մեջ*, մասն II, էջ 22:

Երևանի մոնղոլական շրջանի տեր-ֆեոդալներից հայանի է Սահմաղինը: Սահմաղինի մասին պահպանվել են մի ամբողջ շարք վիճակական արձանագրություններ: 1261 թ. վերաբերող արձանագրության համաձայն նա Սահիր-Գիվանիի և Քարիմանցիների հետ միասին Չաբաբյան Շահնաշի որդի Արզաղներից դնել է Անի քաղաքը և դարձել նրա պատրոններից մեկը¹: Իսկ դրանից երեք տարի անց 1264 թ. գնել է Երևան քաղաքը և այն դարձրել իր կալվածքը²: Սահմաղինի «քարեզործական» զործունեության մասին են պատմում 1273, 1286 և 1288 թվականներին վերաբերող վիճակագրական-գրությունները³: Սահմաղինի տոհմական շուրջազրույթում հայտնի է հայագիտությունը՝ նա պարուն Ավետիքի որդին էր, որից էլ սկսում էր նրանց տոհմի անունը: Պարոն է կոչվել նաև Ավետենց Սահմաղինի թոռը՝ Բեսութան, որը հիշատակվում է XIII դ. 90-ական թվականներին, իսկ որդիների մասին բացի տարածներից (Ավեր-բեկ և Հապար-բեկ) տեղեկություններ չեն պահպանվել: XIII դարի վերջերին և XIV դարի սկզբներին Երևանի տեր է համարված ոմն Հուսիկ, որի մասին ճովհաննաթյանի արձանագրություններից մեկում ասված է. «Տնանուն այ ևս Տէր Հուսիկ մերվանայ և ամուսին իմ Սուլթան խանում միարանեցաք. տուիր մեր հայալ զանձազին հայրենի այլին ի դունս սր Կարապետին, և սպասաւորքն խոտաւայուն ի տարուցն Դ. պատարաք, Բ. ինձ, Բ. կողակցին իմոյ. ով խափանէ վարձա Կայենի առջէ. ամէն»⁴: Հավանաբար Հուսիկը Սահմաղինի տոհմակիցը չէր, բայց նա իրեն կոչել է «Տէր Հուսիկ Երևանայ», որը անշուշտ ոչ թե հոգևոր իմաստով պետք է հասկանալ:

¹ Կ. Կոստանյանց, *Վիճակական տարեգիր*, էջ 106:

² Խաչի տեղը, էջ 126 և 130:

³ Սահմաղինի տոհմի, կոյան, որպիսության և զործունեության մասին մանրամասն տե՛ս Կ. Ղազարաբյան, *Երևանի կաթողիկոսի և երթաւայտ հուշարձանի արձանագրությունները*, 2ևՍ2 պատմության և դրակատարության ինտիմություն, «Տեղեկագիր», գիրք I, Երևան, 1938, էջ 165—172, 192, Ս. Բաբելոպոլյան, *Մի քանի դեմոստրացիաներ Երևանի կաթողիկոսի արձանագրությունների վերաբերյալ*, 2000 ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. դիտ.), 1947, Մ 5, էջ 71—72, Ազոտ Հովհաննիսյան, *Գրգուր-Տեղեկագիրը* (Հաս. դիտ.), 1947, Մ 5, էջ 208—210, Բաբելոպոլյան, *Քաղաքներից և արհեստներից Հայաստանում IX—XIII դդ.*, հ. II, էջ 130—131, 2. Թովմազյան, *Անի քաղաքի XIII դ. երկու արձանագրությունների մասին*, *Երևանի պետական պատմական, գիտական նշխարություններ*, հ. 47, պատմ. դիտ. սերիա, պրակ 2, 1955, էջ 89—104:

⁴ Կ. Կոստանյանց, *Վիճակական տարեգիր*, էջ 246:

այլ աշխարհիկ Այսիեքն՝ թվում է թե Հուսիկը եղև է ոչ թե հողոր առաջնորդ, այլ Երևանի պատրոններից մեկը, թեպետև արձանագրությունը վերջնական եզրակացություն չի տալիս:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքները, ինչպես ասվեց, պատկանել են առանձին ֆեոդալներին և ենթարկվել դրանց իշխանությունը: Կիրակոս Գանձակեցու մի վկայություններից երևում է, օրինակ, որ մոնղոլական առաջին արշավանքների ժամանակ Անիի տերը Զաքարյան Շահնշահն էր, քաղաքը ենթակա էր նրա իշխանությանը¹: Հավանաբար նույն կարգի ֆեոդալներն ու իշխաններ էին Երևանի համար նաև մեր կողմից հիշատակված Վարդը, Գուրը, Սահմազիբը և մյուսները: Վիճական արձանագրությունների մեջ Սահմազիբն իրեն համարում է «պարոն»², իսկ Վարդը՝ «պատրոն Երևանայ»: Միջին դարերում, խաչակիրների ժամանակներից Կիլիկյան Հայաստան և այստեղից էլ Մեծ Հայք մուտք գործած «պարոն» տիտղոսը միանգամայն համապատասխանում էր հայկական «իշխան»-ին, իսկ «պարոնաց պարոն»-ը, «մեծ պարոն»-ը կամ «պարոնաց պարոն»-ը՝ հայկական «իշխանաց իշխան»-ին, «մեծ իշխան»-ին³: Ընթացքովում է, որ «պարոն» տիտղոսը Հայաստանում ավելի վաղ է գործածություն մեջ մտել: Այն Հայաստան է մուտք գործել Բյուզանդիայից և ուներ «տես իմասար» Էնեյ այդ «պարոն»-ներն ու «պատրոն»-ներն էլ վարչական առումով կառավարում էին քաղաքները: Նրանց ձեռքին էր գտնվում քաղաքի վարչական ու տնտեսական կյանքը, նրանք իրավունք ունեին քաղաքի ներքին կյանքին վերաբերող օրենքներ հրապարակել, զատ ու զատաստան տեսնել քաղաքի ցեղակիների նկատմամբ, հսկել քաղաքի ավազների («եբրիցանտ») խորհրդի գործունեության վրա, սեթ քաղաքն այդպիսի խորհուրդ ուներ: Քաղաքի տեր ֆեոդալը իր օգտին հարկատու քնակությունից հավաքում էր հատուկ հարկեր:

Քաղաքի տեր-պարոններին ստորակրթվում էին այլ պաշտոնյաներ՝ «ամիրա»-ները (կամ էմիրներ, արաբերեն amir՝ «իշխան» բառից, որի իսկական իմաստն է՝ «գրամալոգ», տե՛ս է. Աճառյան), Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 119), որոնք Զաքարյանների և մոնղոլական տիրապետության շրջանում սովորական վերակարգուներ էին և կառավարում էին իրենց պարոնների կալվածքները: Տարբեր տեղերում ջրված կալվածքներ ունե-

նայու դեպքում միևնույն պարոնը կարող էր ունենալ իրեն ստորագրված մի քանի ամիրաներ: Սահմազիբի ժամանակ Երևանում հիշատակվում է Գեշմարդ կոչված ամիրան, որը միաժամանակ հսկել է նաև Սշականի կալվածքների վրա: Ամիրաների օգտին ևս քնակությունից հավաքում էին հատուկ հարկ՝ «ամիրայհարկ»: Քաղաքի ավելի սաղքին պաշտոնյաները հարկահավաքներն էին, որոնք սովորաբար կոչվում էին «բաժարար» կամ «գամջալի» (տառացի՝ կրե-թոլ, գրոմթոլ): Հարկահավաքների օգտին եույնպես հավաքել են հատուկ հարկ՝ «ձեռնածորի հարկ»: Հավանական են համարում, որ XIII—XIV դարերում Անիի նման Երևանում ևս շուկայի վրա նկատվել էր հատուկ պաշտոնյան՝ «մուխարիպ»-ը, որը հատկապես հսկել է շափ ու կշիռների վրա⁴:

Մեծ քաղաքների ներքին կյանքում XIII—XIV դարերում խոշոր դեր էր խաղում նաև քաղաքի ավազների խորհուրդը՝ «եբրիցանտ»⁵: Խ. Ա. Օրբելին իր աշխատություններից մեկում վկայաբերելով պատմագիրների հիշատակությունները, վիճակի արձանագրությունները և այլ նյութեր, ցույց է տվել, որ, օրինակ, Անին տներ որոշ ինքնավարություն և որ այդ ինքնավարության օրգանը «եբրիցանտ» էր, քաղաքի ավազների խորհուրդը⁶:

Երևանում «եբրիցանտ»-ի գոյության մասին չկա որևէ հիշատակություն: Է. Ժամկոչյանը թեպետև իր ձեռքի տակ չունի համապատասխան փաստեր, սակայն երկրի քնդհանուր դրությունից երևելով ենթադրում է, որ հասարակական այդպիսի օրգան այստեղ ևս XIII—XIV դդ. պետք է գոյություն ունեցած լինել⁷: Այս կասկածնությունը ևս վկայակոչում է XV դ. վերջերին վերաբերող մի հիշատակարան, որը, մենք կարծիքով, որևէ չափով չի կարող հիմք լինել XIII—XIV դարերի համար: Ասկայից XIII դարին վերաբերող մի վիճակի արձանագրություն, որը ևս քաջ հայտնի է Է. Ժամկոչյանին, բայց այդ ստիժով չի արժանանել նրա ուշադրությանը, դալիս է որոշ չափով պարզություն մտցնելու շոշափվող հարցի մեջ: Այդ արձանագրությունը, որն արդեն մեջ է բերված մեր կողմից, սկսվում է հետևյալ ստղերով. «Ես Գույս և Երևանո տանուտեաբբոս և պարոնայբաս»⁸: Ինչպես այդ արտահայտությունը, այնպես էլ արձանագրության հե-

¹ Կ. Կոստանյանց, վիճակում տարեգիր, էջ 130, 221 և 226, է. Ժամկոչյան, Երեւանը XIII—XIV օր., էջ 66—68:

² Անգո, P. Ա. Օրբելի, Անույ ակադեմիկները, Վարդաշապատ, 1911, էջ 25—26:

³ Է. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV օր., գրս. աշխ., էջ 75—76:

⁴ Ասեփանաս Միլիբուրեանց, Ստորագրութիան հուշակալոր մեծի տեսին Ալքի պատեց սրբոյն Գեղարցայ, էջ 8:

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Փիֆլիս, 1910, էջ 244:

² Տե՛ս է. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV օր., գրս. աշխ., էջ 64:

տագա անբար ցույց են տալիս, որ Երևանի «սանտարի»-ներ և «պորոն»-ներ հասկացողության տակ պետք է հասկանալ բազմաթիվ պարզեցիկ խալի ներկայացուցիչներին ընդհանրապես և որ դրանք ամենայն հավանականությամբ կազմում էին Երևանի այդ շրջանի «երիցանին», ավազների խորհուրդը, նման Անիի «երիցանուն», բայց սովին սահմանափակ իրավունքներով և մի փոքր այլ կազմով:

Տեր-Ֆեոդալից և նրա ստորագրատու պաշտոնյաներից բացի, մոնղոլական տիրապետության շրջանում, զավառներում ու բաղաբներում մոնղոլական կենտրոնական պետության կողմից նշանակված էին հատուկ պաշտոնյաներ, որոնք կոչվում էին «շահնայ»-ները՝ Վերջիններս զինվորական կառավարիչներ էին և պատասխանատու էին սովյալ բաղաբի կամ զավառի վարչական գործի համար: Նրանց ձևերի էր գտնվում նաև բնակչության զանազան պատիժների ենթարկելու, պետական ճարտիքը ժամանակին ու անթերի հավաքելու գործի հսկողությունը՝ Ուշ շրջանում՝ XVІІІ—XІX դդ. «շահնայ» էր կոչվում սոսկ ճարտահավաքը: XІІІ—XІV դարերում Երևանի էլ լինելով վարչական շրջանի՝ զավառի կենտրոն բաղաբ այստեղ էլ, ինչպես ճիշտ կերպով ենթադրել է Զ. Ժամկոչյանը, մոնղոլական պետության կողմից նշանակված էր հատուկ «շահնայ», որը կատարում էր նշված պարտականությունները:

2. ԲԱՂԱԲԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԿԱՐԳՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ և ՈՒՆԵՐՔԻՆ ԿՑԱՆՔԸ

Հողի առ ու վաճառք: Հողի չափան միավորները: Հողի զինք: Հողափոխության ձևերը X—XІІ դարերի երևանում՝ խաչոռ ու մանր մասնատրակական և վաճաբատրակական հողեր: Վաշխառուական կապիտալի գործունեությունը: Քաղաքի գյուղատնտեսական նյութերի վիճակը, ռոզման պայմանները, հողերի պարտացուցումը, այցեգործությունը և գյուղատնտեսական մյուս նյութերը: Արհեստներ և տնայնագործական տիպի մանր ձևերակությունները (ջրաղացներ և զինեգործական արհեստանոցներ): Ասետուրք, առևտրի հանապարհները, քաղաքի խանութ-կոպպակները, առևտրականների կարգերը, առևտրի հսկումը բազմաբանների, իշխանների և ֆեոդալների կողմից, անասունների, տների, մզգի և այլ ապրանքների վաճառք: Գրամի միավորները և երևանում ու նրա շրջակայ-

ում հայաբնակավայրում օտարերկրյա դամբներ, առևտրից զանազան հարկեր (մաքս): Քաղաքի բնակչության սոցիալական կազմը, աշխատանքի և եռլուր ֆեոդալների շեռու, արհեստավորներ և առևտրականներ, ագառ գյուղացիներ, մշակներ, վաճակներ, ծառայողներ և աղախներ: Գրեց սոցիալական և տնտեսական վիճակը: Հարկերը, «պտուղ», «չար», «խալե», «չարխառ» կոչված հարկերը և հարկադիր աշխատանքներ

X—XІІ դարերի վիճակը արձանագրություններում բազմաթիվ զեյպեր են հիշատակված երևան բաղաբում այդիների առ ու վաճառքի մասին: Առաջին խոշոր գործարքը պետք է համարել Ալի-տանց Սահմազինի կողմից Երևան բաղաբի զեռում իր հողով ու ջրով Այդ խոշոր գործարքի մասին եղած արձանագրությունը հայտնաբերվեց մեր դարի 30-ական թվականներին, Երևանի կաթողիկոս եկեղեցու նորահայտ հուշարձանի հնարկական ուսումնասիրության ընթացքում: Արձանագրությունը վերաբերում է 1264 թվականին և ըստ 4. Ղաֆաբարյանի վերծանման ունի հետևյալ տեքստը.

«Ի Բ (վիս) ՉԳԳ ա(ստուծո)յ ողորմութ(կամ)քս ու նըլախին ստուծոյն և ջրով և իրաւունք զայս արարի, հայրենիք որ զեռն էլանի ու զիր առած վկայութ որ զահիսքն տուած կամ հայրենիք որ փոխած լինի ու մին տարի քնցն(ա)լ լինի այլ յեա շահանի Թէ ով էր (թէ ով որ) ծոկ կամ մարդ որ ի խամութ(ան) վերա կաշառք առ թէ սուտ է ու թէ զորդ զկաշառնառնողն տայ—ով այս բանին հակառակ ու զայս գրեալս իսպանկ չերից ս(ուր)ք ժողովոցն նդով(ե)ալ եղիցի, մասն զվոյզայի ժառանկ է ա(ստուծո)յ խոտլութի(ն) անկանի և ամէն չարդէ նալաթ իրեն վերա»:

Այսպիսով Սահմազինը այդ արձանագրությանը ոչ միայն հաղորդում է Երևան բաղաբի իր հողով ու ջրով զեռնու մասին, այլև կարգ է սահմանել այստեղ կալվածքների վաճառելու համար: Ըստ այդ կարգի, զեռն կալվածք օրինական է համարվում միայն այն ժամանակ, երբ վկայներով հաստատված փաստաթուղթ է ներկայացվում ֆեոդալական բնատուրքը՝ զահիսկը տրված լինելու մասին: Իսկ փոխանակման զեյպում կալվածքն այլևս չի կարող վերագարվել, եթե զործարքի օրից արդեն անցել է մեկ տարի: Այդ և

1 Զ. Ղաֆաբարյան, Երևանի կաթողիկոսի և նորահայտ հուշարձանի արձանագրությունները, ՀեՍՀ պատմության և գրականության ինստիտուտ, «Տեղեկագիրք», գիրք 1, Երևան, 1938, էջ 171—172:

1 Զ. Ժամկոչյան, Երևանը XІІІ—XІV դդ., գիրք աշխ., էջ 68—73:

որիչ զբաժնոր վկայություններում կազմածքների առ ու վաճառքի մասին եղած ավայաները նկատի ունենալով՝ 4. Չափազարտանք միանգամայն միշտ կերպով նկատում է, որ «այդ շրջանում կազմածական վեճերը անտարախանացած Ֆեոդալների երկալու հետևանքով իրան շատացել էին և հարկավոր էր հատուկ կարգեր սահմանել հողերի առուժախոր և փոխանակումը կարգավորելու համար»¹:

Իբրև որ, այդ դարերում դրամական անասությունյան զարգացման հետևանքով մի կողմից ուժեղացել էր վաշխատուական կապիտալի զործունեությունը², իսկ մյուս կողմից՝ հողերի ու այլ կարգի կազմածքների առ ու վաճառքը դարձել էր շատ սովորական երևույթի: Եվ իզուր չէ, որ Մ. Գոշի գատաստանագրքում «Ճազգազատաստանաց վաճառողաց և զնողաց դերկիր» վերնագրի տակ հատուկ հորված է սահմանված այդ կարգի զործարքների համարում: Եվ ազրապատացի եղբայր բո որ բնդ լեղիցել եւ վաճառիցել ի կալուածոց իւրոց,— գրում է Մ. Գոշը,— եւ եկեղծ մերձատորքն ու մերձատոր իցել ետրա եւ փրկիցել վրձաւաւ եզոր իւրոց: Ապա իցել ուրուք մերձատորիչ, եւ ձեռնահաս իցել եւ զտանիցի նմա բաւական փրկանաց իւրոց, եւ համարիցի զամս վաճառի իւրոյ եւ հատուցել կարողն աննն՝ որում վաճառեաց եւ զարձցի ի կալուածս իւր: Ապա թէ ոչ զացի ի ձեռին նորա բաւականն առ ի հատուցանելոյ նմա, եղիցի վաճառ նորա այնմ որ ստացան զնա մինչեւ յամն թողութեանն իւրոյ, եւ եղիցել յամին թողութեանն եւ զարձցի անդրէն ի կալուած իր»³, իսկ մի փորո անց շարունակում է. «Եթէ վան աղաքատութեանն ի կալուածոց վաճառ, եղիցին փրկանոր յազգատահել իւրձ մինչեւ լեւթն ամ ըստ օրինացն: Զեւթն ամ եղար, բայց առաւելուր սրբան կարէ— արթան է. զի ոչ թողու ազատ ըստ օրինացն, զորի զեւղ էր թողու նման օրինացն ազատու: Իսկ եթէ ոչ կարիցել փրկել լեւթն ամ անց յաւաք, հաստատիքի Ժաճանն: Ապա թէ ըստ այլոց պատճառի վաճառն իցել ի նմին ամի հաստատիցի»⁴:

Գատաստանագրքի մեջբերված հատվածից պարզ երևում է, որ կազմածք վաճառելը, գրավ դնելը և նույնանման այլ զործարքների զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում շատ սովորական էին և օրենքով հատուկ կանոններ էին սահմանված վաճառքի ու զնման հաստատման կարգի, ժամանակի, վաճառողի ու զնոցի իրավունքների, փրկագնան և այլնի վերաբերյալ: Գծվար չէ նաև

տեսնել, որ Սահմանդինի վերը նշված կարգավորությունն էլ բնդհանոր առամք երևում էր այդ բնդհանոր օրենքից և հաստատաստասխանում էր դրան:

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է նաև, որ վաճառքի կամ նվիրատվության ժամանակ որոշ զեւթերում իր համաձայնությունը պետք է տար և կինը⁵, թեպետ այդ, ինչպես երևում է, բնդհանոր օրենքի ուժ չունի:

Երևանում այդ դարերում կատարված հողի առ ու վաճառքի և նվիրատվության զործարքներից մեզ հայտնի են մոտ 20-ը⁶: Գրանք դրեթն բացառապես վերաբերում են վանքերին ու եկեղեցիներին նվիրված կազմածքներին՝ այգիներին և անշարժ այլ գույքերին: Վանքերին ու եկեղեցիներին կազմածքների նվիրելու մասին հարկ է եղել հիշատակել վիճադիր արձանագրություններում, նշելով կազմածքի քնույթը, բանակը, նվիրատուի անունը և այլ կազմածքների համար նրան ու հարազատներին նվիրվող պատարագների մասին: Մյուս բազմաթիվ զեւթերից հատուկ արձանագրությամբ ազգարարվել է միայն Սահմանդինի կողմից երևանք իր հողով ու չրով դնելը: Հողի առ ու վաճառքի, գրավ դնելու և այլ կարգի մասնավոր մյուս բազմաթիվ զործարքների մասին, որոնք կատարվել են նշված կանոնների հիման վրա, հարկ չի եղել նշել ոչ վիճադիր արձանագրություններում և ոչ էլ պատմագրական երկերում: Այս կարգի զործարքները հավանաբար զրա կարիքը էին էլ զգում: Վաճառված կազմածքը պարզապես գտնում էր նոր տիրոջ զանձապին սեփականությունը և ոչ ոք իրավունք չունիր դրվել նրան այդ իրավունքից: Ուրիշ բան էր վանքերին նվիրվող կազմածքների հարցը, որը կարող էր նախկին տիրոջ հետագա սերունդների կողմից վիճարկման առարկա դառնալ, ինչպիսիք մեզ այնքան շատ հայտնի են հատկապես XVII—XVIII դարերից: Այս պատճառով էլ դրանց մասին գրավոր ակտերից բացի, սովորաբար նշվում էր և վիճադիր արձանագրությունների մեջ: Նույն կարգի սփատաթղթերը⁷ էին ստեղծվում նաև խոշոր զործարքների վերաբերյալ, որի զայտուկ

¹ ՏՆ՝ Կ. Կոստանյանց, Վեճական տարիքի, էջ 246, Սեփական Միթրաբունց, Ստորագրութիւն հուլիսուր մեծի ուխտի Արքի վանաց..., էջ 9, Գուեզին Նովկիկան, Խաղաղութեւն..., մասն 11, էջ 63:

² ՏՆ՝ Սեփական Օրէնքիսն, Պատմութիւն Խաւսեղին Սրապան, էջ 179—180, Կ. Կոստանյանց, Վիճակի տարիքի, էջ 5, 43, 46, 58—59, 64, 68, 144, 246, Սեփական Միթրաբունց, Ստորագրութիւն հուլիսուր մեծի ուխտի Արքի վանաց..., էջ 9, 29, Գուեզին Նովկիկան, Խաղաղութեւն..., մասն 11, էջ 62, 65, Կ. Ալիշան, Արքաբա, էջ 267, Շիրակ, էջ 25, 117, Կ. Կաֆուջարյան, Հովհաննես վանքի և նրա արձանագրութիւնները, էջ 30, 248 և այլն:

³ ՏՆ՝ «Տեղեկագիր» Հեռձ պատմ. և գրակ. ինստիտուտի, 1938, փրք. էջ 171:

⁴ Կ. Ա. Մանանյան, Օ Կորգաւ և Գործախ Մարտիս..., էջ 127:

⁵ Միթրաբունց Գոշի Գատաստանագրի Էջոց, Վազարապատ, 1880, էջ 362:

⁶ Նույն անգր., էջ 363:

օրինակը կարող է լինել Սահմագրի կողմից Երևանն իր հողով ու չբով զնելու մասին վերը վկայակալված վիճադիր բնդարձակ արձանագրությունը: Այստեղ նույնպես սոցյալական փաստաթուղթը ստեղծելու կարիքը դառացվում էր: Սահմագրին ու իր նմաններն իրենց «օրինական» կալվածքների և կատարած քրտերգործությունների» համար հարկ էին համարում թողնել վիճադիր արձանագրությունները:

Ուշագրություն արժանի է այն, որ Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի ամենագլխավոր արտադրամիջոցից՝ հողից բացի վաճառքի առարկա էր նաև ջուրը, ինչպես այդ պարզ երևում է Սահմագրի արձանագրությունից: Ամենայն հավանականությամբ վաճառքի ենթակա էին միայն արհեստական ոռոգման ցանցի՝ առուների, ջրամբարների և այլնի ջրերը:

Միջին դարերում ուրիշ երկրների նման Հայաստանում ևս գոյություն են ունեցել հողերի, այգիների ու ցանքերի շափման բաղձատեսակ միավորները՝ օրավար, «առու-այգի», կապիճ և այլն, որոնցից շատերը շատ անորոշ են: Այսպես, օրինակ՝ օրավարը Արարատյան դաշտում և լեռնային շրջաններում իրարից մեծ չափով տարբերվում էին, իսկ «առու-այգի»-ն, որ հիշատակված է Մյունխայ Սուփան իշխանի կողմից 901 թ. Մարենիսի վանքին տրված կալվածքների շարքում («...ետու և 5 կուղպպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի»)՝ մեղ համար մնում է լրիվ անորոշ: Սակայն հաճախ այս կամ այն կարգի հողամասերը նշվում են միայն իրենց թվական քանակությամբ: Այդ հատկապես վերաբերում է այգիներին: Արձանագրություններում և պատմագրական երկերում այգիները որպես կանոն հիշատակվում են միայն հատով, առանց դրանց տարածական շափը նշելու: Միայն պետք է ասել, որ հատով հիշատակված այգիները (տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Երևանի այգիներին) հավանաբար բավական մեծ տարածություն էին զբաղում: Այլպես ըստ Միլլետոս Երևանցուց 1163 թվականին գնված և հետագայում Կեչառիսի վանքին ընդամենը $\frac{1}{2}$ այգի նվիրելը և դրա մասին հատուկ արձանագրություն թողնելը¹, մասնավորապես, կեն նկատի ունենանք նաև այն, որ այդ նույն

$\frac{1}{4}$ այգու վերանորոգման և կրկին նույն վանքին նվիրելու մասին պատրան վարդ Ըմբերը նույնպես (1204 թ.) թողնել է վիճադիր արձանագրություն: Եթե $\frac{1}{4}$ այգին կարող էր դառնալ հիշատակության արժանի նվիրատվության առարկա, ապա այն պետք է ունենար զգալի մեծություն: Այլ կերպ ասած, լրիվ այգին բոտ երևույթին բավական մեծ տարածություն էր զբաղում:

Հողի և հեղանյութերի շափման համար հիմնական միավորները մեկը, թեև ևս ամենահիմնականը կապիճն էր, որը ցորձածության մեջ է եղել ուրարտական ժամանակներից ի վեր և տարբեր դարերում ու տարբեր տեղերում հավանաբար ունեցել է տարբեր չափ: Մեր մատենագրության մեջ կապիճը հաճախ գործ է ածվել և նույնանման, բայց այլ չափ ու բովանդակություն ունեցող թարգմանության ենթակա օտար շափերի փոխարեն²:

Միջնադարյան Հայաստանում կապիճը որպես տարածության և հեղանյութի չափ հատուկ ուսումնասիրության է ենթարկել Ս. Բարխուդարյանը, որի համար առիթ է ծառայել Երևանի կաթնոցիկն եկեղեցու 1318 թ. վերաբերող արձանագրությունը: Կ. Ղաֆաղարյանը այդ արձանագրությունը հետևյալ կերպ է վերծանել. «Գամալ բարբարին ա(ստուծոյ) և ողորմութ(ևամ) ր ա(ուր) հողոյն ևս Գորք մեղուցեալ ծառա ա(ստուծոյ) և ամուսին իմ Դաւաթ միբարանեցաք Երևանու ժամատեղացս և ավաք Ի Նորագաւիթ գմբ հողն որ ի դիւալկանն է Մ (50) կապիճ տեղ և սպասաւորս խոստացան ի տարին ր պատարաղ դա (դմէկն) ինձ առնեն և դա (դմէկն) Դաւաթին: Կատարիւքն ա(ր)Նի(ն) յա(ստուծոյ) Չէէ³: Արձանագրության մեջ հիշատակված կապիճը համեմատելով պարսկական քեֆիրի և հաշվի առնելով նախորդ ուսումնասիրությունների արդյունքները, Ս. Բարխուդարյանը գալիս է այն կարակացություն, որ միջին դարերում մեղ մոտ կապիճը որպես կշռի միավոր (հեղանյութերի համար) հավասար էր շուրջ 980 գրամի (ա(կ)ի շէզգրիտ՝ 979 $\frac{1}{2}$ գրամի), իսկ իբրև տարածության միավոր այդպես ցորեն ցանվող հո-

¹ Ասեփանոս Սրբեկեան, Պատմութիւն Նահանգին Սրահան, էջ 129, Կ. Առաստակյանց, Վիճական տարեգիր, էջ 5:
² Տե՛ս օրինակ, Կ. Առաստակյանց, Վիճական տարեգիր, էջ 5, 23, 46, 58—59, 64 և այլ բաղձաթուղթ անկերում:
³ Արձանագրությունը տե՛ս երկուց Տառնալիզ, Հին Երևանը, էջ 75:

¹ Կ. Առաստակյանց, Վիճական տարեգիր, էջ 46, Կ. Այվազ, Արարատ, էջ 267:
² Ս. Բարխուդարյան, Մի քանի գիտություններ Երևանի կաթնոցիկն եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, 2000 ԳԱ «Տեղեկագիր» (Նաս. գիտ.), 1947, № 5, էջ 76—76:
³ Նույն տեղը, էջ 76:
⁴ Կ. Ղաֆաղարյան, Երևանի կաթնոցիկն և նորահայտ հուշարձանի արձանագրությունները, Չե՛ՍՍ պատմ. և զբաղ. ինստիտուտ, «Տեղեկագիր», գիրք 1, էջ 180:

դատեղի¹, որն միջին հաշվով մեր կարծիքով հավասար կլինի մոտ 100 քառ. մետրի:

Վերջ մեջերևում կաթողիկեի 1318 թվականի նույն արձանագրությունը (որը չգիտենք ինչու Ս. Բարխուղարյանը համարում է 1301 թ. արձանագրություն) հնարավորություն է տվել Ս. Բարխուղարյանին² մեր կողմից նշված հողվածում լուծելու նաև մի այլ կարևոր հարց³ հողի միջին զինը Հայաստանում XII—XIV դարերում: Նա նկատի ունենալով, որ այդ դարերում, ինչպես ցույց է տվել բանասեր Քաղևու Ալիզաբեկյանը², մեկ պատարագն արժեք միջին հաշվով 20—25 դահեկան և այն, որ քստ արձանագրության 50 կապիճ սերմացուի տեղ հողն արժեք 2 պատարագ, միանգամայն ճիշտ կերպով եզրակացնում է, որ 50 կապիճ հողն այդ դարերում արժեք 50 դահեկան, այսինքն՝ մեկ կապիճ հողն մեկ դահեկան³: Մենք վերջ նշեցինք, որ մեկ կապիճը իբրև տարածության միավոր հավասար էր մոտ 100 քառ. մ.-ի, իսկ իբրև կտի միավոր⁴ 980 քրամի: Այստեղից պարզվում է, որ 50 կապիճը տարածությանը արտահայտված մոտավորապես հավասար էր 5000 քառ. մետրի, այսինքն՝ կես հեկտարի: Այլ կերպ սասած, XII—XIV դարերում Հայաստանում մեկ հեկտար հողատարածությունը միջին հաշվով արժեք 80—100 դահեկան:

Միայն պետք է նորից հիշեցնենք, որ այդ թվերը խիստ մոտավոր են և երկրի տարրեր տեղերում ու տարրեր ժամանակներում արտահայտվել են տարրեր մեծություններով: Որպեսզի այդ մեկ սնդղամիջ հալտանի դատեն, անհրաժեշտ ենք համարում մեք բերել Քաղ. Ալիզաբեկյանի կազմած ամփոփիչ աղյուսակը այն ձևով, խելով ու հարմարեցնելով մեր նպատակներին, բայց անշուշտ առանց որևէ աղավաղման (տե՛ս աղյուսակ № 1):

Ինչպես տեսնում ենք, մեկ պատարագի դրամական արժեքը քստ աղյուսակի առանձնում է 9¹/₆ դահեկանից (նվազագույնը) մինչև 45 դահեկանի (առավելագույնը) մինչև Ուլում ենք ասել, որ այդ թվերը մեծ տատանումներ ունեն և ոչ բոլոր գեղեքերում կարող են հիմք հանդիսանալ պատարագի արժեքներով հողի ընդհանուր

Ըստ վիճագիր արձանագրությանների վաճեմիք տրված գումարները և զրանց զինաց ստացված պատարագները նեխյակ պատկերն են ներկայացնում⁵:

№	Մեք վաճեմիքն է արված	Քանի՞ դահեկան է նվերվել	Այդ գումարի զինաց բանի պատարագ է արվել	Որքան է կազմում մեկ պատարագի միջին զինը
1	Ալիզաբեկյանը	2220	102	21 ¹ / ₃
2	Ազոց	20	1	20
3	Արզական	220	24	9 ¹ / ₄
4	Բազմաբ	180	4	45
5	Փոցավանք	140	7	20
6	Չոնկի բարձրաբաշ	20	1	20
7	Թանահատ	200	9	22 ¹ / ₃
8	Կելահա	290	6	33 ¹ / ₃
9	Հազրատ	305	20	15 ¹ / ₄
10	Հավուրթ թառ	100	4	25
11	Հոռոմար	50	3	16 ² / ₃
12	Հառոն	175	5	35
13	Մախարախանք	100	4	25
14	Նորավանք	180	5	36
15	Չորոտ	40	2	20
Ընդամենը, բոլոր զինքերի միջինը		4150	197	21 ¹ / ₃

միջին զինը որոշելու համար: Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև, որ Երևանի ու Արարատյան դաշտի հողերը, լինելով չրովի և ավելի արգավանդ, անշուշտ ունեցել են ավելի բարձր զին, քան Հայաստանի նախալիտնային և մանավանդ լիտնային շրջանների հողերը: Այդ պատճառով էլ, եթև Երևանի ու Արարատյան դաշտի հողերի համար Ս. Բարխուղարյանի կողմից պարզված զինը միանգամայն ընդունելի է, ապա նրա այն եզրակացությունը, թե՛ «Արարատյան դաշտի համար ստացված այդ զինը կարող է իրավամբ, ի որը ստանաումներով ընդունվել ֆեոդալական Հայաստանի XII—XIV դարերի համար որպես հողի միջին ընդհանուր զին», չի կարող առարկության չենթարկվել:

Սկզբնաղբյուրների վիճարկություններից պարզ երևում է, որ X—XIII դդ. Երևանում գոյություն ուներ երեք կարգի հողատիրություն՝ մասնատիրական խոշոր, մասնատիրական մանր և վանքա-

¹ Տե՛ս ՇՄԹ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 5, էջ 75—78:
² Քաղ. Ալիզաբեկյանը, Մի գաղտնիք հայ վիճակն արձանագրությունների մեջ ու նրա էջանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, «Տեղեկագիր» № 262 Գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, էջ 63:
³ Ս. Բարխուղարյանը, Մի բանի զիտագրություններ Երևանի Հնամոտիկե էկեդեզիա արձանագրությունների վերաբերյալ, ՇՄԹ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 5, էջ 72—74:

⁵ Տե՛ս «Տեղեկագիր» ՇՄԹ Գիտ. և արվեստի ինստ., 1927, № 2, էջ 63:

պատկան: խոշոր հողատերերից էին այլ առիթներով հիշատակված Ստեփանց Սուփան իշխանը, որը 901 թվականին Երևանից Մարտիրոս վանքին է նվիրել 5 այգի¹, Ապիրտա իշխանը (XI դ.), որը հիվ երևանում սեփական խոշոր կալվածքներ չունենար հաղիվ թե հաներ նրա հիշատակության արժանի մեծ առուններից մեկը, և այլը:

XII—XIII դդ. գնման, ժառանգելու, վաշխատական գործունեության և այլ եղանակներով ավելի է մեծանում Երևանում խոշոր հողատերերից ունեցողների թիվը: Վիճադիր արձանագրությունների հաջորդած ավյալներից երևում է, որ Երևանից զանազան վանքերի կալվածքներ (այգիներ, տներ և այլն) նվիրողների մեծ մասը եղել է խոշոր հողատեր: Դրանց թվում են XIII դ. սիրպրների² Զարարե սպասալարի եղբայրը, ում Սերոբ Երևանցի³, Տիգրան Զոնեցը, և որը դարի ամենահայտնի դրամատերերից, վաշխատներից և կալվածատերերից մեկն էր⁴: Հավանաբար նույն կարգի հողատերեր էին նաև Միթիբարը, Հուսիկ Երևանցին, Պետրոսը, Աստուր, Գուր և ուրիշներ, որոնք ևս «հողու փրկության» համար իրենց կալվածքներից բաժին են հանել ժամանակի գործող վանքերին: Իսկ XIII դ. վերաբերող մի արձանագրությունից երևում է («Ես Դոզա և Երևանայ տանուտեալս և պարոնայս...» և այլն)⁵, որ խոշոր հողատեր տանուտերներն ու պարոնները փոքր թիվ չէին կազմում: Սակայն այդ ժամանակների Երևանի ամենախոշոր հողատերն ըստ երևույթին Ավետիսյան Սահմադին էր, 1264 թվականին Երևանն իր «հողով և ջրով» գնողը⁶: Սահմադինն իր դարի ամենահայտնի «ճեմատուն»-ներից էր: Նա խնամիական կապերով կապված էր պարոն Ումեկի հետ: Զարեհհամալարությունը, դրամով գնելու, վաշխատական գործերներով և այլ եղանակներով Սահմադինը դառնում է XIII դ. երկրորդ կեսի խոշոր ֆեոդալներից ու փոզատերերից մեկը: Նա 1261 թվականին Շահնշահ Զաքարյանի որդուց

գնել էր Մրենը, որտեղ 40.000 դահեկան ծախսերով 1276—1286 թթ. կառուցել էր իր պարոնական աթոռանիստ-ամառանոցը⁷, «որպիստ» կառույցում պարոնզով հանդերձ, նա և նրա զավակներն ու թոռները պարոնություն էին անում նաև Օշականում, նա ուներ «բարձաբազրի ֆեոդալի դիրք ու պատիվ»: Սահմադինի կալվածատիրական և պարոնական իրավունքները չէին սամանափակվում միայն Օշականով և Երևանով: Սահմադիական և Քարեմադինի հետ միասին Սահմադինը փաստորեն տեր էր նաև Անի քաղաքին⁸:

Սահմադինի Երևանում ունեցած սեփական հողատարածությունների բնույթի հարցը սակայն վերջնականապես չի լուծվում: Նրա 1264 թվականի կաթողիկոսի վրա թողած արձանագրության մեջ մի կողմից ազգարարվում է, որ ինքը գնել է Երևանն իր հողով և ջրով, իսկ մյուս կողմից կարգ է սահմանում դահիակ կալված (վաճառքի) հարկը նախորդ տարու դեպքում յուրաքանչյուրին իրավունք տալ ազատ վաճառք հանել էր «Տայրներից»⁹, 2. Ժամկույսանը քննարկելով այդ հարցը գալիս է այն եզրակացություն, որ Սահմադինը, Երևանը հողով և ջրով գնելով, դառնում է նրա տերը և ձեռք բերում հողային սեփական, արտադրող և վաճառվող ապրանքներից հարկ և հպատակներից ֆեոդալական տուրքեր գանձելու իրավունք¹⁰: Իսկ նույն հարցին վերաբերող իր ենթադրությունը Աշոտ Հովհաննիսյանը ձևակերպել է հետևյալ կերպ. «Պիտի կարծել, որ Օշականում և Երևանում Սահմադինի իշխանության աղբյուրը նրա դրամաբանն էր: Դրամի ուժով նա տիրանում էր հողին ու ջրին, մասնավոր բարեգործությունների ուսկի շղթայով ամրացնում «չպատակների պարոնային ֆեոդալական «Տայրների» ու կալվածատիրության «պարոնական» յուժը»¹¹:

Որ Երևանում Սահմադինի ձեռքբերումները կատարվել էին «դրամաբան»-ի ուժով դա կասկածների ենթակա չէ և պարզ ասված է նշված արձանագրության մեջ: Անուհետև, կասկածների ենթակա չէ նաև այն, որ Երևանի հողի ու ջրի մեծագույն մասը Սահմադինը գնել էր դրանցից ստացվող «ֆեոդալական ունեռան» իր իրավունքը դարձնելու պայմանով: Կարծում ենք, որ ֆեոդալա-

¹ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Եւսահայնի Միտական, էջ 179—180,

² Աստանյանց, Վիճական տարեգիր, էջ 5:

³ Ա. Աստանյանց, Վիճական տարեգիր, էջ 43, 46, 141, Գ. Ավրան, Այբարատ, էջ 267, Շիրակ, էջ 117:

⁴ Ա. Աստանյանց, Վիճական տարեգիր, էջ 58—59, Գ. Ավրան, Շիրակ, էջ 75: Տե՛ս նաև Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, 1952, էջ 149—151:

⁵ Ստեփանոս Մխիթարեանց, Ստորագրութիւն հոշակավոր մեծի ուխտին Այրի վանաց, ..., էջ 50:

⁶ Ա. Աստանյանց, «Տեղեկագիր» ՀեՅՍՍ պատմ. և գրական ինստիտուտի, 1938, գիրք I, էջ 171:

¹ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմությունից, գիրք I, էջ 208—210, Բարկեն Առաժնեյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. II, էջ 55—56 և այլուր:

² Տե՛ս «Տեղեկագիր» ՀեՅՍՍ պատմ. և գրական ինստ., 1938, գիրք I, էջ 171:

³ 2. Ժամկույսան, Երևանը XIII—XIV դարերում, թեկն. դիւ., էջ 96:

⁴ Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մարտի պատմությունից, 4. I, էջ 210:

կան սենտալի իրավունքի զնուսից բացի, քաղաքում Սահմադիր իր «գանձագին-հայրենիք»-ն էր դարձրել նաև որոշ հողատարածություններ: Այսպես անհնար է բացատրել այն իրողությունը, որ Երևանում սեփականատերեր են հիշվում Սահմադիրից հետո նրա սահմի այլ ներկայացուցիչներ, որոնց մասին սակից մի ուրիշ աղբիթով էիք ահադ. Ա. Հովհաննիսյանն էլ իր եզրակացություն մեջ «Ֆեոդալական «Տայրենիք» ու կալվածատիրության «պարոնական» լուծը» հասկացություններն օգտագործել է նշելու համար, որ Սահմադիրը Օշականում և Երևանում ուներ գանձագին «Տայրենիք» և Ֆեոդալական սենտալի իրավունքով կալվածքներ, այսա մեզ մնում է միայն համաձայնել դրա հետ:

Բայց միանգամայն անորոշ է, թե Սահմադիր ումից է սերվանք գնել իր հողով և չրով և ինչքան է վճարել դրա համար թվում է, թե նրա արձանագրության մեջ «Աստուծոյ ողորմութեամբ և կղզին ուժով...» արտահայտությունը (այսինքն՝ կլխանի թուղտովվաճար) ցույց է տալիս, որ Երևանը մինչ այդ պետական սենտալ հողված կալվածք էր, այսպես մոնղոլական կղանի համայնություն կարիք չէր լինի և առավել ևս հարկ չէր լինի այդ մասին արձանագրության մեջ նշելու:

Թե ինչպիսի տնտեսություններ զուլություն ունեին Երևանում այն խոշոր մասնատիրական կալվածքներում մեզ համար մնում է անհայտ: Ակզբնադրյալների մեջ որևէ հիշատակություն կամ ակնարկ չկա այդ դարերի Երևանում տերունական խոշոր տնտեսությունների մասին: Սակայն ամենին չի կարելի կասկածել, որ դրամական տնտեսության, առևտրի և քաղաքային կյանքի բուռն զարգացման այդ շրջանում չէր կարող Երևանի պես արգավանդ հողեր ու վարձաված աչիկներ ունեցող քաղաքում չլինեին տերունական խոշոր տնտեսություններ, որոնք կարող էին հիմնված լինել և վարձու աշխատողների, և՛ կախյալ դյուղացիների (դրանք նույնիսկ կարող էին լինել շրջակայքի գյուղերից) աշխատանքի վրա:

Երևանում խոշոր հողատերական ունեցողների միայն մի մասն էր սպրում աչտանել: Նրանց մեծ մասը (Զաքարև, Իվանև, Սահմադիր, Տիգրան Հոսենց և ուրիշներ) ապրում էր այլ քաղաքներում ու վայրերում:

Բայց քաղաքի այգիների և մյուս հողատարածությունների մի մասն այնուամենայնիվ հավանաբար պատկանում էր մանր հողատերերին՝ ազատ գյուղացիներին: Հ. Փամպուլյանը միանգամայն իրավացի է, որ գրում է, թե՛ Սահմադիրի 1264 թվականի արձանագրության մեջ ակնարկված «Տայրենիք» վաճառողներ կամ փո-

խողները, որոնք իրավունք են ունեցել «նույնիսկ առանց Սահմադիրի համաձայնությունը նախօրոք վերցնելու» այդ գործարքների կատարել մուծելով դահիակ հարկը, եղել են ազատ գյուղացիներ՝ սեփականատեր մանր հողատերերի, որոնք, այնուամենայնիվ, պարտավոր էին իրենց հողը վաճառելու կամ փոխելու համար քաղաքի տեր Ֆեոդալին որոշ հարկ տալ: Ընդհ. է նաև Հ. Փամպուլյանը այն կրահումը, որ քաղաքում այդպիսի մանր հողատերերը բավական քաղվածությամբ է լինելին, այսպիսի անմիաստ կլինեին դրանց հողերի առ ու վաճառքի և փոխանակման մասին հատուկ կարգ սահմանելը և այն վիճազիր արձանագրությամբ ի յուր բերելու արդարաբար: Իսկ այդ ազատ գյուղացիները նույն արձանագրության համաձայն իրավունք ունեին ցանկացած ձևով տնօրինել իրենց հողատարածությունները, նրանք սեփականատերեր էին և կնքակա էին պետական հարկագրման, բացի վաճառքի համար Ֆեոդալին տրվող հարկից և հավանաբար չբից օգտվելու համար տրվող հարկից: Բոլոր կարգի սեփական հողերը («Տայրենիք», «գանձագինք» և այլն) ժառանգվում էին հորից որդուն, որդի շունենալու դեպքում՝ շամուռացած աղջկան, իսկ աղջիկ չունենալու դեպքում՝ եղբորը և այլն: Եթե օրենքի ուժ ստացած ավատական կարգով հնարավորություն չէր լինում ժառանգություն հարցը կանոնավորել այսպիսի լուծվում էր դատական օրգանների միջոցով:

Երևան քաղաքի X—XIII դարերի հողատիրության ձևերի մեջ իր կատարար կըստ թերևս վերջին տեղը զբաղում էր վանքատնական և եկեղեցապատկան հողատիրությունը: Վիճազիր արձանագրությունների վկայություններից երևում է, որ այդ դարերում Երևանում սեփական աչիկներ ու հողային այլ տարածություններ ունեին Մարենոցաց, Հառնի, Կեչառիսի, Հաղարծնի, Ֆեդարդա և այլ վանքեր: Այս տիպի հողատիրությունը մասնատիրական խոշոր և մանր հողատիրության նկատմամբ ուներ որոշ առավելություններ այն առումով, որ վանքապատկան ու եկեղեցապատկան հողերը անընդհատ ալիանում էին աշխարհիկ ֆեոդալների և այլ կարգի սեփականատերերի կողմից «հողու» փրկություն: Ընդի տակ

¹ Հ. Փամպուլյան, Երևանը XIII—XIV դարերում, թեկն. դիս., էջ 95—96:

² Նույն տեղը, էջ 96:

³ Տե՛ս Մխիթարայ Փոշի Գառնատառագիրք Հայոց, մաս II, հոդ. 98, էջ 371—373:

⁴ Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիճակ տարեգրք, էջ 5, 43, 48, 55—59, 64, 141, 246, Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Կահանգին Սիսական, էջ 179—180, Գ. Ալիշան, Այրարատ, էջ 194, 267 և այլ տեղերում:

տրվող հողատարածությունների ու այգիների հաշվին: Եկեղեցիներին ու վանքերին կալվածքներ նվիրելը համարվել է մեծ բարեգործություն և այդ մասին թողել են հատուկ վավերագրեր՝ իրավորապես վիճազիր արձանագրություններ: Շատ ղեպերում այդ նվիրատուությունները հաստատվում էին թագավորների և բարձրաստիճան իշխանների ու հոգևորականության կողմից: Այդպիսի ղեպերի մասին բազմաթիվ հիշատակություններ ունի Ստեփանոս Օրբելյանը, որն օգտվել է Տաթևի վանքի հարուստ արխիվից և բազմաթիվ վիճազիր արձանագրություններից:

Ի մի բերելով տարբեր սկզբնաղբյուրներում ցրված տվյալները X—XIII դարերում Երևանում վանքերին ու եկեղեցիներին նվիրված հողատարածությունների մասին, մասնագետի և ընթերցողի ուշադրության ենք հանձնում ամփոփիչ մի աղյուսակ (Մ 2), որում տրված են նվիրատուների անունները, նվիրատվության թիվը կամ դարը, նվիրված կալվածքի քանակը (սեփական կամ գնված), տեսակը, քանակը և որ վանքին կամ եկեղեցուն է տրված իբրև սեփականություն: Աղյուսակից հայտնի է դառնում, որ միայն մեկ հասած տեղեկությունների համաձայն X—XIII դդ. Երևանում դանազան վանքերի և եկեղեցիների տրված էին 17 1/4 այգի և 1 տուն: Ըստ երևույթին, նվիրված հողատարածություններից բացի, Երևանում կային նաև այլ եղանակներով (զլխավորապես գնման միջոցով) ձեռք բերված վանքապատկան կալվածքներ, բայց դրանց մասին անհրաժեշտ տեղեկություններ մեզ չեն հասնել:

Մենք տեսանք, որ Երևանում և Արարատյան դաշտում XII—XIV դարերում հողի գինը բավական բարձր էր: 50 կապիճ հողը, որը մեր հաշիվներով մոտավորապես կազմում էր 5000 բառ. մ. տարածություն, արժեր միջին հաշվով երկու պատարագ կամ 40—50 դահեկան: Մենք տեղեկություններ ունենք նաև վանքերին նվիրված մի քանի այգիների այսպես կոչված պատարագային գին մասին: Այսպես, օրինակ՝ Հուսիկ Երևանցին և իր կին Սուլթան Խանումը (XIII դար) Երևանում իրենց զնած այգին տալով Հովհաննավանքին տարեկան ստացել են 4 պատարագ¹, որոնք, բոտ վերը կատարված հաշիվների, միասին կազմում էին միջին հաշվով 80—100 դահեկան, իսկ Աստու և Արթա ամուսինները (XIII դարի վերջ կամ XIV դ. առաջին կես) Գնդարդա վանքին մեկ սեփական տուն տալու գինաց տարեկան ստացել էին 6 պատարագ (կամ ժամ),

¹ Տե՛ս նույն տեղերում:

² Կ. Կոստանյանց, Վիճական տարեգիր, էջ 46:

X—XIII դդ. երկուսից զանազան վանքերի և եկեղեցիների նվիրված այգիների և կալվածքների քան մեկ հասած տեղեկություններ

Նվիրատուի անունը	Նվիրատվության թվականը	Նվիրված կալվածքի կամ սեփական (գնված է, թե՛ սեփական)	Այգի	Միտուց վճարելուց	Միտուց վճարելուց	Միջոցառողի անունը և նվիրատված	Մասնագրություն
Նուփան, Սյունյաց էջիան	901 թ.	սեփական	այգի	5	6	Միջոցառողի անունը և նվիրատված	Մասնագրություն
Ջաֆար սպասուց	1201 թ.	սեփական	այգի	1	1	Հարկեր վճարելու	Ստ. Օրբելյան, Պատմ. թատ. Մատնան, էջ 119—180, Կ. Կոստանյանց, Վիճական տարեգիր, Մ. Պետրոսյան, 1915, էջ 6:
Ղազար Էմբեկ	1294 թ.	1169 թ. Մխկառանց գնած և իր մեղքով վաճառված բազմաթիվ	այգի	մեկ թաս ուսրգ	մեկ թաս ուսրգ	Կեղևոսի որ. Պեղկորդեն	Կ. Կոստանյանց, Վիճական տարեգիր, էջ 46, Կ. Ալիշան, Արարատ, էջ 207:
Միքիթաբեկ, Պեղկորդե օրդ	XII ր. վերջ XIII ր. սկիզբ	սեփական	այգի	1	1	Կեղևոսի վանքին	Գաբրիել Նովոփյան, Քաղաքականություն, մասն. 11, էջ 13:
Իվան Զաքարյան, Ջաֆարեկ եղբորը	XIII ր. սկիզբ	սեփական	այգի	1	1	Հարկեր վճարելու	Կ. Կոստանյանց, Վիճական տարեգիր, էջ 141:
Սեպուր Երևանցի, Սեփարդյան	1210 թ.՝	սեփական	այգի	1	1	Բազմաթիվ վանքին	Չ. Ալիշան, Շիրակ, էջ 117:

1	2	3	4	5	6	7
Տեղան կանոն	1215 թ.	գնված	այդ	1	Անի ք. Գրգոր Էկեղյան	4. Կոստանյանց, Վիմակակ տարեկր. էջ 8-30, է. Արևան, Շիրակ. էջ 78;
Անուան արձանագր. մեջ եղված է	1287 թ.	սեփական	այդ	1	Օշականի Կեկեղյան	4. Կոստանյանց, Վիմակակ տարեկր. էջ 87, 9, Արևան, Արարատ. էջ 104;
Մխիթարի	1284 թ.	գնված	այդ	1	Հափեփ վանքին	4. Կոստանյանց, Վիմակակ տարեկր. էջ 68;
Ճարի ողբի (անուան տրվածագրության մեջ եղված է)	1285 թ.	սեփական	այդ	1	Գեղարցավանքին	Գրեգին Հովակիյան, Խաղթավանք... մասն II, էջ 79;
Վարդանի Երևան.	XIII Գ.	գնված	այդ	1	Հովանեմավանքին	4. Կոստանյանց, Վիմակակ տար. էջ 246, 4. Վաղարշապատ, Հովանեմավանք և ճրտ արև., էջ 108;
Հուլիկ Երևանի և Մուսլիմե Քանուկյանի	XIII Գ.	գնված	այդ	1	Հովանեմավանքին	4. Կոստանյանց, Վիմակակ տար., էջ 246, 4. Վաղարշապատ, Հովանեմավանք և ճրտ արև., էջ 108;
Պետրոս	XIII Գ.	գնված	այդ	1	Գեղարցավանքին	Գրեգին Հովակիյան, Խաղթավանք... մասն II, էջ 92;
Ծառայ ?	XIII Գ.	սեփական	այդ	1	Գեղարցավանքին	Մանանու Մխիթարյան, Առաջագրութ. ճշ. մեծի ուխտին Այրի վանք... էջ 29;
Առավ և Աղսա ամուսիններ	XIII Գ. կամ XIV Գ. ամուսիններ	սեփական	տուն	1	Գեղարցավանքին	Մանիկ, Մխիթարյան, Սարգսյան, ճշ. մեծի վանքի Այրի վանք... էջ 8, Գրեգին Հովակիյան, Խաղթավանք... մասն II, էջ 98;

Հնգյաններ 17 1/4 այդ և 1 տուն

որից 3-ը՝ Աստմի, Էրերը նրա կնոջ՝ Արթայի համար¹, ոմն Մխիթար 1224 թ. իր գնած այգին Հառիճի վանքին տալով տարեկան ստացել էր միայն մեկ պատարագ², իսկ Մխիթարիչը (XIII Գ. կես)³՝ Երևանում գտնվող աղբով պարարտացված իր այգին նվիրելով Կեղևնախի վանքին, ստանում է 15 պատարագ (ժամ)⁴։ Այդ ցույց է տալիս նախ, որ նրա այգին շատ մեծ էր և որ պարարտացված այգիներն ընդ-հանրապես թանկ են գնահատվել։ Էլ ավելի թանկ է գնահատվել Ճարի որդի (որի անունը արձանագրության մեջ եզրված է) Գեղարցավանքին նվիրած այգին։ Այն գնահատվել է 20 պատարագ (անճ Գ. Յովակիեան, Խաղթակահանք... մասն II, էջ 79)։ Ինչ խոսք օր այգիները սուլորական հողատնդակներից բավական թանկ էին և հնարավոր չէ վերը նշված հողի գները համեմատել այգիների գների հետ ու դրանք համադրումից ստանալ այգիների մտտավոր տարածությունը։

Բացի կալվածքներից, վանքերին նվիրաբերում էին նաև թանկահարկ իրեր և հնչյուն դրամ։ Բանասեր Քաղ. Ավդալբեկյանը մի հետազոտիչի որոնքով է կազմել XII—XIV դարերի ընթացքում վանքերին տրված նվերների (արասահայտված դահեկանով)։ Ըստ այդ աղյուսակի 15 վանքի տրված էր 4150 դահեկանի հասնող նվեր, որի դիմաց նվիրատուները ստացել էին 197 պատարագ (ժամ)⁵, յուրաքանչյուր պատարագը միջին հաշվով կազմելով մոտ 21 դահեկան։ Ընդ օրում, 4150 դահեկանից 2220 դահեկանը բաժին էր ընկնում միայն Գեղարզին (Այրիվանքին)⁶։

Գրամական տնտեսության զարգացման, հասարակության գասակարգային շերտավորման հետագա խորացման և զրա հետևանքով հսկայական հարստություններ ու հողային տարածություններ սակավաթիվ անհատների ձեռքին կենտրոնանալու, մեղրըւղական տիրապետության շրջանի տնտեսելի ծանր հարկերի հետևանքով պարսպա հող է առեղծվում վաղախուսական կազմուսի համար։ Փողատեր ումեկները, հոնեմները, բարիմաղիները, սահիդ-դիվանները և մյուսները (հավանաբար նաև վանքերը)

¹ Երևանում Մխիթարեանց, Առաջագրութին Նուշակափոր մեծի ուխտին Այրի վանք... էջ 9;
² 4. Կոստանյանց, Վիմակակ տարեկր. էջ 88;
³ Գրեգին Յովակիեան, Խաղթակահանք կամ Պառնանց հայոց պատմության մեջ, մասն II, էջ 15;
⁴ ՏճՆ 2ևՅ2 Գրատարյան և արվեստի ինստիտուտի ԵՃԳԿԿԿԿԿԿԿԿ, 1927, № 2, էջ 69;
⁵ Նույն տեղը։

տարբեր եղանակներով, բայց միշտ փողի ուժով իրենց ձեռքն են պցում գրավ դրված և այլ կարգի կալվածքներ, ավելի ու ավելի ընդարձակելով իրենց պատկանող հողային տարածությունները, տեղ գտնւալով մեծաթիվ կուղարակ-խանութների, իշխանատների և այլն: Ակազեմիկոս Շ. Մանազյանը խոսելով X—XI դարերի սոցիալական պայքարի սրման մասին (նկատի ունենալով մի կողմից անկումային տրամադրությունների աշխուժացումը, իսկ մյուս կողմից՝ «Աստուցի Դավիթ» էպոսի ստեղծումն ու թոնգրակցան ազանդավորական-գլուղացիական հուժկու շարժումը) գրում է. որ այդ բացարժեպում է «բարձրական անստուկության խորացմամբ, վաշխառուական կապիտալի ուժեղացող դերով և, հավանաբար, նաև «դուրազներին գանձվող դրամական տուրքերի բարձրացմամբ»¹: Իսկ մի այլ աշխատության մեջ անդրադառնալով Անիի XIII դ. հայտնի մեծատուններից մեկի ամենհարուստ ներկայացուցիչ Տիգրան Շոնենցի ունեցվածքի ու կալվածքների բնութագրմանը՝ նշում է, որ նա ուներ ութ գյուղ (կամ ամրոզդովին, կամ գրանց որոշ մասը), վեց այգի, մեկ իշխանատուն, տներ, խանութներ և այլն: Նա գրում է, որ «Շոնենց Տիգրանը հատուկ տիպի իշխան էր, որ իր անշափ հարստությունները կուտակել էր, ղլխավորապես, առևտրով և վաշխառությամբ»²:

Նույն կարգի անտրականացած ֆեոդալ և խոշոր վաշխառու էր նաև Երևանի XIII դ. կերբորդ կոսի տեր-պարոնը՝ Սահազիներ, ինչպես և վերը նշված մյուս «մեծատուններ»-ը: Դրանք, անշուշտ, առաջին հերթին ոչ թե անտրական կապիտալի ներկայացուցիչներ էին, այլ նոր տիպի ֆեոդալներ, որոնց հարստության հիմնական աղբյուրը հողի հետ միասին կազմում էին նաև անտուրն ու վաշխառությունը: Այս առումով միանգամայն ընդունելի է Աշոտ Շովհաննիսյանի այն բնութագրությունը, թե՛ «Շոնենցը, Ումեկը, Սահազիներ և Սահիբ Դիվանը ժամանակի կրեստներն էին Անդրկովկասում և Իրանում: Չնայած նշանակալից այն դերին, որ նրանք անստուկության մեջ կատարում էր փողն ու շրջանառությունը՝ հողն էր նրանց հարստության կայուն երաշխիքը»³:

Միևիթար Գոշի դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց գրափոց» (հոդ. ԽԷ) և «Յաղագս դատաստանաց վաճառողաց և գնու-

յաց գերկիթ» (հոդ. ՍԹ)⁴ հոդվածներից պարզ երևում է, որ հեղինակի ապրած դարաշրջանում հողի և մյուս անշարժ ունեցվածքների վաճառքն ու գրավ դնելը շատ սովորական երևույթ էր դարձել և այդ միջոցին դիմում էին գրեթե բացառապես սակավազորները: Այնուհետև, նույն հոդվածները հիմք են տալիս կոստանու, որ վաշխառուի մոտ գրավ դրված ունեցվածքների մի մասն ընդմիջում գտնում էր նրա սեփականությունը. տեղը չէր կարողանում ևս վերցնել կարիքի դրժմամբ գրավ դրված ունեցվածքը, նա դրա համար շուներ անհրաժեշտ միջոցներ:

Զնաշված ուրարտական ժամանակաշրջանի ոռոգման առուները, որոնք հավանաբար վաղուց դադարել էին գործելու, և Գիտաոր, միջնադարյան Երևանի ամենահայտնի առուն հանվել է XI դարում՝ 1031—1041 թվականներին, Բագրատունի Նովհաննես—Ամբաս թագավորի օրոք, Ապիրատ իշխանի միջոցներով: Հին Երևանը, տակալին ուրարտական շրջանում կառուցված Խալմայի շրանցքից բացի, ուներ նաև երեք այլ մեծ առուներ՝ Արուհայաթի, Նորազոյզի և Մամոնի շրանցքները: Դրանցից առաջին երկուսը հանվել են հավանաբար XVII կամ XVIII դարերում և Դամայի հետ միասին վերանորոգման ենթարկվել Երևանի վերջին խանի՝ Հուսեյնի օրոք, իսկ վերջինը՝ Մամոնի առուն հանվել էր ավելի վաղ ժամանակներում: Առաջին անգամ Նովհաննես Եաշխաթունյանն Ապիրատ իշխանի հանած «Երևանի առու»-ն ենթադրաբար նույնպես բնակ է մինչև մեր ժամանակները գոյություն ունեցող և գործող Մամոնի առի հետ: Հետագայի հեղինակները՝ Ղ. Ալիշանը, Երևանի անդադրություն հեղինակ Աղամ Աղամյանցը⁵, Երվանդ Եաշադը և ուրիշներ ընդունել են Շ. Եաշխաթունյանցի այդ ենթադրությունը, առանց սակայն հնարավորություն ունենալու որևէ փաստ վկայակոչելու: Եվ իբրև, Ապիրատ իշխանի հանած առի մասին, բացի նշված խոստ համառոտ վկայությունից, («և Եհան զառուն Երևանայ») որիք որևէ հիշատակություն կամ այլ կարգի փաստ մեղ չի հասնու: Իսկ այդ վկայությունից միայն կարելի է կոստել, որ նախ Ապիրատի հանած առուն Երևանի գլխավոր առուն էր և այդ պատճառով էլ ուղղակի հիշատակվում է իբրև «Առու Երևանայ» և երկ-

¹ Я. А. Манандян, О торговле и городах Армении..., էջ 211:

² Հակոբ Մանազյան, Քննական անտուրն հայ մոզդլորդ պատմության, Կ. III, էջ 150—151:

³ Աշոտ Նովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության, գիրք 1, էջ 217:

⁴ Միևիթար Գոշի Դատաստանագիր Լայց, մաս երկրորդ, հոդ. ԽԷ, էջ 358, հոդ. ՍԹ, էջ 362—363:

⁵ Նովհ. Եաշխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ կաթոսների և հինգ պատանց Արարատայ, Կ. II, էջ 153—154:

⁶ Ղ. Ալիշան, Արարատ, էջ 316, Աղամ Աղամյանց, Տեղադրութիւն Երևանի, էջ 38:

բորդ՝ այդ առուն այնքան մեծ էր և այնքան նշանավոր կառուցում, որ հարկ է եղել զրա կառուցման մասին հիշատակել պատմագրության երկերում: Միանշանակ ճիշտ է նկատում Հովհաննես Ծախաթունյանցը՝ Հրազդանի ձախ կողմից սկսվող երկու առուներից (Մամուր և Արուհայաթի) մեծը Մամուրի առուն է՝ որը գրեթե ծայրնային կարելի անցել է ամբողջ հին Երևանը: Հրազդանի աջ կողմից սկսվող Գույմայրի և Նորայգուղի առուներից ոչ մեկը, անկախ իրենց վիճակից, բուն իմաստով չէին կարող կոչվել «Երևանի առու», որովհետև նրանք ոտոզում էին բուն քաղաքից արևմուտք (Հրազդանի աջ կողմում) ընկած հողատարածությունները: Այսպիսով, մնում է ավելի հավանական համարել Ապիրատ իշխանի հանած առուն Մամուրի հետ նույնացնելու մասին Հովհաննես Ծախաթունյանցի արած ենթադրությունը:

Սակայն պետք է կարծել, որ Ապիրատ իշխանի հանած առուն նույնիսկ միակ մեծ առուն չէր Երևանում: Գրանից առաջ այստեղ հավանաբար գործում էին այլ առուներ, որոնք հանված էին թե՛ Գեևատից և թե՛ Հրազդանից: Առանց ոտոզման Երևանում ոչ մի կուլտուրայի մշակմամբ չի կարելի զբաղվել: Ջուրն այստեղ իր նշանակությամբ համազոր էր հողին: Եվ իրար չէ Սահմադիրն իր թողած արձանագրության մեջ նշել, որ ինքը Երևանը գնել է «Տոռոյ մ ջրով»: Երևանն ընդհանրապես չքառատ քաղաք էր և նրա հողատարածություններն էլ այդ պատճառով ունեին բարձր գին:

Պատմագրական երկերի և վիճագիր արձանագրությունների մեջ եղած տեղեկություններից երևում է, որ X—XIII դդ. Հայաստանում գոմաղբով պարարտացումը տարածված երևույթ էր: Կեչառայի վանքի ս. Նշան մատուռի արևմտյան պատի վրա եղած արձանագրության համաձայն, Գրիգորի որդի Մխիթարիչը (XIII դ. կեսեր) Երևանի իր «աղբին այգին» (այսինքն՝ աղբով պարարտացրած) նվիրել է Կեչառայի վանքին, ստանալով 15 ժամ (պատարագ), որից 5-ը իր համար, 3-ը՝ «տիկնացտիկան Կոկորին մարն», շոր՝ Գրիգորի և 3-ը՝ Մամիկի համար: Միայն այդ հիշատակությունն էլ բավական է համոզվելու համար, որ նշված զարերում Հայաստանի մյուս վայրերի հետ միասին գոմաղբով պարարտացումը տարածված էր նաև Երևանում:

¹ Հովհ. Ծախաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էպիսկոսն և հինգ ցաւասան Արարտայ, հ. II, էջ 153:

² Գաեթիկ Նովոկիևան, Խաղարկիանց կամ Պոռնանք Հայոց պատմութեան մէջ, մասն II, էջ 15, նույնի, Հատու թափ Անճափրիչը և եղևնանուն յուշարձաններ հայ արտեսի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 23:

Ոտոզման բարեկարգ ցանցը, բնական ջրերի առատությունը և գոմաղբով պարարտացումը այն ժամանակվա պայմաններում հարաբեր են եղել բավական բարձր և համեմատաբար հաստատուն քրիթի համար:

Քաղաքի տնտեսության ճյուղերը X—XIII դարերում առաջվա պես կազմում էին՝ գյուղատնտեսական զբաղմունքները (այգեգործություն, բանջարաբուծություն, երկրագործություն և անասնապահություն), արհեստագործությունը և առևտուրը: Նախորդ ժամանակների համեմատությամբ առաջադիմություն էին կատարել բաղարի տնտեսության վերջին ճյուղերը՝ արհեստագործությունն ու առևտուրը, նախ այն պատճառով, որ Երևանը դարձել էր իսկական քաղաք և երկրորդ՝ այդ դարերում Հայաստանում ընդհանրապես մեծ զարգացում էին ստացել արհեստագործությունն ու առևտուրը:

Երևանում այգեգործության կարևորության և նրա զարգացման մասին զուգաբար կազմում համար կարծում ենք հողատիրության ձևերի, հողալիքի հարաբերությունների, ոտոզման վիճակի և գոմաղբով պարարտացնելու առիթով բերված բազմաթիվ փաստերը բավականացնում են զուգաբար կազմելու համար Հենց միայն այն, որ այստեղ նվիրատվության հիմնական առարկան այգին էր, ցույց է տալիս, որ այգեգործությունը քաղաքի տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն էր, թե՛րևս ամենակարևորագույնը: Այգիներում, բնա-կլիմայական պայմանների համապատասխան, մշակում էին խաղող, ծիրան, ղեճձ, խնձոր, տանձ, բալ և այլն: Այգեգործությունը տնտեսության կարևոր ճյուղերից էր ոչ միայն Երևանում, այլև երկրի մասշտաբով ընդհանրապես: Այգեգործությունը մեծ տարածում ուներ վանա լճի ավազանում, Արևմտյան և Արևելյան նիգրատների հովտում, Արարտի ավերին ընկած հարթավայրերում՝ հատկապես Արարատյան դաշտում և երկրի այլ շրջաններում: Իրեն իր զգալի մասով այգեգործական երկրի՝ տնտեսության այդ ճյուղի հետ կապված մի շարք երևույթներ իրենց արտացոլում են գտել նաև Մխիթար Գոշի դատաստանագրում: Ս. Պ. Պողոսյանը իրավացի կերպով նշում է, որ նրա դատաստանագրքի այգեգործությանը նվիրված հոդվածները նպաստում էին տնտեսության այդ ճյուղի զարգացմանը, տարածմանը և այգիների պահպանությանը գործին: Այդ տեսակետից ուշագրություն արժանի են հայտնի դատաստանագրքի երկրորդ մասի №Ք (49), ԶՔ (79) և ՃԻԱ (121) հոդ-

¹ Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների նորացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1956, էջ 143—144:

վածները: «Ճաղագս դատաստանաց տեկահատից» վերնագիրը կրող **ԽՔ** հոդվածը ձևակերպված է այսպես. «Շարժեալ որ սատանայական ցածամար հարկանիցէ դտունկ ուրուք եւ յաշա Տշգրտի գայցը, դատաստան լիցի դնել դտունկն հատողին եւ յխրոցն՝ դամեն ցորքան անպտուղ իցէ տունկն՝ տուգանիչ նովին շափով. ապա թէ իր լիցի, ըստ զնոյն լիցի: Զի օրէնքն եւ ոչ զթնամեացն հրամայլ դաշլազգեկացն հարկանել զտունկու: եւ այդ աշղպէ լիցի իրամամրո՞»:

Ինչպէս տեսնում ենք, տունկ ուշացնողը ենթակա էր պատժի, նա պարտավոր էր իր հատած տունկի փոխարեն նորը տնկել և տուգանք տալ մինչև նորատունկ ծառի բերք տալը: ԸՔ հոդվածով սահմանված է, որ այդի մտնելիս թույլատրվում է միւրգ ուտել ինչքան կարող են, բայց տանելը արգելվում է և ենթակա է տուգանման. «Եւ եթէ մտանիցես յայդի բնկերի քո, կերցես խաղող մինչև յազենալ անձին քո, բայց յամանս մի ամանիցես», ասված է այնտեղ¹:

Դատաստանագրքով արգելվում է նույնիսկ պատերազմների ժամանակ կտրել մրդատու ծառերը, մարտասպարեղ դարձնել այգիները²:

Այգեգործության մեջ եղած սովորությունների, այգեմշակման ձևերի, աշխատանքի կազմակերպման, այգեգործական մշակներին վարձատրելու և այլ հարցերի մասին ճիշտ զառափար կազմելու տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Գոշի դատաստանագրքի ձեռն (121) հոդվածը, որը կրում է «Ճաղագս դատաստանաց այգեգործաց բնկերատր մասնաւորաց հարաշիաց և վարձկանաց» վերնագիրը և ձևակերպված է այսպես.

«Ճաղագս այգեգործաց եւ այլոց ճշգրտել զօրինակն ոչ կարեմ յաղագս զանազան սովորութեանց զատանց եւ աշխարհաց. բայց սակաւ ինչ նշանակ տացուք իրաւանց, զի ըստ սովորութեան վճիռն այն հատատտուն առ նոսա կացցէ: Արդ՝ մի՞ որ անխորտութեամբ զրկանս ինչ գործիցէ, այլ իրամամրք զրամանունն արացցէ ընդ բնկերին: Իսկ զող զտեալ որ ի նոսա, կրկին տուգանեացի եւ ոչ շորեկին ըստ օրինացն, զի յիւր վաստական եւ ոչ յօտարին անխրաւ եւ յաղագս այնորիկ իրաւացի կարծեմ զնրեղն: Իսկ վարձատր մշակացն վարձ ի յնդանակս առատութեան եւ նուազութեան զստի-

ցի. առաւելեալ—ի նոսոյն լիցի, եւ պակասեալ—յառավելեալն: նմանակս եւ յաղագս տեղեացն լիցի»³:

Ինչպէս տեսնում ենք, Գոշն իր դատաստանագրքի այդ հոդվածում մի շարք կողմերով այնքան կարևոր բնագավառ է ներկայացրել, որ կարող է առանձին մենագրության առարկա դառնալ: Դրանում նախ և առաջ ասված է այն մասին, որ երկրի տարբեր գավառներում ու աշխարհներում այգեգործներն ունեն տարբեր սովորություններ, որոնք չի կարող ամբողջությամբ ներկայացնել և զրա կարիքը չի էլ զգում, որովհետև նրանց այդ սովորությունները իրենց զավառի կամ աշխարհի սահմաններից դուրս ուժ չունեն: Այգեգործության (հատկապես խաղողագործության) հետ առնչվող այդ սովորությունները, որոնց մասին ակնարկում է դատաստանագրքի հեղինակը, գոյություն ունեին հնագույն ժամանակներից և ստատիստաբար ձեռք էին բերել օրենքի սով: Նույնիսկ մինչև մեր օրերը պահպանվել են այգեգործական որոշ սովորություններ ու սովորություններ, որոնք աղագրական տեսակետից կարող են մեծ հետաքրքրություն ներկայացնել:

Այնուհետև խոսվում է բնկերովի այգիների մշակման, արդյունքի բաժանման, «հարաշիաց» փոխազարձ հարաբերություններին, վարձով աշխատողների («վարձկանաց») մասին: Պատմաբանի համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես վերջիններիս վերաբերյալ Գոշի դատաստանագրքում հարողաժը: Դատաստանագրքից նախ երևում է, որ այգեգործության բնագավառում XII—XIII դարերում վարձով աշխատողները մեծ թիվ էին կազմում (այլապես զրանց մասին հարկ չէր լինի դատաստանագրքում առանձին տեղ հատկացնելը) և երկրորդ՝ նրանք տարբեր գավառներում ու աշխարհներում վարձատրվում էին տարբեր շափով: Բացի զրանից, նրանք միևնույն վայրում ևս տարբեր տարիների վարձատրվում էին տարբեր շափով, ըստ բերքի քանակի: Ընդ որում, գոյություն ուներ բերքի քանակի համեմատությամբ առավելագույն և նվազագույն վարձատրություն: Այն զնպքում, երբ բերքը բարձր էր լինում, նրանց վարձատրությունը կատարվում էր բերքի նկատմամբ նվազագույնի շափով, իսկ սակալ բերքի ժամանակ՝ սահմանված նորմայի առավելագույնով: Ըստ երևույթին, այգեգործության մեջ այդ բոլոր աշխատողները սեղոնով էին վարձատրվում՝ միայն տարվա ամառվա կեսին, թերևս միայն մի քանի ամիս տևողությամբ: Այդ կարգի աշխատողները հատկապես

¹ Միխրաույ Գոշի Դատաստանագիրը Լայսց, էջ 359—360;
² Նույն տեղը, էջ 392;
³ Միխրաույ Գոշի Դատաստանագիրը Լայսց, էջ 307: Ըմբ. Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների շորացումը և գյուղացիական շարժումները Լայսսատեմում IX—XIII դդ., էջ 144:

¹ Միխրաույ Գոշի Դատաստանագիրը Լայսց, էջ 432—433:

անհրաժեշտ էին խաղողագործության՝ այգիները բացելու, վաղերը ծածկելու (Քաղզնու), էտևու համար:

Քաղաքի նշված դարերի գյուղատնտեսական մյուս ճյուղերի՝ բանջարաբուծության, երկրագործության և անասնապահության մասին կոնկրետ փաստեր չունենք մեր ձեռքի տակ: Ուստի բավարարվում ենք միայն վերը արված բեռնորոշ դատողություններով:

X—XIII դարերում քաղաքային կյանքի զարգացման հետ միասին մեծ առաջադիմություն է կատարում նաև քաղաքային արհեստագործությունը: Գյուղից քաղաք են գալիս բազմաթիվ արհեստավորներ, արհեստի վարպետությունը ավելի է կատարելագործվում, ժամանակի պահանջներին համապատասխան առաջանում են նոր արհեստներ: Քաղաքային արհեստները սպասարկում էին քնակչության կենցաղային, տնտեսական պահանջներները, տարանցիկ առևտուրը: Քաղաքային արհեստները թիվն այդ զարգացմանը 100-ից անցնում էր: Միայն Անեկում գործող արհեստները ավելի քան 40-ի էին հասնում: Այդ շրջանի արհեստները կարևոր էրամանել մետաղաշակման (զինագործություն, դարբնություն, փակահագործություն, անագագծություն, պղնձագործություն, արծաթագործություն, ոսկերչություն և այլն), շինարարական (քարտաշություն, որմնադրություն, ձեկագործություն, ներկարարություն, հյուանություն, առաղձագործություն) և այլ խմբերի: Քաղաքային արհեստներով առանձնապես հայտնի էին խոշոր քաղաքները՝ Անին, Գլինը, Արմըր, Կարսը, Նյսիսը, Կարինը և այլն: Այս դարերի երևանք պատկանում էր ֆեոդալական համեմատաբար փոքր քաղաքների թվին, սակայն վերջիններում նույնպես կային մի շարք արհեստներ: Երևանում, ինչպես կոտեսները բիշ հետո, մյուս քաղաքների արհեստանոցների նման, գոյություն ունեին բազմաթիվ կուղպակ-արհեստանոցներ: Արհեստավորների զգալի մասը չունենր իր սեփական արհեստանոցը: Նրանք աշխատում էին կամ «տոբի վրա» կամ վարձված արհեստանոցներում, որոնք պատկանում էին վանքերին և մեծապատաս քաղաքացի-ֆեոդալներին: Երևանի արհեստագործության մեջ հավանաբար կարևոր տեղերից մեկը զբաղվում էր կավագործությունը, որը քաղաքի մտ գտնվող նոր գյուղի բնակչության հնագույն քրազուներներից է: Այս արհեստի զարգացումը սերտորեն կապված էր ոչ միայն քաղաքի բնակչության կենցաղային-տնտեսական կարիքների (ամանեղենի պահանջի), այլև խաղողագործության-զինագործության հետ: Մենք

տեսանք, որ կավագործությունը էրբերունի—Երևանում և Թեյշեբախում մեծ զարգացման էր հասել տակավին ուրարտական ժամանակաշրջանում (VIII—VI դդ. մ. թ. ա.):

Արհեստներից բացի, երևանում գոյություն ունեին նաև տնայնագործական տիպի մանր ձեռնարկությունների՝ հատկապես դիմեցողությունների արհեստանոց-ձեռնարկություններ և քրաղացներ, որոնք գտնվում էին Հրազդանի և Գետադի ափերին: Երևանի մի քանի արհեստները՝ պայտասությունը, թամբագործությունը և այլն կապված էին հիմնականում արտաքին և տարանցիկ առևտրի հետ:

Առաջվա նման երևանի դիրքը հարմար էր առևտրի զարգացման համար: Արաքսի հովտով անցնող տարանցիկ ձանապարհի վրա եղած կայանների մեջ երևանը X դարի վերջին քառորդում համարվում էր ամենանշանավորներից: Այդ պարզ երևում է երևանոց, որ նախիրեանի կողմերում Արաքսը ձախ ափով զեպի Այրարատյան աշխարհ, Կարին ու Ան ծովի ափերին գտնվող քաղաքներ: Երևանը 981 թվականին վերաբերող մի կտավագրում, Աղտո Շահանշահ Քաղավորի գուստր Լափսիսին՝ Մաղաբազ վանքին իր կողմից նվիրված կավածքի սահմանները նկարագրելիս, այդ ձանապարհը կոչում է «Երևանայ ձանապարհ» «Եւ է Աստապատու հրախախի կողմն հանդէպ Եղեւանուն յորս հատովն (...) մէկ զեռն երասխ կոչնցեալ, մէկ Երևանայ ձանապարհն, մէկ նախիրեանայ ձանապարհն, մէկ Տախտոցն»¹: Մյուս կարևոր ձանապարհը երևանում միացնում էր Կարսի ափով գնացող գլխավոր ուղու հետ: Այս ձանապարհը ձգվում էր Հրազդանի աջ ափով՝ Բջին և Քաղալանսարա (այժմ՝ Աթարկկյան) գյուղերով, այդ քարձրադիր լեռանայիններով անցնում Աղտուկի հովիտը, իսկ այստեղից էլ՝ հասանելիներով անցնում Աղտուկի հովիտը, իսկ այստեղից էլ՝ հասնում Կուր գետի աջ կողմով Քիփիսին: Գանձակ ձգվող ձանապարհն էին: Ինչպես տեսնում ենք, միջին դարերում այս ձանապարհը XIX դարում զգված և մեր ժամանակներում հիմնովին վերափոխված երևան—Գլխիբան ձանապարհի ուղղությունը չունենր: Նա անցնում էր Հրազդանի՝ տեղանքի նկատմամբ ցածրադիր ափով:

¹ Երբով սփռված էին հազարավոր քրաղացներ և ձեթհանքեր: Քրաղացների վաճառման կարգի մասին դատաստանագրքում կա հատուկ հոդված (Մխիթարյանի Գրքադասանավորը՝ Լույսը, մաս II, հոդ. ԾԳ, էջ 365):

² Գաեղին Ա. կարգիկես. Տիրասպարանքը ձևագրաց, հատ. Ա (ն զարտց ինչև 1250 թ.), Անթիլիաս, 1950, էջ 146: Հմմտ. «Իսլավմագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», պր. I, կազմեց՝ Լաբարաշամյան, Երևան, 1941, էջ 10:

¹ Տե՛ս «Փամառ-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 52:

ևս երթեկուս էին անխափան կերպով: Միջնադարյան այդ հասարակական-ուղղութիւնը Փամբակի լեռների շրջանում որոշելու համար կարևոր նշանակութիւն է ունեցել Դրմաշեն գյուղից 12 կմ հյուսիս հայտնաբերված XIII դ. վերջերին և XIII դ. սկզբներին կառուցված մի հին քարավանատան ավերակները: Այս քարավանատանը («Տոզետուն») մինչև մեր զարի 30-ական թվականները կրակահոտն է վիճակում պահպանվում էր¹: Գրա հայտնաբերմամբ հիմնականում պարզվեց, որ Երևան—Գիլիջան ճանապարհն այդ զարբրում և հետագայում անցել է ոչ թե Սևանի փողով՝ Երևնովկա (Սեվան) — Չիրուխու (Մովսէսյան) զծով ու Սեմյոնովկայի (Սևանի) լեռնանցքով, ինչպես այժմ է անցնում, այլ՝ Քնդամալ (Ջրառատ) գյուղի հանդամասերով, Յայլի ու Դրմաշեն գյուղերով և վերջինից հյուսիս զտնվող վաղեմի քարավանատնով՝ անցել է Փամբակի լեռների վրայով և իջել Աղստևի հովիտը:

Արարսի և Հրազդանի ու Աղստևի հովիտներով անցնող այդպիսի կարևոր ճանապարհների հանգույցում գտնվող Երևանը բնականաբար պետք է մասնակցեր երկրի արտաքին և նրա վրայով կատարվող տարանցիկ առևտրին: Մենք բնի հետև կոտեսներ, որ իրոր Երևանն այդ ժամանակաշրջանում առևտրական լայն կապեր ունեւոր հարևան և հեռավոր երկրների շատ քաղաքների հետ:

Նրա առևտրի մյուս հատվածը կազմում էր ներքին առևտուրը:

Քաղաքի ներքին առևտրի զարգացման կարևորագույն ցուցանիշներից է կուղպակ-խանութների գոյութիւնը: Կաթողիկէ կնէղեցու 1301 թվականին վերաբերող մի արձանագրութեան մեջ ասված է. «Տնորհին աստուծոյ» ևս Գէլամարս միաբանեցա Երևանայ ժամատեղացս և ավի զիմ Բ (երկու) կուղպակն ներքնատնեքովն ու խղիրովն և այլ բազում արդիւնք: Բ քանայքս (քահանայքս) հաստատեցին ի տարին է (յոթն) պատարաջ աս (մեկն) Գէլամարդին, աս (մեկն) Ամբարսիէ, աս (մեկն) Պաղտսին, աս (մեկն) Նուրսիին, աս (մեկն) Մամբին: Կատարիչքս արհնի յա(ստծոյ) և խափանիչքս զատին: Թվ(ին) ՉՄ (750—1301)»²:

¹ Տե՛ս Ա. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատների ու կամուրջների, Երևան, 1960, էջ 44—45:

² Նույն տեղը, էջ 46—47:

³ Վ. Առաքաղյան, Երևանի կաթողիկէի և նորահայտ հուշարձանի արձանագրութիւնները, ՀեՍՀ պատմ. և գրականության հեղինակագիր, դիրք 1, էջ 173: Տե՛ս նաև Մ. Բախրադյան, Մի քանի զիտոգրութիւններ Երևանի կաթողիկէ կնէղեցու արձանագրութիւնների վերաբերյալ, ՉՄԹ ԳԼ «Տեղեկագիր», 1947, № 5, էջ 69:

Արձանագրութիւնը թույլ է տալիս ենթադրելու, որ XIII դարի վերջերին և XIV դ. սկզբներին Երևանում արդեն կային այն ժամանակվա համար մեծ ու հարմարավետ խանութներ (ներքնատներ և խուղեր ունեցող կուղպակներ), որոնք, նաչելով ստացված պատասխանների թվին (7), բավական թանկ են գնահատվել: Այնուհետև, հարմարութիւններ ունեցող երկու կուղպակը մեկ անձնավորութեան պատկանելի ցույց է տալիս, որ, մանր առևտրականներից բացի, քաղաքում կային նաև համեմատաբար մեծ շրջանառութիւն ունեցող հարուստ առևտրականներ:

Առևտրականները իրենց սոցիալ-տնտեսական պայմաններով մի միասնական զանգված չէին կազմում: Նրանք մասնատված էին մի քանի խմբերի, որոնք իրարից տարբերվում էին ոչ միայն իրենց ունեցվածքներով ու առևտրական շրջանառութեամբ, այլ նաև հասարակական դիրքով, սոցիալական վիճակով: Բ. Ն. Առաքաղյանը Հայաստանի IX—XIII դարերի մեծ քաղաքներում տարբերում է առևտրականների երեք խավ կամ խումբ՝ համեմատաբար փոքր թիվ կազմող հարուստ առևտրականների խմբի, որի ներկայացուցիչներից շատերը հարկահանութեան, կապալաների, վաշխատական գործարքների, առևտրի և այլ միջոցներով հարստանալով անցնում էին «քաղաքային վերնախավի կամ մեծատունների շարքը», մեծ թիվ կազմող մանր առևտրականների խմբի, որին պատկանողները մարդաձախ առևտուր էին կատարում քաղաքի շուկաներում և դրանց առևտրի ապրանքները կազմված էին հիմնականում սննդամթերքներից ու արհեստավորական արտադրանքներից և, վերջապես, առևտրականների ամենացածր խավը կամ խումբը բաղկացած էր շրջիկ մանր առևտրականներից՝ փերեզակներից, որոնք առևտուր էին կատարում ոտքի վրա, իրենց ապրանքները շալկով կամ գրաստներով տանելով տեղից-տեղի¹:

Երևանը թեպետ այդ դարերի խոշոր քաղաքների թվին չէր պատկանում, բայց այստեղ էլ XIII դարից սկսած նկատվում է առևտրականների տարբեր խավերի առկայութիւնը՝ մեծատուն ու մեծահարուստ ֆեոդալ-կալվածատեր-պարոն-վաշխատու-առևտրական Սահմադիների մինչև ձեռքի վրա մանր առևտրով զբաղվող քաղաքում առևտրականների գոյութիւնը: Սահմադիներ և նրա ապրած ժամանակների մյուս մեծատուն-ֆեոդալները իշխանների ու թագավորների հետ միասին միաժամանակ հսկում էին ամբողջ առևտրի վրա, «կարգ ու կանոն» էին սահմանում այդ բնագոյվառում:

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 52:

ևս երթնեկում էին անխափան կերպով: Միջնադարյան այդ նախապարհի ուղղութիւնը Փամբակի լեռներն շրջանում որոշելու համար կարևոր նշանակութիւն է ունեցել Գրամշեն գյուղից 12 կմ հյուսիս հայտնաբերված XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին կառուցված մի հին բարավանատան ակերակները: Այս բարավանատունը («Շոգեհտուն») մինչև մեր օրեր 30-ական թվականները կիսականգուն վիճակում պահպանվում էր: Գրա հայտնաբերմամբ հիմնականում պարզվեց, որ Երևան—Գիլիջան ճանապարհն այդ դարերում և հետագայում անցել է ոչ թե Սևանի սիւղով՝ Ելենովկա (Սեւան)—Չիրուխլու (Սուվաղուղ) գծով ու Սեմյոնովկայի (Սևանի) լեռնանցքով, ինչպես այժմ է անցնում, այլ՝ Ռեղաւմայ (Ջրաստ) գետի հանդամասերով, Յայշի ու Գոյմաշեն գյուղերով և վերջինից հյուսիս գտնվող վաղեմի բարավանատնով՝ անցել է Փամբակի լեռների վրայով և իջել Աղստեի հովիտը:

Արաբսի և Հրազդանի ու Աղստեի հովիտներով անցնող այդպիսի կարևոր ճանապարհների հանգույցում գտնվող Երևանը բնականաբար պիտք է մասնակցեր երկրի արտաքին և նրա վրայով կատարվող առանցիկ առևտրին: Մենք քիչ հետո կտեսնենք, որ իրոք Երևանն այդ ժամանակաշրջանում առևտրական լայն կապեր ուներ հարևան և հեռավոր երկրների շատ քաղաքների հետ:

Նրա առևտրի մյուս հատվածը կազմում էր ներքին առևտուրը:

Քաղաքի ներքին առևտրի դարձաբան կարևորագույն ցուցանիշներից է կուղղակի-խանութների գոյութիւնը: Կաթողիկէ եկեղեցու 1301 թվականին վերաբերող մի արձանագրութիւն մեջ ասված է. «Շնորհիւն ատուծոյ իս Գէշմարդս միաբաննցս Երևանայ ժամատեղացս և տիլ զիմ Բ (Երկու) կուղղակին ներքնատններով ու խզիրովն և ալլ բազում արդիւնք և քանայքս (քահանայքս) հաստատեցին ի տարին և յոթն» պատարագ աս (մեկն) Գէշմարդին, աս (մեկն) Ամբարսթէ, աս (մեկն) Փարտիսին, աս (մեկն) Նուրթիին, աս (մեկն) Մամբրին: Կատարիչն արհմիին յատուծոյ և խափանիչն զատին: Թվին) 20 (750—1301)»:

¹ Տճ՝ Վ. Մ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի բարավանատներն ու կամարները, Երևան, 1960, էջ 44—45:

² Նույն տեղը, էջ 46—47:

³ Կ. Ղափաղյան, Երևանի կաթողիկէի և նորաստի հուշարձանի արձանագրութիւնները, ՀեՄՀ պատմ. և զրգ. Առաջատար «Տեղեկագիր», գիրք 1, էջ 173: Տճ՝ Նաև Ս. Բաբոյանյան, Մի քանի ցրտաղբայրութիւններ Երևանի կաթողիկէ եկեղեցու արձանագրութիւնների վերաբերյալ, 200ԻՊ 9Ա «Տեղեկագիր», 1947, № 3, էջ 68:

Արձանագրութիւնը թույլ է տալիս ենթադրելու, որ XIII դարի վերջերին և XIV դ. սկզբներին Երևանում արդեն կային այն ժամանակվա համար մեծ ու հարմարատես խանութներ (ներքնատներ և խուղի ունեցող կուղղակներ), որոնք, նայելով ստացված պատարագների թվին (7), բավական թանկ են զնահատվել: Այնուհետև, հարմարութիւններ ունեցող երկու կուղղակը մեկ անձնավորութիւն պատկանելի ցույց է տալիս, որ, մանր առևտրականներից բացի, քաղաքում կային նաև համեմատաբար մեծ շրջանառութիւն ունեցող հարուստ առևտրականներ:

Առևտրականները իրենց սոցիալ-տնտեսական պայմաններով մի միասնական զանգված չէին կազմում: Նրանք մասնատված էին մի քանի խմբերի, որոնք իրարից տարբերվում էին ոչ միայն իրենց ունեցվածքներով ու առևտրական շրջանառութիւնը, այլ նաև հասարակական դիրքով, սոցիալական վիճակով: Բ. Ն. Առաքելյանը Հայաստանի IX—XIII դարերի մեծ քաղաքներում տարբերում է առևտրականների երեք խավ կամ խումբ՝ համեմատաբար փոքր թիվ կազմող հարուստ առևտրականների խմբի, որի ներկայացուցիչներից շատերը հարկահանութիւն, կապաների, վաշխառական գործարքների, առևտրի և այլ միջոցներով հարստանալով անցնում էին «քաղաքային վերնախավի կամ մեծատունների շարքը», մեծ թիվ կազմող մանր առևտրականների խմբի, որին պատկանողները մանրածախ առևտրի էին կատարում քաղաքի շուկաներում և դրանց առևտրի ապրանքները կազմված էին հիմնականում սննդամթերքներից ու արհեստավորական արտադրանքներից և, վերջապես, առևտրականների ամենացածր խավը կամ խումբը բաղկացած էր շրջիկ մանր առևտրականներից՝ փերեզակներից, որոնք առևտրի էին կատարում ոտքի վրա, իրենց ապրանքները շալակով կամ գրաստներով տանելով տեղից-տեղի:

Երևանը թեպետ այդ դարերի խոշոր քաղաքների թվին չէր պատկանում, բայց այստեղ էլ XIII դարից սկսած նկատվում է առևտրականների տարբեր խավերի առկայութիւնը՝ մեծատուն ու մեծահարուստ ֆեոդալ-կալվածատեր-պարոն-վաշխատու-առևտրական Սահմադրից մինչև ձեռքի վրա մանր առևտրով զբաղվող «աղբատ» առևտրականների գոյութիւնը: Սահմադիրը և նրա ապրած ժամանակների մյուս մեծատուն-ֆեոդալները իշխանների ու թավադրների հետ միասին միաժամանակ հսկում էին ամբողջ առևտրի վրա, «կարգ ու կանոն» էին սահմանում այդ բնագավառում:

⁴ Տճ՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 52:

նրանց այդ «իրավունք»-ը սահմանված էր նաև դատաստանադրու-
թով: Սեւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգացիցն ի քաղա-
քս, կամ ի իշխանաց ըստ հրամանի թագաւորաց, թէ ի քաղաքս,
կամ լաւան, կամ յայլ ինչ տեղիս գաւառս: Եւ նախագորութեանը
զլափան եւ զկշիռս եւ զոչգա ներքա զիրցն տեսանելով զգորութիւնս
վաճառիցն: Կարեսցեն եւ կոփիչս միշտ որոնել եւ տեսանել, զի մի՞
նենգութիւն ինչ արասցեն: Այլ խարքարիցն խրատ ըստ հրամանի
ի իշխանացն լիցի: Գողիցն եւ չափսն եւ ի կշիռսն հաստցանել չորեր-
կին, եւ չաղիմանութեամբ նշաւակել ի զարձարումն այլոց: Իսկ
դահկանահատիցն եւ զրամակոփիցն դձեւնս հատանել հրամանաւ
ի իշխանացս¹:

Դատաստանագրքի ձեռն գողվածից բերված այդ պարբերու-
թյունից պարզ երևում է, որ, բացի քաղաքներից, առևտրով էին
զբաղվում նաև ավաններում ու գավառական այլ վայրերում: Որ
չափ ու կշիռների սահմանումը, առևտրի մեջ նենգություն, շարա-
շահում կատարողներին, խարգախներին և կեղծ դրամներ հատող-
ներին պատժելը վերադասված էր իշխաններին: Թագաւորի հրա-
մանով նրանք էին ստորինում այդ րոլորը: Անուղղակի մասնաբե-
րալիս են ասելու, որ առանձին քաղաքներում ու ավաններում նույն
կարգի պարտականություններ էին կատարում նաև Ֆեոդալական
դասակարգի շարքերն անցած մեծատուն-պարոնները՝ Երևանի պա-
րոն Սահմադիրն և նրա մյուս ժամանակակիցները: Դատաստանա-
գրքի նույն հոդվածի վերջին մասում խոսվում է այն մասին, որ
հացի, գինու ու մյուս ապրանքների գները նույնպես սահմանում
էին թագավորների և իշխանների հրամաններով՝ ելնելով ավյուլ
տարվա բերքից ու դրա հետ կապված այլ պայմաններից: Ահա թե
ինչպես է ձևակերպված հոդվածի այդ մասը.

«Իսկ զգին հացի եւ զգինոյ և զայլոց առաջինաց ըստ բաշ-
քերութեան ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապէս ըստ
նուագութեան եւ ըստ առաջինաց պատճառի փոփոխել ի վեր եւ
ի խոնարհ թագաւորաց լիցի հրամանաւ եւ ի իշխանաց՝ ի իշխանակե-
րով դասաւարտաց եւ ժողովարդայնտաց: Այլ անհաստատ լիցի-
փոխելն յազատաց ըստ կարեաց վաճառողաց, եւ կամ փարթա-
մաց անկարտոից վաճառողաց: Բայց ի իշխանք ի վեր եւ ի խոնարհ
զգինն առնել ուղիղ տեսնելմաք արասցեն, զի մի՞ մշակել եւ այլ
ինչ գործենայք, նմանապէս վաճառականք, վրիպելայ զկեցիցն ին-

քարանչիւր յերկանց. եւ կամ դատաւորք ճշգրիտ բնութեամբ ըստ
հրամանի ի իշխանաց առնիցեն»¹, — ասված է այնտեղ:

Բացի աների ու տարբեր կարգի կալվածքների վաճառքի կար-
գից, Մխիթար Գոշի դատաստանագրքում առանձին հոդվածներով
արված են անասունների, մրգերի, հացահատիկների, զանազան
եղանակներով ձեռք բերված ավարի և այլ ապրանքների վաճառքի
մասին², որը կարևոր նյութ կարող է ծառայել այդ ժամանակաշր-
ջանի ներքին առևտրի շատ հարցեր (առևտրի ապրանքների կազմը և
տարբեր ապրանքների վաճառքի կարգը, շուկաների բնութիւնը և
այլն) լուսաբանելու համար: Միայն պետք է նշել, որ առևտրի բնա-
կազմառում ևս մեծ գործունեություն էր ծավալել նաև վաշխառուա-
կան կապիտալը: Դրամ փոխ տալը XII դ. վերջերին այնքան տա-
րածված երևույթ էր դարձել, որ դրա վերաբերյալ Գոշի դատաստա-
նագրքում սահմանված է հատուկ օրենք³:

Առևտրի բնութիւնը, ծավալի և շրջանակների մասին լի կարելի
զազգուրթ կազմել առանց իմանալու ավյուլ ժամանակվա դրամի
միավորները և դրանց արժեքը:

Այս ժամանակաշրջանի փողի հիմնական միավորի՝ դահկանի
մասին ամենաարժանահավատ վկայությունները մեկը պատկա-
նում է Մխիթար Գոշին: Նա իր դատաստանագրքի կԲ (62-րդ) հոդ-
վածի վերջին մասում, ժառանգութեան բաժանման առիթով՝ երկրում
գործող դրամական միավորների մասին գրում է. «Ոսկի դեկանն
(դահկանքը—Ք. Հ.) վեց դանգ է. պոպատ դեկանն երեք դանգ. թա-
տուն ի դանգին չորիցն մինն»⁴:

Ինչպես տեսնում ենք, ըստ Գոշի դատաստանագրքի ոսկե դա-
հկանը հավասար էր 2 պոպատ դահկանի, մեկ պոպատ դահկ-
անը հավասար էր 3 դանգի (ուրեմն մեկ ոսկե դահկանը հավասար
էր 6 դանգի), իսկ մեկ դանգը հավասար էր 4 թատունի: Դատաստա-
նագրքի մի այլ տեղում հաղորդվում է, որ ոսկի դահկանը հավա-
սար է 13 արծաթ դրամի⁵: Իսկ քանի որ պոպատ դահկանը, որը
արծաթ դրամ էր և կազմում էր ոսկե մեծ դահկանի կեսը, ուրեմն
XII դ. վերջերին նրա կուրսը հավասար էր 6¹/₂ արծաթ դրամի: Պա-
պատ դահկանը կոչվում էր նաև բրոզադանդական իպերպեր:

XIII դ. վերջերին դահկանի արժեքը բավական իջել էր: Ըստ

¹ Մխիթարայ Գոշի Դատաստանագրի 2-րդ, էջ 435—436:

² Նույն տեղը, էջ 365—366, 367—369, 442 և այլն:

³ Նույն տեղը, հոդ. ե2, էջ 357:

⁴ Նույն տեղը, մաս 11, էջ 372:

⁵ Նույն տեղը, էջ 369:

¹ Մխիթարայ Գոշի Դատաստանագրի 2-րդ, մաս 11, հոդ. ժԻԳ, էջ 434—435:

Ստ. Օրբելյանի մի հիշատակության, մեկ զահեկանը հավասար էր 10 դրամի: Նրա հիշատակած այդ զահեկանը համապատասխանում էր Գոշի հիշատակած սրբապատ զահեկանին (կամ բյուզանդական իպեոպերին): Եվ այսպիսով, ոսկի մեծ զահեկանը Օրբելյանի ժամանակ արժեք էր 20 դրամ (2.10 = 20 հ)՝:

Սակայն դրամական միավորների կշիռն ու արժեքը տարբեր ժամանակներում տարբեր են եղել: Ընդհանուր առմամբ, միջին դարերի համեմատությամբ, XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ոսկու և արծաթի 1-ը 10-ի համեմատությունը դարձել էր 1-ը ուս 22-ի: Արծաթի արտադրության մեծացմամբ նրա արժեքային միավորը անկում էր ապրում¹:

Բայց դրանք Հայաստանում շրջանառության մեջ գտնվող բոլոր դրամները չէին: Երևանում և նրա շրջակայքում 1907 թ. հայտնաբերվել են մոնղոլական շրջանի, իլխավարայես Արղուն-խանի (1284—1291) և նրա նախորդների ժամանակների վերաբերող մեծ քանակությամբ դրամներ: XIV դ. վերաբերող մոտ 300 արծաթյա դրամներ են հայտնաբերվել նաև Երևանի առուներից մեկը մաքրելիս: Այդ դրամների վրա պահպանվել են դրամը հատող թագավորի անունը, հատանելու թվականը և այն քաղաքի անունը, որտեղ տրվել էր դրամը կտրվել է: Հայտնաբերված դրամների մեջ կան Քավրի-զում, Քիֆլիսում, Բայրեղում և այլ քաղաքներում հատված տարբեր դրամներ: Գրանցից բացի, 1937—1938 թվականներին մոնղոլական ժամանակների դրամներ են հայտնաբերվել պետական համալսարանի հին շենքի և օպերայի ու բալետի թատրոնի շենքի մոտից և քաղաքի այլ մասերում: Հայտնաբերվել են նաև վրացական XIII դարի և բյուզանդական XIV դ. արծաթյա ու պղնձյա մեծ քանակության հատող դրամներ²:

XIII—XIV դարերին վերաբերող արծաթյա և պղնձյա դրամների այլքան առատությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակ

Երևանը առևտրի աշխույժ կենտրոն էր: Գրանք միաժամանակ հիմք են տալիս ենթադրելու, որ Երևանը առևտուր-տնտեսական կապեր ուներ Հայաստանի և Մերձավոր Արևելքի բազմաթիվ կենտրոնների՝ Թավրիզի, Նախիջևանի, Էրզրումի, Մարագախի, Խոյի, Գանձակի, Քիֆլիսի և այլ քաղաքների հետ³:

XIV դարում ոսկի և արծաթի դրամներ են հատվել նաև Երևանում: Ոսկի առաջին դրամն այստեղ հատվել է Աբու-Սալիդի ժամանակ՝ 1333 թվականին, իսկ արծաթի դրամները դրանից 10—12 տարի անց՝ նուշիրվան-խանի օրոք՝ 1344 թվականին:

XII—XIII դարերում Հայաստանում զարգացում ապրող առևտուրը մասամբ շարունակեց (հատկապես տարանցիկ և արտաքին առևտուրը) վերին աստիճանի մեծ մոնոպոլիական տիրապետության առևտուրը՝ վերին աստիճանի նաև մոնոպոլիական տիրապետության առևտուրը՝ XIII դարում և XIV դ. ստացվել կեսին: Մոնոպոլիական շրջանում XIII դարում և XIV դ. ստացվել կեսին: Մոնոպոլիական շրջանում ընդհանրապես առևտուրը գիտում էին իրենց գանձարանը հարստացնելու ամենակարևոր աղբյուրներից մեկը և մոնոպոլիական խաները այդ պատճառով վարում էին առևտուրը հովանավորող քաղաքականություն: Այդ պարզ կերպով երևում է նաև Երևանի օրինակով, որը ոչ մեծ ֆեոդալական քաղաք էր, բայց ուներ բավական մակարդակի առևտուր:

Առևտրականներից գանձվում էր մաքս, որի մասին Մխիթար Գոշի գաղտնաբանագրքում հետևյալն է ասված. «Եսկի զմասն առևտուր իրաւապէս յորժամ ի քաղաք կամ ի դաւառս եկեալ վաճառիցեն: Այլ մի լիցի յանցս ճանապարհաց մարտիկ Եթէ ոչ վաճառիցեն, բայց վարձս միայն թէ ի Յշնամեաց ընդ նոսա զնալով պահիցեն: Այլ մաքս հրամանաւ լիցի թաղաւորաց. եւ իշխանք նմանապէս ի հրամանս նոցա մաքսիցեն»:

Այլ ի վաճառս խարդաց ցողեռնս՝ ըստ զողիցն հատուցի»⁴: Գաղտնաբանագրքի այս հոդվածից պարզ երևում է, որ XII դ. վերջերին մաքս էր գանձվել միայն ապրանքը վաճառելու դեպքում, ճանապարհների համար մաքս չի վերցվել և մաքսը, ըստ երևույթի, երկրի մաշտաբով միասնական է եղել: «Այլ մաքս հրամանաւ լիցի թաղաւորաց. եւ իշխանք նմանապէս ի հրամանս նոցա մաքսիցիցեն»: Ճանապարհների, կամուրջների և այլնի համար մաքս չեն վերցրել: Այս առևակետից Հայաստանում և հարևան երկրներում միջին դարերում գործող մաքսային օրենքների տարբերվում էին Արևմտյան եվրոպայի համանման օրենքներից: Արևմտյան եվրո-

¹ Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սեբասիան, էջ 488, Քաղ. Աղղալբեզյան, Մի գաղտնիք հայ վիճակն արձանագրութիւնների մեջ ու նրա նշանակութիւնը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, «Տեղեկագիր» 208 Վիտուսի և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, էջ 50:

² Քաղ. Աղղալբեզյանի եզր. հոդվածը, էջ 50:

³ Տե՛ս «Տեղեկագիր» 200 ԳԱ, 1947, № 5, էջ 78:

⁴ E. Пахомов, Монетные клады..., էջ 55:

⁵ Նույն տեղը, էջ 37—38:

⁶ 2. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV օր. թվկն. դիւ., էջ 38—39:

¹ 2. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV օր. թվկն. դիւ., էջ 39—40:

² Մխիթարայ Գոշի Գաղտնաբանագիր 2ուցոց. մասն II, հոդ. ճԻԳ, էջ 425:

պայի երկրներում մարտադրում էր ոչ միայն վաճառվող ապրանքները, այլ մարս էին գանձում նաև ճանապարհների՝ հատկապես գետային ճանապարհների համար: Այսպես, օրինակ՝ ընդհուպ մինչև XIX դարի սկզբները Հոնոտսի, Գանուրի և ջրային այլ ճանապարհների վրա գոյություն ունեին տասնակների հասնող մարտասնկեր, որոնք մարս էին գանձում այդ ճանապարհներից օգտվելու համար:

Մեղ հետաքրքրող ժամանակներում Հայաստանում անտորականներից գանձվող մարքը՝ օրածառ (որ սովորաբար կոչվել է նաև «գահիակ») գանձվել է վաճառվող ապրանքի գին $\frac{1}{10}$ -ի չափով: Այդ պարզ երևում է Մխիթար Գոշի դատաստանագրքի մի հոդվածից, 1306 թ. վիճադր մի արձանագրությունից և այլ վկայություններից: Հ. Ժամկոչյանի կարծիքով գոյություն է ունեցել երկու կարգի մարք՝ «մեծ բաժ» և «սփոր բաժ»: «Մեծ բաժ» համապատասխանում է «դահիակ»-ին («սփորակ»՝ ձախ = ատարա՞ բառի և կազմել է վաճառվող ապրանքի գին $\frac{1}{10}$ մարք, իսկ «սփոր բաժ»-ը ավելի քիչ մասն է կազմել: Նրա կարծիքով «մեծ բաժ»-ը գանձվել է ոչ առաջին անհրաժեշտության ապրանքներից՝ պեճանների առարկաններից, հողից և այլն, իսկ «սփոր բաժ»-ը՝ առաջին անհրաժեշտության ապրանքներից՝ հացահատիկներից, մրգերից և այլն¹:

Միջնադարյան մյուս բոլոր բազաքների նման Երևանն էլ ունեցել է սոցիալական ատարումը բնակչություն: Նրա բնակչությունը բաղկացած էր ոչ մեծ ինչ կաղձող ֆեոդալների (աշխարհիկ և հոգևոր) խմբից, աղաա դուղագյիներից, արհեստավորներից ու անտարականներից, «վարձկան»-ներից, ծառաներից ու ազախիներից: Դրանցից բացի, Երևանը զբեթն մշտապես լինելով բերդաբազաք՝ այնտեղ կար նաև բավական բազմամարդ կայազոր: Պետք է ենթադրել, օրինակ՝ որ XI դ. առաջին կեսում մասամբ այստեղ էր կենտրոնացված վերը հիշված Ապիրատ իշխանի 12 հազար հեծակների մի մասը:

Քաղաքի բնակչության ֆեոդալական խավը, ինչպես ասվեց, բաղկացած էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ներկայացուցիչներից: Աշխարհիկ ֆեոդալների զասին էին պատկանում Ապիրատ իշխանը իր տոհմով հանդեմ (XI դ.), վարդ բմբիլը, Սահմադիրը և արիշ շատերը²: Հասարակության արտոնյալ այս խավը դրսևության

տերն էր, քաղաքում ունենալով զանազան արտոնություններ և իրավունքներ, ընդհուպ մինչև հարկերի, անշարժ գույքի առ ու վաճառքի և այլնի վերաբերյալ կարող ու կանոն կամ ուղղակի օրենքի հրապարակումը ներտալար: Եթե նրանք մինչև X—XI դարերը ծագում էին հայկական նախադարական-իշխանական տներից, ապա զրանից հետո հասարակության ֆեոդալական շերտը սովորաբար համալրվում էր այսպես կոչված մեծատունների ներկայացուցիչներով՝ ֆեոդալական հասարակության զարգացման հետեանքով նոր առաջացող վաշխառու-ֆեոդալներով՝ սահմադրիններով, որոնք հարկահանության, առևտրով, կապալներով, վաշխառության և այլ եղանակներով կուտակել էին հսկայական հարստություններ: Մոնղոլական տիրապետության շրջանում քաղաքի ֆեոդալական վերնախավը արգեն զրեթե բացառապես բաղկացած էր այդ տիպի հասարակներից: Դրանք սովորաբար կոչվում էին «պարոն»-ներ կամ «պատրոն»-ներ: Դրանցից օրինակ՝ Սահմադիրը ամենահամեմատ հաջիվներով Անիում, Քաջբերուժիք զավառում և նրա կենտրոն Արհնշում, Օշակառում, Մրենում, Երևանում³ և այլուր ունեն հարյուր հազարավոր ոսկե դահեկների հասնող ընդարձակ կալվածքներ⁴, խանութներ, իջևանատներ, տերունական անտեսություններ և այլն, և այլն: Նա միայն Մրենի իր պալատը կառուցելու համար (1276—1286 թթ.), Քախսին էր վնենտիկյան 40 հազար ոսկե դուկատու կառուցիչի կենդեցու վրա ինոցը 1264 հազար ոսկե արձանագրությունից պարզ երևում է, որ Սահմադիրն իր սեպք օրենքի ուժ ունեն քաղաքի բնակչության համար⁵, որ նա քաղաքի տեր-իշխանն էր, շեյաժմ ինքը կարող էր այդտեղ չալրել:

¹ Գիտ. աշխ., հ. 47, 1955, պր. 2, էջ 93—104, Աղառ Հովհաննիսյան, Գրվածքներ այս ազատագրական մտքի պատմության, գիրք 1, էջ 205—210, Քարհին Ասուրյան, Քաղաքների և արհեստների Հայաստանում IX—XIII դարերում, հ. 11, էջ 55—56, 126, 130—131, «Պատմա-բանասիրական հանդես», 1955, № 2, էջ 43, 47, 50 և այլն:

² Աղառ Հովհաննիսյան, Արշալոք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կաղձողային նախազգրեկական կուտակում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 213:

³ «Տեղեկագիրք» Հեծ02 պատմ. և զրաի. ինստիտուտի, գիրք 1, 1938, էջ 168—172, Կ. Ասատուրյան, Վճիռական տարեգիր, էջ 124, 126, 130, 133, 241—242, Խ. Մ. Մարր, Ашот, Ереван, 1936, էջ 70:

⁴ Տեղեկագիրք Հեծ02 պատմ. և զրաի. ինստիտուտի, գիրք 1, էջ 171—172:

¹ Տե՛ս Հ. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, Քեհն. գիտ., էջ 80—82:
² Նույն տեղը, էջ 83—84:
³ Տե՛ս Մեծփառենու Մխիթարյան, Ստորագրություն հուլիալուր մեծի սխարին Այրի վանքում, էջ 50, Դ. Ալիշան, Արարատ, էջ 162, Հ. Գ. Ժամկոչյան, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արևանագրության մասին, Երևանի պետականագրասիրական թանգարանի հանդես, 1938, № 1, էջ 171—172:

Ֆեոդալների ձեռքին էր գտնվում վարչական պաշտոնները՝ նրանք ազատ էին բազմից բեռ-ֆեոդալին հարկ վճարելուց։ Ֆեոդալների մյուս կողմից ակադեմիան էր բարձրաստիճան հոգևորականությունից, որի ներկայացուցիչների մասին վիճաբանական ու մատենագրական տեղեկությունները համեմատաբար ավելի ազատ են, եթե նկատի չունենանք վիճազիր արձանագրություններում վանքերին ու եկեղեցիներին նվիրվող կալվածքներին մասին եղած վկայությունների անողղակի ակնարկներն ու տեղեկությունները։ Այդպիսի արձանագրություններից մեկը, որը վերաբերում է 1301 թվականին, գտնվում է Երևանի կաթողիկե եկեղեցու վրա և որի լրով տեքստը մեր կողմից վկայակոչված է նույն այս գլխում առևտրի մասին խոսելիս¹։ Իսկ այդ արձանագրությունից պարզվում է, որ Հառիճի, Կեչառիսի, Գեղարքի, Սևանի և այլ վանքերի հետ միասին Երևանում կալվածքներն ու անշարժ մեծ գույք ունեյր նաև բազարի կաթողիկե եկեղեցին։ Եկեղեցին ազատված էր հարկերից, նա ինքն իր հերթին գանձում էր հատուկ հարկեր։ Նա լիովին ֆեոդալականացած էր։ Աշխարհիկ ֆեոդալների նկատմամբ հույսեր ֆեոդալները կալվածատիրական առումով ավելի ապահով և կապուստիկ զորություն ունեին։ Նրանք լիովին տիրություն էին անում վանքերին և եկեղեցիներին նվիրատվությունը արված կալվածքների վրա, իսկ նվիրատվությունը գնալով ավելի ու ավելի մեծ մասշտաբներ էր ընդունում։ Առևտրի և վաշխառության հետ կապված աշխարհիկ ֆեոդալների սնանկացման վտանգից եկեղեցու ֆեոդալականացած հայրերը զերծ էին, թեպետ նրանք էլ ունեին առևտրական ու վաշխառական ակտիվ գործունեություն։ Երևանում, իբրև համեմատաբար փոքր քաղաք, բարձրաստիճան հոգևորականությունը մեծ թիվ չէր կազմում։

Քաղաքի բազմամարդ խմբերից մեկը, բայց ոչ ամենաբազմամարդը, կազմում էին արհեստավորներն ու մանր առևտրականները։ Արհեստավորներն ու առևտրականները, որոնց նեղ իմաստով կարելի է կոչել նաև քաղաքացիները, իրենց սոցիալական վիճակով, մասնավորապես—XIII դարերում, երբ զարգանում էր քաղաքային կյանքը, բոլոր կարգի գյուղացիներից բարձր էին կանգնած։ Բուն քաղաքային այդ բնակչությունը շինականությունից արտոնյալ էր գեղես Կ դ. սկսած, բայց նրանց այդ բարձր վիճակը իրավական

առումով օրենքի ուժ է ստանում զարգացած ֆեոդալիզմի զարգացումում, երբ հասարակության շերտավորումն ավելի էր խորացել և երբ արհեստավորներն ու առևտրականները վերջնականապես ձևավորվել էին որպես քաղաքային մի առանձին դաս, որը արտագրական ու առևտրական զործերի մեջ կարևոր դեր խաղալուց բացի իր մասնակցությունն ուներ նաև քաղաքի ներքին կառավարման, պաշտպանության և այլ գործերում։ Մխիթար Գոշի պատաստանագրում քաղաքացիների՝ արհեստավորների ու առևտրականների՝ զեղջուկների նկատմամբ ունեցած համեմատաբար բարձր ու արտոնյալ դիրքը հետևյալ կերպ է ձևակերպված.

«Երբ քաղաքացիք առաւել քան զզեղջուկս պատուիցին, և զեղջուկաց նմանապէս առաւել պատիւ լիցիք քան բնակչաց ազատակի, սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի և կարդ առաջնոցն է միւրոյ թագաւորացն այլոքեիկս»։

Դատաստանագրքի այդ հատվածից դժվար չէ եզրակացնել, որ XII դ. վերջերին իրենց սոցիալական դրությունը հասարակության ցածր խավը իր հերթին բաժանվում էր տարբեր դիրք ու «պատիվ» ունեցող շերտերի, որոնց մեջ ամենաբարձր աստիճանի վրա գտնվում էին քաղաքացիները, ապա զալիս էին զեղջուկները և ազատակի ավելի կախյալ բնակիչները։ Մի շարք արհեստների և բավական ծավալուն առևտրի նշանակալից կենտրոն Երևանի բնակչության մեջ արհեստավորները և առևտրականները նույնպես գյուղացիությունից ու քաղաքի մյուս ցածր խավի բնակչությունից ավելի «պատվավոր» էին ու բարձր կանգնած։

Քաղաքի բնակչության ամենաբազմամարդ խումբը ըստ երևույթին գյուղացիությունն էր, որը հիմնականում ազատ գյուղացիություն էր, չէր ճորտացված և ուներ իր սեփական հողերը (այդիները, բանջարանոցները, ցանքսերը), որոնք կարող էր անօրինել իր ցանկացած ձևով՝ վաճառել, ժառանգել, փոխել և այլն։ Միջնագյուղային բոլոր տիպի քաղաքներում բնօգնաբազմ գյուղացիություն մեծ տոկոս էր կազմում, որովհետև ֆեոդալական քաղաքն անկախ իր մեծությունից զգալի չափով կապված էր գյուղատնտեսության հետ։ Գրանք ունեին իրենց այլգիները, բանջարանոցները, ցանքատարածությունները, անասնապահությունը։ Իսկ համեմատաբար փոքր քաղաքներում, ինչպիսին էր նաև Երևանը, և գյուղատարածքներում գյուղատնտեսությամբ զբաղվողները զերակոչում

¹ Ճեքստը տե՛ս Կ. Կաթողայան, Երևանի կաթողիկեի և նորահայտ հուշարձանի արձանագրությունները, «Տեղեկագիր» ՀեՍՀ պատմ. և գրակ. ինստիտուտի, գրք 1, էջ 173։

¹ Մխիթարյոյ Գոշի Դատաստանագրի Լայց, մաս II, էջ 318։

էին բնակչության մյուս բոլոր խմբերին միասին վերցրած: Գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվում էին նաև արհեստավորներն ու նույնիսկ անտարականները, բայց այն զրանց համար եկամտի հիմնական աղբյուրը չէր և չէր փոխում նրանց սոցիալական վիճակը:

2. Ժամկշտյանի կարծիքով միջին դարերի երևանում գոյություն է ունեցել նաև «շինականություն»՝ ճորտացված գյուղացիություն¹, Ընդհանուր առմամբ, կարելի է հավանական համարել նրա այդ ենթադրությունը նկատել ունենալով, որ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներն այնտեղ ունեին տերունական խոշոր տնտեսություններ, որոնց մեջ առաջին հերթին կարող էին աշխատել կախյալ և ճորտացված գյուղացիները՝ ինչպես հարևան գյուղերից եկածները, այնպես էլ քաղաքում ապրողները: Բայց զրանց թիվը X—XIII դդ. երևանում ըստ երևույթին ազատ գյուղացիների թվի նկատմամբ շատ փոքր է եղել, որովհետև քաղաքի հողաշին օտարածությունների մեծազույց մասը գտնվում էր ազատ գյուղացիների ձեռքին:

Միջնադարյան մյուս քաղաքների նման երևանում էլ կար մեշակո-ների և «վարձկան»-ների մեծ զանգված: Այգեղորակական աշխատանքների շրջանում երևան մշակույթյան էին դալիս աղքատ շինականներ, ինչպես նաև երևանում բնակվող շատ աղքատներ, լրացուցիչ եկամուտներ ձեռք բերելու համար: Մրանք սակայն հասարակության առանձին խավ չէին կազմում, մշակույթյուն կառուցել էին անել և՛ գյուղերից եկողները, և՛ քաղաքի աղքատները, որոնք առանձին-առանձին պատկանում էին համապատասխան հասարակական խմբերի: Այլ կերպ ասած, մշակույթյունը հասարակական խումբ չէր, այլ ուղղակի ժամանակավոր զբաղմունքի տեսակ: Այլ բան էր վարձկանը, որը դարձյալ ըստ էության մշակ էր, բայց կազմում էր քաղաքային բնակչության մի առանձին խումբ:

Օրավարձով աշխատող վարձկանների կարիքը միջնադարյան քաղաքում շատ մեծ էր: Դրա կարիքը զգում էր և՛ արհեստավորը, և՛ անտարականն ու այլ շատ քաղաքացիներ: Վարձկանները ապագատակարարացված սեպարոններ էին, որոնք կազմում էին քաղաքի բնակչության ամենատարին, իրավազուրկ շերտը²: Միջնադարյան Հայաստանի քաղաքների վարձկանների մասին հիշատակություն կա և՛ Թովմա Արժրուհու մոտ³, և՛ Գավիթ Ալավկա որդու

գառասառնազրբում⁴, որտեղ հատուկ օրենք կա վարձկանների աշխատանքի բնույթի և վարձկանի ու դորձատիրոջ աշխատանքային հարաբերությունների մասին: Վարձկանի օրվա աշխատանքային մասը փաստորեն չէր սահմանափակված: Նա աշխատում էր արևածագից մինչև մայրամուտ⁵, որը դարձան և ամառվա ամիսների միջին հաշվով օրական կկազմի 14 ժամից ոչ պակաս: Նրանց վաստակը, որ միշտ լինում էր դրամով, շնչին էր, կյանքի պայմանները՝ աննախանձելի: Նրանք հազիվ էին վաստակում օրվա հասցը, բայց շատ դեպքերում ուղղակի ենթակա էին սովահարություն: Գրանքը գանգվածորեն կազմում էին քաղաքի օտարաբու-ները, «կարոտաղբ»-ները, «սանկալ»-ները, «տառտապակը»-ները և նույնատիպ այլ հորբորումներով մեծ աղբյուրներում հայտնի ծայրահեղ աղքատները: Վարձկանների վիճակի և աշխատանքային վատթար պայմանների մասին կարող ենք դատական լրիվ զազափար կալման Մխիթար Գոշի «Յաղագր Գառասառնազր վարձկանաց ըստ ամենայնի» վերնագրեր կրող ԶԳ (Ց3) հոդվածից:

«Մի՛ զլասցիս զվարձս տնանկին եւ զկարօտելոյ կորաբց բոց կամ յնակաց քաղաքաց բոց,—սոված է այնտեղ,—նոյն օրին հատուցես զվարձս եւ մի՛ մտանիցէ արեղանի վ զերայ այնորիկ, դի տնանկ է եւ այն է յոյս նորա, եւ մի՛ բողոք հարկանիցէ զքէն առ Տէր եւ լինցի բեզ այն ի մեղս»: Հնից կեղոյ մովսխական այս օրենքը հենց այնքանով, որ տեղ էր գտել Գոշի գառասառնազրում, որտե՛ս համապատասխանում էր և միջնադարյան Հայաստանի վարձկանների պայմաններին: Գոշն իր հերթին այդ օրենքը լրացնում է հետևյալ պարբերությամբ. «Ենայտ է դի յաղագր աղքատութեան եղել վարձկան եւ աւուրն պիտոյից. զի թէ ոչ հատուցէ յսուրը դորձոյն, գառասառնաւ է անկի քան որ վարձն իցէ-հատուցանել»⁶:

Ուրեմն վարձկանը օրվա հացի կարոտ էր, տնանկ ու կարոտյալ: Նա մի կտոր հաց էր ձեռք բերում օրվա վատտակի միջոցով միայն, որը նա ստանում էր զրամով:

¹ ՄՍՄ Մեսոպ Մատոցի անվան Մատենադարան, ձևագիր № 849, էջ 57-ում 2-մտ. Թ. Ն. Ասախչյան, Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիոլոգիական կազմը, Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 2, էջ 52:

² ՏՃ՝ 1, Խալիչյան, Աղաղագրաբանական զազափարությունները Հայաստանում Մ11—XIII դարերում, Ն. Մառի անվան կարգիտի «Եղիտառություններ», 1947, № 2, էջ 188:

³ Մխիթարայ Գոշի Գառասառնազրի Հայոց, էջ 285:

⁴ Ք. Ն. Ասախչյան, Հայաստանի միջնադարյան քաղաքների բնակչության սոցիոլոգիական կազմը, Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 2, էջ 52:

⁵ 2. Ժամկշտյան, Երևանի XIII—XIV դարերում, ԹՅՍ, դիւ, էջ 99—102:

⁶ К. Маркс и Ф. Энгельс, Социализм, т. IV, էջ 41—42:
⁷ Թովմա Արժրուհի, Պատմութիւն տանն Արժրուհեաց, Թիֆլիս, 1917, էջ 508:

Քաղաքում կային որոշ թվով նաև ծառաներ ու աղախիներ, որոնք սակայն հասարակության առանձին խավ չէին կազմում: Արանք փաստորեն ստրկական վիճակում էին գտնվում և բնագործ էին: Նրանք մի փոքր հացի համար տիվ ու դիշեր աշխատում էին ստորջ տնտեսության մեջ: Գոչի դատաստանագրքում հատուկ հոդվածներով (ԻԱ և ԻԷ) տրված են տերերի կողմից ծառաներին ու աղախիներին սպանելու, ազատություն վաճառելու, աղախիներին ու ծառաներին փրկագնելու կամ ազատություն տալու և այլնի վերաբերյալ¹: Իսկ դրանից երևում է, որ ծառաներն ու աղախիներն ու՛նեման համար, կ'ստացվեին առուժով գտնվում էին վաստաբարգույն պայմաններում, ոչնչով չտարբերվելով տնային ստրուկներից: Նրանք ենթակա էին ծեծի, վաճառքի, հեղձման²:

Քաղաքի բնակչության թվի վերաբերյալ չկա որևէ վկայություն կամ կողմնակի փաստ, որը հիմք ծառաներ նույնիսկ ենթադրության համար: Միայն անկիճելի է, որ այդ շրջանում Երևանը ֆեոդալական ոչ մեծ քաղաք էր՝ հավանաբար մինչև 15—20 հազար բնակչությունով: Բնակիչների ճնշող մասը կազմում էին հարկատուները՝ արձևատվորներն ու անտրականները, կախյալ ու ազատ գյուղացիները և բնակչության ցածրագույն խավին պատկանողները՝ վարձկանները, մշակները, ծառաները և աղախիները:

Քաղաքի հարկատու բնակչությունից գանձվել են ֆեոդալական, պետական և եկեղեցական զանազան հարկեր: Կախյալ գյուղացիությունն այդ բոլորից բացի կատարել է նաև կոռ և հարկագիր զանազան աշխատանքներ: Մենք արդեն ծանոթացել ենք «դահիակ» (կամ «բաժ») կոչված հարկին, որը գանձվում էր վաճառվող կալվածքի կամ ապրանքի գնի $1/10$ -ի չափով:

Այժմ մի քանի խոսք մյուս հարկերի վերաբերյալ:

Մրենում 1273, 1284 ու 1288 թվականներին և Օշականում 1288 թվականին թողած արձանագրություններից երևում է, որ դրանք սեր Սահմազինը հացահատիկներից, դարմանից և երկրագործության այլ նյութերից գանձել է «շարխատ» կոչված հարկը³, իսկ խաղողի ու պտղատու այգիներից և դիտուց՝ «խալես» (կամ «խալա») հարկը⁴:

Մրենի և Օշականի նման Երևանը ևս պատկանում էր Սահմազինին: Հետևապես այստեղ ևս պետք է հիմնականում գանձվեին

այնպիսի հարկեր, ինչպիսիք գանձվում էին Օշականում և Մրենում: Հարկերություններ անշուշտ գոյություն ունեին վերջիններիս և Երվանի հարկերի միջև, որովհետև դրանք գյուղ կամ գյուղաքաղաք էին, իսկ Երևանը՝ քաղաք: Բայց հարկախին տեսակետից ֆեոդալական քաղաքի գյուղացիությանը դրազվող բնակչությունը հաղիվ թե որևէ էական տարբերություն ունենար գյուղաքաղաքի և գյուղի բնակչությանից:

«Շարխատ» հարկի վերաբերյալ վկայությունները բազմաթիվ են: Դրանք տեղ են գտել XI—XIII դդ. վիճմագիր արձանագրությունների մեջ, բայց որոնց այդ հարկը գանձվել է հացահատիկներից, դարմանից, բամբակից, այգիներից (իսկ խաղողի այգիներից գանձվող հարկը, ինչպես նշվեց, կոչվել է «խալես»), հողերից և այլ օբյեկտներից: Հակառակ Ն. Սառի և Ս. Եղիազարով տեսակետի, բայց որի «շարխատ»-ը էր մասնագրական իրավունքով սահմանված «տասնորոգ»-ն է՝, Ն. Մանանդյանը ցույց է տվել, որ այդ տերմինը մեզ մոտ գոյություն է ունեցել հին դարերից և մեզ հետաքրքրող շրջանում այն տեղական ֆեոդալների օգտին գանձվող բնահարկերից մեկն էր⁵:

Օգտվելով Մխիթար Գոչի դատաստանագրքի տվյալներից⁶ Ն. ժամկոչյանը եկել է այն ճիշտ եզրակացության, որ «շարխատ» ֆեոդալական բնահարկը գանձվել է անշուշտ և բնական ջրերով սոսոցվող հողերից՝ ստացված բերքի $1/10$ -ի չափով, իսկ արձևատվական սոսոցման ենթակա հողերից՝ բերքի $1/5$ -ի չափով: Նեղ իմաստով «շարխատ»-ը գանձվում էր հացահատիկներից:

Երևանի հողերը գրեթե ամբողջությամբ պատկանում էին վերջին խմբին, սահմասական սոսոցման ենթակա հողեր էին և հետևապես ֆեոդալի օգտին գանձվող այդ հարկը կազմում էր բերքի $1/5$ մասը: XI—XIV դարերի աղբյուրների մի քանի վկայությունները հաղիվ առնելով՝ ենթադրում են, որ ուշ միջնադարում սովորաբար «շարխատ» և կոչվել անբողի հողերից գանձվող բնահարկը, իսկ ջրաբեր հողերից գանձվող նույն կարգի հարկը կոչվել է «խալես»

¹ Н. Я. Марр, Новые материалы по армянской этнографии, СПб., 1893, էջ 80, С. Егназаров, Исследование по истории армянского права, Киев, 1919, էջ 4:

² Ն. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, որ. 2, Երևանի պետականագրարին «Գիտական տեղեկագիրք», 1928, № 4, էջ 32—55:

³ Մխիթարայ Գոչի Գատաստանագիրի Հայոց, էջ 314—315:

⁴ Ն. ժամկոչյան, Երևանը XI—XIV դարերում, Քնն. դիս., էջ 105—107:

⁵ Տե՛ս Կ. Կասատյանց, Վիճակն տարեգիր, էջ 20, 111, 116, 130:

¹ Մխիթարայ Գոչի Գատաստանագիրի Հայոց, էջ 336 և 340—341:

² Տե՛ս նույն տեղը, էջ 309, 335—337, 340—341, 343, 391 և այլուր:

³ Կ. Կասատյանց, Վիճակն տարեգիր, էջ 126 և 130:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 8, 13, 14, 26, 107, 126—127, 142 և այլն:

կամ «խալա», որը կազմել է բերքի $\frac{1}{3}$ մասը: Հիմնավոր կերպով ժխտվում է՝ «խալան»-ն որևիցե խմբիչներից գանձվող ժամանակակից սկզբից հետ նույնպաներու տեսակետը, որն առաջ է բաշխել Թ. Ավգարյանը ղեկուս 1926 թվականին²:

Գյուղատնտեսությանը զբաղվող բազմաթիվ կախյալ բնակչությանը, բացի ֆեոդալին տրվող այդ հարկերից, նրա համար կատարում էր կոռ և ծանրաբեռնված էր զանազան հարկադիր աշխատանքներով: Հարկատու էին նաև արհեստավորներն ու առևտրականները, որոնցից շատերը առևտրի ու արհեստագործության հետ միասին զբաղվում էին այնպիսի գործով և քանակաբանությանը: Այնպես որ նրանք ֆեոդալին հարկ էին վճարում և՛ առևտրի ու արհեստագործության, և՛ այնպիսի գործության ու ղեկնործության համար:

Ֆեոդալական հարկերին զուտվում էին պետական հարկերն ու տուրքերը և պարտադիր աշխատանքները: Մոնղոլական տիրապետության շրջանում դրանք՝ սկսած գլխահարկից մինչև հողային հիմնական հարկը, երկար շարք էին կազմում և շատ ծանր էին հարկատու բնակչության համար: Միայն հողային հիմնական հարկը կազմում էր բերքի $\frac{1}{3}$ մասը³:

Սակայն պակաս ծանր չէր նաև գլխահարկը, որը մոնղոլական տիրապետության սկզբնական շրջանում գանձվում էր բոլոր հյուսիսային ժողովուրդներից, իսկ հետագայում՝ ոչ մահճեղականներից: Մոնղոլական տիրապետության շրջանը գլխահարկի մասին ամբողջական վկայություններ ունի Գրիգոր Ակինքցին, որի հաղորդած տեղեկությունները հաստատվում են այլ պատմագիրների՝ Կիրակոս Գանձակեցու, Վարդան Վարդապետի (Բարձրբերդցի) և այլոց հիշատակումներով: Մոնղոլական տիրապետության շրջանում գլխահարկը կազմել է «խարաջ»: Այն ըստ Գրիգոր Ակինքցու գանձվել է 15—60 տարեկան տղամարդկանցից՝ յուրաքանչյուրից տարեկան 60 «սպիտակ»⁴, որը մտատվորապես անում է 16,5 ոսկի ոսրի: XVI դ. սկզբին գլխահարկը արդեն կազմում էր 7—8 զբահն-

վան» (19,25—24 ոսկի ոսրի)⁵: Գլխահարկը հավասար չափով գանձվում էր և՛ դուրեր, և՛ բազմաթիվ բնակիչներից: Քաղաքի պետական հիմնական հարկերից մեկն էլ «քամդալ» կոչված հարկն էր, որը գանձվել է առևտրից, արհեստներից, հասարակական հիմնարկներից: XIV դ. այս հարկը կազմել է ավելի քան արքայի արժեքի 3 %⁶—ը:

901 թվականին վերաբերող Մաքենիսի վիճադիր արձանագրության հիման վրա, որի տեքստը մեք բերել ենք այլ աղբյուրով⁷, Ս. Հակոբյանը գտնի է այն ճիշտ եզրակացության, որ Բագրատունիների թագավորության շրջանում այլ հարկերի շարքում տեղ էր գտել նաև «շար» կոչված հարկը: Այս հարկը գանձվում էր հարկազրույցի ենթակա բոլոր օբյեկտներից՝ գյուղերից, այգիներից, գաջ տներից, ձիթհանքերից ու ջրաղացներից, աղահանքերից ու ձկնորսարաններից, դեռերից ու լճերից, կուղպակներից, քարավանատներից, անասուններից, բերդերից ու ամրոցներից, ճանապարհներից և այլն: «Չար»-ը պետական-առաջնական հարկ էր, այն գանձվում էր առաջնական նպատակներով:

Սակայն առաջնական հարկերը և հարկադիր աշխատանքները ահավոր չափերի են հասնում մոնղոլական տիրապետության շրջանում: Հայտնի է, որ մոնղոլական պետությունը, լինելով ապստամբ ֆեոդալական մեծ աշխարհակալություն, իր տիրապետության տակ գտնվող ժողովուրդներից բնդհանուր հարկեր գանձելու և զորք հավաքելու հետ միասին, առաջնական բազմատեսակ հարկեր էր դրել նրանց վրա, հաճախակի նրանց բռնելով նաև հարկադիր աշխատանքների: Հայաստանի և մյուս ենթակա երկրների անտեսական վիճակն էլ ավելի է վատանում մոնղոլներին հաջորդած թևուղայանների և թուրքմենական ջոզների տիրապետության շրջանում:

Ինչպես միշտ, այնպես էլ X—XIII դարերում արտոնյալ վիճակի մեջ էր գտնվում եկեղեցին: Եկեղեցիներն ու վանքերը այս դարերում ոչ միայն անչափ հարստանում էին նվիրվող և զբաղվող

¹ ՏՊ՝ С. Егнazarov, Исследование по истории армянского права, էջ 40, 2. Ժամայնյան, Երևանը XIII—XIV դարերում, թեկն. դես., էջ 109—111:

² Քաղ. Ավգարյան, «Հաս, սակ ու բաժ», 2ևՈ2 Գիտութ. և արվեստի ներառյալի «Տեղեկագիր», 1926, № 1, էջ 78:

³ ՏՊ՝ И. П. Петрушевский, Хамдалах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья. «Известия», АН СССР, отд. общ. наук, 1937, № 4, էջ 897:

⁴ Գրիգոր Ակինքցի (Մաղաբա Սրեպ), Պատմութիւն վանս ազգի նեոտոգաց, Փետրերուգ, 1870, էջ 22:

⁵ Նույն տեղը, էջ 84:

¹ Հ. Մանանդյան և Հ. Անտոյան, Հայոց նոր վկայներ. Վաղարշապատ, 1903, էջ 122:

² ՏՊ՝ В. Бартольд, Персидская надпись, СПб, 1911, Հմտ. 2. Ժամայնյան, Երևանը XIII—XIV դարերում, էջ 85:

³ ՏՊ՝ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն եւսնեցի Սյունյան, էջ 179—180:

⁴ Կոտայնյան, Վիճակած տարեգիր, էջ 5:

⁵ Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն (վաղ ֆեոդալիզմի դարաշրջան), 1, Երևան, 1957, էջ 385:

⁶ Նույն տեղը:

ձեռք բերված լայնատարած կարվածքների շնորհիվ, այլև հիմնականում ազատված էին հարկերից և իրենց օգտին բնակչությունից հավաքում էին «պողի», «բիշեանի» ու այլ հարկեր: «Պաղի» հարկն ու մասին գոյություն ունեւ հատուկ օրենք, որը մտել է Մխիթար Գոշի դատաստանագրքի մեջ¹: Այստեղ նգովքի և բանագրանքի սպառնալիցով ահարկման են ենթարկվում այն հարկատուներին, որոնք զանց կարող են առնել եկեղեցուն տրվող «պողի» հարկի սահմանված կանոնով և անթերի հանձնումը²: «Պաղի» հարկը սովորաբար կայուն էր բերքի կամ կեանքի³ մասը:

Գրանցով չէին սահմանափակվում եկեղեցու կողմից բնակչությանից ստացված եկամուտները: Վանքերն ու եկեղեցիները հատկապես մեծ դեր էին խաղում առևտրի բնագավառում: Կրոնական տոներին նշանավոր վանքերի բակերում սովորաբար կազմակերպում էին տոնավաճառներ, օրոցների եկեղեցին ստանում էր մեծ եկամուտներ:

Երևանի բնակչությունն էլ որպես Հայաստանի բնակչության բարկացուցիչ մասը հավաքում շահով եկեղեցու կը հարկազրկան: Նշված բոլոր հարկերը զբեթն առանց բացառության վերաբերում էին նաև Երևանի բնակչությանը և շատ ծանր էին նստում նրա վրա:

3. ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿԱՌԻՅՈՒ ԵՎ ՀՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ

Հովհաննես Կոզեռն է Մխիթար գեմնասած: XI—XII դդ. դատաւկերտի մնացորդներ Կամիր-բլուտի գագարին: Նուրի ճիշտապահոււմը XIII դ. վերջերին: Պաղոս-Պետրոս, Եղիսեբեանի և Կարաղիկի եկեղեցիները: Կերսեմանի և ս. Անանիայի մատուռները: Ծարդենի նկարագրած հին աշտարակը: Կոզեռն ըրակն ու գերեզմանացր

Տնտեսական կյանքի զարգացման հետ միասին X—XIII դարերում բուռն զարգացում է ապրում նաև հայկական մշակույթը՝ պատմագրությունը (Հովհաննես Գրասխանակերտցի, Քովմա Արծրունի, Ստեփանոս Տարոնացի Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի, Սամվել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Վարդապետ, Ստեփանոս Օրբելյան, Հենթում պատմիչ և ուրիշներ), գրականությունը (Գրիգոր Նարեկացի, Ֆրիկ, Վարդան Այգեկցի), իրավաբանությունը (Մխիթար Գոշ, Ամրատ Գուդգոսարցի), գիտությունը բժշկական-

ենա իմաստասեր, Վանական, Գրիգոր Մազիտարոս և շատ ուրիշներ), ճարտարապետությունը (Տրդատ, Մամվել), բժշկությունը (Մխիթար Հեթումցի), մանրանկարչությունը (Քորոս Ռոպին, Սարգիս Պրիսկի): Գիտության և արվեստի մեծ կենտրոններ են զանում Տաթևը, Աղթամարը, Անին, Գվինը, Սիսը և այլ նշանավոր գյուղեր ու խոշոր քաղաքներ: Տնտեսական ու մշակութային կյանքի այդ աննախընթաց զարգացումը հայագետներից ոմանց բերել է այն եզրակացություն, որ այդ դարերում Հայաստանն ապրում էր վաղ վերածննդի ժամանակաշրջանը⁴, հայագետների մյուս խումբը ևս ընդգծում է այդ զարկի անտեսական ու մշակութային կյանքի բուրն զարգացումը, բայց այն կապելով սոսկ ֆեոդալիզմի զարգացման հետ, առանց զրանում վերածննդի զարաշրջանի առանձնահատկություններ տեսնելու⁵:

Այս զարաշրջանի հայտնի հեղինակներից մեկն էլ Հովհաննես վարդապետն է, որը կրել է Կոզեռն մականունը: Հովհաննես Կոզեռնի կյանքի ու գործունեության վերջին տարիները կապված են Երեզվանի հետ: Նա այդ տարիներին ապրել ու առեղծագործել է Երևանում և այստեղ էլ մահացել: Քաղվել է նրա անունով Կոզեռն կոչված բլրի գերեզմանոցում:

Հայտնի պատմագիր Արիստակես Լաստիվերտցին մի բանի այլ նշանավոր վարդապետների և հեղինակների (Սարգսի, Նոյրի, Սամվելի և ուրիշների) հետ միասին Կոզեռնի մասին գրում է. «և Յովհաննէս ի նոյն գաւառէ (Տարոնից—Ք. Հ.), զոր վերադիր աւելումը Կոզեռն կոչէին, որ դժաւատոյ զիրան գրեաց»⁶: Իսկ Մխիթար Այբրիվանեցին թվարկելով հնագույն ժամանակներից մինչև իր ապրած ժամանակները հայտնի պատմագիրներին, փոխադաններին ու մյուս հեղինակներին, նրանց թվում հիշատակում է նաև «Յովհաննէս Կոզեռն վարդապետ»-ին⁷, նրա մասին կարենք տեղեկություններ է հաղորդում նաև Սամվել Անեցին, նշելով Կոզեռնի տեսիլները կապված այդ ժամանակներում տեղի ունեցած ընդարաշրժերի ու արեի խավարումների հետ⁸:

¹ Տե՛ս Յ. Ա. Մանանյան, Օ торговоле и городах Армении..., изд. второе, էջ 211, Վ. Կ. Չալոյան, Հայկական սենեանաւ, Երևան, 1964:

² Տե՛ս Արտ. Հովհաննէսյան, Արշրջ միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալ նախազերիական կուտակում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 201—222:

³ Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Երևան, 1963, էջ 26:

⁴ Մխիթարյան Այբրիվանէցու Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 22—23:

⁵ Տե՛ս Սամուել Անեցի, Հաւաքումք ի գրոց պատմազարդ..., Վարդաշապատ, էջ 106:

¹ Մխիթարյան Գոշի Գատաստանագրից Հայոց, հոդ. 44, էջ 163—164:

² Նույն տեղը:

Սակայն Հովհաննես Կողոմնի կյանքի ու գործունեության վերաբերյալ ամենից շատ և համեմատաբար համակողմանի տեղեկություններ է հաղորդել Մատթեոս Ռուհայեցին: Այդ տեղեկությունները ցրված են Ռուհայեցու ժամանակագրության տարբեր մասերում և վերաբերում են Հովհաննես Կողոմնի ինչպես տեսիլներին, այնպես էլ սովորաբար կան ու գիտական գործունեությանը՝

Հովհաննես Կողոմնի կյանքը, տեսիլները և գիտական գործունեությունը գրավել են ականավոր շատ հայագետների ուշադրությունը: Մառք հատուկ աշխատություն է նվիրել Հովհաննես Կողոմնի և Պետրոս Գետապարծ կաթողիկոսի մասին եղած տեսիլին, նրանում գտնողելով նաև այդ տեսիլի ոտուերեն թարգմանությունը¹։ Ղ. Ալիշանը կողմնակի կերպով անդրադառնալով նրա գիտական գործունեությանը՝ Կողոմնի համարում է հմուտ, զգոն և կորովի հայկաբան², իսկ Ն. Ակիշանը նույնիսկ նրան է վերադրում նաև Շուպուհ Քաղցրատուն անունով հրատարակված պատմությունը՝ Հովհաննես Կողոմնի ասրած ժամանակաշրջանի և նրա գիտական ու կրոնա-բարոյական հայացքների մասին կարևոր գիտազոյություններ են արել նաև Մանուկ Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը և ուրիշները՝

Հովհաննես Կողոմնի ամենից առաջ հայտնի է դարձել 1022 (ըստ ոմանց 1023) և 1036 (կամ 1037) թվականներին տեղի ունեցած արևի խավարումների ու երկրաշարժերի մասին իր արտահայտած կանխագուշակումով: Հովհաննես Կողոմնի հետ կապված այդ կիսաավանդական պատմությունները հետազոտելիս մի կողմից սոցիալական շարժումների ուժեղացման ու անկումային տրամադրության³, իսկ մյուս կողմից՝ թուրքական-սելջուկյան հարձակման ու

տիրապետության աճող վտանգի: Ռուհայեցու պատմելով, 1036 թ. երկրի ունեցած արևի խավարումից և երկրաշարժից հետո ժամանակի Հովհաննես-Սմբատ թագավորը Գրիգոր Մաղաբարտիևի և մի քանի ուրիշ իշխանների ու ազատների ուղարկում է Սևանա վանք՝ Հովհաննես Կողոմնից իմանալու, թե ի՞նչ է գուշակվում դրանցով, ինչը՝ նրան են այդ խավարումն ու երկրաշարժը Ռուհայեցին գրում է: «Ե թուականութեան Հայոց ՆՃԱ յամս կայսերն Յունաց Վասիլի եղև կրկնիս աստոր նշան և ստկալի և բարկութիւն ի վերայ ամենայն արարածոց», թիչ հետո շարունակելով. «Ես այսպ յետ երեք ատոր ժողովեցան ամենայն իշխանք և աղաբոն հրամանա թագաւորին Հայոց Հովհաննիսի և եկեալ առաջի սուրբ վարդապետին Յովհաննեսու Կողոմնան, որ էր այդ աստուածագրեաց և հրշտակակրօն և լի իսկ առաքելական և մարգարէական գրոց գիտութեամբ»⁴:

Թագավորի ուղարկած պատվիրակությանը աստվածարանությունը քաջատեղյակ ու գիտուն վարդապետը պատմախոսում է, որ արևի խավարումն ու երկրաշարժը նշան են այն բանի, որ աստուանան արձակվել է կապանքներից և կործանելու է աշխարհը: Նա մարգարեաբար հայտարարում է՝ «Ես ահա յայսմ ի ժամանակիս բանաւոր ոչխարը զգեցան զբնութիւն շաց և սոխի զսիրտ զաղաւնաց և համարձակեցան հաշկ յերեսս հովուացն և հայրապետացն: հայք ատեցին զմնուդս իրեանց, որդիք հայհոյիչք և շարշարիչք ծնողաց իրեանց: Ես այդ ահա յայս ամենայն կարապետք են նն-սիին և սկիզբն կատարածի աշխարհիս, և առ ի բանալոյ հաւատոց և աստուածապաշտութեանց և ի կատարելոյ գրեկեաց ի գիրս սուրբս, զոր ասաց սուրբն Ներսէս և որդի նորին սուրբ Իսահակ և զսո յստեցաւ ի մերում ժամանակիս սուրբ վարդապետն Յովհաննէս՝ որ առի Կողոմնու Սորա խոսեցեալ բաղում բանս որպէս զմարգարէութիւնս ի վերայ յայսմ ժամանակիս և խափանելոյ աստուածապաշտութեան յամենայն մտաց. և թուլանան ի հաւատոյ. զայս ասաց ի նոյն Գիրքս յառաջ ժամանակաց»⁵:

Կողոմնի տեսիլները եզակի չէին այդ ժամանակներում: Կային նաև այլ գիտուններ, որոնք նույնպես լուսատուների շարժումները և երկրի ներսում տեղի ունեցող երևույթները կապում էին հայ ժողո-

¹ Տե՛ս Մատթեոս Ռուհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 44, 50, 52, 58—67, 68—74, 230 և այլն:

² Н. Я. Марр, Сказание о католикосе Петра и ученом Иованне Козерне («Восточные заметки...», СПб, 1895, էջ 9—16):

³ Կ. Ակիշան, Հայագրատուն, էջ 219:

⁴ Ն. Ակիշան, Մատենադարանի հետազոտութիւններ, Վիեննա, 1922, էջ 219—221:

⁵ Մանուկ Աբեղյան, Հայոց հին զբաղանդության պատմություն, դիրք I, Երևան, 1944, էջ 385—386, դիրք II, 1946, էջ 9—10, Յ. Ա. Манандян, О торговле и городах Армении..., էջ 211, Աշոտ Հովհաննիսյան, Գրգայոնք այդ ազատագրական մարի պատմության, դիրք I, էջ 43—56:

⁶ Մանուկ Աբեղյան, Հայոց հին զբաղանդության պատմություն, դիրք II, էջ 9—10:

¹ Աշոտ Հովհաննիսյան, Գրգայոնք հայ ազատագրական մարի պատմության, դիրք I, էջ 45:

² Մատթեոս Ռուհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 52:

³ Նույն տեղը, էջ 230:

վրդի բաղադրական ճակատագրի հետ: Վկայակոչելով Հովհաննես Կողեռնի տեսիլը՝ հայ պատմագիրները՝ Ասողիկը, Լաստիվերտցիին, Ուսայեցիին և ուրիշներ կանխազգուշակում են «կրոնական պատվիրանների խախտումներ», չափից ավելի հարստահարություն, կաշառակերություն, հափշտակումներ, «արծաթասիրություն», «անբարոյականություն և աշխարհային զվարճանքների ծավալում վանքերում ու դղյակներում»¹:

Հովհաննես Կողեռնը թողել է մի բանի աշխատություններ՝ ա) Տեսիլ, որով աշխարհի կործանումն է զուշակում: Այս աշխատությունն է, որ ն. Մարք վերցնելով 1320 թվականի մի ձեռագրից Քարգմանիկ է ուսերին և Տրատարակի «Сказание о католическо Петра и ученом Козерие» վերնագրի տակ (տե՛ս «Восточные заметки...», СПб, 1895), այն համարելով Կողեռնի սպրած ծամանակից ավելի հին ծագում ունեցող հրաշալիատում, որը նրա կարծիքով հետազոտվ կապել են այդ գիտուն վարդապետի անվան հետ²: բ) Գիր հաւատաց, գ) Մեկնութիւն տամարի և դ) Աման վարդավառի: Նրան են վերագրել նաև «Պատմութիւն Բագրատունեաց» վերնագրով պատմական երկը, որ նա գրել է Պետրոս Գեղտազարձ կաթողիկոսի հրամանով³: եվ իդուր չէ, որ Մատթևոս Ուսայեցիին նրան որակում է որպես «այս սուրբ և սքանչելի նշնութեամբ զարդարեալ, և մեկնիչ հին և նոր Կտակարանացն Աստուծոյ, լցեալ վարդապետական շնորհօք»⁴:

Հովհաննես Սարկավազը, վանական վարդապետը, Հովհաննես Կողեռնը և ուրիշներ տոմարագրական հարցներում մեծապես օգտվել են Անանիա Շիրակացուց, բայց նրանից վերջրածը յուրաքանչյուրն իր ձևով փոփոխելով, վերախմբագրելով և հարմարեցնելով նոր պայմաններին⁵:

Աղբյուրների վկայություններից երևում է, որ Հովհաննես Կողեռնը մեծ գիտուն է եղել տոմարական հարցերում: Մատթևոս Ուսայեցիին վկայում է, որ Զատիկի տոնի նշտման առթիվ վասիլ կայս-

րը Հայոց Հովհաննես-Սմբատից հատուկ գրովյամբ խնդրում է կայսրության մայրաքաղաք ուղարկել Հովսեփին և Կողեռնին: Նա գրում է. «Ե յանուանէ զիտէր վասն Յոսեփայ ընծայուց հօրն և յաղագս Յովհաննիսի, որ հոմանուն սակին Կողեռն. և յարձամ գրեաց (կայսրը—Փ. Հ.) առ Յովհաննէս արքայն Հայոց, զի առաքեացէ զնոսա առ ինքն ի Կոստանդնուպոլսոս, զի ի նոցանէ գիտասցէ զճըշմարիտ պատճառն և զուղղորդ: Իսկ նորս ոչ առին յանձն զնալ, այլ թղթօք գեղեցկաշար բանիւր հակացեցին զՔաղաքոս ամենայն խորին քննությամբ»⁶: Իսկ Անդրեաս Քյուլանդացի տոմարագիրը Հովհաննես Կողեռնի տոմարագրական աշխատանքի մասին գրել է մի հատուկ զուլթ, որը վերնագրված է «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ ի Յովհաննիսի վարդապետի որ մահանուանէին Կողեռն»⁷:

Ահա այդ գիտուն վարդապետն է, որ իր կյանքի վերջին տարիները անց է կացրել Երևանում և այնտեղ էլ ստեղծագործել:

Մեզ հասել է XIII դարին վերաբերող մի ծավալուն ձևաընտիր, որը բաղկացած է 1118 թերթից և ունի հիշատակարաններ⁸, Այդ և ուրիշ մի բանի ձեռագրեր ընդօրինակել է Մխիթարը 1270—1287 թթ. ընթացքում: Ընդօրինակված այդ ձեռագրերը սահման են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Նրա օրինակած ձեռագրերի մեջ հատկապես ուշադրության արժանի է նշված մեծ ձառքեալի, որը փիլիսոփայական զրվածքների, նոր կտակարանի ծամագրի մեկնությունների և մեկնական զանապան այլ զրվածքների մի ժողովածու է, զրված Կիրիլիայի հայոց և նաև թագավորի օրոք: Այն ունի բազմաթիվ զարգացրեր և «մատրանկանների գեղեցկություն» հայ գրչության զուլթ-գործոցներից՝ մեկն է: Զառքեալը Մխիթարը ընդօրինակել է ոչ մեկնակ, այլ ոմն Սարգիս գրչի օգնությունով: Ենթադրվում է, որ Մխիթարը ընդօրինակել է ձեռագիրը, իսկ Սարգիսը նկարել է նրա զարգացրերն ու մատրանկանները⁹:

Գանձարանների մեջ Մխիթարը (որը մեզ սովորաբար հայտնի է Մխիթար Այրիվանեցի անունով) երբեմն կոչված է Երևանեցի, օրինակ մի տեղ սալված է. «Ի Մխիթարայ Երևանեցոյ սրբոց անա-

¹ Առտ Հովհաննիսյան, Իրավեհեր հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, էջ 46:

² Լույս տեղը, էջ 46:

³ Н. Я. Марр, Сказание... «Восточные заметки...», էջ 10—13:

⁴ Երվանդ Շամազիզ, 2ին երևանը, էջ 287, 243, 2. Անույան, Հայոց անձնանունների բառարան, հատոր 9, էջ 566—567:

⁵ Մխիթարայ Այրիվանեցոյ, Պատմութիւն Հայոց, էջ 37, 74:

⁶ Մատթևոս Ուսայեցի, Ժամանակագրութիւն, էջ 67:

⁷ Կանով Արևիկյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1, էջ 385—386:

⁸ Մատթևոս Ուսայեցի, Ժամանակագրութիւն, էջ 44:

⁹ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ան. № 1899, էջ 75ա: Հիմ. 2. Ս. Անույան, Հայկական մատենագրություն, Ե—ԺԸ դդ., հատոր Ա, Երևան, 1959, էջ 862:

¹⁰ Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղաղիանք..., մաս II, էջ 107:

¹¹ 2. Անույան, Հայոց անձնանունների բառարան, հատոր 9, էջ 376—377:

¹² Տե՛ս Լույս տեղը, էջ 377:

պատարացն», իսկ մի այլ տեղում՝ «Երևանեցիներ»¹։ Գարեգին Հովսեփյանը նշված ճարտարի վերջին հիշատակարանի մեջ նկատելով Քիֆլիսի հավաքարքիների բարրապի ազդեցությունը ավելի որոշակի է դարձնում ու հիմնավորում Մխիթար «Երևանեցի» կոչվելը՝ նշելով, որ հավաքարքիների մի մասը այնտեղ է դադարել Երևանից²։

Երբեմն «Երևանեցի» կոչված այդ գանձասած Մխիթար մեզ հայտնի հենց նույն Մխիթար Այրիվանեցի պատմագիրն է (1322—1329/31 թթ.), որը նախ եղել է վարդապետ, ապա արքեպիսկոպոս և Այրիվանքի (Գեղարքի) վանահայրը։ Նրա գրչին են պատկանում պատմագրական մի քանի երկեր և բազմաթիվ գանձեր։ Գարեգին Հովսեփյանը Մխիթար Այրիվանեցու կյանքին ու գործերին նվիրած իր աշխատության մեջ³ ամենայն մանրամասնությամբ լուսաբանել է այդ բեղմնավոր պատմագիր, գրչի, գանձասածի ու հոգևորական գործի գործունեությունը։

Բացի Հովհաննես Կոզմոնից և Մխիթար Այրիվանեցուց, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Երևանի հետ առնչվող կամ այնտեղ մնված այլ հեղինակներ ու գրիչներ հայտնի չեն։

Պատմական և պատմա-ճարտարապետական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Երևանի X—XIII դարերի ճարտարապետական կառույցները, նրա հուշիցաններն ու առանձին քաղաքացիների հիշատակումը պատմագրական երկերում։

Մեր օրերում, երբ ուրարտական Քելշեբախի բերդաքաղաքի տեղադրվածը Կարմիր-բլուր գաղթով ուրարտագետների ուսումնասիրության առարկան ուղադրություն դարձվեց նաև դրա զագաթին գտնվող գաստակերտի ավերակների վրա։ Հայկական այդ դաստակերտը գոյություն է ունեցել XI—XII դարերում և ավերված միջնադում հասել մինչև մեր ժամանակները⁴։ Ճարտարապետական ստակետից դրա ավերակները առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում։ Բայց այդ նույնը չի կարելի ասել պատմական առումով։ Այստեղ, Կարմիր-բլուրի զագաթին՝ վաղմի հայկական դաստակերտի բուն ավերակներում ու դրանց շրջակայքում հայտնաբերված են XII դարի սելջուկյան սղեմի շատ դրամներ, որոնց մասին ասվեց առևտրի վերաբերյալ խոսելիս։ Այդ դրամներն իրենց վրա

կրում են սելջուկյան ամբարեկերի ու սուլթանների, ինչպես և այն քաղաքների անունները, որտեղ գրանք հասվել են⁵։ Գրամներից բացի այստեղ հայտնաբերված են նաև դարձյալ այդ նույն ժամանակների վերաբերող կերամիկական իրերի մնացորդներ⁶։ Բակ դրամների այդպիսի առատությունն ու կերամիկական ամանեղենի առկայությունը ցույց է տալիս, որ մեր մայրաքաղաքի մայրամասում գտնվող այդ դաստակերտը անուսական տեսակետից ուներ նշանակալից դեր։

Նույն այդ ժամանակներում, ինչպես տեսանք, Միծեռնակաբերդի վրա գոյություն ուներ համանուն բերդը, որը ոմանք համարում են այն ժամանակվա Երևանի միջամբերդը։

Երևանի շրջակայքում գտնվող գյուղերից քաղաքի պատմության մեջ Նորթ խաղացել է կարևոր դեր, շնայած այն քնդույով մինչև XIX դարի 30-ական թվականները քաղաքին չէր միացված և առանձին գյուղ էր⁷։ Նորթ փաստորեն մինչ այդ էլ սերտորեն կապված էր Երևանի հետ և նրա արվարձաններից մեկն էր։ Նորթն առաջին անգամ հիշատակվել է 1297 թվականին վերաբերող մի հիշատակարանի մեջ։ Այդ թվականին ոմն Սարգիս ֆահանսը բեդօրինակել է մի «Տօնապատճան», որի հիշատակարանում ասված է. «... ի զնդաքաղաքն ի նորքս քնդ հովանեա Ս. Ստեփաննոսի»⁸։ Ե. Ակիբյանը այդ հիշատակարանի մեջ նշված Նորթը ենթադրաբար է նույնացնում Երևանի արվարձանը կազմող Նորթի հետ, վերապահելով, որ «եթէ խօսքը հոս ուրիշ համանուն գիւղաքաղաքի մը մասին չէ»⁹։

Հայաստանի աշխարհագրական անունների ուսումնասիրությունը (որով ավելի քան 15 տարի է ինչ զբաղված ենք Հ. Բարսեղյանի և Ստ. Մելիք-Բախչյանի հետ միասին) ցույց է տվել, որ Հայաստանում Նորթ անունով այլ գյուղաքաղաք չի հիշատակվել։ Ուստի մնում է միայն հաստատական կողմնակից ասել, որ XIII դարի նշված հիշատակարանի Նորթ գյուղաքաղաքը նույնանուն է Նորթ գյուղի հետ, որը պաշտոնապես Երևանին է միացվել միայն XIX դարում։

Երևանում հիշատակված ամենահին գերեզմանոցը գտնվում էր

¹ Գարեգին Հովսեփյան, *Նորարկանք...*, մասն II, էջ 107։

² Նույն տեղը։

³ Գարեգին Հովսեփյան, *Մխիթար Այրիվանեցի, նորագիտ արձանագրություն և երկեր*, Երևանագետ, 1931։

⁴ Բ. Բ. Пиотровский, *Кармир-блур*, I, էջ 13։

⁵ Տե՛ս Բ. Բ. Пиотровский, *Кармир-блур*, I, էջ 13։

⁶ Նույն տեղը։

⁷ Ք. Ե. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1801—1879 թթ.)*, էջ 230—231։

⁸ Տե՛ս «Նախկին ամսօրագր», 1934, № 5—7, էջ 328։

⁹ Ե. Ակիբյան, *Հին Երևանը*, տե՛ս նույն տեղը։

բաղաբի հյուսիսային մասում¹, այժմյան Բարեկամության փողոցի ճաթ կողմում² բլրի վրա, անցյալ դարի 30-ական թվականներին բացված Արքայական կոլեժում ճանապարհի մոտ Այգ զերեզմանոցի և բլուրը կոչվել են Հովհաննես Կողեն վարդապետի անունով: Գերեզմանոցն աղյուսել էր կոլեժում էր մինչև մեր օրերը, երբ բաղաբի վերակառուցման և բնդարձակման պատճառով այն վերացվեց, հայտնի որոշ զերեզմաններ աղափոխելով բաղաբի նոր զերեզմանոցները: Ըստ երևույթին, այդ զերեզմանատունը գոյություն է ունեցել Հովհաննես Կողենից շատ առաջ և վերջինս այնտեղ թաղվելու պատճառով միայն վերակոչվել «Կողեն»: Այս տեսակետից մեզ անհավանական է թվում երկուսը Շահադդի այն ենթադրությունը, թե Նայ զերեզմանոցում առաջինը թաղվել է Հովհաննես Կողենը: Հետադարձում այստեղ, Կողենի զերեզմանի վրա կառուցում են մի մատուռ, որը դարձյալ կրում էր նրա անունը XVII դ. Կողեն վարդապետի մոտ են թաղում Մելքիսեթ Վժանցի (կամ Մելքիսեթ Երեզմանցի) հայտնի վարդապետը և Մովսես Գ. Սյունեցի կաթողիկոսը «Կողենի մատուռ»-ը խարխուլված վիճակում պահպանվել է մինչև 1829 թվականը, երբ Մելիք-Սահակ Ազամայանը այն հիմնովին վերակառուցելով դարձրել է իր տաճարական դամբարանը:

Այժմ գտնանք Երևանի մեջ հետաքրքրող ժամանակակիցային աչ կառույցներին, որոնք արվեստի ու ճարտարապետական աստվածով զգալի հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք թվով շատ չեն, բնդամներ մի քանի հատ, որոնցից մեկը՝ Պողոս-Պետրոս եկեղեցին, ինչպես սեսաեր, գոյություն ունի ավելի վաղ ժամանակներից:

Ընդի գոյություն ունեցող այդ եկեղեցու մի քանի շերտ կազմող որմնակերպներից շատերն արվել են XI—XII դարերի ընթացքում: Երանից հարավ երրորդ շերտի որմնակարները պատկերել են Պողոս և Պետրոս առաքյալները, որոնց նկարների օտակ, զեպի սեղան տանող աստիճանների վրա կարգացվել է հայոց 62 (580 + 451 = 1131 թ.) թվականը և «Իվանե» անունը, որից բացի, առաքյալների նկարների զիսավերեզմ, համապատասխանարար զոված են եղել Պողոս և Պետրոս առաքյալների անունները՝ «Պողոս անօթ ընտրության» և «Պետրոսի վիժի հաստոյ» ձևով: Պողոս-Պետրո-

սը կոչվել է նաև «Էին Երևանի» եկեղեցու էջմիածնի ձևագրատա- ճար հարուստերված մի ձևագրի հիշատակարանից հայտնի է զար- մել, որ այն նախկինում գտնվում էր «Էին Երևանի» Պողոս-Պետրոս եկեղեցու մոտ: Պողոս-Պետրոսը այսպիսով բաղաբի ամենահին եկեղեցին էր: Այն միաժամանակ բաղաբի ամենամեծ եկեղեցին էր, հին և միջին դարերում ներսից պատած որմնակար ժաղկանկար- անում: Բայց արտաքինպես Պողոս-Պետրոսն իր զեղեցիությունը զիջում էր իրենից ոչ հեռու գտնվող Կաթողիկոսին:

Կաթողիկոս եկեղեցին հիմնականում կառուցվել է XII—XIII դարերում: Եարդենի տակով Կաթողիկոս (նրա մոտ Կաթողիկ) և Երևուրենանի եկեղեցին գոյություն են ունեցել հայ թագավորների ժամանակներից, իսկ մյուս բոլոր եկեղեցիներն իր ավելի նոր են: Տեղացիների պատմածների վրա հենված Պարզենի այդ կարծիքը Կաթողիկոսի հնություն մասին բնդունվել է հետագայի ռուսականի- րոնքների և ձանապարհորդների մեծ մասի կողմից: Օրինակ՝ Լինն սղզակի գրում է, որ Երևանի եկեղեցիների մեջ ամենահինն քա- րուսյային սուրբ-Կաթողիկոս եկեղեցին է: Ճարտարապետության պատմություն մասնաշեղանիցը այն սովորաբար համարում են XIII դարի կառույց, Տեղերի, Գեղարքի մոտ գտնվող սուրբ Ստեփանոսի և այլ շատ եկեղեցիների ժամանակակիցը: Նա այդ դարի ճարտարապետությանը հարազատ է և իր բնդանուր կառույցվածքով, և այսպես կոչված «սեղեցույան շղթայով», որը ձգվում է քիվի եր- կայնքով:

Կաթողիկոս եկեղեցու ուսումնասիրության համար կարևոր նշա- նակություն ունեցան 1936 թվականի զեղեցիներից մինչև 1937 թ. մարտ ամիսը տեղի հնագիտական պեղումները³, որոնք կապված էին բաղաբի այդ համարված վերակառուցելու նպատակով հուշարձանի մի մասը քանդելու հետ Պեղումների ընթացքում պարզվեց, որ Կաթողիկոսի սեղանի տեղում գոյություն է ունեցել մի ավելի փոքր,

¹ Հովհաննես Եսայանցի, Ստորագրութիւն կաթողիկոս էջմիածնի և հինգ զաւտացն Արարատայ, հատր 11, էջ 155:

² Իվանչ Եսայանցի, Հին Երևանը, էջ 187:

³ Կույն սեղը, էջ 187—188:

⁴ Տե՛ս Կույն սեղը, էջ 225—226:

¹ Հովհաննես Եսայանցի, Ստորագրութիւն կաթողիկոս էջմիածնի և հինգ զաւտացն Արարատայ, հատր 11, էջ 141—142:

² Մ. Փ. Ե. Լուչ, Արմենիա, տոմ 1, էջ 276:

³ Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., Тифлис, 1902, էջ 242:

⁴ Լուչ, Արմենիա, տոմ 1, էջ 276:

⁵ Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 341—342:

⁶ Կույն սեղը:

⁷ Կ. Գալստյանց, Երևանի Կաթողիկոսի և Նորահայտ հուշարձանի արդյուն- գրութիւնները, «Տեղեկագիրք» ՀեՍԷ պատմության և զրպանության ինստիտուտի, գիրք 1, էջ 166—167:

բայց ավելի հին եկեղեցի, որը կապ չունի հետագայում կառուցված և այն բնոգրիկոզ մեծ ժողովրդարանի հետ¹։ Այդ հին հուշարձանի հյուսիսային և հարավային պատերի վրա հայտնաբերված 7 մեծ արձանագրություններից 5-ը պատկանում են XIII—XIV դարերին²։ Առանձնապես հայտնի են 1264 և 1301 թվականների արձանագրությունները, որոնց մասին խոսվել է իր տեղում։

Այսպիսով պարզվում է, որ Կաթողիկոսի սեզանի տեղում հայտնաբերված հուշարձանը կառուցվել է հիմնականում XIII դարում։ Կ. Ղաֆաղարյանը վկայագրելով մի շարք փաստեր ու եղելություններ հիմնովին ժխտում է մինչ այդ եղած այն ենթադրությունը, ըստ որի եկեղեցու ժողովրդարանը իբր իր հիմքով ու պատերի որոշ մասերով եղել է VII դ. քաղցիկի³։ Նա այդ ժողովրդարանը համարում է 1694 թվականի 1264-ին, որը կառուցվել է նախկին ժամատան տեղում⁴։ Ընդունելի կարելի է համարել Կ. Ղաֆաղարյանի նաև այն ենթադրությունը, որ այս եկեղեցին Կաթողիկոս է կոչվել միայն XVI դ. վերջերին, քաղաքում ժամատաներ ունենալուց հետո, իսկ մինչ այդ նա հատուկ անուն չի ունեցել⁵։

Հավանաբար XIII—XIV դարերի կառուցվածք էր նաև Երկուերանի ս. Նշան կոչված հայուց եկեղեցին, որը 1679 թվականի երկրաշարժից հետո այլևս չի հիշատակվում⁶։ Այս եկեղեցու մասին եղած հիշատակությունները շատ աղտոտ ու արքայտիկ են։ Ոմանք այն ենթադրաբար նույնացնում են Պողոս-Պետրոսի հետ, իսկ ոմանք էլ շփոթում են քաղաքի այլ եկեղեցիների հետ։ Երկուերանի է կոչվել պարզապես երկու բնմ ունենալու պատճառով։ Այս եկեղեցու Պողոս-Պետրոս մեծ ու շին քրեանի⁷ եկեղեցու հետ նույնացնում են հատկապես նկատի ունենալով այն, որ Եարդենը այդ եկեղեցին հիշատակում է որպես եպիսկոպոսանիստ և քաղաքի երկու հին ու հայտնի եկեղեցիներից մեկը։ Ահա նրա խոսքերը. «Քաղաքում կան շատ եկեղեցիներ, որոնցից ամենապլիսավորներն են՝ Եպիսկոպոսական, երկուերանի (նրա մոտ՝ Իրկու իրիցին—Թ. Հ.) (թաղում՝ երկուբնմանոց) և Կաթողիկ (նրա մոտ՝ Կաթողիկ—Թ. Հ.)։ Այդ երկու եկեղեցիները զոյություն ունեն հայաստանի թագավոր-

ների ժամանակներից։ Մյուսները կառուցված են ավելի ուշ։ Դրանք փոքր են, խրված հողի մեջ և նմանություն ունեն կառուցվածքների հետ»¹։

ԸՅԵ միայն նկատի ունենանք Եարդենից մեջբերված այդ հատվածը, ապա առանց տարակուսանքի կարող ենք հավանական համարել Պողոս-Պետրոսը Երկուերանու հետ նույնացնելու ենթադրությունը։

Երկուերանին Պողոս-Պետրոսի հետ առաջին անգամ ենթադրաբար նույնացրել է Ա. Տիր-Ավետիսյանը², բայց առանց որևէ փաստ նշելու։ Հետագայում նրա այդ ենթադրությունը «հիմնավոր» է «անվիճելի» է համարել Հ. Ժամկոչյանը մատնացույց անելով «Պողոս-Պետրոս»-ի բանդման ժամանակ նրա պատերի ծեփվածքի ստորին շերտում հայտնաբերված ֆրեսկոները և Եարդենի մի վկայությունը, ըստ որի սերկուերանում (կամ «Եպիսկոպոսանում») զինացրել էր մի մզկիթ³։ Հ. Ժամկոչյանն այս մզկիթը նույնացնաց զանվում էր մի մզկիթ⁴։ Հ. Ժամկոչյանն այս մզկիթը նույնացնաց մար զոտագործվող մզկիթի հետ, որը իրոք գտնվում էր «Մուսկլա» կենթատրոսի տեղում եղած Պողոս-Պետրոս եկեղեցու դիմաց⁵։ Կենթատրոսի տեղում եղած Պողոս-Պետրոս եկեղեցուց իրոք այդ մզկիթն է, այսպե՛ս Եարդենի հիշատակած մզկիթը իրոք այդ մզկիթն է, այսպե՛ս Երկուերանին էլ նույն Պողոս-Պետրոսը պետք է լինեի։ Սակայն իր հաշորդ ստեղծում Եարդենը անուղղակի կերպով ճշտում է Երկուերանի ու Նշան եկեղեցու տեղը քաղաքում, որը Պողոս-Պետրոսի բնակն է։ Նշան եկեղեցու անուր զանվում⁶։ Այս պատճառով էլ այդ երկու եկեղեցիների նույնացումը մեր կարծիքով բավարար հիմքեր չունի։ Եարդենի առեղծված Երկուերանի եպիսկոպոսանու եկեղեցին գտնվում էր մեծ շուկա—հրապարակի (այժմյան Կիրովի անվան այգու տեղում) մոտ և նրա դիմաց կառուցված է եղել մի բարձր աշտարակ⁷, մինչդեռ Պողոս-Պետրոսը (որը գտնվում էր այժմյան «Մուսկլա» կենթատրոսի տեղում) հետո էր զլխավոր շուկա—հրապարակից։ Այսպիսով, զուրու է կալիս, որ Երկուերանի ս. Նշան հին եկեղեցին կառուցված էր հետագայում կառուցված ս. Սարգիս եկեղեցու (որն այժմ նա զոյություն ունի) տեղում կամ նրա մոտակայքում և կապ չունի Պողոս-Պետրոսի հետ։ Այլ կերպ ասած, Երևանում մեզ հե-

¹ Կ. Ղաֆաղարյան, Երևանի Կաթողիկոսի..., էջ 160—167։
² Նույն տեղը, էջ 168—169։
³ Տե՛ս «Տեղեկագիր» ՀեՄԷ պատմության և գրականության ինստիտուտի, գիրք 1, էջ 175—176։
⁴ Նույն տեղը, էջ 176։
⁵ Նույն տեղը, էջ 173—175։
⁶ Ք. Խ. Լաֆաղյան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 253։

¹ Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., էջ 242։
² Տե՛ս Ջամբուխ Աղույան Թրագրությունը, էջ 179։
³ Հ. Ժամկոչյան, Երևանը XIII—XIV դարերում, էջ 54։
⁴ Տե՛ս Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., էջ 242—243։
⁵ Նույն տեղը, էջ 243։

տաքերրող դարերում գոյութուն են ունեցել ոչ թե երկու, այլ երեք եկեղեցիք:

Եկեղեցիներից բացի, ճարտարապետական առումով կարևոր կառույցներ են եղել նաև Կիրսեմանի կառնիճը և ս. Անանիայի մատուռները:

Գեթեմեանի մատուռը գտնվում էր քաղաքի հին թաղում, նրա հյուսիսային կողմում, թաղում ավելիների մեջ: Այս մատուռը երեք-վանի այն հաղվազյուտ կառուցվածքներից մեկն է եղել, որը 1679 թվականի երկրաշարժի ժամանակ հիմնահատակ չի կործանվել: Երկրաշարժից հետո պահպանվել էին նրա ավերակները, որոնք և հիմք հանդիսացան այն իր նախկին տեսքով վերականգնելու համար: Կերքին անգամ Գեթեմեանի մատուռը վերաշինվել է 1901 թվականին¹: Չնայած մի բանի անգամ կատարված վերակառուցումներին և վերանորոգումներին, մեր գարի 20—30-ական թվականներին այս մատուռի բնահատուր կառուցվածքի մեջ ամենուրեք նշմարվում էին հայկական միջնադարյան բարձրավելու ճարտարապետության հետքեր: Ականաչուն ու զիտակ հեղինակ Սրվանդ Շահազիզը գրում է, որ նայելով նրա բարենկյան պատի անկյունա-դարձրերին, սեղանի լուսամտարի ձևին և դրա երկու կողմը դռնված խորշերին ու դրանց դիրի զարդաքանդակներին, կարելի է ենթադրաբար ներկայացնել, որ հին մատուռը մեր հին, XII դարի վերջին և XIII դ. սկզբին կառուցված եկեղեցիների ճարտարապետական աճն ու ձևն է ունեցել²: Սակայն մատուռի կառուցման կոնկրետ ժամանակ անհնար է եղել որոշել, որովհետև նրա պատերին հին արձանազարդություններ չեն եղել, իսկ շուրջը եղած տապանաբարձրը, որոնք իրենց վրա ունեցած տապանազարդով կարող էին բռնալի տալ այդ հարցի լուծման համար, ջարդել, ցրտուցան էին արվել և օգտագործվել զանազան շինությունների վրա³:

Նույն կարգի մատուռ է եղել նաև ս. Անանիայի մատուռը, բայց որի մասին ավելի քիչ տեղեկություններ ունենք:

Եկայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինելալ ի վերայ զամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի,—գրում է Առաքել Գալիբժնցին,—որ էր ի հրահայտի կողմանէ քաղաքին նրեանայ ի մէջ այգեստաննայցն, և էր ավերակ և անմարգարեակ...⁴:

¹ Իզմանը Շանազիզ, Հին Երևանը, էջ 212—213:

² Նույն տեղը, էջ 214:

³ Նույն տեղը, էջ 214—215:

⁴ Պատմութիւն Առաքել վարդապետի Գալիբժնցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 294:

ս. Անանիայի մատուռը գտնվում էր այժմյան Բարեկամության փողոցի գլխամասի կողմերում, որը պարսկական տիրապետության շրջանում կոչվում էր Խանբաղ, իսկ հետագայում՝ Նոր թաղ: Թե երբ է կառուցվել և ե՞րբ է ավերվել այդ մատուռը մեզ անհայտ է թայց Գալիբժնցու խոսքերից զմիայր չէ եզրակացնել, որ այն կառուցվել էր պարսկական տիրապետությանից շատ առաջ, հավանաբար XII—XIII դարերում: Պատմիչի հիշատակության համաձայն XVII դ. սկզբներին, Ամիրզոունա խանի օրոք, ս. Անանիա ավերակ ու ամայի մատուռի տեղում Մովսես Սյունեցի հայտնի վարդապետը (հետագայում կաթողիկոս) կառուցեց համանուն (ս. Անանիա) եկեղեցին, որը ժողովուրդը համար կոչել է նաև Զորավոր եկեղեցի⁵:

Ճարտարապետական տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացրել մի հին աշտարակ, որի կառուցման թվականը և նպատակը մեզ առայժմ անհայտ է: Եարդեներ հազարուում է, որ այն գտնվում էր նախկնդոսոի աթոռանիստի (երկու-երեսնի եկեղեցու) մոտ, կառուցվել է հին ժամանակներում, սըրբատաշ քարով, արտաքին կողմում ուներ հայերեն տառեր հի-չեցնող տառերով գրված արձանագրություններ, որ անընթեռնելի է եղել նաև հայերեն համար: Նա գրում է, որ այդ աշտարակը հին է, ունի բոլորովին յուրահատուկ ճարտարապետություն և դրա շուրջը փռված են քնդարձակ ավերակներ: Աշտարակի և դրա մտակայ-թում ընկած ավերակների նկարագրությունը կատարելուց հետո Եարդեներ գալիս է այն եզրակացության, որ աշտարակ եղել է վանք, որի կոմպլեքսի կենտրոնական մասում բարձրացել է իր ասած աշտարակը⁶: Հետագա ճանապարհորդներն ու հեղինակներն արդեն վկայում են, որ Եարդեղի հիշատակած աշտարակը գոյություն չու-նի: Նրանք նույնիսկ հնարավորություն չեն ունեցել իմանալ դրա ճշգրիտ տեղը: Ղ. Ինճիճյանը՝ օգտվելով Եարդեղի նկարագրությու-նից, այն տեղադրում է ս. Սարգիս եկեղեցու մոտակայքում⁷, իսկ Հովհաննես Ծախիաթուռյանը՝ Զորագյուղի եկեղեցու դիմաց,

⁵ ՏՄՍ Թ. և. Հանդիսան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 250:

⁶ Պատմութիւն Առաքել վարդապետի Գալիբժնցոյ, էջ 294—295, Երվանդ Շանազիզ, Հին Երևանը, էջ 189—196, Թ. և. Հանդիսան, Երևանի պատմությունը (1801—1879 թթ.), էջ 250—252:

⁷ Путешествие Шардена по Закавказью в 1672—1673 гг., էջ 242—243:

⁸ Ղ. Ինճիճյան, Աշտարակուրթիկ լոբից մասանց աշխարհի, մաս I, հա-տար և. Հայաստան, Վենետիկ, 1806, էջ 254:

Հրազդանի բարձրագիբ աջ ափին¹։ Վերջինս իր ենթագրութիւնը հիմնադրում է նրանով, որ Հրազդանի ձախ ափի այդ հատվածում հին ալիբախների հնօրէն իր ապրած ժամանակներում ամենեւին չեն նշմարվել ընդհանրապէս, զետի աջ ափին այդպիսի մի կառուցվածքի մնացորդներ իրենից 30 տարի առաջ տակավին գոյութիւն են ունեցել, բայց հետագայում ոչնչացվել ու վերացվել են զրանց տեղում այդ տնկելու պատճառով²։ Հ. Շահաբունյանցի ենթադրութիւնն ավելի հավանական է, Շարդենի և Տուսենքորի տեսած այդ աշտարակը, որի միայն նկարն է հասել մեզ, ամենայն հավանականութեամբ գտնվում էր Հրազդանի աջ ափին, Զորագոյութի դիմաց։

Այսպիսով, X—XIII դարերում Երևանն ուներ ուշագրութեան արժանի կառուցանք՝ եկեղեցիներ ու մատուռներ, որոնք ճիշտ է բացատրված իմաստով սակավաթիվ էին, բայց քաղաքի մասշտաբների համեմատութեամբ զգալի տեղ էին զբաղում նրա ճարտարապետութեան մեջ։

III. ԵՐԵՎԱՆԸ XIV—XV ԳԱՐԻՐՈՒՄ

Եւբի բաղաբական վիճակը XIV դարի երկուրդ կեսին։ Լենկ Թեմուրի 1387 րվականի արշավանքը և Երևանի գրավումն ու ավերումը։ Քաղաքի վաշա-բաղաբական վիճակը Լենկ Թեմուրի հաջողութեան և կորս-կորուցելու ու ակ-կորուցելու ցեղերի տիրապետութեան շրջանում (XV դար)։ Գուլարտեմեանական ճյուղերը, հողային հարեբերութիւնները։ Խոշոր հողատերերի ազգային կազմի փոփոխությունները։ Արեւանտերն ու առևտուրը։ Բնակչության ծանր վիճակը։ Արտագաղթը։ Երևանում բնօրինակված ձեռագրերը։ Գրիչները։ Թովմա Մեծոփեցու գործունէությունը Երևանում

XIII դարի 30—40-ական թվականներից մինչև XV դարի վերջերն ընկած ժամանակաշրջանում Հայաստանում նախ իրենց տիրապետութիւնը հաստատեցին մոնղոլ նվաճողները, Լենկ Թեմուրն ու նրա հաջորդները և ապա՝ Թուրքմենական կայսր-կոյունլու ու ակ-կոյունլու քոչվոր ցեղերին պատկանող ավարառուները։

Մոնղոլական մի զորաբանակ առաջին անգամ Անդրկովկաս ներխուժեց 1220—21 թթ.։ Սակայն 1221 թ. Խուսանի ճակատա-

մարտում (Շամքոր քաղաքի մոտ) զիմադրութեան հանդիպելով՝ նահանջեց և Հյուսիսային Կովկասի վրայով արշավեց զեպի Ռուսիա։ Գրանից 15 տարի անց, երկրորդ անգամ մտնելով Հյուսիսային Հայաստան, մոնղոլները 1236 թթ. Նվաճեցին այն, իսկ 1242—1243 թթ. արշավանքների ընթացքում զրավեցին նաև Հայաստանի հարավային և արևմտյան մասերը։ Նրանց նվաճումներն ամենուրեք ուղեկցվում էին իր հալածիչ երկիրը պաշտպանող բնակչութեան դանդաղածային ունչացումը, զերկվարութիւնը, թաւանը, կամայականութիւնները, բռնութիւնները, ամբողջական շրջանների ամայացումը։

XIII դարի կեսերին մոնղոլական պետութիւնը տարածվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծովի ափերը։ Այն ժամանակ էր շուրս խոշոր երկրամասերի, որոնք կոչվում էին ուլուսներ և որոնք հետագայում փաստորեն զարձան առանձին պետութիւններ։ Ուլուսներից երեքը գտնվում էին Չինգիզ-խանի տան անդամների, իսկ մեկը՝ մոնղոլական զորապետների տիրապետության տակ։ Վերջին, չորրորդ ուլուսն իր մեջ ընդգրկում էր Միջին Ասիայի մի փոքր մասը։ Պարսկաստանը, Աղբրեշանը, Հայաստանը, Արաստանը, Փոքր Ասիայի մեծ մասը, իսկ 1258 թվականից՝ նաև Միջագետքը։ Սա մոնղոլական պետութեան միակ խոշոր երկիրն էր, որ սկզբնական շրջանում կառավարվում էր ոչ թէ Չինգիզ-խանի տան անդամների, այլ մոնղոլական զորապետների կողմից³։ Այլ կերպ առած, այն սկզբնական շրջանում (1236—1256 թթ.) ոչ թէ ուլուս էր (ժառանգական տիրապետութիւն), այլ սոսկ մի զորապետութիւն։ Վարչական տեսակետից մտնելով Արևմտյան զորապետութիւնն մեջ՝ Հայաստանը նշված երկրների հետ միասին այդ տարիներին ուղղակի ենթակա էր մոնղոլական մեծ խանի իշխանութեանը, որը զործարգրվում էր նրա կողմից նշանակված զորապետների ու կառավարիչների կողմից։ 1256 թվականին Արևմտյան զորապետութիւնը զարծրեց ուլուս և տվեց իր եղբորը՝ Հուլավուդին Հուլավուն և նրա հաջորդները (Հուլավյանները) աստիճանաբար զուրս և կան մեծ խաների ազդեցութիւնից և զարձան անկախ իշխողներ, իսկ իրենց պետութիւնն էլ կոչվեց Արևմտյան կամ Հուլավյան իշխանութիւն։ Արևմտյան իշխանութիւնը գոյութիւն ունեցավ շուրջ 90 տարի (1256—1344 թթ.)։ Այդ ժամանակաշրջանում հայկական

¹ Հովհաննես Թաճիբաբունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, հատոր II, էջ 145—149։

² Եւբի տեղը, էջ 149։

³ Հ. Մանանդյան, Գնական տետրիւն հայ մոնղոլոգի պատմութեան, հատոր 9, Երևան, 1952, էջ 226։

իշխանութիւնները աստիճանաբար թուաքան և դադարեցին քաղաքական լուրջ դեր խաղալուց: Մտնողներին ձեռնառու չէր տեղական իշխանութիւնների հորդացումը: Նրանք այդ իշխանութիւնները լաւում էին իրար դեմ և ենթարկում բռնութիւնների ու հաշտմանը: Այդ եղանակով հակակառն իշխանական հայտնի տների մեծաթիւն մասը՝ Զարարյանները, Վաչուտյանները, Վահրամյանները, Դոփյանները, Պոտլյանները, Զալալյանները XIII դարի ներկայից կեսում արդեն կորցրեցին իրենց նախկին նշանակութիւնը: Միայն Սյունիքի Օրբելյաններն էին, որ զիջանադատական և այլ եղանակներով կարողացան հուլայական տիրապետութիւն ամբողջ շրջանում պահպանել իրենց դիրքերը ու դրանով հնարավորութիւն ստեղծել Հայաստանի մի մասի (Սյունիքի) զարգացման համար: Այդ ժամանակաշրջանում հակակառն մի քանի փոքր իշխանութիւններ պահպանվեցին նաև երկրի լեռնային այլ շրջաններում:

XIV դ. սկզբներից Արևմտյան իլիխանութիւն տնտեսական և քաղաքական կյանքն անկման պատկեր էր ներկայացնում: 1374 թ. իլիխանութիւնը վերջնականապես քայքայվեց: Եւ բաժանովեց առանձին խանութիւնների և էմիրութիւնների, որոնք անընդմեջ պայքար էին մղում իրար դեմ և քայքայում առանց այն էլ տնտեսապես քայքայված երկրները, այդ թվում և Հայաստանը: 80-ական թվականներից դրանց վրա ավիտացան նաև Լենկ Քեմուրի ավերիչ արշավանքները, Քեմուրի, Քեմուրյանների և կարա-կոչուների ու ակ-կոչուների մտալ տիրապետութիւն ժամանակաշրջանը:

Թուրքական ցեղերի վրա հենվելով՝ Լենկ Քեմուրը 1370 թ. տեր է դառնում Միջին Ասիայի զգալի մասին և իրեն հռչակում անկախ էմիր, իր պետութիւն մայրաքաղաք գործնելով Սամարղանդը: Այդ տեղից շուտով եւ ձեռնարկեց մի շարք արշավանքներ և դրովեց բազմաթիվ երկրներ: Այսպես, 1372 թ. գրավեց Խորեզմը, 1385—1386 թթ.՝ Պարսկաստանը, Ադրբեյջանը, Հայաստանը, Վրաստանը և Միջագետքը, 1391 և 1395 թթ.՝ հսկայական տերիտորիաներ Ուսեկ Լորդաշից, 1400—1402 թթ. նվաճեց Փոքր Ասիան և պարտութիւն մատնելով Եգիպտոսի մամլուկների սուլթանութիւնը՝ իր պետութիւնը կցեց Կիլիկիան և Սիրիան: Դեպի Հայաստան Լենկ Քեմուրը արշավել է չորս անգամ՝ 1386, 1387, 1394 և 1400 թվականներին: Մինչ այդ լուծնված բռնակալի արշավանքների հետևանքով ամալացել է Հայաստանի մեծաթիւն մասը՝ Սյունիքը, Վասպուրականը, Արարատյան դաշտը, Արևելյան և Արևմտյան Եփրատ գետերի վրա ընկած շրջանները: Քեմուրը դաժան էր բոլոր նկատմանը՝ եւ չէր խնայում ոչ անղեն մարդկանց, ոչ ձերերին ու մանուկներին և

ու էլ կանանց: Հաշմանդամ բռնակալը ան ու սարսափ էր տարածում ամենուրեք:

Լենկ Քեմուրի արշավանքների քննաքնում Հայաստանի տանջակ ալ քաղաքների հետ միասին ավերվել է նաև երևանը: Այդ ավերումն ու կոտորածը նա կատարել է 1387 թվականի արշավանքի ժամանակ: Այս և ընդհանրապես զեպի Հայաստան կատարած Լենկ Քեմուրի արշավանքների մասին հիմնական աղբյուրը Քովմա Մեծոփեցու պատմութիւնն է, որի մեջ սակայն ոչինչ չի ասված երևանի գրավման և ավերման վերաբերյալ: Լենկ Քեմուրի կողմից 1387 թ. երևանի գրավման, ավերման և կատարած կոտորածի մասին արժանահավատ միակ աղբյուրը մնում է Ք. Մեծոփեցու ավագ ժամանակակից՝ Ենրեկեց մակեմունը կրող Գրիգոր վարդապետի (կամ Գրիգոր Այաթեցի) ողբ—հիշատակարանը, որը գեղեցկմա է մի շարք ձեռագրերում: Այն առաջին անգամ ապագրվել է սևուրբառա ամսագրում, որից և արտատպվել ու հրատարակվել է առանձին զրբուկով՝, իսկ մինչ այդ հիշատակարանը գրեթե ամբողջությամբ տեղ էր գտել Ղ. Ավիշանի «Ալբրուս» աշխատութիւն մեջ (էջ 299—300): Դրանում Ալբրուսը քաջածու ողբի ձևով Գրիգոր Այաթեցին նկարագրում է Լենկ Քեմուրի՝ զեպի Հայաստան և մյուս երկրների կատարած արշավանքներն ու այդտեղ կատարած ավերումները: Կարևոր ենք համարում մեջբերել այդ հիշատակարանի մեկ հետաքրքրող մասը՝ համառոտագրելով այն:

«Ասին տար և դերեցին
Հազար Պարսեց և Հայ զարմին,
Տաղակեցին և յատակեցին,
Անխալարայ խոցածեցին,
Հարս սրոյ Հարսի արին,
Եւ բոկանայան զերեցին, ...
Եւ ընդ զատան Ալբուրսին
Մբան յայնարարն յնդակին,

1 Ղ. Ավիշանի իր «Ալբրուս» աշխատութիւն մեջ (էջ 300) Լենկ Քեմուրի կողմից երևանի գրավման ու ավերումը տալիս է 1387 թվականի տակ, իսկ Մեսրոպ Սեբեոսյանը («Տեղագիր Գեղարքունի ժովապարդ դատաւ... էջ 19) ստանց անարկելու ընդունելով Մ. Չամչյանի («Պատմութիւն Հայոց», հատոր 4, էջ 185), այդ արշավանքը դնում է 1383 թ. տակ Ղ. Ավիշանը, սակայն, եր մի այլ աշխատութիւն մեջ վկայակոչելով համապատասխան աղբյուրը՝ ընդունել է երա հազար զած տարին՝ 1387 թվականը («Հայագատմութե», էջ 564), որը համապատասխանում է Իրականութեանը:

2 Գրիգոր Այաթեցի, Ցիշատակարան արեւոյց, արտատպված «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1897.

Հարցալսելիստ քաղաքն առին
 Սրում Տրիխիսքն կաշին ...
 Անտի անդրեն դարձ արարին
 ևս ի Մաղան ձմրանեցին,
 Ապա յաւարտ գարնանային
 Գարց ի Միննն Մեծն արարին
 Ըզ Ռոսայն զրգեակն առին,
 Մինչև ի Կարս արշաւեցին...
 Արարց անգամ շորորդեցին,
 Սրու անուն զըլխատորին
 էր Լանկ-Քամուր շարնաց զնոյն:
 Այս էր ի թիւ ութՏարիորին
 ևս նրանուն և զնց ամին (1387):
 Զամուր տեղին յաւար առին
 ևս շատ ունիցքս գործեցին,
 Ճարց և մին էր և Յընին ...
 ևս բարումս գերեցին:
 ևս զԿաթառից ամուրն առին,
 ևս շորս Տրեքի անդին ապանին,
 ևս յԵսեան մեծ առանին
 Արս Տիգլաւորն կոտորեցին:
 Զուսի՛մ առև թան զոր կրեցին
 Քրիստոսեից ազգ Հայ գարնինս:

Գրիգոր Խլաթեցու այս շափածո ողբ-հիշատակարանից պար-
 ներում է, որ Երևանը Լենկ Քեմուրի հրոսակների հարձակմանը են-
 թարկվել է Սյունիքից հետո, 1387 թվականին և որ այս հարձակման
 մասնակ ալփարաուս բռնակալը, բայց Սյունիքից ու Երևանից,
 ամալացրել է նաև Արարատյան դաշտն ու զրան հարակից մասե-
 րը՝ արևմուտքում հասնելով մինչև Կապույտ բերդ (Կաղզվանում) և
 Կարս: Այնուհետև, հայտնի է դառնում, որ այդ արշավանքը կա-
 տարվել է նշված թվականի գարնանը, Մուղանում ձմեռելուց հետո
 Լենկ Քեմուրը իր գրաված քաղաքներում, ավաններում, բերդերում
 և մյուս բնակավայրերում մեծ կոտորածներ է սարքում՝ ի սարսափ
 նվաճված երկրների: Խլաթեցու ողբից չի երևում, որ Երևանը դիմա-
 դրել է նրան: Բայց այդ չի իսպաղարել ալփարաուս բռնակալին այն-
 տեղ մեծ կոտորած անելուն, որի ժամանակ ողբասացի վկայու-
 թյամբ սպանվել են 500 մարդ, բայտ երևութիև բոլորը զնք վերց-
 նելու պիտանի մարդիկ: Խլաթեցու հիշատակարանը Լենկ Քեմուրի

1 Տճ՝ Ա. Մ. Խաչիկյան, Փն դարի Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մա-
 սրն 1, Երևան, 1955, էջ 274—276, Գրիգոր Խլաթեցի, Յիշատակարան ազգային, վա-
 դարապատ, 1897, էջ 5—6, Հմմտ. Վ. Ավիան, Արարատ, էջ 299—300, Հայաստա-
 սում, էջ 566, Սովանց Շանազիր, Հին Երևանը, էջ 30:

այդ արշավանքի և մյուս արշավանքների մասին ընդհանրապես
 համակողմանի տեղեկություններ չի հաղորդում: Մեղ համար զնուս
 անորոշ է մնում, թե Լենկ Քեմուրի հրոսակները ո՞ր ամսին են հար-
 ձակվել Երևանի վրա, ի՞նչ դիմադրության են այնտեղ հանդիպել,
 ի՞նչ կայազոր կար քաղաքում, ինչպիսի՞ բնույթ ու ծավալ են ունեցել
 ավերումները և այլն, և այլն:

Ներքին վարչական տեսակետից Լենկ Քեմուրը վարչական նոր
 կարգեր չհաստատեց: Նա նախորդ նվաճողների՝ մոնղոլների օրի-
 նակով էր պետությունը բաժանեց առանձին ընդարձակ երկրների,
 կառավարչներ նշանակելով իրեն հավատարիմ մարդկանցից ու
 զորավետներից: Հայաստանն ու Ատրպատականը միասին կազմե-
 ցին մի վարչա-տնիտորիալ միավոր, որի կառավարչի աթոռա-
 նիստը Քավրիդ քաղաքն էր: Նրա օրոք պահպանվեցին նաև Օրբել-
 յանների Սյունիքի, Գուլիսանների Մարի, Պոռչյանների Վայոց ձորի
 ու Շահապուհիքի և այլ իշխանություններ, որոնք գտնվում էին Ար-
 արիքի, Գուլբարքի և ուրիշ կողմերում: Հայկական այդ իշխանու-
 թյունների մնացորդները զավառապետության իրավունքներով
 պահպանվեցին նաև հետագա շրջանում:

Քեմուրի աշխարհակալ պետությունը շատ կարճատև կյանք
 ունեցավ: Նրա մահից հետո (1405 թ.) այդ ընդարձակ աշխարհա-
 կալությունը արագորեն քայքայվեց և մասնատվեց առանձին էմի-
 րությունների ու իշխանությունների, որոնք իրենց տիրապետու-
 թյուններն ընդարձակելու և զեփրչխանություն ձեռք բերելու համար
 իյուր հետ մտան համառ ու արյունալի պայքարի մեջ, մի պարբաթ,
 որը տեղեց մոտ մեկ դար: Այդ մեկ զար տեսած մտալլ ժամանակա-
 շրջանում Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատեցին
 նախ կարա-կոյունլու (1380—1469 թթ.), ապա ակ-կոյունլու թուր-
 քմենական ցեղերը, որոնք մեր երկիրն էին ներխուժել մոնղոլների
 և Լենկ Քեմուրի տիրապետության շրջանում:

Կարա-կոյունլուներն իրենց անկախ զառկեցին 1380 թվակա-
 նին: Նրանց պետության հիմնադրի կարա-Յուսուֆը (1380—1399
 թթ. և 1405—1421 թթ.) և նրա որդի Սկանդարը (1421—1437 թթ.),
 որն իրեն հռչակել էր «Շահ-Արմեն», տեղ էին դարձել Հայաստանի
 և հարևան Ատրպատականի մեծազույն մասին: Բայց կարա-կոյուն-
 լուների պետությունն իր հզորության գագաթնակետին հասավ
 Սկանդարի եղբոր՝ Ջահնշահի օրոք (1437—1467 թթ.): Հզորացող
 թուրքալիցի և Պարսկաստանից եկող վտանգն նկատյ ունենալով՝
 Ջահնշահը ձգտում էր Հայաստանում իր համար ստեղծել հուսով
 հենարան: Նա հայկական հին իշխանական տներից սերած ներկա-

յաղուշիչներէրք շատերին կարգեց զավտական տանուտերները՝ մե-
լիքներ, որոնցից ոմանք իշխում էին մեկ կամ ավելի զավաւների
վրա և կոչվում էին իշխաններ: Հայկական մելիքութիւնները գտնու-
վում էին Գեղամա Էրկրում, Վայոց ձորում, Սյունիքում, Արցա-
խում, Գուգարքում, Վասպուրականում, Ռշտունիքում, Մոկրում և
այլուր:

Սկանդարի և Ջհանշահի ժամանակ կարա-կոյունլուների պե-
տութեան մայրաքաղաքը Դավրիճն էր:

Երևանի նշանակութեան բարձրացման համար մեծ նշանակու-
թիւն ունեցան Ջհանշահի վարչական վերափոխումները: Եւստի-
կին Այրարատյան աշխարհի մեծագույն մասն ընդգրկող տերիտո-
րիաներից կազմեց մի ընդարձակ կուսակալութիւն՝ Երևան կենտ-
րոնով: Այդ կուսակալութեան կամ խանութեան կազմավորման ճշշ-
գրութ թվականը, սակայն, հայտնի չէ, որոշակի հայտնի չէ նաև այդ
ժամանակներում նրա ունեցած մոտավոր սահմանները:

Ջհանշահի կողմից նշանակված մեկ հայտնի առաջին կարա-
կոյունլու կուսակալը Երևանում եղել է Յաղուր-բեկը (կամ Աղուպ
բեկ): Նրա մասին առաջին անգամ հիշատակում է Քովմա Մեծնու-
փեցինը՝ 1441 թվականին՝ Հայոց կաթողիկոսական մայր աթոռը Կի-
լիկիայի Միս քաղաքից Վաղարշապատ քաղաքում վերահաստատելու
արարողութիւնների առնչութեամբ, որոնց կազմակերպիչներից և
աթոռի տեղափոխման գործի ակտիվ մասնակիցներից մեկն է եղել
հենց ինքը՝ վարդապետ պատմիչը: Նրա ակտիվ այդ հանդիմանող
արարողութեան մասնակիցը են մինչև 300 զանազան կոչումներ ու-
նեցող հայ հողերակաւներ, ինչպես և Երևանի կուսակալ Յաղուր-
բեկի իր զորքի հետ միասին: Պատմիչը նշում է, որ նրա համաձայ-
նութեամբ և հրամանով կաթողիկոս քնտրվեց Կիրակոս Վիրապե-
ցին: Նա մանրամասք պատմում է նաև կաթողիկոսական աթոռը
Մայր Վաղարշապատ տեղափոխելու բոլոր շարժառիթների մասին¹:
Հայտնի թէ հարկ կա երկար ու բարակ գրել, որ մայր աթոռն առա-
փոխումը հսկայական նշանակութիւն ուներ համահայաստանյան
մասշտաբով: Բայց այդ առանձնապես կարևոր նշանակութիւն ու-
ներ Վաղարշապատ—Էջմիածնի մոտ գտնվող Արարատյան կուսա-

կալութեան կենտրոնի՝ Երևանի համար: Երևանի օտար կուսակալ-
ները այդ քաջ դիտակցում էին և ձգտում էին մայր աթոռը դարձնել
իրենց հենարաններից մեկը՝ երկրում իրենց իշխանութիւնը սն-
վողանգ դարձնելու նպատակով: Ուստի պատահական չէ, որ Երևանի
առաջին կուսակալ Յաղուր-բեկը ակտիվ մասնակցութիւն է ցույց
տալիս աթոռի տեղափոխման և նոր կաթողիկոս քնտրելու գործին:
Քովմա Մեծնուփեցին իր «Յիշատակարան»-ում գրում է.

«Եւ այսպ պատահալ զիպեցաք մեծ վարդապետին մերոյ (Կի-
րակոս Վիրապեցուն) և առեալ եկաք ի զիւղաքաղաքն Երևան...
Իսկ միւսն օրն եկն հրաման բանալորէն Աղուպ-բեկէն և հասաք առ
նա. և նա իրբն զՅաղաւոր բրիտանոնէից սիրով ժողովեալ զօրս իւր
և զմեզ զամենեւեան, փողով և թմբկով զուժամբ մտաք ի սուրբ
քաղաքն Վաղարշապատ... Եւ հրաման եղև ի բռնաւորէն օրհնել
կաթողիկոս առանց հակառակութեան»²:

Յաղուր-բեկին հաջողած և հետագայի կուսակալներն ու խա-
ները ևս, չնչին բացառութեամբ, ձգտում էին Էջմիածինը զբաղել
իրենց կողմը, հովանավորում էին նրան և շատ զեպերերում նույնիսկ
խառնվում նրա ներքին գործերին:

Երևանի կուսակալների և խաների ժամանակագրութիւնը առ-
այժմ բիշ է ուսումնասիրված: Մասամբ զրա և մասամբ էլ աղբյուր-
ների սակավութեան ու հակասական վկայութիւնների պատճառով
այդ հարցում ուսումնասիրողներ մոտ առաջացել է շփոթութիւն:
Ենչ առանձնապես վերաբերում է XV դ. կարա-կոյունլու և ակ-կո-
յունլու կուսակալ-խաների ժամանակագրութեանը և տոհմագրու-
թեանը: Նույնիսկ Ղևոնդ Ալիշանը, որ այնքան քաջատեղյակ է աղ-
բյուրներից, այդ դարում իշխած Յաղուր-բեկ անունով երկու տար-
բն խաների ժամանակագրութեան մասին հարկագրված է գրել.
«Եւստիպոս այն (Երևանի առաջին կուսակալը—Թ. Հ.) չկզգոցունլու
տոհմէ՛ր երեկ զոյ, և հաւանօրէն եղլոր որդի տոհմապետն նոցին՝
Գարա Օսմանայ՝ զի կարգեալ այլր ասի՝ ի Ջհան-շահէ՛ որ էր պաշտ-
պան այնր տոհմի»³, «Նէ է յայտ ցո՛ր ժամանակ եկաց նա իշխանու-
թեանն, այլ թուի շփոթեալ և ընդ համանուն (Բ) եաղուր բեկի որդ-
ոյ Ուլուռն Հասանայ, որ ի սոյն Սպիտախոյ տոհմէ՛ր էր, և սպան-
ոյ զՋհանշահ յամի 1467, և ՚ի զէպ է թէ՛ զորդի իւր կարգեաց զան կամ
կուսակալ երկրիս մերոյ, զոր յիշատակագիրք մեր սուէպ անուանեն
Աղուր կամ Յաղուպ զան կամ Բեկ, այսպ և Փաքշան և աշխարհա-

¹ Ղ. Ալիշանը Յաղուր-բեկին համարում է ակ-կոյունլու և Սոցի մայր աթոռի
անդադրիտմբ Վաղարշապատ գնում ոչ թե 1441, այլ 1440 թվականի սակ (տե՛ս
«Այրարատ», էջ 215, 300): Այդ զիպքը 1440 թվականին է վերաբոյժում Նաթ Մե-
սոպ Սմբատյանքը («Տեղագիր Գեղարքունի ծովագործ գրատի...», էջ 6):

² Տե՛ս Քովմա Մեծնուփեցու Յիշատակարանը, Թիֆլիզ, 1892, էջ 51—66:

³ Քովմա Մեծնուփեցու Յիշատակարանը, էջ 64—65: Հմմտ. Ղ. Ալիշան, Այրա-
րատ, էջ 215—216:

կալ, զի յաջորդեաց զճայր իւր ՚ի շահատանն Գալթեթ (1478—1491)»¹,

Աբլուրներն կցկոտուր հաղորդումներնց երևում է, որ XV դարում Երևանում իշխել են առաջին Յաղուր-բեկը, որը հիշատակել է Քովմա Մեծոփեցին, ուն շատաբեկ, որը հիշատակվում է նույն դարի 70-ական թվականներին և կրկնորգ Յաղուր-բեկը, որն Ուլուսն Հասանի որդին էր և պատկանում էր ակ-կոյունլու ցեղին²։

Կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների տիրապետության շրջանում Հայաստանի քաղաքական պատմությունը շափագանց անկարուն էր։ Այդ ճավասար շափով վերակերրում էր նաև Արարատյան կուսակալության կենտրոն Երևանին։ Այդ պատճառով այստեղի կուսակալները հաճախ էին փոփոխվում։ Պավագրությունները, կոիվները և բանասրբությունները սովորական երևույթ էին դարձել։ Կարա-կոյունլուների և ակ-կոյունլուների տիրապետության շրջանում Երևանը մի բանի անգամ անցել է ձեռքից-ձեռք և ենթարկվել ավերման։

Բայց եղել են և կարճատև խաղաղության ժամանակներ։ Այդպիսի մի կարճատև խաղաղության ժամանակաշրջան է ապրել մեր մայրաքաղաքը կարա-կոյունլու առաջին կուսակալ-կառավարի՝ Յաղուր-բեկի ժամանակ, XV դարի 40-ական թվականներին։ Նա կառավարել է Ջհան-շահի օրոք, երբ Հայաստանում և Սիրիայում (Ասորիք) ընդհանուր առմամբ խաղաղ պայմաններ էին հաստատվել։ Նրա իշխանության ժամանակներ յմասին մի ում ժամանակակից հեղինակ հետևյալն է գրում. «Տիրեաց (Ջհան-շահը—Ք. Ն.) երկու թախտի, Հայոց և Ասորոց, և արար խաղաղութիւն ոչ սակաւ, քայց հարկապահանջութիւն բուռն և ծանր էր ՚ի վերայ քրիստոնէիցս»³։ Հիշատակարի այդ երկու տողից պարզ երևում է, որ նույնիսկ խաղաղ տարիներին Հայաստանի և Երևանի քանակության դրույթները XV դարում շատ ծանր էր։ Խաղաղ պայմանները ոչնչով չէին մեղմացնում աշխատավոր բնակչության ծանր դրույթները։ Կողոպտիչ հարկերը աղքատության դուռն էին հասցրել քանակությանը։ Թուրքմենական կարա-կոյունլու և ակ-կոյունլու

կուսակալ-խաները կատարյալ բռնակալներ էին և օժտված էին գրեթե անահաման իրավունքներով։ Երևանի կարա-կոյունլու առաջին կուսակալ Յաղուր-բեկի մասին խոսելիս Քովմա Մեծոփեցին նրան համարում է Արարատյան աշխարհի սրբանավոր⁴։ Իրենց բռնակալական իրավունքներով և կեղեքիչ հարկային քաղաքակալությունները նրանից ոչնչով չէին տարբերվում հետագայի կուսակալ-խաները (Այսպիսով, էթն վարչա-քաղաքական առումով XV դարում Երևանը ձեռք էր բերել առանձնահատուկ նշանակություն՝ դառնալով նախկին Արարատյան աշխարհի հիմնական մասի կենտրոն (որտե հեղինակները մոտ կոչվելով նույնիսկ մայրաքաղաք), այսպեպես նաև առումով նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ ոչ միայն չէր առաջադիմել, այլև զգալի շափով հետագիմել էր) Մեր կարծիքով XIII դարի վերջերին արդեն իսկական քաղաք դարձած Երևանը XIV—XV դարերում նորից հասնախ օգնությանը, առանձն, սեմծ առանձ հորջոջվելով, որ հանդիպում ենք մեր մատենագիրների մոտ⁵ ու հիշատակարաններում ուներ իր պատմա-տնտեսական հիմքը, թեպետև բացառված չէ նաև այն, որ ֆեոդալիզմի դարաշրջանում միևնույն քանակվարը, որի պարտությունների մեջ, բացի քաղաքայինից, զգալի տեղ էին զբաղում նաև գյուղատնտեսության չլուղերը, կարող էր տարբեր հեղինակների մոտ տարբեր կարգի հիշատակվել՝ սեմծ մոտ քաղաք, ունայ մոտ լի՝ գյուղաքաղաք և ավան։ Իսկ Տերտեր Երևանից գրիչը 1336 թ. Ղրիմում (Սուրբաթում) իր ընդգրկելից՝ Արարան Այգեկցու բարոյագրքի հիշատակարանում այն կոչում է պատվական քաղաք։

«Յերկրէն եկի այն վրայստե,
Ի քաղաքն ախ պատական
Որ իբ առանն է երևան,
Խոր վերային ու էլմիսմին է հարեան»⁶։

Պատվական քաղաք կոչելով Երևանը, Տերտեր Երևանցին ըստ երևույթին առաջին հերթին նկատի ուներ նրա վարչա-քաղաքական կարևոր նշանակությունը։ Դրանում կարող է որոշ դեր խաղացած

¹ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300։

² ՏՃ՝ ս օժն գարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Ս. Խաչիկյան, մասն երկուրդ, էջ 397—398, մասն երրորդ, էջ 26, 28, 108, 168, Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300, Էփրիկյան, Պատկերաբանագրք ընտանիքի բառարան, հատոր 1, էջ 694—695, Երևանում XV դ. իշխած խաների ժամանակագրության հարթի և Նիքիթած Զ. Գ. Փափաղյանի՝ «Ստար տիրապետությունը Արարատյան երկրում և աշխարհային արժանի հոգածքը (ՀԱՍՈ ԳԱ «Տեղեկագիր», 1960, № 7—8)։

³ ՏՃ՝ ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300։

⁴ Քովմա Մեծոփեցու Ֆիլասոսկարանը, էջ 63։

⁵ ՏՃ՝ ս Գեղարդ Կարեցի, Ֆիլասոսկարան աղետից, էջ 5—6, Քովմա Մեծոփեցու Ֆիլասոսկարանը, էջ 65, օժն գարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Ս. Խաչիկյան, մասն 11, էջ 398, «Հանգու ամսորեայ», 1934, № 5—7, էջ 330, Սեպանգ Շամազիզ, Հին Երևանը, էջ 30, 70, 73, և այլն։

⁶ «ՏԳ գարի հայերեն ձևագրերի հիշատակարանները, կազմեց Ա. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 288։

լինել նաև երևանցի գրչի հարկենասիրությունը: Ինչ էլ ուզում է լինի նա իսկական ֆեոդալական քաղաք էր, որտեղ քաղաքային գրադոմերների հետ միասին մեծ դեր ու կշիռ ունեին նաև գյուղատնտեսությունից հյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը:

Նախորդ ժամանակաշրջանի նման քաղաքի գյուղատնտեսական հյուղերի մեջ առաջնակարգը մնում էին այդպիսիությունն ու բանջարատուությունը: Սակայն պակաս նշանակություն չի ունեցել նաև հացահատիկների մշակությունը: Հացահատիկային կուլտուրաների մեջ քառ կրտսիքին առաջնակարգ նշանակություն է ունեցել հատկապես բրինձը, որը ցորենի նկատմամբ տալիս է ավելի մեծ բերք: Հիշատակությունների համաձայն, Լենկ Քնձուրի ժամանակ մի վաճառականի իրավունք է տրվում Երևանի շրջակայքի օգտագործելու բրինձի մշակության համար¹: Այստեղից պետք է եզրակացնել, որ բրինձի մշակությունից ստացվում էր մեծ քանակություն արարանքային բրինձի, որը Վաճառքի էր դուրս բերվում քաղաքի և այլ վայրերի շուկաներում: Ունենք ենթադրում են, որ այդ նույն վաճառականն է առաջին անգամ պարսպպատել Երևանի բերդը, իսկ քաղաքն ամրոցությունը երբևէ պարսպպատատ չի եղել:

Նախորդ ժամանակաշրջանի համեմատությունը հողային հարկերությունների մեջ այս շրջանում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: XIV—XV դարերում ևս քաղաքում գոյություն ունեին երեք կարգի հողագիրություններ՝ մանր, խոշոր և վանքապատկան-եկեղեցապատկան: Քաղաքում և նրա շրջակայքում առաջվա նման հողը վաճառքի, նվիրատվության, ժառանգման հիմնական առարկաներից մեկն էր: Նախորդ ժամանակաշրջանի մասին խոսելիս այլ աղբյուրով տեևանք, որ 1301 և 1318 թվականներին քաղաքում խանութներ ու հողեր էին արամաղովել եկեղեցիներից («ժամատեղացա»)՝ նույն կարգի գործարքներ են կատարվում նաև հետագայում: Հավուց Քառի Ամենափրկիչ եկեղեցու արձանագրություններից մեկում, որը վերաբերում է XIV դ. կեսերին, ասված է,

«Կաման այ ևս Բխուդունս դուստր Մենասին Երևանցի,

միարև սրբոցս այի դիմ ձիվնեց այգին: Ժն: մրձի տեղ սր Ա:

¹ ՏՀ՝ «Հանգեև ամսորեայ», 1934, № 5—7, էջ 330:

² Նույն տեղը:

³ ՏՀ՝ Կ. Գափաղաբու, Երևանի կաթոլիկներ և նորահայտ հուշարանների արձանագրությունները, ՀեթՁ պատմ. և գրակ. ինստ. «Տեղեկագիր», դիրք 1, էջ 172—174:

(սղագրորիմ, որ նշանակում է «եկեղեցի»)՝ ար Աթև ևս միարաճևս գրեցին: Զ: պա տ: ր: Խ:»¹:

Ինչպես տեսնում ենք, Մենասի դուստր Բխուդունը իր այգին ապրով Հավուց Քառ վանքին զրա դիմաց ստացել է տարվա մեջ 6 պատարար: Այս արձանագրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Դրանից պարզվում է, որ կանայք նույնպես ունեին ժառանգական լիակատար իրավունքներ և կարող էին ըստ իրենց հայեցողության անօրինել իրենց ժառանգությունը: Տվյալ դեպքում Բխուդունը հավանաբար ամուսնացած չէր և քստ Մխիթար որչի զատապատարգրի համապատասխան հողվածի, որ մենք վկայակոչել ենք նախորդ ժամանակաշրջանի մասին խոսելիս, իր հոր ունեցվածքի միակ ժառանգորդն էր:

Հողային հարկերությունների հատկապես հողի և մուլքադարական իրավունքի առ ու վաճառքի մասին պահպանված վավերագրերի մեջ առանձնահատուկ նշանակություն կարող է ունենալ 1432 թվականին Գրիգոր Մավիկեի կաթողիկոսի կողմից էլմիսանի համար յոթ գյուղերի (էլմիսանի, Աշտարակ, Բաթոնիշ, Նորագավիթ, Աղալեստան, Քանիս-Քիլրալի և Մուղնի) մուլքադարական իրավունքը գնելու մասին²: Այդ կալվածազերը հաստատված է հողերը շարիաթի ղյխվաժոր դադիի, Նախիջևանի դադիի և Երևանի մուլայի կողմից³: Այս գործարքը անմիջապես Երևան քաղաքին չի վերաբերում և չէր էլ կարող վերաբերվել, բայց զրա վրա ուշագրություն դարձրեցինք հենց այն պատճառով, որ նշված 7 գյուղերից 6-ը գտնվում էին Արարատյան դաշտում: Դրանցից միայն Քանիս-Բեշակլին էր, որ գտնվում էր Աղալեստան:

Այսպես XIII դարի վերջերից Հայաստանում աստիճանաբար ընդարձակ հողային տարածությունների տեղ են դառնում մեր երկիրը մուսոր գործած ալլադդի ազնվականները, վաճառականները, դինձորական վերնախավի ներկայացուցիչները, ինչպես նաև մասամբ մզկիթները: Խոշոր հողատերերի ազգագրական կազմի այդ փոփոխությունները սկսվել էին սելջուկյան տիրապետության շրջանում, բայց մեծ շափեր ընդունեցին միայն XIII դարի վերջերին և

¹ Գարեգին Հովսեփյան, Հայոց Քառի Ամենափրկիչ և նույնանուն յուշարանները հայ պատմության մեջ, Երևանում, 1937, էջ 26:

² ՏՀ՝ «Կալվածագրքեր և տեսնական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, կազմից՝ Լաւ. Արարատյան, Երևան, 1941, էջ 13—15, 2-րդ մաս. Մ. Մալաոյի անվան Մատենադարան, Գ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 242, վավերագիր 65:

³ Նույն տեղը, էջ 15:

Հետագա շրջանում: Այդ հավասար շափով վերաբերում է նաև երկ-
վան քաղաքին: Մոնղոլական տիրապետության վերջին տասնամ-
յակներին, Լենկ Թեմուրի և կարա-կոչունու ու ալ-կոչունու թուր-
քական ցեղերի տիրապետության շրջանում, մասնավորապես XV դարի
ստաբիլ կեսից սկսած, երբ Երևանը դարձավ կուսակալության
կենտրոն, քաղաք մուտք գործած այլազգի վերնախավայինները և
քաղաքում, և՛ դրանից դուրս ձևոր են բերում ընդարձակ կալվածա-
րներ: Օրինակ՝ Երևանից ունեցող Մաազ Վարկազը, բացի քաղա-
քում ունեցած հողային տարածություններից, մուլքադարական ի-
րավունք ուներ նաև Օշական գյուղում: Ըստ 1488 թ. վերաբերող մի
կալվածագրի, նա Օշականում ունեցած իր 6 դանկ մուլքը թավրիդ-
յան 8000 դինարով վաճառել է ունե Ազգին րեզին՝: Խոջա Սաազ
Վարկազը միակը չէր Երևանում:

Արհեստագործությունն ու առևտուրը, նախորդ ժամանակաշր-
ջանի համեմատությամբ, հավանաբար որևէ առաջադիմություն չէին
կատարել, թեև նաև Երևանը գործել էր մի ընդարձակ կուսակա-
լության կենտրոն, որն ուներ իր կալազորը, վարչական ապարատը:
Առևտրի զարգացմանը արգելակում էին հարստև պատերազմները,
ճանապարհների վտանգավորությունը, փակ բնատնտեսությունը,
որ իշխող էր ամբողջ երկրում: Նույնպիսի արգելակող պայմաններ
կային նաև արհեստների զարգացման համար: Քաղաքի տասնյակ-
ների հաստող արհեստները, որ Հայաստանի մյուս մեծ ու փոքր
քաղաքների XIII դարում և մասամբ XIV դարի առաջին կեսում
եղած արհեստների նման բավական մասնագիտացված էին, բարձր
զարգացման և մեծ վարպետության հասած¹, XIV դարի երկրորդ
կեսում և XV դարում բավականաչափ հետադիմում են:

XV դարի ձևազրկի հիշատակարաններում բազմաթիվ վկա-
ություններ կան վատթար վիճակի՝ թանկության, սովի, անբերրիու-
թյան, բնական աղետների, օտար տիրապետողների կեղեքումների,
թալանչիական հարկային քաղաքականության, ավերումների ու գե-
րեմարումների, կամայականությունների և այլնի վերաբերյալ²:
Վկայադրված զրանցից միայն ներկուրը:

¹ Տե՛ս Մ. Մայրոսյի անվան Մասնադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան,
թղթ. 1ա, վավ. 4:

² Տե՛ս Վ. Ա. Արտեմյան, Արհեստների Հայաստանում IV—XVIII դդ., Երե-
վան, 1956, էջ 45, 46, 239, Բարկեն Առախյան, Քաղաքները և արհեստները Հա-
յաստանում IX—XIII դդ., հատոր II, էջ 195:

³ Տե՛ս «ԺԾ դարի հայերև Անուպրի հիշատակարաններ», կազմել Կ. Խա-
չիկյան, մաս I, էջ 106, մաս II, էջ 26, 185, 397—398 և այլ տեղերում:

1482 թվականին վերաբերող ավետարանի հիշատակարանում
ընդօրինակող գրիչ Աբրահամը գրում է.

«Ե զամութեան ժամանակի,
Որք եմ նեղակ ի ձեռ տուսիկի.
Ի յառութեան Յաղապ-բեակի.
Որ է այժմ ի Թաղթեմ Թախտի»:

Գծվար չէ տեսնել, որ գրիչի սաած գառնութեան ժամանակա-
վերաբերում է թուրքական ցեղերի ընդարձակ պետությունն ընդ-
հանրապես, որի կազմում գտնվում էր և Երևանի կուսակալությունը:
Մյուս հիշատակարանը, որ պատկանում է անհայտ գրիչի և գե-
տեղիված է մի ձեռագիր գանձարանի վերջում, վերաբերում է 1492
թվականին Այնտեղ աված է:

«Մ՛հ, ո՛հ, զայս դառն տարիս, ցորեանն ի Կ (60) թվ. (Թանկա)
ու չկա, կորեկն ու դարին ի Ս. (50) թանկա, և աղբատը ամեն խիստ
տառապին և անիծեն զՍօֆին:

Թվ. Զեռ (1492)»³:
Եթե առաջին հիշատակարանի մեջ նշված զգառնութեան ժա-
մանակա-ը վերաբերում է բովանդակ պետության ամբողջ բնակ-
չությունը, այս անհայտ գրիչի տրտմունքը 1492 թվականին եղած
թանկության մասին գերազանցապես վերաբերում է քաղաքային
բնակչությանը, ամբողջությանը, որը հացահատիկի անփական
ցանքսեր չունեի և ապրելու համար անհրաժեշտ հացահատիկը՝ ցո-
րեկը, գարին, կորեկը պետք է գներ շուկայից: Թանկությունից ամե-
նից շատ նեղվում էին աղբատները՝ օտարատը ամեն խիստ տա-
ռապինը:

Հաճախակի կրկնվող պատերազմների ու զրանց հետ կապված
անտանելի պայմանների և Հայաստան մուտք գործած օտար տար-
րերի ճնշման տակ այս շրջանում մեծ գանդվածներով հայեր թող-
նում են իրենց տունն ու տեղը և բռնում արտագաղթի ուղին: Ծա-
կատագրի բերումով գաղթը մեր ժողովրդի համար նորություն չէր:
Հարկադրական «բիքնական» գաղթ է եղել գեռև բյուզանդա-
կան տիրապետության ժամանակներից, բայց այն մեծ շափերի է
հասնում մասնավորապես XIV դարից, երբ օտար նվաճողները մեծ
դանդվածներով եկան ու հաստատվեցին մեր երկրի արգանքի
դաշտերում և ձորահովիտներում, երբ նրանց ձեռքով կործանվե-

¹ «ԺԾ դարի հայերև Անուպրի հիշատակարաններ», կազմել Կ. Խաչիկյան,
մաս II, էջ 26:

² Նույն տեղում, էջ 185:

ցին մեր ծաղկած բաղաբնեցը, սոսոզման բարեկարգ ցանցը, զարգացած տնտեսությունը:

Այդ տեսակետից բացառություն չէր կազմում Դվինին և Անիին փոխարինած, բայց դրանց նկատմամբ փոքր ու համեառ ներանդը նրանին էլ ենթակա էր երկրի ընդհանուր հակառակորդին: Քուրբակյան ցեղերի հաստատած ընդարձակ կուսակալություն կենտրոն նրանում աստիճանաբար բնակություն են հաստատում այլազգիները, իսկ բնիկ բնակչության մի մասը շարեզգրված է լինում թողնել իր ճայրենի բաղաբը և սպրուաթի միջոցներ որոնել այլ տեղերում: Այս եղանակով շատ երևանցիներ բնակություն են հաստատում Գրիմում, որի օրինակը կարող է ծառայել վերը նշված Տերտեր նրանցի գրիչը, և այլ տեղերում՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Չնայած անտանելի պայմաններին, այնուամենայնիվ, երևանում XIV—XV դարերում կատարվում են հիշատակության արժանի գործեր: Բողոքողի առաջավոր ներկայացուցիչները նույնիսկ այդ մասը ժամանակաշրջանում շարունակում են ստեղծագործել, զարգացնել հայ մշակույթը:

Ենթ դարի 20-ական թվականներին երևանի եկեղեցիներում պահպանվել էին 78 օրինակ հին ձեռագրեր, որոնք հանձնվել են էջմիածնի ձեռագրատանը, ապա վերջինիս մյուս ձեռագրերի հետ միասին՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին: Գրանցից 25 հատը գտնվում էր Կաթողիկոսում, 20-ը՝ Պողոս-Պետրոսում, 7-ը՝ Սարգիսում, 21-ը՝ ս. Նովհաննեսում, 2-ը՝ Զորավորում, իսկ 3 հատը՝ նորում: Գրանցից 38-ը ավետարաններ են՝ գրված 1372—1688 թվականների ընթացքում, մեկ հատը մազադաթյա աստվածաշունչ է, որը ընդօրինակվել է 1314 թվականին՝ Մարտիրոս զրչի կողմից: Կան գանձարաններ, ժամգրքեր, ժողովածուներ, ճաշոցներ, Մաշտոցիներ, Հայամալուրք, Շքարկանոց, նարեկ, Ամբրոնացի և այլն¹: Ազրյուրների մանրագին օտուտնասիրությունը ցույց է տալիս, որ XIV—XV դարերում երևանում ընդօրինակվել են 5—6 ավետարան, Գրիգոր Տաթևացու Քարոզիչը, մի քանի գանձարաններ, բժշկական և այլ բնույթի ձեռագրեր²:

Մեր կատարած հաշիվների համաձայն XV դարում երևանում ընդօրինակված ձեռագրերից մեկ է հասել 5 հատ, որոնցից 4 հատը ավետարաններ են³, իսկ 1-ը՝ Գրիգոր Տաթևացու Քարոզիչի: Ընդ որում այդ ավետարաններից մեկը ընդօրինակվել է ոչ թե բուն երևանում, այլ նորագավթում: Գրանցից Գրիգոր Տաթևացու Քարոզիչի գրիչը եղել է հայտնի պատմագիր Քովմա Մեծոփեցին: Այն ընդօրինակված է 1410 թվականին: Իսկ ավետարանները ընդօրինակել են՝ Մանվել եպիսկոպոսը (1405 թ.), Ավետիս Երեցը (1433 թ.), Նովհաննես Երեցը (1440 թ.) և Հայրապետը (Նորագավթում, 1465 թ.): Ե՛վ ավետարանների, և՛ Գրիգոր Տաթևացու Քարոզիչի ձեռագրերի վերջում գրիչների, ստացողների ու նվիրողների հիշատակարաններ կան, որոնք կարևոր աղբյուր են ծառայում պատմա-բանասիրական դանդան հարցերի համար: Ձեռագրերի նկարագրությունը մեր հետաքրքրության շրջանակներից դուրս համարելով, այնուամենայնիվ, շեք կարող մի երկու խոսք շատել դրանց մասին:

Այս շրջանում երևանի մեկ հայտնի ամենահին ձեռագիրը գրել է Մանվել եպիսկոպոսի ընդօրինակած ավետարանն է, որը վերաբերում է 1405 թվականին: Ձեռագրի վերջում կա երկու հիշատակարան: Առաջին հիշատակարանում վիշապի որդի Հակոբը գրում է, որ ինչն էլ որ «չալու արեանց» այդ դատը և ծանր ժամանակներում զննելով ձեռագիրը մեկ ձեռք զգեստի ու մեկ արծաթյա սկիհի հետ միասին նվիրել է երևանի երկուերանի եկեղեցուն: Հիշատակարանի վերջում գրել է Մանվելը իր մասին ավելացրել է հետևյալ լատինա խոսքերը.՝

«Ջալը Մանուէլ՝ Համբակ վերջին,
Յաջողք Բրեւոյ ու Այրարաբին,
Որ մրերցի ծայրոք մատին
Ձիշատակաց զիծա վերջին,
Միշտ յիջեցիք առ ի բարին
Ձեռք և զձեռեիքն մեր բարին.
Ու զձեզ յիշէ ալը ի բարին
Աստ է ի յորն սպողային, ամէն»:

¹ Տե՛ս «Հանգիստ ամսորեայ», 1834, № 5—7, էջ 333—334, նովանց նոնազիգ, էջ 72, 73, 203, Լ. Ս. Խաչիկյան, «Ժնարակները հիշատակարաններ, մասն 1, էջ 49—51, 663, մասն երրորդ, Հավելված Ա, էջ 443. Հ. Անտոնով, Հայոց անձնատեսիների բառարան, հատոր Գ, էջ 299, 437, հատոր Ե, էջ 122:

² Լ. Ս. Խաչիկյան, «Ժնարակները հիշատակարաններ, մասն 1, էջ 49—50:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 51:

¹ Տե՛ս երկուց Եմեազիգ, էջն երևանը, էջ 227:

² Նույն տեղում:

³ Տե՛ս «Հանգիստ ամսորեայ», 1834, № 5—7, էջ 328, 333—334, «Արաջ» հանդես, Ս. Պետրոբուրգ, 1894—1895, դիրք Ա, էջ 242—243, Լ. Ս. Խաչիկյան, «Ժնարակները հիշատակարաններ, մասն 1, էջ 49—51, 103—106, 237, 662, մասն 11, էջ 397—398:

Երկրորդ հիշատակարանից երևում է, որ XV դարի վերջերին ձևապիր բերված է եղել և այն վերանորոգել է տվել Մովսիս Սուրբ պապից փոքր հասակում երևան եկած ու այստեղ բնակություն հաստատած ոմն Ներսես Առաջին վերանորոգողն ու հիշատակարանի հեղինակը Զարարիան է: Առաջինը դարձյալ պատկանում էր քաղաքի երկուերեսների կեկեղեցուն: Այն իր առաջին տիրոջ՝ Հակոբի հոր անունով կոչվել է Վիշապենց (հիշատակարանում «Վիշապենց», բարբառով՝ Ուշապենց) ավետարան Գրան վերագրել են հիվանդների բուժելու մեծ գործիքուն¹:

Իր հնուխձամբ երկրորդ ավետարանը XV դարում ընդօրինակվել է (1433 թվականին) Ավետիս երեց գրչի ձեռքով: Երևանում ընդօրինակված այս ավետարանը առաջին համաշխարհային պատերազմից առաջ զանգվում էր Կարինի (էրզրում) շրջանի Ձիթավողբ դյուղի կեկեղեցում²:

Քաղաքում XV դարում ընդօրինակված երկրորդ ավետարանը վերաբերում է 1440 թվականին Այս ավետարանը ընդօրինակված է ս. Անանիա (հետագայում Զորավոր կոչված) կեկեղեցում, Հովհաննես երեց գրչի ձեռքով³: Զորրորդ ավետարանը ընդօրինակված էր 1465 թվականին (գրիչ՝ Հայրապետ): Այն ունի ընդարձակ հիշատակարան⁴:

Մեզ համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի այն ձևագիր օրինակը, որի գրիչն ու ստացողը պատմագիր Քովմա Մեծոփենցին է: Առաջին վերջում գտնվում է նշանակիր գրչի ընդարձակ հիշատակարանը, որից հարկ ենք համարում մեղբերել մեզ անհրաժեշտ հատվածք.

«...Շնորհօք բարերարին աստուծոյ ևս մեղապարտս ի մանկունս կեկեղեցոյ պիտակ անուն վարդապետս Քովմա ստացցիցր կատար հատոր Քարոզգրքս աստուծապատին և երանանոր՝ քաջ հոնարին և անյաղթ փիլիսոփային՝ սուրբ հօրն մերոյ մեծին Կրիզոստ, յամի թուականութեան մերս տունարի ՊՄԹ. (1410)-ն-

¹ Եռյն տեղը, Հմտ. Երվանդ Տոմարի, Հին Երևանը, էջ 73, 203:

² Տե՛ս Հ. Քոչյան, Բարձր Հայք, հատոր Բ, Վիեննա, 1926, էջ 85, Լ. Ս. Խաչիկյան, Փն գրքի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն Ի, էջ 692:

³ Հ. Ա. Ալիբյան, Հին Երևանը, «Հանգեա ամսօրեայ», 1934, № 5—7, էջ 333—334:

⁴ Լ. Ս. Խաչիկյան, Փն գրքի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն 117, էջ 443:

գրքի՝ բաղում աշխատութեամբ և շարչարանաբ, ի զանն և շարժամանակի, ի դաւառիս Արարատեան, յանապատիս Երևանայ, և առ գրան սուրբ տաճարիս Անանիայ առաքելոյ, ձեռամբ Երախտաւորի և մեր բնա հոգւոյ և բար մարմնոյ բարեկամի՝ քրիստոսակիր անստատուծոյ Գայուսա վարդապետի, և հօգևոր եղբար մերոյ և ընկերակցի Սիմեոն կրօնաւորի: Եւ մասն ինչ ևս՝ տկարաւ հոգով և մարմնով գծադրեցի ի յուսումն վարդապետաց կեկեղեցոյ և ի զիտունով մանկաց Սիրնի, մանաւանդ յիշատակ հօրոյ իմոյ, և հգևոր քին մանկաց Սիրնի, մանաւանդ յիշատակ հօրոյ իմոյ, և հգևոր ձնողաց իմոց և ուսուցչաց՝ Մաթէոս կրօնաւորի, և վարդապետաց ձնողաց իմոց և ուսուցչաց՝ Մաթէոս կրօնաւորի, և վարդապետաց ձնողաց իմոց և ուսուցչաց՝ Մարգալէ վարդապետի, և Յովհաննէս վարդապետի՝ բազմապարշաբ նահատակի, որ և ի սոյն ամի տարուեաց դուրս կեկեղեցիս¹:

Հիշատակարանից պարզ երևում է, որ պատմագիր գրիչն իր հօրն պարտքն է համարել ամենագլխաբն պայմաններում ընդօրինակել սերիկի ուսուցչի՝ Երկրորդ յուսուցչի մեծին Գրիգորին, «անտախտադիտութեամբ հիշում է իր զհօգևորս մյուս «ձնողաց և ուսուցչաց»՝ Մաթէոս կրօնավորին, Սարգիս, Վարդան և Հովհաննէս վարդապետներին, որոնց կոչում է քրիստոնապետ-ներ: Երևանում XV դարում կապին նաև յայնպիսի ձևագրեր, որոնք ընդօրինակված էին այլ վայրերում: Գրանցից մեզ հայտնի են հատկապես 2-ը, որոնցից մեկը տոնացույց է, իսկ մյուսը՝ ավետարան:

Տոնացույցը հայտնաբերվել է 1873 թվականին Երևանում պատահած հեղեղի ընթացքների մեջ: Այն ընդօրինակվել է Արմի կաճա (Քեղդոսիս) քաղաքում 1434 թվականին՝ Օգոսենտ անունով մի կրօնավոր գրչի ձեռքով: Նյութը մազադաթ է եղել, գրված ընտրի գրչադրով: Փոքրագիր գրքույկ է եղել, բաղապարձ 258 էջից, կաշեկապ և դարդարված է եղել ոսկեգույն և կարմիր ու կանաչ գույնիկով պատած բանդակներով: Սակայն կարևոր և հարվազուտ այս ձևագիրը, որն ունեցել է և մեծ հետաքրքրություն ներկայացնող

¹ Լ. Ս. Խաչիկյան, Փն գրքի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն Լ, էջ 105—106:

² Տե՛ս «Արարատ հանդես», 1894—1895, գիրք Ա, էջ 242:

³ Եռյն տեղը, էջ 242—243:

սին հիշեցինք այստեղ պարզապես նկատի ունենալով, որ այն, ինչպես
սալեց, բնորոշնակվել է 1434 թվականին:

Մյուս ձևագիրը՝ 1476 թվականին վերաբերող ավետարանը
բնորոշնակել է Ստեփանոս գրիչը Ալյրվածաբուն (Գեղարքում), ձև-
ագրի վերջում զետեղելով իր գրած ընդարձակ հիշատակարանը՝
Հիշատակարանում նա նշում է ձևագրի համառոտ պատմություն,
ձևագիրը պատվիրող և այն նրանի կաթողիկե եկեղեցուն նվիրող
ամեն Արապի ու նրա ամենու, կաթողիկոս Սարգիս, ժամանակի Հա-
սան-բեկ կոչված խանի, քաղաքական ծանր պայմանների և այլնի
մասին¹: Ձևագրի վերջում, դրանից բացի, տեղ է գտել և մի քանի
տողից բաղկացած այլ հիշատակարան, որտեղ ասված է.

«Մաղկեցաւ սուրբ Աւետարանս ձևամբ Ըստեփանոս կախ-
կոյտիս, Ի վանքս Առքնոց, Ի դռն և Ի նեղ ժամանակս, զի զնաց
Հասան-բեկն և զերեսց զԲարստան, թվ. ՋԻՁ (1477)»²:

Ինչպես տեսնում ենք, ձևագրի նկարագրողումը կատարվել է
ընդօրինակումից մեկ տարի անց, Առքնոց վանքում, Ստեփանոս
Առնչեցի նպիսկոյսի կողմից, որն անշուշտ շուրջ է շփոթվել նույն
ձևագրի գրիչ Ստեփանոսի հետ:

Երևանի բնակչության թողած մշակութային ժառանգությունը
չի կարող հասկացվել առանց գրում ասորած այն գործիչների գոր-
ծունեության, որոնք ծագումով Երևանից էին: XV դարում տարբեր
տեղերում հիշատակվում են ծագումով երևանցի մի քանի գրիչներ:

Գրանցից ամենահայտնին Տիրացու կամ Տիրացու բաժանա
Երևանցին է, որը ժամանակակից է եղել Քովմա Մեծոփեցուն: Նա
իր թողած շափածո և ընդարձակ հիշատակարաններում բավական
տեղեկություններ է հաղորդում իր կյանքի ու գործունեության մա-
սին: Պարզվում է, որ նա կոչվել է Տիրացու կամ Տերտեր քահանա ե-
րևվանցի, ծնվել է Երևանում ու այնտեղ էլ ապրել բավական ժամա-
նակ, հայր եղել է Սարգիս քահանան, իսկ մայրը՝ Գոհար Մելիքը,
չի ամուսնացել՝ ընտանիք չի ունեցել, երևանից գնալով՝ Ղրիմ այս-
տեղ ընդօրինակել է ճարտար (Ազով քաղաքում, 1341 թվականին)
և Վարդան Այգեկցու քարտիչների ժողովածուն (Սուրբաթ քաղա-
քում, 1336 թվականին)³: Առանձնապես ուշագրավ են նրա ընդօրին-

ակած Վարդան Այգեկցու ժողովածուի վերջում թողած հիշատակա-
րանները, որոնք տեղ են գտել նաև այլ ժողովածուներում: Գրան-
ցից մեկում նա գրում է.

«Ես Տիրացու ողորմելի ծոյլ ք՛ մեղօք Ի լի, Ի գաւառն Արա-
տի, Ի քաղաքն Երևանի, որզի Սարգիս քհն. որէ ևս էր Ի խեղճ լա-
տի, յաւտար աշխարհս այս երկի. Ի Ղրիմ քաղաքս Ազովկեղանի.
Իկեղեցիս պարոն Շահնշահի. զգիրքս զրեցի զՎարդանի: Ողորմու-
թեանքս Մեծեռնի խոստ սրբասնակ քհն. արննած առլոյս ս. Գրի-
թեանքս Սիս քաղաքի թագի. գոված ամեն քրիստոնի. Ճ տարի թող
կերքս ապրի. զորդ գորցս Վարդանի. ով զես լիշէք Ի յատենի. թող
ներ մեղաց գիրն զնչի»⁴:

Իսկ «Ժողովածու խրատաց» ձևագրում շափածո հիշատակարանը.

«Ով որ կարգայր զգիրս անձան,
ՉՏըտեք գրիս այս անդրտան.
Սոյլ քահանայ թշտաական,
Որ եմ անկարգ խոստ ու անտո՛ման
եմ աստուծոյ ամասնական.
Գոսր լիշեցիք, թող չեմ արձանե՛ք»:

Բերված հիշատակարանները վերաբերում են 1341 և 1336
թվականներին: Գրանք, ինչպես տեսնում ենք, մեկը մյուսին որոշ
չափով լրացնում են և ընդհանուր զազափար են ապիս Տերտեր
կամ Տիրացու երևանցի գրիչ կյանքի ու նրա կողմից կատարված
ձևագրերի ընդօրինակությունների մասին:

Նույն կարգի շափածո մի այլ հիշատակարանում (որը նույնպես
պատկանում է Տերտեր գրիչին և որը նույնպես զետեղված է նրա
ընդօրինակած Վարդան Այգեկցու ժողովածուի վերջում) կարգում
ենք.

«Չտրտեք գրիս Երևանցի,
Սոյլ քահանայ մեղօք Ի լի,
Որբեայրի, խեղճ ու լատի,
Ի մեծ դառալն էլմիտնի,
Ի ստորալն Սարսաղի
Յաշխարհս եկ[ի] յայս մազայի»

Հիշատակարանները, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 287, եզրակն Շահազիզ, Հին Երև-
անցը, էջ 72, «Հանդես ամսօրեայ», 1934, № 5-7, էջ 328 և այլ տեղերում:

1 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ֆ. Մեսրոպ Մազիստորոսի ար-
խիթ, թղթ. № 28, Բաաբաբեք բժշկական, էջ 335, «ԺԳ դարի հայերեն ձևագրերի

2 «ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարանները», էջ 287:

¹ ՏՃ՝ Լ. Ս. Խաչիկյան, «Փն գրքի հայերեն ձևագրերի հիշատակարաններ»,
մասն 11, էջ 397-398:

² Նույն տեղը, էջ 338:

³ ՏՃ՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ֆ. Մեսրոպ Մազիստորոսի ար-
խիթ, թղթ. № 28, Բաաբաբեք բժշկական, էջ 335, «ԺԳ դարի հայերեն ձևագրերի

Զգիրքս գրեցի սուրբ Վարդանի
Ինչ որ կարգայք զինքս յառնեի,
Ի ժամատան ու յեղեղեցի,
Զիս յիշեցէր վանց Քրիստոսի,
Պիթ իմ մեղաց զերն շերե՛ս:

Գրին այս փորձիկ հիշատակարանով հայտնում է, որ ինքը էջմիածնի «մեծ դաշտէն» է, Արարատի (Մասիսի) ստորոտին և գալով «չայս մուղայի» աշխարհը (Ղրիմ) ընդօրինակել է «սուրբ Վարդանի» (Այգեկցու) ձեռագրերը:

Տերտեր երևանցու երկու հիշատակարանները սակայն ամբողջական ձևով և տեքստերի ճշտամբ տեղ են գտել լ. Ս. Խաչիկյանի կազմած ժողովածուում¹: Դրանցից մեկը այս վերջին մեջբերված հիշատակարանն է, իսկ մյուսը, որը շատ ընդարձակ է, բաղկացած է երկու մասից՝ արձակ մասից ու շափածոյից: Դրա արձակ մասում գրիչը պատմում է իր կողմից Վարդան վարդապետի և Աթանասի երկերի ընդօրինակման հանգամանքներն ու մանրամասնությունները, նա գրում է, որ ինքն այդ գործը կատարել է Ղրիմի Սուրխաթ բաղարում 1336 թվականին, պարոն Շահնաշահի կառուցած սր. Աստվածածին եկեղեցում: Նա ուրիշ շատ գրիչների նման գրում է, որ ինքը այդ կատարել է ի հիշատակ իրեն, իբ՛ն ծնողների՝ Սարգիս բաճանայի և Դոհար-Մելիքի, բույրերի՝ Խատերեսի, Մամախաթունի և Մարա Խաթունի, Ամիր և էլիմիր պարոնների և նրանց հոր՝ պարոն Սուճահի և այդ գործում իրեն օգնաբխուց ցույց տված մի շարք աչլ անձնավորությունների²: Իսկ շափածո մասը, որը, պատմականից բացի, ունի նաև զրահան-զեղարվեստական որոշ նշանակություն, մեջ ենք բերում նույնությամբ.

«Ես Տիրացու, անն անարման,
Մայ բաճանայ Քրտառական,
Որ եմ անկարգ խիստ անաշման
նա յաստվոյ ամաթական,
Սատուայի ճորս բառական,
Զծուլութիւնն արի ինձ բուն,
Զաղաւթիւնն խիստ անխոտան,
Զրոյն անզերծ ես կու մեամ,
Ըտգոր եզրիկ աննիս ես յում,
Սուլմա յա [ս] թի ստանձնական,
Ոչ հետ բեկբացն միտքան:

¹ «ԺԳ գրքի հայերեն ձևագրերի հիշատակարանները», էջ 258:

² Նույն տեղը, էջ 256—257, 288 և 329:

³ Նույն տեղը, էջ 288:

Ցերերն եկի այն Արատան:
Ի բաղարն այն պատուական,
Որ իր անունն է երևան,
Խոր Վրացի ճա հարեան:
Ի ծոխ անցալ այս անաշման
Ի բաղարս կալ ի քանկ կախան,
Զգիրքս գրեցի զայս՝ զՎարդան:
Որ ուման էլինք արման,
Ի բաճանայութիւնն աստուածական,
Պատարողք ի սուրբ սեղան՝
Ու զպարախումն անք ի լման,
ԶՏիրացու յայս անզերծան,
Գուք յիշեցէր, թո՛ղ չեմ արման,
Ու Քրիստոսի փառք յախանան³:

Տերտեր երևանցու այս շափածո հիշատակարանը հազվադեպ չէ մեզ հետաքրքրող գրքերի ձեռագրերում: XIV—XV դարերի և հետագա շրջանի շատ հիշատակարաններ նույնպես զբոված են շափածո՝ կենսագրական թիմայով, հաճախ ողբի ձևով:

Տերտեր երևանցու ժամանակակիցներից էր նաև Ներսէս բաճանա գրիչը, որը նույնպես իրեն կուում է իր երևանցի: Նա 1447 թվականին Նոր Զուղարում ընդօրինակել է մի քանձարան, զրան կցելով իր հիշատակարանը, որը մեջ ենք բերում խիստ համառոտագրելով.

«...Գրեցավ Գանձարանս ի թվին Ըայոց ՊՂՁ. (1447), յունիս ամառ ի թՔ. (19), ձեռամբ բազմամեղ, անարուեստ և անիմաստ փեռն գրիչ Ներսէս սուտանուն կրօնաւորի ... Ի զեւաղս, որ կու [ի] Ումուռ [ի] իսա ...

Այլ և արդ, աղաչեմ յերևս անզեւալ դամենեւանդ, ով որ հանդիպիր տեսանելով կամ կարգալով կամ արինսակելով, նա յիշեցէր ի տէր և զիս՝ զանարման զըշաղիրս և զերեւոյն սուտանուն բաճանայս զերևանցի, և զձեւաղքն իմ, և զուտուցիչին՝ զկենդանիին և զննզեցեալայն⁴»:

Ներսէս զրչի մասին եղած մեզ հայտնի տեղեկությունները սահմանափակվում են մեջբերված այս հիշատակարանի ինքնավախալթյամբ, որից իմանում ենք, որ նա երևանից է և ապրել ու գործել է Պարսկաստանում:

¹ «ԺԳ գրքի հայերեն ձևագրերի հիշատակարանները, կազմե՞ն՝ լ. Ս. Խաչիկյան, էջ 286—287, նույն հիշատակարանները ձեռագրական որչա արքրերակներով աճես նաև նույն ժողովածուի 288 և 329 էջերում:

² Լ. Ս. Խաչիկյան, Փն գրքի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն 1, էջ 615—616:

1419 թվականին ընդօրինակված Գրիգոր Տաթևացու Քարոզ-գրքի հիշատակարանում Հովհաննես և Ներսես գրիչների հետ միասին հիշատակվում է նաև ընդօրինակված ձեռագրի թուղթը «կուկոզ», միայնակյաց Հովհաննես Երևանցուն: Հիշատակարանի համապատասխան հատվածը քաղել է Մ. Տեր-Մովսիսյանը, որից էլ նույնությամբ ընդօրինակել է Լ. Ս. Խաչիկյանը, անհիշվ նաև համապատասխան ծանոթագրություն: Ահա հիշատակարանի այդ փորձիկ հատվածը.

«Գրիչը Յովհաննես որդի Ամիրբեկի և Մարտիյի և Ներսէս, թղթի կոպոզ՝ Յովհաննէս Երևանցի միակէց»¹:

1317 թվականին վերաբրեղ մի հիշատակարանի մեջ ասված է. «Գողիկ ուն անուռն միայնակեաց յԵրիվան՝ երածիշտ լեալ, սանն թէ Մեհդիդբն եւ զԱռաստու երգերն նա արարեալ է»²: Սակայն Ն. Ակիկյանը հակված է կարծիքու, որ «Երիվան» անուշով գրիչը հավանաբար նկատի ունի ոչ թե Սրևան քաղաքը, այլ ասորական է Ալյրիվանքը (Գեղարդը): Այդ ենթադրության մասին զրկված ենք թեր կամ ռակ արտահայտվելու հնարավորությունից, որովհետև մեր ձեռքի տակ չունենք համապատասխան փաստեր: Համենայն դեպս ավելի հավանական կարող է լինել, որ գրիչը Գողիկին հիշատակել է որպես Երևանցի միայնակեաց երածիշտ:

Մի ձեռագիր գանձարանում (1485 թ.) նշվում է նաև մի ալլ «Երևանեցին», որը նույնպես հավանաբար երածիշտ էր՝ Բայջ այս «Երևանեցի»-ի մասին՝ «երզա լավերժական երգեմք բանական սենն»՝ «Երևանեցի»³ արտահայտությունից բացի ալլ վկայություններ չեն պահպանվել և նրա վերաբերյալ մեր պատկերացումները մնում են շատ աղտո:

Երևանի այս շրջանի մշակութային պատմության հետ է աղբյուրվել XIV դարի վերջերին և XV դ. առաջին կեսին ապրած Քովմա Մեծոփեցի պատմագրի զործունեությունը: XVII դարի հնդիակ Գավթի Քաղիչեցին նրա մասին տալիս է հետևյալ համառոտ կենսագրական տեղեկությունները.

«Քովմայ վ. Քաջբրունենաց յԱղիովտայ (պատմագիր) կացեալ

¹ Լ. Ս. Խաչիկյան, Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն 1, էջ 237:

² Նույն տեղը:

³ Տե՛ս «Հանգես ամսօրնայ», 1934, № 5—7, էջ 333:

⁴ Նույն տեղը:

⁵ Հակոբյա Տաշևե, Յուզակ հայերեն ձեռագրաց մատենագրաների Միթիս-բուանց ի վիճենա, Վիճենա, 1895, էջ 759:

⁶ Նույն տեղը:

առ ոտս Յովհաննէս վ-ի Մեծոփայ և ժամանակ ինչ առ Սարգիս վ. Խառաքատ. և ընկալա զատուցան իշխանութեան ի Կրիգոր Տաթևացոյ ի յերևան քաղաքի հանգերն ընկերօք, Մկրտիչ, Կարապետ, Մկրտիչ միս Արթիկեց, Մկրտիչ Հոգեցի և այլք. և եկեալ Քովմաս անգամ ի մեծօրին և սրբազրեաց սաղմոսն և զազօթամատոցն և Կ աս կացեալ անց և թվ. ՊՂն վախճանեցաւ»¹:

Ուրեմն Քովմա Մեծոփեցին ծնվել է 1386 թվականին Քաջբրունեաց կամ Աղիովտ զավառում և մահացել է 1446 թվականին՝ 60 տարեկան հասակում: Նա, ինչպես տեսանք, Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի ընդօրինակման մասին խոսելիս ասում է, որ ինքը ուսում է առել մի շարք հոգեորականների մոտ: Քաղիչեցու այս վկայությունն մեջ ասված է, որ նրա ուսուցիչներն են եղել՝ Մեծոփեցի Հովհաննես վարդապետը, Խառաքատ կոչված Սարգիս վարդապետը և Նայտնի Գրիգոր Տաթևացին, որից և իր ընկերների՝ Մկրտիչի, Կարապետի ու այլոց հետ միասին ստացել է վարդապետի կոչում:

1410 թվականին Երևանում Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի ընդօրինակումը, մինչ այդ նույն տեղում Տաթևացու կողմից վարդապետի կոչում ստանալը և 1441 թվականին կաթողիկոսական աթոռը Սսից՝ Վաղարշապատ տեղափոխելու ժամանակ և հետագա տարիներին դարձյալ Երևանում լինելը ցույց են տալիս, որ պատմագիր կյանքի ու զործունեության զգալի մասը կապված է Երևանի հետ:

Քովմա Մեծոփեցին իր ժամանակի ուսույլ ու զործունյա վարդապետներից է: Նա իբրև պատմագիր մեծ չէ, բայց գրեթե միակն է ամբողջ XV դարում: Հիշատակարաններից, ուրիշ հնդիակների ձեռագրերի ընդօրինակություններից զատ Քովմա Մեծոփեցին թողել է նրկու փորձիկ, բայց արժեքավոր աշխատություններ՝ Դրանցից մեկը «Պատմութիւն Լանկ-Քանուրայ և յարբողաց իւրոց» (Փարիզ, 1880) պատմագրական երկն է, որում զեպտերից շատերին ակնանտես հեղինակը նկարագրել է ինչի թեմատիկ ավելիք արշավանքների և դրանց հաջորդած մյուս ավարտուր բռնակալների «շարաքատիկ ժամանակաշրջանի թվյառությունների տիրուր պատկերը 1386—1440 թթ.»²: Նրա երկրորդ աշխատությունը, որում որոշ վկայություններ ու անուղղակի ակնարկներ կան նաև Երևանի մասին,

¹ Բակր Յ. Քովեման, Յուզակ ձեռագրաց Գազան Խաչիկ վարդապետի, մասն 2, 1878—1898, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 98:

² Մանուկ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 336:

«Յիշատակարանն» է: Վերջինիս մեջ ամենայն մանրամասնությամբ նկարագրված է կաթողիկոսական աթոռը 1441 թվականին Վաղարշապատ տեղափոխելու հետ կապված հանդամանքները և զրգու-դառանքները: Իրա այդ երկու աշխատություններն այսպիսով կոնկրետ և առատ նյութ են տալիս ժամանակի քաղաքական պատմության, հայկական եկեղեցու և մշակութային կյանքի մասին¹:

Այսպիսով, հիմք չկա տրտնջալու XIV—XV դարերի Երևանի մշակութային կյանքի աղքատության մասին: Երևանը դառնալով Արևելյան Հայաստանի զգալի մասն ընդգրկող մի մեծ կուսակալության կենտրոն՝ աստիճանաբար նշանակություն էր ձեռք բերում նաև մշակութային առումով:

¹ Տե՛ս «Թովմա Մեծովհեյտ Յիշատակարանը (Քրիիդը, 1592) և դրա հրատարակողի՝ Կարապետ Կոստանյանցի ընցարձակ ստորագրանքը:

² Թովմա Մեծովհեյտ այդ աշխատությունների մասին տես Մանուկ Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն, գիրք II, էջ 365—368:

ԵՋՐՈՓԱԿՈՒՄ

«Քափառող մայրաքաղաքների երկիր», այդպես են երբեմն կոչել Հայաստանը օտարերկրյա հեղինակները: Եվ իրոք, քաղաքական անկայուն պատմության հետևանքով մեր նախնիները հարկազրված են եղել երկրի մայրաքաղաքը հաճախակի տեղից-տեղ փոխել: Ուրարտական ժամանակաշրջանը ներառյալ Հայաստանն իր պատմության ընթացքում ունեցել է 12 մայրաքաղաք՝ Տուշպա (Վան), Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Գվին, Երազավորտ, Բազաբան, Կարս, Անի և Երևան: Երկար շարք կազմող Հայաստանի մայրաքաղաքներից մի քանիսը՝ Ախտաշատը, Տիգրանակերտը, Գվինը և Անին իրենց ժամանակին հռչակված են եղել այն ժամանակվա հայտնի-ամբողջ աշխարհում:

Մեր անցյալի մայրաքաղաքների մեջ համեմատաբար լավ են ուսումնասիրված Անին (Ն. Մառ, Հ. Օրբելի, Ք. Քոբամանյան, Լևո, Հ. Մանանդյան) և Գվինը (Կ. Ղաֆաղարյան, Ա. Շահնազարյան, Բ. Առաքելյան և ուրիշներ), Առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես Երևանի պատմության ուսումնասիրությունը: Երևանը գտնություն ունի խոր անցյալից և ականատես է կղել մեր ժողովրդի՝ կելեքներով լեցուն ամբողջ պատմությանը՝ դրա մեջ տարբեր ժամանակներում խաղալով տարբեր դեր:

Գվար է հնագույն պատմություն ունեցող քաղաքների ուսումնասիրությունը: Բայց ավելի զգվար է հնագույն ժամանակներից գտնություն ունեցող մայրաքաղաքների պատմության ուսումնասիրությունը: Այդպիսիներից մեկն էլ Երևանն է, որի պատմությունը սերտորեն միահյուսված է մեր ժողովրդի ընդհանուր պատմության հետ: Այդ պատճառով էլ նրա պատմության պարբերացումը հիմնականում համապատասխանում է հայ ժողովրդի պատմության պարբերացման հետ՝ ունենալով սակայն իր առանձնահատուկ կողմերը: Առանց նախապատմական ժամանակաշրջանի Երևանի՝ մեր աշխատության ընդգրկած մոտ 2700 տարվա պատմությունը կարելի է մասնատել հետևյալ ժամանակաշրջանների՝ հնագույն և հին (782 թ. մ. թ. ա.—VII դ. մ. թ.), միջին (VII—XVIII դդ.) և նոր՝

(XIX—XX դ. սկիզբ), որոնք իրենց հերթին տարբարժանում են ժամանակագրական ավելի փոքր միավորների: Պարբերացման համար հիմք են ծառայել ինչպես սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այնպես էլ քաղաքի քաղաքական պատմությունը, վարչական վիճակը և երկրի մասշտաբով նրա ունեցած նշանակության առանձնահատկությունները:

Երևանագիտությունը հին պատմություն չունի: Այդ բնագավառում ուսումնասիրություններ սակավաթիվ են և քաղաքի պատմության հարցերի մեծադույն մասը մինչև օրս դեռ չի ուսումնասիրված: Մակայն նույնը չի կարելի սակ աղբյուրների մասին: Սկսած ուրարտական հնագույն ժամանակներից երևանի պատմության համար պահպանվել են հնագիտական և զրավոր շատ նյութեր՝ նյութական կուլտուրայի մնացորդներ (պալատների, տաճարների, պաշտպանական պարիսպների, ջրմուղի, պահեստների, բնակելի շենքերի ավերակներ, դործիքներ, կենցաղային իրեր, շենքեր ու արձանական հանդիսանք, դյուլատնտեսական մշակույթների մնացորդներ և այլն, և այլն), և այլն, որոնք արձանագրություններ, որոնք հնարավորություն են տալիս նրա պատմության այդ ժամանակաշրջանը յուսարանել բավարար ամբողջականությունը և խորությամբ:

Ուրարտական պետության կործանումից և արեմենյան տիրապետության անկումից հետո՝ IV դ. (մ. թ. ա.)—VII դ. (մ. թ.) երեք-վանի պատմության մասին արժանահավատ տեղեկություններ բիշ են պահպանվել: Բայց դրանից հետո այն առանց ընդհատվելու հիշատակվում է մեր մատենագրության մեջ: Երևանը պատմիչների, գրիչների, ճանապարհորդների և ուրիշ հեղինակների ուշագրություն ատարկան է դառնում մանավանդ XV դ. ի վեր, երբ նա մի մեծ կուսակալության՝ Երևանի խանություն կենտրոնն էր և խոշոր դեր էր խաղում երկրի մասշտաբով:

Երևանի պատմության աղբյուրները բազմազան են: Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ հնագիտական նյութերի, ուրարտական սեղադիր արձանագրությունների, հնչյունային տառերով (գերադասցապես հայերեն) վիճագիր արձանագրությունների, բանավոր ավանդությունների ու առասպելների, գրիչների, ժամանակագիրների և պատմագիրների արած վկայությունների, պաշտոնական ժողովածուների ու տեղեկատուների, արխիվային և ձեռագիր ֆոնդերի, ճանապարհորդների նկարագրությունների ու ուշերի, ակահատես հեղինակների հաղորդած տեղեկությունների և այլն:

Մոլի մակերեսից 900—1000 մ բարձրության վրա գտնվող Երեվանը զբաղվում է Արարատյան արբանյակից դաշտի հյուսիս-արևելյան մի հատվածը և դրան հարակցող բարձրությունների մեղմաթև լեռնալանջերը: Բնականից հարմար դիրք ունի Երևանը Այստեղ լին հասվում Արասն և Հրազդան գետերի ափերով ձգվող ճանապարհները, որոնք բանուկ են եղել հնագույն ժամանակներից ի վեր: Երևանը իշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ և իր հիմնադրման օրից միշտ գտնվել է քաղաքակրթված աշխարհի կենտրոնական մասում: Քաղաքն օգակող բյուրներն ու լեռնաշղթանքներն անկան մեկ-մեկ ամբողջ են եղել նրա համար, իսկ Հրազդանն ու նրա ձախակողման վտակ Գեղատար՝ ոռոգման և խմելու ջրի անսպառ աղբյուրներ:

Գեղեցիկ է Երևանի համայնապատկերը: Քաղաքի դիմաց բարձրանում է բիրլիական Արարատը: Նրա գեղեցիկ դիրքն ու համալսնապատկերը բանաստեղծական օգնչմամբ նկարագրել են շատ հեղինակներ (Ալիշան, Կինյ և ուրիշներ): Հին երկրագր փոխած քաղաքի բն. XIX դ. 60-ական թվականներին նա իր բնակելի թաղերով և քաղաքապատկան հողերով զբաղվում էր մոտ 45 կմ արտաքին շրջագծով ունեցող մի տարածություն, որը սահմանակցում էր Թանարեռ, Նորադավիթ, Վերին Եննգավիթ, Ներքին Եննգավիթ և այլ գյուղերի հանգամանքին: Նա բաժանվում էր 7 թաղամասերի:

Երևանի զբաղված շրջանը երկարաբանական նորագույն ժամանակներում ծածկված է եղել լճով, որն ապրիլամայր շրջանում լողել է կավի, դիպի և նստվածքային այլ նյութերի բավական հաստ շերտեր: Երևանում հզոր շերտեր են կազմում նաև Գեղատի բերվածքները: Բնականից Երևանը գտնվում է կիսանապատային գոտում, բայց մարզի հազարամյակների ընթացքում հսկայական փոփոխություններ է մտցրել նրա բնական պայմանների մեջ՝ արհեստական ոռոգման առուների խիտ ցանցի շնորհիվ, ժամանակի ընթացքում կիսանապատ վերածելով աչիների ու բանջարանոցների և, դրանով իսկ, փոփոխելով նրա բնադաշտն ընդհանրապես: Եվ պատահական չէ, որ Երևանն իր շրջակայքով նույնպես մտել է ավանդական սերկրային դրախտի մեջ:

Երևանի կլիման խիտ ցամաքային է: Նրան հատուկ են օդի չերմաստիճանների օրեկան և տարեկան մեծ ու կտրուկ տատանումները: Այստեղ ամառն կեսին լինում են ուժեղ շոգեր, իսկ ձմռանը՝ ջուրը եղանակներ: Միջին տարեկան տեղումները 320 մմ է, մեծ է արևոտ օրերի թիվը: Գարունը կարճատև է, իսկ աշունը՝ երկար ու մեղմ: Երևանի համար օտար չեն կարկուտը, ամպրոպը,

դարնանային ու աշնանային ցրտահարությունները Հին Երևանը համարվել է ջրառատ քաղաք: Հրազդան և Գետառ գետերից բացի բազալիտների նաև ջրի այլ աղբյուրներ՝ Օրեկաթաղբյուրները-ը, «խորտու-բուլաղը-ը, Քոխմախա լիճը (այժմ՝ Կոմսոմոլի լիճ), ջրը հորերը, բնոգիտնայա ջրերը: Քաղաքն ունի արգավանդ հողեր: Հին Երևանի գրաված շրջանի ^{99/100} մասը կազմել են նրա փարթևած ալյուրները, բանջարատնային և ցարխատարածությունները: Նա հայտնի է եղել իր ծիրանով, դեղձով, խաղողով, տանձով, խնձորով և այլ մրգերով: Երևանը հարուստ է տուֆերով (սև և կարմիր), բազալտներիով, կավով, դիտալով, ափազով:

Երևանի ու նրա շրջակայքի բնական այդպիսի նպաստավոր պայմանները՝ բնականից հարմար դիրքը, տար կլիման, բնորոշակ ու արգավանդ հողային տարածությունները, ջրառատությունը, բնական հումքերով (հատկապես շինանյութերով) հարուստ լինելը հնագույն ժամանակներից ի վեր նպաստել են նրա տնտեսության զարգացմանը և հարուստ, խոշոր ու բարեկարգ բնակավայր լինելուն:

Պատմական ելևէջներից բացի Երևանը շատ է տուժել նաև բնական աղետներից՝ երկրաշարժերից, սելավից, կարկառահարությունից, մորեխից, ինչպես և մահապալուտ հիվանդություններից ու սովից: Միայն 1828—1865 թթ. ընթացքում 7—8 անգամ տարածվել է խոլերա (1830, 1842, 1845, 1855 թթ. և այլն): Դրանք բազալիտի բնակությունից խուճալ էին մեծ վնասվող գոհերը. միայն 1829—30 թթ. համաճարակից ոչնչացվել է Հայկական մարտի բնակչության մոտ 10 % -ը: Քաղաքին մեծ վնասներ են պատճառել նաև սելավները (1860, 1873, 1946 թթ. և այլն), երկրաշարժերը (X դարում, XIV դարում, 1679 թ., 1840 թ., և այլն): Այժմ էլ Երևանը գտնվում է երկրաշարժային գոտում և այստեղ ամեն տարի արձանագրվում են բազմաթիվ տատանումներ:

